



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

*John H. H. H.*

891.71

18731

S-80

Snowing, L.

cyttr lpttr. Sup. I.

Wpntprugl lpt lptprugl









Տպագրված է Հ. Ս. Խ. Հ. Գեառքաթի Մոսկվայի  
տպարանում: Մոսկվա, Արժանակի պեր. 2  
Գառվեր 172. Գրառնագրի Վ 41897. Հրատա-  
րակ: № 3286. Տիրամ 4100. Հանձնված է տը-  
տագր. 11/IV 35 թ. ստորագր. տպ. 11/IV 35 թ.-  
26 մամուլ, մամուլում 42 000 տպանիշ:

ՌՈՒՍ ԿԼԱՍԻԿՆԵՐ

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ

# ԸՆՏԻՐ ՅԵՐԿԵՐ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1935

ԽՈՍԿՎԱ

Դ Ո Ւ Ս Կ Լ Ա Ս Ի Կ Ն Ե Ր

891.71

S-80

Լ Ե Վ Տ Ո Լ Ս Տ Ո Յ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻՆԻ ԿՈՆԿԼԱՎԻ ԿՈՄԻՏԵ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Յ Ե Վ

Խ Ա Ղ Ա Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Վ Ե Պ Զ Ո Ր Ս Հ Ա Տ Ո Ր Ի Թ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Հ Ա Տ Ո Ր

Ք ա ղ ղ ա ն ե ղ

ՍՏ. Զ Ո Ր Յ Ա Ն



Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1935

Մ Ո Ս Կ Վ Ա

18731

A 25802

Գրառ. իմք. Գ. ԱՐՈՂ


Լենինի հոգովածի թաղղմ. Տ. ՀԱՅՈՒՄՅԱՆԻ


Տեխ. իմք. Տ. ԽԱՉԱՆԻՅԱՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԼԵՎ. ՏՈԼՍՏՈՅԸ ՎՈՐՊԵՍ ՌՈՒՍԱԿԱՆ  
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՅԵԼԻՆ







Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅ



Մեծ գեղարվեստագետի անվան համադրութիւնը հեղափոխութեան հետ, վորը նա բացահայտորեն չըմբռնեց, վորից նա բացահայտորեն հեռացավ, առաջին հայացքից տարրորինակ և արհեստական կարող և թվալ։ Ձե՛ վոր չի կարելի հայելի կոչել՝ այն, ինչ վոր յերևույթները ակնհայտ կերպով ճիշտ չի արտացոլում։ Սակայն՝ մեր հեղափոխութիւնը — չափազանց բարդ յերևույթ և նրա անմիջական կատարողների բազմութեան մեջ կան սոցիալական շատ տարրեր, վորոնք նույնպէս բացահայտորեն չեն ըմբռնում կատարվող գեղքերը և նույնպէս հեռու են ինչ կանգնում անցքերի բերումով նրանց առջև դրված պատմական խնդիրներից։ Յեւ յի՞թէ մեր առջև հիւրավի մեծ գեղարվեստագետ և կանգնած, ապա հեղափոխութեան գեթ մի քանի ելական կողմերը նա պէտք և վոր արտացոլեր իր յերկերում։

Ռուսական լեզու մամուլը, վորը լեցուն և Տոլստոյի 80-ամյակի հորեյանի առթիւ դրված հոգովածներով, նամակներով և ակնարկներով, ամենից քիչ հետաքրքրվում և նրա յերկերի վերլուծմամբ՝ ուսական հեղափոխութեան բնույթի և՛ նրա շարժիչ ուժերի տեսակետից։ Ամբողջ այդ մամուլը զգվելու չափ լեցված և յերեսպաշտութեամբ, — յերեսպաշտութեամբ յերկու տեսակի՝ պաշտոնական և լիբերալ։ Առաջինը — ծախու գրչակների կողիտ յերեսպաշտութիւնն և, վորոնց դեռ յերեկ հրամայված եր հալածել Լ. Տոլստոյին, իսկ այսօր՝ հայրենասիրութիւն գտնել նրա մեջ և փնտլ քաղաքավարի ձևեր բանեցնելու։ Յեւրոպայի առջև Վոր այդորինակ գրչակներին իրանց գրածների համար վճարված և, — այդ հայտնի յի ամենին և նրանց անկարող են խաբել վորեն մեկին։ Շատ ավելի նրբին և և՛ այդ իսկ պատճառով շատ ավելի փաստակար ու վտանգավոր և լիբերալ յերեսպաշտութիւնը։ Յեթն լսենք «Речь»-ի կաղետական բալլադիկներին, — նրանց համակրանքը դեպի Տոլստոյը — ամենաանարարալն և և ամենաշերմը։ Իրականում, սակայն՝ չափուձեւած դեկլամացիան և շմեծ աստվածախույզի՛ն մասին ասած ժգուն ֆորաքները — համապարփակ մի կեղծիք են, վորովհետև ուսական լիբերալը վճ՛ հավատում և տոլստոյական աստծուն և վճ՛ և՛ տիրող կարգերի տոլստոյական քննադատութեանն և համակրում։ Նա

բավում է ժողովրդական անվան, վորպեսզի այդպիսով աճեցնի քաղաքական իր կապիտալը, վորպեսզի համազգային սպողիցիայի առաջնորդի դերը կատարի: Նա ճշմունք է ֆրանզների զգիլիչ ու շոտաշով խլացնել շեշտակի և պարզորեն պատասխան տալու պահանջը այն հարցին, թե ի՞նչով են պայմանավորված «տոլստոյականություն» աղաղակող հակասությունները, մեր հեղափոխությունից վորպիսի թերություններն ու թուլություններն են արտացոլում նրանք:

Տոլստոյի յերկերի, հայացքների, ուսմունքի և դպրոցի հակասությունները — հիրավի աղաղակող են: Մեկ կողմից՝ հանճարեղ մի գեղարվեստագետ, վոր տվել է վճռի միայն ուսսական կյանքի անգուգական պատկերներ, այլև համաշխարհային գրականությունում առաջնակարգ յերկեր, իսկ մյուս կողմից՝ ի Գրիստոս խենթացյալ մի կալվածատեր: Մեկ կողմից — զարմանալիորեն ուժեղ, անմիջական ու անկեղծ մի բողոք ընդդեմ հասարակական ստի և կեղծավորության, իսկ մյուս կողմից — մի «տոլստոյական», այսինքն՝ ուսսական ինտելիգենտ կոչեցյալ, ծեծկված հիստերիկ մի լալկան, վորը հրապարակով իր կուրծքը ծեծելով ասում է. — «Եես պիղծ եմ, յես վատ ու գաղբիլի յեմ, բայց յես զբաղված եմ բարոյական ինքնակատարելագործմամբ, յես այլևս միս չեմ ուտում և սնվում եմ միմիայն բրինձե կառնաներով»: Մի կողմից՝ կապիտալիստական շահագործման անողորմ քննադատություն, մերկացումն կառավարական բռնությունների, դատարանի և պետական կառավարչության կոմեդիաների, ամենախոր գրեկորումն այն բոլոր հակասությունների, վոր գոյություն ունեն հարստության աճման ու քաղաքակրթության նվաճումների և չքավորության աճման, վայրենացման և բանվոր զստակարգի մասսաների տառապանքների միջև, մյուս կողմից՝ բռնությամբ չչարին հակառակ չգալու յուրողիվ քարոզ: Մեկ կողմից — ամենազգոն ռեալիզմ, բոլոր և ամեն տեսակ դիմակների գերծում, մյուս կողմից — աշխարհիս ամենանողկալի բաներից մեկի, այն է — կրոնի քարոզը, ձգտումը՝ արքունական պաշտոնյա տերտերների տեղ նստացնել բարոյական համոզմունքի տերտերներ, այսինքն՝ զարգացնել ամենանորբին և այդիսկ պատճառով — առավելապես զարշնել տերտերականություն: Հիրավի. կարելի չե ասել —

«Դու և խղճուկ, դու և առաս-  
ճու՝ և հզոր, և անհարակ —  
Մայր Ռուսիայ»

Վեր այսպիսի հակասությունների պայմաններում Տոլստոյը բացարձակապես չէր կարող ըմբռնել վճռի բանվորական շարժումը

և նրա դերը հանուն հեղափոխութեան մզմոզ պայքարում, վնչ ել ուստական հեղափոխութեանը, — դա ինքնին ակնհայտ է: Սակայն, Տոլստոյի հայացքների և ուսմունքների մեջ յեղած հակասութեաները պատահականութեան չեն, այլ՝ արտահայտութեան XIX դարի վերջին յերեսնամյակի ուստական կյանքի պայմանների: Դեռ յերեկ միայն ճորտատիրական իրավունքից ազատագրված նահապետական դուռը բառիս բուն իմաստով մատնված էր կապիտալի ու պետական գանձարկղի հեղեղման և կողոպուտի: Դուռը պետական տնտեսութեան և դուռը պետական կյանքի հին հիմունքները, վոր իրապես դարերի ընթացքում պահպանել էին իրանց գոյութեանը, խորտակվեցին արտասովոր արագութեամբ:

Յեւ Տոլստոյի հայացքներում յեղած հակասութեանները պետք և զնահատել վնչ թե ժամանակակից բանվորական շարժման և ժամանակակից սոցիալիզմի տեսակետից (այդպիսի զնահատութեան, հարկաւ, անհրաժեշտ է, բայց դեռ բավարար չեն), այլ՝ արշավող կապիտալիզմի, մասսաների քայքայման և հողազրկութեան դժուգոված այն բողոքի տեսակետից, վոր պետք է ծնունդ առնել ուստական նահապետական դուռը:

Տոլստոյը ծիծաղելի չէ, վորպես մարդկութեան փրկութեան համար նոր հեղատոմսեր հորինող մարդարեւ և այդ պատճառով բոլորովին վողորմելի չեն արտասահմանյան և ուսու գոյութեան յաները, վորոնք ցանկացան զողմայի վերածել նրա ուսմունքի հենց ամենաթույլ կողմը: Տոլստոյը մեծ է, վորպես արտահայտիչը այն զազաւարների և այն տրամադրութեանների, վոր կուտակվել էին Ռուսաստանի բուրժուական հեղափոխութեան առաջացման պահին, միլիոնավոր ուսու գյուղացիութեան մեջ:

Տոլստոյը որդիինալ է, վորովհետեւ նրա հայացքների հանրազումարը, վոր ֆրասակար և վորպես ամբողջութեան՝ արտահայտում է հենց մեր հեղափոխութեան՝ վորպես գյուղացիական բուրժուական հեղափոխութեան առանձնահատկութեանները:

Տոլստոյի հայացքներում յեղած հակասութեանները այս տեսակետից — իսկական հայելին են հանդիսանում այն հակասական պայմանների, վորոնց մեջ և գտնվել գյուղացիութեան պատմական գործունէութեանը մեր հեղափոխութեան ընթացքում: Մի կողմից՝ ճորտատիրական ճնշման դարերը և հետոնֆորմյան արագաթափ քայքայման տասնամյակները ատելութեան, չարութեան և վճռականութեան խելահեղութեան լեռներ կուտակեցին: Զգուսմը՝ հիմնիվեր քանդելու և՛ արքունական յեկեղեցին, և՛ կալվածատերերին, և՛

կալվածատիրական կառավարությունը, վոլնչացնելու հողատիրությունն բոլոր հին և նոր ու կարգերը, մաքրելու հողը, կառուցելու վոստրիկանական — դասակարգային պետություն փոխարեն՝ ազատ և իրավահավասար մանր գյուղացիների հանրակեցություն, — այս ձգտումն, ահա, կարմիր թելի պես և անցնում գյուղացիների բոլոր պատմական քայլերի միջով մեր հեղափոխության բնթացքում և, անտարակույս և, վոր Տոլստոյի գրվածքների գաղափարական բովանդակությունը շատ ավելի գյուղացիական հենց այս ձգտմանն և համապատասխանում, քան թե վերացական շքրիտառեական անարխիզմին, ինչպես յերբևեմ զնահատում են նրա հայացքների շարահանրը:

Մյուս կողմից — գյուղացիությունը, ձգտելով դեպի հանրակեցություն նոր և նոր, շատ անգիտակցորեն, նահապետական ևնով և յուրողիվորեն եր վերաբերվում այն խնդրին, թե ինչպիսին և լինելու այդ հանրակեցությունը, ինչպիսի պայքարով պետք և նվաճել այդ ազատությունը, ինչպիսի ղեկավարներ նա կարող և ունենալ այդ պայքարում, ինչպես ևն վերաբերվում գյուղացիական հեղափոխության շահերին բուրժուազիան և բուրժուական ինտելիգենցիան, ինչի համար և անհրաժեշտ ցարական իշխանությունն բռնի տապալումը՝ կալվածատիրական հողատիրությունը վերջ տալու նպատակով Գյուղացիության ամբողջ անցյալ կյանքը սովորեցրել եր նրան ատելու պարոնին (աղային) և չինովնիկին (աստիճանավորին), սակայն՝ չեր սովորեցրել և չեր ևլ կարող սովորեցնել թե վերադ պետք և նա այս բոլոր հարցերի պատասխանը փնտռի: Մեր հեղափոխության մեջ գյուղացիության փառապաշտման մասն իրապես մաքառում եր՝ զեթ փոքր ինչ կազմակերպվելով այդ նպատակի համար, և արդեն իսպառ աննշան մասն եր, վոր ղենքը ևն ղին վոտքի յեր յեղնում՝ իր թշնամիներին բնաջնջելու, ցարական ծառաներին և կալվածատերերի պաշտպաններին վոլնչացնելու համար: Գյուղացիության մեծագույն մասը վողորում և աղաթում եր, բարոյախոսում և յերազում եր, խրնդիրներ գրում ու ժմիջնարդներ ուղարկում, — իսկ և իսկ ևն Նիկոլայիվիչ Տոլստոյի վողով: Յեվ ինչպես միշտ լինում և նման ղեպքերում՝ տոլստոյական ևն նպահությունը քաղաքականությունից, սոլստոյական հրաժարիմքը քաղաքականությունից, ղեպի այդպիսին հեռաքրքրությունն չունենալը և այդպիսին չըմբռնելը այն հետևանքն եյին ունենում, վոր ղիտակից և հեղափոխական սլոգանատրիատին հետևում եր միայն փոքրամասնությունը, մինչդեռ մեծամասնությունը բաժին դարձավ այն բոլոր անսկզբունք, ստրկամիտ, բուրժուական ինտելիգենտներին, վո-

բռնք կաղեկներ անունով վաղ եյին տալիս արուղովիկներին ժողովները, Ստոլիպինի նախասենյակը, աներեսաբար մուրում, սահարկում, հաշտեցնում, խոստանում եյին հաշտեցնել, — մինչև վոր նրանց բոլորին դուրս քցեցին ղինվորական կոշիկի մի հարվածով։ Տոլստոյական զաղափարները հայելի յեն — թուլության, մեր գյուղացիական ապստամբության թերությունների, և արտացոլումն են — նահապետական գյուղի անվողնաշարության և ժառանգաբար գյուղացու քարացած յերկշտության։

Վերջէնք 1905-1906 թվականների ղինվորական ապստամբությունները։ Մեր հեղափոխության այդ մարտիկների սոցիալական կազմը — գյուղացիության և պրոլետարիատի միջանկյալ կազմն էր։

Պրոլետարիտը փոքրամասնություն և կազմում, այս իսկ պատճառով զորքերի մեջ յեղած շարժումը մոտավոր չափով անգամ համառուսական այնպիսի միաձուլություն, կուսակցական այնպիսի գիտակցականություն չի ցուցահանում, ինչպիսին ցուցահանեց պրոլետարիտը՝ կարծես կախարդական մեկ ձեռքի շարժումով սոցիալ-դեմոկրատական դառնալով։ Մյուս կողմից՝ չկա վոչինչ առավել սխալական, քան այն կարծիքը, թե ղինվորական ապստամբությունների անհաջողության պատճառը — ղեկավարող սպանների բացակայությունն էր։ Ընդհակառակը՝ հեղափոխական հակայական հառաջադիմությունը շնորոգնայա Վոլայի Ժամանակները արտահայտվեց հենց նրանով, վոր իր իշխանության ղեմ ղենքի ղիմեցին այն տգորշ անասունները, վորոնց ինքնուրույնությունը այնպես վախեցրեց լիբերալ կալվածատերերին և լիբերալ սպայության։ Զինվորը լեցված էր համակրանքով ղեպի գյուղացիական գործը։ Նրա աչքերը բոցավառվում եյին հողի սոսկ անունը միայն լսելիս։ Իշխանությունը մեկ անգամ չե, վոր զորքի մեջ անցնում էր ղինվորական մասսայի ձեռքը, սակայն՝ այդ իշխանությունը վճռականորեն համարյա չէր ոգտադործվում, ղինվորները տատանվում եյին — վորեւ ղորապետի սպանելուց մի քանի ժամ հետո նրանք ազատում եյին կալանքից՝ մուսներին, բանակացություններ եյին սկսում իշխանության հետ, և այնուհետև՝ ղնում եյին ղնդակահարվելու, պառկում եյին մորակների տակ, նորից իրենց վզին եյին ղնում լուծը, — իսկ և իսկ Լեւ Նիկոլայեվիչ Տոլստոյի վողով։

Տոլստոյի արտացոլել և դառնալին տեսլություն, հասունացած ձգտումը ղեպի լավագույնը, հնից ազատագրվելու ցանկությունը և յերազականության անհասուն լինելը, քաղաքական անդաստիարակությունը, հեղափոխական անվողնաշարությունը։ Պատմա-առնականական պայմանները բացատրում են և՛ մասսաների հեղափո-



խական պայքարի ծագման անհրաժեշտությունը, և՛ նրանց անպատրաստությունը պայքարի համար, և՛ տոլստոյական «շարին չհակառակելը», վորպիսին հեղափոխական առաջին կամպանիայի պարտությունն ամենալուրջ պատճառն և հանգիստանում:

Ասում են, թե պարտված բանակները լավ են սովորում: Իհարկե, հեղափոխական զսպակարգերի համեմատությունը բանակների հետ, ճիշտ և, սոսկ շատ նեղ իմաստով, կապիտալիզմի զարգացումը ժամ առ ժամ կերպարանափոխում և սրում և այն պայմանները, վոր հեղափոխական-դեմոկրատական պայքարի ելին մղում միլիտանսովոր դուզացիներին, վորոնք իմի ելին համախմբված իրենց ատելությունով դեպի կալվածատեր-նորտատերերն ու նրանց կառավարությունը:

Հենց իր իսկ դուզացիության մեջ փոխանակության, շուկայի տիրապետության և փողի իշխանության աճումը ավելի և ավելի յե դուրս վանում նահապետական հինը և նահապետական փրկատուական իդեոլոգիան: Բայց հեղափոխության առաջին տարիների և առաջին պարտությունների մի նվաճումը մասսայական հեղափոխական պայքարի մեջ ակներև և, — զա այն մահացու հարվածն և, վոր հասցվեց մասսաների նախկին տարտամության և թուլամորթության: Մահմանադները դարձել են ավելի պարզորոշ: Դասակարգերն ու կուսակցությունները սահմանադժվել են: Ստոլիպինյան դասերի մուրճի տակ, հեղափոխական սոցիալ-դեմոկրատների անշեղ և տոկուն ագիտացիայի պայմաններում, վճռաբար այն սոցիալիստական պրոլետարիատը, այլև դուզացիության դեմոկրատական մասսաները անխուսափելիորեն առաջ պիտի քաշեն առավել կոփված մարտիկներ, վորոնք քանի դեռն՝ այնքան ավելի քիչ ընդունակ պետք և լինեն ընկնելու տոլստոյականության մեր պատմական մեղքի մեջ:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Հ  
25802

18721





— Eh bien, mon prince. Gênes et Lucques ne sont plus que des apanages, des *կալվածները*, de la famille Buonaparte. Non, je vous prévienne, que si vous ne me dites pas, que nous avons la guerre, si vous vous permettez encore de pallier toutes les infamies, toutes les atrocités de cet Antichrist (ma parole, j'y crois) — je ne vous connais plus, vous n'êtes plus mon ami, vous n'êtes plus, *իմ հավատարիմ սարուկը*, comme vous dites<sup>1</sup>. *Ե, բարե անդ, բարե*. Je vois que je vous fais peur<sup>2</sup>, *նստեցեք և պատմեցեք*:

Այսպես եր *խոսում* 1805 թվի հուլիսին հայտնի Աննա Պավլովնա Շերերը, կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի մերձավոր ֆրեյ-լինան, զիմափորելով նշանավոր ու բարձրաստիճան իշխան Վալերիին, վոր առաջին յեկողն եր նրա յերեկույթին: Մի քանի որ եր Աննա Պավլովնան հաղում եր. իր ասելով գրիպպ ուներ (գրիպպն այն ժամանակ նոր բառ եր, վոր դարձ էյին ածում շատ սակավ մարդիկ): Առավոտյան կարմրագգեստ լաքեյի միջոցով ցրած բուր հրափիրատումների մեջ նա միատեսակ գրեկ եր.

«Si vous n'avez rien de mieux à faire, M. le comte (կամ mon prince), et si la perspective de passer la soirée chez une pauvre malade ne vous effraye pas trop, je serai charmée de vous voir chez moi entre 7 et 10 heures. Annette Scherer»<sup>3</sup>.

<sup>1</sup> «Ե, իշխան, Ձենովան ու Լուկան գարձան վոչ ավելին, քան Բոնապարտի առձմի կալվածները: Վոչ, յես անդ նախագգուշացնում եմ, յեթե ինձ չեք առի, վոր մենք պատերազմ ունենք, յեթե դուք ելի թույլ կտաք անդ պաշտպանել այդ նեոի (յես, իսկպես, հավատում եմ, վոր նա նեո է) գարշելի ու սարսափելի արարքները: — յես անդ այլևս չեմ նախշում, դուք այլևս իմ բարեկամը չեք, դուք այլևս իմ հավատարիմ սարուկը չեք, ինչպես դուք եք առում:

<sup>2</sup> Տեսնում եմ, վոր յես անդ վախեցնում եմ:

<sup>3</sup> «Եթե դուք, կոմս (կամ իշխան) նկատի չունեք վոչինչ ավելի լավը և յեթե յերեկոն թշվառ հիվանդին նեո անցնելու հեռանկարը անդ շատ չի վախեցնում, շատ ուրախ կլինեմ անդ այսոր տեսնել իմ տանը յոթ և տասն ժամերի արանքում: Աննա Շերեր:

— Dieu, quelle virulente sortiel!<sup>1</sup> — աղապիսի ընդունելությունից բնավ չչփոթվելով պատասխանեց ներս մտնող իշխանը՝ հազին պալատական ասեղնազարծ նշանազգեստ, յերկարաճիտ գուլպաներ, կոշիկներ. կուրծքն աստղերով զարդարած, տափակ դեմքին պայծառ արտահայտություն:

Նա խոսում եր այն ընտիր ֆրանսերենով, վորով վոչ միայն խոսում, այլև մտածում էյին մեր պապերը, և այն հանդարտ, հովանավորող ինտոնացիաներով, վոր հատուկ են բարձր շրջանում ապրած և պալատում ծերացած նշանավոր մարդուն: Նա մոտեցավ Աննա Պավլովնային, համրուրեց նրա ձեռք՝ դեմ անելով նրան անուշաոտ յուզերով ոծված ու փայլուն իր ճաղատն ու հանդիստ նստեց բազմոցի վրա:

— Avant tout dites moi, comment vous allez, chère amie?<sup>2</sup> Հանգստացրեք ձեր բարեկամին, — ասավ նա, ձայնը չփոխելով և մի յեղանակով, վորի մեջ, քաղաքավարության ու համակրանքի յետև, զգացվում եր անտարբերություն և անդամ հեղնանք:

— Ի՞նչպես կարելի յե առողջ լինել... յերբ բարոյապես տանջվում ես: Միթե կարճ ե զգացմունք ունեցող մարդը հանդիստ լինել մեր որերին, — ասավ Աննա Պավլովնան: — Դուք, հույս ունեմ, ամբողջ յերեկոն կՅեմք ինձ մոտ:

— Իսկ անդիսական դեսպանի հանդիսը: Այսոր չորեքշաբթի յե: Պետք է յերևամ այնտեղ, — ասավ իշխանը: — Աղջիկս կդա իմ յետևից և կտանի ինձ:

— Կարծում եյի այստեղ տոնը յետաձգված է: Je vous avoue que toutes ces fêtes et tous ces feux d'artifice commencent à devenir insipides<sup>3</sup>.

— Յեթե իմանային՝ դուք այդ ցանկանում եք, տոնը կհետաձգեյին, — ասավ իշխանը, ըստ սովորության, լարած ժամացույցի պես, ասելով բաներ, վորոնց նա չեր ել ուզի, վոր հասկատան:

— Ne me tourmentez pas. Eh bien, qu'a-t-on décidé par rapport à la dépêche de Novosilzoff? Vous savez tout<sup>4</sup>.

— Ի՞նչպես ասեմ, — ասավ իշխանը ստոր, ձանձրադին յեղանակով: — Qu'a-t-on décidé? On a décidé que Buonaparte a brû-

<sup>1</sup> Ո՛ր, վորպիսի դաժան հարձակում:

<sup>2</sup> Նախ և առաջ ասե՛ք՝ Ի՞նչպես է ձեր առողջությունը:

<sup>3</sup> Խոստովանում եմ՝ բոլոր այդ հանգեաներն ու հրթիռները անտանելի յեն հառնում:

<sup>4</sup> Ինձ մի տանջե՛ք, չէ, Ընձ վորոշեցին Նովոսիլցիեի հեռագրի ամբիփ: Դուք բոլորը գիտե՛ք:

l'é ses vaisseaux, et je crois que nous sommes en train de brûler les nôtres<sup>1</sup>. — Իշխան Վասիլին միշտ խոսում էր ծուլորեն, ինչպես դերասանն է ասում հին պիեսի դերը: Աննա Պավլովնա Շերերը, ընդհակառակը, չնայած իր քառասնամյա տարիքին, լի յիւ աշխույժով ու յետանդով:

Յանդավառ կին լինելը դարձել էր նրա հասարակական դերքը, և յերբեմն, անգամ յերբ նա այդ չէր ել ուզում, վարպետի չհրաժարիւնքն իրեն ճանաչող մարդկանց՝ դառնում էր խանդավառ: Զուսպ ժպտալ, վոր շարունակ խաղում էր Աննա Պավլովնայի դեմքին, թեև չէր սաղում նրա մաշված դիմագծերին, արտահայտում էր, ինչպես յերես առած յերեխաների մոտ, իր սիրելի պակասության մշտական դիտակցությունը, պակասություն, վորից նա չի ուզում, չի կարող և կարեւոր չի համարում ուղղել:

Քաղաքական դորժերին վերաբերող զրույցի կիսին՝ Աննա Պավլովնան տաքացավ:

— Ախ, Ավստրիայի մասին մի խոսեք ինձ հետ: Յես, դուցե վոչինչ չեմ հասկանում, բայց Ավստրիան յերբեք պատերազմ չի ցանկացել և չի ցանկանում: Նա դավաճանում է մեզ: Ռուսաստանը մենակ պետք է դառնա Յեվրոպայի փրկիչը: Մեր բարերարը դիտի իր բարձր կոչումը և հավատարիմ կմնա դրան: Ահա մի բան, վորին յես հավատում եմ: Մեր բարի և սքանչելի Թագավորին սպասում է մեծազույն մի դեր այս աշխարհում, և նա այնքան առաքինի ու բարի յե, վոր աստված կողմի նրան, և նա կիրադարձի իր կոչումը՝ կճնշի հեղափոխության հիգրան, վորն այժմ ել ափելի սարսափելի յե դարձել՝ հանձին այդ մարդասպանի ու չարադործի: Մենք մենակ պետք է քաղենք անմեղի արյունը... Ո՛ւմ վրա պետք է հույս դնենք, հարցնում եմ ձեզ... Անդլիան իր վաճառականական հոգով չի ըմբռնի և չի կարող ըմբռնել Ալեքսանդր կայսեր հոգու ամբողջ մեծությունը: Նա հրաժարվեց պարպել Մալթան: Նա մեր դորժողությունների մեջ յետին մըտքեր և փնտռում: Ի՞նչ են ասել նրանք Նովոսիլցեվիին... Վաչինչ, նրանք չեն ըմբռնել, և չեն կարող ըմբռնել անձնազոհությունը մեր կայսեր, վոր վոչինչ չի ցանկանում իր համար, այլ ամեն ինչ ցանկանում է աշխարհի բարորության համար: Յեվ ի՞նչ խոստացան նրանք: Անչինչ: Յեվ ինչ ել խոստացել են, այն ել չի լինի: Պրուսիան հայտարարել է արդեն, թե Բոնապարտն անհաղթելի

<sup>1</sup> Ի՞նչ վորոշեցին: Վորոշեցին, վոր Բոնապարտն այրել է իր բոլոր նավերը, և մենք նույնպես, կարծեմ, պատրաստ ենք այրել մերը:

յն և թե ամբողջ Յեվրոպան վաշինչ չի կարող նրա դեմ... Յեվ յես չեմ հավատում թե Հարդենբերգի և թե Հաուզվիցի վճշ մի խոսքին: Cette fameuse neutralité prussienne, ce n'est qu'un piège<sup>1</sup>. Յես հավատում եմ միայն աստծուն և մեր սիրելի թագավորի բարձր ճակատագրին: Նա կերկի Յեվրոպան... — Նա հանկարծ կանգ առավ ու հեղնորեն ժպտաց իր բռնկման վրա:

— Յես կարծում եմ, — ասավ իշխանը ժպտալով, — յեթե մեր սիրելի Վինցենհերոզեյի փոխարեն ձեզ ուղարկեյինք, դուք զրոհով կառնեյիք պրուսական թագավորի համաձայնությունը: Դուք այնպես պերճախոս եք: Դուք ինձ թեյ կտո՞ք:

— Իսկույն: A propos, — ավելացրեց նա, կրկին հանգստանալով, — այսօր ինձ մոտ յերկու շատ հետաքրքրական մարդիկ են լինելու. le vicomte de Mortemart, il est allié aux Montmorency par les Rohans<sup>2</sup>. Ֆրանսայի լավագույն տոհմերից մեկը: Դա լավ վաթարանդիններից մեկն է, իսկականներից: Յեվ հետո l'abbé Morio<sup>3</sup>. Դուք ճանաչո՞ւմ եք այդ խորամիտ մարդուն: Թագավորն ընդունել է նրան: Գլխեք:

— Ա՛, Շատ ուրախ կլինեմ, — ասավ իշխանը: — Ասացեք. — ավելացրեց նա, կարծես հենց նոր միայն հիշելով ինչ-վոր բան և առանձնապես անփուլթ, մինչդեռ այն, ինչի մասին հարցնում եր, նրա այցելության գլխավոր նպատակն էր, — ճիշտ է, վոր l'impératrice-mère<sup>4</sup> ցանկանում է, վոր բարոն Ֆունկեն նշանակվի առաջին քարտուղար Վեննայում: C'est un pauvre sire, ce baron, à ce qu'il paraît<sup>5</sup>. Իշխան Վասիլին ցանկանում էր իր վորդու համար ձեռք բերել այդ պաշտոնը, վոր սակայն կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի միջոցով ջանում էին տալ բարոնին:

Աննա Պավլովնան զրեթե փակեց աչքերը ի նշան այն բանի, վոր վոչ ինքը, վոչ ուրիշ մեկը չեն կարող դատել այն բանի մասին, թե ինչն է հաճելի կամ ինչն է դուր գալիս կայսրուհուն:

— Monsieur le baron de Funke a été recommandé à l'impératrice-mère par sa soeur<sup>6</sup>, — ասավ նա տխրադին, չոր յեղանալով: Այն վայրկյանին, յերբ Աննա Պավլովնան հիշեց կայսրուհուն, նրա դեմքը հանկարծ ընդունեց հավատարմության և հար-

<sup>1</sup> Գրուխայի այդ տխրահույսկ չեղոքությունը — թակարդ է միայն:

<sup>2</sup> Ի դեպ — վիկոնտ Մորանմարը. նա ազգակցություն ունի Մոնմորանսի հետ՝ Ռոդանների միջոցով:

<sup>3</sup> Աբբե Մորիս:

<sup>4</sup> Մայր-կայսրուհին:

<sup>5</sup> Այդ բարոնը, կարծեմ, չնչին անձնավորություն է:

<sup>6</sup> Բարոն Ֆունկեյին մայր-կայսրուհուն հանձնարարել է իր քույրը:

գանձի խորին ու անկեղծ արտահայտություն, միացած մի տըխուրության հետ, վար պատահում էր նրան ամեն անգամ, յերբ գրույցի մեջ հիշում էր իր բարձր հովանավորուն։ Նա ասավ, վար նորին մեծությունը բարեհաճել է բարոն Ֆունկելյին ցույց տալ beaucoup d'estime<sup>1</sup>, ու նրա նայվածքը նորից մշուշվեց տըխուրությամբ։

Իշխանն անտարբեր լուց։ Աննա Պավլովնան իրեն հատուկ պաշտական և կանացի ճարպկությամբ ու տակտի արագությամբ, կամեցավ և՛ խայթել իշխանին, վար համարձակվեց այդպես արտահայտվել կայսրուհու հանձնարարած մարդու մասին, և միևնույն ժամանակ մխիթարել նրան։

— Mais à propos de votre famille<sup>2</sup>, — ասավ նա, — գիտե՞ք, վար ձեր դուստրը այն քրից, յերբ սկսել է հասարակության մեջ յերևալ, fait les délices de tout le monde. On la trouve belle, comme le jour<sup>3</sup>.

Իշխանը գլուխը՝ խոնարհեց ի նշան հարգանքի և յերախտահիտության։

— Յես հաճախ մտածում եմ, — շարունակեց Աննա Պավլովնան բողեական լուսթյունից հետո, նստած տեղը մոտենալով իշխանին և սիրալիր ժպտալով, կարծես զբանով արտահայտելով, վար քաղաքական ու աշխարհիկ գրույցները վերջացան և այժմ սկսվում է մտերմականը, — յես հաճախ մտածում եմ, թե ինչպես յերբևմե անարդար կերպով և բաշխվում կյանքի յերջանկությունը։ Ինչու համար է բախտը ձեզ տվել այդպիսի յերկու հիանալի դավաններ (բացի Անատոլիից, կրտսերից, յես նրան չեմ սիրում, — ավելացրեց նա անտարկելի ձևով, հոնքերը բարձրացնելով), այդպիսի սքանչելի զավակներ։ Իսկ դուք, ճիշտն ասած՝ շատ քիչ եք զննահատում նրանց և զրա համար նրանց արժանի չեք։

Յեվ նա ժպտաց իր խանդավառ ժպտով։

— Que voulez-vous? Lafater aurait dit que je n'ai pas la bosse de la paternité<sup>4</sup>, — ասավ իշխանը։

— Թողե՛ք հանաքները։ Յես ցանկանում եյի լուրջ խոսել ձեզ հետ։ Գիտե՞ք, յես դժգոհ եմ ձեր կրտսեր վորդուց։ Խոսքը մեր մեջ (Աննա Պավլովնայի դեմքը տխուր արտահայտություն ըն-

<sup>1</sup> Եստ հարգանք։

<sup>2</sup> Ի զեպ ձեր ընտանիքի մասին։

<sup>3</sup> Դարձել և վաղջ հասարակության հիացման առարկան։ Նրան զանում են զեզեցիկ, ինչպես լույսը։

<sup>4</sup> Ի՞նչ եք ուղում դուք։ Լաֆատերը կտանք, թե յես ծնողական սիրտ ունեցե՛ք չունեմ։



դուռնեց), նրա մասին խոսում էլին մայր-կայսրուհու մոտ և խղճում ձեզ...

Իշխանը չէր պատասխանում, բայց Աննա Պավլովնան անխռս, խորհրդավորությամբ նայելով նրան, սպասում էր պատասխանի։ Իշխան Վասիլին հոնքերը կիտեց։

— Դուք ինչ եք ցանկանում, վոր յես անեմ, — ասավ նա վերջապես։ — Դուք գիտեք, վոր յես նրանց կրթության, դաստիարակության համար արել եմ բոլորը, ինչ կարող եմ մի հայր, և յերկուսն ել դուրս յեկան des imbéciles<sup>1</sup>։ Իպպոլիտը, զոնե, հանգիստ հիմար ե, իսկ Անատոլը — անհանգիստ։ Ահա միակ տարբերությունը, — ասավ նա, ժպտալով ավելի անբնական ու վողեորված, քան սովորաբար, և այդ միջոցին նրա բերանի մոտերքը զոյացած կնճիռներու մոտանալու պես յերևան յեկավ ինչ-վոր անսպասելի կոպիտ ու տհաճ մի բան։

— Յեզ ինչո՞ւ յեն ձեզ նման մարդիկ զավակներ ունենում։ Յեթե դուք հայր չլինեյիք, յես վա՛ղ մի բանում չէյի կարող հանգիմանել ձեզ, — ասավ Աննա Պավլովնան, աչքերը մոտիկո՞ւ վեր բարձրացնելով։

— Je suis votre<sup>2</sup> հավատարիմ ստրուկը, et à vous seule je puis l'avouer. Իմ զավակները — ce sont les entraves de mon existence<sup>3</sup>. Դա իմ խաչն ե։ Յես այսպես եմ բացատրում ինձ։ Que voulez vous<sup>4</sup>... — Նա լռեց, մի շարժումով արտահայտելով իր հնազանդությունը դատան ճակատագրին։

Աննա Պավլովնան մտածմունքի մեջ ընկավ։

— Դուք յերբեք չեք մտածել ձեր անառակ վորդի Անատոլին ամուսնացնելու մասին։ Ասում են, — ասավ Աննա Պավլովնան, — թե պառավ ազլիկները ont la manie des mariages<sup>5</sup>. Յես տակալին այդ թուլությունը չեմ զգում մեջս, բայց յես մի petite personne<sup>6</sup> ունեմ, վորը շատ զմբախտ ե իր հոր հետ, une parente à nous, une princesse<sup>7</sup> Բալկոնսկայան։

Իշխան Վասիլին չէր պատասխանում, թեև աշխարհիկ մարդկանց հատուկ<sup>8</sup> կոահելու և հիշելու արագությամբ, զլիք շարժումով ցույց տվեց, թե նկատի առավ այդ տեղեկությունները։

<sup>1</sup> Հիմարներ

<sup>2</sup> Յես ձեռք...

<sup>3</sup> Միայն ձեզ կարող եմ խոստովանել։ Իմ զավակները — իմ գոյության բեռն են։

<sup>4</sup> Ի՞նչ եք կամենում...

<sup>5</sup> Ամուսնացնելու մանիա ունենալ

<sup>6</sup> Փոքրիկ անձնավորություն

<sup>7</sup> Մեր ազգականուհին և, իշխանագուհու...

— Վհչ, դուք գիտեք, վոր այդ Անատուն ինձ տարեկան 40 000 և նստում, — ասով նա, ըստ յերևույթին, անկարող լինելով զսպել իր մտքերի տխուր ընթացքը, նա լռեց:

— Ի՞նչ կլինի հինգ տարի հետո, յեթե այդպես շարունակվի: Voilà l'avantage d'être père<sup>1</sup>. Ձեր այդ իշխանազուտորը հարձուտ է:

— Հայրը շատ հարուստ է և ժլատ: Ապրում է գյուղում: Գիտեք, դա հայտնի իշխան Բալիոնսկին է, վոր պաշտոնանկ է արված դեռ հանդուցյալ կայսեր որոք և սլոուսական թաղավոր հորջորջումն և ստացել: Նա շատ խելացի մարդ է, բայց տարորինակություններով և՛ ծանր բնավորության տեր: La pauvre petite est malheureuse, comme les pierres<sup>2</sup>. Իշխանազուտորը յեղբայր ունի, այն, վոր վերջերս ամուսնացավ Lise Մեյնենի հետ, Կուտուզովի աղյուստանն է: Նա այսոր լինելու յե ինձ մոտ:

— Ecoutez, chère Annette<sup>3</sup>, — ասով իշխանը, բռնելով հանկարծ իր խոսակցի ձեռն ու չգիտես ինչու՝ այն դեպի վար թեքելով: — Arrangez moi cette affaire et je suis votre<sup>4</sup> հավատարիմ ստրուկը à tout jamais (pan, comme mon կառավարիչը m'écrit des<sup>5</sup> ղեկուցադրերը) покой-я. Նա լավ ընտանիքից է և հարուստ: Այն, ինչ հարկավոր է ինձ:

Յեվ նա իրեն հատուկ ազատ ու մտերմական, նուրբ շարժումներով, բռնեց ֆրեյլինայի ձեռը, համբուրեց այն և, համբուրելով, ասեց՝ բաղկաթուռի մեջ ընկողմանած ու հայացքն այլ կողմ ուղղելով:

— Attendez<sup>6</sup>, — ասավ Աննա Պավլովնան, կոհեկելով: — Եես այսոր իսկ Lise-ի (յերիտասարդ Բալիոնսկու կնոջ) հետ կխոսեմ: Եեվ, թերևս, հաջողի: Ce sera dans votre famille, que je ferai mon apprentissage de vieille fille<sup>7</sup>.

## II

Աննա Պավլովնայի հյուրասրահն սկսեց կամաց-կամաց լցվել: Յեկան Պետերբուրգի մեծամեծները, մարդիկ ամենատարբեր հասակի ու բնավորության, բայց միևնույն հասարակությանը պատկանող. յեկավ իշխան Վասիլիի գլուտորը՝ գեղեցկուհի Ելենը. նա

<sup>1</sup> Ան հայր լինելու առավելությունը:

<sup>2</sup> Դեղճը զժախտ է, ինչպես քարերը:

<sup>3</sup> Լսեցեք, սիրելի Աննետա:

<sup>4</sup> Գլուխ բերեք այդ բանը ինձ համար, և յես ընդմիջտ ձեր...

<sup>5</sup> Ինչպես գրում է իմ կառավարիչը:

<sup>6</sup> Սպասեցեք:

<sup>7</sup> Եես ձեր ընտանիքում կսկսեմ սովորել պառավ աղջկա արհեստը:

յեկեկ եր հոր յետեից, վորպեսզի նրա հետ միասին գնան դեսպանի տոնախմբության: Նա չի ֆրոյդ եր և պարահանդեսի զգեստով: Յեկեկ նաև հայտնի, ինչպես la femme la plus séduisante de Pétersbourg<sup>1</sup>, ֆահեկ փոքրիկ իշխանուհի Բալկոնսկայան, վոր ամուսնացել եր անցյալ ձմեռ և այժմ բարձր շրջաններում չեր լինում իր հղիության պատճառով, բայց տակավին գնում եր փոքրիկ հավաքույթներ: Յեկեկ իշխան Իպպոլիտը, իշխան Վասիլիի վորդին՝ Մորտեմարի հետ, վորին և ներկայացրեց. յեկեկ և Մորիտ արբան և շատ ուրիշները:

— Դուք գեռ չե՞ք տեսել կամ ծանոթ չե՞ք ma tante-ին, — ասում եր Աննա Պավլովնան յեկեկ հյուրերին և, ամենայն լրջությամբ, տանում նրանց ցցուն ժողովներում զարգարված փոքրիկ պառավի մոտ, վոր դուրս եր յեկեկ մյուս սենյակից, յերբ հյուրերն սկսեցին դալ, տալիս եր նրանց անունները, դանդաղորեն նայվածքը հյուրից զարձնելով ma tante-ի վրա, և ապա հեռանում:

Բոլոր հյուրերը վողջույնի այդ ժեսը կատարում եյին ամենքին անհայտ, ամենքին անհետաքրքիր և անհարկավոր մորաքրոջ առաջ: Աննա Պավլովնան տխուր, հանդիսավոր համակրության մեջ եր նրանց վողջույններին, լուկայն հավանություն տալով նրանց: Ma tante-ն յուրաքանչյուրի հետ միևնույն արտասայտություններով խոսում եր հյուրի առողջության մասին, իր առողջության մասին, և նորին մեծություն կայսրուհու առողջության մասին, վոր հիմա, փառք ասածու, ավելի լավ եր: Մոտեցող բոլոր հյուրերը, քաղաքավարությունից զրդված՝ շատ ուղղակիանություն չցուցահանելով, ծանր պարտականություն կատարողի թեթև զգացումով եյին հեռանում պառավից, վորպեսզի ամբողջ յերեկոյի ընթացքում ել վոչ մի անգամ չմոտենան նրան:

Ջահել իշխանուհի Բալկոնսկայան յեկեկ եր ձեռագործի գուլեկեր թավշյա պայուսակը հետը: Նրա սիրունիկ, սևին տվող բեղիկներով վերին շուրթը կարճ եր աստաների համար, բայց այդպես ավելի ևս դուրեկան եր բացվում և եր ավելի դուրեկան ձգվում եր յերբեմն ու հասնում ներքին շուրթին: Ինչպես այդ միշտ պատահում և միանգամայն դրավիչ կանանց, նրա պակասությունը — շուրթի կարճությունը և կիսաբաց բերանը — թվում եյին նրան առանձնահատուկ, միայն նրան սեփական մի գեղեցկություն: Բոլորն ուրախությամբ եյին նայում այդ, առողջության մեջ աշխույժով լեցուն ապագա լավիկ մորը, վոր այնպես թեթևությամբ եր տանում իր հղիությունը: Մերերին և ձանձ-

<sup>1</sup> Գեաքրուրդի ամենամայիշ կինը:

բացող, մտայլ յերիտասարդներին թվում էր, թե նրան նայելով և նրա հետ մի փոքր խոսելով՝ իրենք ևս զվարթանում, նրան են նմանում։ Ով խոսում էր հետը և յուրաքանչյուր խոսքին տեսնում նրա փոքրիկ պայծառ ժպտին ու շարունակ յերևացող ճերմակ փայլուն առաքնները, նա մտածում էր, վոր ինքն այստեղ առանձնապես սիրալիր է։ Յեվ այդպես կարծում էր ամեն մեկը։

Փոքրիկ իշխանուհին, յերերալով, մանր արագ քայլերով, ձեռագործի պայուսակը ձեռին պտտեց սեղանի շուրջը և, ուրախ ու բախտալից, զգեստները կարգի բերելով, նստեց բազմոցին, արծաթե ինքնայեռի մատ, և կարծես բոլորը, ինչ նա անում էր՝ *partie de plaisir*<sup>1</sup> էր իր և բոլոր շրջապատողների համար։

— J'ai apporté mon ouvrage<sup>2</sup>, — ասավ նա, բանալով իր պայուսակը և դիմելով բոլորին միասին։

— Նայեցեք, Annette, ne me jouez pas un mauvais tour, — դիմեց նա տանտիրուհուն։ — Vous m'avez écrit, que c'était une toute petite soirée; voyez, comme je suis attifée<sup>3</sup>.

Յեվ նա ձեռները տարածեց, վոր ցույց տա իր, ժանյակաժոր մախրաղույն նուրբ զգեստը, վոր կրծքից մի փոքր ցած դուռնորած էր լայն ժապավենով։

— Soyez tranquille, Lise, vous serez toujours la plus jolie<sup>4</sup>, — պատասխանեց Աննա Պավլովնան։

— Vous savez, mon mari m'abandonne, — շարունակեց նա նույն յեղանակով, դիմելով գեներալին, — il va se faire tuer. Dites moi, pourquoi cette vilaine guerre?<sup>5</sup> — ասաց նա իշխան Վասիլիին և, պատասխանի չսպասելով, դիմեց իշխան Վասիլիի դուստր գեղեցկուհի Ելենին։

— Quelle délicieuse personne, que cette petite princesse! — ասավ իշխան Վասիլիին կամաց Աննա Պավլովնային։

Շուտով, փոքրիկ իշխանուհուց հետո, ներս մտավ մի հաղթանազամ հաստ յերիտասարդ՝ խուզած գլխով, ակնոցով, հազած այն ժամանակվա ձեռի բաց փայլուն վարտիկ, բարձր ժարո և կինամոնաղույն ֆրակ։ Այս հաստ յերիտասարդը աղբորինի դավակն

<sup>1</sup> Զվարճություն։

<sup>2</sup> Յեռ ձեռագործած վերցրել եմ։

<sup>3</sup> Ինչ հետ վատ հանաքների մի անց։ գուց ինչ գրել էյից, վոր բոլորովին փոքրիկ յերեկույթ է։ Տեսնում եք վորքան վատ եմ հագնված։

<sup>4</sup> Հանդիստ յեղեց, չեղ, գուց ելի բոլորից լավը կլինեց։

<sup>5</sup> Դուք գիտեց, ամուսինս լքում է ինձ։ Գնում է մահի առաջ։ Ասացեք, ինչու համար է այս զգվելի պատերազմը։

<sup>6</sup> Ինչ չքնաղ անձնավորություն է այս փոքրիկ իշխանուհին։

եր Յեկատերինյան նշանավոր ավազանի կոմս Բեզուխովի, վոր այժմ մահամերձ էր Մոսկվայում: Նա տակավին վոչ մի տեղ չէր ծառայում, նոր միայն յեկել էր արտասահմանից, ուր ուսում էր աղնում և առաջին անգամն էր լինում հասարակության մեջ: Աննա Պավլովնան վողջունեց նրան գլխի այնպիսի շարժումով, վորով վողջունում էր իր սալոնի ամենաստոր կարգի մարդկանց: Բայց, չնայած այդ ամենահասարակ տեսակի վողջունին, ներս մտնող Պիեռին տեսնելով Աննա Պավլովնայի դեմքին յերևաց աշխատություն ու յերկյուղ, նման այն բանին, վոր արտահայտվում է ինչ-վոր չափազանց վիթխարի և տեղին անպատշաճ բան տեսնելիս: Թեև, իսկապես, Պիեռը փոքր ինչ խոշոր էր սենյակում յեղած մյուս տղամարդկանցից, բայց այդ վախը կարող էր վերաբերել միայն այն խելացի և միաժամանակ յերկչոտ, դիտող ու բնական նայվածքին, վորով տարբերվում էր նա հյուրասրահում յեղածներից:

— C'est bien aimable à vous, monsieur Pierre, d'être venu voir une pauvre malade<sup>1</sup>, — ասավ Աննա Պավլովնան, յերկյուղալի նայվածքներ փոխանակելով իր մորաքրոջ հետ, վորի մոտ տարավ Պիեռին: Պիեռն ինչ-վոր անհասկանալի բաներ վրա տվեց և շարունակեց աչքերով վորոնել ինչ-վոր բան: Նա ուրախ-ուրախ ժպտաց, գլխով բարեկեղծ փոքրիկ իշխանուհուն, վորպես մոտիկ ծանոթի, և մոտեցավ մորաքրոջը: Աննա Պավլովնայի յերկյուղն իզուր չէր, վորովհետև Պիեռը մինչև վերջը չլսելով մորաքրոջ խոսքը նորին մեծություն կայսրուհու առողջության մասին, հեռացավ նրանից: Աննա Պավլովնան վախեցած կանգնեցրեց նրան, ասելով.

— Դուք Մորիս արքային չե՞ք հանաչում. շատ հետաքրքրահան մարդ ե...

— Այո, լսել եմ նրա հավիտենական խողաղություն ծրագրի մասին, և դա շատ հետաքրքրական է, բայց հագիվ թե հնարավոր...

— Կարծում ե՞ք... — ասավ Աննա Պավլովնան, վորպեսզի մի բան ասած լինի և նորից շարունակի իր տանտիրուհու զբաղումները, բայց Պիեռը կրկնակի անփաղաքավարությունն արավ: Առաջինը նա, զրուցակցի խոսքը կիսատ թողնելով, հեռացավ: Հիմա ել զրույցով զբաղեցրեց Աննա Պավլովնային, վոր ուղում էր հեռանալ նրանից: Նա, գլուխը կոացնելով և մեծ վտանքն իրարից հեռու դնելով, սկսեց ապացուցել Աննա Պավլովնային, թե ինչու յե ինքը կարծում, վոր արքայի ծրագիրը ցնորք է:

<sup>1</sup> Այդ մեծ սիրալիրություն և ձեր կողմից, Պիեռ, վոր թշվառ չեվանդոս այցի յեկաք:

— Մենք հետո կ'իտասենք,—ասավ Աննա Պավլոֆնան ժպտալով։  
 Յեւ, անփորձ, ապրելու կերպը չիմացող յերիտասարդից բաժանվելով, դարձավ իր տանտիրուհու գրադումեներին ու շարունակեց ակննջ դնել ու նայել շուրջը, պատրաստ՝ ողնաթյան հասնելու այն կետին, ուր թուլանում եր զրույցը։ Ինչպես մանարանի տերը, բանվորներին իրենց տեղերը նստեցնելով, անցավ դարձ և անում արհեստանոցում, բայց նկատելով իլիկի կանգնելը կամ անսովոր բարձր ճոխնչը, շտապ վրա յե հասնում, պահում-կանգնեցնում կամ հարկավոր ընթացքը տալիս, այդպես ել Աննա Պավլոֆնան, անցուղարձ անելով իր հյուրասարահում, մոտենում եր լուսն կամ չափազանց շատ խոտոզ խմբին և մի խոռոզով կամ տեղափոխումով կրկին լարում եր համաչափ, վայելուչ խոսակեցնանա։ Բայց բոլոր այդ հոգսերի մեջ նկատելի յեր, վոր նա առանձնապես անհանդիստ եր Պիեռի համար։ Նա հաղածությամբ նայում եր Պիեռին այն ժամանակ, յերը Պիեռը մոտեցավ լսելու այն, ինչ խոսվում 'եր Մարտեմարի շուրջը, և դնաց դեպի ուրիշ մի խումբ, ուր խոսում եր արքան։ Արտասանմանում կրթված Պիեռի համար Աննա Պավլոֆնայի այս յերեկույթն առաջինն եր, վոր տեսնում եր Ռուսաստանում։ Նա քիտեյ, վոր այստեղ հավաքված և Պետերբուրգի ամբողջ ինտելիգենցիան, և նա, ինչպես յերեխան խաղալիքների խանութում, հափշտակված եր։ Նա շարունակ վախենում եր բաց թողնել խեղացի զրույցները, վոր կարող եր լսել։ Նայելով այստեղ հավաքվածների ինքնավստահ և նուրբ դեմքերի արտահայտություններին, նա շարունակ սպասում եր ինչ-վոր առանձին խելոք մի բանի։ Վերջապես, մոտեցավ նա Մորիային։ Զրույցը նրան հետաքրքրական յերեաց, և նա կանգ առավ, առիթի սպասելով իր մտքերն արտահայտելու, ինչպես այդ սիրում են յերիտասարդները։

### III

Աննա Պավլոֆնայի յերեկույթն սկսվել եր։ Իլիկներն ամեն կողմից ազմիում եյին համաչափ ու անլուխի։ Բացի ma tante-ից, վորի կողքին նստել եր միայն մի հասակավոր կին՝ արտասովակալած, նիհար դեմքով, վոր փոքր ինչ ստար եր թվում այս փայլուն հասարակության մեջ, բազմությունը բաժանվել եր յերեք խմբի։ Մեկում, ուր տղամարդիկ ավելի մեծ թիվ եյին կազմում կենտրոնը արքան եր, մյուսում՝ շահենների մոտ՝ գեղեցկուհի-իշխանադուստր Նինը, իշխան Վասիլիի դուստրը, և լավիկ, կարմրադեմ, շահելության շնորհիվ շատ գերուկ փոքրիկ իշխանուհի Բալկոնսկայան։ Յերրորդում՝ Մորտեմարն ու Աննա Պավլոֆնան։



Վիկոնտը սիրունատես, նուրբ դիմագծերով ու ձևերով յերե-տասարդ էր, ըստ յերևույթին իրեն նշանավոր համարող, բայց բարեկերթ լինելով, համեստորեն թույլ էր տալիս, վոր իրենից ոգավի այն հասարակութունը, վորի մեջ գտնվում է Աննա Պավլ-լովնան, ըստ յերևույթին, նրանով հյուրասիրում էր իր հյուրերին։ Ինչպես լավ մետր-դոսելը, վորպես մի գերբնական-սքանչելիք, մատուցում է տավարի մսի այն կտորը, վոր ուտել չենյիր ուզի, յեթե տեսնելիւր այն կեղտոտ խոհանոցում, այնպես էլ Աննա Պավլ-լովնան իր հյուրերին այդ յերեկո մատուցեց նախ վիկոնտին, ապա արքային, ինչպես մի գերբնական, ընտիր բան։ Մորտե-մարի խմբում իսկույն խոսք բացվեց Ենդիենի հերցոգի սպանու-թյան մասին։ Վիկոնտն ասավ, թե Ենդիենի հերցոգն իր մեծա-հոգության զոհն է, և վոր Բոնապարտի կատաղությունն առան-ձին պատճառներ և ունեցել։

— Ah! voyons. Conte<sup>1</sup> nous cela, vicomte<sup>1</sup>, — ասավ Աննա Պավլովնան, ուրախությամբ զգալով, վոր այդ ֆրազը հնչեց մի տեսակ à la Louis XV<sup>2</sup>, — contez nous cela, vicomte<sup>1</sup>.

Վիկոնտը գլուխն իջեցրեց ի նշան հնազանդության և հարգա-լիւր ժպտաց։ Աննա Պավլովնան պտտվեց վիկոնտի շուրջը և բոլորին նրավիրեց լսելու նրա պատմությունը։

— Le vicomte a été personnellement connu de monseigneur<sup>3</sup>, — շնչաց Աննա Պավլովնան մեկին։ — Le vicomte est un parfait conteur<sup>4</sup>, — ասավ նա մի ուրիշի։ — Comme on voit l'homme de la bonne compagnie<sup>5</sup>, — ասավ նա յերրորդին. և վիկոնտը մա-տուցվեց հասարակությանը՝ իր համար ամենաշահավետ կողմով, ինչպես վրան կանաչ ցանված ոռորիք։

Վիկոնտն արդեն ուզեց սկսել իր պատմությունը և թեթև ժպտաց։

— Տեղափոխվեցեք այստեղ, chère Hélène<sup>6</sup>, — ասավ Աննա Պավլ-լովնան գեղեցիկուհի-իշխանադստեր, վոր նստել էր մի քիչ հեռու, կազմելով մյուս խմբի կենտրոնը։

Իշխանադուստր Նլենը ժպտում էր. նա վեր կացավ միանգա-մայն գեղեցիկ կնոջ նույն անփոփոխ ժպիտով, վորով մտել էր հյուրասարան։ Թեթևակի շրջելով իր պարահանդիսային ճերմակ

<sup>1</sup> Դե, պատմեցեք մեզ այդ, վիկոնտ

<sup>2</sup> Լյուգովիկոս XV գահով։

<sup>3</sup> Վիկոնտն անձամբ ծանոթ է յեղեւ հերցոգին։

<sup>4</sup> Վիկոնտը պատմելու զարմանալի վարպետ է։

<sup>5</sup> Ինչպես խելույն հայտնի յե լինում լավ հասարակության մարդը։

<sup>6</sup> Մերելի Նլեն։

դժեհասը, վոր դարդարված եր բաղեղաձև ու մամուռանման դարդերով, և փայլելով ուսերի ճերմակությամբ, մաղերի ու ագամանդների փայլով, նա անցավ իր առջև ճանապարհ բացող ագամարդկանց արանքով և ուղիղ, առանց վորեն մեկին նայելու, բայց բոլորին ժպտալով և կարծես յուրաքանչյուրին իրավունք տալով հիանալու իր հասակի, լեցուն ուսերի (վոր շատ բաց ելին այն ժամանակվա մոդայով) կրծքի ու մեջքի գեղեցկությամբ, և կարծես իր հետ բերելով պարահանդեսի շուքը, մոտեցավ Աննա Պավլովնային: Ելենն այնքան գեղեցիկ եր, վոր նրա մեջ նկատելի չեր վոչ միայն կոկետության հետք: այլ, ընդհակառակը, նա կարծես ամաչում եր իր անկասկած և անչափ ուժեղ հաղթական ներդործող գեղեցկության համար: Նա կարծես ցանկանում ու չեր կարողանում նվաղեցնել իր գեղեցկության ներդործությունը: «Quelle belle personne!» — ասում եր յուրաքանչյուր տեսնող:

Կարծես ինչ-վոր՝ անսովոր բանից դարմացած՝ վիկոնտն ուսերը թոթվեց և աչքերը խոնարհեց այն միջոցին, յերբ Ելենը նստեց իր առջև ու լուսավորեց նրան ևս նույն անփոփոխ ժպիտով:

— Madame, je crains pour mes moyens devant un pareil auditoire<sup>2</sup>, — ասաց նա ժպիտներն գլուխը թեքելով:

Իշխանագուստը իր բաց լեցուն թևով կոթնեց փոքրիկ սեղանին և հարկավոր չհամարեց վորեն բան սսել: Նա ժպտալով սպասում եր: Զրույցի ամբողջ ընթացքում նա նստած եր ուղիղ, նայելով յերբեմն մերթ իր գեղեցիկ գերուկ ձեռին, վոր սեղանին սեղմելուց փոխել եր իր ձեռ, մերթ՝ ել ավելի գեղեցիկ կրծքին, վորի վրա ուղղում եր զոհարաշար մանյակը. մի քանի անգամ ուղղում եր շրջագդեստի ծալքերը և, յերբ զրույցը տալավորություն եր թողնում, նայում եր Աննա Պավլովնային և իսկույն ևեթ դեմքին տալիս եր այն արտահայտությունը, վոր կար ֆրեյլինայի դեմքին, և ապա նորից հանդիստ եր առնում շողուն ժպիտի մեջ: Ելենից հետո տեղափոխվեց և փոքրիկ իշխանուհին թեյասեղանի մոտից:

— Attendez moi, je vais prendre mon ouvrage<sup>3</sup>, — ասավ նա: — Voyons, à quoi pensez-vous?, — դարձավ նա իշխան Իսկուլիտին: — Apportez-moi mon ridicule<sup>4</sup>.

<sup>1</sup> Ի՞նչ գեղեցկուհի յե:

<sup>2</sup> Յեա, իսկապես, վախենում եմ թե իմ ընդունակություններով չբավարարեմ մի այսպիսի հասարակության:

<sup>3</sup> Մպասեցեք, ձեռագործս վերցնեմ:

<sup>4</sup> Ի՞նչի մասին եք մտածում: Բերեք իմ ուղիղկյուլը:



Իշխանուհին ժպտալով ու բոլորի հետ խոսելով, հանկարծ տեղափոխութուն կատարեց և, նստելով, ուրախ-ուրախ ուղղվեց:

— Հիմա ինձ լավ եմ զգում, — ասավ նա և, խնդրելով սկսել, ինքը ձեռագործը ձեռն առավ:

Իշխան Իպոլիտը բերեց նրա ռեդիկյուլը, անցավ նրա յետևը ու, բազկաթոռը մատեցնելով, նստեց նրա կողքին:

Le charmant Hypolyte<sup>1</sup> զարմացնում էր նրանով, վոր անսովոր կերպով նման էր գեղեցկուհի քրոջը, և մանավանդ նրանով, վոր չնայած այդ նմանության, չափազանց տգեղ էր: Նրա դիմագծերը նույնն էին, ինչ վոր քրոջը, բայց քրոջ ամեն ինչը փայլում էր կենսուրախ, ինքնազոհ, ջանք, անփոփոխ ժպտով և մարմնի արտասովոր դասական գեղեցկությամբ. յեղբայրը, ընդհակառակը. նրա գեմքը մշուշված էր ապուշությամբ և արտահայտում էր մշտական ինքնավստահ անբավականություն, իսկ մարմինը նիհար էր ու թույլ: Աչքերը, քիթը, բերանը — բոլորը կարծես սեղմվում-դառնում էր մի անորոշ ու տխուր ծամածռութուն, իսկ ձեռներն ու վոսները միշտ անբնական դիրք էին ընդունում:

— Ce n'est pas une histoire de revenants?<sup>2</sup> — ասավ նա, իշխանուհու կողքին նստելով և հապճեպ լորենտն աչքերին դնելով, կարծես առանց այդ գործիքի չէր կարող խոսել:

— Mais non, mon cher<sup>3</sup>, — ուսերը թոթվելով ասավ զարմացած պատմողը:

— C'est que je déteste les histoires de revenants<sup>4</sup>, — ասավ նա այնպիսի յեղանակով, վորից յերևաց, թե նա այդ խոսքերն ասելուց հետո արդեն հասկացավ, թե ինչ էին նշանակում:

Այդ խոսքերի ինքնավստահ յեղանակից վոշ-վոք չկարողացավ հասկանալ՝ նրա ասածները շատ խելացի, թե շատ հիմար բան էին: Նա հազել էր մութ-կանաչ ֆոռակ, չուլքներ և բաշմակներ, իսկ պանթալոնը ուներ՝ cuisse de nymphe effrayée<sup>5</sup> դույն, ինչպես ինքն էր ասում:

Vicomte<sup>6</sup> շատ լավ պատմեց այն ժամանակները բերն-բերան անցնող այն պատմութունը, թե Մնդիկնի հերցոգը զազանի դնում է Պարիզ m-lle George<sup>7</sup> հետ տեսակցելու, և թե այնտեղ

<sup>1</sup> [Հիմայի Իպոլիտը]:

<sup>2</sup> Այդ պատմութունն ուրվականների մասին չէ:

<sup>3</sup> Բոլորովին վոշ:

<sup>4</sup> Բանն այն է, վոր յես տեսել չեմ կարող վորեւ պատմութուն ուրվականների մասին:

<sup>5</sup> Վախեցած նիմֆայի ազգրերի:

<sup>6</sup> Վիկոնտը:

<sup>7</sup> Մագմուսգել Ժորժի:

հանդիպում և Բոնապարտին, վոր նույնպես վայելում էր նշանա-  
վոր դերասանուհու վոգորմածությունը, և թե այնտեղ, հերցոգին  
հանդիպելով, նապոլեոնը պատահաբար ուշաթափվում է, (վորին  
նա յենթակա յեր) ու մնում հերցոգի ձեռքին, վորից սակայն հեր-  
ցոգը չի ողորկում, բայց թե Բոնապարտը հետադառնում այդ իսկ  
մեծահոգության համար մահվամբ վրեժխնդիր և լինում հերցոգից:

Պատմությունը շատ հաճելի ու հետաքրքրական էր, մանավանդ  
այն տեղում, ուր ախոյանները հանկարծ ճանաչում են իրար, և  
կանայք, թվում էր, հուզված էին:

— Charmant<sup>1</sup>, — ասավ Աննա Պավլովնան, հարցական նայելով  
փոքրիկ իշխանուհուն:

— Charmant, — շնչաց փոքրիկ իշխանուհին, ասեղը ձեռա-  
դարձի մեջ խրելով, կարծես ի նշան այն բանի, վոր պատմության  
հետաքրքրականությունն ու գրավչությունը խանդարում են իրեն  
ձեռագործը շարունակելու:

Վիկտորը գնահատեց այդ լույսայն դրամաները և, գոհությամբ  
ժպտալով, շարունակեց. բայց այդ ժամանակ Աննա Պավլովնան,  
վոր շարունակ նայում էր իր համար վտանգավոր յերիտասար-  
դին, նկատեց, վոր նա մի տեսակ տաքացած ու բարձր խոսում է  
արբայի հետ, ուստի շտապեց վտանգավոր տեղը՝ ողնության: Իրոք,  
Պիեռին հաջողել էր զրույցի բռնվել արբայի հետ քաղաքական  
հավասարակշռության մասին, և արբան, ըստ յերևույթին, հետա-  
քրքրված յերիտասարդի պարզամիտ բորբոքումով, բացատրում  
էր նրան իր սիրած դադափարը: Յերկուսն էլ լսում ու խոսում  
էին չափազանց աշխույժ ու բնականորեն, և այդ էր վոր դուր  
չեկավ Աննա Պավլովնային:

— Միջոցը — յեվրոպական հավասարակշռությունը և droit  
des gens<sup>2</sup>, — ասում էր արբան: Բավական է, վոր մի հզոր պետու-  
թյուն, ինչպես Ռուսաստանը, (վոր հռչակված է իր բարբարոսու-  
թյամբ) անշահախնդիր կերպով անցնի մի դաշնակցության գլուխ,  
վորի նպատակն է Յեվրոպայի հավասարակշռությունը, — և նա  
կփրկի աշխարհը:

— Իսկ ի՞նչպես կդռնեք դուք մի այդպիսի հավասարակշռու-  
թյուն, — սկսեց Պիեռը. բայց այդ ժամանակ մոտեցավ Աննա  
Պավլովնան և, խոսությամբ Պիեռին նայելով, հարցրեց իտալա-  
ցուն, թե նա ինչպես է տանում այստեղի կլիման: Իտալացու  
գեմքը փոխվեց հանկարծ և ընդունեց վիրավորված կեղծ-քաղցր

<sup>1</sup> Սքանչելի յե:

<sup>2</sup> Մարդկանց իրավունքը:

արտահայտություն, վորն, ըստ յերևույթին, սովորական եր նրա համար՝ կանանց հետ զրուցելիս:

— Յես այնքան հմայված եմ հասարակության մտքի ու զարգացման հրապույրներով, մանավանդ կանանց հասարակության, ուր ընդունվելու բախտն ունեցա, վոր ել ժամանակ չունեցա կլիմայի մասին մտածելու, — ասով նա:

Ձեռից չթողնելով այլևս արբային ու Պիետին՝ Աննա Պավլովնան՝ հսկելու հարմարության համար՝ նրանց միացրեց ընդհանուր խմբին:

#### IV

Այդ միջոցին չուրասարան մտավ մի նոր անձնավորություն: Դա յերիտասարդ իշխան Անդրեյ Բալկոնսկին եր՝ փոքրիկ իշխանուհու ամուսինը: Իշխան Բալկոնսկին կարճահասակ, շատ դեղնեցիկ յերիտասարդ եր, շեշտված ու չոր դիմագծերով: Նրա կերպարանքի վրա ամեն ինչ, սկսած նրա հողմած տաղտուկ նայվածքից մինչև հանդարտ, համաչափ քայլվածքը ամենասուր հակադրություն եր ներկայացնում իր փոքրիկ աշխույժ կնոջ համեմատությամբ: չուրասարանում դռնվողները, ըստ յերևույթին, վոչ միայն ծանոթ էին նրան, այլև ձանձրացրել էին նրան այնպես, վոր նրանց նայելն ու լսելն անգամ շատ ձանձրալի եր նրա համար: Յեղ մահնից ավելի նրան ձանձրացրել եր, կարծես, իր դեղնեցիկ կնոջ դեմքը: Նա իր դեղնեցիկ դեմքը ազդապնեց մի ծամածուծությամբ յերեսը դարձրեց կնոջից: Համարուրեց Աննա Պավլովնայի ձեռը ե, աչքերը կկոցելով, մի հայացք նետեց հասարակության վրա:

— Vous vous enrôlez pour la guerre, mon prince?<sup>1</sup> — ասով Աննա Պավլովնան:

— Le général Koutouzoff, — ասով Բալկոնսկին, ֆրանսացու պես շեշտելով վերջին zoff վանկը, — a bien voulu de moi pour aide-de-camp<sup>2</sup>...

— Et Lise, votre femme?<sup>3</sup>

— Նա գլուղ պիտի գնա:

— Մեղք չե՞ք դորձում, վոր մեզ զրկում եք ձեր սքանչելի կնոջ ներկայութենից:

— André<sup>4</sup>, — ասով կինը, դիմելով ամուսնուն նույն կոկես

<sup>1</sup> Դուք պատերազմ գնալու պատրաստութիւն եք տեսնում, իշխան:

<sup>2</sup> Գնե՛րաւ Կուտուզովը բարեհաճում ե նշանակել ինձ իրեն աշխատանքի:

<sup>3</sup> Իսկ Լիզան, ձեր կինը:

<sup>4</sup> Անդրեյ:

յեղանակով, վորով դիմում եր և կողմնակի մարդկանց, — ինչպիսի պատմություն արավ մեղ վիկոնտը m-lle Ժորժի և Բոնապարտի մասին:

Իշխան Անդրեյը դեմքը խոժոռեց ու շրջվեց: Պիեռը, վոր իշխան Անդրեյի հյուրասրահ մտնելուց ի վեր ուրախ բարեկամական հայացքը չեր հեռացնում նրանից, մոտեցավ ու բռնեց նրա ձեռքը: Իշխան Անդրեյը, առանց նայելու, դեմքը ծամածոնեց՝ արտահայտելով իր դժգոհությունը ձեռք բռնողի դեմ, բայց, տեսնելով Պիեռի ժպտուն յերեսը, ինքն ևս ժպտաց անսպասելի բարձր ու հաճելի ժպիտով:

— Այ թե ինչ... Դու ել Ես մեծ հասարակության մեջ, — ասավ նա Պիեռին:

— Իրտեյի, վոր դուք լինելու յեք այստեղ, — պատասխանեց Պիեռը: — Դալու յեմ ձեզ մոտ ընթրիքի, — ավելացրեց նա կամաց, վորպեսզի չխանդարի վիկոնտին, վորը շարունակում եր իր պատմությունը: — Կարելի՞ յե:

— Վաչ, չի կարելի, — ասավ իշխան Անդրեյը ծիծաղելով, ձեռի սեղմումով հասկացնելով Պիեռին, վոր այդ մասին հարցնելն ավելորդ է:

Նա ուզում եր ելի ինչ-վոր բան ասել, բայց այդ միջոցին տեղից յելավ իշխան Վասիլին իր աղջկա հետ, և յերկու յերիտասարդները վտռքի յելան՝ նրանց ճանապարհ տալու:

— Դուք ինձ ներեցեք, սիրելի վիկոնտ, — ասավ իշխան Վասիլին ֆրանսուցուհու, սիրտին ցած քաշելով նրա թևքը դեպի ակնոքը, վորպեսզի նա վտռքի չկանգնի: — Դեսպանի այդ դժբախտ տոնախոսմբությունը զրկում է ինձ հաճույքից և ընդհատում է ձեզ: Շատ ցավում եմ, վոր թողնում եմ ձեր հիասքանչ յերեկոն, — ասավ նա Աննա Պավլովնային:

Նրա դուստրը՝ Ելենը, զգեստի ծալքերը թեթևակի պահած, անցավ ակնոնների արանքով. ժպիտը նրա զեղեցիկ դեմքին փայլում եր ել ավելի պայծառ: Պիեռը դրեթե յերկյուղալի, սքանչացած աչքերով նայեց այդ զեղեցիկուհուն, յերբ նա անցնում եր իր կողքով:

— Շատ զեղեցիկ է, — ասավ իշխան Անդրեյը:

— Շնորհ, — ասավ Պիեռը:

Նրանց մոտով անցնելիս՝ իշխան Վասիլին բռնեց Պիեռի ձեռքը և դարձավ Աննա Պավլովնային:

— Կրթեցեք այս արջին, — ասավ նա: — Ահա մի ամիս է ապրում է ինձ մոտ և առաջին անգամն եմ տեսնում սրան հասարակության մեջ: Յերիտասարդի համար վաչ մի բան այնքան կարևոր չի, վորքան խելացի կանանց շրջանը:

## V

Աննա Պավլովնան ժպտաց և խոստացավ զրադվել Պիեռով, վորը, նա գիտեր, հոր կողմից ազգական և իշխան Վասիլին: Ma tante-ի մոտ նստած տարիքոտ կինը հապճեպ վեր կացավ և նախասննդակում հասավ իշխան Վասիլին: Նրա դեմքից չքացավ նախկին կեղծ հետաքրքրությունը: Նրա բարի լացակուսած դեմքը արտահայտում էր միայն անհանգստություն ու յերկյուղ:

— Ի՞նչ կասեք, իշխան, իմ Բորիսիս մասին, — ասավ նա: (Նա Բորիս անունը արտասանեց ռ-ն առանձնապես շեշտելով): — Յես այլևս Պետերբուրգում մնալ չեմ կարող: Ասացեք, ի՞նչ լուր կա՞րող եմ տանել իմ խեղճ վորդուն:

Չնայած վոր իշխան Վասիլին դժկամությամբ և զրեթե անքաղաքավարությամբ էր լսում տարիքոտ կնոջը և անգամ արտահայտում էր անհամբերություն, այդ կինը սիրալիր ժպտում էր նրան և, վորպեսզի նա չգնա, բռնեց նրա ձեռը:

— Բավական և մի խոսք ասեք թաղավորին և վորդիս ուղղակի կփոխադրվի զվարդիս, — խնդրեց կինը:

— Հավատացեք, վոր ձեռիցս յեկածը կանեմ, իշխանուհի, — պատասխանեց իշխան Վասիլին, — բայց ինձ համար դժվար և թաղավորին խնդրել. խորհուրդ կտայի ձեզ՝ իշխան Գոլիցինի միջոցով դիմել Ռուսմանցեին. այդ ավելի խելացի կլիներ:

Տարիքոտ կինը կրում էր իշխանուհի Գրուբեցկայա անունը, վոր Ռուսաստանի լավագույն տոհմերից մեկի անունն էր, բայց իշխանուհին ազգատ էր, վաղուց քաշվել էր բարձր շրջաններից և իր նախկին կապերը կորցրել: Նա այժմ յեկել էր խնդրելու՝ միակ վորդուն զվարդիայում տեղավորելու համար: Միայն իշխան Վասիլին տեսնելու համար էր յեկել Աննա Պավլովնայի յերեկույթին, միայն զրա համար էր լսում վիկոնտի պատմությունը: Նա վախեցավ իշխան Վասիլի խոսքերից. նրա յերբեմնի դեղեցիկ դեմքի վրա զայրույթ յերևաց, բայց դա տեկց միայն մի վայրկյան: Նորից ժպտաց ու ավելի պինդ բռնեց իշխան Վասիլի ձեռքը:

— Լսեցեք, իշխան, — ասավ նա, — յես յերբեք չեմ խնդրած ձեզ, յերբեք չեմ խնդրելու, յերբեք չեմ հիշեցրել ձեզ, թե վորքան հայրս բարյացակամ էր դեպի ձեզ: Բայց այժմ, ասածո անունով աղերսում եմ ձեզ, արեք այդ բանը վորդուս համար, և յես ձեզ կհամարեմ բարեբալ, — շտապ ավելացրեց նա: — Վճշ, մի բարեկամեք, այլ խոստացեք: Յես Գոլիցինին խնդրեցի՝ մերժեց: Soyez le bon enfant que vous avez été<sup>1</sup>, — ասավ նա, ջանալով ժպտալ, այն ժամանակ, յերբ աչքերում արտասուք կար:

<sup>1</sup> Յեղեք բարի, ինչպես յեղել եք:

— Հայրիկ, մենք ուշանում ենք, — սիրուն գլուխն անտիկ ուսերի վրա դարձնելով ասավ իշխանագուստը Ելենը, վոր սպասում էր դռների մոտ:

Սակայն հասարակութան մեջ ունեցած ազդեցութունը մի կապիտալ է, վորը պետք է պահպանել, վորպեսզի չկորչի: Իշխան Ղասիկին այդ բանը գիտեր, և պարզ գիտակցելով, վոր յեթե սկսի բոլոր իրեն զիմոզների համար թաղավորին խնդրել, շատով ինքը կգրկվի իր համար խնդրելու հնարավորութունից, ուստի իր ազդեցութունը շատ սակավ էր գործադրում: Իշխանուհի Դուրեցկայայի գործում, սակայն, նոր հիշեցումից հետո, նա մի տեսակ խղճի խայթ դդաց: Կինը հիշեցրեց նրան ճշմարտութունը. իր ծառայութան առաջին քայլերով նրա հորն էր պարտական: Բացի դրանից՝ այդ կնոջ վարժունքից դդաց, վոր նա ան կանանցից, մանավանդ այն մայրերից է, վորոնք յեթե մի բան մտադրեն, յետ չեն կանգնի, մինչև վոր իրենց ցանկութունը չկատարվի. հակառակ դեպքում պարտատ են ամեն որ, ամեն վայրկյան զիմուքներ անել և անդամ անհաճո տեսարաններ սարքել: Այս վերջին մտքից նա տատանվեց:

— Chère Աննա Միխայլովնա, — ասավ նա սովորական մտերմութամբ և ձանձրույթի շեշտով, — ինձ համար գրեթե անկարելի չե՞նք խնդիրը կատարել. բայց վորպեսզի ապացուցեմ, թե վորքան եմ սիրում ձեզ և հարգում ձեր հանդուցյալ հոր հիշատակը, կանեմ անկարելին. ձեր վորդին կփոխադրվի գվարդիա. ահա ձեզ ձեռու Գճ՝ եք:

— Միտելիս, դուք բարեբար եք: Այլ բան չեյի ել սպասում ձեզանից. դիտելի, թե վորքան բարի յեք:

Իշխանն ուզեց դնալ:

— Սպասեք, յերկու խոսք ել: Une fois passé aux gardes...<sup>1</sup> — Իշխանուհին կանգ առավ: — Դուք Միխայիլ Իլարիոնովիչ Կուտուզովի հետ լավ եք. Բորիսին հանձնարարեցեք նրան վորպես աղյուսանոտ, և այն ժամանակ արդեն...

Իշխան Ղասիկին ժպտաց:

— Այդ չեմ խոստանում: Դուք չգիտեք, թե այն որից, ինչ կուտուզովը նշանակվել է գլխավոր հրամանատար, ինչպես են պաշարում նրան աղյուսի խնդիրներով: Ինքն ասավ ինձ, վոր Մոսկվայի բոլոր աղյուսական տիկիները խոսքերնին մեկ են արել — իրենց բոլոր վորդիներին տալու նրան՝ իբրև աղյուսանոտ:

<sup>1</sup> Փանի վոր նա փոխադրվելու չե գվարդիա:



— Վոչ, խոստացեք. յես ձեզ չեմ թողնի, իմ սիրելի, իմ բարերար...

— Հայրիկ, — նույն յեղանակով կրկնեց գեղեցկուհին: — Ուշանում ենք:

— Դե, au revoir<sup>1</sup>, ցտեսություն: Տեսնվում եք:

— Ուրեմն վաղը կգեկուցեք թաղավորին:

— Անպայման. բայց Կուտուզովին — չեմ խոստանում:

— Վոչ, խոստացեք, խոստացեք, Basile<sup>2</sup>, — ասավ Աննա Միլ-խայլովնան նրա յետևից, ջանել պնդունու ժպիտով, վոր մի ժամանակ յերևի հասուկ. եր յեղել նրան, բայց հիմա բնավ չեթ սաղում նրա մաշված դեմքին:

Նա, յերևի, մոռացավ իր տարիքը և, ըստ սովորության, գործ դրեց իր կանացի վաղեմի բոլոր միջոցները: Բայց հենց վոր իշխանը դուրս գնաց՝ նրա դեմքն ընդունեց նորից նախկին սառն ու շինծու արտահայտությունը: Նա վերադարձավ այն խմբակը, ուր վիկոնտը շարունակում էր իր պատմությունը, և նորից ձևվացրեց թե լսում և, սպասելով գնալու ժամին, վորովհետև իր գործը վերջացրել էր արդեն:

— Բայց ինչպես եք դառնում այն վերջին կատակերգությունը du sacre de Milan<sup>3</sup>, — ասավ Աննա Պավլովնան: — Et la nouvelle comédie des peuples de Gênes et de Lucques, qui viennent présenter leurs vœux à M. Buonaparte assis sur un trône, et exauçant les vœux des nations! Adorable! Non, mais c'est à en devenir folle! On dirait que le monde entier a perdu la tête<sup>4</sup>.

Իշխան Անդրեյը ծիծաղեց՝ ուղիղ Աննա Պավլովնայի յերեսին նայելով:

— «Dieu me le donne, gare à qui la touche», — ասավ նա (Բոնապարտի խոսքերը թաղադրության միջոցին): — On dit qu'il a été très beau en prononçant ces paroles<sup>5</sup>, — ավելացրեց նա և մի անգամ ևլ այդ խոսքերը կրկնեց խալերեն. «Dio mi la dona, gai a qui la tocca».

<sup>1</sup> Ծեսություն:

<sup>2</sup> Վասիլի:

<sup>3</sup> Միլանի ոգումբ:

<sup>4</sup> Յեզ ահա նոր կատակերգություն. Ջենովայի և Լուկկայի մոգովուրդները իրենց ցանկություններն են հայտնում պարոն Բոնապարտին: Յեզ պարոն Բոնապարտը գահին նստած՝ կատարում և ազգերի ցանկությունը: Ո՛ր, սրանչիլի յես Վոչ, այդ տեսնելով ցնորվել կարելի յի Կարելի յի կարծել, թե աշխարհը դուրսը կորցրել և:

<sup>5</sup> Հնամտ ինչ թագավոցն Վոչ նրան, ով կղկղչի սրան: — Ասում են՝ այս խոսքերն արտասանելու ժամանակ շատ գեղեցիկ էր:

— J'espère enfin, — շարունակեց Աննա Պապլուշան, — que ça a été la goutte d'eau qui fera déborder le verre. les souverains ne peuvent plus supporter cet homme qui menace tout<sup>1</sup>.

— Les souverains? Je ne parle pas de la Russie, — ասով վիկոնտը քաղաքավարութեամբ և անհույս: — Les souverains, madame! Qu'ont-ils fait pour Louis XVIII, pour la reine, pour madame Elisabeth? Rien, — շարունակեց նա վազեմուրիով: — Et croyez moi, ils subissent la punition pour leur trahison de la cause des Bourbons. Les souverains? Ils envoient des ambassadeurs complimenter l'usurpateur<sup>2</sup>.

Յեվ նա, արհամարհանքով հառաչելով, նորից փոխեց դիրքը: Իշխան Իպպոլիտը, վրէ լուռնեաով յերկար նայում եր վիկոնտին, այս խոսքերից հետո հանկարծ ամբողջ մարմնով դարձավ փոքրիկ իշխանուհուն և, նրանից ասեղ խնդրելով, սկսեց ասեղով սեղանի վրա նկարել Կոնգրէի տոհմանիշը (դերբը) ու սկսեց բացատրել այն մի այնպիսի լրջութեամբ, կարծես իշխանուհին խնդրել եր այդ:

— Bâton de gueules, engrêlé de gueules d'azur — maison Condé<sup>3</sup>, — ասում եր նա:

Իշխանուհին ժպտերես լսում եր նրան:

— Յեթե Բոնապարտը մի տարի ևս մնա Ֆրանսայի գահի վրա, — շարունակեց վիկոնտն սկսած դրույցը, ուրիշների խոսքը չլսող մարդու տեսքով և իրեն բոլորից ավելի լավ հայտնի դործի մեջ միայն իր մտքերի ընթացքին հետևելով, — այն ժամանակ բանը բանից կանցնի Բոնապարտութեամբ, բռնութեամբ, հալածանքներով, մահապատիժներով հասարակութունը, յես նկատի ունեմ բարձր ֆրանսական հասարակութունը, ընդմիշտ կվոչնչանա և այն ժամանակ...

<sup>1</sup> Հուլա ունեմ, վրէ դա յեղավ, վերջապես, այն կաթիլը, վրէ պիտի հորդի բաժակը: Վեհապետներն այլևս չեն կարող հանդուրժել այդ մարդուն, վրէ ապառնում և բռնորին:

<sup>2</sup> Վեհապետները: Պոռթա Ռուսաստանի մասին չե՛ս Վեհապետները, տիկին: Բայց ինչ արեն նրանք Լյուդովիկոս XVIII համար, Թաղուհու համար, տիկ. Յելիզավետայի համար: Վոչինչ: Յեվ, հաժառացեք ինձ նրանք կրում են իրենց պատիժը Բուրբոնների գործին դաժմանելու համար: Վեհապետներ, նրանք զեհապետներ են ուղարկում վոլջուներու գահը հափշտակողին:

<sup>3</sup> Այս ֆրազը բառացի անթարգմանելի չի, վրոպհետև կազմված և պայմանական հերալդիկ տերմիններից, վոչ բոլորովին ճիշտ գործածված: Լնդհանուր իմաստը այն է. — Կոնգրէի տոհմանիշը ներկայացնում և վաճաճ կարմիր ու կապույտ նեղլիկ աստաճաճոր շերտերով:



Նա ուսերը սեղմեց ու ձեռները տարածեց: Պիեռն ուղեց ինչ վոր բան ասել: Խոսակցությունը նրան հետաքրքրում էր. բայց Աննա Պավլովնան, վոր նրան հսկում էր, ընդմիջեց:

— Ալեքսանդր կայսրը, — ասավ նա տխրությամբ, մի բան, վոր միշտ անբաժան էր նրա խոսքից, յերբ խնդիրը վերաբերում էր կայսերական ընտանիքին, — հայտարարեց, վոր իրենց՝ Ֆրանսացիներին պիտի թողնի վարչական ընտրությունը: Յեղ յես կարծում եմ, կասկած չկա, վոր ամբողջ ազգը, հափշտակչից ազատվելով, կհետվի իր որինավոր թագավորի բազուկների մեջ, — ասավ Աննա Պավլովնան, աշխատելով սիրալիր լինել եմիգրանտի ու միապետականի հետ:

— Այդ կասկածելի չէ, — ասավ իշխան Անդրեյը: — Պարոն վիկոնտը միանգամայն իրավացի կերպով յենթադրում է, վոր բանը բանից անցել է: Յես կարծում եմ զմվար կլինի վերադառնալ դեպի հինը:

— Վորքան լսել եմ, — կարմրելով նորից խոսակցության մեջ մտավ Պիեռը, — համարյա ամբողջ ազնվականությունն անցել է արդեն Բոնապարտի կողմը:

— Այդ բոնապարտիստներն են ասում, — ասավ վիկոնտը, առանց Պիեռին նայելու: — Այժմ զմվար է Ֆրանսայի հասարակական կարծիքն իմանալ:

— Bonaparte l'a dit<sup>1</sup>, — ասավ իշխան Անդրեյը րժծածաղելով: Նկատելի չէր, վոր վիկոնտը զուր չէր գալիս նրան, և վոր նա, թեև չէր նայում վիկոնտին, բայց իր խոսքերն ուղղված էին նրա դեմ:

— «Je leur ai montré le chemin de la gloire», — ասավ նա կարճ լուսթյունից հետո, դարձյալ Նապոլեոնի խոսքերը կրկնելով. — «ils n'en ont pas voulu; je leur ai ouvert mes antichambres, ils se sont précipités en foule»... Je ne sais pas à quel point il a eu le droit de le dire<sup>2</sup>.

— Aucun<sup>3</sup>, — առարկեց վիկոնտը: — Հերցոգի սպանությունից հետո ամենաաշուու մարդիկ անդամ դադարեցին նրան հերոս համարելուց: Si même ça a été un héros pour certaines gens, — ասավ վիկոնտը, դառնալով Աննա Պավլովնային, — depuis l'assassinat

<sup>1</sup> Այդ ասել է Բոնապարտը:

<sup>2</sup> «Յես ցույց տվի նրանց փառքի ճանապարհը — նրանք չուղեցին այն. յես նրանց առջև բաց արի իմ նախասենյակները — նրանք ներս խուժեցին խմբերով... Զգիտե՛մ՝ վոր աստիճան իրավունք ունեւր նա այդպես ասելու:

<sup>3</sup> Վսշ մի:

du duc il y a un martyr de plus dans le ciel, un héros de moins sur la terre<sup>1</sup>.

Աննա Պափլոֆնան ու մյուսները հազիվ կարողացան ժպտալով դնահատել զիկոնտի այդ խոսքերը, յերբ Պիեռը կրկին միջամտեց խոսակցության, և Աննա Պափլոֆնան, վորը թեև նախադրում էր, վոր Պիեռը մի անվայել բան պիտի ասի, այլևս չկարողացավ կանգնեցնել նրան:

— Ենդիհենի հերցոգի սպանությունը, — ասավ մայր Պիեռը, — պետական անհրաժեշտություն էր. և յես հենց այդ բանի մեջ եմ տեսնում նապոլեոնի հոգու մեծությունը, վոր նա չվախեցավ մեծակ իր վրա վերցնել այդ դործի ամբողջ պատասխանատվությունը:

— Dieu! mon Dieu!<sup>2</sup> — շնջաց Աննա Պափլոֆնան սարսափահար:

— Comment, M. Pierre, vous trouvez que l'assassinat est grandeur d'âme<sup>3</sup>, — ասավ փոքրիկ իշխանուհին ժպտալով և ձեռագործը մոտեցնելով իրեն:

— Ա՛հ, Ո՛հ, — լավեցին տարբեր ձայներ:

— Capitall<sup>4</sup> — ասավ իշխան Իպպոլիտը անգլիերեն և սկսեց ձեռի ափը խփել ծունկին:

Վիկոնտն ուսերը թոթվեց միայն: Պիեռը ահնայի վերևից հաղթական նայեց ունկնդիրներին:

— Յես այսպես խոսում եմ նրա համար, — շարունակեց նա հանդգնաբար, — վորովհետև Բուրբոնները փախան հեղափոխությունից, ժողովրդին մատնելով անիշխանության. և միայն նապոլեոնը կարողացավ հասկանալ հեղափոխությունը, հաղթել նրան, և այդ իսկ պատճառով հանրային բարբուրության համար նա չեւ կարող կանգ առնել մի մարդու կյանքի առջև:

— Ձեյվ՞ջ ցանկանա արդյոք անցնել մյուս սեղանը, — ասավ Աննա Պափլոֆնան:

Բայց Պիեռն, առանց պատասխանելու, շարունակեց խոսքը:

— Վո՛չ, — ասում էր նա ավելի ու ավելի վողեռվելով: — Նապոլեոնը մեծ է, վորովհետև նա ավելի բարձր կանգնեց հեղափոխությունից, ճնշեց նրա շարարկությանները, պահելով բոլոր

<sup>1</sup> Յեթե նա հերոս էր մի ցանի մարդկանց համար, ապա հերցոգի սպանությունից հետո՞ մի նահատակ եւ ավելացավ յերկնքում և մի հերոս պակասեց յերկրի վրա:

<sup>2</sup> Աստված իմ, աստված:

<sup>3</sup> Ի՛նչպե՞ս, մայր Պիեռ, սպանության մեջ տեսնում եք հոգու մեծություն:

<sup>4</sup> Հրաշալի յիս:

լավ բաները — թե քաղաքացիական հավասարությունը, թե խոսքի ու մամուլի ազատությունը — և միայն այդ պատճառով իշխանությունն ձեռք բերեց:

— Այո, յեթե նա իշխանությունը վերցնելով, չդորձադրեր այն սպանության համար, այլ հանձներ այն որինավոր թաղավորին, — ասավ վիկոնտը, — այն ժամանակ յես ել նրան մեծ մարդ կկոչեյի:

— Նա այդ չեր կարող անել: Ժողովուրդն իշխանությունը նրան հանձնեց միայն նրա համար, վորպեսզի նա ժողովուրդին ազատի Բուլբոններից, և նրա համար, վորովհետեւ ժողովուրդը նրա մեջ մեծ մարդ եր տեսնում: Հեղափոխությունը մեծ դորձ եր, — շարունակեց մայո Պիեռը, այդ հանդգնությամբ և միջանկյալ նախադասությամբ արտահայտելով իր յետուն փանկությունը ու ամեն բան լիովին ասելու ցանկությունը:

— Հեղափոխությունը և արքայասպանությունը մեծ դորձ ե... Դրանից հետո... բայց չե՞ք ուզում արդյոք անցնել մյուս սեղանը, — կրկնեց Աննա Պավլովնան:

— Contrat social<sup>1</sup>, — ասավ վիկոնտը հեղ ժպետով:

— Խոսքս արքայասպանության մասին չե, այլ զաղափարների:

— Այո, կողոպուտի, սպանության և արքայասպանության զաղափարների, — նորից ընդմիջեց հեղնական ձայնը:

— Դրանք ծայրահեղություններ եյին, իհարկե. բայց հեղափոխության ամբողջ նշանակությունը դրանցում չե, այլ մարդու իրավունքների, նախապաշարումներից ազատագրվելու, քաղաքացիների իրավահավասարության մեջ. և բոլոր այդ՝ զաղափարները նապոլեոնն իրենց ուժի մեջ պահեց:

— Ազատություն և հավասարություն, — ասավ վիկոնտն արհամարհանքով, կարծես վճռելով, վերջապես, լրջորեն աղաքսուցել այդ պատանուն՝ նրա խոսքերի ամբողջ հիմարությունը, — պոռոտ խոսքեր, վոր վաղուց արդեն վարկարեկված են: Ո՞վ չի սիրում ազատությունն ու հավասարությունը: Դեռ մեր փրկիչը ազատություն և հավասարություն ե քարոզել: Մթթե հեղափոխությունից հետո մարդիկ ավելի յերջանիկ դարձան: Ընդհակառակը: Մենք ազատություն եյինք ցանկանում, իսկ Բոնապարտը վռնջացրեց այն:

Բշխան Անդրեյը ժպտեցես նայում եր մերթ Պիեռին, մերթ վիկոնտին, մերթ տանտիրուհուն: Առաջին վայրկյանին Աննա Պավլովնան, չնայած իր աշխարհիկ վարվելակերպին, սարսափեց

<sup>1</sup> Հիասթափական գաշինքս:

Պիեռի վարքից. բայց, յերբ տեսավ, վոր, չնայած Պիեռի սրբապիղծ խոսքերին, վիկոնտն իրեն չի կորցնում, և յերբ համոզվեց, վոր այլևս անկհրելի չե այդ խոսակցությանը վերջ տալ, նա հավաքեց իր ուսերը և վիկոնտին միանալով, հարձակվեց Պիեռի վրա։

— Mais, mon cher M. Pierre<sup>1</sup>, — ասավ Աննա Պավլովնան, — ինչպե՞ս եք հասկանում այդ մեծ մարդուն, վոր առանց դատի և անմեղ տեղը մահապատժի յենթարկեց հերցոգին, վերջապես, մի սոսկ մարդու։

— Յես կհարցնեյի, — ասավ վիկոնտը, — ինչպե՞ս ե monsieur-ը բացատրում Բրյուսիերի 18-ը։ Դա միթե խաբերայությունն է։ C'est un escamotage qui ne ressemble nullement à la manière d'agir d'un grand homme<sup>2</sup>.

— Իսկ Աֆրիկայում սպանած զերինԲըը, — ասավ փոքրիկ իշխանուհին։ — Սոսկալի չե։ — Յե՛վ նա ռուսերը ցնցեց։

— C'est un roturier, vous aurez beau dire<sup>3</sup>, — ասավ իշխան Բապտիստը։

Մայա Պիեռը չգիտեր վճրին պատասխանի, նայեց բոլորին ու ժպտաց։ Նրա ժպտը նման չեր մյուս մարդկանց ժպտին։ Յերբ նա ժպտում եր, հանկարծ, վայրկյանապես՝ լուրջ և փոքր ինչ մայլ զեմքը չքանում եր և յերևան եր գալիս մի ուրիշը — մանկական, բարի, նույնիսկ հիմարավուն մի դեմք, վոր կարծես թողությունն եր հայցում։

Վիկոնտը, վոր առաջին անգամն եր տեսնում նրան, հասկացավ, վոր այդ յակոբինը այնքան ել սարսափելի չե, ինչպես իր խոսքերը։ Բալորը լոկեցին։

— Ինչպե՞ս, դուք ուզում եք, վոր բոլորիդ միանգամից պատասխանի, — ասավ իշխան Անդրեյը։ — Դրա հետ միասին պետք և պետական մարդու զործերի մեջ դանադանել մասնավոր անհատի, զորավարի և կայսեր արարքները։ Ինչ այսպես և թվում։

— Այո, այո, ի հարկե, — վրա բերեց Պիեռը, — ուրախանալով այդ վերահաս սքանությունից։

— Զի կարելի չխոստովանել, — շարունակեց իշխան Անդրեյը, — Նապոլեոնը վորպես մարդ՝ մեծ և Արկուլյան կամուրջի վրա, Յաֆայի հիվանդանոցում, ուր ձեռք եր տալիս ժանտախտավորներին, սոսկայն... սոսկայն կան այլ արարքներ, վորոնք արդարացնել զժվար ե։

<sup>1</sup> Բայց, սիրելի Պիեռ։

<sup>2</sup> Այդ խաբերայությունն ամենին նման չե մեծ մարդու վարմունքի։

<sup>3</sup> Ինչ ել վոր տեսք, բախտահարի մեկն ե։

Իշխան Անդրեյը, ըստ յերևույթին, կամենալով մեղմել Պիեռի խոսքերի անհարմարութիւնը՝ վտաքի յեւալ մեկնելու և նշան արալ կնոջը:

Հանկարծ իշխան Իպպոլիտը վեր կացաւ և, ձեռի նշաններով բոլորին կանգնեցնելով ու խնդրելով նստել, ասաւ.

— Ah! aujourd'hui on m'a raconté une anecdote moscovite, charmante; il faut que je vous en régale. Vous m'excusez, vicomte, il faut que je raconte en russe. Autrement on ne sentira pas le sel de l'histoire<sup>1</sup>.

Յեւ իշխան Իպպոլիտն սկսեց ոռւսերեն խոսել այնպիսի առողանությամբ, վորով խոսում են Ռուսաստանում մի տարի ապրած ֆրանսացիները: Բոլորը կանգ առան. այնպես յեռանդուն, համառորեն ուշադրութիւն եր պահանջում իշխան Իպպոլիտը զեղի իր պատմութիւնը:

— Moscou-ում մի տիկին կա, une dame. Շատ ժլատ: Նա իր կառքի համար կարէք և ունեցել յերկու valets de pied<sup>2</sup>. Յեւ շատ բարձրահասակների: Այդպես և յեղել նրա ճաշակը: Նա ունեցել և նաև une femme de chambre<sup>3</sup>, ավելի բարձրահասակ: Տիկինն ասում է...

Այստեղ իշխան Իպպոլիտը մտմտաց, ըստ յերևույթին զժլատ բանում եր հիշել:

— Տիկինն ասում է... այո, ասում է տաղջիկ (à la femme de chambre), հագիր livrée<sup>4</sup> և միասին, կառքով դնանք faire des visites<sup>5</sup>.

Այստեղ իշխան Իպպոլիտը փոթկաց և իր ունկնդիրներից ավելի շուտ քրքջաց, ինչ-վոր պատմողի համար աննպատակ տալավորութիւն դարձնել: Սակայն շատերը, զրանց թվում և տարիքոտ կիներ ու Աննա Պավլովնան, ժպտացին:

— Տիկինը գնում եւ Հանկարծ սաստիկ քամի յւ բարձրանում: Աղջիկը կորցնում է գլխարկը և յերկար մազերը շաղ են անցնում...

Այստեղ իշխան Իպպոլիտն այլևս չկարողացաւ զսպել իրեն ու սկսեց բարձրաձայն ծիծաղել և ծիծաղի միջից ասել.

<sup>1</sup> Այսոր ինչ պատմեցին մոսկովյան մի հիանալի անեկդոտ. պետք և ձեռ հյուրասարել նրանով. ներքեք, վիզնոտ, յետ կպատմեմ ոռւսերեն, այլապէս անեկդոտի ամբողջ համը կկորչի:

<sup>2</sup> Լաքեյ:

<sup>3</sup> Սպասուհի:

<sup>4</sup> Լիվրէ:

<sup>5</sup> Այցելութիւններ անելու:

— Յե՛վ ամբողջ աշխարհն իմանում ե...

Անեկզատը դրանով էլ վերջացավ: Թեև անհասկանալի մնաց, թե ինչու նա պատմեց այդ և ինչու ուզեց անպայման ոռւտերեն պատմել, սակայն Աննա Պավլոֆնան և մյուսները զնահատեցին իշխան Իպպոլիտի շնորհքը, վոր այնպես հաճելի կերպով փակեց մայր Պրեռի անդուրեկան և անհաճ վարմունքի տպավորութիւնը: Անեկզատից հետո խոսակցութիւնը մանր, աննշան զրույցներէ բաժանվեց. խոսեցին տպագր և անցյալ պարահանդեսների, ներկայացումների մասին, և այն մասին, թե յերբ և ուր պիտի հանդիպեն:

## VI

Շնորհակալութիւն հայտնելով Աննա Պավլոֆային իր *charmantе soirée*-ի<sup>1</sup> համար՝ հուրերն սկսեցին ցրվել:

Պրեռն անշնորհք ու կոպիտ եր: Հաստ, սովորականից բարձր հասակով, լայն, հեծ կարմիր ձեռներով, — նա, ինչպես ասում են, չդիտեր սալոն մտնելու և առավել ևս այնտեղից դուրս գալու ձեւը, այսինքն դուրս գալու միջոցին մի հաճելի բան ասել: Բացի դրանից՝ ցրված եր: Վտաքի յեղնելով՝ նա իր զլխարկի փախարեն վերցրեց մի զններալի ցցունազարդ յեռանկաւնի զլխարկը և նրա փետրազարդ ցցունքը ձիգ տալով ձեռին պահեց այնքան, մինչե վոր զններալը խնդրեց վերադարձնել: Սակայն նրա ցրվածութիւնը, սալոն մտնելու և այնտեղ խոսելու անճարակութիւնը փրկում եր բարեհոգի, պարզասիրտ և համեստ ընամփոռութիւնը: Աննա Պավլոֆնան դարձավ նրան և, քրիտառնեական հեղութիւնքով նրա անվայել վարմունքը ներկելով, զլուխը շարժեց ու ասավ:

— Հույս ունեմ, վոր նորից կհանդիպեմ ձեզ, բայց հույս ունեմ նույնպես, վոր դուք ձեր կարծիքները կփոխեք, իմ սիրելի մայր Պրեռ, — ասավ նա:

Աննա Պավլոֆնայի այդ խոսքերին՝ Պրեռը չպատասխանեց, միայն խոնարհվեց և մի անգամ ևս ժպտաց բոլորին. և այդ ժպիտը վռչինչ չեր ասում, բացի այն, թե՛ «կարծիքները՝ կարծիքներ, բայց տեսնում եք վորքան բարի և լավ յերիտասարդ եմ»: Թե բոլորը, թե Աննա Պավլոֆնան ակամա զգացին այդ:

Իշխան Անդրեյը դուրս յեկավ նախասենյակ և, մինչ լաքեյը նրա ուսերին կզցեր թիկնոցը, անտարբեր ականջ էր դնում իր կնոջ շաղակրատանքին՝ իշխան Իպպոլիտի հետ, վոր նույնպես դուրս եր յեկել նախասենյակ: Իշխան Իպպոլիտը կանգնել եր սի-

<sup>1</sup> Հիանալի յերեկույթ:

— Դուք պատրանատ եք, — հարցրեց նա կնոջը, հայացքով չափելով նրան։

Իշխան Իսկուխան արագ-արագ հազավ իր ուղեղները, վորը, ըստ նոր ձևի, շատ յերկար էր, և մեջը փաթաթվելով՝ վազեց դեպի դուռը, իշխանուհու յետևից, վորին լաքեյը կառեթ էր նստեցնում։

— Princesse, au revoir<sup>1</sup>, — գռչեց նա, լեզվով շփոթվելով այնպես, ինչպես վոտներն էյին շփոթվում ուղեղներին մեջ։

Իշխանուհին, փեշերը հավաքելով, կառեթ նստեց, ամուսինն իր թուրն էր ուղղում. իշխան Իսկուխան, ծառայություն մատուցելու պատրվակով, բուրբին խանգարում էր։

— Թույլ տվեք, պարոն, — չոր-անհաճո զիմեց իշխան Անդրեյը ուսերեն իշխան Իսկուխանին, վոր խանգարում էր իրեն առաջ անցնելու։

— Են քեզ սպասում եմ, Պիեռ, — սիրալիր ու քնքշանքով ասավ նույն իշխան Անդրեյը։

Պարեյտորը շարժվեց, և կառեթի անիմները դրոշացին։ Իշխան Իսկուխանը, դռան առջև կանգնած, ծիծաղում էր ընդհատումներով, սպասելով վիկոնտին, վորին խոստացել էր իր կողքով տուն հասցնել։

— Eh bien, mon cher, votre petite princesse est très bien, très bien, — ասավ վիկոնտը, Իսկուխանի հետ կառեթ նստելով։ — Mais très bien. — Նա համբուրեց իր մատների ծայրերը։ — Et tout-à-fait française<sup>2</sup>.

Իսկուխանը, փոթկալով, ծիծաղեց։

— Et savez-vous que vous êtes terrible avec votre petit air innocent, — շարունակեց վիկոնտը։ — Je plains le pauvre mari, ce petit officier, qui se donne des airs de prince régnant<sup>3</sup>.

Իսկուխանը նորից փոթկալ և ասավ ծիծաղելով.

— Et vous deslez, que les dames russes ne valaient pas les dames françaises. Il faut savoir s'y prendre<sup>4</sup>.

<sup>1</sup> Իշխանուհի, ցանաություն։

<sup>2</sup> Եւ, իմ թանկահին, քեզ փոքրիկ իշխանուհին շատ սիրուն եւ Շատ սիրուն և և կատարյալ ֆրանսուհի։

<sup>3</sup> Բայց դիտե՛ք, դուք սարսափելի մարդ եք, չնայած քեզ անմեղ արտաքին։ Ենի իզմում եմ թշվառ ամուսնուն, այդ փոքրիկ սպային, վոր իրեն մեծ մարդ և յերեակայումս։

<sup>4</sup> Իսկ դուք ասում եյիք, թե ռուս կանայք վատ են ֆրանսուհիներից։ Զեք խոսքերը պետք է յեա վերցնեք։



Պիեռը, շուտ տեղ հասնելով, տանու մարդու պես անցավ իշխան Անդրեյի առանձնասենյակը և անմիջապես, ըստ սովորության, պահկեց բաղմոցին, վերցրեց դարակից առաջին պատահած գիրքը (Յեզարի հիշատակարանն էր) և, թիկն տված, սկսեց մեջտեղից կարդալ:

— Այդ թնշ արիւր m-lle Շերերին: Նա հիմա բուրոսովին կհիվանդանա, — ասավ իշխան Անդրեյը առանձնասենյակ մտնելով և իր փոքրիկ ճերմակ ձեռները տրորելով:

Պիեռը դարձավ ամբողջ մարմնով, այնպես վոր բաղմոցը ճռնչացաշուսւյժ դեմքը դարձրեց դեպի իշխան Անդրեյը, մպտաց և ձեռը թափ տվեց:

— Վոչ, այդ արքան շատ հետաքրքրական մարդ է, միայն թե բանն այնպես չի հասկանում... Իմ կարծիքով հավիտենական խաղաղությունը հնարավոր է, բայց յես չեմ կարողանում, ինչպես այդ արտահայտեմ... Բայց վոչ քաղաքական հավասարակշռությամբ...

Իշխան Անդրեյն, ըստ յերևույթին, չեր հետաքրքրվում այդ վերացական խոսակցություններով:

— Ձի կարելի, mon cher<sup>1</sup>, ամեն տեղ տեսել այն, ինչ մտածում ես: Հը, վորոշեցիր, վերջապես, մի բան: Կավալերդսըդ ես դառնալու թե գիվանադեա, — հաջորեց իշխան Անդրեյը բապեական լուսթյունից հետո:

Պիեռը նստեց բաղմոցին, վտռերը տակը դնելով:

— Կարող եք յերեակայել, դեռ չգիտեմ ինչ անեմ: Թե մեկը, թե մյուսը դուր չեն գալիս ինձ:

— Բայց չե վոր պետք է մի բան վորսել: Հայրդ սպասում է:

Պիեռը տաս տարեկան հասակից դաստիարակ-արքայի հետ ուղարկվից եր արտասահման, ուր նա մնացել եր մինչ քսան տարեկան հասակը: Յերը Մոսկվա վերադարձաւ հայրը արքային արձակեց և յերիտասարդին ասով. «Այժմ դնա Պետերբուրգ<sup>2</sup> տես և ընտրիր: Յես ամեն բանի համաձայն եմ: Ահա քեզ նամակ՝ իշխան Վասիլիի անունով, և ահա քեզ գրամ: Դրիւր ամեն բանի մասին, և յես ամեն բանում կողնեմ քեզ»:

Պիեռն արդեն յերեք ամիս եր ինչ ընտրություն եր անում և վոչինչ չեր վորոշել: Հենց այդ ընտրության մասին եր, վոր խոսում եր իշխան Անդրեյը: Պիեռը ճակատը շփեց:

— Բայց նա պետք է վոր մասան լինի, — ասավ նա, — յերեկութին տեսած արքային հիշելով:

<sup>1</sup> Սերելիս:



— Այդ բոլորը դառանցանքներ են, — նորից ընդհատեց նրան իշխան Անդրեյը, — ավելի լավ է դարձի մասին խոսենք: Յեղանը հեծելագործի գովարդիցում... —

— Վաշ, չեղա. բայց ո՛հա թե ինչ մտածեցի և ինչ եմ ուզում տեսլ ձեզ: Հիմա պատերազմում ենք Նապոլեոնի դեմ: Յեթե այդ պատերազմը լինելու հանուն ազատութեան, կհասկանայի, ինքս ասալիս կմտնեյի զինվորական ծառայութեան մեջ. բայց ողնել Անգլիային ու Ամերիային՝ աշխարհին մեծազույն մարդու դեմ կսովելա... դա լավ չի...

Իշխան Անդրեյը, Պիեռի յերեխայական խոսքերի վրա, ուսերը ցնցեց միայն: Նա այնպիսի տեսք ընդունեց, թե չարժի պատասխան տալ այդպիսի հիմարութեաների. բայց իսկապես այդ միամիտ հարցին գովարդ եր ուրիշ պատասխան տալ, քան իշխան Անդրեյի պատասխանն եր.

— Յեթե բոլորն էլ իրենց համոզմունքների թելադրութեամբ պատերազմեին, էլ պատերազմ չէր լինի, — ասավ նա:

— Յե՛մ այդ հիմնալի բան կլինե՞ր, — ասավ Պիեռը:

Իշխան Անդրեյը ժպտաց:

— Դույն հիմնալի լինե՞ր, բայց այդ յերբեք չի լինի...

— Ե՛հ, դուք ինչո՞ւ համար եք պատերազմ գնում, — հարցրեց Պիեռը:

— Ինչո՞ւ համար. չգիտեմ: Այդպես պետք է: Բացի դրանից չես գնում եմ... — Նա կանգ առավ: — Յես գնում եմ նրա համար, վորովհետե կյանքը, այս կյանքը — սրտովս չի:

## VII

Հարևան սենյակից լավեց կանացի զգեստների լաշխոց: Իշխան Անդրեյը քնից արթնացողի պես ցնցվեց և նրա դեմքն ընդունեց Աննա Պավլովնայի հյուրասրահում ունեցած արտահայտությունը: Պիեռը վառներն իջեցրեց բաղձոցից: Ներս մտավ իշխանուհին: Նա արդեն հաքել եր մի ուրիշ, տնային, բայց նույնքան գեղեցիկ ու թարմ զգեստ: Իշխան Անդրեյը վեր կացավ ու քաղաքավարութեամբ բաղկաթու առաջարկեց նրան:

— Հաճախ մտածում եմ թե ինչու, — խոսեց նա, ինչպես միշտ ֆրանսերեն, արաղութեամբ ու հոգածութեամբ բաղկաթոռին նշտելով, — ինչո՞ւ Աննետը չի ամուսնացել: Վարքան բոլորդ էլ անխելք եք, messieurs, վոր նրա հետ չեք ամուսնացել: Դուք ինձ ներեցեք, բայց պիտի տեսե՛մ, վոչինչ չեք հասկանում կանանցից: Ի՛նչ վիճասերն եք յեղել, մայս Պիեռ:

— Յես ձեր ամուսնու հետ ել վիճում եմ շարունակ. չեմ հասկանում, թե ինչ՞նչ յե ուզում գնալ պատերազմ, — ասով Պիեռն ասանց քաշվելու (վոր այնքան սովորական է յերխտասարդ մարդու և յերխտասարդ կնոջ հարաբերություններին մեջ) զիմելով իշխանուհուն:

Իշխանուհին ցնցվեց: Ըստ յերևույթին, Պիեռի խոսքերը զիպան նրա սրտին:

— Ախ, յես ել նույնն եմ ասում, — ասով նա: — Ձեմ հասկանում, բացարձակապես չեմ հասկանում. ինչ՞նչ մարդիկ չեն կարողանում ապրել ասանց պատերազմի: Ինչ՞նչ մենք՝ կանայքս վռչինչ չենք ցանկանում, վռչինչ այդպիսի բան չենք ուզում Այ, դուք դատավոր յեղեք: Յես միշտ ասում եմ. նա այտեղ հորեղորդ աղյուստանտն և, ամենափայլուն դիրքն ունի: Բոլորը նրան լավ ճանաչում, դնահաստում են: Մի քանի որ առաջ Ապրաքսինների մոտ լսեցի, թե ինչպես մի կին հարցնում էր. «c'est ça le fameux prince André?». Ma parole d'honneur<sup>1</sup>. — Իշխանուհին ծիծաղեց: — Նա ամեն տեղ այդպես է ընդունված: Նա շատ հեշտությամբ կարող է և ֆիլիզել-աղյուստանտ դառնալ. Գիտեք, թագավորը շատ վողորձածարար և խոսիչ հետը: Մենք Աննետի հետ խոսեցինք, վոր դա շատ հեշտությամբ կարելի յե գլուխ բերել: Ի՞նչ եք կարծում:

Պիեռը նայեց իշխան Անդրեյին և, նկատելով, վոր այդ խոսակցությունը դուր չի դալիս բարեկամին, վռչինչ չպատասխանեց:

— Յերբ եք մեկնում, — հարցրեց նա:

— Ah! ne me parlez pas de ce départ, ne m'en parlez pas. Je ne veux pas en entendre parler<sup>2</sup>, — խոսեց իշխանուհին այնպիսի քմահաճ-չարածճի յեղանակով, վորով խոսում էր Բոլպոլիսի հետ հյուրասրահում, և վորն այնպես, ակնեղև, չէր ստղում ընտանեկան շրջանին, ուր Պիեռն ընտանիքի անդամ պես էր: — Այսօր, յերբ մտածում եյի, թե պեսք է ընդհատել բոլոր այդ թանկադին հարաբերությունները... Յեվ հետո, դիտեա, André. — (Նա խորհրդավոր կերպով աչքով արավ ամուսնուն): J'ai peur, j'ai peur<sup>3</sup>, — շշնջաց նա, մեջքը դողացնելով:

Ամուսինը նրան նայեց այնպիսի տեսքով, կարծես դարձապես էր, նկատելով, վոր իրենից և Պիեռից բացի ուրիշ մեկն էլ կա սենյակում. և սառը քաղաքավարությամբ դարձավ կնոջը:

<sup>1</sup> «Դա նշանավոր իշխան Անդրեյն է»: Ազնիվ խոսք:

<sup>2</sup> Ախ, մի խոսեք այդ մեկնումի մասին: Այդ մասին լսել անգամ չեմ ուզում:

<sup>3</sup> Յես վախենում եմ, յես վախենում եմ:

— Ի՞նչից ես վախենում, Լիզա: Յես չեմ կարողանում հասկանալ, — ասում նա:

— Անա թե ինչպես բոլոր ազամարդիկ յեսամու են. բոլորը, բոլորը յեսամու են: Ինքն իր քամահաճույքի համար, աստված գիտի թե ինչու, թողնում է ինձ ու մենակ բանտարկում գյուղում:

— Հորս և քրոջս մոտ ես լինելու, այդ մի մոռանա, — ասում իշխան Անդրեյը հանդարտ:

— Միենույն ե՞մ մենակ եմ լինելու, առանց իմ բարեկամների... Յեւ մեղում ե, վոր չվախենամ:

Նա խոսում էր արդեն դժգոհությամբ. վերին շուրթը բարձրացում, դեմքին տալով վաչ թե ուրախ, այլ դադանային, սկյուռային արտահայտություն: Նա լռեց, կարծես անհարմար համարելով Պիեռի ներկայությունը խոսել իր հղիություն մասին, մինչդեռ բանի կայությունը հենց այդ էր:

— Այսուամենայնիվ յես չհասկացա, de quoi vous avez peur<sup>1</sup>, — ասում իշխան Անդրեյը դանդաղորեն, աչքը չհեռացնելով կնոջից:

Իշխանուհին կարմրեց և ձեռները թափահարեց հուսահատ:

— Non, André, je dis, que vous avez tellement, tellement changé<sup>2</sup>...

— Բժիշկդ կարգադրել է քեզ շուտ պառկել, — ասում իշխան Անդրեյը: — Կամ կանես դնաս պառկես:

Իշխանուհին վռնինչ չասավ, և հանկարծ բեղիկներով կարճ շուրթը դողդողաց. իշխան Անդրեյը վառքի յելավ և, ուսերը թոթվելով, սկսեց դնալ-դալ սենյակում:

Պիեռն ակնոցների միջից դարձացած ու միամտորեն նայեց մեկ նրան, մեկ իշխանուհուն և տեղից շարժվեց, կարծես ինքը նույնպես ուզում էր վեր կենալ, բայց հետո փոշմանեց:

— Ինչ անեմ վոր մայն Պիեռն այտեղ ե, — հանկարծ ասավ փոքրիկ իշխանուհին և նրա սիրունիկ դեմքը հանկարծ լացի արտահայտություն ընդունեց: — Յես վաղուց ուզում եյի ասել քեզ, Անդրեյ, թե ինչու վերաբերմունքդ փոխել ես դեպի ինձ: Յես լի՛նչ եմ արել քեզ: Դու բանակ ես գնում, ինձ չես խղճում: Ի՛նչ ե պատճառը:

— Lisel — ասավ միայն իշխան Անդրեյը. սակայն այդ խոսքի մեջ կար ե՞ թախանձանք, ե՞ սպառնալիք, ե՞, վոր դլխավորն ե, հաստատ համոզում, թե կինը կզղջա իր խոսքերի համար. բայց իշխանուհին շարունակեց արագ-արագ.

<sup>1</sup> Ինչից ես վախենում:

<sup>2</sup> Վաչ, Անդրեյ, յես ասում եմ — գու ախպես, ախպես փոխվել ե...

— Դու ինձ վերաբերվում ես ինչպես հիվանդի կամ յերեխայի։ Յես ամեն բան տեսնում եմ։ Միթե այդպես եյիր վեց ամիս առաջ։

— Lise, խնդրում եմ ձեզ վերջ տաք, — ասավ իշխան Անդրեյը ավելի խիստ։

Պիեռը, վոր այս խոսակցության միջոցին հուզվում եր ավելի ու ավելի, վեր կացավ՝ մոտեցավ իշխանունուն։ Թվում եր նա արտասուք տեսնել չեր կարող ու ինքն ես պատրաստ եր արտասվել։

— Հանգստացեք, իշխանունի։ Ձեզ այդպես թվում է, վորովհետեւ, հաժառացում եմ ձեզ, յես ինքս զդացել եմ... ինչից... վորովհետեւ... Վաչ, ներեցեք, կողմնակի մարդն այստեղ ավելորդ է... Վաչ, հանգստացեք... Մնաք բարով...

Իշխան Անդրեյը՝ ձեռից բռնելով կանգնեցրեց նրան։

— Վաչ, կաց, Պիեռ։ Իշխանունին այնքան բարի յե, վոր չի ցանկանա դրկել ինձ, այս յերեկոն քեզ հետ անցկացնելու հաճույքից։

— Վաչ, նա միայն իր մասին է մտածում, — ասավ իշխանունին, չկարողանալով զսպել բարկության արցունքները։

— Lise, — խոսությամբ ասավ իշխան Անդրեյը այնպիսի տոնով, վոր ցույց եր տալիս, թե համբերությունն սպառված է։

Հանկարծ իշխանունու սիրունիկ դեմքի բարկացած-սկյուռային արտահայտությունը փոխվեց վախի, գրավիշ և կարեկցություն հարուցող արտահայտության։ Հոնքերի տակից, դեղեցիկ աչքերով նայեց ամուսնուն, և նրա դեմքի վրա յերեաց այն խոնարհ ու յերախտապետ արտահայտությունը, վորպիսին ունենում է պաշտարադ ու թեթեւ շարժող շունը։

— Mon Dieu, mon Dieu<sup>1</sup>, — ասավ իշխանունին և մի ձեռքով դեկատի փեշերը հաժաքելով, մոտեցավ ամուսնուն ու համբուրեց նրա ճակատը։

— Bonsoir, Lise<sup>2</sup>, — ասավ իշխան Անդրեյը, վտռքի յեղնելով և քաղաքավարությամբ համբուրեց նրա ձեռը, ինչպես մի ստարկնոջ ձեռ։

## VIII

Բարեկամները լուռ եյին։ Վաչ մեկը և վաչ մյուսը չեր կարողանում խոսակցություն սկսել։ Պիեռը նայում եր իշխան Անդրեյին, իշխան Անդրեյը ճակատը չփում եր իր փոքրիկ ձեռով։

<sup>1</sup> Աստված իմ, աստված իմ։

<sup>2</sup> Բարի գիշեր, Լիզա։

— Ինչո՞ւնք բնթրենք, — ասով նա հասաշելով և, վոռքի յելնելով, գնաց գետի գուսը:

Նրանք մտան գեղեցիկ, փարթամորեն նորոգված ճաշարանը: Ամեն բան՝ անձնուցիկներից սկսած մինչև արծաթեղենը, հախճապակեք և բյուրեղյա ամանները՝ կրում էին նորության այն ստանձնի գրոշմը, զոր հատուկ և յերիտասարդ ամուսինների տան համար: Ընթրիքի կիսին իշխան Անդրեյը արմուռնկով հենվեց սեղանին և վազուց սրտումը բան ունեցող և հանկարծ արտահայտվել վճռող մարդու նման՝ նյարդային հուզումով, խոսել սկսեց.

— Յերբեք, յերբեք չամուսնանաս, բարեկամս. ահա քեզ խորհուրդս. մի ամուսնանար այնքան ժամանակ, մինչև ինքդ չասես քեզ, թե արել ես բոլորը, ինչ կարող եյիր, և այնքան ժամանակ, մինչև չզաղարես ընտրածդ կնոջը սիրելուց, մինչև լավ չճանաչես նրան, այլասես կսխալվես չարաչար և անուղղելի կերպով: Ամուսնացիր ծերության հասակում, յերբ վոչ մի բանի պիտանի ես լինի... Թե չես ամեն բան կկորչի, ամեն բան, ինչ վոր լավ և ու վսեմ քեզ համար: Ամեն ինչ կվատանվի մանր բաների վրա: Այո, այո, այո: Այդպես զարմացած մի նայիր ինձ: Յեթե քեզնից վորեւս սպասելիք ունենաս աղաքայում, ամեն քայլափոխիդ պիտի զղաս, վոր ամեն ինչ վերջացած և քեզ համար, ամեն բան փակված և, բացի հյուրասրահից, ուր պալատական լաքեյի և ապուշի հետ պիտի մնաս միևնույն աստիճանի վրա... Ահա...

Նա ձեռը թափահարեց ուժգին:

Պիեան ակնոցը վերցրեց, վորից նրա դեմքը փոխվեց, արտահայտելով ել ավելի բարեսրտութուն, ու զարմացած բարեկամին նայեց:

— Կինս, — շարունակեց իշխան Անդրեյը, — սքանչելի կին ես Այն հաղվադյուտ կանանցից մեկը, վորի հետ կարող ես ապահով լինել պատվիդ համար. բայց, ասոված իմ, այժմ ինչ ասես չեյի տա, վոր ամուսնացած չլինեյի: Սա միայն քեզ եմ ասում, վորովհետև սիրում եմ քեզ:

Իշխան Անդրեյը այս խոսքերն ասելիս բնավ նման չեր այն Բալդինսկուն, վոր Աննա Պավլովնայի բաղկաթոին փոված, աչքերը կկոցելով, ատամների արանքից ֆրանսերեն դարձվածքներ եր արտասանում: Նրա վստկրտ դեմքը դողում եր յուրաքանչյուր մկանի նյարդային դողով. աչքերը, ուր առաջ կայանքի կրակը հանդած եր թվում, հիմա փայլում էին ցոլուն ու պայծառ փայլով: Նկատելի յեր, վոր ինչքան կենսազուրկ եր թվում սովորական ժամանակ, այնքան ավելի յետանդուն եր այդ գրեթե հիվանդագին գրգռումի վայրկյաններին:

— Դու չես հասկանում, թե ինչու յեմ այս բաները ասում, — շարունակեց նա: — Սա չէ՛ վոր կյանքի մի ամբողջ պատմությունն է: Դու ասում ես՝ Բոնապարտն ու իր կարիերան, — ասավ նա, թեև Պիեռը չեր ել խոսել Բոնապարտի մասին: — Դու ասում ես՝ Բոնապարտը, բայց Բոնապարտը, յերբ աշխատում եր, քայլ աս քայլ դիմում եր դեպի իր նպատակը, նա ազատ եր, վռչինչ չուներ իր նպատակից բացի, — և հասավ իր նպատակին: Բայց կապ վիւր կ'ընէ հետ — շղթայված կալանավորի պէս կկորցնես ազատութիւնդ: Յե՛վ բռնորդ, ունեցածդ հույսերն ու յեռանդը, շարունակ կճնշեն քեզ և զղջումով կտանջեն: Հյուրասրահներ, բամբասանքներ, պարահանդեսներ, անափառություն, վռնչություն — ասա այն կախարդական շրջանը, վորից դուրս գալ չեմ կարողանում: Յես այժմ գնում եմ պատերազմ, մի մեծ պատերազմ, վորին մանր չի յեղել, բայց յես վռչինչ չգիտեմ և վռչ մի բանի պէտք չեմ: Je suis très aimable et très caustique<sup>1</sup>, — շարունակեց իշխան Անդրեյը, — Աննա Պավլովնայի մոտ ել ունկնդրում են ինձ: Յե՛վ այդ տխմար հասարակությունը, առանց վորի կինս ապրել չի կարողանում, և այդ կանայք... Յեթե իմանայիր միայն, թե ինչ բան են toutes les femmes distinguées<sup>2</sup> և առհասարակ կանայք: Հայրս իրավացի լի Ամեն բանի մեջ յեսասիրություն, անափառություն, բթամտություն, մանրություն — ասա կանայք, յերբ տեսնում ես այնպէս, ինչպէս կան: Նայում ես նրանց հասարակության մեջ, թվում և թե մի բան են, բայց վռչինչ, վռչինչ, վռչինչ: Այո, մի ամուսնացիր, հոգիս, մի ամուսնացիր. — վերջացրեց իշխան Անդրեյը:

— Ինձ ծիծաղելի յե թվում, — ասավ Պիեռը, — վոր դու՛ք ձեզ, դու՛ք ձեզ անընդունակ եք համարում, իսկ ձեր կյանքը — փչացած կյանք: Զեզ համար ամեն բան նոր և սկսվում: Յե՛վ դուք...

Պիեռը չասավ, թե դու՛ք ինչ, բայց նրա խոսքի յեղանակն արդեն ցույց եր տալիս, թե վորքան բարձր և գնահատում նա իր բարեկամին և վորքան շատ բան և սպասում նրանից ապագայում:

Երնչմէ յե այդպէս խոսում, մտածեց Պիեռը: Պիեռն իշխան Անդրեյին համարում եր բոլոր կատարելությունների տիպար հենց նրա համար, վոր իշխան Անդրեյը մեծագույն չափով իր մեջ միացնում եր այն բոլոր հատկությունները, ինչ ինքը՝ Պիեռը

<sup>1</sup> Յեւ շատ սիրալիր եմ և լավ խայթող:

<sup>2</sup> Բարձր գաւի բոլոր այդ կանայք:



չունենր, հասկությաւններ, վորոնք կարելի չե արտահայտել մի մտաւոր հասկացողությամբ — կամքի ուժ: Պիեռը միշտ դարձաւորաւ եր իշխան Անդրեյի՝ ամեն տեսակ մարդկանց հետ հանդիստ վարվելու բնդունակության վրա, նրա անորինակ հիշողության, շատ կարգացած լինելու (նա ամեն ինչ կարդում եր, ամեն բան դիտեր, ամեն ինչի մասին հասկացողություն ունենր) և մանաւանդ նրա աշխատելու և սովորելու բնդունակության վրա: Եւ թե հաճախ Պիեռին դարձացնում եր այն, վոր իշխան Անդրեյը գերծ և յերազկոտ փրկութեայություն անելու հակումից (դեպի վորն ատանձնապես հակամտա եր Պիեռը), զա համարում եր վաճ թե պակասություն, այլ ուժ:

Ամենալավ, բարեկամական և պարզ հարաբերությունների մեջ անդամ շոգոքորթությաւնն ու դովասանքը անհրաժեշտ են, ինչպէս յուրք անիմներին, վորպեսզի ճանապարհ կտրեն:

— Je suis un homme fini<sup>1</sup>, — ասով իշխան Անդրեյը, — ինչ կարիք կա իմ մասին՝ խոսելու: Արի խոսենք քո մասին, — ասով նա, լսելով ու ժպտալով իր միթմարական մտքերի վրա:

Այդ ժպտը նույն վայրկյանին անդրադարձավ Պիեռի դեմքին:

— Իմ մասին ի՞նչ խոսենք, — ասով Պիեռը բերանն անհագ ուրախ ժպտ շինելով: Եւ ի՞նչ եմ վոր: Je suis un bâtard<sup>2</sup>. — Եւ վ նա հանկարծ կարմրատակեց: Նկատելի չեր, վոր նա այդ տակաւ համար մեծ ջանք եր դարծ գրել: — Sans nom, sans fortune<sup>3</sup>. Եւ վ իսկապէս... — Նա չասով, թե իսկապէս ի՞նչ: — Եւ վ սուայժմ ազատ եմ, և ինձ լավ եմ զգում: Միայն չգիտեմ, թե ինչ դարծ անեմ: Կուղեյի լրջորեն խորհրդակցել ձեզ հետ:

Իշխան Անդրեյը բարի աչքերով նրան եր նայում: Բայց նրա բարեկամական, սիրտիր հայացքի մեջ, այնուամենայնիվ, արտահայտվում եր իր դերադանցության դիտակցությաւնը:

— Եւ քեզ սիրում եմ ատանձնապես նրա համար, վորովհետեւ դու միակ կենդանի մարդն ես մեր հասարակության մեջ: Քո բանը լավ եւ Ընտրիր, ինչ ուղում ես. միենույն և Դու քեզ ամեն տեղ լավ կզգաս, բայց մի բան. մի այցելիր այդ Կուրազկիններին և թե՛ այդ կյանքը: Այնպէս չեն սաղում քեզ այդ խրախճանները, նուսարությաւնը և այլն...

— Que voulez-vous, mon cher, — ասով Պիեռը, ուսերը թոթփելով, — les femmes mon cher, les femmes!<sup>4</sup>

<sup>1</sup> Եւ վ քեզացած մարդ եմ:

<sup>2</sup> Եւ սպորթինի գաժակ եմ:

<sup>3</sup> Առանց անունի, առանց կարողության:

<sup>4</sup> Ի՞նչ եւ ուղում, սիրելիս կտնայք, սիրելիս կանայք:

— Ձեմ հասկանում, — պատասխանեց Անդրեյը: — Les femmes comme il faut<sup>1</sup>, այդ այլ բան է. բայց Կուրագինի les femmes, les femmes et le vin<sup>2</sup>, չեմ հասկանում:

Պիեռն ապրում էր իշխան Վասիլի Կուրագինի տանը և մասնակցում էր նրա Անատոլ վորդու զեղխ կյանքին, այն Անատոլի, վորին ուղղելու համար պատրաստվում էին ամուսնացնել իշխան Անդրեյի քրոջ հետ:

— Գիտեք ինչ, — ասով Պիեռը, կարծես մի անսպասելի զեղեցիկ միտք հղանալով, — ճիշտ. յես այդ վաղուց եմ մտածել, Այս պայմաններում յես չեմ կարողանում վորեւէ բան վնչ վորոշել, վնչ էլ խորհել: Գլուխս ցավում է, դրամ ել չկա: Այսօր նորից կանչել է, բայց չեմ դնա:

— Աղնիվ խոսք տուր, վոր այլեւս չես դնա:

— Աղնիվ խոսք:

## IX

Գիշերվա ժամը յերկուսն էր արդեն, յերբ Պիեռը դնաց իր բարեկամի մոտից: Հուլիսյան դիշեր էր, Պետերբուրգի պայծառ գիշերներից մեկը: Պիեռը կառք նստեց՝ տուն դնալու մտադրությամբ: Բայց քանի մոտենում էր տանը, այնքան ավելի դղում էր, վոր անհնարին է քնել այդ գիշեր, վոր ավելի նման էր յերեկոյի կամ առավոտի: Ամայի փողոցները յերեւում էին մինչև հեռուները՝ ճամպին Պիեռը հիշեց, վոր այդ յերեկո Անատոլ Կուրագինի մոտ հալածվելու յեր թուզթ խաղացողների սովորական խումբը, վորից հետո սովորաբար լինում էր կերուխում, վորը վերջանում էր Պիեռի սիրած գվարճություններից մեկով:

Եւով կլիներ Կուրագինի մոտ դնայիք, մտածեց Պիեռը:

Սակայն անմիջապես հիշեց իշխան Անդրեյին տված աղնիվ խոսքը՝ ել շփնալ Կուրագինի մոտ: Բայց անմիջապես, ինչպես այդ հատուկ և թուլամորթ կոչվող մարդկանց, նա բուռն ցանկություն ունեցավ մի անգամ ևս փորձել իրեն այնքան ծանոթ շվայտ կյանքը, ու վճռեց դնալ: Յեւ իսկույն մտածեց, վոր արված խոսքը նշանակութուն չուներ, վարովհետեւ իշխան Անդրեյին խոսք տալուց առաջ, նա Անատոլին նույնպես խոսք էր տվել՝ լինել նրա մոտ. վերջապես մտածեց, վոր բաւար այդ աղնիվ խոսքերը — այնպիսի պայմանական բաներ են, վոր չունեն վորեւէ վարոշ իմաստ, մանավանդ յեթե մարդ մտածի, վոր վաղն իսկ կա-

<sup>1</sup> Կարգին կանայք:

<sup>2</sup> Բայց Կուրագինի կանայք. կանայք և գենի:



բող և մեռնել կամ իրեն կարող և մի այնպիսի անսովոր բան պատահել, զոր ել զոչ ազնիվ խոսք կմնա, զոչ անազնիվ: Իր վճիռներն ու յենթադրությունները զոչնչացնող այսպիսի դատողություններ հաճախ ելին անցնում Պիեռի մտքով: Նա գնաց Կուսպինի մաս:

Հասնելով հեծյոցի դորանոցների մոտ դանդաղ մի մեծ տան, ուր տպրում էր Անատուրը, Պիեռը, կառքից իջնելով, բարձրացավ այդ տան լուսավորված աստիճաններով, և բաց դռնից մտավ ներս: Նախասենյակում զոչ վաք չկար. այդտեղ ընկած ելին դատարկ շշեր, թիկնոցներ, կրկնակաշիկներ: Գինու հոտ էր դալիս. հեռավոր խոսակցությունն ու բացական խոսակցություններ ելին լսվում:

Թաղերն ու ընթրիքը վերջացել ելին արդեն, բայց հյուրերը դեռ չեյին ցրվել: Պիեռը թիկնոցը քցեց մի կողմ ու մտավ առաջին սենյակը, ուր կային ընթրիքի մնացորդներ և մի լաքեյ, զոր կարծելով իրեն մարդ չի տեսնում, դատարկում էր կիսատ բաժակները: Յերբորդ սենյակից լսվում ելին քաշքշոցի, ջրքիջի ձայներ, ծանոթ բացական խոսակցություններ և արջի վոռնոց: Ութ յերեսատարդներ մտանող խմբով ելին բաց պատուհանի մոտ: Յերեք հոգի դրազված ելին մի ջահել արջուկով. դրանցից մեկը արջին շղթայով քաշելով՝ վախեցնում էր մյուսին:

— Ստիվենսի կողմից տալիս եմ հարյուր, — կանչեց մեկը:

— Տես, աղնել չի կարելի, — գոչեց մյուսը:

— Յես Դոլոխովի կողմն եմ, — գոռաց յերբորդը: — Կտրիր, Կուսպին:

— Դե, արջը թողեք, այստեղ դրադ են դալիս:

— Ընչեղով, այլապես տարված ե, — գոռում էր չորբորդը:

— Յեկով, մի շիշ բեր, Յեկով, — ձայն տվեց ինքը դեղեցիկ բարձրահասակ տանտերը, զոր կուրծքը բաց, բարակ շապիկով կանգնել էր բարձրության մեջ: — Սղասեցեք, պարոններ: Ահա և Պետրուշան, սիրելի բարեկամս, — դարձավ նա Պիեռին:

Ուրիշ մի վոչ բարձրահասակ, պայծառ կապույտ աչքերով մարդու ձայնը, զոր բոլոր այդ գինովցած ձայների մեջ դարձացնում էր իր զգաստ արտահայտությամբ, կանչում էր պատուհանից. «Արբ այստեղ—դրազը կտրի՛ք: Դա Սեմյոնովյան պնդի սպա Դոլոխովն էր՝ հայտնի խաղամուլ ու մենամարտի սիրահար, զոր տպրում էր Անատուրը հետ միասին: Պիեռը շուրջը նայելով ուրախ ժպտաց:

— Բան չեմ հասկանում: Ի՞նչ կա:

— Կացեք, սա հարբած չի: Շիշը տուր, — ասավ Անատուրը և, սեղանից բաժակը վերցնելով, մոտեցավ Պիեռին:

— Նախ և առաջ խմիր:

Պիեռն սկսեց խմել բաժակ բաժակի յետեից, հոնքերի տակից նայելով հարբած հյուրերին, վորոնք նորից խմովեցին լուսամուտի մօտ, միևնույն ժամանակ ականջ դնելով նրանց խոսակցությանը։ Անատոլը դինի յեր լցնում նրա բաժակը և պատմում, թե Դոլոխովը զրազ և բռնում այստեղ գտնվող անգլիացի ծովադնաց Ստիվենսների հետ, վոր ինքը՝ Դոլոխովը յերբորդ հարկի պատահանում նստած և վոտները դեպի դուրս կախած մի շիշ ում պիտի խմի։

— Դե բոլորը խմի՛ր, — ասավ Անատոլը, վերջին բաժակը Պիեռին տալով, — թե չես բաց չեմ թողնի։

— Վաչ, չեմ ուզում, — ասավ Պիեռը և Անատոլին հրելով, մատեցավ լուսամուտին։

Դոլոխովը անգլիացու ձեռք բռնած՝ պարզ ու վորոշ թվում էր զրազի պայմանները, դիմելով գլխավորապես Անատոլին և Պիեռին։

Դոլոխովը միջահասակ մարդ էր՝ գանգրահեր ու պայծառ, կապույտ աչքերով։ Քսանուհինգ տարեկան էր։ Ինչպես բոլոր հետեակ սպաները՝ նա ել բեղեր չէր պահում, և նրա բերանը, վոր դեմքի ամենաաչքի ընկնող մասն էր, յերևում էր ամբողջությամբ։ Այդ բերանի դժերը կորացած էին զարմանալի նրբությամբ։ Մեջտեղից՝ վերին շուրթը յեռանդուն կերպով սեպածն իջնում էր ներքին պինդ շուրթի վրա, և բերանի անկյուններում շարունակ յերկու յուրաքանակ ժպտաներ էին գոյանում, յուրաքանչուր կազմում մեկը։ Յեվ այդ բոլորը միասին, մանավանդ աչքերի հանդուգն, լալիչ ու խելացի հայացքը, այնպիսի տպավորություն էր անում, վոր չէր կարելի չնկատել այդ դեմքը։ Դոլոխովը հարուստ չէր, և կապեր ել չունէր հասարակության մեջ։ Յեվ չնայած վոր Անատոլը տասնյակ հազարներ էր ծախում, Դոլոխովը նրա հետ էր ապրում և կարողացել էր իրեն պահել այնպես, վոր բոլոր նրանց ճանաչողները Դոլոխովին ավելի էին հարգում, քան Անատոլին։ Դոլոխովը խաղում էր ամեն խաղ և միշտ տանում էր։ Վարձան էլ խմեր՝ մտքի պայծառությունը չէր կորցնում։ Թե կուրազինը, թե Դոլոխովը այն ժամանակները հայտնի էին Պետերբուրգի կոնժարանների և ստանկների աշխարհում։

Ռոմի շիշը բերել էին։ Չրջանակը, վոր արգելում էր լուսամուտի դռնի կողմի թեքության վրա նստելու, սկսեցին պոկել յերկու լաքեյ միասին, հայտնապես շտապելով ու շփոթվելով շրջապատող պարանների խորհուրդներից ու գոչյուններից։

Անատոլը հազթական տեսքով պատահանին մոտեցավ։ Նա ուզում էր վորեւե բան կատարել, Լաքեյներին մի կողմ հրելով՝ շրբ-

Ջանակը քաշեց դեպ իրեն, բայց չբժանակը մնաց տեղում, նա ջարդեց սպակին:

— Հապա, դու զործիր, հակա, — դարձավ նա Պիեռին:

Պիեռը ձեռք քցեց շրջանակի թևեր ձողերին, ձիգ տվեց և ձուլնչացով տեղահան արավ կաղնյա շրջանակը:

— Ամբողջովին հանիր, թե չե կկարծեն մի տեղից բռնել եմ, — ասավ Դոլոխովը:

— Անդլիացին պարծենում ե... հա... լավ ե... — ասում էր Անատոլը:

— Լավ ե, — ասավ Պիեռը, նայելով Դոլոխովին, վեր ոտմի շիշը ձեռին մատնելով եր լուսամուտին, վորակեցից յերևում էին յերկնքի վրա իրար ձուլվող վերջավույն ու արշալույսը:

Դոլոխովը ոտմի շիշը ձեռին թռավ լուսամուտը: «Լսեցեք», դռնեց նա, լուսամուտի դռնին կանգնելով և սենյակում գտնվող ներին գիմելով: Բայրը լսեցին:

— Յեա դրադ եմ բռնում (նա խոսում էր Ֆրանսերեն, վոր անդլիացին հասկանա իրեն, և այնքան էլ լավ չէր խոսում այդ լեզվով): Դրադ եմ բռնում հիսուն վոսկով, աղմուկ եք հարյուր, — ավելացրեց նա, անդլիացուն գիմելով:

— Վոչ, հիսուն, — ասավ անդլիացին:

— Լավ, հիսուն վոսկով, — վոր յես խմում եմ ոտմի շիշն ամբողջությամբ, մի շնչով, առանց բերնիցս հեռացնելու, խմում եմ լուսամուտից դուրս նստած, ահա այս տեղում (նա կոացավ և ցույց տվեց լուսամուտի դռնի կողմի թեքությունը) առանց վորեն բռնից բռնելու... Այդպես ե...

— Շատ լավ, — ասավ անդլիացին:

Անատոլը դարձավ անդլիացուն և, նրա Ֆրանկի կոճակը բռնելով ա. վերևից նրան նայելով (անդլիացին կարճահասակ էր), սկսեց անդլերեն կրկնել նրան զրադի պայմանները:

— Կաց, — պոռաց Դոլոխովը, շշով պատուհանը թակելով, վոր ուշադրություն դարձնեն իր վրա: — Կաց, Կուրադին. լսեցեք: Յեթև ուրիշ մեկն այս նույնն անի, յես տալիս եմ հարյուր վոսկի: Հասկանում եք:

Անդլիացին գլխով արավ, առանց հասկացնելու, թե մտադիր և արդյոք այս նոր զրադը բռնելու թե վոչ: Անատոլն անդլիացուն չէր թողնում և, ննայած վոր նա, գլխի շարժումով հասկացնել տվեց, թե ըմբռնել և ամեն ինչ, Անատոլը Դոլոխովի խոսքերը թարգմանեց անդլերեն: Մի նիհար. ջահել աղա, հուսարապա, վոր այդ յերեկս ասնուլ էր տվել խադի մեջ, լուսամուտը բարձրացավ, գլուխը հանեց ու նայեց ցած:

— Ո՛ւ... Տ... Տ... — բացականչեց նա, լուսամուտից ներքև մայթերը զիտելով:

— Հանգարա,—պտտաց Դուլթովը և պատուհանից քաշեց սպառնիչ, վորը, խթաններն իրար խճողելով, անշնորհ կերպով թռավ սենյակը:

Շիշը զննելով լուսամուտի զոգին, վոր վերցնելը հեշտ լինի, Դուլթովը զգուշությամբ և կամացուկ մտավ լուսամուտի մեջ: Վտաները կախելով և յերկու ձեռով լուսամուտի կողերը բռնելով՝ նա փորձեց հավասարակշռությունը, տեղավորվեց, ձեռները թողեց, շարժվեց զեպի աջ, զեպի ձախ ու շիշը վերցրեց: Անատոլը բերեց յերկու մոմ ու զրեց լուսամուտի զոգը, չնայած վոր բոլորովին լույս եր արդեն: Սպիտակ շապիկով Դուլթովի մեջքը և դանդաղեցող զուլթը լուսավորվեցին լերկու կողմից: Բոլորը խմբվեցին լուսամուտի մոտ: Առջևը կանգնած եր անդրիացին: Պիեռը ժպտում ու վռշիշչ չէր ասում: Ներկաներից մեկը, վոր մշուսներից ավելի տարիքով եր, վախեցած ու զայրացած զեմքով, ասաջ անցավ հանկարծ և ուզեց բռնել Դուլթովի շապկից:

— Պարոններ, այս հիմարություն ե. մարդը կընկնի՛ կմեռնի,— ասավ այդ ավելի խոհեմ մարդը:

Անատոլը կանգնեցրեց նրան:

— Ձեռ մի տա. կվախեցնես՝ կընկնի-կմեռնի: Հը... Այն ժամանակ լինչ... Հը...

Դուլթովը զուլթը դարձրեց, ուզողովով ու ձեռներին հեռված:

— Յեթև մեկը նորից զեպի ինձ և յեկել,— ասավ նա, բառերը հագիվ արտասանելով սեղմած ու նուրբ շրթերի արանքից,— յես նրան անմիջապես կիջեցնեմ այ այստեղ: Դե...

«Դե» ասելով՝ նա շուտ յեկավ նորից, ձեռները թողեց, շիշը վերցրեց, մատերեց բերանին, զուլթը յետ զցեց և ազատ ձեռը վեր բարձրացրեց հավասարակշռության համար: Լաքեյներից մեկը, վոր կտրած ապակու կտորտանքներն եր հավաքում, կանգ ասավ կոացած զիրքով, աչքերը չհեռացնելով լուսամուտից և Դուլթովի մեջքից: Անատոլը զիջ կանգնել եր՝ աչքերը չոած: Անդրիացին, շրթունքը դուրս քցած, նայում եր կողքանց: Այն տարիքոտ սպան, վոր ուզում եր արգելել այդ բանը, վաղեց զեպի սենյակի անկյունը և պտկեց բազմոցին, յերեսը պատին դարձրած: Պիեռը յերեսը ծածկել եր, և մի նվաղ, մոռացված ժպիտ մնացել եր նրա դեմքին, թեև այդ դեմքն արտահայտում եր ահ ու սարսափ: Բոլորը լուսնին: Պիեռը ձեռները հեռացրեց աչքերից. Դուլթովը նստած եր նույն դիրքով, միայն զուլթն եր յետ թեքվել, այնպես վոր ծոծրակի դանդաղ մաղերը զիպչում էին շապկի ոձիքին, և ձեռը շի

հետ միասին բարձրանում եր ավելի ու ավելի, զոդզոդալով ու ճիգ դարձ գնելով, Շիշն ըստ յերևույթին դատարկվում եր և զրա հետ միասին բարձրանում, ծոկելով Դոլոխովի գլուխը: Յինչու աշտակս յերկար տեկցա, մտածեց Պիեռը: Նրան թվում եր, թե կես ժամից ավելի յե անցել: Հանկարծ Դոլոխովը մեջքով շարժում տրավ դեպի յետ, և նրա ձեռը զոդաց նյարդային զոդով. այդ ցնցումը բավական եր, վոր թեք մակարդակի վրա նստած մարմինը շարժվեր տեղից: Նա ամբողջովին շարժվեց, և նրա ձեռներն ու գլուխը, ճիգեր թափելով, զոդացին առաջվանից ավելի սաստիկ: Զեռս մեկը բարձրացավ լուսամուտի դռից բռնելու, բայց նորից իջավ: Պիեռը նորից աչքերը ծածկեց, վորոշելով՝ ել յերբեք չբանալ: Հանկարծ զոդաց, վոր շուրջը բոլորը շարժվեցին: Նայեց. Դոլոխովը կանգնած եր լուսամուտի դռին, զեմքը գունատ եր և ուրախ:

— Դատարկ ե:

Նա շիշը նետեց՝ անդլիացուն, վորը ճարպկորեն բռնեց այն: Դոլոխովը լուսամուտից ցած թռավ: Նրանից ոտի ուժեղ հոտ եր փչում:

— Հիանալի՝ յեր: Կեցցեա: Այ քեզ զբաղ: Դրողը ձեզ տանի,— լսվում եր ամեն կողմից:

Անդլիացին, քսակը հանելով, զբամը համբեց: Դոլոխովը հռ-քերը կիտեց և լուռ եր: Պիեռը թռավ լուսամուտը:

— Պարանայք: Ո՞վ և ուզում զբաղ դալ ինձ հետ: Յես ել այդ կանեմ, — հանկարծ բացականչեց նա: — Դրադն ել հարկավոր չի: Հրամայի՛ մի շիշ բերեն: Յես կանեմ... հրամայի՛ բերեն:

— Թող, թող, — ասավ Դոլոխովը մպտալով:

— Ի՞նչ և պատահել քեզ. խելքդ թողրե՛լ ես: Ո՞վ կթողնի: Դոլոխովը սանդուղի վրա ել պտտվում և, — խոսեցին այս ու այն կողմից:

— Կիմեմ, մի շիշ ոտ մովեք, — բղավեց Պիեռը, վճռականորեն ու հորրած շարժումով սեղանին խփելով, և մտավ լուսամուտի մեջ: Նրա ձեռները բռնեցին. բայց նա այնքան ուժեղ եր, վոր հետու յեր հրա՛մ իրեն մոտեցողներին:

— Վոշ, զբան այդպես վոշ մի կերպ չես կարող կտրել, — ասավ Անատոլը, — կացեք, յես նրան կխաբեմ: Լսիր, յես զբաղ եմ բռնում քեզ հետ, բայց վազը, իսկ հիմա մենք բալորս գնում ենք <sup>\*\*\*</sup> ի մոտ:

— Դնանք, — բացականչեց Պիեռը, — գնանք... Արջն ել տանենք հեռներս...

Նա բռնեց արջին և, նրան գրկելով ու բարձրացնելով, սկսեց սենյակի մեջ պտույտներ անել:

## X

Իշխան Վասիլին՝ Աննա Պավլովնայի յերեկույթում իշխանուհի Դրուբեցկային տված խոստումը կատարեց, վոր վերաբերում էր նրա միակ վորդի Բորիսին։ Նրա մասին զեկուցվեց թագավորին, և նա, վոչ յորինակ այլոց, փոխադրվեց Սեմյոնովյան գնդի գլխադիան՝ վառակիրի պաշտոնով։ Բայց, շնայած Աննա Միխայլովնայի բոլոր ջանքերին ու զիմուհներին, Բորիսն այնպես եւ շնշանակվեց Կուսուզովի ազդու տանտ կամ նրա շտարին կից։ Աննա Պավլովնայի յերեկույթից հետո Աննա Միխայլովնան շուտով վերադարձավ Մոսկվա՝ ուղիղ իր հարուստ ազգական Ռոստովներին տունը, ուր իջևանում եր Մոսկվա յեղած միջոցին և ուր մանկութունից դաստիարակվել ու տարիներով ապրել էր իր պաշտելի Բորինկան, վոր հենց նոր գինվորական եր դարձել և անմիջապես գլխադիան փոխադրվել՝ իրեւ վառակիր։ Գլխադիան արդեն դուրս եր յեկել Պետերբուրգից ոգոստոսի 10-ին, և Բորիսը, վոր մնացել եր Մոսկվայում՝ զգեստավորվելու համար, դուրսին պիտի հասներ Ռաձիվիով տանող ճանապարհին։

Ռոստովներին տանը, Նատալյայի տոնի առթիւ, մոր և կրտսեր աղջկա անվանակոչութունն եր տոնվում։ Առավոտից սկսած, անդադար, յեռազույգ ձիերով լծված կառքեր ելին դալիս ու գնում, շնորհավորողներ բերելով Ռոստովներին մեծ, ամբողջ Մոսկվային հայտնի տունը, վոր դռնվում եր Պոլարսկայա փողոցի վրա։ Կոմսուհին իր մեծ սիրուն աղջկա և, մեկը մյուսին փոխարինող հյուրերի հետ, նստել ելին հյուրասրահում։

Կոմսուհին նիհար զեմքով արեւլյան տիպի կին եր, քառսուն հինգ տարեկան, ըստ յերեկույթին մաշված՝ տասերկու յերեխա բերելուց։ Շարժումների և խոսակցության դանդաղկատութունը, վոր առաջանում եր ուժասպառությունից, նրան տալիս եր մի պատկառելի տեսք, վոր հարգանք եր ներշնչում։ Իշխանուհի Աննա Միխայլովնա Դրուբեցկայան, վորպես տանու մարդ, այդտեղ նստած, ողնում եր հյուրեր ընդունելու և զրույցով զրազեցնելու դործին։ Յերխոստարդներն անցել ելին յետեի սենյակները, կարեսր համարելով մասնակցել այցելուներ ընդունելուն։ Կոմսը զիմավորում և ճանապարհ եր դնում հյուրերին, բոլորին եւ ճաշի հրավիրելով։

«Շատ և շատ շնորհակալ եմ, ma chère կամ mon cher<sup>1</sup> (ma chère կամ mon cher նա ասում եր անխափր բոլորին, բնավ

<sup>1</sup> Սիրելի



տարբերություն չգնելով իրենից բարձր կամ ցած կանգնածների միջև) թե իմ և թե թանկագին անվանակոչյալների կողմից։ Բայց տեսե՛ք, այ, կղաք ճաշելու։ Դուք ինձ կվիրավորե՛ք, mon cher։ Միտանց խնդրում եմ ամբողջ ընտանիքի կողմից, ma chère»։

Իհրր, ուրախ և մաքուր ածխած գեմքի միատեսակ արտահայտությամբ, ձեռների միատեսակ ամուր սեղմումով և գլխի թեթեւակի խոնարհումներով այդ խոսքերն ասում էր բոլորին անխափր, անփոփոխ կերպով։ Մի հյուրին ճամբա դնելով՝ կոմսը վերադառնում էր հյուրաստանում մնացած այր կամ կին հյուրի մոտ. բազկաթոռն աստջ քաշելով, լավ ապրել սիրող և ապրել իմացող մարդու տեսքով, աշխուժորեն զոտներն իրարից հեռու և ձեռները ծնկներին դնելով, նա սրբովում էր վեհորեն, դուշակություններ անուժ յեղանակի մասին, խորհրդակցում առողջության մասին, յերբեմն ուսներենով, յերբեմն շատ վատ, բայց ինքնավստահ ֆրանսերենով, և նորից հաջնած, բայց ազամարդու պարտականությունը կատարելու ամուր գիտակցությամբ, դնում էր ճամպուտ դնելու, ցանցաւ մազերը ճաղատի վրա ուղղելով, և կրկին հրավիրում ճաշի։ Երբեմն նախասնյակից վերադառնալով, նա ծաղիկների և սպասավորների սենյակների միջից անցնելով, մտնում էր ընդարձակ մարմարյա դահլիճը, ուր սեղան էյին պատրաստում ութսուն մարդու համար, և նայելով արծաթ ու հախճապակի բերող, սեղաններ սարքող և շերտավոր կտավի սփռոցներ փռող սպասավորներին, նա իր մոտ էր կանչում Դմիտրի Վասիլևիչին, իր բոլոր դարձերը վարող ազնվականին, և ասում. «Դե, դե, Միտանկա, տես, ամեն բան լավ լինի Այդպես, այդպես, — ասում էր նա, բախականությամբ նայելով բացված անագին սեղանին։ — Դիտավորը սարքավորումն և։ Այո... Յե՛՛՛՛՛ նա ինքնազոհ հառաչելով՝ դնում էր նորից հյուրաստան։

— Մարիա Լիօնիա Կարադինյան իր դստեր հետ, — թավ ձայնով հայտնեց կոմսուհու լաքեյը, հյուրաստանի դռնից մտնելով։

Կոմսուհին մտածեց և հետ քաշեց ամուսնու պատկերով դարդարված քթախոտի զոսկե ասեփից։

— Հոգիս հանեցին այս այցելությունները, — ասավ նա։ — Ե՛հ, սա որդեն վերջինը կլինի։ Շատ մեծամիտն և ու չմահավան։ Խնդրիր, — ասավ լաքեյին մի ախուր ձայնով, վոր կարծես ասում էր. «Դե, որդեն հոգիս հանեցիք»։

Բարձրահասակ, գիրուկ, հպարտ տեսքով մի կին՝ իր կլորագեծ աղջկա հետ, ղդեստների ազմուկով, մասն հյուրաստան։

«Chère comtesse, il y a si longtemps... elle a été alitée la pauvre enfant... au bal des Razoumowsky... et la comtesse

Apraksine... j'ai été si heureuse...<sup>1</sup> լսվեցին կանացի աշխույժ, իրար ընդհատող ձայներ, խառնվելով զգեստների ազմուկին ու աթոռների շարժումին: Սկսվեց մի խոսակցություն, վոր տևում է այնքան, վոր հենց առաջին ընդմիջումին վեր են կենում ե, զգեստներով ազմկելով, ասում. «Je suis bien charmée, la santé de maman... et la comtesse Apraksine»<sup>2</sup>, ե, դարձյալ զգեստների ազմուկով, անցնում նախասենյակ, մուշտակ կամ թիկնոց հաղնում ու մեկնում: Խոսակցություն բացվեց քաղաքի այն ժամանակվա գլխավոր նորություն—Յեկատերինայի ժամանակի հայտնի հարուստ և գեղեցիկ ծերունի կոմս Բեզուխովի հիվանդության և նրա ապրիմի վորդի Պրեռի մասին, վորն իրեն այնպես անկարգ եր պահել Աննա Պավլովնա Շերերի յերեկույթին:

— Յեա շատ խղճում եմ ծերունի կոմսին, — ասավ հյուրը, — նրա առողջությունն առանց այն ել վատ ե, իսկ հիմա վորդու պատճառած վիշտը կսպանի նրան:

— Ի՞նչպես, — հարցրեց կոմսուհին, կարճես չգիտեր ինչի մասին ե խոսում հյուրը, թեև տասնուհինգ անգամ արդեն լսել եր կոմս Բեզուխովի վշտի պատճառի մասին:

— Ահա այժմյան դաստիարակությունը, — ասաց հյուրը, — զեռ արտասահմանում այդ յերետասարդը թողնված ե յեղել ինքն իրեն, իսկ հիմա Պետերբուրգում, ասում են, այնպիսի սարսափելի բաներ ե արել, վոր վոստիկանությունը նրան արտաքսել ե այնտեղից:

— Միթե, — ասավ կոմսուհին:

— Նա վատ ընկերներ ե ընտրել, — միջամտեց իշխանուհի Աննա Միխայլովնան: — Իշխան Վասիլիի վորդին, նա ե մի ինչ-վոր Դուլխով, այդ յերեքը, ասում են, սարսափելի բաներ են արել: Յեղ յերեկուսը պատմվել են. Դուլխովին աստիճանազուրկ են արել և հասարակ զինվոր դարձրել, Բեզուխովի վորդուն քստրել են Մոսկվա: Իսկ Անատոլի Կուրադինին — հայրն աղատել ե մի կերպ: Բայց ե այնպես արտաքսել են Պետերբուրգից:

— Բայց ի՞նչ են արել, — հարցրեց կոմսուհին:

— Իրանք կատարյալ ավաղակներ են, մանավանդ Դուլխովը, — ասում եր հյուրը: — Նա Մարիա Իվանովնա Դուլխովայի վորդին ե, այդպիսի մի հարգելի կնոջ վորդի ե ի՞նչ... Կարող եք յերևակայել, զրանք յերեքով ձեռք են բերում մի արջ, նստեցնում են կա-

<sup>1</sup> Թանկագին կոմսուհի, վորքան ժամանակ ե... աղջկե ստիպված եր պառկել անկողնում, խեղճ... Թաղումովիների պարահանդեսում... ե կոմսուհի Ապրակսինան... յեա այնքան յերջանիկ ելի:

<sup>2</sup> Յեա հիացած եմ. մամայի առողջությունը... ե կոմսուհի Ապրաքսինան:



սեթ և տանում զերասանուհիներն մոտ։ Ղոստիկանությունը վրայն հասնում զրանց զսպելու։ Դրանք բռնում են վոստիկանական թաղապետին և մեջքը կապում արջի մեջքին ու թողնում Մոյկայի մեջ, արջը լողում և, խոկ թաղապետը նրա վրա։

— Հետաքրքրական կերպարանք կունենար թաղապետը, *ma chère*,— բացականչեց կոմսը, ծիծաղեց թուլանալով։

— Ախ, ինչ սարսափելի՛ յե։ Այստեղ ծիծաղելու թնչ կա, կոմս։ Բայց կանայք իրենք ել ակամա ծիծաղեցին։

— Հազիվ են կարողանում այդ թշվառին փրկել, — շարունակեց հյուրը։ — Յեվ դա կոմս Կիրիլ Վադիմիրովիչ Բեզուխովի վորդին և այդպես խելացի զվարճանում, — ավելացրեց նա։ — Բայց ասում էյին, թե շատ կրթված ու խելոք մարդ է։ Ահա արտասահմանի կրթությունն ուր հասցրեց։ Հույս ունեմ, վոր նրան այստեղ վռնվոր չի բնդունի, չնայած իր հարստության։ Ուղեցին ծանոթացնել ինձ։ Կտրականապես հրամարվեցի։ — աղջիկներն տես եմ։

— Ինչո՞ւ համար եք ասում, թե այդ յերիտասարդն այնքան հարուստ է, — հարցրեց կոմսուհին, մի կողմ թեքվելով աղջիկներին, վարձնք անմիջապես ձևացրին, թե չեն լսում։ — Չե՞ վոր կոմսը միայն ապուրինի զավակներ ունի։ Կարծեմ... այդ Պիեռն ել ապուրինի յե։

Հյուրը ձեռք թափ ավեց։

— Նա, կարծեմ, քսան ապուրինի զավակ ունի։

Իշխանուհի Աննա Միխայլովնան խառնվեց խոսակցության, բոտ յերևույթին, կամենալով ցույց տալ իր կապերը և բարձր շքրջանի բոլոր հանդամանքների մասին ունեցած իր տեղյակությունը։

— Ահա բանն ինչու՞ն է, — ասավ նա խորհրդավորությամբ և նույնպես կրտաշշուկով։ — Կոմս Կիրիլ Վադիմիրովիչի համբավը հայտնի յե... Նա իր զավակների հաշիվն ել մոռացել է, բայց այդ Պիեռը նրա սիրելին եր։

— Վորքան լավն եր ծերուհը, — ասավ կոմսուհին, — զեռ անցյալ տարին։ Ավելի զեղեցիկ աղամարդ չեմ տեսել։

— Հիմա շատ ե իրավել, — ասավ Աննա Միխայլովնան։ — Հա, յես ուզում եյի տեսնել, — շարունակեց նա, — վոր կնոջ կողմից նրա կալվածների անմիջական ժառանգն իշխան Վասիլին է, բայց հայրը Պիեռին շատ եր սիրում, զբաղվեց նրա դատարարակությամբ և զրեց թաղավորին... այնպես վոր վռնվոր չդիտի, յեթե մեռնի (նա այնքան վատ է, վոր յուրաքանչյուր վայրկյան սպասում են այդ բանին, և Lorrain<sup>1</sup> յեկավ Պետերբուրգից) ում և մնալու այդ

<sup>1</sup> Լորենը։

ասադին կարողությունը, Գիեոլին թե իշխան Վասիլին։ Քառասուն հազար ճորտ և միլիոններ։ Յես այդ լավ գիտեմ, վորովհետեւ ինքը, իշխան Վասիլին և ինձ ասել։ Բացի դրանից՝ Կիրիլ Վադիմիրովին ինձ մորս կողմից՝ քեռի յե զալիս յերբորդ պորտով։ Բորիսիս կնքահայրն էլ նա յե յեղել, — ավելացրեց նա, կարծես այդ հանգամանքին վու մի նշանակություն չտալով։

— Իշխան Վասիլին յերեկ յեկել և Մոսկվա։ Ինձ ասին, թե վերաքննության գործով և դնում, — ասավ Նյուրը։

— Այո, բայց, entre nous<sup>1</sup>, — ասավ իշխանուհին, — դա պատրվակ է. նա յեկել և իսկապես կոմս Կիրիլ Վադիմիրովին մոտ, լսելով, վոր նա այդքան վատ է։

— Սակայն, ma chère, դա հիանալի բան է, — ասավ կոմսը, նկատելով, վոր Նյուրն իրեն չի լսում, գիմեց արդեն որիորդներին։ — Հետաքրքրական կերպարանք կունենար այդ թաղապետը, յերևակայում եմ։

Յեվ նա, յերևակայելով, թե ինչպես թաղապետը ձեռները կթափահարեր, նորից քրքջաց իր գիլ ու թավ ծիծաղով, վոր ցնցում էր նրա ամբողջ մարմինը. այդպես ծիծաղում են միշտ լավ կերամ և լավ խմած մարդիկ։ — Այդպես, խնդրում եմ, դալ ճաշի, — ասավ նա։

## XI

Լուսթյուն տիրեց։ Կոմսուհին նայում էր Նյուրին հանելիտբեն ժպտալով, ասենք, չթաղցնելով և այն, թե ինքն այժմ բնավ չի վշտանա, յեթե Նյուրը վեր կենա ու դնա։ Նյուրի աղջիկը զղեստներն ուղղում էր արդեն, հարցականորեն մորը նայելով, յերբ հանկարծ հարևան սենյակից մի քանի տղամարդկային ու կանացի վտաքերի վազք, ընկնող աթոռի զրզռոց լավեց, և վազեվաղ սենյակ մտավ մի տասերեք տարեկան աղջիկ, կարճ կիսելի շրջագոգեստով ինչ-վոր բան ծածկելով, ու կանգ առավ սենյակի մեջտեղը։ Նկատելի յեր, վոր նա ուժեղ վազքից պատահաբար հասել էր այսքան հեռու։ Նույն վայրկյանին դռան մեջ յերևացին մոռադույն ոձիքով մի ուսանող, զվարդիական միսպա, մի տասնուհինգ տարեկան աղջիկ և հաստիկ կարճրաթուշ մի տղա՝ մանկական բաճկոնակով։

Կամսը վեր թռավ և, որորվելով, ձեռները լայն տարածեց վաղող աղջիկա շուրջը։

— Ահա և ինքը, — ծիծաղելով ասավ նա։ — Անվանակոչյալը։ Ma chère, անվանակոչյալս։

<sup>1</sup> Քոսքը մեր մեջ

— Ma chère, il y a un temps pour tout <sup>1</sup>, — ասում կոմսուհին խիստ ձեռնալուծ։— Դու շարունակ յերես ես տալիս զբան, Elie, — ավելացրեց նա մարդուն դառնալով։

— Bonjour, ma chère, je vous félicite <sup>2</sup>, — ասավ հյուրը։ — Quelle délicieuse enfant! <sup>3</sup> — ավելացրեց նա, մորը դիմելով։

Անայա, մեծ բերանով, տղեզ, բայց աշխույժ աղջիկը՝ իր մանկական բաց ուսերով, վորոնք արագ վազքից շարժվում էին իրենց սեղմող կոճավի մեջ, իր յետե ընկած սև խոպոպներով, բարակ մեղիկ ձեռներով և ժանյակավոր վարտիկի ու բաց կոշիկների մեջ յեղած փոքրիկ վոտներով այն հաճելի հասակումն եր, յերբ աղջիկը դեռ յերեսնա չի, իսկ յերեսան դեռ աղջիկ չի։ Հոր ձեռներին զուրս պրծնելով՝ նա վազեց դեպի մայրը և, վռչ մի ուշադրութուն չդարձնելով նրա խիստ նկատողութեան, իր կասկարմիր դեմքը թաղցրեց մոր ժանյակավոր կրկնացի մեջ ու ծիծաղեց։ Նա ծիծաղում եր ինչ-վոր բանի վրա, կցկտուր խոսում տիկնիկի մասին, վոր հանել եր շրջադեհատի տակից։

— Տեսնո՞ւմ եք... Տիկնիկ... Միմի... Տեսնո՞ւմ եք։

Յեվ Նատաշան այլևս չկարողացավ խոսել (նրան ամեն բան թվում եր ծիծաղելի)։ Նա ընկավ մոր վրա ու քրքջաց այնպես բարձր ու հնչուն ձայնով, վոր բոլորը, անգամ փքված հյուրը, ծիծաղեցին ակամա։

— Դե դնո՞ւ, դնո՞ւ այդ այլանդակ տիկնիկիդ հետ, — ասավ մայրը կեղծ բարկութեամբ աղջկանը հրելով։— Սա կրտսեր աղջիկն է, — զարձավ նա հյուրին։

Նատաշան մի վայրկյան դեմքը պոկեց մոր ժանյակավոր դեհատից, ներքեից ծիծաղի արցունքների միջից նայեց նրան ու նորից դեմքը թաղցրեց։

Հյուրը, հարկադրված լինելով հրճվելու ընտանեկան այս տեսարանով, կարևոր համարեց վորևե կերպ մասնակցել։

— Ասացե՛ք, սիրելիս, — ասավ նա, դիմելով Նատաշային, — այդ Միմին քո լնչն է։ Աղջիկը, յերեսի։

Նատաշային դուր չեկավ մանկական ձևով խոսելու այդ յեղանակը, վորով հյուրը դիմեց իրեն։ Վոչինչ չպատասխանեց և լրջորեն հյուրին նայեց։

Մինչդեռ ամբողջ այդ յերթասարդ սերունդը՝ սպա Բորիսը — իշխանուհի Աննա Միխայլովնայի վորդին, ուսանող Նիկոլայը, —

<sup>1</sup> Մերելիս, ամեն բանի ժամանակը կու։

<sup>2</sup> Բարե, սիրելիս, շնորհավորում եմ ձեզ։

<sup>3</sup> Ի՜նչ հիանալի յերեսնա յի։

կոմսի ավագ վորդին, Սոնյան — կոմսի տասնուհինգամյա աղջակահանուհին և կոմսի կրտսեր վորդի Պետրուշան, — բոլորը տեղավորվեցին հյուրասրահում և, ըստ յերևութիւն աշխատում էին վայելչության սահմաններում պահել իրենց աշխույժն ու ուրախութիւնը, վոր արտահայտում էր տակավին նրանց յուրացանշուրդի դիմագիծը։ Նկատելի չէր, վոր այնտեղ, յետին սենյակներում, վորտեղից յեկան նրանք այդպիսի թափով, ավելի ուրախ խոսակցութիւն էին ունեցել, քան այստեղի խոսակցութիւնը՝ քաղաքի բամբասանքների, յեղանակի ու comtesse Apraksine-ի մասին։ Յերբեմն-յերբեմն իրար էին նայում և ծիծաղները հազիվ զսպում։

Յերկու յերիտասարդները՝ ուսանողն ու սպան, մանկության ընկերներ էին, հասակակից և յերկուսն էլ զեղեցիկ, բայց նման չէին իրար։ Բորիսը բարձրահասակ խարտյաշ պատանի չէր՝ հանգիստ ու զեղեցիկ զեմքի նուրբ, ուղիղ գծերով։ Նիկոլայը միջահասակի զանգրահեր յերիտասարդ էր՝ զեմքի պայծառ արտահայտութեամբ։ Նրա վերին շուրթի վրա արդեն ու մաղեր էին բուսել, և ամբողջ զեմքն արտահայտում էր ուժ և խանդավառութիւն։ Նիկոլայը հյուրասրահ մտնելուն պես կարմրեց։ Նկատելի չէր, վոր ասելու բան էր փնտռում, բայց չէր գտնում։ Բորիսն, ընդհակառակը, անմիջապես գտավ և սկսեց հանդիստ, հանաքով պատմել, թե ինչպես այդ Միմի-տիկնիկին ճանաչում է զեւ ջահել աղջիկ յեղած ժամանակ, յերբ քիթը զեւ չէր փչացել, թե ինչպես հինգ տարվա մեջ տիկնիկը պառավել է և զանգը ճեղքվել և ամբողջապես։ Այս ասելով՝ Նատաշային նայեց։ Նատաշան յերեսը շրջեց, նայեց կրտսեր յեղբորը, վոր անքերը կուշ ածած՝ ցնցվում էր անձայն ծիծաղից, ու այլևս անկարող լինելով իրեն զսպել, ծուլ յեղավ ու փախավ սենյակից այնպիսի արագութեամբ, վորքան կարող էին ներել իր արագավազ վտտները։ Բորիսը չծիծաղեց։

— Դուք, կարծեմ, նույնպես ուղում էիք մեկնել, maman? Կուեթը պէտք է, — ասավ նա ժպտեւես, մորը դիմելով։

— Այո, զնա, կարգադրիր պատրաստեն, — ասավ մայրը ժպտալով։ Բորիսը դուրս յեկավ կամաց ու զնաց Նատաշայի յետեից։ Հաստիկ աղան բարկացած վաղեց նրա յետեից, կարծես զայրանալով իր զրազուհների մեջ տեղի ունեցած անկարգութեան վրա։

## XII

Յերիտասարդներից, չհաշվելով կոմսուհու մեծ աղջկան (վորը չորս տարով մեծ էր քրոջից և իրեն պահում էր արդեն վորդես մեծ) և հյուր-որիորդին, — հյուրասրահում մնացին Նիկոլայն ու

ազգականներն — Սոնյան։ Սոնյան բարալիկ, նուրբ, թխահեր աղջիկ էր՝ յերկար թարթիչներով ստվերավորված քնքուշ հայացքով, գլխի շուրջը յերկու անգամ պատ տված հաստ սև հյուսով, և յերեսի, մանավանդ մերկ նիհար, բայց հրապուրիչ մկանուտ թևերի ու պարանոցի զեղնավուն մորթով։ Շարժումների նազելիս լիթամբ, մանր անդամների նրբություններն ու ճկունություններն և փառք ինչ խորամանկ ու զուսպ ձևերով նա հիշեցնում էր գեղեցիկ, բայց տակավին չկազմակերպված կատվիկ, վոր հիանալի կատու դառնալու ապագա յե խոտանում։ Նա ըստ յերեսոյթին պատշաճավոր էր համարում ժպիտով մասնակցել ընդհանուր զրույցին, բայց՝ հակասակ կամքի, նրա աչքերը յերկար, խիտ թարթիչների տակից բանակ մեկնող cousin-ին նայում էին կուսական այնպիսի բուռն հափշտակությամբ, վոր նրա ժպիտը վայրկյան անգամ չէր կարող խարել վոչ վոքի, և յերեսում էր, վոր կատվիկը նստել և միայն նրա համար, վորպեսզի ել ավելի յեռանդով ցատկի ու խաղա իր cousin-ի հետ, հենց վոր իրենք էլ, Բորիսի ու Նատաշայի նման, դուրս կղան հյուրասրահից։

— Այո, ma chère, — ասավ ձեր կոմսը՝ դառնալով հյուրին, իր Նիկոլային ցույց տալով։ — Նրա բարեկամ Բորիսն ահա աղա յե դարձել, և Նիկոլայն իբրև ընկեր չի ուղուս յետ մնալ նրանից. թողնում և թե համալսարանը, թե ինձ՝ ձերունուս. զնում և զին՝ վորական ծառայության, ma chère։ Իսկ նրա համար արխիվում արգեն պաշտոնը պատրաստ էր, և այլն։ Ահա ինչ բան և բարեկամս թյունը, — ասավ կոմսը հարցականորեն։

— Բայց չե վոր պատերազմն, ասում են, հայտարարված է, — ասավ հյուրը։

— Վաղուց են ասում, — ասավ կոմսը։ — Դարձյալ կասեն, կասեն ու այդպես էլ կթողնեն։ Ma chère, այ բարեկամս թյունը, — կրկնեց նա։ — Նա մտնում և հուսարական գունդը։

Հյուրը չիմանալով ինչ ասել, գլուխն որորեց։

— Բոլորովին էլ բարեկամության համար չե, — պատասխանեց Նիկոլայը կարճերկով և կարծես ամթալի մի ամբաստանությունից պաշտպանվելով։ — Բոլորովին էլ բարեկամս թյուն չի, այլ պարզապես զինվորական ծառայության կոչում եմ զգում։

Նա նայեց քուղենին և հյուր-որիորդին. յերկուսն էլ նրան էլին նայում հավանություն ժպտով։

— Այսուր մեզ մոտ ճաշելու յե Շուրերտը, Պավլադրադյան հուսարական գնդի գնդապետը։ Նա արձակուրդով յեկել և Մոսկվա

և Նիկոլային տանում է հետը: Ի՞նչ արած, — ասով կոմսը, ուսերը թոթվելով և կատակի տալով մի բան, վորը, ըստ յերևույթին, նրան շատ վիշտ էր պատճառել:

— Յես արդեն ձեզ ասել եմ, հայրիկ, — ասով Նիկոլայը, — վոր յեթե չեք ուղում ինձ թողնել, կձեամ: Բայց գիտեմ, վոր վոչ մի բանի պիտանի չեմ, բացի զինվորական ծառայությունից. յես վոչ գիվանազեւ եմ, վոչ ել չինտֆեիկ. զգացածս չեմ կարող թաղցնել, — ասում էր նա ու շարունակ ջանել մարդու կոկետությամբ նայում Սոնյային ու հյուր-որիորդին:

Կատվիկը աչքերը նրան սեւեռած, թվում էր ամեն վայրկյան պատրաստ և խազալ և ցույց տալ իր կատվային ամբողջ բնավորությունը:

— Դե, դե, լավ, — ասով ծերունի կոմսը, — միշտ տաքանում եւ Բոլորին Բոնապարտն է խենթացրել. բոլորը մտածում են, թե այդ ինչպես նա տեղակալությունից (պորուչիկ) կայսր զարձափ: Եհ, աստված տա, — ավելացրեց նա, չնկատելով հյուրի հեղնական ժպիտը: Մեծերը խոսեցին Բոնապարտի մասին: Ժյուլին՝ Կարազինայի դուստրը, զարձափ յերիտասարդ Թոստովին:

— Ախոս, վոր հինգշաբթի որը չեյիք յեկել Արխարոֆների մոտ: Առանց ձեզ ձանձրանում եյի, — ասով նա քնքշորեն ժպտալով:

Շոյված յերիտասարդը՝ ջանելության կոկեւ ժպիտով ավելի մոտ նստեց նրան և առանձին զրույց սկսեց ժպտերես ժյուլիի հետ, չնկատելով բնավ, վոր իր ակամա ժպիտը խանդի դանակով կտրում էր կարմրատակած և առերես ժպտացող Սոնյայի սիրտը: — Քոսակցության կիսին Նիկոլայը նրան նայեց: Սոնյան բռնեւ դայրույթով մի հայացք ձգեց նրա վրա և արցունքն աչքերում և շինծու ժպիտը շուրթերին հաղիվ պահելով, վեր կացավ ու դուրս յեկավ սենյակից: Նիկոլայի ամբողջ աշխույժը կորավ: Նա սպասեց խոսակցության առաջին ընդմիջումին և հուզված դեմքով դուրս յեկավ սենյակից՝ Սոնյային փնտռելու:

— Ինչպես բոլոր այս յերիտասարդների դպրոնիքները սպիտակ թւերով են կարված, — ասով Աննա Միխայլովնան, ցույց տալով դուրս յեկող Նիկոլային: — Cousinage dangereux voisinage<sup>1</sup>, — ավելացրեց նա:

— Այո, — ասով կոմսուհին նրանից հետո, յերբ արեւի ճառագայթը, վոր յերիտասարդ սերնդի հետ միաժամանակ հյուրասրահ էր մտել, չբացավ, և կարծես պատասխանելով մի հարցի, վոր վոչ

<sup>1</sup> Վտանգավոր բռն ե — քուզինը:

վոր իրեն չէր տվել, բայց վորը սակայն միշտ զրազեցնում էր իրեն:—Վորքան տանջանք, վորքան անհանդստութիւն ենք կրել, վորպէսզի այժմ ուրախանանք զրանցով: Իսկ հիմա ել, ճիշտն ասած, տվելի յերկյառ դ ենք զգում, քան ուրախութիւն: Միշտ վախեցնում ես, շարունակ վախենում ես: Հենց այն տարիքումն են, յերբ վտանգներն այնքան շատ են թէ ազջիկների և թէ ազաների համար:

— Ամեն ինչ դատարարականութիւնից և կախում,—ասով հուրը:

— Այո, դուք իրավացի յեր, — շարունակեց կոմսուհին:— Յես մինչեւ այժմ, վրանց ասածս, յեղել եմ զավակներին բարեկամը և վախկում եմ նրանց լիակատար վստահութիւնը, — ասով կոմսուհին, կրկնելով շատ մտողներին այն մտորութիւնը, վոր կարծում են, թէ զավակները զազանիք չունեն իրենցից:— Դիտեմ, վոր յես միշտ ազջիկներին ասովին *confidente*<sup>1</sup> կլինեմ, և վոր Նիկոլենկան, իր կրակաւ բնավորությամբ, յեթե շարութիւններ ել անի (ազան տանց զրան՝ չի լինի), այնպես չի անի, ինչպես Պետերբուրգի այդ պարոնները:

— Այո, հիանալի, հիանալի յերեկոսներ են,— հաստատեց կոմսը, իրեն համար խճճված հարցերը միշտ լուծելով նրանով, վոր ամեն ինչ դառնում էր հիանալի:— Ահա վասիկ, ուղեց հուսար դառնալ: Ել ինչ էք ուզում, *ma chère!*

— Ինչ սքանչելի եակ ե ձեր կրտսեր ազջիկը,—ասով հուրը:— Կրակի կտոր ե:

— Այո կրակի կտոր, — ասով կոմսը:— Ինչ ե քաշել, Յեմ ինչ ձայն ունի. թեև ազջիկս ե, բայց ճիշտը կասեմ, յերգչուհի յե դառնալու: Մի նոր Սալամոնի Բաալացի վարձեցինք, վոր սովորեցնի:

— Արդոք ճշտ չի: Ասում են՝ այդ հասակում սովորելը ձայնի համար վտանգավոր ե:

— Ո՛ր, վա՛, ինչու յե շուտ, — ասով կոմսը:— Հապա թնչպես եյին մեր մայրերը տասերկու տասերեք տարեկան հասակում ամուսնանում:

— Նա հենց հիմա յե սիրահարված և Բորիսի վրա: Ինչպես էք հավանում, — ասով կոմսուհին, հանդարտ ժպտալով, Բորիսի մորը նայելով և, ըստ յերեւոյթին, իրեն շարունակ զրազեցնող մաքին պատասխանելով, ավելացրեց:— Այ, տեսնում եք, յեթե յես նախաշային խիտ պահելի, արդեւելի... ասոված դիտի, ինչէր կարող եյին անել նրանք ծածուկ (կոմսուհին մտածում էր, վոր

<sup>1</sup> Խորհրդակց-մտերիմը:



նրանք կհամբուրվեյին), բայց հիմա յես դիտեմ Նատաշայի յուրաքանչյուր խոսքը: Նա ինքը յերեկոյան կվազի և ամեն ինչ կպատմի ինձ: Յես, գուցե, յերես եմ տալիս նրան. բայց, ճիշտն ասած, դա, կարծես, ավելի լավ է: Մեծին յես խիտ եմ պահել:

— Այո, ինձ բոլորովին այլ կերպ են դաստիարակել, — ասավ մեծը, գեղեցիկ կոմսուհի Վերան, մպտավով:

Բայց մպտը չգեղեցկացրեց Վերայի գեմքը, ինչպես այդ սովորաբար լինում է. ընդհակառակը, նրա գեմքը անբնական տեսք ընդունեց և դրանից տհաճ դարձավ: Մեծը՝ Վերան՝ լավն էր, խելացի, սքանչելի սովորում էր, լավ դաստիարակված էր, ձայնը դուրեկան էր. այն, ինչ ասավ, ճիշտ էր և տեղին. բայց, տարօրինակ բան, բոլորը՝ թե՛ հյուրը, թե՛ կոմսուհին, նրան նայեցին ու կարծես դարձացան, թե ինչու ասավ նա այդ խոսքերը, ու անհարմարություն զգացին:

— Անդրանիկ յերեխաներին կրթելիս միշտ խելքներին դռնն տալիս, ուղում են նրանց ինչ-վոր անսովոր բան դարձնել, — ասավ հյուրը:

— Մեղքս ինչ Թաքցնեմ, ma chère. Կոմսուհին այդպես և յեղել Վերայի հետ, — ասավ կոմսը: — Յեվ ինչ. պնդումենալով հիանալի աղջիկ դարձավ, — ավելացրեց նա, խրախուսանքով աչքով անելով Վերային:

Հյուրերը վեր կացան ու մեկնեցին, խոստանալով ճաշին դալ:

— Սա ինչ բան է: Նստեցին ու նստեցին, — ասավ կոմսուհին՝ հյուրերին ճանապարհելուց հետո:

### XIII

Յերբ Նատաշան զուրս յեկավ հյուրասրահից, նա վազեց մինչև ծաղկատնայակը միայն: Այդ սենյակում նա կանգ առավ, ականջ դնելով հյուրասրահի դուռըին և սպասելով Բորիսի զուրս դալուն: Անհամբերություն էր զգում արդեն ու, վստով հատակը գոփելով, քիչ էր մնում արտասվեր, վոր նա անմիջապես չհետևեց իրեն, յերբ լավեց յերիտասարդի վոչ հանդարտ, վոչ ել արագ, բայց վայելուչ քայլերի ձայնը: Նատաշան խկույն նետվեց ծաղկի թաղարների արանքն ու թաքնվեց:

Բորիսը կանգնեց սենյակի մեջտեղը, շուրջը նայեց, թափ տվեց մունդիրի վրա յեղած փոշին և, հայելուն մոտենալով, դիտեց իր սիրուն գեմքը: Նատաշան, շունչը պահած, նայում էր իր թաղատոցից, սպասելով, թե Բորիսն ինչ և անելու: Նա մի առ ժամանակ կանգնեց հայելու առաջ, մպտաց ու զնաց գեպի յեղքի դուռը: Նատաշան ուղեց ձայն տալ, բայց փոշմանեց. «Թող փնտրի», ասավ

ինքն իրեն, Հենց զոր Բորիսը զուրս յեկավ, մյուս դռնից ներս մտավ կառ-կարմիր կտրած Սոնյան՝ արտասվելով ու պայրացած ինչ-զոր բան շնչաց: Նատաշան քիչ մնաց վաղի նրա մոտ, բայց զսպեց իրեն, ու մնաց իր թաղասոցում, ինչպես հեքիաթի անհրեառ յթացող գլխարկի տակ, դիտելով, թե ինչ է կատարվում շուրջը: Նա մի նոր, անանձին հաճույք եր զգում: Սոնյան շընջում եր ինչ-զոր ու նայում զեպի հյուրասրահի դուռը: Դուռը բացվեց և ներս մտավ Նիկոլայը:

— Սոնյա, Ի՞նչ և պատահել քեզ: Այդպես կանեն, — ասավ Նիկոլայը, նրա մոտ վաղեկով:

— Վաչինչ, վոչինչ, թողեք ինձ: — Սոնյան հեկեկաց:

— Վաչ, յես դիտեմ պատճառը:

— Յեթե դիտեք՝ ավելի լավ: Դնացեք նրա մոտ:

— Սոսնյա: Մի խոսք միայն: Ինչ՞ա յես տանջում ինձ ու քեզ ինչ-զոր յերևակայած բանի համար, — ասավ Նիկոլայը, նրա ձեռք բռնելով:

Սոնյան ձեռք չխեղեց նրանից և լացը զաղարեցրեց:

Նատաշան, անշարժ ու շունչը պահած, փայլուն աչքերով նայում եր իր թաղասոցից: ՔՀիմա ի՞նչ և լինելու, մտածում եր նա:

— Սոնյա: Ամբողջ աշխարհը ինձ համար վոչինչ և: Դու մե-նակ տմեն ինչ ևս ինձ համար, — ասում եր Նիկոլայը: — Յես կապացուցեմ այդ:

— Ձեմ սիրում, յերբ այդպես ևս խոսում:

— Դե, ել չեմ խոսի, զե, ների, Սոնյա: — Նիկոլայը նրան քաշեց զեպի իրեն ու համբուրեց:

«Ա՛հ, ի՞նչ լավ եք, մտածեց Նատաշան, և յերբ Սոնյան ու Նիկոլայը զուրս յեկան սենյակից, նա զնաց նրանց յետևից ու Բորիսին կանչեց իր մոտ:

— Բորիս, յեկեք այստեղ, — ասավ նա խորհրդավոր, խորամանկ տեսքով: — Յես քեզ մի բան պիտի տեսմ: Այստեղ, այստեղ արի: — ասավ նա, Բորիսին տանելով ծաղկի թաղարների արանքը, ուր ինքը թաղնվել եր: Բորիսը, ժպտն յերեսին, հետևում եր նրան:

— Այդ ի՞նչ բան և, — հարցրեց նա:

Նատաշան շփոթվեց, շուրջը նայեց և, տեսնելով ծաղկամանի վրա բնկած տիկնիկը, վերցրեց այն:

— Համբուրի տիկնիկին, — ասավ նա:

Բորիսն ուշադիր, սիրալիբ նայեց նրա աշխուժացած դեմքին ու վոչինչ չպատասխանեց:

— Ձեք ուղում: Դե, յեկեք այստեղ, — ասավ նա, ավելի խորա-նալով ծաղիկների մեջ ու տիկնիկը նետեց: — Մնա յեկեք, ավելի:

մտաւ, — շէնջաց նա, ու ձեռներով բռնեց սպայի թևածալքը: Նատաշայի շիկնած դեմքն արտահայտում եր հանդիսավորություն ու յերկրուզ:

— Իսկ ինձ կուզե՞ք համբուրել, — շէնջաց նա հաղիվ լսելի ձայնով, հոնքերի տակից նրան նայելով, ժպտալով և հուզումից, արցունքները հաղիվ զսպելով:

Բորիսը կարմրեց:

— Ի՜նչ ծիծաղելի յեք, — ասավ նա, դեպի Նատաշան թեքվելով, եւ ավելի կարմրելով, բայց վռչինչ ձեռներ կելով ու սպասելով:

Նատաշան հանկարծ թրափ-կանգնեց փայտե ծաղկամանի վրայ, այնպես վոր բարձրացավ Բորիսից, յերկու ձեռով զրկեց նրան, այնպես վոր մերկ բազուկները միացան նրա պարանոցից վերև ու, գլխի շարժումով մաղերը յետ գցելով, համբուրեց ուղղակի նրա շուրթերը:

Նա ծաղկամանների արանքով անցավ ծաղիկների մյուս կողմը և, գլուխն իջեցնելով, կանգ առավ:

— Նատաշա, — ասավ Բորիսը, — դուք դիտեք, վոր ձեզ սիրում եմ, բայց...

— Դուք սիրահարված եք ինձ վրա, — ընդհատեց Նատաշան:

— Այո, սիրահարված եմ, բայց, խնդրեմ, եւ չանկնք այն, ինչ այժմ... Դեռ մի շորս տարի յեւ... Այն ժամանակ յես խնդրելու յեմ քո ձեռը:

Նատաշան մտածեց:

— Տասերեք, տասշորս, տասնուհինգ, տասնվեց... — ասավ նա բարակ մատների վրա հաշվելով: — Կա՛մ: Ուրեմն վերջացած ե:

Յե՛վ ուրախության ու հանդստության ժպիտը լուսավորեց նրա աշխուժացած դեմքը:

— Վերջացած ե, — ասավ Բորիսը:

— Ընդամիշտ, — ասավ Նատաշան: — Մինչև մահ:

Յե՛վ, Բորիսին թևանցուկ անելով, յերջանիկ դեմքով ու հանդարտ քայլերով նրա հետ միասին գնաց բաղձոցարան:

#### XIV

Կոմսուհին այնպես եր հոգնել այցելություններից, վոր կարգադրել եր այլևս վռչ-վռքի չընդունել, և բարապանին հրամայել եր, վոր այսուհետև բոլոր նոր յեկողներին ճաշի հրավիրի: Կոմսուհին ցանկանում եր մեն-մենակ խոսել իր մանկության ընկերուհի՝ Իլյաանուհի Աննա Միխայլովնայի հետ, վորովհետև Պետերբուրգից գալուց հետո, դեռ կարգին չեւ տեսնվել հետը: Աննա

Միխայիլման, իր լացակամած ու դուրեկան դեմքով, ավելի մոտ քաշվեց կոմսուհու բազկաթոռին:

— Քեզ հետ բախրումի՞ն անկեղծ պիտի լինեմ, — ասավ Աննա Միխայիլման: — Մեր՝ հին բարեկամներու թիվը պակասել և արդեն: Գրանից և, վոր այնպես դժնահատու՞մ եմ քո բարեկամութեանը:

Աննա Միխայիլման նայեց Վերային ու լռեց: Կոմսուհին սեղմեց իր բարեկամուհու ձեռք:

— Վերա, — ասավ կոմսուհին, դիմելով մեծ աղջկան, վորին, ըստ յերևույթին, չէր սիրում: — Ի՞նչպես և վոր դու վոչ մի բան չես հասկանում: Միթե չես զգում, վոր այստեղ ավելորդ ես: Դնա քույրերիդ մօտ, կամ...

Մերուն Վերան արհամարհանքով ժպտաց, ըստ յերևույթին, վոչ մի վերափորանք չզգալով:

— Յեթե շուտ ասեյիր, մայրիկ, յես իսկույն կհեռանայի, — ասավ նա, ու զնայ իր սենյակը:

Բայց, բազմադարանի մօտով անցնելիս, նկատեց, վոր այնտեղ՝ յերկու պատուհանների մօտ, սիմետրիկ կերպով նստած են յերկու դուչդեր: Նա կանգ առավ և արհամարհանքով ժպտաց: Սոնյան նստել էր Նիկոլայի կողքին, վորը նրա համար արտադրու՞մ էր իր՝ առաջին անգամ հեղինակած վոտանափորը: Բարիսն ու Նատաշան նստած էին մյուս լուսամուտի առաջ ու լռեցին, յերբ Վերան ներս մտավ: Սոնյան ու Նատաշան մեղաւար ու յերջանիկ դեմքերով նայեցին Վերային:

Այդ սիրահարված աղջիկներին նայելը զվարճալի ու հուզիչ էր, բայց նրանց տեսնել, ըստ յերևույթին, ակտրժեկի զգացմունք չհարուցեց Վերայի սրտում:

— Քանի՞ անգամ ձեզ խնդրել եմ, — ասավ նա, — իմ իրերին ձեռք չտաք, դուք ձեր սենյակն ունեք:

Յեվ նա թանաքամանն առավ Նիկոլայի ձեռից:

— Իսկույն, իսկույն, — ասավ Նիկոլայը դրիչը թաթախելով:

— Դուք վոչ մի բան իր ժամանակին չեք անում, — ասավ Վերան: — Այնպես վազելով հյուրասենյակ մտաք, վոր ուրիշներն ամաչեցին ձեր փոխարեն:

Չնայելով վոր, կամ հենց այն պատճառով, վոր նրա նկատողութեանը միանգամայն իրավացի չէր, վոչ-վոք նրան չպատասխանեց, և չսրբ միասին իրար նայեցին: Վերան դեռ դանդաղում էր սենյակում, թանաքամանը ձեռին:

— Յեվ ի՞նչ դադոնիքներ կարող են լինել ձեր տարիքում Նատաշայի ու Բորիսի և ձեր միջև, — միայն հիմարութեանն էր:

— Ե, քո ինչ բանն է, Վերա, — կամացուկ, պաշտպանողական ձայնով խոսեց Նատաշան:

Նա այսոր, ըստ յերևույթին, սովորականից ավելի սիրալիր ու բարի յեր դեպի ամենքը:

— Շատ մեծ հիմարություն, — ասավ Վերան, — ամաչում եմ մեր փոխարեն: Ինչ գաղտնիքներ են դրանք...

— Ամեն մարդ իր գաղտնիքն ունի: Մենք քեզ ու Բերդին չենք զիպչում, — ասավ Նատաշան տաքանալով:

— Յես կարծում եմ՝ չեք զիպչում, — ասավ Վերան, — վորովհետև վարձուներքիս մեջ յերբեք վոչ մի վատ բան չի կարող լինել: Այ, յես ել, մայրիկին կասեմ, թե դու ինչպես ես վարվում Բորիսի հետ:

— Նատալիա Իլինիչնան շատ լավ է վարվում ինձ հետ, — ասավ Բորիսը: — Գանգատվելու առիթ չունեմ, — ավելացրեց նա:

— Թողեք, Բորիս, դուք այնպիսի զիվանադետն եք (գիլամազեք բառը շատ գործածական էր յերեխաների մեջ այն առանձին նշանակությամբ, վոր նրանք եյին տալիս այդ բառին). նույնիսկ ձանձրալի յե, — ասավ Նատաշան վիրավորված, դողացող ձայնով: — Սա ինչ է կպել ինձանից: Դու այդ յերբեք չես հասկանա, — ասավ նա, Վերային դիմելով, — վորովհետև դու յերբեք վոչ մեկին չես սիրել: Դու սիրտ չունես, դու միայն madame de Genlis<sup>1</sup> ես (այս կոչումը, վոր համարվում էր վիրավորական, Նիկոլայն էր տվել Վերային), և քո սիրած զվարճությունն այն է, վոր ուրիշներին անախարժություն պատճառես: Դու ինչքան ուզում ես կոկետություն արա Բերդի հետ, — ավելացրեց նա արագ-արագ:

— Բայց և այնպես՝ յես հյուերերի առաջ չեմ վազվզի յերկտասարդի յետևից...

— Ե, ուղածդ արիր, — խոսակցությանը միջամտեց Նիկոլայը, — անախարժություններ ասիր բոլորին, տրամադրությունները փչացրիր: Գնանք մանկանոց:

Ու չորսն ել, ինչպես տեղից թոցրած թռչունների յերամ, վեր կացան ու դուրս յեկան սենյակից:

— Անախորժություններն ինձ ասին, իսկ յես վոչ-վոքի, — ասավ Վերան:

— Madame de Genlis! Madame de Genlis! կանչեցին ձիադող ձայները դռան յետևից:

Սիրուն Վերան, վոր բոլորի վրա այդպես գրգռիչ, անախորժ ազդեցություն էր անում, ժպտաց և, ըստ յերևույթին, իրեն աս-

<sup>1</sup> Մագամ դե-ժանլիս:

ված խոսքերից չզղացվելով՝ մոտեցավ հայելուն և ուղղեց շարձն ու մազերը: Նայելով իր զնդեցիկ դեմքին՝ նա կարծես դարձավ ավելի սառն ու հանդիսաւ:

Հյուրասրահում խոսակցութիւնը շարունակվում էր:

— Ah! chère, — ասում էր կամուռնին, — մեր կյանքում ել tout n'est pas rose. Միթէ չեմ տեսնում, վոր du train, que nous allons<sup>1</sup>, մեր կարողութիւնը մեզ յերկար չի բավականացնելու: Ուրախ եմ պատահող այդ ակումբն և և կոմսի բարեխառնութիւնը: Դյուզում ապրելիս ել՝ միթէ հանգստանում ենք: Ներկայացումներ, վորսորդութիւն և, աստիճան դիտի, ել ինչ: Իմ մասին խոսելն ել ավելորդ է: Ե, ինչպէս դու այդ բոլորը գլուխ բերիր: Յես հաճախ դարձանում եմ վրադ. Annette, թէ այդ ինչպէս դու, քո այդ տարիքում, մեն-մենակ՝ սայլակում նստած, վազում ես մեկ Մոսկովա, մեկ Պետերբուրգ, դիմում բոլոր միներստըներին, բոլոր մեծամեծներին: Բոլորի հետ կարողանում ես վարվել, դարձանում եմ: Ե, այդ ինչպէս հաջողվեց: Այ յես այդ բանը չեմ կարող անել:

— Ախ, հոգիս, — պատասխանեց իշխանուհի Աննա Միխայլովնան: — Աստիճան չանի, վոր տեսնես, թէ վորքան դժվար է այրի մնալ՝ տանց նեցակի ու մի վորդու հետ, վորին սիրում ես պաշտելու: Հափ: Բայց ամեն բանի ընտելանում ես, — ավելացրեց նա փոքր ինչ հպարտությամբ: Իմ դասն ինձ սովորեցրեց: Յեթե պետք եմ ունենում այդ աուղերից վորեւէ մեկին տեսնելու, գրում եմ. «princesse une telle»<sup>2</sup> ցանկանում և տեսնել այս ինչին, և կտք նստած դնում եմ յերկու, յերեք, թեկուզ չորս անգամ, այնքան, մինչեւ վոր ուզածս ձեռք եմ բերում: Ինձ համար միևնույն է, ինչ կազին թող մտածեն իմ մասին:

— Ե, ինչպէս արիր, թւի խնդրեցիր Բոբենկայի համար, — հարցրեց կամուռնին: — Այ քանն արդեն դժարդիայի սպա յե, իսկ Նիկոլաւիան դնում և վորպէս յունկել: Մեկը չկա, վոր նրա մասին հոգա: Դու թւի խնդրեցիր:

— Իշխան Վասիլին: Նա շատ սիրալիւր գտնվեց: Անմիջապէս ամեն բանի համաձայնեց, դիմեց թողալորին, — ասավ իշխանուհի Աննա Միխայլովնան հիացած, միանգամայն մոռանալով իր նպատակին հասնելու համար կրած բոլոր ստորացումները:

— Ինչպէս է, ծերացել և իշխան Վասիլին, — հարցրեց կամուռնին, — նրան չեմ տեսել Ռուսականների մոտ ունեցած մեր

<sup>1</sup> Ամեն ինչ վարդազույն չի: — Մեր ապրելակերպով:

<sup>2</sup> Իշխանուհի այս ինչը:

ներկայացումներին հետո: Յեզ կարծում եմ, ինձ մոռացած կլինի, Il me faisait la cour<sup>1</sup>, — հիշեց կոմսուհին ժպտալով:

— Նույնն ե, — պատասխանեց Աննա Միխայլովնան, — սիրալիր, պատրաստակամ: Les grandeurs ne lui ont pas tourné la tête du tout<sup>2</sup>. Շատվում եմ, վոր շահագրանց քիչ բան կարող եմ անել ձեզ համար, սիրելի իշխանուհի, — ասում ե ինձ, — հրամայեցե՞ք: Վաշ, նա հիանալի մարդ ե և հարազատ: Բայց դու, Nathalia, դիտես վորքան եմ սիրում վորդուս: Ձգիտեմ, ինչ ասես չեյի անի նրա յերջանկության համար: Իսկ իմ հանգամանքներն այնքան վատ են, — շարունակեց Աննա Միխայլովնան տխրությամբ ու ձայնն իջեցնելով, — այնքան վատ են, վոր հիմա յես սարսափելի դրության մեջ եմ: Իմ դժբախտ դատը ունեցածս ամբողջովին կլանում ե ու առաջ չի դնում: Յես, կարող ես յերևակայել, à la lettre<sup>3</sup> ասարկողակ անգամ չուենեմ, և չգիտեմ ինչով պիտի հագցնեմ Բորիսիս: — Նա թաշկինակը հանեց ու լաց յեղավ: — Ինձ հարկավոր ե հինգ-հարյուր ուսուրի, իսկ յես միայն մի քսանուհինդ ուսուրիանոց թղթադրամ ունեմ: Այսպիսի դրության մեջ եմ... Միակ հույսս հիմա կոմս Կիրիլ Վլադիմիրովիչ Բեզուխովն է: Յեթե նա շողնի իր սանիկին, — չե գոր նա Բորիսիս կնքահայրն ե, — և նրան ապրուստի վորևե զուամար չնշանակի, այն ժամանակ իմ բոլոր աշխատանքը ջուրը կընկնի, ել ինչով կարող եմ զղեստավորել նրան:

Կոմսուհին արտասովեց ու լուռ խորհում եր ինչ-վոր:

— Հաճախ մտածում եմ, գուցե ե մեղք եմ գործում, — ասավ իշխանուհին, — բայց հաճախ մտածում եմ, թե ահա կոմս Կիրիլ Վլադիմիրովիչ Բեզուխովն ապրում ե մենակ... այդ ահադին կարողությունը... և թնչու համար ե ապրում: Կյանքը նրա համար բն ե, իսկ Բորիան նոր միայն սկսում ե ապրել:

— Նա, հավանորեն մի վերևե բան կթողնի Բորիսին, — ասավ կոմսուհին:

— Աստված գիտի, chère amie<sup>4</sup>: Այդ հարուստներն ու մեծամեծներն այնպիսի յեսապաշտ մարդիկ են: Բայց յես այնուամենայնիվ հենց հիմա Բորիսիս հետ կերթամ և ամեն բան կասեմ պարզապես: Թող իմ մասին ինչ ուզում են մտածեն. ճիշտն ասած, ինձ համար միևնույն ե, քանի վոր վորդուս բախտը դրանից ե կախված: — Իշխանուհին վեր կացավ: — Հիմա ժամը յերկուսն ե, դուք ճաշում եք չորսին: Կհասնեմ:

<sup>1</sup> Նա դառնում եր իմ չուրջը:

<sup>2</sup> Բարձր գիշերը նրան չի հարբեցրել բնավ:

<sup>3</sup> Պարզապես:

<sup>4</sup> Սիրելի բարեկամ:



Յե՛վ պետերբուրգցի՝ ժամանակից ողորկել իմացող զործնական տիկնոջ՝ ձեռքով Աննա Միխայլովնան կանչել տվա՛վ վորդուն և նրա հետ միասին դուրս յեկա՛վ նախասենյակ։

— Մնաս բարով, հոգիս, — ասա՛վ նա կամուռնա՛ն, վորն ուղեկցում եր նրան մինչև դուռը, — հաջողությունն ցանկացիր ինձ, — ափեւացրեց նա շշուկով, վորդուց ծածուկ։

— Դուք կամա Կիրիլ Վլադիմիրովիչի մոտ եք գնում, ma chère, — ասա՛վ կամաք սեղանատնից նույնպես դուրս դալով։ — Յեթե նա լա՛վ է, Պիետին կանչեցեք մեզ մոտ ճաշի։ Չե՛ վոր նա մեզ մոտ յեղե՛լ է, յերեխաների հետ պարել։ Անպայման կանչեցեք, ma chère. Ե, տեսնենք, Տարասն ինչպես աչքի կընկնի այստր։ Ասում ե՛՝ կամ մուրփի մոտ այնպիսի ճաշ չի յեղե՛լ, ինչպիսին մերն է լինելու։

## XV

— Mon cher Boris<sup>1</sup>, — ասա՛վ իշխանուհի Աննա Միխայլովնան յերբ կամուռնի Ռուստովայի կանեթը (վորով գնում էյին) ծղնոտով ծածկված փողոցն անցնելով՝ մասա՛վ կամա Կիրիլ Վլադիմիրովիչ Բեզուխովի բնդարձակ բաղը։ — Mon cher Boris, — ասա՛վ մայրը, ձեռք հին վերաբեկուի տակից հանելով ու վորդու ձեռի վրա դնելով, — յեղիր սիրալիր, ուշադիր։ Կամա Կիրիլ Վլադիմիրովիչն այսուամենայնիվ կնքահայրդ է, և նրանից է կախված ապագա բախտդ։ Հիշիր այդ, mon cher, յեղիր բարեհամբույր, ինչպես զու կարողանում ես...

— Յեթե իմանայի, վոր դրանից մի բան կստացվի, բացի ստորացա՛մից... — պատասխանեց վորդին սառը։ — Բայց յես խոստացել եմ ձեզ և կանեմ այդ ձեզ համար։

Զնայած շքամուտքի մոտ կանգնած եր ու՛մ-վոր կառքը, բարապանը, նայելով մորն ու վորդուն (վորոնք, իրենց մասին հայտնել չկարգադրելով, ուղղակի, նիշերում զրված յերկշաբք արձանների արանքով, մասն ապակեշեն նախասենյակը) և նշանակալից զիտելով տիկնոջ հին վերաբեկուն, հարցրեց, թե ու՛մ են ուղում տեսնել — իշխանազուստրներին թե կամսին, — և իմանալով վոր կամսին, ասա՛վ, վոր նորին պայծառափայլությունը այստր ափելի վատ է և վո՛ւ-վոքի չի ընդունում։

— Մենք կարող ենք վերադառնալ, — ասա՛վ վորդին ֆրանսերեն։

— Mon ami<sup>2</sup>, — ասա՛վ մայրը աղերսաձայն, կրկին ձեռք վորդու ձեռին զիտցնելով, կարծես այդ շփումը կարող եր հանգստացնել նրան կամ հուզել։

<sup>1</sup> Իմ Թանկագին Բորիս

<sup>2</sup> Բարեկամս

Բորիսը լռեց և, առանց վերաբերուի հանելու, հարցականորեն մորը նայեց:

— Աղափնայկո, — մեղմ ձայնով ասավ Աննա Միխայլովնան, դիմելով բարապանին, — գիտեմ, վոր կոմս Կիրիլ Վլադիմիրովիչը լուրջ հիվանդ է... դրա համար ել յեկել եմ... յես աղքատկանն եմ... Յես նրան չեմ անհանգստացնի, աղափնայկո... Յես ուղղում եմ տեսնել միայն իշխան Վասիլի Սերգեևիչին. չե՞ վոր նա այստեղ է իջեվանել: Հայտնիր, խնդրեմ:

Բարապանը քաշեց վերևի դանդակի թելը և շուտ յեկավ:

— Իշխանուհի Դրոբեցկայան ուղղւմ է տեսնել իշխան Վասիլի Սերգեևիչին, — ձայն տվեց նա վերևից վաղող և աստիճաններից նայող յերկարաճիտ գուլպաներ, կոշիկներ և ֆոռակ հագած սպասավորին:

Իշխանուհին հարդարեց իր գունամուր մետաքսյա ղզեստի ծալքերը, նայեց պատի մեջ դրված վիճակկյան մեծ հայելուն և իր մաշված կոշիկներով առույգսրեն, աստիճանի գորգի վրայով, գնաց վեր:

— Mon cher, vous m'avez promis<sup>1</sup>, — կրկին դարձավ նա վորդուն, ձեռի հպումով ղգաստացնելով նրան:

Վորդին, աչքերը խոնարհելով, հանդիստ հետեց մորը:

Նրանք մտան դահլիճը, վորի դռներից մեկը տանում էր իշխան Վասիլիին հատկացված սենյակը:

Այն ժամանակ, յերբ մայր ու վորդի դահլիճի մեջտեղը հասան և ուղեցին իրենց մտնելուն պես տեղից վեր թռչող սպասավորից իմանալ ճանապարհը, դռներից մեկի բռնողյա կանթը պտտվեց, և իշխան Վասիլին<sup>2</sup> թավշյա կիսամուշտակով, կրծքին մի աստղաշքանշան, տնավարի, դուրս յեկավ, մի ղեղեցիկ սեահեր ազամարդու ուղեկցելով: Այդ մարդը Պետերբուրգի նշանավոր բժիշկ Lorrain-ն էր:

— C'est donc positif?<sup>3</sup> — հարցրեց իշխանը:

— Mon prince, «errare humanum est», mais<sup>4</sup>, — պատասխանեց բժիշկը, լատիներեն խոսքերը ֆրանսական շեշտով արտասանելով:

— C'est bien, c'est bien...<sup>4</sup>

Նկատելով Աննա Միխայլովնային իր վորդու հետ, իշխան Վասիլին գլխի խոնարհումով ճանապարհ դրավ բժիշկին և անխոս, բայց հարցական տեսքով, մոտեցավ նրանց: Բորիսը նկատեց, թե

<sup>1</sup> Միտելիս, դուք խոստացել եք:

<sup>2</sup> Ուրեմն այդ ճիշտ է:

<sup>3</sup> Իշխան, մարդը սխալական է:

<sup>4</sup> Հապ, լավ:

ինչպէս հանկարծ խորին վիշտ արտահայտվեց մօր աչքերում, և թեթևակի մպտայ:

— Այո, ինչ տխուր հանգամանքներում ենք հանդիպում, իշխան... Եւ, ինչպէս և մեր թանկագին հիվանդը, — ասավ նա, կարծես չնկատելով իր վրա սեեռած սառը, վիրավորական հայացքը:

Իշխան Վասիլին հարցական, անգամ տարակուսանքով, նայեց նրան, ապա Բորիսին: Բորիսը գլուխը խոնարհեց հարգալիւր: Իշխան Վասիլին նրա բարեին չպատասխանելով, դարձավ Աննա Միխայլովնային և նրա հարցումին պատասխանեց գլխի ու շրթների շարժումով, վար նշանակում էր, թե հիվանդի դրուժյունը ծանր և:

— Միթե, — բացականչեց Աննա Միխայլովնան: — Ահ, այդ սարսափելի՛ չեւ Մտածելն անգամ սարսափելի չեւ... Սա վորդիս և, — ավելացրեց նա, Բորիսին ցույց տալով: — Ինքն անձամբ ուղեց շնորհակալություն հայտնել ձեզ:

Բորիսը նորից հարկալիւր գլուխ տվեց:

— Հա՛վատացեք, իշխան, վար մայրական սիրտը յերբեք չի մօտանա աչն, ինչ դուք արեք մեզ համար:

— Ուրախ եմ, վար կարողացա հանելի բան անել ձեզ համար, սիրելի Աննա Միխայլովնա, — ասավ իշխան Վասիլին, ուղղելով ժպտն (ածիքը) և ձայնի ու շարժումների մեջ, այստեղ Մսկովայում, իր հովանավորչաւ Աննա Միխայլովնայի առջև, արտահայտելով ավելի մեծ վեհություն, քան Պետերբուրգում՝ Annette Շերերի յերկույթին:

— Աշխատեցեք լավ ծառայել և արժանավար լինել, — ավելացրեց նա, խոստովյա՛մբ դիմելով Բորիսին: — Ուրախ եմ... դուք այստեղ արձակուրդի մեջ եք, — ասավ նա անտարբեր:

— Հրամանի չեմ սպասում, ձերդ պայծառփայլություն, վար մեկնեմ նախ նշանակված տեղս, — պատասխանեց Բորիսը, չարտահայտելով վաճ զժողովություն իշխանի խիստ վերաբերմունքի առթիւ, վաճ ևլ ցանկություն նրա հետ զրուցելու, բայց այնպէս հանդիստ ու հարգալիւր, վար իշխանը սեեռուն նրան նայեց:

— Դուք ձեր մայրիկի հետ եք ապրում:

— Յեւ ապրում եմ կամուհի Ռոստովայի մօտ, — ասավ Բորիսը, կրկին տվեալանելով: — ձերդ պայծառփայլություն:

— Դա այն Իլյա Ռոստովն և, վար ամուսնացաւ Nathalia Շինշլինայի հետ, — ասավ Աննա Միխայլովնան:

— Ծանաչում եմ, ճանաչում եմ, — ասավ իշխան Վասիլին իր մոնոտոն ձայնով: — Je n'ai jamais pu concevoir, comment Na-

thalie s'est décidée à épouser cet ours mal-laiché! Un personnage complètement stupide et ridicule. Et joueur à ce qu'on dit<sup>1</sup>.

— Mais très brave homme, mon prince<sup>2</sup>, — նկատեց Աննա Միխայլովնան, մորմոքուն ժպտով, կարծես նա ել գիտե՞ր՝ վոր կամ Ռոստովը արժանի չէր այդ դնահատականին, բայց խնդրում էր խղճալ թշվառ ծերունուն։ — Բժիշկներն ինչ են ասում, — հարցրեց իշխանուհին, փոքր ինչ լռելուց հետո և լացակուժած դեմքի վրա նորից մեծ վիշտ արտահայտելով։

— Բիչ հույս կա, — ասավ իշխանը։

— Իսկ յես այնպես կուղեյի մի անգամ ևս շնորհակալութուն հայտնել քեռուն ինձ և Բորիսին արած բարությունների համար։ C'est son filleil<sup>3</sup>, — ավելացրեց իշխանուհին այնպիսի յեղանակով, կարծես այդ տեղեկությունը չափազանց պետք է ուրախացներ իշխան Վասիլին։

Իշխան Վասիլին մտածմունքի մեջ ընկավ և զեմքը կնճռեց։ Աննա Միխայլովնան հասկացավ, վոր նա վախենում է հանձին իրեն ախոյան շահել կամ Բեզուխովի կտակի նկատմամբ, ուստի շտապեց իշխանին հանգստացնել։

— Յեթե չլիներ իմ անկեղծ սերն ու անձնվիրությունը զեպի քեռիս, — ասավ նա, տառնձին վստահությամբ ու անփութ շարտասանելով այդ խոսքերը, — յես գիտեմ նրա ազնիվ, շիտակ ընտելորությունը, բայց չե՞ վոր մոտը միայն իշխանազուստրներն են... Նրանք զեռ ջահել են... — նա գլուխը թեքեց և շշուկով ավելացրեց. — Կատարեց արդյոք իր վերջին պարտքը, իշխան։ Վորքան թանկագին են այդ վերջին ըսպենները։ Չե՞ վոր ավելի վատ զբություն չի կարող լինել. անհրաժեշտ է նախապատրաստել, յեթե զբությունն այդքան վատ է։ Մենք՝ կանայքս, իշխան, — նա մպտաց մեղմորեն, — լավ գիտենք, թե այդ բաներն ինչպես պիտի ապկեն։ Անհրաժեշտ է իրեն տեսնել։ Վորքան ել դա ծանր լինի ինձ համար, բայց յես արդեն սովորել եմ տանջվել։

Իշխանն, ըստ յերևույթին, հասկացավ նրան, հասկացավ նույնպես և այն, վոր Աննա Միխայլովնայից դժվար է ազատվել, ինչպես յեղավ Annette Շերերի յերեկոյ յթին։

<sup>1</sup> Յերեք չեմ կարողացել հասկանալ, թե ինչպես նույնպիսի վորոշեց ամուսնանալ այդ կեղտոտ արջի հետ։ Շատ հիմար է ժիծազելի անձնավորութուն և Բայց դրանից, ասում են, խաղամոլ է։

<sup>2</sup> Բայց բարձր մարդ է, իշխան։

<sup>3</sup> Սա նրա սանիկն է։

— Կարո՞ղ ես պատահել այդ տեսակցութիւնը ծանր լինի նրա համար, chère Աննա Միխայլովնա, — ասով նա: — Սպասենք մինչեւ յերկու. բժիշկները հղածամա՞ն են սպասում:

— Բայց այսպիսի բողոներին սպասել չի կարելի, իշխան: Pensez, il y va du salut de son âme... Ah! c'est terrible, les devoirs d'un chrétien...<sup>1</sup>

Ներսիս սենյակներից մեկի դուռը բացվեց եւ ներս մտավ կոմսի ազգական-իշխանադուստրներից մեկը, մոռալ, սառը դեմքով եւ վառ-ներին անհամապատասխան յերկար իրանով:

Իշխան Վասիլին շրջվեց դեպի նա:

— Հը, թնչպես ե:

— Դարձյալ նույնն եւ Եեզ ինչպես եք ուղու՞մ, վոր այս ազ-մուկը... — ասով իշխանադուստրը, նայելով Աննա Միխայլովնային, վորպես անծանոթի:

— Ah, chère, je ne vous reconnaissais pas<sup>2</sup>, — յերջանիկ ժպտով ասով Աննա Միխայլովնան, թեթեւ արագութեամբ կոմսի ազգակա-նուհուն մտանալով: — Je viens d'arriver et je suis à vous pour vous aider à soigner mon oncle. J'imagine, combien vous avez souffert<sup>3</sup>, — ավելացրեց նա աչքերը կարեկցարար փակելով:

Իշխանադուստրը վաշինչ չպատասխանեց, անգամ չժպտաց, ու անմիջապէս դուրս յեկավ: Աննա Միխայլովնան ձեռնոցները հանեց եւ հաղթականորեն բազկաթոս նստեց, հրավերելով իշխան Վասի-լին նստել իր կողքին:

— Բորիս, — ասով նա վորդուն եւ ժպտաց, — յես կանցնեմ կոմսի, քեռուս մոտ, իսկ դու առայժմ գնա Պիեռի մոտ mon ami, եւ չմտանառ հայտնել նրան Ռուսալիների հրավերը: Նրանք Պիեռին ճաշի յեն կանչում: Կարծում եմ՝ չի գնա, — զարձակ նա իշխանին:

— Ընդհակառակը, — ասով իշխանը, ըստ յերեւոյթին, արա-մադրութեամբ փառացած: — Je serais très content si vous me débarrassez de ce jeune homme...<sup>4</sup> Նստել ե այստեղ: Կոմսը վաշ մի անգամ չհարցրեց նրա մասին:

Նա ուսերը թոթվեց: Սպասավորը Բորիսին տարավ ցած, ապա մյուս սանդուղով վեր՝ Պիեռի՝ Պյոտր Կիրիլովիչի սենյակը:

<sup>1</sup> Մտածեցեք, խառը նրա հոգու փրկութեան մասին եւ Ան, սարսափելի յե այդ, քրիստոնյայի պարտականութեան:

<sup>2</sup> Ան, սիրելիս, չանաչեցի ձեզ:

<sup>3</sup> Հենց նոր յեկեմ ձեզ ողնելու՝ քեռուն խնամելու Երեսկայում եմ, վոր-բան եք տանջվել:

<sup>4</sup> Շատ ուրախ կլինեյի, յեթե ինձ ազատեյիք այդ յերիտասարդից:

## XVI

Պիեռն այնպես ել չկարողացավ Պետերբուրգում իր համար ասպարեզ ընտրել և, իրոք, իր անկարգութեան համար արտրովիլ ել Մոսկվա։ Այն, ինչ պատմում էյին Ռոստովներէ տանը՝ ճիշտ եր։ Պիեռը մասնակցել եր թագապետին արջի մեջքին կապելու գործին։ Նա յեկել եր մի քանի օր առաջ և իջնանել, ինչպես միշտ, հոր տանը։ Թեպետ յենթադրում եր, վոր իր պատմութիւնն արդեն հայտնի կլինի Մոսկվայում, և վոր, հորը շրջապատող կանայք, միշտ անբարյացակամ զեպի իրեն, կողտովեն այդ զեպքից, վոր պեսզի կոմսին գրգռեն իր դեմ, նա այնուամենայնիւ զալու օրն իսկ զնաց հոր հարկարածինը։ Մտնելով հոգւարարաճը, ուր սովորաբար լինում էյին իշխանադուստրները, նա բարեկց ձեռադործով ու ընթերցանութիւնով դրագված կանանց։ Նրանք յերեք հոգի էյին։ Մեծը՝ մաքրասեր, յերկար իրանով, խտտաղեմ աղջիկ եր, նա, վոր դուրս յեկավ Աննա Միխայլովնայի առաջ. զա կարդում եր. փոքրերը, յերկուսն ել կարմրաղեմ ու սիրուն, միմյանցից տարբերվում էյին միայն նրանով, վոր մեկի շրթան վրա խալ կար, վոր շատ զեղեցկացնում եր նրան. յերկուսն ել աշխատում էյին քարդյանի վրա։ Պիեռն ընդունեցին վորպես մեռելի կամ մանտախտափորի պես։ Մեծ իշխանադուստրն ընթերցումն ընդհատեց և անխոս նրան նայեց՝ վախեցած աչքերով. մյուսը, խալ ունեցողը, նույնպիսի արտահայտութիւն ավից զեմքին. կրտսերը՝ խալ ունեցողը, վոր ուրախ-խնդուն բնավորութեան տեր եր, կոացավ քարդյանի վրա, վորպեսզի ժպտը թաղցնի, վորն տուջանում եր, հափանորեն, տեղի ունենալիք տեսարանից, վորի զվարճալիութիւնը նախատեսում եր։ Նա թելը քաշեց ցած ու կոացավ, կարծես նախշերը ջեկելու, բայց ծիծաղը հաղիվ զապելով։

— Bonjour, ma cousine, — ասավ Պիեռը. — Vous ne me reconnaissez pas? <sup>1</sup>

— Յես ձեզ շատ լավ եմ ճանաչում, շատ լավ։

— Ինչպես և կոմսի առողջութիւնը։ Կարձի եմ իրեն տեսնել, — հարցրեց Պիեռը, ինչպես միշտ, անհամարձակ, բայց առանց շփոթվելու։

— Կոմսը տառապում և թէ ֆիզիկապես, թէ բարոյապես, և դուք, կարծեմ, առանձնապես հոգ եք տարել, վորպեսզի նրան վորքան կարելի յե, ավելի շատ բարոյական տանջանք պատճառեք։

— Կարձի եմ կոմսին տեսնել, — կրկնեց Պիեռը։

<sup>1</sup> Բարե, քուզին։ Ինչ չէք ճանաչում։

— Հը՛մ... Յեթե ուղում եք սպանել նրան, բոլորովին սպանել, կարծո՞ղ եք տեսնել: Ու՛րա, զնա մի տես քնոու բուլիոնը պատրաստ է, շատով ժամանակն է, — տալի նա, զրանով ցույց տա տալով Պիեռին, վա՛ր իրենք զբաղված են և զբաղված են նրա հորը հանդատացնելու գործով, այն ժամանակ, յերբ ինքն, ակնհայտորեն, զբաղված է միայն նրան հուզելով:

Ու՛րան դուրս զնաց: Պիեռը կանգնեց, նայեց քույրերին և, գլուխը խոնարհելով, տալի.

— Ուրեմն կերթամ սենյակու: Յերբ կարելի լինի՝ ինձ կասեք: Պիեռը դուրս յեկավ, և նրա յետեից լսվեց խալալոր քրոջ հնչուն, բայց վա՛չ բարձր ծիծաղը:

Մյուս սրբ յեկավ իշխան Վասիլին և տեղավորվեց կոմսի տանը: Նա Պիեռին կանչեց մոտն ու ասավ.

— Mon cher, si vous vous conduisez ici comme à Petersbourg, vous finirez très mal; c'est tout ce que je vous dis<sup>1</sup>. Կոմսը շատ ծանր հիվանդ է՝ կարիք չկա վոր իրեն տեսնես:

Այդ սրվանից Պիեռին չնյին անհանգստացնում, և նա ամբողջ սրն անց եր կացնում մենակ՝ վերևում՝ իր սենյակում:

Այն ժամանակ, յերբ Բարիսը մտավ նրա սենյակը, Պիեռը զնում-դալիս եր, յերբեմն անկուններում կանգ առնելով, ձեռի սպանանալից շարժումներ ուղղելով պատին, կարծես խոցում եր անտես թշնամուն, և, խառությամբ ակնոցների վերեից նայելով, նորից սկսում իր յերթեկը, անորոշ խոսքեր ասելով, ուսերը թոթվելով ու ձեռները տարածելով:

— L'Angleterre a vécu<sup>2</sup>, — խոսեց նա, հոնքերը կիտելով և ինչ-վոր մեկին մատնացույց անելով: — M. Pitt comme traître à la nation et au droit des gens est condamné à...<sup>3</sup> — Նա չկարողացավ վերջացնել Պիատի դատավճիռը, այդ բողոքին ինքն իրեն նապոլեոն յերեակայելով և իր հերոսի հետ միասին արդեն Պաղե-Կալեյի զժվար անցը կատարած ու Լոնդոնը զբաղած, — յերբ տեսավ իր սենյակը մանող ջահել, բարեկազմ գեղեցիկ սպային: Նա կանգ առավ: Պիեռը Բորիսին թողել եր տասնորս տարեկան հասակում և բոլորովին չեր հիշում նրան. բայց չնայած զրան, իրեն հատուկ արագ ու սրտարաց ձևով բռնեց յերխառասարդի ձևն ու ժպտաց բարեկամարար:

<sup>1</sup> Միբելիս, յեթե դուր տյտեղ ձեզ պիտի պահեք, ինչպես Պետերբուրգում, ձեր բունը շատ վատ կլինի, եւ ուրիշ առելիք չունենի:

<sup>2</sup> Անգլիայի բունը վերջացած է:

<sup>3</sup> Պիտը, վորպես ազգի և ժողովրդի իրավունքի դավաճան, դատապարտված է...



— Դուք հիշե՞մ եք ինձ, — հանդիստ, հաճելի ժպիտով ասավ Բորիսը։ — Մայրիկիս հետ յեկե՛լ եմ կոմսի մոտ, բայց նա, կարծեմ այնքան էլ առողջ չի։

— Այո, կարծյոք, հիվանդ է։ Նրան շարունակ անհանգստացնում են, — պատասխանեց Պիեռը, աշխատելով հիշել, թե ո՞վ է այս յերիտասարդը։

Բորիսն զգուժեմ եր, վոր Պիեռն իրեն չի ճանաչում, բայց հարկ չհամարեց իր անունը տալ և ամենափոքր շփոթություն իսկ չզգալով, ուղիղ նայում եր նրա աչքերին։

— Կոմս Ռոստովը խնդրել է այսոր դալ իր մոտ ձաշի, — ասավ նա Պիեռի համար բավական յերկար ու անհարմար լռությունից հետո։

— Ա՛հ, Կոմս Ռոստովը, — ուրախ բացականչեց Պիեռը։ — Դուք ուրե՞ջն նրա վորդի՞ն եք, Իլյան։ Յես, կարճե՞ք յերեակայել, առաջին բալետին չճանաչեցի ձեզ։ Հիշե՞մ եք, ինչպե՞ս Վորոբիևի գործի գնացի՞նք m-me Jacquot<sup>1</sup>-ի հետ... վաղուց է։

— Դուք սխալվում եք, — անշտապ, բայց համարձակ ու փոքր ինչ հեղձական ժպիտով ասավ Բորիսը։ — Յես Բորիսն եմ, խիստ նուհի Աննա Միխայլովնա Դուրեցկոյի վորդին։ Ռոստովի հոր անունը Իլյա յե, վորդունը՝ Նիկոլայ։ Յե՞վ յես վա՛ճի m-me Jacquot չեմ ճանաչե՛ր։

Պիեռը ձեռներն ու գլուխը թափահարեց, կարծես մոծակներ ու մեղուներ ելին թափվել վրան։

— Ա՛հ, այս ինչ բան եր, ամեն ինչ խառնեցի։ Մոսկվայում այնքան ազդակա՛ններ ունեմ վոր։ Դուք Բորիսն եք... այո։ Ա՛յ մենք իրար հասկացանք։ Ե, դուք ի՞նչ կարծիք ունեք Բուլո՛նյան արշավանքի մասին։ Անդլիացիների բանը վատ կլինի չէ, յեթե Նապոլեոնն անցնի ջրանցքը։ Յես կարծում եմ, վոր այդ արշավանքը շատ հնարավոր է։ Միայն թե Վիլնյովի անհող չգտնվի։

Բորիսը Բուլո՛նյան արշավանքի մասին վոչինչ չգիտեր, նա լրագրիներ չեր կարդում և Վիլնյովի մասին առաջին անգամն էր լսում։

— Մենք այստեղ Մոսկվայում զբաղված ենք ավելի ճաշկերույթներով ու բամբասանքներով, քան քաղաքականությամբ, — ասավ նա իր հանդիստ, հեղձական տոնով։ — Յես այդ մասին վոչինչ չգիտեմ և չեմ մտածում։ Մոսկվան ամեն բանից ավելի զբաղված է բամբասանքներով, — շարունակեց նա։ Այժմ էլ լռում եմ ձեր և կոմսի մասին։

Պիեռը ժպտաց իր բարե ժպիտով, վախենալով կարծես, խոսակցի համար, չլինի թե հանկարծ այնպիսի բան ասի, վոր հետո ստիպված

<sup>1</sup> Տիկին Ժակոյի։

լինի զգջալ: Սակայն Բորիսը խոստում էր պարզ, վորոշակի է նոր, նայելով ուղիղ Պիեռի աչքերին:

— Մտեցի՞մ եւ անելիք չունի, բայց բամբասանքը, — շարունակեց նա: — Բայցն դրողոված են նրանով, թե կոմսն իմ է թողնելու իր կարողութունը, թե կարող է պատահել, վոր նա մեզինից շատ ապրի, ինչ-վոր ցանկանում եմ ի սրտե...

— Այո, այդ բոլորը շատ ծանր է, — հարեց Պիեռը, — շատ ծանր է: — Պիեռը շարունակ ժախենում էր, թե չլինի հանկարծ այդ սպան ինքն իր համար անհարմար մի դրույց սկսի:

— Իսկ ձեզ պիտի թվա, — ասով Բորիսը, թեթեակի կարմրելով, բայց ձայնն ուղիղը չփոխելով, — ձեզ պիտի թվա, թե բոլորն դրողոված են միայն նրանով, վոր կոմսից վորեն բան ստանան:

«Այդպես էլ է, մտածեց Պիեռը:

— Իսկ յես հենց այդ եմ ուզում ասել ձեզ, թուրիմացութունից խուսափելու համար, վոր դուք շատ կախալվեք, յեթե ինձ է մորս համարեք այդ մարդկանցից: Մենք շատ աղքատ ենք, բայց յես, դեթ ինձ համար կարող եմ ասել, հենց այն պատճառով, վոր ձեր հայրը հարուստ է, յես ինձ չեմ համարում նրա ազգականը. ու թե յես, թե մայրս յերբեք վախճ չենք խնդրի է վախճ չենք ընդունի նրանից:

Պիեռը յերկար ժամանակ չէր կարողանում հասկանալ, բայց յերբ հասկացավ, բաղմոցից վեր թռավ, Բորիսի թեք բռնեց իրեն հատուկ արագութամբ է, Բորիսից ավելի կարմրելով, սկսեց խոսել ամսթի է դժկամության խառն զգացումով:

— Այ քեզ տարրերնակ բան: Միթե յես... է ով կարող է մտածել... Յես լավ գիտեմ...

Բայց Բորիսը կրկին ընդհատեց նրան:

— Ուրախ եմ, վոր ամեն ինչ ասի Դուք, ձեզ հաճելի չե, ներեցեք ինձ, — ասով նա, հանգստացնելով Պիեռին, փոխանակ վոր նա իրեն հանգստացնի, — բայց կարծում եմ, վոր ձեզ չվերաժողացի իմ սկզբունքն է ամեն ինչ ասել շիտակ... Հիմա ի՞նչ պատասխան տանեմ: Կգամ Թոստոֆների մոտ ճաշելու:

Յեվ Բորիսը, ըստ յերևույթին, ծանր պարտականութունից ազատվելով, ինքն անհարմար դրությունից դուրս գալով է ուրիշն նրա մեջ գնելով, նորից դարձավ հաճելի:

— Վաշ, լսեցեք, — ասով Պիեռը հանգստանալով: — Դուք զարմանալի մարդ եք: Այն, ինչ հիմա ասացիք, շատ լավ է, շատ լավ: Իհարկե, դուք ինձ չեք ճանաչում: Մենք վաղուց իրար չենք տեսել... դեռ յերեխա ժամանակից... Դուք իմ մասին կարող եք կար-

ծել... Յես ձեզ հասկանում եմ, շատ լավ եմ հասկանում: Յես այդ բանը չեյի անի, քաջություն չեյի ունենա, բայց այդ սքանչելի յե: Շատ ուրախ եմ ձեզ ծանոթանալուս համար: Տարբերակ ե, — ավելացրեց նա, լսելով ու ժպտալով, — թե ինչ մարդու տեղ եք դրել ինձ: — Նա ծիծաղեց: — Ե, ինչ արած: Ավելի լավ ծանոթանանք իրար: Խնդրեմ, — Նա սեղմեց Բորիսի ձեռը: — Գիտեք, յես դեռ վոչ մի անգամ չեմ յեղել կոմսի մոտ: Ինձ չի կանչել... Խըզճում եմ նրան, իրեւ մարդու... Բայց ինչ կարելի յի անել:

— Յեմ դուք կարծում եք, թե Նապոլեոնը կարճոյ ե նեղուցն անցնել, — հարցրեց Բորիսը ժպտալով:

Պիեռը հասկացավ, վոր Բորիսն ուզում ե խոսակցությունը փոխել, ե, նրա հետ համաձայնելով, սկսեց թվել Բուլոնյան արշավանքի ոգուտներն ու վնասները:

Հաքեյն յեկավ Բորիսին կանչելու մոր մոտ: Իշխանուհին մեկնում եր: Պիեռը խոստացավ զնալ ճաշի, վորպեսպի ավելի մտերմանա Բորիսի հետ. ամուր սեղմեց նրա ձեռը, ակնոցների միջով սիրալիր նրան նայելով... Նրա գնալուց հետո՝ Պիեռը դեռ յերկար շրջում եր սենյակում, այլևս աներեւոյթ թշնամուն չխոցելով, այլ ժպտում եր, հիշելով այդ համակրելի, խելացի ու հաստատակամ յերիտասարդին:

Ինչպես այդ պատահում ե յերիտասարդ հասակում ե մանավանդ միևնույն փրճակում դանվողներին, Պիեռն անբացատրելի խանդաղատանք զգաց դեպի այդ յերիտասարդը ե վորոշեց անպայման մտերմանալ նրան:

Իշխան Վասիլին ճանապարհ եր դնում իշխանուհուն: Իշխանուհին, թաշկինակն աչքերին, լալիս եր:

— Սարսափելի յե, սարսափելի, — ասում եր նա, — բայց ինչ ել լինի, յես իմ պարագը կկատարեմ, Կդամ այստեղ դիշերելու: Նրան այդպես չի կարելի թողնել: Սմեն վայրկյանը թանդ ե: Զեմ հասկանում, թե ինչո՞ւ իշխանազուտարները դանդաղում են: Գուցե, ստտված ողնի ինձ նրան նախապատրաստելու միջոց դանել... Adieu, mon prince, que le bon Dieu vous soutienne<sup>1</sup>...

— Adieu, ma bonne<sup>2</sup>, — պատասխանեց իշխան Վասիլին, արագ շրջվելով:

— Ախ, նա սարսափելի զրույթյան մեջ ե, — ասով մայրը վորդուն, յերբ նրանք նորից կառեթ եյին նստում: — Նա համարյա վոչ-վոքի չի ճանաչում:

<sup>1</sup> Մնաց բարով, իշխան, աստված ողնական:

<sup>2</sup> Գնաց բարով, սիրելիս:

— Յես չեմ հասկանում, մայրիկ, թե ի՞նչ վերաբերմունք ունի դեպի Գրեոր, — հարցրեց Բորիսը:

— Ամեն ինչ կպարզի կտակք, բաժեկամա՛ն. զրանից ե կախված ե մեր բախտը...

— Բայց ինչո՞ւ չեք կարծում, թե մի բան կթողնի մեզ:

— Ա՛հ, սիրելիս: Նա այնքան հարուստ ե, իսկ մենք այնքան աղքատ:

— Ա, դա դեռ բախտարար պատճառ չի, մայրիկ...

— Ա՛հ, աստված իմ, աստված իմ: Վարքան ծանր ե զրու-  
թյունը, — բացականչեց մայրը:

## XVII

Յերբ Աննա Միխայլովնան վարդու հետ դեպք կոմս Կիրիլ Վլադիմիրովիչ Բեդուխովի մոտ, կոմսուհի Ռոստովան յերկար նստած եր մենակ, թաշկինակն աչքերին զրած: Վերջապես, զանգը ավելց:

— Սա ի՞նչ բան ե, սիրելիս, — ասավ նա բարկացած սպասու-  
վոր աղջկան, վոր ասիպիկ եր մի քանի րոպե սպասել իրեն: —  
Ձեք ուզում ծառայել, ինչ ե Այդ դեպքում յես ձեզ համար տեղ  
կգտնեմ:

Կոմսուհին հուզված եր իր մանկության ընկերուհու վշտից ու ստորացուցիչ աղքատությունից ե այդ պատճառով վատ տրա-  
մադրության մեջ եր, վորն արտահայտում եր նա միշտ սպասու-  
հաւն «սիրելիս» ե «զուք» կոչելով:

— Ներողություն, — ասավ սպասուհին:

— Կոմսին կանչեցեք դա ինձ մոտ:

Կոմսը, յերեւալով ե, ինչպե՛ս միշտ, փոքր ինչ մեղավոր դեմ-  
քով կնոջը մտեցավ:

— Ե՛ր, կոմսուհիս: Ափսոսելից ի՞նչ sauté au madère<sup>1</sup> ե լինե-  
լու, ma chère! Համը տեսա: Իդուր ել չեր վոր Տարասին հազար  
ռուբլի ավի: Արժի:

Նա նստեց կնոջ մոտ, ձեռները ուրախ-ուրախ ծնկներին հե-  
նելով ե ճերմակ մաղերը խառնելով:

— Ի՞նչ կհրամայեք, կոմսուհիս:

— Անձ թե ինչ, բարեկամա՛ն. այս քնչ ե թափվել, — ասավ նա,  
ամուսնու միջևոք ցուլոք տալով: — Յերեկ, սոսե ե, — ավելացրեց  
կոմսուհին ժպտալով: — Այ ինչ, կոմս. ինձ փող ե հարկավոր:

Յեվ տիրությունը պատեց նրա դեմքը:

<sup>1</sup> Կերակուրի տեսակ:

— Ախ, կոմսուհիս...

Յեվ կոմսն իրար անցավ, զբամապնակը հանելով:

— Ինձ շատ ե հարկավոր, կոմս, ինձ հարկավոր ե հինգ հարյուր ոտւրի:

Յեվ նա բառիստե թաշկինակը հանելով, սրբեց ամուսնու միւկտը: — Իսկույն, իսկույն: Այ, թի կա այդտեղ, — կանչեց կոմսը այնպիսի ձայնով, վարով կանչում են այն մարդիկ միայն, վարոնք վատահ են, թե նա, վորին կանչում են, զլիսապատատ ներս ե վազելու: — Կանչեցեք Միտենկային:

Միտենկան, այն աղնվական տղան, վոր կըթվել եր կոմսի տանը ե այժմ վարում եր նրա տնտեսությունը, ներս մտավ հուշիկ քայլերով:

— Ահա ինչ, սիրելիս, — ասավ կոմսը ներս մտնող հարգալիկ յերխասարդին: — Բեր ինձ... — Նա մտածեց: — Այո, 700 ոտւրի, այո: Բայց տես անցյալ անդամվա պես պատուոված ու կեղտոտ չլինեն. լավերը բեր, կոմսուհու համար են:

— Այո, Միտենկա, խնդրեմ մաքուր լինեն, — ասավ կոմսուհին ծանր հառաչելով:

— Ձերդ պայծառափայլություն, յերբ կհրամայեք բերեմ, — ասավ Միտենկան: — Բարեհաճեցեք իմանալ, վոր... ասենք, բարեհաճեցեք չանհանդատանալ, — ավելացրեց նա, նկատելով, վոր կոմսն սկսում ե ծանր ու արագ շնչել, ինչ-վոր նշան եր բռնկվող դայրույթի: — Մոռացել եյի... Այս բոպելիս կհրամայեք բերեմ: — Այո, այո, բեր ե կոմսուհուն տուր:

— Վոսիկ տղա յե այդ Միտենկան, — ավելացրեց կոմսը մըպտալով, յերբ յերխասարդը դուրս գնաց: — Նրա համար անկարելի բան չկա: Յես վոր այդ տանել չեմ կարող: Ամեն բան կարելի յե:

— Ախ, փողը, կոմս, փողը. վորքան վիշտ կա աշխարհի յերեսին այդ փողի յերեսից, — ասավ կոմսուհին: — Իսկ այդ փողն ինձ շատ հարկավոր ե:

— Դուք, կոմսուհիս, հայտնի շոայլող եք, — ասավ կոմսը, ե, կնոջ ձեռը համբուրելով, նորից գնաց իր տաննանասնյակը:

Յերբ Աննա Միխայլովնան վերադարձավ Բեզուխովի մոտից, կոմսուհու մոտ, սեղանի վրա դրված եյին արդեն թղթադրամները՝ բոլորն ել նոր՝ ու թաշկինակով ծածկված, ե Աննա Միխայլովնան նկատեց, վոր կոմսուհին հուզված ե:

— Հը, թնչ կա, սիրելիս, — հարցրեց կոմսուհին:

— Ախ, ինչ սարսափելի դրության մեջ ե: Նրան ճանաչել չի կարելի, այնքան, այնքան վատ ե. յերկու բոպե մնացի, յերկու թոսք ել չկարողացա տեսլ...

— Annette, ի սեր ասածո, չմերժես, — ասով հանկարծ կոմսուհին, կարմրելով, վոր այնքան ոտարոտի յեր նրա վոչ ջահել, նիհար ու լուրջ դեմքի համար, և թաշկինակի տակից թղթադրամները վերցնելով:

Աննա Միխայլովնան անմիջապես հասկացավ ինչ կա, և կռացավ, վոր հարկավոր վայրկյանին ճարպկորեն զրկի կոմսուհուն:

— Անա իմ կողմից Բորիսին՝ համազգեստներ կարելու համար...

Աննա Միխայլովնան արդեն զրկել էր նրան ու լալիս եր: Կոմսուհին նույնպես լալիս եր: Լաց ելին լինում նրան համար, վոր համերաշխ են. և նրան համար, վոր բարի յեն. և նրան համար, վոր իրենք, մանկության բնկերներն զբաղված են այսպիսի ստոր բանով — փոզով. լաց ելին լինում և՛ նրա համար, վոր իրենց ջահելությանն անցել է... Յեվ յերկուսի արցունքներն ել հաճելի ելին իրենց...

## XVIII

Կոմսուհի Ռաստովան իր ազնիկների ու արդեն մեծ թվոզ հյուրերի հետ նստած եր հյուրասրահում: Կոմսը աղամարդ հյուրերին առաջնորդեց իր առանձնասենյակը, առաջարկելով իր տանկական ծխամորճների կոլեկցիան: Նա յերբեմն զուրս եր դալիս ու հարցնում՝ դեռ չի՞ յեկել: Սղասում ելին Մարյա Գմիարիենա Ախրսիմովային, վորը հասարակության մեջ հայտնի յեր՝ le terrible dragon<sup>1</sup> կաշումով, նշանավոր վոչ իր հարստությամբ, վոչ հրավերքներով, ալլ ուղղամտությամբ և պարզ վարվեցողությամբ: Մարյա Գմիարիենային ճանաչում եր թաղավորական զերդաստանը, ճանաչում եր ամբողջ Մոսկվան և ամբողջ Պետերբուրգը, և յերկու քաղաքն ել, զարմանալով նրա վրա, թաղուն ծիծաղում ելին նրա կոպտություն վրա, անեկզատներ ելին պատմում նրա մասին: Բայց և այնպես բոլորն ել, առանց բացառության, հարգում ելին նրան և վախենում ելին նրանից:

Միով լցված առանձնասենյակում խոսում ելին պատերազմի մասին, վոր հայտարարված եր հրավարտակով, և՛ զորահավաքի մասին: Հրովարտակը դեռ վոչ-վոչ չեր կարգացել, բայց բոլորն ել զիտեյին նրա հայտարարվելու մասին: Կոմսը նստել եր տանկական թախտի վրա, յերկու ծխոց ու խոսակցող հարևանների մեջտեղը: Նա ինքը վոչ ծխում եր և վոչ խոսում, բայց զուխը մերթ այս, մերթ այն կաղմը թեքելով, ակներե բավականությամբ նա-

<sup>1</sup> Սարսափելի զրազուն:

յուսմ եր ծխողներին և լսում իր յերկու հարևանի զրույցը, վորոնց ինքն եր հրահրել իրարու դեմ:

Խոսողներից մեկը քաղաքացի յեր՝ կնճռոտ, մաղձոտ և ամիլած նիհար դեմքով, մեկը, վոր արդեն հասակն առած եր, թեև հազնված, ինչպես ամենապճնասեր յերիտասարդը. նա ծալապատիկ նստել եր թախտի վրա՝ տանու մարդու պես և, սաթե ծխամորճը խոր դրած բերանի մի կողմը՝ աղահուլթամբ ներս եր քաշում ծուխը և աչքերը կկոցում: Դա տարիքն անցած ամուսին Ծինշինն եր, կոմսուհու հորեղբոր վորդին, մի չար կծու լեզու, ինչպես ասում եյին Մոսկվայի հավաքույթներում: Թվում եր նա առանձին զիջողություն և անում, վոր բարեհաճում և իշնել մինչև խոսակցի աստիճանը և խոսել նրա հետ: Մյուսը թարմ, կարմրադեմ, քվարդիական սպա եր՝ շատ մաքուր, լավ կոճկված ու սանրված, ծխամորճը պահել եր բերանի մեջտեղը և վարդապույն շրթերով թեթևակի ներս եր քաշում ծուխն ու ողակ-ողակ դուրս թողնում գեղեցիկ բերնից: Դա այդ տեղակալ Բերդն եր, Սեմյոնովյան զնդի սպան, վորի հետ Բորիսը մեկնելու յեր դունդ, և վորով նառաջան ծաղրեց Վերային, Բերդին անվանելով նրա փեսացու: Կոմսի նստել եր նրանց մեջտեղն ու լսում եր ուշադիր: Կոմսի ամենահաճելի զբաղմունքը, բոստոն խաղից հետո, վոր նա շատ եր սիրում, զրույց լսելն եր, մանավանդ յեթե հաջողվում եր նրան հրահրել շատախոս խոսակցիցներին:

— Ե, այդ ինչպես կլինի, օխպեր ջան, mon très honorable! Այ՛ֆոնս Կաուլիշ, — ասում եր Ծինշինը ծիծաղելով և միացնելով (զրա մեջ եր նրա խոսելու առանձնահատկությունը) ուսու ժողովրդական արտահայտությունները Ֆրանսական ընտիր Ֆրադնեթի հետ: — Vous comptez vous faire des rentes sur l'état<sup>1</sup>, և վաշտից ել ուղձւմ եք ոճանդակ յեկամուտ ստանալ:

— Կոշ, Պյոտր Նիկալայիշ, յես ուզում եմ ցույց տալ միայն, վոր հեծելազորի մեջ տղուսը շատ ավելի քիչ և, քան հետևակում: Այ հիմա պատկերացրեք, իմ դրությունը, Պյոտր Նիկալայիշ...

Բերդը խոսում եր միշտ վորոշ, հանդիստ ու քաղաքավարի: Նրա խոսակցությունը միշտ վերաբերում եր միայն իրեն. նա միշտ հանգստորեն լռում եր, յերբ խոսում եյին ուրիշ վորեկ, ուղղակի իրեն չվերաբերող բաների մասին: Յեւ այդպես կարող եր լսել մի քանի ժամ, անհարմարություն չզգալով և ուրիշներին վրա անհարմար տպավորություն չթողնելով: Բայց հենց վոր խո-

<sup>1</sup> Ամենահարգելի

<sup>2</sup> Դուք գանձարանից յեկամուտ ստանալու ակնկալություն ունեք:



սակցութեանը վերաբերում եր իրեն անձամբ՝ նա խոսում եր հանգամանքներն ու ակնհայտ բաժանականութեամբ:

— Պատկերացրեք իմ դրութեանը, Պատր Նիկալայիչ, յեթե հեծեալադորի մեջ լինելի, շորս ամիսը յերկու հարյուրից ավելի էնյի ստանալու, նույնիսկ տեղակալի աստիճանով. իսկ հիմա յես ստանում եմ յերկու հարյուր յերեսուն, — ասում եր նա ուրախ հաճելի ժպտաով, նայելով Շինշինին ու կոմսին, կարծես նրա համար պարզ եր, վոր իր հաջողութեանը միշտ ել կազմելու յե մնացած քոյրը մարդկանց ցանկութեանների գլխավոր նպատակը:

— Բայց դրանից, Պատր Նիկալայիչ, փոխադրվելով գլխադիւս, յես աչքի կընկնեմ, — շարունակեց Բերդը, — գլխադիւսի հետեակում արձակուրդներն ել շատ են: Հետո, ինքներդ դատեցեք, ինչպես կարող եմ յերկու հարյուր յերեսուն ուսրլով ապրել: Իսկ յես մի մասը յես եմ քցում ե մի բան ել շորս եմ ուզարկում, — շարունակեց նա ծխի մի ողակ արձակելով:

— La balance y est...<sup>1</sup> գերմանացին նեղն ա ընկել, comme dit le proverbe<sup>2</sup>, — ծխամորճը բերանի մյուս կողմը դնելով՝ ասավ Շինշինն ու աչքով արավ կոմսին:

Կոմսը ծիծաղեց բարձր: Մյուս հյուրերը, տեսնելով Շինշինը խոսակցութեան ե սկսել, մտեցան լսելու: Բերդը, շնկատելով շրջադասողների վոչ հեղանքը, վոչ անտարբերութեանը, շարունակում եր պատմել, թե ինչպես գլխադիւս փոխադրվելով, ինքը արգեն մի աստիճան ե շահել զորարանակի իր ընկերների հանդեպ, ինչպես պատերազմի ժամանակ վաշտապետին կարող են պատնել, ե ինքը, վաշտի մեջ ամենաավագը մնալով, կարող ե հեշտութեամբ վաշտապետ դառնալ, թե ինչպես գնդում քոյրը սիրում են իրեն, ե թե ինչպես հայրը դահ ե իրենից: Բերդն, այս բոլորը պատմելով, հրճվում եր ակներե, ե, կարծես մոռանում, վոր մշտաներն ել կարող են ունենալ իրենց շահերն ու ձգտումները: Բայց այն ամենը, ինչ պատմում եր, այնքան վայելուշ-շափափոր եր ե ֆանել յեստամութեան պարզամտութեանն այնքան ակներե, վոր նա գինաթափ եր անում իր ունեղիւղներին:

— Ե, ակայեք ֆան, դուք ե՛ հետեակում, ե՛ հեծեալադորում, ամեն տեղ ել ասաջ կերթաք. այդ յես գուշակում եմ ձեզ համար, — ասավ Շինշինը, Բերդի ուսին խփելով ու վտտները թախտից իջեցնելով:

Բերդն ուրախ ժպտաց: Կոմսը, ե նրա հետեից հյուրերը մասն հյուրասրահ:

<sup>1</sup> Բալանսը պարզ ե

<sup>2</sup> Ինչպես ստան ե ասում

Ճաշին նախորդող այն ժամն էր, յերբ հավաքված հյուրերը յերկար խոսակցութիւնն չեն սկսում, սպասելով թե հիմա կկանչեն ուտելու, և միաժամանակ անհրաժեշտ են համարում շարժվել ու շլոճել, վորպէսզի ցույց տան, թե այնքան եւ անհամբեր չեն սպասում ճաշին: Տանտերերը նայում են դեպի դուռը և յերբեմն հայացքներ փոխանակում իրար հետ: Հյուրերն այդ հայացքներից աշխատում են գուշակել՝ ում կամ ինչի յեն սպասում. մի կարեւոր, ուշացած աղգականի՞, թե՞ մի ուտելիքի, վոր դեռ պատրաստ չի:

Պիեռն յեկավ հենց ճաշից առաջ և անճարակ նստեց հյուրասարահի մեջտեղը, առաջին իսկ պատահած բազկաթոռին, կտրելով բոլորի ճանապարհը: Կոմսուհին ուղեց ստիպել նրան, վոր խոսի, բայց նա ակնոցների միջից միամիտ շուրջն էր նայում, կարծես ինչ վոր մեկին վորոնելով, և կոմսուհու հարցերին պատասխանում էր կարճ խոսքերով: Նա ճնշված էր և միայն ինքը չէր նկատում այդ: Հյուրերի մեծ մասը, վոր գիտեր արջի պատմութիւնը, հետաքրքիր նայում էին այդ մարմնեղ, հաստ ու հանդարտ մարդուն, դարձանալով, թե այդ դանդաղկոտ ու հեղաբարո մարդն ինչպես կարող էր այդպիսի խաղ խաղալ թաղապետի դիմին:

— Դուք վերջերս եք յեկել, — հարցրեց կոմսուհին նրան:

— Oui, madame<sup>1</sup>, — պատասխանեց Պիեռը, շուրջը նայելով:

— Դուք ամուսնուս չեք տեսել:

— Non, madame<sup>2</sup>, — Յեւ Պիեռը ժպտաց՝ բոլորովին անտեղի:

— Դուք, կարծեմ, վերջերս յեղել եք Պարիզում: Կարծում եմ՝ շատ հետաքրքրական է:

— Շատ հետաքրքրական է:

Կոմսուհին մի հայացք փոխանակեց Աննա Միխայլովնայի հետ: Աննա Միխայլովնան հասկացավ, վոր իրեն խնդրում են յերկտասարդին զրադեցնել և նա, Պիեռի մոտ նստելով, սկսեց խոսել հոր մասին: Ինչպես կոմսուհուն, դրան եւ Պիեռը պատասխանում էր կարճ նախադասութիւններով: Բոլոր հյուրերն եւ զրադված էին իբրարով. «Les Razoumovsky... Ça a été charmant... Vous êtes bien bonne... la comtesse Apraksine...»<sup>3</sup>, լսում էր ամեն կողմից: Կոմսուհին վեր կացավ և դնաց դահլիճ:

— Մարիա Դմիտրիեննա, — լսվեց նրա ձայնը դահլիճից:

— Նա ինքն է, — լսվեց ի պատասխան մի կողմի կանացի ձայն, վորից հետո սենյակ մտավ Մարիա Դմիտրիեննան:

<sup>1</sup> Այո, տիկին:

<sup>2</sup> Կոչ, տիկին:

<sup>3</sup> Թաղումովսկիները... Դա հետքանչ՝ բան էր... Դուք շատ բարի յեք... կոմսուհի Ապրաքսինան...

Բայր որիորդները և անգամ կանայք, բացառութեամբ ամենապատգամները, վառքի յեկան: Մարիա Դմիտրիենան կանգ առաւ շեմքին և, իր գերուկ մարմնի բարձունքից, վեր բռնելով իր ճերմակ խաղաղներով զարդարւած հիւնամայա դուռը, նայեց հոգեւորին և, կարծես թեքերը քշտելով, առանց շտապելու, ուղղեց պեկտաբ լայն թեքերը: Մարիա Դմիտրիենան խոսում եր միշտ ուսուսերն:

— Թանկագին անվանակոչյալներս՝ շնորհավորում եմ, — ասաւ նա իր բարձր, բամբ ձայնով, վոր խոսցնում եր բոլոր մյուս ձայները: — Դու ինչ ես անում, ծեր սատանա, — ասաւ նա ձեռք համբարող կոմսին, — յերեւի ձանձրանում ես Մոսկովայում: Ծռն խաղաղներու տեղ չկա: Ինչ արած, սիրելիս. այ, յերբ այս թրոշնակները մեծանան... — Նա ցույց տվեց աղջիկներին: — Ուղես-չու-ղես՝ փեսացուներ պիտի փնտռես:

— Ե, ինչպես ես կաղակս (Մարիա Դմիտրիենան կաղակ անվանում եր Նատաշային), — ասաւ նա, ձեռով Նատաշային փաղաքելով, վոր անվախ ու ուրախ մոտեցաւ նրան: — Դիտեմ, վոր չոր աղջիկ ես, բայց սիրում եմ:

Նա ահաղին սեղիկուլից հանեց հակինթայ տանձաձև դիմդեր և, տալով դրանք տանական մպխտով փայլող, շիկնած Նատաշային, անմիջապէս շուտ յեկաւ նրանից ու զարձաւ Պիետին:

— Ե, է, սիրելիս. արի մի այստեղ, — ասաւ նա շինծու հանդարտ ու բարակ ձայնով: — Արի, սիրելիս, արի:

Եկաւ նա սպանալից թեքերը վեր քշտեց:

Պիետը մոտեցաւ, տկոյցների միջից միամտորեն նրան նայելով:

— Մոտեցիր, մոտեցիր, սիրելիս: Եկա քո հորն եւ ճշմարտութեան չեմ խնայել, յերբ նա արքունիքից անգամ սիրված եր, իսկ քեզ ես առաւել:

Նա լսեց: Լուս կէին և բոլորը, սպասելով, թե ինչ և լինելու. պզտիկ կէին, վոր զա նախարարն և միայն:

— Լաֆե ես, խոսք չունեմ: Լա՛վ աղա ես... Հայրը մահամերձ պատկած, ինքը զվարճանում և, թաղապետին նստեցնում և արջի մեջքին: Ամսթ և, սիրելիս, ամսթ: Ավելի լավ կանայիւ պատերազմ գնայիր:

Նա շրջվեց ու ձեռք տվեց կոմսին, վոր ծիծաղը հաղիվ եր զսպում:

— Հը՛, սեղան նստելու ժամանակն և, — ասաւ Մարիա Դմիտրիենան:

Առջեկց դնաց կոմսը՝ Մարիա Դմիտրիենայի հետ. հետո կոմսուհին, վորին թեանցաւ եր արեւ հուսարական գնդապետը, հարկա-

վոր մի մարդ, վորի հետ Նիկողայը պիտի գնար-հասներ իր գնդին։ Աննա Միխայլովնան՝ Շինշինի հետ։ Բերդը թեք տվեց Վերային։ Ժպտեհես Ժյուլի Կարադինան սեղանատուն մտավ Նիկողայի հետ։ Նրանց հետևեցին ուրիշ զույգեր եւ, զահլիճի յերկարությամբ շար ընկած, իսկ բոլորի յետևից մեկ-մեկ գնացին յերեխաները, դաստիարակներն ու դաստիարակչուհիները։ Սպասավորներն իրար անցան, աթոռները դուռացին, վերնատանը նվազեց յերամշտախումբը, և հյուրերը տեղավորվեցին։ Կոմսի տնային յերամշտախումբն հնչյուններին փոխարինեցին դանակների ու պատասպանողների ձայները, հյուրերի խոսոցը, սպասավորների հուշիկ քայլվածքը։ Սեղանի դիմին նստել եր կոմսուհին, աջ կողմը Մարիա Դմիտրիենան, ձախ կողմը՝ Աննա Միխայլովնան և մյուս հյուրերը։ Սեղանի մյուս ծայրին նստել եր կոմսը, նրանից ձախ՝ հուսար գնդապետը, աջ՝ Շինշինը և մյուս ազամարդ հյուրերը։ Յերկար սեղանի մի կողմը բռնել եյին հասակավոր յերեխասարգները, Վերան Բերդի կողքին, Պիեռը՝ Բորիսի։ մյուս կողմը — յերեխաները, դաստիարակներն ու դաստիարակչուհիները։ Կոմսը բյուրեղյա շշերի և մրգերով լի վազերի յետևից նայում եր կնոջն ու նրա կապույտ ժապավեններով զարդարված չամչիկին և յետանդով գինի լցնում հարևանների համար, չմոռանալով և իրեն։ Կոմսուհին նույնպես, տանտիկնոջ պարտականութիւնները չմոռանալով, անանասների յետևից նշանակալից սկիսարկներ եր նետում մարդուն, վորի ճաղատն ու դեմքը՝ իրենց կարմրությամբ, վորոշակի աչքի եյին ընկնում ճերմակ մազերի մեջ։ Կանանց մասում տեղի յեր ունենում միտրինակ փսփոց, իսկ ազամարդկանց մասում ձայները, քանի գնում, բարձրանում եյին, մանավանդ հուսար գնդապետինը, վորն ափնի ու ափնի կարմրելով, այնքան կերամբ խմեց, վոր կոմսը նրան որինակ եր բերում մյուս հյուրերի համար։ Բերդը քաղցր ժպիտով խոսում եր Վերայի հետ այն մասին, թե սերը վոչ թե յերկրային զգացմունք և, այլ յերկնային։ Բորիսը իր նոր բարեկամ Պիեռին հայտնում եր սեղանակից հյուրերի անունները և հայացքները փոխանակում իր դեմը նստած Նատաշայի հետ։ Պիեռը քիչ եր խոսում, նայում եր նոր դեմքերին ու շատ ուտում։ Սկսած յերկու արդանակից, վորոնցից ընտրեց à la tortue<sup>1</sup>, ձկնից պատրաստած կարկանդակից մինչև աքարները, նա չհրաժարվեց կերակրների վոչ մի տեսակից և վոչ մի դիմուց, վոր զլիսավոր սպասավորը անձեռոցի մեջ փաթաթաց շիշը խորհրդավորությամբ հարևանի ուսի յետևից տալիս եր նրան, ասելով կոմս

<sup>1</sup> Գրիտի արգանակ

«գրեյմադերա», կամ «ուսդարական», կամ «ոսյնվեյն»։ Պիեռը կոմսի մենադիրը կրող շորս բյուրեղյա բաժակներից մեկն ու մեկը դեմ եր անու՛մ գլխավոր սպասավորի պարզած շշին ու խոժում հաճույքով, ափելի ու ափելի դուրեկան արտահայտութեամբ նայելով հյուրերին։ Նրա դեմը նստած նատաշան նայում եր Բորիսին, ինչպե՛ս տատերեք տարեկան աղջիկները կնայեն մի աղայի, վորի հետ հենց նոր միայն համարովել են և վորի վրա սիրահարված են։ Նատաշան այդ նույն հայացքով յերբեմն նայում եր Պիեռին և Պիեռն այդ գվարճալի ու աշխույժ աղջկա հայացքի ազդեցութեամբ տակ ուղում եր ինքն էլ ծիծաղել, չիմանալով ինչու։

Նիկոլայը նստած եր Սոնյայից հետո, Ժյուլի Կարադինայի կողքին, և գարձյալ նույն ակամա ժպիտով ինչ-վոր բան եր ասում նրան։ Սոնյան ժպտում եր տոնական ժպիտով, բայց, ըստ յերեւույթի, տանջվում եր խանդից. մերթ զուրստվում եր, մերթ կարմրում և ամեն կերպ աշխատում եր լսել, թե ինչ են խոսում Նիկոլայն ու Ժյուլին։ Գաստրարակչուհին տնտնագրատ շուրջն եր նայում, կարճես պատրաստվում եր դիմադրել, յեթե վորեւ մեկը վերածեր հանկարծ յերկխոսներին վերավորել։ Գերմանացի գաստիրակը աշխատում եր չմոռանալ կերակուրների, անուշեղենների և դիմիների բոլոր տեսակները, վոր մանրամասն նկարագրի Գերմանիա՝ տնեցիներին ուղարկելիք նամակի մեջ, և շատ վերավորվում եր, վոր գլխավոր սպասավորը տնտնացի մեջ վաթաթած շիշը իրեն չեր մտակցում։ Գերմանացին հոնքերը կիտում եր, աշխատում եր այնպիսի տեսք ընդունել, թե ինքը չի յեւ ցանկանում այդ գինուց բաժին ստանալ, բայց վերավորվում և նրա համար, վոր վսչ-վոր չի ուղում հասկանալ, թե գինին իրեն հարկավոր և վճչ թե ծարավը հողեցնելու, վճչ թե ազահութեամբ խմելու, այլ լակ հետաքրքրականութեան համար։

## XIX

Սեզանի շուրջը՝ ազամարդկանց բաժնում խոսակցութեանը դնելով աշխուժանում եր։ Գնդապետը պատմեց, թե պատերազմի հայտարարութեան հրովարտակն արդեն դուրս և յեկել Պետերբուրգում և թե այն որինակը, վոր ինքը տեսել է, սուրհանդակի միջոցով բերված և գլխավոր հրամանատարին։

— Ենվ ինչու համար, վոր սատանան և զրգում մեզ, կովել Բոնապարտի դեմ, — ասավ Շինշինը։ — Il a déjà rabattu le caquet à l'Autriche. Je crains que cette fois ce ne soit notre tour<sup>1</sup>.

<sup>1</sup> Նա արդեն կտրեց Ավստրիայի գոտղութեանը Վախենում եմ, վոր հիմա հերթը մերը լինի։

Գնդապետը մարմնեղ, բարձրահասակ և տաքարյուն մարդ էր, ըստ յերևույթին, լավ ծառայող ու հայրենասեր: Շինչինի խոսքերից վերափոխեց:

— Նոա համառ, բառեկամ, — ասավ նա «Ե»-ի փոխարեն «Ո» արտասանելով: — Նոա համառ, վոլոդինտե կայսուն այդ գիտի: Նա մանիֆեստում ասել է, թե չի կառող սառնասիրտ զիտել Ռուսաստանին սպառնացող վտանգը, և թե կայսուլթյան անվտանգությունը, նոա առժանապատվությունը և դաշնադրություններն սրբությունը, — ասավ նա, չգիտես ինչու, շեշտելով առանձնապես «դաշնադրություն» բառը, կարծես դրա մեջ էր բանի վողջ նյությունը:

Յեվ իրեն հատուկ անսխալ, պաշտոնական հիշողությամբ կըրկնեց հրովարտակի առաջին խոսքերը. «և կայսեր ցանկությունը, միակ և անփոփոխ նպատակը — Յեվրոպայում հաստատուն հիմքերի վրա խաղաղություն վերահաստատել — հարկադրեցին նրան այժմ զորքերի մի մասը շարժել դեպի արտասահման՝ սույն մեր մտադրությունը իրականացնելու համար»:

— Ահա ինչու համառ, վողոճած պառոն, — յեզրակացրեց նա, խրատական շարժումով մի բաժակ դինի խմելով և խրախուսանքի ակնկալությամբ կոմսին նայելով:

— Connaissez vous le proverbe<sup>1</sup>. «Յերեմ, Յերեմ, լավ կանելի բան է նստեյիլ՝ իլիկ պտտեյիլ», — ասավ Շինչինը, դեմքը կնճռելով ու ծալտալով: — Cela nous convient à merveille<sup>2</sup>. Մի Սուլտանով ունեյինք — նրան ել ջարդեցին; à plate couture, իսկ հիմա վարտեղ Սուլտաններ գտնե՞նք: Je vous demande un peu<sup>3</sup>, — անդադար ուսերենից ֆրանսերենի անցնելով՝ կրկնում էր նա:

— Մենք պետք և կովենք մինչև վեռջին կաթիլ առյուծ, — ասավ զնդապետը, սեղանին լսվելով, — և մեռածները մեռ կայսուն համառ, և այն ժամանակ ամեն բան լավ կլինի: Յեվ ինչքան կառուելի չե (նա առանձնապես յերկարեց «կարելի չե» բառը), ինչքան կառուելի չե քիչ դատողություններ անենք, — վերջացրեց նա, կրկին կոմսին դիմելով: — Այսպես ենք կառնում մենք՝ հին հուսարներս, հաւ բոլորը: Իսկ զուք թնչ ենք կառնում, յեռիտատառդ հուսառ, — ավելացրեց նա, դիմելով Նիկոլային, վորը, լսելով խոսքը պատերազմի մասին և, խոսակցութեան թողած, մեծ ուշադրությամբ ականջ էր դնում զնում զնդապետին:

<sup>1</sup> Մանոթ և ձեզ այս առածը:

<sup>2</sup> Պա սաղում և մեզ հրաշալի կերպով:

<sup>3</sup> Հարցնում եմ ձեզ:



— Միանդամայն համամայն եմ ձեզ, — պատասխանեց Նիկոլայը, ամբողջովին բռնկվելով, արևելե պատելով ու բաժանելը տեղափոխելով մի այնպիսի վճռական տեսքով, կարծես իննց այդ բոլորներն իսկ յենթարկվում եր մեծ վտանգի, — յես համոզված եմ, վոր սուսները պետք ե մեռնեն կամ հաղթեն, — ասով նա, ուրիշների պես ինքն ել զգալով, վոր իր խոսքերը, ներկա առիթի համար, հափազանց խանդավառ ու փրուն էին, ուստի ե անհարժար:

— C'est bien beau ce que vous venez de dire<sup>1</sup>, — ասով նրա մաս նստած ժյուլին, հասաչելով: Սոնյան զողաց ամբողջ մարմնով ե կարմրեց մինչև ականջները, ականջների յետևը, մինչև պարանոցն ու ուսերը այն ժամանակ, յերբ Նիկոլայը խոսում եր: Պիեռը լսում եր դնդապետի խոսքերը, ե զլխով հովանաթյուն ավտով:

— Այդ հիանալի յե, — ասով նա:

— Իսկական հուսարն ես, յես խոսասանդ, — բացականչեց զընդապետը, նորից սեղանին խփելով:

— Ի՞նչ եք ազմկում այդտեղ, — լովեց հանկարծ Մարիա Դմիտրիևնայի բամբ ձայնը: Ի՞նչ ես ձեռք սեղանին խփում, — զարմով նա հուսար դնդապետին, — մեմ վրա ես տաքացել. մի գիտի, կարծում ես դիմացդ ֆրանսացիներ են:

— Եկա ճշմարտություն եմ ասում, — ասով հուսարը ժպտալով:

— Պատերազմի մասին ե, — զոռաց կոմսը սեղանի մի ծայրից մյուսը: — Ձեմ վոր վորդիս գնում ե, Մարիա Դմիտրիևնայի վորդիս գնում ե:

— Իսկ իմ չորս վորդին ել բանակումն են, բայց յես չեմ ախրում: Ամեն բան ասածու կամքից ե կախված. տանդ պահած ել կմեռնես, կովի մեջ ել աստված կվորդորմա, — տանց վորեև ջանքի սեղանի մյուս ծայրից հնչեց Մարիա Դմիտրիևնայի թավ ձայնը:

— Այդ այդպես ե:

Եկվ խոսակցությունը կրկին կենտրոնացավ — կանանցն իրենց մասում, տղամարդկանցն իրենց:

— Այ, չեա կարող հարցնել, — ասում եր փոքր յեղբայրը Նատալյային, — չեա կարող հարցնել:

— Կհարցնեմ, — պատասխանեց Նատալան:

Նրա զեմքը հանկարծ բռնկվեց, արտահայտելով մի խիղախ ու զվարթ վճռականություն: Նա վեր կացավ, զեմը նստած Պիեռին հայացքով հրավիրելով լսել իրեն, ե դիմեց մորը:

<sup>1</sup> Մրանչելի յե, որանչելի յե, ինչ վոր ասացիք:



— Մայրի՛կ, — հնչեց սեղանովը մեկ նրա մանկական-կրճճային ձայնը:

— Ի՞նչ ես ուզում, — հարցրեց կոմսուհին վախեցած, բայց աղջկա դեմքից նկատելով, Վոր այդ չարաճճությունն է, ձեռք խոտովթամբ թափ տվեց նրա վրա, գլխով սպառնական ու բացասական շարժում անելով:

Խոսակցությունը լռեց:

— Մայրի՛կ, թնչ կարկանդակ են մատուցելու, — հնչեց Նատաշայի ձայնը ավելի վճռական:

Կոմսուհին ուղեց դեմքը խոթոռել, բայց չկարողացավ: Մարիա Դմիտրիենան հաստ մատովը սպառնաց:

— Կաղճկ, — ասավ նա սպառնալով:

Հյուրերի մեծամասնությունը նայում էր մեծերին, չիմանալով ինչպես վերաբերվել Նատաշայի այդ չարաճճության:

— Ա՛յ, ցույց կտամ քեզ, — ասավ կոմսուհին:

— Մայրի՛կ, կարկանդակ են բերելու, — հարցրեց Նատաշան բարձրաձայն, արդեն համարձակ և քմահաճորեն ուրախ, նախապես վստահ, վոր իր վարմունքը լավ ընդունելություն կգտնի:

Սոնյան ու հասուրիկ Պետյան թաղնվում էին, վոր իրենց ծիծաղը չտեսնեն:

— Ա՛յ, տեսա՛ր, հարցրի, — շնչաց Նատաշան փոքր յեղբորն ու Պիեռին, վորին նայեց դարձյալ:

— Պաղպաղակ, բայց քեզ չեն տա, — ասավ Մարիա Դմիտրիենան:

Նատաշան տեսավ, վոր վախենալու բան չկա, ուստի չվախեցավ և Մարիա Դմիտրիենայից:

— Մարիա Դմիտրիենա, թնչ տեսակ պաղպաղակ: Սերով պատրաստածը չեմ սիրում:

— Դադարի:

— Ձե, տսե՛ք, թնչ տեսակ: Մարիա Դմիտրիենա, թնչ տեսակ, — գրեթե զոռաց նա: — Ուղճւմ եմ իմանալ:

Մարիա Դմիտրիենան ու կոմսուհին ծիծաղեցին, նրանց հետ և բոլոր հյուրերը: Բոլորը ծիծաղում էին վոչ թե Մարիա Դմիտրիենայի պատասխանի վրա, այլ այդ փառքիկ աղջկա տներեակայելի համարձակություն ու ճարպկություն վրա, վոր հանդգնեց այդպես վերաբերվել Մարիա Դմիտրիենային:

Նատաշան հանդատացավ այն ժամանակ միայն, յերբ հայտնեցին, թե պաղպաղակն անանասից է: Պաղպաղակից առաջ շամպայն ավին: Նորից յերաժշտախումբը նվագեց, կոմսը համբուրվեց կոմսուհու հետ, հյուրերը վտարի կանգնելով, շնորհավորեցին կոմ-

առահուան, սեղանի վրայով բաժակներ շրթկացրին կոմսի, յերեխաների և միմյանց հետ։ Նորից սպասափախներն իրար անցան, անթոռները դռացին, և նույն կարգով, բայց ավելի կարճած զեմքերով, հյուրերը վերադարձան հյուրասրահն ու կոմսի առանձնասենյակը։

## XX

Բոստոնի սեղանները բաց արին, խմրեր կադմեցին, և կոմսի հյուրերը տեղավորվեցին յերկու հյուրասրահում, բազմացարանում ու զրադարանում։

Կոմսը, խաղաթղթերը հովհարածն փոխելով, հաղիվ եր զսպում ստփրական յետհաշյա քուներ և ծիծաղում եր ամեն բանի վրա։ Եներեսասարգու թյունը, կոմսուհու զրգուժով, հավաքվեց զաշնամուրի և տավիղի շուրջը։ Առաջինը ժյուլին, բոլորի խնդրանքով, տավիղի վրա մի յեղանակ նվագեց իր վարիանտներով և մյուս աղջիկներին հետ միասին սկսեց խնդրել Նատաշային ու Նիկոլային, վարենք հայտնի ելին իրենց յերաժշտական ընդունակությամբ, վարեն բան յերգել։ Նատաշան, վորին զիմեցին իրեն մեծի, ըստ յերեսաթիին շատ զո՛ւ եր այդ բանից, բայց միաժամանակ և քաշվում եր։

— Ի՞նչ պիտի յերգենք, — հարցրեց նա։

— Մկրչուրք, — պատասխանեց Նիկոլայը։

— Դե, շուտ արեք։ Բարիս, յեկեք այստեղ, — ասավ Նատաշան, — իսկ Սոնյան ճւր ե։

Նա չորս կողմը նայեց և, տեսնելով ընկերուհին սենյակում չի, վազեց նրան դռնելու։

Վաղելով Սոնյայի սենյակը և, նրան այնտեղ չգտնելով, Նատաշան վազեց մանկանոց — Սոնյան այդտեղ ել չէր։ Նատաշան հասկացավ, վոր Սոնյան միջանցքի սնդուկի վրա կլինի։ Միջանցքում զրված սնդուկը Մոստոֆեերի տան իգական մատաղ սերնդի տխուր թյան վայրն եր։ Իսկապես, Սոնյան իր յեթերային, վարդազույն զգեստով յերեսնիվայր պսակել եր զայակի կեղտոտ շերտավոր ներքնակին՝ սնդուկի վրա և, մատներով յերեսը ծածկած, հեկեկում եր, մերկ ուսերը ցնցելով։ Նատաշայի գեմքը, վոր ամբողջ օրն աշխուժ աւ տնտեսան եր, հանկարծ փոխվեց. աչքերը սառեցին, տաղ զողաց նրա լայն պարանոցը և բերանի անկյուններն իջան։

— Սոնյա։ Ի՞նչ և... Ի՞նչ, Բ՛նչ և պատահել քեզ։ Ը՛—Ը՛—Ը՛...

Յեւ Նատաշան, մեծ բերանը լայն բանալով ու բոլորովին աղեղանալով, սկսեց յերեխայի պես բարձրաձայն լաց լինել, չիմանալով պատճառը և միայն նրա համար, վորովհետեւ Սոնյան

լաց եր լինում: Սոնյան ուզեց գլուխը բարձրացնել, ուզեց պատասխանել, բայց չկարողացավ և յերեսն ավելի թաղցրեց: Նատաշան լաց լինելով նստեց կապույտ ներքնակի վրա ու ընկերուհուն գրկեց: Ինքն իրեն հավաքելով Սոնյան բարձրացավ, արցունքները սրբեց ու սկսեց պատմել:

— Նիկոլենկան մի շաբթից հետո գնում է, նրա... թուղթը... դուրս է յեկել... ինքն ինձ ասավ... Բայց յես լաց չեյի լինի... (նա ցույց տվեց ձեռին բռնած մի թուղթ — Նիկոլայի գրած վոտանա-վորենքը): յես ելի լաց չեյի լինի, բայց դու չես կարող... վոչ-վոչ չի կարող հասկանալ... Թե նա ինչ սիրտ ունի:

Յեվ նա նորից սկսեց լաց լինել, վոր Նիկոլայի սիրտը շատ բարի յե:

— Քո բանը լավ է... քեզ չեմ նախանձում... յես քեզ սիրում եմ, նուշնպես և Բորիսին, — ասում եր Սոնյան, փքըր ինչ իրեն հավաքելով, — նա համակրելի յե... ձեզ համար արգելքներ չկան: Իսկ Նիկոլայն իմ cousin-ն է... պետք է վոր... միտրոպոլիտն ինքը... այդ ել չի կարելի: Յեվ հետո, յեթե մայրիկը... (Սոնյան կոմսուհուն թե մայրիկ եր համարում և թե մայրիկ եր ասում), նա կասի, վոր յես Նիկոլայի աղաքան փչացնում եմ, վոր յես անսիրտ եմ, ապերախտ, բայց ճիշտը... աստված վկա (նա խաչակնքեց), յես այնպես եմ սիրում մայրիկին, և ձեզ բոլորիդ, միայն Վերան և մենակ... Ինչու համար: Յես նրան ինչ եմ արել: Յես այնքան յերախտապարտ եմ ձեզ, վոր ուրախությամբ ամեն ինչ կդոհեմ, բայց բան չունեմ...

Սոնյան այլևս չկարողացավ խոսել և գլուխը նորից թաղցրեց ձեռների ու ներքնակի մեջ: Նատաշան սկսեց հանդստացնել, բայց դեմքից յերևում եր, վոր զգում-հասկանում է ընկերուհու վշտի ամբողջ լրջությունը:

— Սոնյա, — ասաց նա հանկարծ, կարծես դու չսկսելով ընկերուհու վշտի իսկական պատճառը: — Վերան, Վերան խոսել է ճաշից հետո: Այո:

— Այո, այս վոտանավորը ինքը Նիկոլայն է գրել, իսկ յես արտագրել եմ ուրիշներն ել: Վերան դրանք տեսավ սեղանիս վրա և ասավ, վոր ցույց է տալու մայրիկին, ու ավելացրեց, թե յես ապերախտ եմ, թե մայրիկը յերբեք թույլ չի տա, վոր Նիկոլայն ամուսնանա ինձ հետ, թե Նիկոլայն ամուսնանալու յե Ժյուլիի վրա: Տեսնում ես՝ նա ամբողջ որը Ժյուլիի հետ եր... Նատաշա: Ինչու համար...

Յեվ նորից լաց յեղավ առաջվանից ավելի դառնադին: Նատաշան պոկված տեղից բարձրացրեց նրան, գրկեց և, արցունքների միջից ժպտալով, սկսեց հանգստացնել նրան:

— Սոնյա, դու նրան մի համատա, մի համատա: Հիշում ես, ինչպես յերեքո՞վ բաղձնացարանում խոսում էլի՞նք Նիկոլենկայի հետ: Հիշում ես, ընթրիքից հետո: Մենք ամեն րան վճռեցինք, թե ինչպես պիտի լինի: Ձեռ մտաբերում ինչպես, բայց հիշում ես, ինչպես ամեն րան լսո՞վ եր և հնարավոր: Այ՛ մարեգրայր: Երնշինի յեղբայրն ամուսնացել և մարաբրա՞ջ աղջկա հետ, իսկ մենք չե՞ վոր յերբարդ տատիճանի աղպականներ ենք: Յե՞վ Բորիսն ասում եր, վոր դա հնարավոր և: Դիտես, յես ամեն րան պատմեցի: Իսկ նա այնքան խելացի, այնքան լա՞մն է,— ասո՞վ նստաշան: — Սոնյա, լսո՞ց մի լինի, սիրելիս, հողիս, Սոնյա: — Յե՞վ նա համբուրեց նրան, ձիճաղելով: — Դերան չա՞ր և, ասոված նրա հետ: Ամեն րան լսո՞վ էլինի, նա մայրիկին չի ասի: Նիկոլենկան ինքը քեզ կասի, վոր ինքը ժյալի մասին չի յե՞լ մտածել:

Յե՞վ նա համբուրեց Սոնյայի գլուխը: Սոնյան վեր կացավ, և կատվիկը նորից կենդանացավ, աչքերը պտղապին, և նա, թվում եր, պատարաստ և պոչի շարժել, ցատկել փափուկ թաթերի վրա ու նորից խաղալ կծիկի հետ, ինչ վոր սաղում եր իրեն:

— Կարճում ես Իսկապետ: Ասոված վկա՞,— ասո՞վ նա, արագ-արագ զդեռաներն ու մաղերն ուղղելով:

— Իսկապետ, ասոված վկա՞,— պատասխանեց նստաշան, ուղղելով ընկերուհու: Հյուսիսի տակից դուրս ընկած մաղերի փունջը:

Յե՞վ նրանք յերկուսն էլ ձիճաղեցին:

— Դե, դնանք ռԱՂՐԱՅՐԷ յերդենք:

— Գնանք:

— Դիտես, այդ հաստ Պիեռ, վոր ի՞մ գեմն եր նստած, այնքան ձիճաղելի յե, — ասո՞վ հանկարձ նստաշան, կանգ առնելով: — Յես շատ ուրախ եմ:

Յե՞վ նստաշան վաղեց միջանցքով:

Սոնյան, զդեռաին կզած փեռուրները թափ տալով և վստանավորը ծոցը դնելով, թեթե, ուրախ քայլելով, շիկնած գեմքով՝ նստաշայի յետևից միջանցքով վաղեց բաղձնացարան: Հյուսիսի խնդրանքով յերխառապղները յերդեցին ռԱՂՐԱՅՐԷ կվարտեռը, վորը բալրին շատ դուր յեկավ: Հետո Նիկոլայը յերդեց նոր սովորած յերգը:

Լուսնակի գիշերին, սիրուն գիշերին

Յերջանկութուն և յերողել մենակ.

Թե աշխարհս վրա մի ուրիշ կա,

Վոր մտածում և յե՞վ չո՞վ վրա.

Յե՞վ վոր նա սիրուն մասնեքով

Վտկե տավիգի թելերի վրա

Իր անուշ ու կրքոտ նվագով  
 Կանչում է իր մոտ, կանչում է քեզ:  
 Մի յերկու որ ել, ու դրախտը կրացվի...  
 Բայց ահ, սիրեցյալդ այդ չի տեսնի:

Վերջին խոսքերը դեռ չեն յերգել-վերջացրել, յերբ դաշլիմում յերիտասարդությունը պատրաստվեց պարի և յերամիշտներն սկսեցին վտաքերով աղմկել ու հազար:

Պիեռը նստել էր հյուրասրահում, ուր Շինշինը նրա, իրեն արտասահմանից նոր յեկածի հետ սկսեց, Պիեռի համար տաղտկալի, քաղաքական մի զրույց, վրերն շուտով միացան և ուրիշները: Յերբ նվազը հնչեց, նատաշան յեկավ հյուրասրահ և, ուղիղ Պիեռին մոտենալով, ծիծաղելով ու շիկնելով, ասավ.

— Մամա սպառիւրեց ձեզ պարի հրավիրել:

— Վախենում եմ ֆիզուրները շփոթեմ,— ասավ Պիեռը,— բայց յեթե ուղում եք իմ ուսուցիչը լինել...

Յեզ նա իր հաստ ձեռն իջեցնելով՝ մեկնեց փոքրիկ բարալիկ աղջկան:

Մինչ զույգեր ելին կազմվում և յերամշտախումբը պատրաստություն էր տեսնում, Պիեռն իր փոքրիկ դամալի հետ նստեց. նատաշան կատարելապես յերջանիկ էր. նա պիտի պարեր արաստանմանից յեկած հասակավոր մարդու հետ: Նստել էր բալթի աչքի առաջ ու մեծի պես զրուցում էր Պիեռի հետ: Զեռին հովհար ունեւր, վրբ մի որիորդ տվել էր նրան պահելու: Յեզ, աշխարհիկ դիրք ընդունելով (աստված գիտի, թե յերբ և վարտեզ էր սովորել այդ) նա հովհարելով ու ժպտալով, խոսում էր իր կալվալերի հետ:

— Սրան տեսեք, մի սրան նայեցեք,— ասավ կամուսինն դաշլիների անցնելով ու նատաշային ցույց տալով:

Նատաշան կարմրեց ու ծիծաղեց:

— Ե, ի՞նչ կա վոր, մամա. ի՞նչ կա ծագրելու, ի՞նչ կա այստեղ դարմանալի:

Յերբորդ եխսեզի կիսին աթոռներն աղմուկով շարժվեցին հյուրասրահում, ուր թուզթ ելին խաղում կաման ու Մարիա Դմիտրիենան, և պատվավոր հյուրերի մեծ մասն ու ձերուները, յերկար նստելուց հետո ձգվելով և թղթալանակներն ու քսակները գրպանները դնելով՝ դաշլիների դռնից մտան ներս: Առջևից դալիս էր Մարիա Դմիտրիենան՝ կոմսի հետ— յերկուսն էլ ուրախ զեմքով: Կոմսը սիրակատակ քաղաքավարությամբ, մի տեսակ պարահանդիսային ձևով, թեք տվեց Մարիա Դմիտրիենային: Կոմսն ուղղվեց և նրա զեմքը լուսավորվեց փահելության-խորամանկ

մայրամուտի, և հենց վար պարեցին երեսնազի վերջին ֆիդուսը՝ նա մաքուհարեց յերամբշտնելուն և մայն ալեց առաջին շուքակին:

— Ախման: Դանիւլ Կուպորը գիտեա:

Դա կամսի սիրած պարն էր, վար պարել էր զեռ ջահել ժամանակը (Դանիւլ Կուպորն խկապես անգլլեզի մի ֆիդուսն էր):

— Հայրեկին նայեցեր, — զոչեց Նատաշան զանլիճովը մեկ (բայարսովին մոտանալով, վար ինքը պարում և մեծի հետ), զանգրա-հեր պուխը մինչև ծնկներն իջեցնելով ու իր հնչուն ծիծաղով զանլիճը լցնելով:

Խկապես, բայրը, ովքեր կային զանլիճում, հրճվանքով նայում էին ու բախ ձերուկին, վարն իր մեծալայելուչ դամայի՝ իրենից բարձրահասակ Մարիա Դմիտրիենայի հետ, թեկերը շարժում էր առկառով, ուսերը կտարառում, վառները խաղաղնում, թեթևակի հաստակին խփելով, և կլոր դեմքին հեղհեռեռ ալիւլի ու ալիւլի աճող մայրամուտի հյութերին նախապատրաստում էր այն բանին, ինչ տեղի յեր ունենալու: Հենց վար Դանիւլ Կուպորի ուրախ ու զրգրիչ նշյաւնները լսովեցին, զանլիճի բոլոր զաների մեջ յերեւացին՝ մի կազմից աղամարդ, մյուս կազմից կին աղասավորներ ծպտուն զեմքերը, վար յեկել էին զվարճացող աղային տեսնելու:

— Մեր ազան՝ արծիւի, արծիւի, — առավ զայսկը բարձրաձայն, զոտն միջից:

Կամար լավ պարում էր և ինքը գիտեր այդ, բայց նրա դաման բոլորովին չէր կարողանում ու չէր ցանկանում լավ պարել: Նրա վիթխարի մարմինը մնացել էր ուղիղ՝ կախ ընկած ահագին լեռ-վերով (նա ուղիւղյալը ալիւլ էր կոմսուհուն). պարում էր միայն նրա խիտ, բայց գեղեցիկ զեմքը: Այն, ինչ արտահայտում էր կամսի հաստ ու կլոր մարմինը, նույնն արտահայտում էր Մարիա Դմիտրիենայի հեղհեռեռ ծպտուն դարձող զեմքը և վեր ցցվող քիթը: Ստկայն, յեթե կամար ալիւլի ու ալիւլի վողեարվելով՝ հան-դիտականներին հիացնում էր ճարպիկ վողբուն շարժումների ան-պասակելությամբ և իր փափուկ վառների թեթև վառայուններով, Մարիա Դմիտրիենան՝ ուսերի շարժման և բազուկները վողբելու ամենափոքրիկ ճիւղովն իսկ, հիրավի, թողնում էր վոչ պակաս աղայարու թյուն, ինչ վար զնահատում էր ամեն վոր, նկատի առնել-լով նրա մարմնի զերությունը և մշտական խիտ լրջությունը: Պարը գնալով ալիւլի ու ալիւլի աշխուժանում էր: Մյուսները մի վայր-կյան իսկ ուշադրություն չէին զրավում և նույնիսկ չէին ել հողում այդ մասին: Բոլորն էլ զրազված էին կամսով ու Մարիա Դմիտրիենայով: Նատաշան, բոլոր ներկա յեղդների թեքն ու փե-շերը քաշելով, պահանջում էր, վար հորը նայեն, վորոք առանց

այդ ել աչք չեյին հեռացնում այդ պարողներէց: Կոմսը պարի ընդմիջումներին ծանր շնչում եր, ձեռները թափահարում ու ձայն տալիս յերաժիշտներին, վոր նվագն արագացնէն: Ու արագ, արագորեն ու արագորեն դառնում եր կոմսը, մերթ վոտքի ծայրերի, մերթ կրունկների վրա պտտվելով Մարիա Դմիտրիենայի շուրջը և, վերջապես, դամային տանելով դեպի իր տեղը, արավ վերջին պահ, յետևից վեր բարձրացնելով իր դիպուկ վոտքը, ծպտուն դեմքով խոնարհելով քրտնած գլուխը և աջ ձեռը թափահարեց շրջանաձև ծափահարութեան ու ծիծաղի վորոտի մեջ. ծիծաղում եր մանավանդ Նատաշան: Յերկու պարողներն ել կանգ առան, ծանր շքնչելով ու բառիատես թաշկինակով յերեսները սրբելով:

— Ահա ինչպես եյին պարում մի ժամանակ, *ma chère*, — ասով կոմսը:

— Այ դիտի Դանիլո Կուպոր, — ծանր, յերկար շունչ առնելով և թեքները վեր քաշելով, ասով Մարիա Դմիտրիենան:

## XXI

Այն ժամանակ, յերբ Ռոստոֆելերի դահլիճում հաղնածուխ յաւնից սխալ նվագող յերաժիշտների նվագի տակ պարում եյին վեցերորդ անգլիզը, և հաղնած սպասավորներն ու խոհարարն ընթրիք եյին պատրաստում, կոմս Բեզուխովն ստացավ կաթվածի վեցերորդ հարվածը: Բժիշկները հայտարարեցին, վոր անողջանալու հույս չկա այլևս: Հիվանդին լուռ խոստովանեցրին ու հաղարդեցին. պատրաստութուն եյին տեսնում վերջին ոճման համար, և տան մեջ, վոր սովորական և ալդպիսի բոսկներին, իրարանցում ու սպասումի տաղնայք եր տիրում: Դուրսը, տան դարպասների մոտ, յեկող կառքերից թաղնվելով, խմբվել եյին զաղապարձները, սպասելով հարուստ պատվերի՝ կոմսի թաղման համար: Մոսկվայի գլխավոր հրամանատարը, վոր անդադար համհարդներ եր ուղարկում կոմսի վիճակն իմանալու, այս յերեկո ինքն յեկավ անձամբ վերջին հրաժեշտը տալու անվանի յեկատերինյան ավադանի կոմս Բեզուխովին:

Փառահեղ ընդունարանը լիքն եր: Բոլորը հարգանքով վտաի կանգնեցին, յերբ գլխավոր հրամանատարը, մոտ կես ժամ հիվանդի մոտ մնալուց հետո, դուրս յեկավ այնտեղից, թեթևակի պատառնալով գլխով արված բարեններն և աշխատելով վորքան կարելի յէ շուտ անցնել հայացքներն իր վրա սեևոած բժիշկներին, հազմարկանների ու ազգականների մոտով: Իշխան Վասիլին, վոր նիհարել ու զուռնատվել եր այս քանի որը՝ ճանապարհ եր



դնում հիշատար հրամանատարին և ցած ձայնով ինչ-վոր կրկնեց նրան միքանի անգամ:

Դիտար հրամանատարին ճանապարհ դնելով՝ իշխան Վասիլին՝ դահլիճի մեջ մեկուսի նստեց մի աթոռի, վառք վառի վրա քցելով, արմուկից հենեց ծնկանն ու աչքերը ծածկեց ձեռով: Մի աս ժամանակ այդպես նստելով՝ վեր կացավ ու անսովոր-արագ քայլերով, վախեցած աչքերով շուրջը նայելով, յերկար միջանցքով դնաց տան յետին հարկարածին՝ ավաղ իշխանազատեր մաս:

Թույլ լուսավորված բնդունարանում դանդաղներն անհավասար շշուկով խոսում էին միմյանց հետ ու լուսւմ ամեն անգամ և հարցադրանք ու սպասողական հայացքներով նայում մահամերձի սենյակից տանող դռան, վոր Թույլ ձոնը եր արձակում, յերբ մեկը ներս եր մտնում կամ դուրս եր դալիս այնտեղից:

— Մարդկային վախճանը, — ասավ ձերուկ հողեսրականը մտքը նստող և իրեն միամտերեն ունկնդրող կնոջը, — վախճանը ասամանոված և, և այն անցնել չի կարելի:

— Արդյոք ուշ չե՞ վերջին սոժման համար, — հողեսր կոշուկն ավելացնելով՝ հարցրեց կինը, կարճես այդ մասին իր սեփական կարծիքը չաւեննալով:

— Քորհուրդը, քույրիկ, մեծ և, — պատասխանեց հողեսրականը, ձեռքը քսելով ճաղատին, վարի վրա պառկած էյին միքանի փունջ սանրած ալիստուն մազեր:

— Դա մի եր, ինքը դիտար հրամանատարը, — հարցրին սենյակի մյուս ծայրում: — Ի՞նչ ասույդ և յերեւում...

— Բայց յաթնասուների մեջ և: Ի՞նչ, տաււմ են, վոր կոմսն ևլ մարդ չի ճանաչում: Ուղմւմ էյին սոճի:

— Մեկին ճանաչում էյի՞ յոթն անգամ սոճից:

Յերկրորդ իշխանադուստրը դուրս յեկավ հիվանդի սենյակից արցունքոտ աչքերով և նստեց բժիշկ Լսանի մոտ, վորը վայելուչ դիրքով, նստել եր Յեկատերինայի պատկերի ներքո, սեղանին կրթնած:

— Très beau, — ասավ բժիշկը, պատասխանելով յեղանակի մասին արած հարցումին, — très beau, princesse, et puis, à Moscou on se croit à la campagne<sup>1</sup>.

— N'est-ce-pas<sup>2</sup>, — ասավ իշխանադուստրը հոտաչելով: — Ուրեմն նա կարճը և խճիկ:

<sup>1</sup> Հիանալի յեղանակ և, իշխանուհի, և հետո Մոսկովան այնպես նման և դուրի:

<sup>2</sup> Այնպես չէ:

Լոռենը մտածեց մի փոքր:

— Դեղն ընդձևեց:

— Այո:

Բժիշկը նայեց ժամացույցին:

— Վերցրեք մի բաժակ յեռացրած ջուր և դրեք une pincée (նա իր բարակ մատներով ցույց տվեց թե ինչ է նշանակում une pincée) de cremortartari<sup>1</sup>...

— Դեռ չի պատխա՞տ, — ասում էր դերմանացի բժիշկը մի աղյուստանտի, — վոր կարիւլածի երրուդ խաբլածից հետ մառդ կեցեա՞նի մնա:

— Բայց ինչ թարմ մարդ էր, — ասով աղյուստանտը, — Յեղ հւմ է մնալու այս հարստությունը, — ավելացրեց նա շշուկով:

— Յեղկացոյս կզգնի, — ժպտալով պատասխանեց դերմանացին:

Բոլորը նորից դռանը նայեցին, վորը հոնչաց, և յերկրորդ իշխանադուստրը, Լոռենի ցույց տված ըմպելիքը պատրաստած, տարավ հիվանդին: Գերմանացի բժիշկը մտտեցավ Լոռենին:

— Կարճդ և մինչև վաղը առավոտ ապրել, — հարցրեց դերմանացին վատ ֆրանսերենով:

Լոռենը շրթները սեղմելով, խստությամբ ու բացասարար մատը շարժեց իր քթի առաջ:

— Այս գիշեր, վաղ ուշ, — ասով նա կամաց, ինքնադռն ժպտալով, վոր ցույց էր տալիս, թե միայն ինքն է հասկանում հիվանդի վիճակն, ու դնաց:

Մինչ այդ իշխան Վասիլին բաց արավ իշխանադուստեր սենյակի դուռը:

Սենյակում կիսախափար էր տիրում. միայն յերկու կանթեղ էր վառվում սրբապատկերների առաջ. ողջ լցված էր խնկի ու ծաղիկների դուրեկան հոտով: Ամբողջ սենյակը սարքավարված էր մանր կահերով — փոքրիկ պահարաններով ու սեղաններով: Պարտակի յետեից յերեսում ելին փետրյա բարձր անկաղնու ճեղմակ ծածկացները: Շնիկը հաչեց:

— Ախ, այդ դժւք էք, mon cousin.

Իշխանադուստրը վեր կացավ և շտկեց մագերը, վորոնք միշտ, ինչպես և այժմ, անսովոր կռի ելին՝ այնպես, կարծես գլխի հետ մի կտորից ելին շինված ու լաքով պատած:

<sup>1</sup> Մի պտղունց կրեմորտարտարի:

— Ի՞նչ է, բան պատահեց, — հարցրեց նա: — Յեռ այնպես վախեցա:

— Վաշինչ, նաւինն ե. յեռ յեկա քեզ հետ, Կատիշ, գործի մասին խոսեկաւ, — ասաւ իշխանը, հողնած նստեկաւ հենց այն բաղկաթափին, վարից վեր կացաւ իշխանադուստրը: — Ինչքան տաքացրել էս, — ասաւ նա, — դե, նստի՛ր աշտեղ, caissons<sup>1</sup>.

— Կարծեցի բան ե պատահել, — ասաւ իշխանադուստրը և իր գեմքի անփափախ քարե-խիստ արտահայտութեամբ նստեց իշխանի գիմաց, պատրաստվելով նրան լսելու:

— Ուղեցի քեկ, mon cousin, բայց չեմ կարողանում:

— Հը, ի՞նչ կա, սիրելիս, — ասաւ իշխան Վասիլին, բռնելով իշխանադուստր ձեռքն ու, ըստ սովորութեան, ցած թեքելով:

Յերեւում էր, վար այդ քնը, ինչ կառն վերաբերում էր շատ բաների, վար ասանց անունը տալու, յերկուսն էր հասկանում ելին արդեն:

Վասների համեմատ անհամաչափ-յերկար, չոր և ուղիղ իրանով իշխանադուստրը անտարբեր և ուղիղ նայում էր իշխանին իր դուրս բնկած դարչ աչքերով: Նա գլուխն ուրրեց և, հառաչելով, նայեց սրբազատիկներին: Նրա այդ շարժումը կարելի չէր բացատրել, թէ վարպետ վշտի ու անձնվիրութեան արտահայտութեան և թէ վարպետ հողնածութեան և շուտով հանդատանալու բողոքն էր: Իշխան Վասիլին այդ շարժումը բացատրեց վարպետ հողնածութեան արտահայտութեան:

— Իսկ ինձ համար, — ասաւ նա, — կարծում ես հեշտ ես je suis éreinté, comme un cheval de poste<sup>2</sup>. Այնուամենայնիվ հեռոց պիտի խոսեմ, Կատիշ, և շատ լուրջ:

Իշխան Վասիլին լսեց, և նրա այտերն սկսեցին նշարդայնաբեւեռն ձգվել մերթ այս, մերթ այն կողմի վրա, գեմքին տալով անհաճա արտահայտութեան, ինչ-վոր չէր յերևում նրա գեմքին, յերբ նա հյուստարաններում էր լինում: Աչքերն էլ այնպես չեցին, ինչպես միշտ. մերթ նայում էլին լպիրշահանքով, մերթ յերկուցով գիտում շուրջը:

Իշխանադուստրը իր չոր, նիհար ձեռներով շնիկը ծնկներին պահած, ուշադիր նայում էր իշխան Վասիլիի աչքերի մեջ. բայց յերևում էր, վոր նա վարեւ հարցաւ լուսթյանը չի թողելու, թեկուզ ստիպւած լինի լսել մինչև առաջատ:

— Այ տեսնում եք, սիրելի իշխանադուստր և քուղինս, Կատերինա Սիմյանովնա, — շարունակեց իշխան Վասիլին, ըստ յերե-

<sup>1</sup> Թոսենք:

<sup>2</sup> Յեռ ուժառուցաւ եմ յեղեկ պատի ձիւս նման:

վույթին, ներքին պայքարով շարունակելով իր խոսքը, — այսպիսի բռնություններն ամեն ինչի մասին պիտի մտածել։ Պետք է մտածել ապագայի մասին, ձեր մասին... Յես ձեզ բոլորիդ զավակներս պես սիրում եմ, ինչպես դիտես։

Իշխանադուստրը շարունակում եր աշխարհ աշքերով ու անշարժ նայել նրան։

— Վերջապես, պետք է մտածել և ընտանիքիս մասին, — բարկացած հրելով առջևի փոքրիկ սեղանը և, առանց խոսակցին նայելու, շարունակեց իշխան Վասիլին, — դու դիտես, կատիշ, վոր դուք՝ Մամոնտով յերեք քույրերդ և մեկ ել կինս, միայն մենք ենք կոմսի անմիջական ժառանգները։ Դիտեմ, դիտեմ, վորքան ծանր և քեզ համար խոսել ու մտածել այսպիսի բաների մասին։ Ինչ համար ել հեշտ չի. բայց, սիրելիս, յես վախճունի մեջ եմ, պետք է ամեն բանի պատրաստ լինել։ Դու դիտես, վոր յես մարդ ուղարկեցի Պիեռի յետևից, վորովհետև կոմսը, նրա պատկերը ցույց տալով, պահանջեց կանչել նրան իր մաս։

Իշխան Վասիլին հարցական նայեց իշխանադուստր, բայց չկարողացավ հասկանալ, թե նա ըմբռնեց արդյոք իր ասածները, թե միայն նայում եր իրեն...

— Յես շարունակ միայն մի բան եմ խնդրում աստծուց, mon cousin, — պատասխանեց իշխանադուստրը, — վոր նա զվա նրան, վոր նրա բարի հոգին խաղաղությամբ թողնի այս...

— Այո, այդ այդպես և, — անհամբերությամբ շարունակեց իշխան Վասիլին, ճաղատելով զինքն, և նորից բարկությամբ դեպի իրեն քաշեց մի կողմ հրած փոքրիկ սեղանը, — բայց, վերջապես... վերջապես, բանն այն է, դու ինքդ դիտես, վոր անցյալ ձմեռ կոմսը կտակ է դրել, վորով իր ամբողջ կարողությունը թողնում է Պիեռին, անտեսելով անմիջական ժառանգներին ու մեզ։

— Ի՞նչ անենք դրել և, — հանդատությամբ ասավ իշխանադուստրը։ — Բայց Պիեռին կտակել չեր կարող։ Պիեռը աղբյրինի զավակ է։

— Ma chère, — ասավ հանկարծ իշխան Վասիլին, սեղանը կրծքին սեղմելով, աշխուժով ու արագարագ, — բայց ի՞նչ կասես, վոր թաղավորին նամակ է զրկած, և կոմսը խնդրում է վորդեպի Պիեռին։ Հասկանում ես, նկատի ունենալով կոմսի ծառայությունները, նրա խնդիրքը կհարգվի...

Իշխանադուստրը ժպտաց, ինչպես ժպտում են այն մարդիկ, վորոնք կարծում են, թե խոսակցից ավելի շատ բան դիտեն զարմի մասին։

— Յես քեզ ավելին կասեմ, — շարունակեց իշխան Վասիլին, խոսակցի ձեռը բռնելով, — նամակը դրվել է, բայց չի ուղարկվել,

և թաղապետն իմացել և այդ մասին: Այժմ խնդիրն այն և, թե արդյոք վաճենչացված և այդ նամակը, թե վաճ: Յեթե վաճ, այն մամանակ, յերբ ամեն ինչ վերջանա, — իշխան Վասիլին հասա-  
չեց, ուղեւով հասկացնել<sup>1</sup> թե ինչ և ուղում ասել ամեն ինչ վերջանա բառերով, — կռախ թղթերը կրանան, կտակը նամակի հետ կ'անձնեն կայսեր, և նրա խնդիրը, հազմանորեն, կ'արդ-  
վի: Պիեռը, իր և սրինական դավակ, կտանա ամբողջ մասան-  
դաւ թխանը:

— Հապա մեր բովինը, — հարցրեց իշխանադուստրը մի այնպիսի հեղձական մոլորով, թե ամեն ինչ կ'արդ և պատահել, բայց այդ յերբեք:

— Mais, ma pauvre Catiche, c'est clair comme le jour<sup>1</sup>. Այն մամանակ միայն Պիեռը կ'ինի սրինական մասնադր, իսկ դուք ճշ այս ել չեք ստանա: Դու պետք և իմանաս, սիրելիս, դրվել են արդյոք կտակն ու նամակը և վաճենչացվել են արդյոք: Յեւ յեթե ինչ-ինչ պատահաներձ մոռացվել են, դու պետք և իմանաս՝ վոր-  
տեղ են գրանք, և դանեւ, վարդահաւ...

— Այդ եր պահաս, — բնդհատեց նրան իշխանադուստրը, հեղ-  
նարեն մարտով ու աչքերի արտահայտութեանը շփոթելով: — Յեւ կ'ին եմ. ձեք կարծիքով մենք բոլորս հիմար ենք. բայց յեւ այդպանք միայն դիտեմ, վոր ապրտինի դավակը չի կարող մա-  
սանդել... Un bâtard<sup>2</sup>, — ավելացրեց նա, կարծելով այդ թարգմա-  
նութեամբ վերջնականացիւ ապացուցել իշխանին, թե վորքան անհրաժեշտ են նրա ասածները:

— Ինչպէս դու չես հասկանում, վերջապէս, կտակը: Դու այն-  
քան խելացի յես. ինչպէս չես հասկանում, վոր յեթե կոմսը թա-  
ղապետն նամակ և գրել, վորով խնդրում և Պիեռն ճանաչել սրի-  
նապար դավակ, նշանակում և, Պիեռն այլեւ Պիեռ չե, այլ կոմս  
Բեդուխով, այն մամանակ նա, կտակի համաձայն, կտանա բոլորը:  
Յեւ յեթե կտակը նամակի հետ միասին վաճենչացված չեն, այն  
մամանակ քեզ կ'ենա միայն միտիթարովել, վոր դու յեղել ես առա-  
քինի et tout, ce qui s'en suit<sup>3</sup>. Այս ճիշտ և:

— Յեւ դիտեմ, վոր կտակը դրված և. բայց դիտեմ նույնպէս,  
վոր այն իսկականի արմեք չունի, և դուք ինձ, կարծեմ, բոլորս-  
վին հիմարի տեղ եք դնում, mon cousin, — ասով իշխանադուս-  
տրը այնպիսի արտահայտութեամբ, վորով խոսում են կանայք,

<sup>1</sup> Բայց, թանկապէս կտակը, դա լույսի պէս պարզ և:

<sup>2</sup> Ապրտինի:

<sup>3</sup> Յեւ բոլորք, ինչ բնում և աշտեղից:

կարծեկով, թե իրենց ասածը սրամիտ ու վիրավորական մի բան է:

— Միրելիդ իմ, իշխանադուստր Կատերինա Սեմյոնովնա, — անհամբերությամբ խոսեց իշխան Վասիլին: — Յես քեզ մոտ յեկել եմ վոչ թե նրա համար, վորպեսզի իրար վիրավորենք, այլ նրա համար, վորպեսզի իրբև հարազատի, լավ, բարի, խոսական հարազատի հետ խոսենք հենց քո շահերի մասին: Յես քեզ տասերսրդ անգամն ե ասում եմ, վոր յեթե թագավորի անունով նամակ ե Գրեոի ողախն կտակ կա կոմսի թղթերի մեջ, այդ դեպքում, դու ազամայակս, ե քույրերդ — ժառանգ չեք: Յեթե ինձ չես հավատում, հավատա գիտցող մարդկանց. յես քիչ առաջ խոսեցի Դմիտրի Ռուսկոբիչի հետ (դա տան փաստաբանն եր), նա յեկ նույնն ասավ:

Ըստ յերևույթին, իշխանադուստր մաքերի մեջ հանկարծ ինչ վոր փոփոխություն տեղի ունեցավ. նուրբ շրթները դունաավեցին (աչքերը մնացին նույնը) ե ձայնը, յերբ սկսեց խոսել, բեկբեկվում եր այնպիսի յեղեկներով, վոր նա ինքն ել, յերեկ, չեք սպասում:

— Այդ լավ կլիներ, — ասավ նա: — Յես վոչ մի բանի վրա աչք չեմ ունեցել ե հունեմ:

Նա շանը ցած քցեց ծնկներից ե դիտտի ծալքերն ուղղեց:

— Ահա քեզ շնորհակալություն, անհա քեզ յերախտագիտություն, այն մարդկանց հանդեպ, վորոնք ամեն տեսակ զոհողություն են արել նրա համար, — ասավ նա: — Սքանչելի յե: Հիանալի: Ինձ վոչ մի բան ել հարկավոր չի, իշխան:

— Այո, բայց դու մենակ չես, քույրեր ունես, — պատասխանեց իշխան Վասիլին:

Բայց իշխանադուստրը նրան չեք լսում:

— Այո, յես այդ վաղուց դիտեյի, բայց մոռացել եյի, վոր բացի ստորությունից, խաբելությունից, նախանձից, բանասերությունից, բացի ապերախությունից, ամենտես ապերախությունից բացի, յես ուրիշ վաչինչ չեյի կարող սպասել այս տան մեջ...

— Բայց արդոք կտակի տեղը դիտեմ թե վոչ, — հարցրեց իշխան Վասիլին, ե նրա այտերն ավելի ցնցվեցին, քան առաջ:

— Այո, յես հիմար եյի, յես դեռ հավատում եյի մարդկանց ե սիրում եյի նրանց ու զոհարեբում ինձ: Բայց հաջողություն ունեն միայն նրանք, ովքեր ստոր են ու զարկելի Դիտեմ ում զավերն են դրանք:

Իշխանադուստրն ուղեց վեր կենալ տեղից, բայց իշխանը բռնեց նրա ձեռը: Իշխանադուստրն այնպիսի տեսք ունեւր, վոր կար-

մեկ միտնդամից հիասթափելի էր մարդկային վողջ ցեղից. նա գայլու չվեով նայում էր խոտակցին:

— Դեռ մամանակ կա, բարեկամս: Հիշիր, Կատիշ, վոր բոլորն արվել է պատահաբար, ցամառն մեջ, հիվանդության բաղնիքն, ուստիս մոտացիկ: Մեր պարտականությունն է, սիրելիս, ուղղել այդ սխալը, թեթևացնել նրա վերջին բաղնիքը նրանով, վոր թույլ չտանք նրան այդ անարդարությունն անելու, չթողնենք, վոր նա մեանի այն գիտակցությամբ, թե ինքը դժբախտացրել է այն մարդկանց...

— Այն մարդկանց, վորոնք ամեն ինչ դժարերել են նրա համար, — վրա բերով իշխանադուսարը, ջանալով նորից վտար յեկել, բայց իշխանը չվեղեց, — ինչ-վոր նա յերբեք չի կարողացել հնաճառել: Վոյ, mon cousin, — ափեացրեց նա հառաչելով, — ախր հիշեմ, վոր աշխարհում վարձատրություն չի կարելի պահել, վոր այս աշխարհում չկա վճի աղնվություն, վճի արդարություն: Այս աշխարհում պետք է լինել խորամանկ ու շար:

— Ե, voyons<sup>1</sup>, հանդուսալիր. յես գիտեմ քո բարի սիրտը:

— Վոյ, յես շար սիրտ ունեմ:

— Եես գիտեմ քո սիրտը, — կրկնեց իշխանը, — դժաճառում եմ քո բարեկամությունը և կցանկայի, վոր դու նույն կարծիքն ունենաս իմ մասին: Հանդուսալիր և parlons raison<sup>2</sup>, քանի զեռ մամանակ կա — դու ցե մի ամբողջ որ, դու ցե՝ մի ժամ: Պատմիր բոլորը, ինչ գիտես կտակի մասին, և, վոր գլխավորն է, ասե՛մ վորտեղ է պահված. դու պետք է վոր իմանաս: Մենք հենց հիմա կվերցնենք այն ու ցույց կտանք կոմսին: Նա, հափանդուն, մոտացել է արդեն այդ կտակը և կուզեր վաճառեցնել այն Դու. հասկանում ես, վոր իմ միակ ցանկությունն է — սրբությամբ կատարել նրա կամքը: յես միայն զրա համար եմ յեկել այստեղ: Եես այստեղ եմ միայն նրա համար, վոր սղնեմ ձեզ և նրան:

— Հիմա յես ամեն ինչ հասկացա: Դիտեմ ում գավերն են դրանք: Դիտեմ, — ասավ իշխանադուսարը:

— Կարեորն այդ չէ, հոգիս:

— Դա ձեր protégée-ն<sup>3</sup> է, ձեր սիրելի իշխանուհի Տրուբեցկայան, Աննա Միխայլովնան, վորին իբրև պապուհի չեյի պահի, այդ զգվելի, գարշելի կնոջը:

— Ne perdons point de temps<sup>4</sup>.

<sup>1</sup> Տեսնենք:

<sup>2</sup> Լուրջ խոսենք:

<sup>3</sup> Հափանավորայլը:

<sup>4</sup> Ժամանակ չկորցնենք:



— Ահ, մի ասեք: Անցյալ ձմեռ յեկա՞վ ու մեր մասին, մանա-  
վաճաղ Sophie-ի մասին, այնպիսի զգովելի, զարշելի բաներ պատմեց  
կոմսին, — կրկնել չեմ կարող, — վոր կոմսը հիվանդացա՞վ և յեր-  
կու շարաթ չեր ուղում մեզ տեսնել: Դիտեմ, վոր այդ ժամանակ  
և նա գրեւ այդ զարշելի, զգովելի թուղթը. բայց կարծում եյի, թե  
այդ թուղթը վռչ մի արմեք չունի:

— Nous y voilà<sup>1</sup>, բայց ինչ՞եւ առաջուց վռչինչ չասիւր ինձ:

— Նկարագրող պորտֆելի մեջն և, վոր միշտ բարձի տակ և  
պահում: Այժմ յես գիտեմ, — ասա՞վ իշխանադուստրը, չպատասխա-  
նելով: — Այո, յեթե յես ունեմ վորեւ մեղք, մի մեծ մեղք, դա՛  
այդ զարշելի կնոջ նկատմամբ ունեցածս ատելութունն և, —  
գրեթե գոռաց իշխանադուստրը, բոլորովին կերպարանափոխվե-  
լով: — Յե՞վ ինչ՞եւ համար և նա խցկվում այս տունը: Բայց այս  
բոլորը յես նրա յերեսովը կտամ: Կգա դրա ժամանակն ել:

## XXII

Մինչ այսպիսի խոսակցութուններ եյին տեղի ունենում ընդու-  
նարանում ու իշխանադատեր սենյակում, Պիեռն (վորի յետեից  
մարդ եր ուղարկված) ու Աննա Միխայլովնան (վորը կարեւոր հա-  
մարեց գալ նրա հետ) կառքով մտան կոմս Բեզուխովի բակը: Յերբ  
կառքի անիվները մեղմադին շրջյունով անցան լուսամուտների  
առջև սփռած ծղնոտի վրայով, Աննա Միխայլովնան, միտթարա-  
կան խոսքերով իր ուղեկցին դառնալով, նկատեց, վոր Պիեռը քնել  
և կառքի անիւնում, ու զարթեցրեց: Արթնանալով Պիեռը,  
Աննա Միխայլովնայի յետեից, դուրս յեկա՞վ կառքից և այդ բո-  
պիսին միայն հիշեց իրեն սպասող մահամերձ հոր հետ ունենալիք  
տեսակցութունը: Նա նկատեց, վոր կառքը կանգնեց վռչ թե չքա-  
մուտքի առաջ, այլ յետին մուտքի առաջ: Այն ժամանակ, յերբ  
Պիեռն իջնում եր կառքից՝ քաղցնի հաղուստով յերկու մարդ  
շտապ-շտապ մուտքի առջևից վաղցին-անցան պատի ստվերը:  
Կանգ առնելով Պիեռը տան ստվերում նշմարեց ևս միքանի այդ-  
պիսի մարդ: Բայց վռչ Աննա Միխայլովնան, վռչ լաքեյը, վռչ  
կատապանը, վորոնք չեյին կարող նկատած չլինել այդ մարդկանց,  
ուշադրություն չդարձրին նրանց վրա: Յերեւի, այդպես ել պետք և,  
վռնեց Պիեռն ինքն իրեն ու հետեց Աննա Միխայլովնային: Աննա  
Միխայլովնան արագ-արագ բարձրանում եր թույլ լուսավորված  
նեղ քարե սանդուղով, կանչելով յետ ֆեսացող Պիեռին, վորը թեև  
չեր ել հասկանում, թե առհասարակ ինքն ինչու համար պետք և

<sup>1</sup> Բանն ել հենց այդ և:

զնաք կոմսի մաս, և մանապէս, թէ ինչո՞ւ պետք է բարձրանար յետին սանդուղիս, բայց նայելով Աննա Միխայլովնայի ինքնա-  
մասան՝ ու շատաւ քայլերին, ինքն իր մեջ վառեց, թէ դա անհրա-  
մեջութիւնն պետք է: Անդու զի կրտսէր քիչ մնաց նրանց պրոբլէմին  
դուշերը ձեռներին բռնած ինչ-ժոր մարդիկ, ժոր հաստ կոշիկները  
աղմուկով յեկան նրանց դեմ: Այդ մարդիկ սեղմվեցին պատին՝  
Պիետին ու Աննա Միխայլովնային հանապա՞րհ տալու, և ամենեկին  
չգործադան նրանց տեսնելով:

— Իշխանագրասորենքի հարկարածինն այստեղ է, հարցրեց  
Աննա Միխայլովնան նրանցից մեկին:

— Այստեղ է, — պատասխանեց լարեյր համարձակ, բարձր ձայ-  
նով, կարծես հիմա արդեն ամեն բան կարելի չէր, — դուք ձախ  
կողմն է, տիրուհի:

— Դուք, կամե՛ն ինձ չի կանչել, — ասով Պիետը, յերբ հասավ  
սանդուղի հարթակը, — յետ կոնայի սենյակը:

Աննա Միխայլովնան կանչ ատով, ժոր Պիետին հալածարդի:

— Ah, mon ami, — ասով նա, ձեռք նույն շարժումով (ինչ-  
պես աստիճան դարձու՞նք) Պիետի ձեռին դիպցնելով. — croyez, que  
je souffre autant, que vous, mais soyez homme<sup>1</sup>.

— Բուհայե՛ն, դժմո՛ւ, — հարցրեց Պիետը, ակնոցների միջից քաղց-  
րութեամբ նայելով Աննա Միխայլովնային:

— Ah, mon ami, oubliez les torts qu'on a pu avoir envers  
vous, pensez que c'est votre père... peut être à l'agonie. — Իշխա-  
նուհին հասաչեց: — Je vous ai tout de suite aimé comme mon  
fils. Fiez vous à moi, Pierre. Je n'oublierai pas vos intérêts<sup>2</sup>.

Պիետը բան չէր հասկանում. նորից նրան ել ավելի թվաց, թէ  
այդ քայտն այդպես էլ պիտի լինի, և նա հնազանդորեն հետեց  
Աննա Միխայլովնային, ժոր դուք բացել էր արդեն:

Դուք տանում եր յետին մուտքի միջանցքը: Անկյունում  
նստած եր իշխանագրասորենքի ձեր-պատասխարը և գուլպա չէր դոր-  
ձում: Պիետը յերբեք չէր յեղած այդ հարկարամնում, դրա դոյւ-  
թյան մասին նույնիսկ դադարում չուներ: Աննա Միխայլովնան  
իրենց հետեւից վաղո՞ղ՝ մասուցարանով ջրաման տանող աղջկան  
(նրան սիրելի ու աղափնյակ անվանելով) հարցրեց իշխանագրա-  
սորենքի ասողջութեամբ, և քարշա միջանցքով Պիետին տարավ առաջ:  
Միջանցքի ձախակողմի առաջին դուռը, տանում եր իշխանա-

<sup>1</sup> Հաժմապահը, յետ ձեզնից պակաս չեմ տանջվում. բայց աղմուկը կացեք:

<sup>2</sup> Դատարար, բարեկամս, յի՞թե անբարձր յետ յեղել դեղի ձեզ: Հիշեցեք,  
ժոր նա ձեր հայրն է... Դուք հոգեարքի մեջ է Յես ձեզ վորդու պես սիրեցի:  
Հաստեցեք ինձ, Պիետ Յես ձեր շահերը չեմ մոռնում:

դուստրները բնակելի սենյակները: Զրաման տանող սպասուհին շտապելուց (ինչպես ամեն րան այդ բոլորին այդ տան մեջ արվում էր շտապ) դուռը չձածկեց յետևից, և Պիեռն ու Աննա Միխայլովնան, անցնելիս, ակամա ներս նայեցին այն սենյակը, ուր խոսակցում էին մեծ իշխանադուստրը և իշխան Վասիլին իրար մոտ նստած: Անցնողներին տեսնելով՝ իշխան Վասիլին անհամբեր շարժում արավ և յետ քաշվեց, իշխանադուստրը թուով տեղից և կատաղի շարժումով, ամբողջ ուժով շրթկացրեց դուռն ու փակեց:

Այդ շարժումն այնքան անսովոր էր մշտապես հանդիստ իշխանադուստեր համար և իշխան Վասիլիի դեմքին արտահայտված վախն այնքան անհամապատասխան նրա վեհաթյանը, վոր Պիեռը, կանգ առնելով, ակնոցների միջից հարցական նայեց իր առաջնորդուհուն: Աննա Միխայլովնան զարմանք չարտահայտեց, նա թեթևակի ժպտաց միայն ու հառաչեց, ասելով կարծես, թե այդ բուրբը նա սպասում էր:

— Soyez homme, mon ami, c'est moi qui veillerai à vos intérêts<sup>1</sup>, — ասավ նա ի պատասխան Պիեռի հայացքին և ավելի արագ-արագ քայլեց միջանցքով:

Պիեռը չէր հասկանում, թե ինչ կա, և մանավանդ, թե՞ «veiller à vos intérêts»<sup>2</sup>, բայց հասկանում էր, վոր այդ բոլորն այդպես էլ պիտի լինի: Միջանցքով դուրս յեկան կիսով չափ լուսավորված մի դահլիճ, վորը կից էր կոմսի ընդունարանին: Դա արդեն ստոր և չքեղ կահավորված սենյակներից մեկն էր՝ վոր Պիեռին ծանոթ էր չքամուտքի դռնից: Բայց այդ սենյակի մեջտեղը դրված էր մի դատարկ լողարան (վաննա) և դորդի վրա էլ ջուր էր թափած: Վստածայրերի վրա քայլելով նրանց դեմն յեկան, առանց նրանց վրա ուշադրութուն դարձնելու, մի սղոստովոր ու մի դպիր՝ բուրվատը ձեռին՝ նրանք մտան Պիեռին ծանոթ ընդունարանը, վորի խաղաղական յերկու լուսամուտը նայում էին ձևոսային պարտիզին, և վորի մեջ էր Յեկատերինայի խոշոր կիսանդրին ու հասակովը մեկ նկարված պատկերը: Նույն մարդիկ, գրեթե նույն դիրքով նստած՝ շուրջով խոսում էին ընդունարանում: Բուրբը միանգամից լոցեցին ու նայեցին ներս մտնող լացակուժած, դունատ դեմքով Աննա Միխայլովնային և դեր, մեծամարմին Պիեռին, վոր գլուխը կախ, հնազանդորեն հետևում էր նրան:

Աննա Միխայլովնայի դեմքին արտահայտվեց վճռական բոլորն հասնելու գիտակցութունը. չթողնելով Պիեռին հեռանա իրենից՝

<sup>1</sup> Տղամարդ յեղեր, բարեկամս. իսկ յես կհոգամ ձեր շահերի մասին

<sup>2</sup> Կհոգամ ձեր շահերի մասին:

նա պետերբուրգցի գործնական կնոջ՝ ձեկերով ներս մտալ ափելի համարձակ, քան աստվառայան։ Աղաւմ եր, վար իր ընդունելութեանն ապահովման է, վարովհետեւ իր հետ տանում է այն մարդուն, վորին հիշմանց տեսնել է ուղում։ Արադ մի հայացք զցելով սենյակում գտնվողներէ վրա և տեսնելով կոմսի խոստովանահարը, նա, վոչ թէ կոանալով, այլ հանկարծ հասակով փոքրանալով, մանրիկ ու արագ քայլով մոտեցալ խոստովանահարը և խոնարհութեամբ ընդունեց նախ մեկի, ապա մյուս հոգեւոր անձի արհեստքայնը։

— Փոքր աստծո, վար հասար, — ասալ նա հոգեւորականին, — մենք՝ բոլոր հարադատներս, այնպէս վախենում եյինք։ Այս յերիտասարդն ա՛նձ — կոմսի վորդին է, — ափելացրեց նա ցած ձայնով։ — Սարսափելի վայրկյան է։

Այս ասելով՝ նա մոտեցալ բռնկին։

— Cher docteur, — ասալ նա, — ce jeune homme est le fils du comte... y a-t-il de l'espoir? <sup>1</sup>

Բռնկին անխոս, արագ շարժումով աչքերն ու ուսերը բարձրացրեց վեր։ Աննա Միխայլովնան ճիշտ նույն շարժումով վեր բարձրացրեց ուսերը և աչքերը փակեց, ապա, հասաչելով, մոտեցալ Պիեռին և աւանձին մի հարգանքով ու մեղմ տխրութեամբ ասալ նրան։

— Ayez confiance en Sa miséricorde <sup>2</sup>, — ասալ նա, ցույց տալով բազմոցը, վորպէս Պիեռը նստի՝ իրեն սղասի, իսկ ինքը անձայն քայլերով զնաց զեղի այն դուռը, վորի վրա եյին ուղղված բոլորի հայացքները, ու հաղիվ լսելի ձոնչացով դուռը բանալով՝ անհետացալ նրա յետեւ։

Պիեռը, վորոշած լինելով ամեն բանում հնազանդել իր առաջնորդահուն, զնաց-նստելու նրա ցույց տված բազմոցի վրա։ Հենց վար Աննա Միխայլովնան անհետացալ Պիեռը նկատեց, վոր սենյակում գտնվողներէ հայացքները ափելի քան հետաքրքրութեամբ ու կարեկցութեամբ ուղղվեցին իր վրա։ Նա նկատեց նույնպէս, վոր աչքով իրեն ցույց տալով բոլորը փոփոսցին, կարծես յերկյուղով և անգամ ստորաքարշութեամբ։ Նրան հարգանք եյին ցույց տալիս, ինչ վար առաջ յերեք չեյին անում։ Նրան անձանոթ մի կին, վոր խոսում էր հոգեւորականների հետ, վեր կացալ տեղից և առաջարկեց այն Պիեռին. աղյուսանալ վերջրեց Պիեռի ձեռից ընկած ձեռնոցն ու իրեն տվալ. բռնկները հարգալիւ լե-

<sup>1</sup> Այս յերիտասարդը — կոմսի վորդին է... Հայտ կա արդարեւ

<sup>2</sup> Վստահեցե՛ք նրա վողորմածութեանը։

ցին, յերբ Պիեռն անցնում էր իրենց մատով, և մի կողմ քաշվեցին, վոր տեղ տան նրան: Պիեռն սկզբում ուզեց մի ուրիշ տեղ նստել, վոր տիկնոջն անհանդիստ չանի, ուզեց ինքը վերցնել ձեռնոցը և անցնել բմիչկների կողքից, վոր բնավ էլ ճանապարհի վրա չէին կանգնած. բայց հանկարծ դգաց, վոր դա անվայել բան էր: Դրանք, դգաց, վոր ինքն այս գիշեր այն անձնավորությունն է, վոր պարտավոր է ինչ-վոր սարսափելի և բոլորի կողմից սպառվող մի ձեռք կատարել, ուստի և պետք է ընդունի բոլորի մատուցած ծառայությունները: Նա անխոս ընդունեց ձեռնոցը աղյուսանախից, նստեց տիկնոջ տեղը, խոշոր ձեռները դնելով հավասար պահած ծնկների վրա՝ յեղիպտական արձանի միամիտ գիրքով, ու ինքն իր մեջ վճռեց, թե այդ բոլորը հենց այդպես էլ պետք է լինի, և վոր այս յերեկո՝ իրեն չկորցնելու և հիմարություններ չանելու համար, կարիք չկա իր ուղածի պես վարվել, այլ ամբողջովին պիտի հանձնվի իրեն գեկավարողների կամքին:

Ձանցավ յերկու րոպե, իշխան Վասիլին կաֆտանով, յերեք աստղ կրծքին, գլուխը բարձր պահած, վեհորեն մտալ ներս: Նա առավոտվանից ավելի նիհարած էր յերևում. աչքերը սովորականից ավելի խոշորացել էին, յերբ նստողներին դիտելով նկատեց Պիեռին. մոտենալով՝ ձեռք բռնեց (ինչ-վոր յերեք չէր անում առաջ) ու ցած քաշեց, կարծես ուզում էր փորձել, թե ամուր և արդյոք:

— Courage, courage, mon ami. Il a demandé à vous voir. C'est bien<sup>1</sup>, — և ուզեց հեռանալ:

Բայց Պիեռը հարկ համարեց հարցնել.

— Ի՞նչպես և առողջությունը...

Նա շփոթվեց, չիմանալով հարմար և արդյոք մեծնողին կոմս անվանել, իսկ հայր անվանել ամաչում էր:

— Il a eu encore un coup, il y a une demi-heure. Մի հարված էլ յեղալով: Courage, mon ami...<sup>2</sup>

Պիեռը մտքերի մի այնպիսի անորոշ վիճակի մեջ էր, վոր հարվածն րառը լսելով, նրան վորևե առարկայի հարված պատկերացավ: Ու տարակուսած նայեց իշխան Վասիլին և հետո արդեն գլխի ընկավ, վոր հարված կոչվում է հիվանդությունը: Իշխան Վասիլին անցնելիս մի յերկու խոսք ասավ խոռենին և վտտի ծայրերի վրա դնաց դեպի դուռը: Նա վտտի ծայրերի վրա չէր կարո-

<sup>1</sup> Մի վնասեր, մի վնասեր բարեկամս: Նա փափագում է բեղ տեսնել Սյոլ լով և:

<sup>2</sup> Գեռ ժամ առաջ մի հարված էլ ստացավ: Մի վնասեր բարեկամս:

դանում քայլել և թռչկոտում եր ամբողջ մարմնով: Նրա յետևից  
դնաց մեծ իշխանադուստրը, հետո անցան հոգևորականներն ու  
ղայրենիքը, սպասավորները նույնպես մասն ներս: Այդ դռան  
յետևից լսվեց շարժում, և վերջապես, նույն դռնառ, բայց իր  
սպարապետությամբ յուր կատարելու հաստատակամությամբ, ներս  
վազեց Աննա Միխայլովնան և, ձեռք Գրեոի ձեռին դիպցնելով,  
ասավ:

— La bonté divine est inépuisable. C'est la cérémonie de l'extrême onction, qui va commencer. Venez<sup>1</sup>.

Գրեոն, փափուկ զորդի վրայով դնացմամբ ներս և նկատեց,  
վար աղյուսառնար, անձանթի կիներ և սպասավորներից մեկը —  
բաշորք հետևեցին իրեն, կարճես աշմայլես կալիք շկար թուշտվու-  
թյուն խնդրել այդ սենյակը մանելու:

### XXIII

Գրեոն լսով ծանոթ էր այս մեծ, սրունաշարքով յերկուսի բա-  
ժանված կամարակապ սենյակը՝ ամբողջովին պարսկական դարդե-  
րով պատած: Սյուների յետևի մասը, — վարի մի կողմը դրված եր  
բարձր կարմիր փայտյա մահճակալը՝ մետաքսյա վարադույրներով  
շրջափակված, իսկ մյուս կողմը՝ սրբապատկերների պահարանը, —  
լուսավորված եր կարմիր ու պսճառ լույսով, ինչպես լուսավոր-  
ված են լինում յեկեղեցիները յերեկոյան ժամերդության պահին:  
Սրբապատկերների պահարանի լուսավորված դարդերի ներքո զըր-  
ված եր յերկար փլաերյան մի բազմոց, ու բազմոցի վրա, գլխա-  
կողմը ձառնափայլ-ճերմակ, դեռ չարորված, ըստ յերևույթին, նոր  
միայն փոխած բարձերով շրջապատած, մինչև պտկառեղջ վառ-  
կանաչ վերմակով ծածկված՝ պառկած եր Գրեոն լսով ծանոթ իր  
նոր վեհաշուք կերպարանքը — կամ Բեղուխովը՝ առայժմ հիշեցնող  
նույն ճերմակ մաղերի բաշով լայն ճակատի վրա՝ և դեղեցիկ կար-  
մրադեցին դեմքի բնորոշ-ազնիվ խոշոր կնճիռներով: Նա պառկած  
եր ուղից սրբապատկերների ներքո. յերկու հասա խոշոր ձեռները  
դուրս ելին հանված վերմակի տակից ու դրված ելին նրա վրա:  
Լեփը դեպի ցած դարձրած աջ ձեռի բխամատի ու ցուցամատի առան-  
քում դրված եր մի մեղրամոմ, վորը բռնել եր, բազմոցի մյուս կող-  
մից թեքված ձերուռի սպասավորը: Բազմոցի գլխակողմը շարվել  
ելին հոգևորականները՝ իրենց փառահեղ, շոգշողուն զգեստներով,  
վորանց վրա փռված ելին նրանց յերկար մաղերը, ու վառ մոմերը

<sup>1</sup> Ասածու. փոքրմությունն անսահման և: Վերջին սծումը հիմա կսկսվի  
Յեկեր:

ձեռներին՝ հանդարտ-հանդիսավոր կարգ եյին կատարում: Նրանցից մի քիչ յետ կանգնել եյին կրտսեր իշխանադուստրները՝ Թաշկինակները ձեռներին ու աչքներին, իսկ նրանց առջև մեծը, Կատիշը՝ զայրացկոտ ու վճռական տեսքով: Նա անթարթ աչքերով նայում էր սրբապատկերներին, և կարծես ասում բոլորին, թե ինքը պատախանատու չի իր համար, յեթե յետ նայի: Աննա Միխայլովնան՝ հեղ վշտի և թողության դրոշմը դեմքին, և անծանոթ տիկինը կանգնել եյին դռան մոտ: Իշխան Վասիլին կանգնել էր դռան մյուս կողմը, բազմոցին մոտիկ, Թաշկա ավտոի յետևը, վորի թիկունքն արել էր իր կողմն ու մոմ բռնած ձախ ձեռը դրել վրան, իսկ անվով խաչակնքում էր յերեսը, ամեն անգամ աչքերը վեր բարձրացնելով, յերբ մատները դնում էր ձակատին: Նրա դեմքն արտահայտում էր խաղաղ բարեպաշտութուն և հնազանդություն աստծու կամքին ու կարծես ասում էր. «Եթե դուք այս զգացումները չեք հասկանում, ավելի վատ ձեզ համար»:

Նրա յետև կանգնել եյին աղյուտանալը, բժիշկները և աղամարդ սպասավորները. աղամարդիկ և կանայք կանգնել եյին առանձին, ինչպես յեկեղեցում: Բոլորն էլ լուռ խաչակնքում եյին յերեսները. լսվում եյին միայն աղոթքների ընթերցումը, զուտը թով ձայներով հնչող յերգեցողությունը և, լուսթյան վայրկյաններին, վառերի տեղափոխում ու հառաչանքներ: Աննա Միխայլովնան՝ հողածու դեմքով, վոր ցույց էր տալիս, թե ինքը դիտելն է անում, անցավ սենյակի ամբողջ յերկարությամբ և, Պիեոին մոտենալով, մոմը տվավ նրան: Պիեոն վառեց այն, և շրջապատողներին դիտելով զրազված, սկսեց մոմ բռնած ձեռով խաչակնքել յերեսը:

Կարմրադեմ ու խնդուն կրտսեր իշխանադուստր Սոֆին, խալավորը, նայում էր Պիեոին. հանկարծ մպտաց, դեմքը ծածկեց Թաշկինակով ու յերկար չբացեց. բայց, նորից Պիեոին նայելով, կրկին ծիծաղեց: Նա, ըստ յերևութին, զգում էր, վոր անկարող և առանց ծիծաղի նայել նրան, բայց չէր ել կարողանում իրեն զբաղել, վոր չնայի, ուստի զայթակղությունից խուսափելու համար անցավ սյունի յետևը: Արարողության կիսին հողեորականների ձայնը կտրվեց հանկարծ և նրանք ինչ-վոր փափտացին իրար. կոմսի ձեռը բռնող ծեր սպասավորը վեր կացավ ու դիմեց կանանց, Աննա Միխայլովնան առաջ յեկավ և, հիմանդի վրա կուռնալով, նրա յետևից, մատի շարժումով իր մոտ կանչեց Լուսինին: Ֆրանսուցի-բժիշկը, — վոր առանց մոմի, հենվել էր սյունին՝ ոտար-յերկրացու մի այնպիսի հարգալիր դիրքով, վոր ցույց է տալիս, թե չնայած դաժանության տարբերության, ինքը հասկանում և



կատարվող ձևերի ամբողջ կարեւորութեանը և նույնիսկ համայնութեան և առաջին դրան, — անձայն բայցեւրով մտակցով հիմնադրին, իր նուրբ ապիտակ մասններով վերցրեց նրա մեղք կանաչ վերմակի վրայից և, շուտ դառով, դարկեցակր ընկեց ու սկսեց մտածել: Հիմնական ինչ-մոր բան տվին խմելու, շարժվեցին, իրար անցան նրա շուրջը, ապա նորից բոլորը դնացին իրենց տեղերը, և արարողութեանը վերակսմեց: Այս ընդմիջումի մասնակ Պիեռը նկատեց, մոր իշխանն Վասիլին դուրս չեկավ իր թիկնաթաղի յետից և նույն տեսքով, մոր ցույց եր առաջին թե ինքը դիտի ինչ և անում, և թե տվելի վրա ուրիշների համար, մոր այդ չեն հասկանում, չմտեցով հիմնադրին, այլ նրա կողքից անցնելով, դնաց-միացավ մեծ իշխանապետեր ու նրա հետ միասին անցան ննջարանի խորքը, դեպի թափշտ վարադուլներով պատած մանակալը: Ապա մանակալի մտքից յերկուսն ել՝ թե իշխանը, թե իշխանապետաբաններն յթացան յետին դռնով, բայց արարողութեան վերջում մեկը մյուսի յետից վերադարձան իրենց տեղերը: Պիեռն այդ հանդամանքի վրա մյուս բաներից տվելի ու շարքութեան շարժից, մի անգամ ընդմիջտ վարձած լինելով մտքում, թե բոլորը, ինչ կատարվում և այս յերեկո, այդպես ել անհրաժեշտորեն հարկավոր և Երեւոյնդութեանը դադարեց և լսվեց խոստովանանք ձայնը, մոր հարգանքով շնորհավորում եր հիմնադրին՝ հարգողութեան ընդունելու ասթիվ: Հիմնադր պատկած եր առաջին պես անկենդան ու անշարժ: Նրա շուրջն ելի իրար անցան, լսվեցին բայցեր ու փոփոցներ, վարանցից ասանձապես ջակվում եր Աննա Միխայիլովնայի ձայնը:

Պիեռը լսեց, թե ինչպես նա ասավ.

— Պեռք և հիմնադրին անպատճառ փոխադրել մանակալ, այդտեղ վաշ մի կերպ չի լինի:

Բմիշկները, իշխանապետաբաններն ու սպասավորներն այնպես ելին շրջապատել հիմնադրին, մոր Պիեռն ալիս չեր տեսնում այն ապիտակ բաշով կարմրա-դեղին գլուխը, մորը, չնայած մոր Պիեռը տեսնում եր ուրիշ դեմքեր ել, չեր հետանում նրա աչքից արարողութեան ամբողջ ընթացքում: Բազմաբջ շրջապատող մարդկանց զգույշ շարժումներին Պիեռը գլխի ընկավ, մոր մահամերձին վերցնում-տեղափոխում են:

— Ձեռն բռնիր, այդպես կրցես, — լսվեց սպասավորներից մեկի յերեկոյն գլխի շշուռը, — ներքեից... մեկն ել, — ասում էին ձայններ, և մարդկանց ծանր շնչոտութեաններն ու փոռնափոռնումները արագացան, կարճես ծանրութեանը, մոր ասանում էին, իրենց ուժից վեր եր:

Հիվանդին տեղափոխողները, վորոնց թվումն էր և Աննա Միխայլովնան, հավասարվեցին Պիեոին, և Պիեոն անցողակի նրանց մեջքերի ու ծոծրակների յետևից տեսավ հիվանդի բաց, բարձր, ճարպակալած կուրծքը, հաստ ուսերը, վոր մարդիկ, Թեատակերից բռնելով, բարձրացրել էին վեր, և ճերմակ դանդրահեր առյուծի գլուխը։ Այդ գլուխը՝ իր անսովոր լայն ձակաստով ու այտասկընկույ, գեղեցիկ զգայական բերանով և սառը, վսեմ հայացքով, այլանդակված շեր մահվան մերձավորութունից։ Նույնն էր, ինչ վոր յերեք ամիս առաջ տեսել էր Պիեոն, յերբ կամար իրեն՝ Պիեոին ճանապարհ էր դնում Պետերբուրգ։ Բայց այդ գլուխն անզոր կերպով որոշվում էր փոխադրողների անհավասար քայլերից, ու ստան, անտարբեր հայացքը չդիտեր ինչի վրա կանգ առնի։

Մի քանի բուսեյում վերջացավ մահճակալի շուրջը տեղի ունեցող իրարանցումը։ Հիվանդին տեղափոխողները ցրվեցին։ Աննա Միխայլովնան ձեռք դիպրեց Պիեոի ձեռին և ասավ. «Venez»<sup>1</sup>, Պիեոն նրա հետ միասին մոտեցավ մահճակալին, վորի վրա, հանդիսավոր դիրքով, վոր, յերևի, կապ ուներ հենց նոր կատարված խորհուրդի հետ, պառկած էր հիվանդը՝ գլուխը վեր, բարձրին դրած։ Նրա ձեռները՝ արիւր դեպի ցած՝ դրված էին վերմակի վրա։ Յերբ Պիեոն մոտեցավ կաման ուղիղ նրան նայեց, բայց նայեց մի հայացքով, վորի իմաստն ու նշանակութունը մարդ չի հասկանում։ Այդ հայացքը կամ բացարձակապես վոշինչ շեր ասում, բացի միայն այն, թե քանի վոր աչքեր կան, պետք է նայել վորեւե բանի, կամ շատ բան էր ասում։ Պիեոն, չիմանալով ինչ անել, կանգ առավ ու հարցական նայեց իր առաջնորդուն։ Աննա Միխայլովնան աչքերով ցույց տվեց հիվանդի ձեռը և շուրթերով ողային համբույր ուղարկեց այդ ձեռին։ Պիեոն, վերմակին չդիպչելու համար, մեծ ճիգով յերկարեց վիզը, կատարեց Աննա Միխայլովնայի պատվերը — համբուրեց հոր լայնոսկր ու մոտ ձեռը։ Կոմսի վաշ ձեռք ցնցվեց, վաշ էլ դեմքի մկաններից մեկը։ Պիեոն կրկին հարցական նայեց Աննա Միխայլովնային, հարցնելով, թե հիմա ինչ անի։ Աննա Միխայլովնան աչքերով ցույց տվեց մահճակալի մոտ դրված բաղկաթոնը։ Պիեոն հնազանդորեն նստեց բաղկաթոնին, շարունակելով աչքերով հարցնել, թե մյն արավ, ինչ պետք է։ Աննա Միխայլովնան գլխով հավանութուն տվեց։ Պիեոն դարձյալ յեղիպատական արձանի համաչափ-միամիտ դիրքն ընդունեց, ցավելով, ըստ յերևույթին, վոր իր անճոռնի հաստ մարմինն այդ-

<sup>1</sup> Ցեկեք։

քան մեծ տարածութիւնն և բնութւմ, մեծ ուժ գործադրելով՝ վոր-  
քան կարելի չե փոքր յերեւալ։ Պիեռը նախւմ եր կամօնն։ Կոմսը  
նախւմ եր այն կեանքն, ուր քիչ առաջ գտնուում եր Պիեռի դեմքը,  
յերբ նա կանդգնած եր։ Աննա Միխայլովնայի դեմքին յերեւում եր  
հոր և վորդու տեսակցութիւնն այդ վերջին վայրկյանի արտաշարմ  
փեռութիւնն դիտակցութիւնը։ Այս բոլորը տեսց մի յերկու բողե,  
բայց Պիեռն թօյաց մի ամբողջ ժամ։ Հանկարծ կոմսի յերեսի խա-  
շար մկանների ու կնճիւղների մեջ ցնցում նկատուից։ Ծնցումը սասա-  
կացաւ, դեղեկցիկ բերանը ծովեց (Պիեռն այժմ միայն հասկացաւ,  
թէ վորքան հոր մահը մատ և), և ծածուկած բերանից լսուեց մի  
անորոշ, խաղաղ հնչում։ Աննա Միխայլովնան ուշադիր նայում  
եր հիօյանդի աչքերին, և աշխատելով զուշակել, թէ ինչ և ուղում  
նա, ցույց եր առիւթ մերթ Պիեռին, մերթ խմբէքը, մերթ շշու-  
կով առիւթ եր իշխան Վասիլի անունը, մերթ մատնացուց  
անուն մ վերմանդի։ Հիօյանդի դեմքն ու աչքերն արտաշայտում  
եյին անհամբերութիւն։ Նա ջանք գործ դրեց նայելու իր սպա-  
սաւորին, վոր սառնից հետանալու կանգնած եր անկողնի դը-  
խակաղմը։

— Աւգուստ են շրջիկ մշուս կողքի վրա, — շշնջաց սպասաւորը  
և վասի կանդնեց, վորպէսզի կոմսի յերեսը շրջի դեպի պատը։  
Պիեռը վեր կացաւ սպասաւորին ողնելու։

Այն ժամանակ, յերբ կոմսին շրջում եյին, նրա մի ձեռք ան-  
գոր կերպով յետ բնկաւ, և նա իդուր ջանք գործ դրեց այն քա-  
շելու։ Նկատեց արդար կոմսը սարսափի այն արտաշայտութիւնը,  
վորով Պիեռը նայեց այդ անկենդան ձեռին, թէ այդ բողեյին մի  
ուրիշ միտք ցոյցայ նրա մեանոց գլխում, այնուամենայնիւ նայեց  
բրեն շնեխարեկով ձեռին, Պիեռի սարսափաւար դեմքին, գարձալ  
ձեռին, ու նրա յերեսին յերեսաց՝ իր գիմաղծերին շաղդո՞ւ մի  
թույլ, տանջալի ժպիտ, վորը կարծես հեղնում եր իր սեփա-  
կան անդորութիւնը։ Այդ ժպիտը տեսնելով՝ Պիեռն անսպասելի  
մի ցնցում դրաց կրծքում. քիթը խռատուս յեկաւ և արցունքները  
մթաղենցին աչքերը։ Հիօյանդի յերեսը գարձրին դեպի պատը։ Նա  
հասաչեց։

— Il est assoupi<sup>1</sup>, — տաւով Աննա Միխայլովնան, նկատելով  
փախարինելու յեկող իշխանազատեր — Allons<sup>2</sup>։

Պիեռը գուրս յեկաւ։

<sup>1</sup> Նիքնեց։

<sup>2</sup> Դնանք։

## XXIV

Ընդունարանում այլևս վոչ-վոջ չկար, բացի իշխան Վասիլիից ու մեծ իշխանադատից, վորոնք, Յեկատերինայի պատկերի ներքո նստած, տաք-տաք խոսում էին ինչ-վոր բանի վրա: Հենց վոր Պիեոն ու Նրա առաջնորդուհուն տեսան՝ լոցին: Պիեոն թվաց, վոր իշխանադատսորը մի բան պահեց ու շնչաց.

— Այդ կնոջը տեսնել չեմ կարողանում:

— Catiche a fait donner du thé dans le petit salon, — ասավ իշխան Վասիլին Աննա Միխայլովնային:— Allez, ma pauvre Աննա Միխայլովնա, prenez quelque chose. autrement vous ne suffirez pas<sup>1</sup>.

Պիեոն վոչինչ չասավ, միայն կարեկցությամբ սեղմեց նրա թևը: Պիեոն ու Աննա Միխայլովնան անցան petit salon<sup>2</sup>.

— Il n'y a rien qui restaure comme une tasse de cet excellent thé russe après une nuit blanche<sup>3</sup>, — ասում էր Լոռենը դաված աշխույժի արտահայտությամբ, չինական նուրբ դաված թեյ խմելով, կանգնած փոքրիկ բոլորակ հյուրասենյակի սեղանի առջև, վորի վրա դրված էին թեյի պարազաներ և սառն ընթրիք: Այդ գիշեր կոմս Բեդուխովի տանն յեղած մարդիկ հավաքվել էին սեղանի շուրջը՝ իրենց ամրապնդելու:— Պիեոն շատ լավ էր հիշում այդ փոքրիկ բոլորակ հյուրասրահը՝ իր հայելիներով ու սեղաններով: Կոմսի սարքած պարահանդեսների ժամանակ՝ Պիեոն, պարել չիմանալով, սիրում էր նստել այս հայելազարդ հյուրասրահում ու դիտել, թե ինչպես կանայք՝ շքեղորեն դուքված, մերկ թևերն ու կուրծքը գոհարներով ու մարգարիտներով դարդարած, այս սենյակից անցնելով, դիտում էին իրենց պայծառորեն լուսավորված հայելիների մեջ, վորոնք մի քանի անգամ անդրադարձնում էին նրանց պատկերը: Իսկ հիմա այդ սենյակը հազիվ լուսավորված էր յերկու մոմով, և կես գիշերին մի փոքրիկ սեղանի վրա անկարգ դրված էին թեյի պարազաններ և ավաններով ուտելիք, և տարրեր մարդիկ, բոլորովին պարզ, վոչ տոնական հագուստներով նստած, խոսակցում էին շշուկով, յուրաքանչյուր շարժումով ու յուրաքանչյուր խոսքով զգացնել տալով, թե վոչ վոջ չի մոռանում այն, ինչ արվում է այժմ և ինչ դեռ պիտի կա-

<sup>1</sup> Կատիշը կարգադրեց՝ թեյը մատուցել փոքրիկ հյուրասրահում: Դուք, իմ խեղճ Աննա Միխայլովնա, լավ կանեյիք կազգուրեյիք ձեզ, թե չե չեք գիժմանա:

<sup>2</sup> Փոքրիկ հյուրասրահը:

<sup>3</sup> Անգուստ գիշերից հետո վոչինչ այնպես չի կազգուրում, ինչպես ուտող-կան հիանալի թեյի մի բաժակը:

տարբի ննջարանում: Պիեռը չընթերց, թեև շատ ցանկանում էր: Նա հարցական նայեց իր ասանդորդուհուն և տեսավ, զոր նա, վառներին ծայրերին վրա գալիս յեկավ կրկին ընդունարան: Ուր մնացել էյին իշխան Վասիլին ու մեծ իշխանագուստը: Պիեռը յենթադրեց, զոր այդ էլ այդպես պետք է լինի և, զորք ինչ սպասելով, ինքն էլ դնաց նրա յետեից: Աննա Միխայլովնան կանգնել էր իշխանագուստի կողքին, ու յերկուսն էլ միաժամանակ խոսում էյին հուզված ջշուկով:

— Թույլ տվեք, իշխանուհի, յես դիտեմ ինչ և հարկավոր և ինչ չի հարկավոր, — ասում էր իշխանագուստը, ըստ յերևույթին, նույն հուզված վիճակում, զորի մեջ զանգում էր սենյակի գուռը շրխկացնելու ժամանակ:

— Բայց, սիրելի իշխանագուստ, — մեզմ ու համոզիչ ասավ Աննա Միխայլովնան, կարելով ննջարանի ճանապարհն ու չթողնելով իշխանագուստի ասած դնալու, — արդյոք շափաղանց ծանր չի լինի խեղճ մորեղբորս համար մի այսպիսի բողբոջի, յերբ նա հանդուրի կարիք ունի: Խուսել աշխարհային բաների մասին այն ժամանակ, յերբ նրա հոգին պատրաստված է արդեն...

Իշխան Վասիլին, զորք վառին քցած, արձակ-համարձակ նստել էր բողբոջի մեջ, նրա այտերը աստիկ ցնցվում էյին և, կախ ընկնելով, նրանց ներքին մասն տվելի հաստ էր թվում: Բայց այնպիսի տեսք ուներ, թե քիչ և հետաքրքրվում կանանց դուրսցում:

— Voyons, ma bonne Աննա Միխայլովնա, laissez faire Catherine<sup>1</sup>. Դիտեք, թե կամք վարքան և սիրում իշխանագուստի:

— Յեա չգիտեմ էլ թե ինչ և գրված այս թղթում, — ասավ իշխանագուստը, զանալով իշխան Վասիլին ու ցույց տալով իր ձեռին բռնած նկարագրող պորտֆելը: — Դիտեմ միայն, զոր իսկական կտակը նրա բյուրոյի մեջ է, իսկ սա մտալոված թուղթ և...

Նա ուղեց անցնել Աննա Միխայլովնայի կողքով, Բայց Աննա Միխայլովնան, տեղից ծուլ լինելով, նորից կտրեց նրա ճանապարհը:

— Դիտեմ, սիրելի, բարի իշխանագուստ, — ասավ Աննա Միխայլովնան պորտֆելը բռնելով և այնպես ամար, զոր յերևում է թե շատ չի բաց թողնելու: — Սիրելի իշխանագուստ, յես ձեզ խնդրում, ազաչում եմ խնայեցեք նրան: Je vous en conjure...<sup>2</sup>

Իշխանագուստը լռեց. լսվում էր միայն պորտֆելի շարժք տեղի ունեցող պոյքարի ձայնը: Յերևում էր, զոր յեթե իշխանա-

<sup>1</sup> Թուղթ կատյան անի իր գիտցածը:

<sup>2</sup> Ազաչում եմ ձեզ:

դուստրը խոսեր, հաճելի բաներ չեր ասելու Աննա Միխայլովնային: Աննա Միխայլովնան պինդ բռնել եր պորտֆելը, բայց, չնայած դրան, նրա ձայնը պահել եր իր անուշ առաձգականությամբ և մեղմությամբ:

— Պիեռ, այստեղ արի, բարեկամս: Կարծում եմ նրա ներկայությունն ընտանեկան խորհրդի մեջ ավելորդ չի. այնպես չի, իշխան:

— Ինչ՞ով յեք լռում, mon cousin, — հանկարծ կանչեց իշխանազուստրն այնպես բարձր, վոր հյուրասրահում լսեցին ու վախեցան նրա ձայնից: — Ինչ՞ով յեք լռում, յերր այստեղ աստիճանիցի վրա թե օվ թույլ ե տալիս իրեն մեջ ընկնել ու տեսարաններ սարքել մեռնողի սենյակի շեմքին: Ինտրիդան! — չէ՞նչաց նա կատաղությամբ ու պորտֆելը ձիգ տվեց ամբողջ ուժով:

Բայց Աննա Միխայլովնան մի քանի քայլ արավ, պորտֆելից յետ չմնալու համար, ու բռնեց նրա ձեռքը:

— Oh! — ասավ իշխան Վասիլին հանդիմանանքով ու դարձացած: Նա վտարի կանգնեց: — C'est ridicule. Voyons<sup>1</sup>, թողեք, ասում եմ ձեզ:

Իշխանազուստրը թողեց:

— Դուք ել:

Աննա Միխայլովնան չլսեց նրան:

— Թողեք, ասում եմ: Յես ամեն պատասխանատվությամբ վերցնում եմ ինձ վրա: Յես կերթամ ե նրան կհարցնեմ: Յես... այսքանը բավական ե ձեզ:

— Mais, mon prince<sup>2</sup>, — ասավ Աննա Միխայլովնան, — այսպիսի մի մեծ ծխակատարությունից հետո թողեք մի բազմ հանգստանա: Այ, Պիեռ, կարծիքդ ասա, — դարձավ նա յերիտասարդին, վոր բողբոջին մոտեցել եր նրանց ու դարձացած նայում եր իշխանազուստր կատաղած ու ամեն վայելչությամբ կորցրած զեմքին ե իշխան Վասիլի ցնցվող այտերին:

— Հիշեցեք, վոր պատասխանատու յեք հետևանքի համար, — խստությամբ ասավ իշխանը, — չեք հասկանում, թե ինչ եք անում:

— Զաղրելի՛ կին, — պտուց իշխանազուստրը, անսպասելիորեն հարձակվելով Աննա Միխայլովնայի վրա, ու պորտֆելը խլեց: Իշխան Վասիլին գլուխը կախեց ու ձեռները տարածեց:

Այդ բազմերի դուռը, այն սարսափելի դուռը, վորին ուղղված էյին Պիեռի աչքերը ե վորը բացվում եր այնպես կամացուկ,

<sup>1</sup> Դա ձեռնադելի յե: Դե:

<sup>2</sup> Բայց, իշխանս:





Աննա Միխայլովնան Պիեռին տարազ մուկ հյուրասրահը, և Պիեռն ուրախ եր, վոր վոշ-վոք աշդտեղ իր յերեսը չի տեսնում։ Աննա Միխայլովնան հեռացավ-դնաց, և յերբ վերադարձավ, Պիեռը, ձեռները գլխատակին դրած, պինդ քնել էր։

Հետևյալ առավոտ Աննա Միխայլովնան ասում էր Պիեռին.

— Oui, mon cher, c'est une grande perte pour nous tous. Je ne parle pas de vous. Mais Dieu vous soutiendra, vous êtes jeune et vous voilà à la tête d'une immense fortune, je l'espère. Le testament n'a pas été encore ouvert. Je vous connais assez pour savoir que cela ne vous tournera pas la tête, mais cela vous impose des devoirs, et il faut être homme<sup>1</sup>.

Պիեռը լուռ էր։

— Peut-être plus tard je vous dirai, mon cher, que si je n'avais pas été là, Dieu sait ce qui serait arrivé. Vous savez, mon oncle avant-hier encore me promettait de ne pas oublier Boris. Mais il n'a pas eu le temps. J'espère, mon cher ami, que vous, remplirez le désir de votre père<sup>2</sup>.

Պիեռը, բան չհասկանալով և լուռ, ամօթխածաբար կարմրելով, նայում էր իշխանուհի Աննա Միխայլովնային։ Պիեռի հետ խոսելուց հետո՝ Աննա Միխայլովնան դնաց Ռոստոլնիերի մոտ ու պառկեց քնելու։ Առավոտը զարթնելով՝ Ռոստոլնիերին և բոլոր ծանոթներին պատմեց կոմս Բեդուխովի մահվան մանրամասնությունները։ Ասավ, վոր կոմսը մեռավ այնպես, ինչպես ինքը Աննա Միխայլովնան կցանկանար մեռնել, վոր նրա վերջին վայրկյանը վոշ միայն հուզիչ էր, այլ և խրատական։ Իսկ հոր և վորդու վերջին տեսակցությունն այնքան սրտառուչ էր, վոր նա չկարողացավ հիշել առանց արցունքների, և վոր ինքը չի իմանում, թե այդ սարսափելի բույնյին ո՞վ ազելի լավ պահեց իրեն։ Համբը, վոր վերջին բույնյաներին հիշեց ամեն ինչ ու ամենքին և այնպես սրտառուչ խոսքեր ասավ վորդուն, թե՛ Պիեռը, վորին մարդ խզճահարովում և նայել,—այնպես ընկճված էր և այնպես, չնայած

<sup>1</sup> Այո, սիրելիս, այս մեզ համար մեծ կորուստ է, և չեմ խոսում ձեր մահին Բայց աստված կողմի ձեզ, դուք յերկրափառք եք, և հիմա հույս ունեմ, մեծ հարստություն տեր եք։ Կտակը դեռ չի բացված։ Յես բավական համաշուժ եմ ձեզ և վստահ եմ, վոր դա ձեզ չի ջշմեցնի։ Բայց դա ձեր վրա պարտավորություններ է դնում, և դուք պետք և տղամարդ լինեք։

<sup>2</sup> Հետո, դուցե, պատահեմ ձեզ, վոր յեթե յես այնտեղ չլինեյի, աստված գիտի, ինչ կարող էր պատահել։ Դուք գիտեք, վոր մորեղբայրս յերեք որ տասը ինն խոսառցով Բորիսին չմոռանալու բայց ևլ չկարողացավ խոստումը կատարել։ Հույս ունեմ, ըսրեկամս, դուք կկատարեք ձեր հոր ցանկությունը։

դրան, աշխատում էր թաղցնել իր վիշաք՝ մահամերձ հորը չվախացնելու։ Համար։ «C'est pénible, mais cela fait du bien; ça élève l'âme de voir des hommes, comme le vieux comte et son digne fils<sup>1</sup>, առում էր Աննա Միխայլովնան։ Իշխանադասեր և իշխան Վասիլի արարքների մասին նույնպես պատմեց, առանց համարանքի մասի, բայց մեծ գաղտնապահությամբ ու շշուկով։

## XXV

Լիսեյ Գորի-ում՝ իշխան Նիկոլայ Անդրեևիչ Բալկոնսկու կալվածում որ ըստ որև սպասում էին յերեսասարդ իշխան Անդրեյիչին և իշխանուհուն։ Բայց այդ սպասումը չէր խանգարում այն կարգ ու կանոնը, վարով ընթանում էր կյանքը ձեր իշխանի տան մեջ։ Դեներայ-անշեկի իշխան Նիկոլայ Անդրեևիչը, վար հասարակության մեջ հայանի յեր le roi de Prusse<sup>2</sup> մականունով, այն որից, յերբ Պոլի կայսեր որով արտրվել էր գյուղ, ապրում էր Լիսեյ Գորի կալվածում իր պղջկա՝ իշխանադասար Մարիայի, և նրա ընկերակից՝ m-lle Bourienne-ի<sup>3</sup> հետ։ Նոր կայսեր որով, թեև նրան թույլատրվեց մայրաքաղաք գալ, բայց նա շարունակում էր ապրել իր գյուղում, ասելով, վար յեթե մեկն իր կարիքն զգա, նա Մոսկվայից 150 վերստ կկարի-կղա Լիսեյի Գորի, և վար իրեն վաշ-վար և վաշինչ հարկավոր չի։ Նա առում էր, թե մարդկային արատները յերկու աղբյուր ունեն միայն—սարապություն և անհամատեղություն, և թե կա յերկու ասաքինություն միայն—զարծուներիություն և խեղր։ Նա անձամբ ինքն էր դրողում իր պղջկա դասախարակությունը, և վարդապետ նրա մեջ դարդացնի այդ յերկու գլխավոր ասաքինությունները, մինչև քսան տարեկան հասակը նրան տալիս էր հանրահաշիվի և յերկրաչափություն դասեր և նրա կյանքը զատափուրկ էր այնպես, վար անընդհատ զբաղումներ ի մեջ անցնի։ Նա ինքր շարունակ զբաղված էր, մերթ իր հիշատակարանն էր գրում, մերթ բարձր մաթեմատիկական խնդիրներ էր լուծում, մերթ զաղցյանի վրա քիմիստի կամ ձխախտի տաժեր էր շինում-հղկում, մերթ աշխատում էր պարաֆում և հակում կառուցումների վրա, վար նրա կալվածում չեյին վերջանում։ Վարովհետև զարծուներիություն գլխավոր պայմանը կարգ ու կանոնն է, ուստի և նրա կենցաղի մեջ կարգ ու կանոնը հասել էր իր ամենարարձր աստիճանին։ Նրա սեզանն աստիճան կատարվում

<sup>1</sup> Դա ծանր է, բայց փրկարար։ Հաղից բարձրանում է, յերբ ձեր կոմսի և իր արժանավոր զավակի նման մարդիկ ես ասեմում։

<sup>2</sup> Պրուսիայի թագավոր։

<sup>3</sup> Մալգուսեկի Բուրիեն։

եր միևնույն անփոփոխ պայմաններում, և վոչ միայն միևնույն ժամին, այլև միևնույն բուսկին: Իրեն շրջապատող մարդկանց հետ, սկսած աղջկանից մինչև սպասավորները, իշխանը խիստ երևապահ էր, և զրա համար, խոտախրտ չլինելով հանդերձ, յերկյուղ և հարգանք եր ներշնչում, ինչ-վոր հեշտությամբ չի աջողվում ամենադաժան մարդուն անդամ: Զնայած վոր պաշտոնաթող եր և այժմ պետական գործերի մեջ վոչ մի աղղեցություն չուներ, բայց և այնպես յուրաքանչյուր նահանգապետ (այն նահանգի, վորի մեջ մտնում էին իր կալվածները) իր պարտքն եր համարում ներկայանալ նրան և նույնպես, ինչպես ճարտարապետը, պարտիզպանը կամ իշխանադուստր Մարիան, սպասել սպասավորների սրահում՝ մինչև իշխանի ընդունելության ժամը հասնելու: Յեկ այդ սրահում ամեն վեց ունենում եր հարգանքի և անդամ յերկյուղի նույն զգացումը, յերբ բացվում եր նրա առանձնասենյակի բարձր ու խոշոր դուռը և ներս եր մտնում շարած կեղծամով միջահասակ ծերունի իշխանը՝ մանրիկ վոսկրոտ ձեռներով և կախված գորշ հոնքերով, վորոք յերբեմն, յերբ նա հոնքերը կիտում եր, ծածկում էին նրա խելացի և կարծես ջահել պսպղուն աչքերի փայլը:

Յերիտասարդ ամուսինների դուռ ուրը, առաջուտյան իշխանադուստր Մարիան, սովորության համաձայն, առաջուտփա տեսակցության համար, վորոշյալ ժամին մտավ սպասավորների սրահը, յերկյուղածությամբ խաչակնքեց յերեսը, և ներուստ աղոթեց: Ամեն որ նա գալիս եր տեսակցության և՛ ամեն որ աղոթում, վոր տեսակցությունը բարեհաջող անցնի:

Սրահում նստած շարված ծերունի-սպասավորը հանդարտ շարժումներով վոտքի յելավ և ցած ձայնով ասով. «Համեցիք»:

Դռան յետևից լսվում եր դադդյանի համաճափ ձայնը: Իշխանադուստրը վախժխելով քաշեց հեշտ ու անաղմուկ բացվող դուռը և կանգ առավ շեմքում: Իշխանն աշխատում եր դադդյանի վրա. նայեց ու շարունակեց գործը:

Ահադին առանձնասենյակը լիքն եր, բոտ յերևույթին, միշտ գործածելի իրերով: Պաշտոն սեղանը, վորի վրա դրված էին գրքեր ու հատակադճեր, բարձր, ապակյա դռներով զրադարանները՝ բանալիները վրան, կանգնած դիրքով գրելու հարմարեցրած սեղանը, վորի վրա դրված եր մի բաց տետր, խոռատի դադդյանը՝ իր գործիքներով ու շուրջը թափված տաշեղներով, — այս բոլորը ցույց էին տալիս մշտական բազմադան ու կանոնավոր գործունեություն: Թաթարական արծաթակար մուհակ հագած փոքրիկ վոտի շարժումից, վոսկրոտ, ջրուտ ձեռի ամուր սեղմումից յերե-

վրա՞ եր իշխանի տառաջը ձերութեան համար ու դիմացկուն աւժը։  
Ախ ջանի շրջան անկողի՜ նա վտար վերցրեց դառը շահի վտակա-  
լից։ զուրք սրբեց-քցեց դառը շահի կախման կաշվե տապալկը և,  
սեղանին մոտենալով, աղջկանը կանչեց։ Նա յերբեք իր դաժակ-  
նեղին չէր սրննում, և միայն, դեմ անկողի նրան իր մազոտ, դեռ  
ևս չստփրած յերեսը, խոտութեամբ և միամամանակ ուշադիր-  
քննութեամբ նրան նայելով՝ ասով։

— Ասե՞ղ? ևս... դե, ուրեմն նստի՛ր։

Նա վերցրեց իր ձեռով գրած յերկրաչափութեան տեսարկը և  
վտայով բաղկաթնուր սեղանին մոտեցրեց։

— Վաղիս համար, — ասով նա, արտաք թերթիկով ու մի հաս-  
վածից մինչև մշուսը կոշտ յեղունդով նշան արավ։

Իշխանադուստրը կասցով տեսարկի վրա։

— Աղաւթի, նամակ ունեւ, — հանկարծ ասով ձերունին ու  
սեղանի վրա հարմարեցրած պաշտօնակից հանեց կանաչի ձեռքով  
գրած մի նամակ ու նետեց սեղանի վրա։

Նամակը տեսնելով իշխանադուստր Ասրիայի դեմքի վրա  
կարմիր բծեր յերեւցին։ Նա շատապով վերցրեց այն ու կարգաց։

— Եւսեփեց և, — հարցրեց իշխանը, ստոր ժողտով ցույց տա-  
լով իր տակալին ամբողջից ու զեղին տառմները։

— Այո, ժյուլից և, — ասով իշխանադուստրը ամաչկոտ նայե-  
լով և ամաչկոտ ժողտալով։

— Յերկու նամակ էլ թույլ կտամ, իսկ յերբորդն արդեն կկար-  
գամ, — խոտութեամբ ասով իշխանը, — վախենում եմ վոր շատ հի-  
մար բաներ եք գրում։ Յերբորդը կկարգամ։

— Կարգացեք թեկուզ այս, mon père<sup>1</sup> — դատաւանեց իշխա-  
նադուստրն էլ ավելի կարմրելով ու նամակը նրան մեկնելով։

— Յերբորդը, յես ասի յերբորդը, — կարուկ դուաց իշխանը,  
նամակը հրելով և, սեղանին կախնելով, մոտ քաշեց յերկրաչա-  
փութեան տեսարկը։

— Դեհ, սրիսդ, — սկսեց ձերունին, ավելի մոտենալով աղջկան  
ու տեսարկի վրա կանաչելով։ Նա ձեռը գրեց աղջկա նստած բող-  
կաթնի թիկունքին, այնպես վոր իշխանադուստրն ամեն կող-  
մից իրեն շրջապատված զգաց հոր քթախոտի և ձերունական-  
վանեց հասով, վոր վաղուց ծանոթ էր իրեն։ — Դեհ, սրիսդ, այս  
յեանեկայանիները նման են տեսնում ես, abc անկաւնը...

Իշխանադուստրը վախեցած նայում էր իրենից շատ մոտ վայ-  
լող հոր աչքերին։ Կարմիր բծերը վաղապէսն նրա դեմքը, յերեսում  
էր, վոր նա վաշինչ չի հասկանում և այնպես և վախենում, վոր

<sup>1</sup> Հայր իմ։

յերկյուղը խանգարելու յե նրան՝ հասկանալ հոր հետադա բացատրութիւնները, վորքան ել նրանք պարզ լինեն: Մեղավորը ուսուցիչն եր թե աշակերտուհին, հայտնի չե, բայց միեւնույն բանը կրկնվում եր ամեն ուր. իշխանադատեր աչքերը մթաղնում եյին, վոչինչ չեւ տեսնում, չեւ լսում, միայն զգում եր չոր դեմքով խիստ հոր ներկայութիւնը, զգում եր նրա շնչառութիւնն ու հոտը և մտածում միայն թե ինչպե՞ս անի, վոր չուտով հեռանա հոր առանձնասեւյակից և իր սենյակի աղատութիւն մեջ ըմբռնի խնդիրը: Մերունու համբերութիւնը հատնում եր. նա գոռոցով մատեցնում-հեռացնում եր բաղկաթոքը, վորի վրա նստած եր ինքը և, ճիգ եւ զործադրում, վոր չբարկանա, բայց ամեն անգամ գրեթե տաքանում եր, հայհոյում, յերբեմն եւ տեւրակը նետում:

Իշխանադուստրը սխալ պատասխան տվեց:

— Ե, ինչ հիմաբն ես,—պատասխանեց իշխանը, հրելով տետրակը և արագ յետ դառնալով, բայց իսկույն եւ վեր կացավ, մի յերկու քայլ արավ, ձեռը դիպրեց իշխանադատեր մազերին ու կրկին նստեց:

Նա մոտեցավ ու շարունակեց բացատրութիւնը:

— Զի կարելի, իշխանադուստր, չի կարելի,—ասով նա, յերբ իշխանադուստրը տրված դասերի տետրակը վերցնելով պատրաստվում եր արդեն դուրս գնալ,—մաթեմատիկան բարդ բան ե, որիորդ: Իսկ յես չեմ ուզում, վոր դու մեր հիմար որիորդների նման լինես: Համբերի՛ր—կսիրես:—Նա ձեռով շոյեց աղջկա աչքը:—Կսովորես-կխելոքանաս:

Իշխանադուստրն ուղում եր դուրս դալ, բայց հայրը ձեռի շարժումով կանգնեցրեց նրան և բարձր սեղանից հանեց մի նոր չկտրտած գիրք:

— Ահա ելի ինչ-վոր խորհուրդների բացալի յե ուղարկել քեզ քո Ելովան: Կրոնական ե: Իսկ յես վոչ-վաքի զովանութիւն, հովատի մեջ չեմ խառնվում... Ինքս նայել եմ: Վերցրու: Դե, պնա, պնա:

Ձեռը մեղմորեն դիպրեց աղջկա ուսին և դուռը փակեց նրա յետեից:

Իշխանադուստր Մարիան իր սենյակը վերադարձավ տխուր, վախի արտահայտութիւնով, վոր հաճախ եր ունենում և նրա տղեղ, հիվանդոտ դեմքն ավելի յեր տղեղացնում. նստեց իր զրասեղանի մոտ, վորի վրա դրված եյին մանրիկ պըրտրեններ, թափված եյին տետրակներ ու գրքեր: Իշխանադուստրը նույն-քան, թափթված եր, վորքան հայրը կարդապահ: Նա ձեռի տետ-

բակը մի կողմ գրեց և անհամբեր բաց արավ նամակը։ Նամակը գրել էր իր մանկություն ամենամոտիկ բնկերունիքն։ այն ժուլի Կարապետը, վար ներկա չէր Թաստիկների անվանակաշնությունը։

«Chère et excellente amie, quelle chose terrible et effrayante que l'absence! J'ai beau me dire que la moitié de mon existence et de mon bonheur est en vous, que malgré la distance qui nous sépare, nos cœurs sont unis par des liens indissolubles; le mien se révolte contre la destinée, et je ne puis, malgré les plaisirs et les distractions qui m'entourent, vaincre une certaine tristesse cachée que je ressens au fond du cœur depuis notre séparation. Pourquoi ne sommes-nous pas réunies, comme cet été dans votre grand cabinet sur le canapé bleu, la canapé à confidences? Pourquoi ne puis-je, comme il y a trois mois, puiser de nouvelles forces morales dans votre regard si doux, si calme et si pénétrant, regard que j'aimais tant et que je crois voir devant moi, quand je vous écris»<sup>1</sup>.

Ահնջի աշտակ կարգալով իշխանազուսարը հասաչեց ու հայեց աջ կողմը դրված մեծ հայկուն, վարն անդրադարձրեց նրա թույլ մարմինն ու նիւար գեմքը։ Աչքերը, վար միշտ թախմուս էլին, այժմ տառնձին հուսահատությունը հայեալ միջից նայում էլին իրեն։ «Ես ինձ չաղարթում եմ, մտածեց իշխանազուսարը, շուտ չեկամ և շարունակեց կարգար ժուլին, սակայն, բնկերունիքն էր չաղարթում։ Խակապետ, իշխանազուսար խոշոր, խոր ու ճառագայթող աչքերը (չերքեմն նրանցից կարծես տաք լույսի ճառագայթներ էլին ցայտում խորձերով) այնքան սիրուն էլին, վար հաճախ, չնայած ամբողջ գեմքի բնդանուսը տղեղությունը, այդ աչքերը դառնում էլին պեղեղկությունից ավելի հրապուրիչ։ Բայց իշխանազուսարը լերեր էր տեսնում իր աչքերի լավ արտահայտությունը, այն արտահայտությունը, վար ունենում էր այն

<sup>1</sup> «Արեւիկ և Թանկապին բարեկամս, ինչ տոկոսի ու սարսափելի բան է անջատումը։ Վերջին էլ ինքս ինձ տեսնում եմ, թե իմ գոյություն ու յերջանկություն կեոր զուր էր, վար չնայած մեզ բաժանող սարսափությունը, մեր սրտերը միացած են անբախկալի կապերով, սիրտս ըմբոստանում է ճակատագրի դեմ և, չնայած ինձ չբողոքատույզ զգուրնություններին, չեմ կարողանում խեղդել թագուն վիշտով, վար զգում եմ սրտիս խորքում մեր անջատումից ի վեր Ինչու ամառվա պես միասին չենք, ձեր մեծ ասանձնասեղանիս, յերկնագույն բազմալի վրա, «Մանրամական» բազմալի վրա։ Ինչպես յերբեք ամբողջ տառջ, չեմ կարողանում նոր բարոյական ուժեր ստանալ ձեր հեղ, անդորր ու թափանցող հայացրից, վար այնպես սիրում եմ և վերջ այս վաշեկանիս, այս տաղերը գրելիս, տեսնում եմ իմ տաղեն»



վայրկյաններին, յերբ ինքն իր մասին չէր մտածում: Ինչպես բոլոր մարդկանց, այնպես էլ Նրա ղեմը՝ շինծու-անբնական, վատ արտաշատություն էր ընդունում, յերբ նա հայելուն էր նայում: Նա շարունակեց կարգալի՝.

«Tout Moscou ne parle que guerre. L'un de mes deux frères est déjà à l'étranger, l'autre est avec la garde, qui se met en marche vers la frontière. Notre cher empereur a quitté Pétersbourg et, à ce qu'on prétend, compte lui-même exposer sa précieuse existence aux chances de la guerre. Dieu veuille que le monstre corsicain, qui détruit le repos de l'Europe, soit terrassé par l'ange que le Tout-Puissant, dans Sa miséricorde, nous a donnée pour souverain. Sans parler de mes frères, cette guerre m'a privée d'une relation des plus chères à mon coeur. Je parle du jeune Nicolas. Rostoff, qui avec son enthousiasme n'a pu supporter l'inaction et a quitté l'université pour aller s'enrôler dans l'armée. Eh bien, chère Marie, je vous avouerai, que, malgré son extrême jeunesse, son départ pour l'armée a été un grand chagrin pour moi. Le jeune homme, dont je vous parlais cet été, a tant de noblesse, de véritable jeunesse qu'on rencontre si rarement dans le siècle où nous vivons parmi nos vieillards de vingt ans. Il a surtout tant de franchise et de coeur. Il est tellement pur et poétique, que mes relation avec lui, quel-

ի ՀԱՄԱՐՈՎ Մոսկվան միայն պատերազմի մասին է խոսում: Յերկու յեղ-բայրներէցս մեկն արդէն արտասահման է, մյուսը զվարդկայում, զորք շուտով շարժվելու յն դեպի սահմանադուլէր: Մեր սիրելի թագաւորը թողնում է Պետերբուրգը և, ինչպես յենթադրում են, մտադիր է իր թանկագին կյանքը յենթադրելի պատերազմի վտանգներին: Աստուծո՛ւ տա, զոր այդ կոթակեացի հրեշք՝ Յեկորալայի խաղաղությունը վրդովողը, առաջալիկ այն հրեշտակի ձեռով, զոր Ամենակարողը իր վաղորմածութեամբ իշխանավոր է կարգել մեզ վրա: Չխտելով յեղբայրներին մասին, այս պատերազմը գրկեց ինձ սրտիս ամենամոտ բարեկամից: Յես խոսում եմ յերկտասարդ Նիկոլայ Ռոստովի մասին, զորք, իր խանդավառ բնավորութեան շնորհիվ, չկարողացաւ տանել անգործութեանը և համալսարանը թողնելով՝ մտով բանակ: Պատուովնում եմ ձեզ, սիրելի Մարի, զոր, չնայած Նրա չափազանց յերիտասարդ հասակին, Նրա բանակ մանկը մեծ կիշու է ինձ համար: Այդ յերկտասարդի մեջ, զորի մասին անցյալ ամառ խոսեցի ձեզ հետ, այնքան աշխուժութուն, այնքան աշխուժութուն, զոր հազվագյուտ է մեր զարի քսան տարեկան ձերտներին մեջ: Առանձնապէս շատ անկեղծ է և սրապային: Նա այնքան մաքուր է և անկեղայով լի, զոր մեր հարաբերութեանները, չնայած շատ կարճատեւ լինելուն, իմ սիրտը սրտի ամենաբարձր ուրախութեաներէց մեկն է յեղել. իմ սրտի, զոր այնքան արդէն տառջվել է: Յես մի որ կպատմեմ մեր հրամեշտը և այն բոլորը, ինչ խոսեցինք այդ մամին: Այդ ամենը զես շատ թաքմ ե... Ախ, սիրելի բարեկամս, յերջանիկ էր, զոր



que passagères qu'elles fussent, ont été l'une des plus douces jouissances de mon pourceur, qui a déjà tant souffert. Je vous raconterai un jour nos adieux et tout ce qui s'est dit en partant. Tout cela est encore trop frais. Ah! chère amie, vous êtes heureuse de ne pas connaître ces jouissances et ces peines si poignantes. Vous êtes heureuse, puisque les dernières sont ordinairement les plus fortes! Je sais fort bien, que le comte Nicolas est trop jeune pour pouvoir jamais devenir pour moi quelque chose de plus qu'un ami, mais cette douce amitié, ces relations si poétiques et si pures ont été un besoin pour mon pourceur. Mais n'en parlons plus. La grande nouvelle du jour qui occupe tout Moscou est la mort du vieux comte *Բեկուխով* et son héritage. Figurez-vous que les trois princesses n'ont reçu que très peu de chose, le prince Basile rien, et que c'est M. Pierre qui a tout hérité, et qui par-dessus le marché a été reconnu pour fils légitime, par conséquent comte *Բեկուխով* et possesseur de la plus belle fortune de la Russie. On prétend que le prince Basile a joué un très vilain rôle dans toute cette histoire et qu'il est reparti tout penaud pour Pétersbourg.

«Je vous avoue, que je comprends très peu toutes ces affaires de legs et de testament; ce que je sais, c'est que depuis que le jeune homme que nous connaissions tous sous le nom

դուր ծանոթ չեք այս այրող վայելքներին, այս տաշտող վշտերին՝ Յերշանիկ եր, վարժենեալ վերջինները սովորաբար շատ ավելի զորավոր են առաջիններին: Ահա շատ լավ գիտեմ, վոր կամ նիկոլայը դեռ շատ յերեսասարդ է, և ինձ համար բարեկամից րացի ուրիշ րան չի կարող լինել: Բայց այդ րացը բարեկամութունը, այդ այնքան րանասեղծական ու այնքան մարուր հարաբերութւոյնները որսին սղաննջն ելին: Բայց րաժկան և այդ մասին:

«Վրիժաժոր նորութւոյնը, վոր վրացեցնում և ամբողջ Մասկովան, — ծերունի կամ Բեկուխովի մանն և նրա թողած մասանդութւոյնը՝ Յերեկայեցեք, յերեք իշխանապետները ստացել են ինչ-վոր չնչին րան, իշխան Վասիլին վաշինչ խի Պիեռը՝ ամբողջ հարստութւան մասանդ է, րացի գրանից, մանաշված և որինական վորդի, ուրեմն և կամ Բեկուխով և Ռուսաստանում յեղած ամենամեծ կարողութւան տերը: Ասում են, թե իշխան Վասիլին շատ ստոր դեր և խաղացել այս ամբողջ գործի մեջ, և թե Պետերբուրգ և մեկնել շատ չփութված: Յաստավանում եմ, յես այս մասանդութւոյններից և կտակներից շատ րիշ րան գիտեմ, գիտեմ միայն այս, վոր այն որից, յերբ այդ յերեսասարդը, վորին մենք բոլորը մանաշում ելինք ստի Պիեռ տնունով, զարմել և կամ Բեկուխով և Ռուսաստանի մեծագույն կարողութւոյններից մեկի տերը, — զամենական և տեսնել հարեանացու-ազգիկ ունեցող մայրերի և հենց իրենց ազգիկների փոխված վերաբերմունքը դեպի այդ պարսնը, վորը (փակագծի մեջ տաեմ) միշտ գոշնչութւան և թժպեղ ինձ Վարժենեալ յերկու տարի յե արդեն բոլորը դժարեանում

de M. Pierre tout cours est devenu comte *Քեղուխով* et possesseur de l'une des plus grandes fortunes de la Russie, je m'amuse fort à observer les changements de ton et des manières des mamans accablées de filles à marier et des demoiselles elles-mêmes à l'égard de cet individu, qui, par parenthèse, m'a paru toujours être un pauvre sire. Comme on s'amuse depuis deux ans à me donner des promesses que je ne connais pas le plus souvent, la chronique matrimoniale de Moscou me fait comtesse *Քեղուխով*. Mais vous sentez bien que je ne me soucie nullement de le devenir. A propos de mariage, savez-vous que tout dernièrement la tante en général *Աննա Միխայլովնա*, m'a confié sous le sceau du plus grand secret un projet de mariage pour vous. Ce n'est ni plus, ni moins, que le fils du prince Basile, Anatole, qu'on voudrait ranger en le mariant à une personne riche et distinguée, et c'est sur vous qu'est tombé le choix des parents. Je ne sais comment vous envisagerez la chose, mais j'ai cru de mon devoir de vous en avertir. On le dit très beau et très mauvais sujet; c'est tout ce que j'ai pu savoir sur son compte.

«Mais assez de bavardage comme cela. Je finis mon second feuillet, et maman me fait chercher pour aller dîner chez les Apraksines. Lisez le livre mystique que je vous envoie et qui

են՝ ինձ համար, ինձ անծանոթ փեսացուների գտնելով, հիմա Մոսկվայի ամուսնական քրոնիկան ինձ զարմուստ է կոմսուհի Քեղուխովու Քայց զուր գիտելը, վոր յես այդ բնով չեմ ցանկանում։ Ի զեղ՝ ամուսնությունների մասին Գիտելը, վոր մոտ ուրեք ընդհանուր մորաքույր Աննա Միխայլովնան հայտնեց ինձ, իբրև խորին զաղտնիք, ձեզ ամուսնացնելու մտադրություն։ Դա վոչ այլ-վոր է, յեթև վոչ իշխան Աստիլի վորդի Անատուլը, վորին կարգի բերելու համար ուզում են ամուսնացնել մի հարուստ, բարձրաստիճակ ազնվա հետ, և ծնողների բնաբույքները կանց է առել ձեզ վրա։ Զգիտեմ, ինչպես եր նայում այս խնդրին, բայց յես պարտք եմ համարում նախապես հայտնել ձեզ նա, ասում են, շատ գեղեցիկ է, բայց ստահակի մեկը։ Ահա բոլորը, ինչ կարողացա իմանալ նրա մասին։

«Բայց բավական է շաղակերտանում Արքեպիսկոպոս եմ յերկրորդ թերթը, իսկ մայրիկը մարդ է ուզարկել, վոր Ապրաքսինների մոտ ճաշի գնանք։ Կարգացնել ուղարկածս միտակերական գիրքը. դա մեզ մոտ մեծ հաջողություն ունի։ Քեզ աշխտեց կան բաներ, վոր մարդկային տկար միտքը զմիտք կհառնանա, սակայն սքանչելի գիրք է. նրա բնթերցումը հանդուստացնում-բարձրացնում է մարդու հոգին։ Մնաք բարով։ Հարգանքներս ձեր հորը և բարեներս m-lle Բուբլինին։ Մրտագին գրելում եմ ձեզ։

Յուլիան

«Հ. Գ. Գրեք ձեր յեղբոր և նրա հմայիչ կնոջ մասին։

fait fureur chez nous. Quoiqu'il y ait des choses dans ce livre difficiles à atteindre avec la faible conception humaine, c'est un livre admirable dont la lecture calme et élève l'âme. Adieu. Mes respects à monsieur votre père et mes compliments à m-eille Bourienne. Je vous embrasse comme je vous aime. Julie».

„P. S. Donnez-moi des nouvelles de votre frère et de sa charmante petite femme“.

Իշխանագուստը մասնեց, ծագաց (փորից՝ նրա Հասարակաց աշխարհի լուսավորման գեմը բոլորովին կերպարանափոխեց), և հանկարծ փեր կենալով՝ ծանրաբայլ մասնեցով սեղանին։ Վերցրեց մի թուղթ, և նրա մեռն սկսեց սահել այդ թղթի վրայով՝ Իրեց այս պատմութենը՝.

«Chère et excellente amie. Votre lettre du 13 m'a causé une grande joie. Vous m'aimez donc toujours, ma poétique Julie.

1 «Սիրելի և անդին բարեկամու Զեր 13-ի թվակեր նամակը ինձ մեծ ուրախություն պատճառեց Դուք զիս սիրում եք ինձ, իմ բանաստեղծական Ես-իստ Անճառուսք, փորի մասին այնքան վատ բաներ եք տեսւմ, յերեւում ե, իր ստորապահած ազգեցյալ թյունը չի ունեցել մեր վրա Դուք զանազանում եք անճառուսք, հապա ինչ պիտի տեսն յես, յեթե կարողանայի,— յես, վար զբեկած եմ բոլոր նրանցից, սփեր թանգ են ինձ Ա՛խ, յեթե մեզ միջիթարոզ կրանն ել շէրներ, կյանքը շատ տխուր կշիներ Ինչմա. համար եր ինձ խիտ հայացքներ վերադրում, յերբ խոսում եք մեր գեղել յերիտասարդն ունեցած լավ վերաբերմունքի մասին Այդ կողմից յես խիտ եմ միայն իմ նկատմամբ Աւրինների այդպիսի զգացումները հասկանալի յեն ինձ համար, և յեթե չեմ կարողանում համոզում թյուն տալ զրանց, ապրած շէրներով այդ զգացումները, ապա չեմ ել զտատարարում Ինձ թվում և միայն, վար բրիտանիական սերը, սերը զեղել մերմտփորը, սերը զեղել թշնամին՝ շատ ափելի արմատփոր, բազցը ու լավ և, բան այն զգացումները, վարնր յերիտասարդի զեղեցիկ աշխեր կարող են ներշնչել մի յերիտասարդ, բանաստեղծական ու սիրող ազգիչ, ինչպիսին զուր եք։

Եղան Բեկյուխովի մահվան լուրը մեզ հասավ մեր նամակից տասը, և հայրա շատ հուզվեց զրանից։ Նա տեսւմ և, վար նա մեծ դարի նախափերջին ներկայացուցիչն և, և վար հերթը հիմա իրենն և, բայց մեռելից յեկամը պիտի անի, վար այդ հերթը վարքան կարելի չե ու չհասնի Առաքած ազատի մեզ այդ ահեղի գորախոսությանից։

«Մեռ չեմ կարող համաձայնել Պիետի մասին հայանած մեր կարծիքներին, Պրեմն, վարին հանաչում եմ զիս մանկությանից Ինձ միշտ թվացել և, վար նա սրանելի սիրա ունի իսկ զա այն հասկալությունն և, վար յես ամենից ափելի չեմ գնահատում մարդկանց մեջ Ինչ վերաբերում և նրա տաացած մասնադու թյուն և, իշխան Վասիլիի կատարած գերին, զա շատ վատ և յերկուսի համար էլ Ախ, սիրելի բարեկամու, մեր առաքմանին փրկչի խոսքերը, թե ու զան ափելի հեշտ կանցնի տակզի մահով, ըսն հարուստն արքայություն,— աշտփ հմարիտ խոսքեր են։ Թզում եմ իշխան Վասիլիին, մասնաքանց Պիետին։ Այդպիսի մի յերիտասարդ՝ մի այդպիսի ահագին կարգու թյամբ ծանրաբեռն-

L'absence, dont vous dites tant de mal, n'a donc pas eu son influence habituelle sur vous. Vous vous plaignez de l'absence — que devrai-je dire moi, si j'osais me plaindre, privée de tous ceux qui me sont chers? Ah! si nous n'avions pas la religion pour nous consoler, la vie serait bien triste. Pourquoi me supposez-vous un regard sévère, quand vous me parlez de votre affection pour le jeune homme? Sous ce rapport je ne suis rigide que pour moi. Je comprends ces sentiments chez les autres et si je ne puis approuver ne les ayant jamais ressentis, je ne les condamne pas. Il me paraît seulement que l'amour chrétien, l'amour du prochain, l'amour pour ses ennemis est plus méritoire, plus doux et plus beau, que ne le sont les sentiments que peuvent inspirer les beaux yeux d'un jeune homme à une jeune fille poétique et aimante comme vous.

«La nouvelle de la mort du comte *Բեդուխով* nous est parvenue avant votre lettre, et mon père en a été très affecté. Il dit que c'était l'avant-dernier représentant du grand siècle, et

ված, — քանի՜ քանի գայթակղութիւններէ մէջից պիտի անցնէի Յեթի ինն հարցնելիս թե աշխարհէս վրա ինչ եմ ցանկանում ամեն բանից ավելի, — ցանկանում եմ լինել աղքատներէց ամենաաղքատը՝ Հազար շնորհակալութիւն, սիրելիս, այն զրքի համար, վոր ուղարկել ես ինն և վորն այնքան ազմուկ ե հասնել այդտեղէր Բայց վորովհետեւ ստում եք, թե շատ լավ բաների թվում եմ եւ այնպիսիները, վորոնց անմատչելի յեն մարդկային տկար մտքին, ուստի ինն թվում ե, ավելորդ ե զբաղվել անհասկանալի զրքի ընթերցանությամբ, վորք այդ իսկ պատճառով վոչ մի ոգուս չի կարող բերել Յերբեք չեմ կարողացել հասկանալ վորոշ մարդկանց սերը զեպի միտաբանական գրքերը, վորոնք կասկածներ են միայն հարուցանում նրանց մտքերում, զրգում եւ նրանց յերեակալութիւնը ե չափազանցութեան բնույթ տալիս նրանց՝ միանգամայն հակառակ քրիստոնեական պարզութեան Ավելի լավ ե կարգանք Գործք Առաքելոցն ու Ավետարանը Զփորձենք թափանցել այդ զրքերում յեղած խորհրդավորութիւններէ մեջ, քանի վոր մենք՝ նմաստ մեղավորներս, ինչպես կարող ենք բժշկենք Նախախնամութեան ահա՛վոր ու սքրագան գազանիքները մինչ այն, քանի կրում ենք մեզ վրա այն մարմնական կեղեք, վորք մեր ու հազիտնում. Բայն մէջի մի անթափանցելի վարպտույր ե ցառում Ավելի լավ ե սահմանափակվենք այն մեծ պատվիրաններէ ուսումնասիրութեամբ վոր մեր տառվածային փրկիչը թողել ե մեզ՝ տառեղ, յերկրէ վրա՝ ղեկավարվելու համար Աշխատենք համակերպել ու հետեւել դրանց ե աշխատենք համոզվել, թե վորքան քիչ ստնաբանակութիւն տանք մեր մտքին, այնքան ավելի հաճելի կլինենք ստամոքս, վորք մերմեծ ե իրենից չբխող ամեն մի գիտութիւն, ե վորքան քիչ խորատուգլենք այն բաներէ մեջ, վոր աստծուն հաճելի յե յեղել թաղցնել մեզանից, նա այդ ավելի շուտ կպարզէ մեզ իր աստվածային բանականութեամբ

«Հայրս ինն վաշինչ չի ստել փեսացուի մասին, բայց հայրենց միայն, վոր նամակ ե ուսացել ե ողբասում ե իշխան Հատիկի այցելութեամբ ինչ վերաբեր-

qu'à présent c'est son tour; mais qu'il fera son possible pour que son tour vienne le plus tard possible. Que Dieu nous garde de ce terrible malheur! Je ne puis partager votre opinion sur Pierre que j'ai connu enfant. Il me paraissait toujours avoir un cœur excellent, et c'est la qualité que j'estime le plus dans les gens. Quant à son héritage et au rôle qu'y a joué le prince Basile, c'est bien triste pour tous les deux. Ah! chère amie, la parole de notre divin Sauveur qu'il est plus aisé à un chameau de passer par le trou d'une aiguille, qu'il ne l'est à un riche d'entrer dans le royaume de Dieu, cette parole est terriblement vrai; je plains le prince Basile et je regrette encore davantage Pierre. Si jeune et accablé de cette richesse, que de tentations n'aura-t-il pas à subir! Si on me demandait ce que je désirerais le plus au monde, ce serait d'être plus pauvre que le plus pauvre des mendiants. Mille grâces, chère amie, pour l'ouvrage que vous m'envoyez, et qui fait si grande fureur chez vous. Cependant, puisque vous me dites qu'au milieu de plusieurs bonnes

գլուխ եւ իմ ամուսնութեան ծրագրին, կտեսնեմ մեզ, սիրելի եւ անցին բարեկամս, վար ամուսնութեանը, բայց իմ, առաքածային կարգ եւ, վարին պիտի հնազանդելու Վարդան եւ ծանր լինի իմ համար, բայց չեմ կարողանալ իմ համար լինի վրաս գնել ամուսնու. եւ մար պարտականութեանը, չեմ պիտի աշխատեմ կատարել գրանց, վարդան կարող եմ, հաջողաբար իմ համար, հոգ շտապելով առաւել-նախընդ. իմ հոգացումները պիտի աշխատեմ, վարին նա կարծանալին իմ:

«Յեզրարից նամակ առաջատ. հայանում եւ իմ կնիք հետ պալատ. յե Վարին Գարին Այս աւարտութեանը չեմ կարող չի շարունակելու, վարդանան նա մեզ ինքնակալ. յե, վարդանակին մասնակցել աշխատեմ պատերազմին, վարին մեզ են բաշխել մեզ, առաքած պիտի իմ ինքնակալ եւ ինչու. համար Վարին միայն մեզ մտա, բարձր կյանքի ու. գործերի կենտրոնում, աշխատեմ, գաղտնային աշխատանքներով եւ աշխատեմ իմ մեզ, ինչպէս թաղանթները ազգայնաբար պատկերացնում են պալատ, չեմ են պատերազմի արեւազանքները եւ զգալի չեմ նրանց ծանրութեանը. հայտնի մի պալատ խոստում եւ արեւազանքներին մասին, վարին չեմ վաշխել չեմ հաղորդում, եւ չեմ կարող, պալատի գաղտնային իմ ազգայնական գրառանքը կատարելով՝ ներկա չեմ մի արտաքին տեսարանին Գարին հա-վարտում նրանց ինքնակալ խոստում ազգայնական եւ իմանալ Պարսկ եւ տեսնել, իմ ինչ վրանակին մեզ կշին պալատներին մայրերը, կանաչ, չեմ կարողանալ, եւ չեմ պալատներին մեզ կշին պալատներին լացն ու. հեղինակները Մտածում եւ, վար մարդ-կու. իմանալ մասնակցել եւ իմ առաքածային վրանակին սիրել եւ ներողամտութեան պատ-վերները, եւ իմ գլխավոր արեւանքները տեսնում եւ միայնակ ազգայնական արեւան-ակ մեզ:

«Մտացի բարձր, բարի եւ սիրելի բարեկամս Թաղ մեր առաքածային վրան-կելը եւ նրա սեփականութեանը մայրը պալատն մեզ ինքնակալ առարկ եւ հոգը հաղորդում. ներքու:

Մ ա թ ի ս »

choses il y en a d'autres que la faible conception humaine ne peut atteindre, il me paraît assez inutile de s'occuper d'une lecture inintelligible, qui par là même ne pourrait être d'aucun fruit. Je n'ai jamais pu comprendre la passion qu'ont certaines personnes de s'embrouiller l'entendement, en s'attachant à des livres mystiques, qui n'élèvent que des doutes dans leurs esprits, exaltent leur imagination et leur donnent un caractère d'exagération tout-à-fait contraire à la simplicité chrétienne. Lisons les Apôtres et l'Évangile. Ne cherchons pas à pénétrer ce que ceux-là renferment de mystérieux, car, comment oserions-nous, misérables pécheurs que nous sommes, prétendre à nous initier dans les secrets terribles et sacrés de la Providence, tant que nous portons cette dépouille charnelle, qui élève entre nous et l'Éternel un voile impénétrable? Bornons-nous donc à étudier les principes sublimes que notre divin Sauveur nous a laissé pour notre conduite ici-bas; cherchons à nous y conformer et à les suivre, persuadons-nous que moins nous donnons d'essor à notre faible esprit humain et plus il est agréable à Dieu. Qui rejette toute science ne venant pas de Lui; que moins nous cherchons à approfondir ce qu'il Lui a plu de dérober à notre connaissance, et plutôt Il nous en accordera la découverte par Son divin esprit.

«Mon père ne m'a pas parlé du prétendant, mais il m'a dit seulement qu'il a reçu une lettre et attendait une visite du prince Basile. Pour ce qui est du projet de mariage qui me regarde, je vous dirai, chère et excellente amie, que le mariage, selon moi, est une institution divine à laquelle il faut se conformer. Quelque pénible que cela soit pour moi, si le Tout-Puissant m'impose jamais les devoirs d'épouse et de mère, je tâcherai de les remplir aussi fidèlement que je le pourrai, sans m'inquiéter de l'examen de mes sentiments à l'égard de celui qu'il me donnera pour époux.

«J'ai reçu une lettre de mon frère, qui m'annonce son arrivée à *Uphr* avec sa femme. Ce sera une joie de courte durée, puisqu'il nous quitte pour prendre part à cette malheureuse guerre, à laquelle nous sommes entraînés Dieu sait comment et pourquoi. Non seulement chez vous au centre des affaires et du monde on ne parle que de guerre, mais ici, au milieu de ces travaux champêtres et de ce calme de la nature, que les citadins se représentent ordinairement à la campagne, les bruits de la guerre se

font entendre et sentir péniblement. Mon père ne parle que marche et contremarche, choses auxquelles je ne comprends rien; et avant-hier en faisant ma promenade habituelle dans la rue du village, je fus témoin d'une scène déchirante... C'était un convoi des recrues enrôlés chez nous et expédiés pour l'armée... Il fallait voir l'état dans lequel se trouvaient les mères, les femmes, les enfants des hommes qui parlaient et entendre les sanglots des uns et des autres! On dirait que l'humanité a oublié les lois de son divin Sauveur. Qui prêchait l'amour et le pardon des offenses, et qu'elle fait consister son plus grand mérite dans l'art de s'entretuer.

«Adieu, chère et bonne amie, que notre divin Sauveur et Sa très Sainte Mère vous aient en Leur sainte et puissante garde.

Marie».

— Ah, vous expédiez le courrier, princesse, moi j'ai déjà expédié le mien. J'ai écrit à ma pauvre mère<sup>1</sup>, — առաջ հասնելի, հյուսիսի մայրս մի Բուրիենն m-lle Bourienne-ը, ներս դառնի և իր հետ իշխանագուստը Մարիայի կենտրոնացած, թափառու մտայն միջոցառ մայրենի ընտրովին այլ, թիկնամբու ու զգարթի և ինքնազու մի շունչ:

— Princesse, il faut que je vous prévienne, — ավելացրեց նա, մայրը ցածրացնելով, — le prince a eu une altercation, — «altercation», — առաջ նա, բաժանանալուամբ ինքն իրեն լսելով, — une altercation avec Michel Ivanoff. Il est de très mauvaise humeur, très morose. Soyez prévenue, vous savez<sup>2</sup>.

— Ah! chère amie, — պատասխանեց իշխանագուստը Մարիան, — je vous ai priée de ne jamais me prévenir de l'humeur dans laquelle se trouve mon père. Je ne me permets pas de le juger, et je ne voudrais pas que les autres le fassent<sup>3</sup>.

Իշխանագուստըրը ժամացույցին նայեց, և տեսնելով, վար սրդեն հինգ բաղի յն անցել յերգենն նվազելու համար սահմանված

<sup>1</sup> Ա, գուր նամակ եր գրել, յես իմն արդեն ու զարկեցի ինչ մայրիկիս եմ գրել:

<sup>2</sup> Պետք է նախադասացնեմ ձեզ, իշխանագուստը, վար իշխանը կոզեց Մարիայի Իվանովի հետ: Տրամագրութունը շատ վատ է, այնպես մտայն եւ նախադասացնում եմ, իմացիք...

<sup>3</sup> Ահ, սիրելի լարեկամու Յես ձեզ ինքրիկ եմ յերբեք չտեսել ինձ, թե ինչ արամադրութուն մեջ եւ նայրու Յես ինձ թույլ չեմ տա դատել նրան և չելի ցտեղանա, վար ուրիշներն ել դատեն:



ժամանակից, վախեցած դեմքով բազմոցաբան դնաց: Տանը տիրող կարգ ու կանոնի համաձայն՝ իշխանը հանդատանում եր 12-ից մինչև 2-ը, իսկ իշխանադուստրը յերգեհոնն եր նվաղում:

## XXVI

Ալեհներ սենեկապաշնը նստած ննջում եր ու ականջ դնում իշխանի խամփոցին, վոր լավում եր նրա առանձնասենյակից: Իսկ տան հեռավոր մի կողմից, փակ դռների յետևից, լավում եր քսաներորդ անդամը կրկնվող Ղյուսսեկովյան սոնատի դժվարին պասսաժները:

Այդ ժամանակ տան մուտքին մոտեցան մի կառելք և մի թեթև կառ: Կառելքից դուրս յեկավ իշխան Անդրեյը, իջեցրեց իր փոքրիկ կնոջը և առաջ քցեց նրան: Ծերուհի Տիխոնը, պարիկով դուռից դուրս հանեց սրահից և շուկով հայտնեց, թե իշխանը քնած ե, ու արագ ծածկեց դուռը: Տիխոնը գիտեր, վոր վնչ վորդու դալուստը, վնչ ել վորեւ անսովոր զեպք՝ չպետք է խանդարեն որվա կարգը: Իշխան Անդրեյը, ըստ յերևույթին, շատ լավ գիտեր այդ բանը. նայեց ժամացույցին, կարծես նրա համար, վոր ստուգի, թե հոր սովորույթները չեն փոխվել արդյոք իր բացակայության միջոցին, և, համոզվելով, վոր չեն փոխվել, դարձավ կնոջը.

— Քսան ըսպեյից հետո կգարժնի: Դնանք Մարիայի մոտ, — ասով նա:

Փոքրիկ իշխանուհին այդ ժամանակամիջոցում հաստացել եր, բայց աչքերը և բեղիկներով կարճ շուրթը խոսելու ժամանակ բարձրանում ու ժպտում եր առաջվա պես դվարթ ու դուրեկան:

— Mais c'est un palais, — ասով նա այնուհետև, նայելով շուրջը մի արտահայտությամբ, վորով դուռում են արտահանդեսի տիրոջը: — Allons, vite, vite!..<sup>1</sup> — նա, չորս կողմը նայելով, ժպտում եր և՛ Տիխոնին, և՛ ամուսնուն, և՛ իրենց ուղեկցող սպասավորին:

— C'est Marie qui s'exerce? Allons doucement, il faut la surprendre<sup>2</sup>.

Իշխան Անդրեյը մի տխուր արտահայտությամբ հեռւում եր կնոջը:

— Ծերացել ես, Տիխոն, — ասով նա ձեռք համբուրող ձեռունուն:

Սենյակի (վորտեղից յերգեհոնի ձայներ եյին դալիս) կողքի դռնից դուրս նետվեց սիրուն շիկահեր ֆրանսուհին: M-lle Bouriennne-ը ուրախութունից կարծես լռեցալի եր:

<sup>1</sup> Սա կարգին պալատ և Դնանք շուտ, շուտ:

<sup>2</sup> Մարքն և վորժություններ անում: Կամաց, հանկարծակի բերեն:

— Ah! quel bonheur pour la princesse, — *ասում է նա* — Enfin! Il faut que je la prévienne<sup>1</sup>.

— Non, non, de grâce... Vous êtes m-lle Bourienne, je vous connais déjà par l'amitié que vous porte ma belle-soeur, — *ասում է իշխանուհին*, — *համբուրվելով ֆրանսուհու հետ* — Elle ne nous attend pas?<sup>2</sup>

Նրանք մտեցան բազմադարանի դռանը, վորի յետեից լսվում էր նորից ու նորից կրկնվող սենատի պատասժը: Իշխան Անդրեյը կանգ առավ ու դեմքը խոժոռեց, կարծես ինչ-վոր անախարժ բանի սպասելով:

Իշխանուհին ներս մտավ. պատասժը կխփն ընդհատվեց: Լսվեց մի նիշ, իշխանազուտար Մարխայի ծանր քայլվածքը և համբուրքի ձայներ: Յերբ իշխան Անդրեյը ներս մտավ, իշխանազուտարն ու իշխանուհին, վոր միայն մի անգամ կարճ ժամանակով տեսել էին իրար իշխան Անդրեյի հարսանիքի օրը, միմյանց զբոլած ջրթուներով պինդ հպվել էին իրար՝ առաջին վայրկյանին պատահած տեղերը: M-lle Bourienne-ը նրանց մոտ կանգնած՝ ձեռք սրտին դրած՝ մղտում էր ջերմեանդ. պատրաստ վորքան լալու, նու յնքան և ծիծաղելու: Իշխան Անդրեյն ուսերը թոթվեց ու դեմքը խոժոռեց, ինչպես խոժոռում և յերաժշտության սիրողը սխալ նստա լսելիս: Կանայք թողին իրար. հետո նորից բռնեցին իրարու. ձեռք նորից սկսեցին համբուրվել. թողին իրար ձեռք ու նորից համբուրեցին միմյանց յերես և, իշխան Անդրեյի համար բոլորովին անսպասելի, յերկուսն էլ լաց յեղան և կրկին սկսեցին համբուրվել: M-lle Bourienne-ը նույնպես լաց յեղավ: Իշխան Անդրեյն, բոտ յերես յթին, իրեն անհարմար դրություն մեջ էր դրում, բայց յերկու կանանց շատ բնական էր թվում իրենց լացը. նրանք կարծես չէին և յենթադրում, թե իրենց տեսակցությունը կարող և այլ կերպ կատարվել:

— Ah! chère!.. ah! Marie!.. — *հանկարծ տաին յերկուսը միասին ու ծիծաղեցին* — J'ai rêvé cette nuit... — Vous ne nous attendiez donc pas... Ah! Marie, vous avez maigri... Et vous avez repris...<sup>3</sup>

<sup>1</sup> Ո՛հ, ինչ ուրախություն իշխանազուտեք համար Վերջապետ Պետը և նույնպես իմաց առլ նրան:

<sup>2</sup> Այն, վոր, ինչպիսիք... Գուր մտեցել Բուրիենն էր. յես տրեղն ծանոթ եմ ձեզ այն բարեկամական հարաբերությունից, վոր դոյություն ունի ձեր և իմ ապրող միջև: Նու մեզ չի սպասում:

<sup>3</sup> Ա՛խ, սիրելի... Ա՛խ, Մարիա — Իսկ յես գիշերք յերազիտ տեսա — Ուրեմն դուք մեզ չեցիք սպասում... Ո՛հ, Մարի, այնքան նիհարել եր — Իսկ դուք այնպես լցվել եք...

— J'ai tout de suite reconnu madame la princess<sup>1</sup>, — միջամեց m-ille Բուրբինը:

— Et moi qui ne me doutais pas!.. բացականչեց իշխանագուստը Մարիան: — Ah! André, je ne vous voyais pas<sup>2</sup>.

Իշխան Անդրեյը ձեռ-ձեռի տված համարվեց քրոջ հետ և ասավ, վոր նա նույնպիսի pleurnicheuse<sup>3</sup> է, ինչպես միշտ: Իշխանագուստը Մարիան դարձավ յեղբորը և, արցունքի միջից, նրա խոշոր ճառագայթող աչքերի սիրադեզ, ջերմ ու հեզ հայացքը կանդ առավ յեղբոր դեմքին:

Իշխանուհին անդադար խոսում էր: Վերին բեդիկներով կարճ շուրթը մի ակնթաթ արագությամբ իջնում էր ցած, դիպչում ուր պետք է՝ ներքին կարմիր շուրթին, և նորից բացվում էր աստաններով ու աչքերով շողուն ժպիտը: Իշխանուհին պատմում էր Մկասկերի ասրի վրա իրեն պատահած դեպքը, վորն իր վիճակի մեջ զանվող կ'ընջ համար յեղեւ և շատ վտանգավոր, և զրանից անմիջապես հետո հայտնեց, թե իր բոլոր զգեստները թողել և Պետերբուրգում և այստեղ, աստված գիտի, ինչ և հազնելու, և թե Անդրեյը բոլորովին փոխվել և, և թե կիտաի Ողինցովան ամուսնացել և մի ձեռուհու հետ, և թե հարմար փեսացու կա նաև իշխանագուստը Մարիայի համար, բայց այդ մասին կխոսենք հետո: Իշխանագուստը Մարիան շարունակում էր անխոս նայել յեղբորը, և նրա ղեղեցիկ աչքերի մեջ կար թե սեր, թե վիշտ: Յերևում էր, վոր նա զրազված և իր սեփական մտքերով, հարսի խոսքերից անկախ: Իշխանագուստը հարսի, Պետերբուրգի վերջին տոնին վերաբերող պատմության կիսին դարձավ յեղբորը:

— Յե՛վ դու վերջնականապես վորոշել ևս զնալ պատերազմ, André, — ասավ հոգաց քաշելով:

Lise-ն նույնպես ցնցվեց:

— Վազն իսկ, — պատասխանեց յեղբայրը:

— Il m'abandonne ici, et Dieu sait pourquoi, quand il aurait pu avoir de l'avancement...<sup>4</sup>

Իշխանագուստը Մարիան մինչև վերջը չլսեց և, շարունակելով իր մտքերի թելը, հարսին դարձավ, սիրալիր աչքերով նրա փորը ցույց տալով:

<sup>1</sup> Յեա անմիջապես ճանաչեցի իշխանուհուն:

<sup>2</sup> Մտքովս եւ չեմ անցնում, թե... Ախ, Անդրեյ, յես քեզ չտեսա եր:

<sup>3</sup> Լացկան:

<sup>4</sup> Նա լքում և ինձ, և, աստված գիտի, թե ինչու... մինչդեռ կարող եմ բարձր պաշտոններ ստանալ:

— Ընչտե՛ս և, — հարցրեց նա:

Բշխմանուհու գեմբը փախվեց, և նա հազոց քաշեց:

— Այո, ճիշտ և, — ասավ նա: — Ահ, սարսափելի բան և...

Լիզայի վերին շուրթին իջավ: Նա յերեսը մտաեցրեց տալով  
գեմբին և կրկին անսպասելի լուց յեղավ:

— Դա հանդատանալու կարիք ունի, — ասավ իշխան Անդրեյը  
խոժանելով: — Այնպես չէ, Լիզա: Դրան տար սենյակդ, իսկ յես  
գնամ հայրիկի մաս: Ինչպե՛ս և, դարձյալ նսւյնն և:

— Նույնն և, նույնը. չգիտեմ քո աչքին ինչպե՛ս կերևա, —  
պատասխանեց իշխանազուստրն ու րախուրախ:

— Նույն մամերը, նսւյն պտույտները ծառուղիների մեջ,  
դադդյա՜նք, — հարցրեց Անդրեյը հաղիվ նկատելի մպխտով, վարը  
ցույց եր տալիս, թե չնայած դեպի հայրն ունեցած սիրուն ու  
հարգանքին, հասկանում եր և նրա թույլ կողմերը:

— Նույն մամերն ու դադդյա՜նք, նաև մաթեմատիկան և իմ  
յերկրաչափության դասերը, — պատասխանեց իշխանազուստրն  
ուրախ-ուրախ, կարծես իր յերկրաչափության դասերը նրա կյանքի  
հաճելի մամերը լինեյին:

Յերբ ձեռ իշխանի հանդատյան մամանակամիջոցը լրացնող  
բանն րադեներն անցան, Տիխոնը յեկավ՝ յերիտասարդ իշխանին  
նոր մաս հրափրելու: Մերունին իր աղքեկակերպի մեջ մի րա-  
ցատության թույլ տվեց՝ ի պատիվ վարդու դպրոցյան. պատվի-  
րեց ներս թողնել նրան ճաշից ստաջ հաղնվելու: Բշխանը հին  
սովորույթի համաձայն կաֆտան եր կրում և շարքում եր: Յեմ  
այն մամանակ, յերբ իշխան Անդրեյը (վաջ թե հյուսրասրահներում  
ունեցած մասյլ արտահայտությամբ, այլ այն աշխույժ գեմբով,  
յերբ խոսում եր Պրեսի հետ) ներս մտավ, ձերունին հարգարանքի  
սենյակում (в углубленіи) լայն, կաշեպատ րադմոցին նստած՝ գլուխը  
հանձնել եր Տիխոնի ձեռներին:

— Ա՜հ Բազմիկ! Բանապարտին հաղթե՛լ ևս ուզում, — ասավ  
ձերունին և թափահարեց կեղծամով-շարքած գլուխը, վարքան  
թույլ եյին տալիս այդ Տիխոնի ձեռներով հյուսվող մադերը: —  
Դանն դու մի լավ բռնիր նրա սձիքը, թե չե՛ս նա մեղ ել շուտով  
իւր հպատակը կդարձնի: Բարե՛ւ: — Ու այսպե՛ր դեմ արավ վար-  
դուհու:

Մերունին լավ արամազրության մեջ եր նախաճաշան քնից  
հեռու (նա ստում եր, թե յիտ-ճաշյա քուշը — արծաթ և, մինչ-  
ճաշյանը — վոսկի): Կախ բնկած թավ հանքերի տակից ուրախ-  
ուրախ նայեց վարդուն: Բշխան Անդրեյը մոտեցավ և համրուրեց  
հոր ցույց տված տեղը: Նա շպատասխանեց հոր սիրած խոսակ-

ցության նյութին, — այն, վոր նա ծաղրում եր այժմյան դինվորականներին, մանավանդ Բոնապարտին:

— Այո, յեկա ձեզ մոտ, հայր, և այն ել հղի կնոջն հետ, — ասավ իշխան Անդրեյը, յեռանդուն ու հարգալիւր աչքերով հետեւելով հոր դեմքի յուրաքանչյուր մկանի շարժմանը: — Ի՞նչպես և ձեր առողջութիւնը:

— Վատառողջ լինում են, սիրելիս, միայն հիմարներն ու անառականները, իսկ դու ինձ ճանաչում ես. առավտոյից յերեկոյ դրազված եմ, մուսկալ եմ, հետեարար և առողջ:

— Փառք ասածս, — ասավ վորդին ժպտալով:

— Աստված այստեղ դորձ չունի: Դե, պատմիր, — շարունակեց ծերունին, դառնալով իր սիրած նյութին, — թե ինչպես դերմանացիք սովորեցրին ձեզ Բոնապարտի հետ կովկոս նոր գիտութիւնը, սարատեգիա կոչեցյալը:

Իշխան Անդրեյը ժպտաց:

— Թողեք մի քիչ հանդատանամ, հայրիկ, — ասավ նա մի ժպտով, վորը ցույց եր տալիս, թե հոր թերությունները յերեք շնն խանդարում, վոր ինքը հարգի և սիրի նրան: — Զե վոր յես դեռ չեմ տեղավորվել:

— Ստնւմ ես, ստնւմ ես, — գոչեց ծերունին, կեղծամբ թափահարելով նրա հյուսվածքի ամբողջութենը փորձելու համար, ու բռնեց վորդու ձեռը: — Կնոջդ բնակարանը պատրաստ եւ Մարիան կառաջնորդի նրան, ցույց կտա և օրտի ուղածի չափ կշատախոսի: Դա կնկա դորձ ե: Ուրախ եմ, վոր նա յեկել և: Նստիր՝ պատմիր: Միխեւսոնի բանակը հասկանում եմ, Տոլստոյինը՝ նույնպես... միաժամանակ հարձակում... Հարավային բանակն ի՞նչ և անելու: Պրուսիան, չեղոքութիւն... այդ գիտեմ: Ավստրիան ի՞նչ և, — ասավ նա, բաղկաթոփից վեր կենալով ու սենյակում քայլելով, մինչ այդ Տիխոնը վազում եր նրա յետևից ու զգեստներ մատուցում: — Շվեցիան ի՞նչ և անում: Ի՞նչպես են Պոմերանիան անցնելու:

Իշխան Անդրեյը, տեսնելով հոր համառ պահանջը, սկզբում տկամա, բայց հետո հետզհետե աշխուժանալով ու, ըստ սովորության, ուսներենից ֆրանսերենի անցնելով՝ սկսեց բացատրել առաջիկա պատերազմի դորժողության ծրագրերը: Պատմեց, թե ինչպես իննսուն հազարանոց բանակը պիտի սպառնա Պրուսիային, վորպեսզի հանձն նրան չեղոքութիւնից և պատերազմի մեջ քաշեն, թե ինչպես այդ դորքերի մի մասը պետե և Շտրալզունդում միանա շվեդական դորքին, թե ինչպես յերկու հարյուր քսան հազար ավստրիացի, միանալով հարյուր հազար ուսների

հետ, պետք է դորձեն Բաաշխայում ու Զոհնոսի ափերին, և թե ինչպե՞ս հիսուն հազար սուս և հիսուն հազար անդլիացի ափ են իջնելու։ Նեապոլում, և ինչպե՞ս ի վերջո հինգ հարյուր հազարանոց բանակը պետք է ամեն կողմից հարձակում դորձի ֆրանսացիներին դրա։ Մեր իշխանը ցույց չափեց ամենափոքր հետաքրքրությունն անդամ, ասես չէր լսում, և շարունակելով քայլել ու հաղնվել, չեղեր անդամ անապատելի ընդհատեց նրան։ Մի անգամ կանգնեցրեց ու դռնեց.

— Սպիտակը՝, սպիտակը՝:

Դա նշանակում էր, վոր Տիխոնը չի տվել նրան ուղած ժիլետը։ Մյուս անգամ նա կանգնեցրեց վորդուն ու հարցրեց.

— Իսկ նա շուտով կ'ենի,— և դու ինչ հանդիմանանքով շարժելով՝ ասավ.— Կա՞յ չի։ Շարունակիր, շարունակիր:

Յերրորդ անգամ, չեղր իշխան Անդրեյը վերջացնում էր նկարագրությունը, ձերունին չեղեց կեղծ, պատմական մայնով. «Malbroug s'en va-t-en guerre. Dieu sait quand reviendra»<sup>1</sup>.

Վարդին միայն մպտայ.

— Ձե՛ս ասում, թե այս ծրագիրը չես հավանում եմ,— ասավ վորդին,— պատմեցի միայն, ինչ-վոր կա։ Նապոլեոնն արդեն կազմեց և իր ծրագիրը՝ սրանից վաղ պակաս:

— Ե, նոր վաշինչ չափը։— Յե՛վ ձերունին մտածկոտ շարունակեց չեղրը.— Dieu sait quand reviendra<sup>1</sup>.— Գնա սեղանատուն:

## XXVII

Վարդյայ մամին ձեր իշխանը՝ չպարված ու ամրված՝ մտավ սեղանատուն, ուր նրան սպասում էին հարսը, իշխանադուստր Մարիան, mille Բուրիներ և իրենց ճարտարապետը, վորին իշխանի տարրինակ քմահաճությամբ թույլատրված էր սեղանին մասնակցել, թեև իր գիրքով աննշան այդ մարդը չեղրեր չէր կարող տկնկաշել մի այդպիսի պատիվ։ Իշխանը, վոր կյանքում խոտորեն պահպանում էր դիրքերի տարրերությունը և հազվադեպ էր թույլ տալիս իր սեղանին մասնակցել անդամ նահանգական բարձր պաշտոնյաների, հանկարծ ճարտարապետ Միխայիլ Բովանովիչին, վոր քիթը սրբում էր անկյունում, դժովոր թաշկինակով, ապացուցում էր, թե բոլոր մարդիկ հավասար են, և շատ անգամ ասում էր ողջկան, թե Միխայիլ Բովանովիչը վաղ մի րանով պակաս չի մեղնից։ Ու սեղանի վրա իշխանն ամենից տվելի խոսակցում էր լսակցայ Միխայիլ Բովանովիչի հետ:

<sup>1</sup> Մալբրուգը կռիվ գնաց։ Աստված գիտի, չե՞ր կվերադառնա:

Սեղանատանը (վոր ահագին ու բարձր մի սենյակ էր, ինչպես և տան բոլոր սենյակները) իշխանի գալուստ սպասում էին տնեցիներն ու սպասավորները՝ յուրաքանչյուր ակօրի յետև կանգնած. սպասավորները գլխավորը՝ անձեռոցիկը բռնած՝ նայում էր սեղանի սարքին, աչքով էր անում լաքյեներին ու անհանգիստ նայվածքը շարունակ պատի ժամացույցից դարձնում էր դեպի դուռը, վորտեղից ներս էր մտնելու իշխանը։ Իշխան Անդրեյը նայում էր մեծ, իր համար նոր, վռակե շրջանակի մեջ դրված իշխան Բալկոնսկիների տոհմաբանական ծառը. ներկայացնող պատկերը, վորի դիմաց կախված էր նույնպիսի մեծ շրջանակով, վատ նկարված (հավանորեն տանու նկարչի ձեռքով) մի թագակիր տիրակալ իշխան, վորը պետք է սերած լիներ Բյուրիկից և Բալկոնսկիների տոհմի նահապետը պետք է յեղած լիներ։ Իշխան Անդրեյը նայում էր այդ տոհմաբանական ծառին, գլուխն որորելով ու մի քմիծաղով, վորով նայում են ծիծաղելիության չափ նման պատկերի։

— Իր ամբողջ եյությամբ այս պատկերի մեջ է, — ասով նա իրեն մոտեցող իշխանադուստր Մարիային։

Իշխանադուստրը դարձանքով յեղբորը նայեց։ Չեր հասկանում ինչի վրա յե յեղբայրը ժպտում։ Հոր բոլոր արածներին ինքը վերարերվում էր խորին ակնածանքով և քննադատութունից վեր էր համարում։

— Յուրաքանչյուր մարդ ունի իր Աֆրիկայան դարչապարը, — շարունակեց իշխանը։ — Ի՞նչ ահագին խելքով հանդերձ՝ donner dans ce ridicule!<sup>1</sup>

Իշխանադուստր Մարիան չկարողացավ ըմբռնել յեղբոր դատողության համարձակությունը և պատրաստվում էր առարկել նրան, յերբ առանձնասենյակից լսվեց սպասվող քայլերի ձայնը. իշխանը ներս մտավ իր մշտական, սովորական արագ, դվարթ շարժ ու ձև-վերով, վորոնք գիտամբ հակադրում էր կարծես տանը տիրող խիստ կարգ ու կանոնին։ Նույն վայրկյանին մեծ ժամացույցը խփեց ժամը յերկուսը և բարակ ձայնով նրան արձադանք տվին մյուս ժամացույցները հյուրասրահից։ Իշխանը կանգ առավ. կախված թավ հանքերի տակից յեռանդուն, փայլատակող խիստ աչքերը նայեցին բոլորին ու կանգ առան ջահել իշխանուհու վրա։ Զահել իշխանուհին այդ միջոցին զգաց այն, ինչ թագավորի ներս մտնելու ժամանակ զգում են պալատականները, — յերկյուզի և հարգանքի մի զգացում, վոր հարուցանում էր այդ ծերունին իրեն շրջապա-

<sup>1</sup> Ընկել և ծիծաղելի՝ դրության մեջ։





Ու խոսք բացվեց նորից պատերազմի, Բոնապարտի ու այժմյան ղեկներալներին ու պետական մարդկանց մասին: Մեր իշխանը, թվում էր, համոզված է վաճ միայն այն բանում, վոր այժմյան բոլոր զոր-ծիչները ուղղմանն ու պետական զործի այրուրենը չհասկացող տղաներ են և վոր Բոնապարտը չնչին մի ֆրանսացի չէ, հաջողու-թյուն և ունեցիկ միայն այն պատճառով, վոր այլևս չկան Պառլամենտներ ու Սուվորովներ՝ հակադրելու նրան, այլև համոզված էր, վոր քաղաքական վոչ մի բարդություն չկա Յեվրոպայում, չկա և պա-տերազմ, այլ կա մի ինչ-վոր տիկնիկային կատակերգություն: Վորի մեջ դեր են կատարում այժմյան մարդիկ, ձևացնելով, թե զործ են անում: Իշխան Անդրեյն ուրախությամբ տանում էր հոր՝ նոր մարդկանց հասցեյին ուղղած ծագրը, ու նկատելի հրճվան-քով խոսեցնում էր հորը և ունկնդրում նրան:

— Անցածը միշտ լավ և թվում, — ասավ նա, — բայց միթե նույն Սուվորովը չէր, վոր ընկավ Մորոյի լարած թախարդն ու ել չկարողացավ դուրս գալ:

— Այդ ձվ ասավ քեզ: Ո՞վ ասավ... — գոչեց իշխանը: — Սու-վորովը... — Յեվ նա շարտեց ափսեհ, վորը ճարտկոթեն բռնեց Տիխոնը: — Սուվորովը... Մտածեցեք, իշխան Անդրեյ, Յերկուսը՝ Ֆրիդրիխն ու Սուվորովը... Մորճ: Մորան գերի կընկներ, յեթե Սուվորովի ձեռներն ազատ լինեյին. բայց նրա ձեռները վրա նստած էյին հաֆա-կրիզս-վուրստ-շնապս-ոստոր: Անախորժ մի բան: Այ կերթաք, և կճանաչեք այդ հաֆա-կրիզս-վուրստ-շնապս-ոստները: Սուվորովը չկարողացավ լեզու դնել նրա հետ, Միխայիլ Կուտուզովը պիտի դոնթ: Չէ, բարեկամս, — շարունակեց նա, — դուք ձեր ղեկներալներով Նապոլեոնի դեմ չեք կարող բան անել. պետք է ֆրանսացիները վարձել, վոր յուրայինները ջարդեն իրար: Գերմանացի Պալենին ուղարկել են Նյու-Յորք, Ամերիկա, ֆրան-սացի Մորոյին կանչելու, — ասավ նա, ակնարկելով այն հրավերը, վոր արված էր այս տարի Մորոյին՝ ուստական ծառայության մեջ մտնելու: — Հրաշալի չե... Ինչ է, Պառլամենտները, Սուվորովները, Ուլովները միթե դերմանացիներ էյին: Վհ, սիրելիս, կամ դուք եք այնտեղ խենթացել, կամ յես եմ խելքս թոցրել: Աստված ձեզ հա-ջողություն տա, իսկ մենք կտեսնենք: Բոնապարտը նրանց աչքում մեծ գորավար և զարձեղ չէ՞մ...

— Յես չեմ ասում, թե բոլոր կարգադրությունները լավ են յեղել, — ասավ իշխան Անդրեյը, — միայն չեմ կարողանում հաս-կանալ, թե ինչու այդպիսի կարծիք ունեք Բոնապարտի մասին: Ծիծաղեցեք, ինչքան կուղեք, բայց և այնպես Բոնապարտը մեծ զորավար է:

— Մի խաչաւ Ի վանսօվիչ, — դռնէն ձեր իշխանը ճարտարապետին, վորը տառապանածով դրազմած, կարծում եր թե իրեն մոռացել են: — Յեա ձեզ ասել եմ, վոր Բոնապարտը մեծ տակաւիկ եւ Ահա սա յեւ նաւ յեն եւ ասում:

— Ինչպե՞ս չե, ձերդ պայծառափայլություն, — պատասխանեց ճարտարապետը:

Մեր իշխանը նորից ծիծաղեց իւր սառը ծիծաղով:

— Բոնապարտը բախտավոր աստղի տակ եւ ծնվել Նրա զին-վորները հիանալի յեն: Առաջին անգամ դերմանացիներ լիք հաւ-ձակվեց: Իսկ դերմանացիներին ալ ասես, վոր չի խփել: Աշխարհի հենց սկզբից դերմանացիներին խփել են շարունակ Իսկ նրանք՝ վաճ-վորք. միայն միմյանց: Նապոլեոնն իր փառքը նրանց խփելով վաստակեց:

Յեւ իշխանը սկսեց թվել այն բոլոր սխալները, վորոնք, նրա կարծիքով, արել եր Բոնապարտը իր բոլոր պատերազմների եւ անդամ պետական զորքերի մեջ: Վերջին չեւ տառապում, բայց յերևում եր, վոր ինչ նպատճառաբանություններ ել բերելին նրան, որոնք նման արամադիր չե իր կարծիքները փոխելու: Իշխան Անդրեյը լսում եր, զսպելով ընդդիմախօսելու ցանկությունը եւ ակամա դարձանում, թե ինչպե՞ս կարող եւ այս ձեր մարդը, այսքան տարի զուղում նստած, այսքան մանրամասն ու նորութեամբ խմանալ ու քննադատել Յեւթրոպայի վերջին տարիների ուղմական ու քաղաքական հանդամանքները:

— Կարծում ես՝ ձեր եմ, իրերի խեղական դրությունը չեմ հաճեցնում, — յեղբայրացրեց նա: — Յեա դիշերները չեմ քնում. խորհում եմ, մտածում: Բայց ճշր եւ քա այդ մեծ զորավարը, վորտեղ եւ ցույց տվել իր շնորհքը:

— Դա յերկար պատմելու բան եւ, — պատասխանեց վորդին:

— Դե ուրեմն դնա քա Բոնապարտի մաս: Mlle Bourienne, voilà encore un admirateur de votre goujat d'empereur!<sup>1</sup> — դռնէն նա հիանալի ֆրանսերենով:

— Vous savez, que je ne suis pas bonapartiste, mon prince<sup>2</sup>.

— «Dieu sait quand reviendra»...<sup>3</sup> — յերդեց ձեր իշխանը կեղծ տոնով, ծիծաղեց ավելի կեղծ ձևով ու դուրս յեկավ սեղանատնից: Փոքրիկ իշխանուհին թե վեճի ժամանակ, թե հետո լուս ու յերկրուղով համակված նայում եր մերթ իշխանադուստր Մարիային,

<sup>1</sup> Ահա ձեր սարկահողի կայսեր մի յերկրպագու յեւ:

<sup>2</sup> Դուք լավ գիտեք, իշխան, վոր յեա բոնապարտյան չեմ:

<sup>3</sup> Աստված գիտի, թե յերբ կվերադառնա:

մերթ կհարայրին: Յերբ ճաշը վերջացավ՝ նա թանցուկ արավ տալովը և տարավ մյուս սենյակը:

— Comme c'est un homme d'esprit votre père, — ասավ նա: — C'est à cause de cela peut-être qu'il me fait peur<sup>1</sup>.

— Ո՛ր, նա այնքան բարի չե, — ասավ իշխանադուստրը:

## XXVIII

Իշխան Անդրեյը մեկնելու յեր մյուս որը յերեկոյան: Մեր իշխանը, ըստ իր սովորության, ճաշից հետո զնաց իր առանձնասենյակը: Փոքրիկ իշխանուհին տալով մոտ եր, Իշխան Անդրեյը, ճանապարհորդական, առանց ուսադիրների բաճկոնը հագած, իր սենեկապահին հետ կապկպում եր իրերը իրեն հատկացված հարկաբաժնում: Անձամբ քննելով կառքը և հետեւելով ճամպուրակների տեղավորմանը, հրամայեց լծել: Սենյակում մնացել ելին այն իրերը միայն, վոր իշխան Անդրեյը միշտ տանում եր հետը, — մի արկղիկ, արծաթյա պահարան՝ ամանեղեն զնեւու համար, տաճկական յերկու աթոռանակ և հար նվիրած սուրը, վոր բերված եր Ոչակովից: Զամբորդական այն իրերը իշխան Անդրեյը պահում եր խնամքով. բոլորը նոր ելին, մաքուր, մահուղե պատյանների մեջ և խնամքով կապված ելին բարակ թելերով:

Մեկնումի և կյանքի փոփոխության վայրկյաններին՝ իրենց քայլերը կշռադատելու ընդունակություն ունեցող մարդիկ սովորաբար անձնատուր են լինում լուրջ մտախոհությունների: Այդ վայրկյաններին սովորաբար ստուգում են անցյալը և ապագայի ծրագիր կազմում: Իշխան Անդրեյի դեմքը խոհուն ու մեղմ արտահայտություն ուներ: Նա, ձեռները յետևը դրած, արագ զննում-դալիս եր սենյակի մի անկյունից մյուսը, միշտ առջևը նայելով ու գլուխը մտածկոտ շարժելով: Սարսափմամ եր արդյոք պատե՞րազմ զնալու, թե՞ տխուր եր կնոջը թողնելու համար, — գուցե ե՛մ մեկը, ե՛մ մյուսը, միայն, ըստ յերևույթին, չցանկանալով, վոր իրեն այդ դրության մեջ տեսնեն, նախասենյակից քայլերի ձայն լսելով, շտապով թողեց ձեռները, կանգնեց սեղանի առաջ, իրը թե կապում ե արկղիկի պատյանը, և ընդունեց իր մշտական, հանդիսատե անթափանցելի տեսքը: Յեկողը իշխանադուստր Մարիան եր:

— Ինձ ասին, վոր հրամայել ես կառքը լծեն, — ասավ նա հեղալով (նա ըստ յերևույթին, վազել եր), — իսկ յես այնպես ուղում եյի դեռ խոսել քեզ հետ առանձին: Աստված գիտի, թե նորից վորքան ժամանակով ենք բաժանվում: Չե՞ս բարկանում, վոր լեկա:

<sup>1</sup> Ինչ ինչացի մարդ և ձեր հայրը: Գուցե հենց այդ պատճառով եմ վախե՜նում նրանից:

Դու շատ փոփոխել ես Անդրյուշա, — ավելացրեց նա կարծես իր այդ հարցին բացատրություն տալու համար:

«Անդրյուշա» բառն արտասանելով նա ժպտաց, Յերեկի իրեն ել տարորինակ թվաց, վոր այդ խառազեմ, գեղեցիկ տղամարդը նույն Անդրյուշան է, նիհար, չարաճճի տղան, իր մանկության ընկերը:

— Իսկ ուր է Lise? — հարցրեց իշխան Անդրեյը, ժպտով միայն պատասխանելով քրոջ հարցին:

— Նա այնպես հոգնած էր, վոր իմ սենյակում բազմոցի վրա քնեց: Ո՛հ, André! Quel trésor de femme vous avez<sup>1</sup>, — ասավ իշխանազուտորն ու նստեց յեղբոր դեմ ու դեմ բազմոցի վրա: — Նա կատարյալ յերեխա յե, այնքան սիրելի, ղվարթ: Այնպես սիրեցի նրան:

Իշխան Անդրեյը լուռ էր. բայց իշխանազուտորը նրա դեմքի վրա նկատեց հեղնական ու արհամարհական արտահայտություն:

— Բայց պետք է ներողամիտ լինել փոքրիկ թերությունների նկատմամբ. ով այդպիսի թերություններ չունի, André. Մի մոռանա, վոր նա մեծացել ու դաստիարակվել է աշխարհիկ վաղով և հետո նրա վիճակն այժմ վարդազույն չէ: Պետք է յուրաքանչյուրի դրության մեջ մտնել: Tout comprendre, c'est tout pardonner<sup>2</sup>. Մտածիր թե փոքրան ղժվար է խեղճի համար, ամուսնական կյանքին ընտելանալուց հետո, բաժանվել ամուսնուց ու մենակ ապրել պուզում, այն ել այդ դրության մեջ: Դա շատ ղժվար բան է:

Իշխան Անդրեյը, քրոջը նայելով, ժպտաց այնպես, ինչպես ժպտում ենք մենք լսելով այն մարդկանց, վորոնց ներքին եյությունը պարզ տեսնում ենք:

— Դու ել գյուղում ես ապրում, բայց այդ կյանքը սարսափելի չես համարում, — ասավ նա:

— Յես՝ ուրիշ: Իմ մասին ավելորդ է խոսել: Յես ուրիշ կյանք չեմ ցանկանում, և ցանկանալ ել չեմ կարող, վորովհետեւ ուրիշ մի այլ կյանք չեմ ճանաչում, բայց մտածիր, André, թե վորքան ծանր է ջանել, աշխարհիկ կնոջ համար իր կյանքի լավազույն տարիներում փակվել պուզում, մենակ. վորովհետեւ հայրիկը զրադված է միշտ, իսկ յես... դու ինձ ճանաչում ես... թե վորքան յես ղուրկ եմ լավազույն հասարակությանն ընտելացած կնոջն զբաղեցնելու շնորհքից, հնարավորությունից: Mille Bonnes! միայն...

<sup>1</sup> Ո՛հ, Անդրե, ինչ գանձ է կինդ քեզ համար:

<sup>2</sup> Ով ամեն ինչ հասկանում է, նա ամեն ինչ ներում է:

— Այդ ձեր Բուրբինն ինձ բոլորովին դուր չի գալիս, — ասավ իշխան Անդրեյը:

— Ո՞ր, վոչ: Նա շատ սիրելի է բարի յե, և վոր դիտավորն է, խեղճ ազնիկ և Վոչ վոր չունի, վոչ վոր ծիշան ասած՝ նա ինձ վոչ միայն պետք չի, այլև ծանրություն և: Յեա, ինչպես գիտես, միշտ ել յեղել եմ վայրենի, իսկ հիմա ավելի ես: Սիրում եմ մենա-կություն... Mon père-ն՝ նրան շատ է սիրում: Նա ու Միխայիլ Իվանովիչը — այն անձնավորություններն են, վորոնց հետ նա միշտ սիրալիր ու բարի յե, վորովհետև յերկուսն էլ իր կողմից բարեբարված են: Ինչպես Ստեփան ասում է. «Մենք այնքան չենք սիրում մեզ բարիք անողներին, վորքան սիրում ենք մեզնից բարիք ստացողներին»: Mon père-ն նրան վերցրել է իրի վորի, և mille Բուրբինը շատ բարի յե: Յեվ mon père-ն սիրում է նրա կարգավու յեղանակը: Նա յերկաները կարգում է հայրիկի համար: Կարգում է հիանալի:

— Ե, ճիշտն ասա, Marie, կարծում եմ, յերբեմն շատ ծանր պիտի լինի քեզ համար հայրիկի բնավորությունը, — հանկարծ հարցրեց իշխան Անդրեյը:

Իշխանազուստը Մարիան նախ զարմացավ, հետո վախեցավ այդ հարցից:

— Ի՞նչ... Ընձ համար... ծանր, — ասավ նա:

— Նա միշտ ել խիստ է յեղել, իսկ հիմա, կարծում եմ ավելի ծանր պիտի լինի, — ասավ իշխան Անդրեյը, ըստ յերևույթին, դիտմամբ, վարպետի քրոջը վարձի:

— Դու ամեն բանով յավ ես, André, բայց մօքի մի տեսակ հալարաություն ունես, — ասավ իշխանազուստը, ավելի հետեւելով իր մօքերի, քան թե խոսակցության ընթացքին, — և դա մեծ մեղք է: Մթթե կարելի յե հայրիկին քննադատել, և յեթե կարելի ել լիներ, խորին հարգանքից բացի՝ ուրիշ ինչ դպացում կարող է հարուցանել մի այնպիսի մարդ, ինչպիսին mon père-ն և: Յեվ յես այնպիսի գոհ ու յերջանիկ եմ նրա հետ ապրելով: Կցանկանայի միայն, վոր դուք բոլորդ ել ինձ նման յերջանիկ լինեք:

Յեզբայրը գլուխն որորեց կասկածամտությամբ:

— Մի բան, վոր ծանր է ինձ համար, — յես քեզ ճիշտը կասեմ André, — դա նրա մտածելակերպն է կրոնի նկատմամբ: Ձեմ հասկանում, թե ինչպես այդքան մեծ խեղճ տեր մի մարդ, չի կարողանում տեսնել այն, ինչ ցերեկվա պես պարզ է, ու կարող է մուրովել այդպես: Այս է ահա իմ միակ դժբախտությունը: Բայց



վերջերս բարեկաման նշաններ եմ տեսնում։ Նրա ծաղրն այնպես թունավոր չի հիմա։ Դի վանական կա, վորին նա ընդունեց ու յերկար խոսեց հետը։

— Ե, բարեկամս, վախենում եմ, վոր իդուր յեռանդ եք սպասում այդ վանականի հետ, — հեղնանքով, բայց սիրալիր ասավ իշխան Անդրեյը։

— Ah! mon ami<sup>1</sup>. Յես միայն ազոթում եմ ասածուն և հուշս ունեմ, վոր նա կլի ինձ։ André, — ասավ նա քաշվելով, վայրկյանական յուսթյունից հետո, — մի մեծ խնդիր ունեմ։

— Ի՞նչ է, սիրելիս։

— Վոչ, նախ խոստացիր, վոր չես մերժի։ Քեզ համար դժվար բան չի, վոչ ել արժանապատուիթյանդ դիպչող։ Ինձ կմխիթարես միայն։ Խոստացիր Անդրեյուշա, — ասավ նա, ձեռք սեղիկյալի մեջ կախելով, մի բան բռնեց, բայց դեռ ցույց չափեց, կարծես այն, ինչ բռնել էր իր խնդրի առարկան եր և, կարծես, նախքան խնդիրը կատարելու խոստումն անելը, չեր կարող հանել այդ բանը։

Նա ամաչկոտ, աղերսող հայացքով նայում եր յեղբորը։

— Յեթե նույնիսկ այդ ծանր լիներ ինձ համար... — կարծես պաշտելով բռնի էյալթյունը՝ պատասխանեց իշխան Անդրեյը։

— Դու ինչ ուզում ես կարծիք։ Դիտեմ, դու ել mon père-ի պես ես։ Ինչ ուզում ես կարծիք, մտածիք, բայց այս բանն արա ինձ համար։ Կատարիք, խնդրում եմ։ Այս բանը մեր հայրիկի հայրը, մեր պապը կրել է բոլոր պատերազմներում... — Նա դեռ սրիկիյունից չեր հանում այն, ինչ բռնել էր։ — Ուրեմն խոստանձում ես։

— Իհարկե։ Բայց ի՞նչ կա։

— André, յես քեզ որհնում եմ այս սրբապատկերով. խոստացիր, վոր յերբեք վդիցդ չես հանի։ Խոստանձում ես։

— Յեթե յերկու փթանոց չի և վիրս չի ծոխ... Քեզ բավականություն պատճառելու համար... — ասավ իշխան Անդրեյը, բայց նույն վայրկյանին նկատելով, վոր քրոջ դեմքն, իր կատակից, վերավորված արտահայտություն ստացավ, դղջաց։ — Շատ ուրախ եմ, իսկապես, շատ ուրախ եմ, սիրելիս, — ավելացրեց նա։

— Հակառակ քո կամքի Նա կփրկի, կվողորմա ու դարձի կրերի քեզ, վորովհետեւ միայն Նրա մեջ է ճշմարտությունն ու անդորությունը, — ասավ իշխանադուստրը հուզումից դողացող ձայնով, յերկու ձեռի հանդիսավոր շարժումով յեղբոր առջև բռնելով փրկչի ձվածե սրբապատկերը, վոր արծաթե շրջանակ ուներ և արծաթե նուրբ շղթա։



Նա խաչակնքեց յերեսը, սրբապատկերը համբուրեց ու ասեց յեղբորը:

— Խնդրեմ, André, ինձ համար...

Նրա խոշոր աչքերը ճառագայթում էին բարության ու հեղուկության լույսով: Այդ աչքերը լուսավորում էին նրա հիվանդոտ ու տգեղ դեմքը և գեղեցկացնում նրան: Յեղբայրն ուղեց վերջինի սրբապատկերը, բայց քույրը կանգնեցրեց նրան: Անդրեյը հասկացավ, խաչակնքեց յերեսն ու համբուրեց պատկերը: Նրա դեմքը միամտմանակ թե զորովայի, (զգացված եր) և թե հեղնական արտահայտություն ունեւր:

— Merci, mon ami<sup>1</sup>.

Իշխանադուստրը համբուրեց յեղբոր ճակատն ու կրկին նըստեց բազմոցին: Յերկուսն էլ լուռ էին:

— Ինչպես ասի, André, մեծահոգի յեղբւր ու բարի, ինչպես յեղեւ ես միշտ: Lise-ի նկատմամբ խիստ մի լինի, — ասավ, — Նա այնքան սիրելի, այնքան բարի յե. իսկ նրա վիճակը հիմա շատ ծանր է:

— Կարծեմ, յես քեզ վոչինչ չասի, Մաշա, թե վորեւ բանի համար հանդիմանում եմ կնոջս կամ դժգոհ եմ նրանից: Այդ բոլորն ինչի՞ համար ես ասում:

Իշխանադուստր Մարիայի դեմքը ծածկվեց կարմիր բծերով և նա լռեց, կարծես ինքն իրեն մեղավոր համարելով:

— Յես քեզ վոչինչ չեմ ասել, բայց արդեն ասող յեղեւ ե: Յե՛վ դա վշտացնում է ինձ:

Իշխանադուստր Մարիայի ճակատին, պարանոցին ու այտերին յերեսացին ավելի մեծ քանակությամբ կարմիր բծեր: Նա ինչ-վոր բան ուղեց ասել, բայց չկարողացավ: Յեղբայրը դուշակեց. փոքրիկ իշխանուհին ճաշից հետո, արտասովելով, ասել եր, թե նախադեմ է դժբախտ ծննդաբերություն, վախենում է. գանդառվել եր իր բախտից, սկեսրայրից ու ամուսնուց: Արտասովելուց հետո՝ քնել եր: Իշխան Անդրեյը խղճաց քրոջը:

— Մի բան իմացիր, Մաշա, յես վոչ մի բանի համար չեմ կարող հանդիմանել, չեմ հանդիմանել և յերբեք չեմ հանդիմանելու կնոջս, և ինքս ել չեմ կարող վորեւ բանում հանդիմանել ինձ՝ դեպի նա ունեցածս վերաբերմունքի համար. և այսպես կլինի միշտ, ինչ հանդամանքներում ել լինեմ: Բայց յեթե ուղում ես իմանալ ճամարությունը... ուղում ես իմանալ արդյո՞ք յերջանիկ եմ յես: Վճշ: Նա յերջանիկ է: Վճշ: Ինչ՞ի յե այդպես: Զգիտեմ...

<sup>1</sup> Ծնորհակալ եմ, բարեկամս

Այս առեւելք, վեր կացաւ, մոտեցաւ քրոջը և, կռանալով, համբուրեց նրա ճակատը: Նրա դեղեցիկ աչքերը փայլում էին խնայեցի ու բարի, անսովոր փայլով, բայց նա քրոջը չեր նայում, այլ, նրա գլխի վրայով, նայում էր բաց դռան մթության մեջ:

— Դնանք նրա մոտ, պետք և հրաժեշտ տալ: Կամ ինքդ դնա, զարթնցրու, խնդուն կղամ: Պետուշկա, — կանչեց նա սենեկապահին, — արի աշտեղ, հալածիր: Սա դիր կառքի նստարանի տակ, սա՝ աջ կողմը:

Իշխանագուստը Մարիան յեւով ու դնաց դեպի դուռը, բայց կես ճամբին կանգ առաւ:

— André, si vous avez la foi, vous vous seriez adressé à Dieu, pour qu'il vous donne l'amour, que vous ne sentez pas, et votre prière aurait été exaucée<sup>1</sup>.

— Այո, միթե այդպես, — ասաւ իշխան Անդրեյը: — Դնա, Մաշա, յես անմիջապես կղամ:

Քրոջ սենյակը դնալիս, միջանցքում, վորը միացնում էր մի տունը մյուսին, իշխան Անդրեյը հանդիպեց սիրալիր ժպտացող m-lle Բուրիենին, վոր այստեղ յերրորդ անգամն էր պատահում նրան ստանձնացած անկյուններում հիացադին ու միամիտ ժպտալը դեմքին:

— Ah! je vous croyais chez vous<sup>2</sup>, — ասաւ նա, չդիտես ինչու կարմրելով ու աչքերը խոնարհելով:

Իշխան Անդրեյը խոսությամբ նայեց նրան. նրա դեմքին կատաղութուն յերևաց: Նա վռչինչ չստաւ որիորդին, այլ, առանց նրա աչքերին նայելու, դիտեց ճակատն ու մազերը մի այնպիսի արհամարհանքով, վոր ֆրանսուհին կարմրեց ու հեռացաւ, առանց մի խոսք ասելու: Յերը իշխանը մոտեցաւ քրոջ սենյակին՝ իշխանուհին արդեն զարթնել էր և նրա զվարթ, արագախոս ձայնը լրովում էր բաց դռնից: Նա խոսում էր այնպես, կարծես յերկար ժամանակ չեր խոսել, և ուզում էր շահել նաև կորցրած ժամանակը:

— Non, mais figurez-vous, la vieille comtesse Zouboff avec de fausses boucles et la bouche pleine de fausses dents, comme si elle voulait défier les années<sup>3</sup>... Հա-հա-հա, Marie.

<sup>1</sup> Յեթն հազար ունենայի, կազոթեյի տատուն, վոր նա քեզ սեր շնորհի վոր չունես, և ազոթեղ ընդունելի կլինես:

<sup>2</sup> Ահ, կարծում եմ դուք ձեր սենյակում եք:

<sup>3</sup> Վոչ, յերևակայեցեք, պատաճ կոմսուհի Զուբովան, կեղծ խոզապանքով, կեղծ տատնեքով, կարծես իր տարիները հեղնելով...

Նույն այդ խոսքերը կոմսուհի Զուրովայի մասին, նույն ծիծաղով իշխան Անդրեյը արդեն հինգ անգամ լսել էր կնոջից՝ կողմնակի մարդկանց պատմելիս։ Նա հանդարտ ներս մտավ։ Իշխանուհին՝ հաստիկի, կարմրած, ձեռագործը ձեռին նստել էր բաղկաթուղմ ու խոտում էր անդադար, պատմելով Պետերբուրգի հիշողություններից մինչև իսկ հիշելով ֆրաչները։ Իշխան Անդրեյը մոտեցավ, շոյեց նրա գլուխն ու հարցրեց, թե հանդատացել է արդյոք ճանապարհի հոգնությունից։ Իշխանուհին պատասխանեց ու շարունակեց նույն զրույցը։

Կառքը, յերեք զուգդ ձի լծած, սպասում էր մուտքի առաջ։ Դուռը աշնանային մուժ գիշեր էր։ Կառապանը կառքի լծափայտն անգամ չէր տեսնում։ Մուտքի դռան առաջ խմբված էյին լապտերներով մարդիկ։ Ահագին տան լուսամուտները լուսավորված էյին առատորեն։ Նախասենյակում խմբվել էյին տան ծառաները՝ յերկուստարդ իշխանին հրաժեշտ տալու։ Պահլիճում հավաքվել էյին տնեցիները՝ Միխայիլ Իվանովիչը, m-lle Bourienne, իշխանադուստր Մարիան և իշխանուհին։ Իշխան Անդրեյը կանչվել էր հոր մոտ, վոր ուղււմ էր վորդուն հրաժեշտ տալ առանձին։ Բոլորն սպասում էյին նրանց դուրս գալուն։

Յերբ իշխան Անդրեյը հոր առանձնասենյակը մտավ, ծեր իշխանը՝ ակնոցը քթին, սպիտակ խալաթով (վորով վոչ-վոքի չէր ընդունում, բացի վորդուց) սեղանի առաջ նստած՝ զրում էր։ Նա յես նայեց։

— Դնձււմ ես։ — Յեվ նորից շարունակեց զրել։

— Յեկա հրաժեշտ տալու։

— Համբուրիբ աջտեղ, — ցույց տվավ նա այտը, — շնորհակալ եմ, շնորհակալ եմ։

— Ինչձււ համար եք շնորհակալություն հայտնում։

— Նրա համար, վոր ժամանակին ես մեկնում, կնոջդ փեշերից չես բռնում։ Մառայությունը՝ ամենից առաջ։ Շնորհակալ եմ, շնորհակալ եմ։ — Յեվ նա շարունակեց զրել այնպիսի թափով, վոր ճոճուցող զրչից կաթիլներ էյին ցայտում այս ու այն կողմ։ — Յեթե բան ունես տեսլու՝ ասա... Այդ յերկու գործը կարող եմ միասին անել, — ավելացրեց նա։

— Կնոջս մասին... Առանց այն ել ամաչում եմ, վոր նրան թողնում եմ ձեր խնամքին...

— Ի՞նչէր ես խոսում։ Ասա՝ ինչ պետք ե։

— Յերբ կնոջս ծննդաբերության ժամանակը ձա Մոսկվայից մանկաբարձ կանչեցեք... անպատճառ։

Մեր իշխանը զրելը թողեց և, կարծես վորդու ասածը չհասկանալով, խոտահայաց աչքերը սեեռեց նրա վրա։

— Գիտեմ, վոր վոչ-վոք ողնել չի կարող, յեթե իր կազմվածքը չողնի, — ասավ իշխան Անդրեյը նկատելի շփոթված: — Գիտեմ, վոր միլիոնավոր զեպքերից մեկն է դժբախտ լինում, բայց այդ նրա է իմ յերեակոյաությունն եւ նրան շատ բաներ են ասել, յերազ է տեսել, և վախենում եւ:

— Հը՛մ... հը՛մ... — քրթնջաց ինքն իրեն ծեր իշխանը, շարունակելով դրածը վերջացնել: — Կանեմ:

Ստորագրեց, հանկարծ շուռ յեկավ զեպի վորդին ու ծիծաղեց:

— Բանդ վնտ ե, հա:

— Ի՞նչ բան, հայրիկ:

— Կինդ, — կարճ ու նշանակալից ասավ ծեր իշխանը:

— Ձեմ հասկանում, — ասավ իշխան Անդրեյը:

— Ե, ինչ արած, սիրելիս. — ասավ իշխանը, — կանայք բոլորն այդպես են, թողնել չես կարող: Մի վախենա, մարդու բան չեմ ասի. իսկ դու ինքդ արդեն գիտես:

Յեմ իր վոքերիկ վոսկրոտ ձեռքով բռնեց վորդու աջը, թափ տվեց, ուղիղ վորդու յերեսին հառեց իր արագաշարժ աչքերը, վորոնք, կարծես, թափանցում էին մարդու ներսը, ու նորից ծիծաղեց իր ասուր ծիծաղով:

Վորդին հոգոց քաշեց, ի նշան խոստովանութան, թե հայրը հասկացավ իր միտքը: Ծերունին, շարունակելով ծալել ու կնքել նամակները, իրեն հատուկ արագությամբ վերցնում ու մի կողմ եր նետում զմուռը, կնիքն ու թուղթը:

— Ի՞նչ պիտի անել: Գեղեցիկ ե: Յես ամեն ինչ կանեմ: Հանգիտ կաց, — ասում եր հառ-ընդհատ, նամակները կնքելով:

Անդրեյը լուռ եր. նա է՛ ուրախ եր է՛ տխուր, վոր հայրը հասկացավ իր միտքը: Ծերունին վեր կացավ ու նամակը տվեց վորդուն:

— Լսի՛ր, — ասավ նա, — կնոջդ մասին մի մտածիր. ինչ հնարավոր է՝ կարվի: Հիմա լսիր. նամակը տուր Միխայիլ Բլարիոնովին: Գրում եմ, վոր քեզ լավ տեղեր ուղարկի և յերկար համհարդ չպահի. զգվելի պաշտոն ե: Ասա նրան, վոր իրեն հիշում եմ և սիրում: Հետո դիր, թե քեզ ինչպես կընդունի: Յեթե լավ կլինի՝ ծառայի: Նիկոլայ Անդրեևիչ Բալկոնսկու վորդին վոչ-վոքի մոտ չի կարող ծառայել վողորմածությամբ: Դե, հիմա արի այստեղ:

Նա խոսում եր այնպես արագ, վոր բառերի կեսը չեր վերջացնում, բայց վորդին սովորել եր հասկանալ նրան: Նա վորդուն տալով զեպի բլուրոն, կափարիչը յետ դրեց, քաշեց արկղը և այնտեղից հանեց իր խոշոր, յերկար ու սեղմ ձեռագրովը՝ դրած մի տետրակ:

— Յերևի, յես քեզնից առաջ կ'մեռնեմ: Իմացիր, սա իմ հիշատակարանն է. մահիցս հետո կ'հանձնեք թաղավորին: Հիմա այստեղ — սա լոմբարդի տոմս է և և նամակ. սա իբրև պարզե կտրվի. նրան՝ ով կ'զրի Սուվորովի պատերազմների պատմությունը: Կուղարկեք ակադեմիա: Այստեղ գրված են իմ դիտողությունները, ինձնից հետո կարգա, կողտվես:

Անդրեյը հորը չտասով, թե նա, հավանորեն, դեռ յերկար կ'ապրի: Հասկացավ, վոր այդ ավելորդ է.

— Բուբըր կկատարեմ, հայրիկ, — ասավ նա:

— Դե, այժմ դնաս բարով: — Նա ձեռք տվեց վորդուն համրուրելու և ինքը գրկեց նրան: — Մի բան հիշիր, իշխան Անդրեյ, յեթե քեզ սպանեն, ինձ՝ ծերուկին համար այդ մեծ ցավ կլինի... — Նա անսպասելի լոկեց ու հանկարծ շարունակեց ճշուն ձայնով. — Իսկ յեթե իմանամ, վոր քեզ Նիկոլայ Բալիոնսկու վորդու նման չես պահել, ինձ մեծ ամոթանք կպատճառես... — ծղրտաց նա:

— Այդ բանը կարող եյիր ինձ չտանել, հայրիկ, — ժպտալով ասավ վորդին:

Ծերունին լոկեց:

— Ուզում եմ ձեզ խնդրել նաև, — շարունակեց իշխան Անդրեյը, — վոր յեթե ինձ սպանեն և յեթե յես վորդի ունենամ, պահեցեք ձեզ մոտ, ինչպես յերեկ ասի, վորպեսզի ձեզ մոտ մեծանա... խնդրում եմ:

— Կնոջդ չ'հանձնեմ, — ասավ ծերունին ու ծիծաղեց:

Նրանք լուռ կանգնեցին իրար դեմ: Ծերունու արագաշարժ աչքերը սևեռված եյին վորդու աչքերին. նրա դեմքի ներքին մասը թեթև դողաց:

— Հրաժեշտ տվինք... դնե, — հանկարծ ասավ նա: — Գնե, — դռնից նա բարկացած ու բարձր ձայնով, առանձնասենյակի դուռը բանալով:

— Ի՞նչ պատահեց, թնչ, — հարցրին իշխանուհին ու իշխան Նադուստրը, տեսնելով Անդրեյին և վայրկյանաչափ դուռը դռնից հանած ու բարկացած ձայնով խոսող հոր կերպարանքը՝ ճերմակ խալաթի մեջ, առանց պարիկի և ակնոցով:

Իշխան Անդրեյը հոգոց քաշեց և վռչինչ չպատասխանեց:

— Դեհ, — ասավ նա, դիմելով կնոջը:

Յեվ այդ տղեհա՝ը հնչեց սառը ծաղրով, կարծես ասում եր. «այժմ կարող եք ձեր խաղերը խաղալ»:

— André, déjà! — ասավ փոքրիկ իշխանուհին, դունատվելով և յերկյուղով ամուսնուն նայելով:

<sup>1</sup> Անդրեյ, արգեն:

Իշխանը դրկեց նրան: Իշխանուհին ճշաց և ուշաթափ ընկավ նրա ուսին:


Իշխանն զգուշությամբ մի կողմ տարավ ուսը, նայեց կնոջ գեմքին և խնամքով նստեցրեց նրան բազկաթոռին:

— Adieu, Marie<sup>1</sup>, — ասավ կամացուկ քրոջը, համբուրվեց նրա հետ՝ ձեռք բռնած, և արագ քայլերով դուրս յեկավ սենյակից:

Իշխանուհին պառկել էր բազկաթոռի մեջ և m-lle Բուրինը շփում էր նրա քներակները: Իշխանադուռը Մարիան, հարսին բռնած, արտասովաթուր գեղեցիկ աչքերով դեռ նայում էր գեպի այն դուռը, վարանդից դուրս գնաց իշխան Անդրեյը, ու խաչակնքում էր նրան: Առանձնատենակից, կրակոցների պես, լսվում էին ձերբունու հաճախ կրկնվող բարկացած խնչոցները: Իշխան Անդրեյը նոր միայն դուրս եր յեկել, յերբ առանձնատենակի դուռը բացվեց արագ ու յերևաց ճերմակ խաչաթով ձերբունու խիստ կերպարանքը:

— Մեկնեց: Դե, լավ, — ասավ նա, բարկացած նայելով ուշադնաց ընկած փոքրիկ իշխանուհուն, գլուխն սրբեց կշտամբանքով և դուռը վրա բերմից շրջկոցով:

<sup>1</sup> Մնաց քրոջ, Մարի:





## ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

### I

1805 թվի հոկտեմբերին ուսանական զորքերը բռնել էին Ավստրիական երցհերցոգության գլուղերն ու քաղաքները, և դեռ նոր գնդեր էին գալիս Ռուսաստանից ու, ընկիւններին նեղություն պատճառելով, տեղավորվում Բրաունաու բերդաքաղաքի մոտ։ Բրաունաուի մեջ եր գտնվում գլխավոր հրամանատար Կուսուզովի գլխավոր կայանը։

1805 թվի հոկտեմբերի 11-ին հենց նոր Բրաունաու յեկած հետևակ զնդերից մեկը, գլխավոր հրամանատարի զորատեսի ն սպասելով, բանակել եր քաղաքից կես մղոն հեռու։ Չնայած վոր տեղը և շրջապատը ուսանական չեր (պտղատու այգիներ, քարե ցանկապատեր, կղմինդրե տանիքներ, հեռվում յերևացող սարեր), ուսւ չեր նաև զինվորներին հետաքրքրությամբ դիտող ժողովուրդը. բայց և այնպես դունդն ուներ ճիշտ այնպիսի տեսք, ինչպես ներքին Ռուսաստանի վորևէ վայրում զորատեսի սպասող ամեն մի ուսանական դունդ։

Իրիկվանից, վերջին անցումին, հրաման ստացվեց, թե գլխավոր հրամանատարը դունդը դիտելու յե յերթի ժամանակ։ Թեև հրամանի խոսքերը վորոշ չթվացին գնդի հրամանատարին ու հարց ծագեց, թե ինչպես պիտի հասկանալ հրամանի խոսքերը, — յերթի զգեստով, թե վոչ, — այնուամենայնիվ գումարտակապետների խորհրդում վորոշվեց դունդը զորատեսի հանել տոնական զգեստով. այն հիմունքով, թե միշտ լավ ե պատվել չափից ավելի, քան թերի։ Յեվ զինվորները, յերեսուն վերստ ճանապարհ կտրելուց հետո, առանց աչք փակելու, ամբողջ զիշեր կարգի էին բերում իրենց, մաքրվում, աղյուստաններն ու վաշտապետները հաշվում, դասավորում էին և առավոտյան՝ դունդը, առաջին իրիկվա անկարգ, ցրիվ ամբողջ փոխարեն ներկայացնում եր յերկու հազար մարդու մի կանոնավոր դանդաված, վորոնցից յուրաքանչյուրը գիտեր իր տեղը, իր գործը և յուրաքանչյուրի ամեն մի կոճակն ու

ամենափոքրիկ ժողով իրենց տեղն էյին ու աչքի էյին ընկնում մաքրությամբ: Վե՛լ միայն նրանց արտաքինն էր կարգին, այլև, յեթև գլխավոր հրամանատարը հաճեր նայել մուսկոլերների տակը, նա յուրաքանչյուսի հաղին կտեսներ միատեսակ մաքուր շապիկ և պայուսակներում վորոշված թվով իրեր՝ «ասեղ-մասեղ», ինչպես զինվորներն են ասում: Մի հանդամանք կար միայն, վոր բոլորին անհանգստացնում էր: Դա վոտնամանն էր: Զինվորների կես մասի կոշիկները մաշված-քրքրված էյին: Այդ պակասությունը զնդի հրամանատարի մեղքից չէր, վորովհետև շնայած նրա բազմիցս արած գիմուձներին՝ ավտորիական վարչությունը բաց չէր թողել, իսկ դունդը հազար վերստ ճանապարհ էր կտրել:

Գնդի հրամանատարը տարիքավոր, սանդղինիկ, ճերմակող բեղերով ու այտամորուսներով գեներալ էր, կրծքից մինչև թիկունքը ավելի լայն ու լիցուն, քան մեկ ուսից մյուսը: Հաղել էր բոլորովին նոր, բայց յերկար պաշելուց ծաղկերը փչացած մուսկոլի՝ թանձր վոսկեղած ուսադիրներով, վորոնք վոչ թե ներքև, այլ վեր էյին քաշում նրա հաստ ուսերը, հրամանատարը՝ կյանքի ամենափառավոր զործերից մեկը հաջողությամբ կատարողի տեսք ուներ: Նա անց ու դարձ էր անում զորաշարքի առջև և ամեն մի քայլափոխին ցնցվում, մեջքը թեթևակի ծոկով: Յերևում էր, վոր զնդի հրամանատարը հրճվում է իր զնդով, յերջանիկ և նրանով, հազու ամրողջ կարողությամբ նվիրված և նրան. բայց, շնայած դրան, նրա նյարդային քայլվածքը կարճես վկայում էր, վոր զինվորական շահերից բացի, նրա հոգու մեջ քիչ տեղ չեն բռնում հասարակական կենցաղը և կանացի սեռը:

— Ե, սիրելի Միխայլո Միտրիչ, — գիմեց նա դումարտակի հրամանատարներից մեկին (հրամանատարը մպտալով առաջ յեկավ. նկատելի չէր, վոր նրանք յերջանիկ են), — գիշերը լավ հանգչեա՞տացաք: Սակայն, կարճես, վոչինչ, դունդը վատ չի... Այնպես չի: Գումարտակի հրամանատարը հասկացավ ուրախ հեղինանքը և ծիծաղեց:

— «Ծարիցին Լուդ» հրապարակում ել կընդունեյին:

— Ի՞նչ, — հարցրեց հրամանատարը:

Այդ միջոցին քաղաքի ճանապարհի վրա, ուր կարգված էյին նշանատու զինվորներ, յերևացին յերկու ձիավոր: Դրանցից մեկը աղյուտանտ էր, մյուսը նրան հետևող մի կադակ:

Աղյուտանտն ուղարկված էր գլխավոր շտաբից՝ զնդի հրամանատարին հայտնելու այն, ինչ անորոշ ասված էր յերեկվա հրամանում, այն է՝ թե գլխավոր հրամանատարը ցանկանում և

գունդը տեսնել ճիշտ այն վիճակում, ինչ վիճակի մեջ ճամպա յե անցել — շինելներով, հրացանների պատյաններով և առանց վորե պատրաստության:

Յերեկ յերեկո Ղեննայից Կուտուզովի մոտ եր յեկել հոֆերիգ-ստատի անդամը՝ առաջարկելու և պահանջելու՝ վորքան կարելի յե շուտ դնալ միանալ երցհերցոգ Ֆերդինանդի և Մակի բանակին, բայց Կուտուզովը, այդ միացումը ձեռնառու չհամարելով, մտադիր եր, իր կարծիքը հաստատող մյուս ապացույցների հետ միասին, ցույց տալ ավտորիտական դեներալին Ռուսաստանից յեկող զորքերի անմիջիժար վիճակը: Այդ նպատակով ել ցանկանում եր դիմավորել զնդին, այնպես վոր վորքան վատ լինելը դնդի զրությունը, այնքան այդ հաճելի պիտի լինելը գլխավոր հրամանատարին: Թեև աղյուստանալը չգիտեր այս մանրամասնությունները, սակայն նա դնդի հրամանատարին հայտնեց գլխավոր հրամանատարի անխախտ պահանջը, վորպեսզի վիճվորները լինեն շինելներով: Հակառակ դեպքում գլխավոր հրամանատարը դժգոհ կմնա: Այս խոսքերը լսելով զնդի հրամանատարը ուսերը բարձրացրեց անխոս և ձեռները տարածեց ջղայնորեն:

— Բան արիք, — ասավ նա: — Յեա ձեզ առում եյի չե, Միխայլո Միտրիչ, յերթի զգեստով՝ նշանակում ե շինելներով, — հանդիմանությամբ դարձավ նա գումարտակի հրամանատարին: — Ո՛հ, աստված իմ, — ավելացրեց նա և վճռականորեն առաջ անցավ: — Պարոնայք վաշտապետներ, — գուչեց նա հրամանի սովոր ձայնով: — կանչեցեք վերականերին (ֆելդֆերելներին)... Շուտով են գալու, — դարձավ նա աղյուստանալին մի հարգալիր քաղաքավարությամբ, վորն ըստ յերեկոյթին վերաբերում եր այն անձնավորության, վորի մասին խոսում եր:

— Կարծում եմ, մի ժամից:

— Կարճ եմք մինչև գալը հագուստները փոխել տալ:

— Ձգիտեմ, դեներալ...

Գնդի հրամանատարը, ինքն անձամբ շարքերին մոտենալով, կարգադրեց նորից շինելներ հագնել: Վաշտապետները վազեցին դեպի իրենց վաշտերը, վերականերն իրար անցան (շինելները ըտլորովին կարգին չէին) և նույն վայրկյանին նախկին կանոնավոր ու անխոս քառակուսի շարքերը խառնվեցին ու աղմկեցին: Ջինվորներն սկսեցին վազել այս ու այն կողմից, ուսերն անցրած պարկերը հանեցին գլուխներից և, շինելները վերցնելով, ձեռները վեր բարձրացրած, հագան:

Կես ժամ հետո ամեն ինչ նախկին զրության մեջ եր. միայն սևին տվող քառակուսի շարքերը գորշացան: Գնդի հրամանատարը

նորից, իր նյարդային քայլվածքով, առաջ անցավ և հեռվից դիտեց գունդը:

— Սա լ՛նչ բան է: Սա լ՛նչ բան է, — դռնեց նա կանգ առնելով: — Կանչեցեք Յ-րդ վաշտի հրամանատարին այստեղ...

— Յ-րդ վաշտի հրամանատար՝ գններալի մոտ. հրամանատարին՝ գններալի մոտ, Յ-րդ վաշտի հրամանատարին... — լսվեցին ձայներ շարքերից, և աղյուտանալով վաղեց ուշացող սպային փնտռելու:

Յերբ յեռանդոտ ձայները՝ ազավաղելով այդ խոսքերը — և վերածելով այն եղանակալի Յ-րդ վաշտը դարձվածքին, հասան ըստ պատկանելույն, պահանջված սպան յերևաց վաշտի յետևից և, չնայած տարիքոտ մարդ լինելուն ու վաղելու անսովոր, վրտներ ծայրերը պատահած բաներին դիպցնելով, սրընթաց վաղեց գններալի մոտ: Կապիտանի դեմքն արտահայտում էր զպրոցականի անհանգստություն, վրից պահանջում էն ասել չսովորած դասը: Կարմիր քթի վրա (հավանորեն անժուժկալությունից)՝ բծեր կային, իսկ բերանը չէր կարողանում գտնել իր բնական դիրքը: Գնդի հրամանատարը վրտից գլուխ նայեց կապիտանին, այն ժամանակ, յերբ նա հեծիկ մոտենում էր, և մոտենալով քայլերը դանդաղեցնում:

— Դուք շուտով ձեր ղինվորներին սարաֆաններ կհագցնեք: Սա լ՛նչ բան է, — դռնեց գնդի հրամանատարը՝ ներքին ծնոտն առաջ գցելով և ցույց տալով Յ-րդ վաշտի շարքերում կանգնած մի ղինվորի, վոր ուրիշներից տարբերվում էր իր գործարանային մահուդի գույնի շինելով: — Դուք ճիշտ եյիք: Մենք սպասում ենք գլխավոր հրամանատարին, իսկ դուք թողնում-հեռանում եք ձեր տեղից: Հը... Յեա ձեզ կսովորեցնեմ, թե լ՛նչ է նշանակում զորատեսի ժամանակ ղինվորներին կազակի՞ն հագցնել... հը...

Վաշտի հրամանատարը, աչքը պետից չհեռացնելով, յերկու մատը ավելի ու ավելի սեղմում էր գլխարկի պահպանակին (կադրոկ), կարծես այդ սեղմումի մեջ էր տեսնում միայն իր փրկությունը:

— Հը, լ՛նչ էք լռում: Ո՞վ է այդ վենգրացու նման հագնե՞լովդ, — խստությունաբ կատակեց գնդի հրամանատարը:

— Ձերդ գերազանցություն...

— Հը, լ՛նչ է ձերդ գերազանցություն: Ձերդ գերազանցություն, ձերդ գերազանցություն: Իսկ թե լ՛նչ ձերդ գերազանցություն — հայտնի չէ:

— Ձերդ գերազանցություն, դա Դուլոխովն է, աստիճանադուրի արված... — կամացուկ ասավ կապիտանը:

— Ի՞նչ, նա աստիճանադուրի արվելով, ֆելդմարշալի աստիճանն և ստացել, թե զինվորի: Իսկ զինվորը պետք և հազնվի զինվորի նման:

— Ձերդ գերազանցություն, դուք ինքներդ թույլատրեցիք:

— Թույլատրեցի՞ր: Թույլատրեցի՞ր: Ա՛յ, դուք միշտ այդպես եք, յերիտասարդներդ, — ասավ զնդի հրամանատարը փոքր ինչ մեղմանալով: — Թույլատրեցի՞ր: Ձեզ մի բան ասեն թե չե, դուք արդեն... Ի՞նչ, — ասավ նա, նորից բորբոքվելով: — Հաճեցե՞ք զինվորներին կարգին հաղցնել...

Յեվ զնդի հրամանատարը, նայելով աղյուստանտին, իր նյարդային քայլվածքով զնայ գեպի գաճաղը: Յերևույթ եր, վոր իր բարկությունն իրեն իսկ դուր և յեկել, և վոր նա, զնդի առջևից անցնելով, նոր առիթ եր փնտռում բարկությունը թափելու: Մի սպայի հանդիմանեց չմաքրած նշանի համար, մյուսին շարքի անկանոնություն, ու մոտեցավ Յ-րդ վաշտին:

— Ի՞նչպես ես կանգնել: Ո՞ւր ե վոտդ: Վոտդ ճւր ե, — պոռաց հրամանատարը տանջալից ձայնով, դեռ հինգ մարդ հեռու դառնվելով կապտադույն շինել հազած Դուրխովից:

Դուրխովը դանդաղորեն ուղղեց ծոած վոտը և իր սլաքառ ու հանդուգն աչքերը հառեց զեննրալի դեմքին:

— Ինչ՞ի. յես կապույտ շինել հազել: Հանձր... Վերակա: Փոխեցե՞ք այս... ան... — Նա չկարողացավ խոսքը վերջացնել:

— Դեննրալ, յես պարտավոր եմ կատարել հրամանները, բայց պարտավոր չեմ տանել... — ասավ Դուրխովն արագ-արագ:

— Շարքի մեջ չխոսել... չխոսել, չխոսել...

— Պարտավոր չեմ վերավորանքներ տանել, — ասավ Դուրխովը բարձր, հնչեղ ձայնով:

Դեննրալի և զինվորի աչքերը հանդիպեցին իրար: Դեննրալը լուրջ, բարկացած ներքև քաշելով պինդ կապած շարձը:

— Բարեհաճեցե՞ք, խնդրում եմ, ձեր շինելը փոխել, — ասավ նա հեռանալով:

## II

— Դալիս ե, — ձայն տվեց այդ միջոցին նշանատու պահակը:

Գնդի հրամանատարը, կարմրելով, ձիու մոտ վաղեց, դողդոջ ձևերով ասպանդակը բռնեց, մարմինը քցեց ձիու վրա, ուղղվեց, սուրը մերկացրեց և յերջանիկ, վճռական դեմքով, բերանը մի կողմի վրա ծռած, պատրաստովեց պոռալ: Դաճողը թափ տվեց իրեն՝ թափահարող թռչունի նման, և սառեց տեղում:

— Զգամա, — պոռաց հրամանատարը հազեցունց ձայնով, վորն իր համար պարունակում էր հրճվածք, դորքի համար խառություն, մոտեցող պետի համար սիրավիր վողջույն:

Լայն, ծառազարդ, մեծ, անխիճ ճանապարհով, դապանակներով թեթևակի աղմկելով սրբնթաց գալիս էր վեննական մի կապույտ կառք, վորին լծված էին յերկու զույգ ձի: Կառքի յետևից գալիս էր շքախումբը և կրտսերներից կազմված ուղեկցուրդը (կոնվոյ): Կուսուղտովի կողքին նստել էր ավատերացի գններալը, վորն իր տարրինակ ճերմակ մուշգիրով ջոկվում էր սև հագած ուսաներից: Գնդին հասնելուն պես կառքը կանդ առավ: Կուսուղտովն աւատերացի գններալը հանդարտ խոսում էին ինչ-վոր բանի վրա, և Կուսուղտովը ժպտաց այն ժամանակ, յերբ վոտը կառքից դնում էր գետին, կարծես զոյություն չուներ յին այդ 2000 զինվորը, վորոնք, շունչները պահած, նայում էին նրան ու գնդի հրամանատարին:

Լավեց հրամանի ձայնը, զունդը դրնդացով ցնցվեց նորից և պատվի առավ: Մեռելային լուծթյան մեջ լավեց գլխավոր հրամանատարի թույլ ձայնը: Գունդը մեկնեա զոռաց. «Առողջություն ենք ցանկանում, ձերդ ու-ժւ-ճւ-ճւ-թյան»: Յեվ նորից ամեն ինչ անշնչացավ: Սկզբում, քանի զունդը շարժվում էր, Կուսուղտովը կանգնել էր մի տեղում, հետո ավատերական գններալի հետ միասին, վոտքով, շքախմբի ուղեկցությամբ, դնաց շարքերը դիտելու:

Այն բանից, թե ինչպես գնդի հրամանատարը վողջունեց դեւ խավոր հրամանատարին, աչքերը նրան հառած, ձգվելով ու իրեն հավաքելով, ինչպես առաջ թեքված, նյարդային շարժումները հաղիվ զսպելով, հետևում էր շարքերը դիտող գններալներին, ինչպես վեր էր թռչում գլխավոր հրամանատարի յուրաքանչյուր խոսքից ու շարժումից, — յերևում էր, վոր նա իր ստորադրյալի պարտավորությունները կատարում էր ավելի մեծ հանույքով, քան պետի պարտականությունը: Գունդը, իր հրամանատարի խոսության ու ջանասիրության շնորհիվ, լավ վիճակի մեջ էր, համեմատած նույն ժամանակ Բրաունաու յեկած մյուս գնդերի հետ: Յետ մնացողների և հիվանդների թիվը միայն 217 էր, Յեվ, բացի կոշիկներից, ամեն ինչ կարգին էր:

Կուսուղտովը, շարքերի առջևից անցնելիս, յերբեմն կանդ էր առնում ու մի քանի փաղաքշական խոսք ասում սպաներին, վորոնց ճանաչում էր տաճկական պատերազմից, յերբեմն նաև զինվորներին: Նայելով զինվորներին կոշիկներին՝ նա մի քանի անգամ գլուխն ուրորեց տխրությամբ և ավատերական գններալի ուշադրությունը հրավիրեց զրանց վրա մի այնպիսի արտահայ-



տուխթամբ, թե վորքան ել դրա համար չի կարող կշտամբել վոչ-վոքի, բայց չի յեկ կարող հտեանել, թե ինչ թշվառ դուռթյուն ե. Դնդի հրամանատարը նրա յուրաքանչյուր շարժումից նետվում եր առաջ, վախենալով չլինի թե չլսի գլխավոր հրամանատարի խոսքերը զնդի վերաբերյալ: Կուտուղովի յետևից, այնպիսի մի հետափորությամբ, վոր ամեն մի մեղմ արտասանված խոսք կարող եր լսվել, զնում եր 20 հոգիանոց շքախումբը: Շքախմբի անդամները խոսում ելին իրար հետ և յերկմն ծիծաղում: Անմիջապես գլխավոր հրամանատարի յետևից գնում եր մի գեղեցկադեմ աղ-յաւտանա: Դա իշխան Բալկոնսկին եր: Նրա կողքից գնում եր նրա ընկեր Նեովիցկին՝ բարձրահասակ, չափազանց գեր սպան՝ բարի, ժպտուն, գեղեցիկ դեմքով ու տամուկ աչքերով: Նեովիցկին հաղիվ եր զսպում ծիծաղը, վոր հարուցանում եր կողքից քայլող թխադեմ հուսար սպան: Հուսար սպան, առանց ժպտալու և անշարժ աչքերի արտահայտությունը չփոխելով, լուրջ դեմքով նա-յում եր զնդի հրամանատարի թիկունքին և ծաղրում նրա յուրա-քանչյուր շարժումը: Ամեն անգամ, յերբ զնդի հրամանատարը ցնցվում ու թեքվում եր առաջ, ճիշտ այնպես ել, նույնությամբ, ցնցվում ու առաջ եր թեքվում հուսար սպան: Նեովիցկին ծիծաղում եր և հրում ուրիշներին, վոր նրանք ել նայեն տնադ անող սպային:

Կուտուղովը դանդաղ ու ծուլորեն անցնում եր հազարավոր աչքերի առջևից, վորոնք իրենց կոպիճներից դուրս ընկած, հետե-վում ելին պետին: Համենիով Յ-րդ վաշտին՝ նա հանկարծ կանգ առավ: Շքախումբը, այդ բանը չնախատեսելով, ակամա առաջ գնաց և ավելի մոտեցավ նրան:

— Ա՛, Տիմոխին, — ասավ գլխավոր հրամանատարը, ճանա-չելով կարմիր քթով կապիտանին, վոր նկատողություն եր ստա-ցել կապույտ շինելի համար:

Թվում եր անկարելի յեր ավելի ձգվել, քան Տիմոխինն եր ձգվել զնդի հրամանատարի նկատողության ժամանակ: Բայց հիմա, յերբ գլխավոր հրամանատարը դարձավ նրան, կապիտանն այն-պես ձգվեց, վոր, թվում եր, յեթե Կուտուղովը մի քանի բուպե ել նայի, կապիտանն այլևս չի դիմանա. ուստի և Կուտուղովն, ըստ յերևութի, նրա վիճակը հասկանալով և նրա բարիքը ցան-կանալով, շտապ շրջվեց: Կուտուղովի ուռուցիկ, վերքից այլան-դակված դեմքի վրայով հաղիվ նկատելի մի ժպիտ անցավ:

— Իզմայլյան կովի ընկերներից ե, — ասավ նա: — Քմալ սպա ե: Գճճ ես նրանից, — հարցրեց Կուտուղովը զնդի հրամանատարին:

Յեկ զնդի հրամանատարը, ինչպես հայելում անդրադառնալով



իրեն ընդորինակող հուսար սպայի շարժումների մեջ, ցնցվեց, առաջ անցավ ու պատասխանեց.

— Ծանաղ զոհ եմ, ձերդ բարձր գերազանցություն:

— Մենք բոլորս ել գերժ չենք թերությունից, — ասավ Կուսուկովը, ժպտալով ու նրանից հեռանալով: — Բաքոսի յերկըրպաղու յեր:

Գնդի հրամանատարը վախեցավ, թե արդյոք ինքը մեղավոր չի այդ բանում, և վռչինչ չառավ: Այդ վայրկյանին հուսար սպան նշմարեց կարմրաքիթ ու ձգված փորով կապիտանի դեմքն ու այնպես նման ընդորինակեց նրա դեմքն ու դիրքը, վոր նեավիցիկին չկարողացավ ծիծաղը զսպել: Կուսուկովը յետ նայեց: Յերևում եր, վոր սպան կարողանում եր ուղածի պես վախեղ դեմքը. այն վայրկյանին, յերբ Կուսուկովը յետ նայեց՝ սպան արդեն իր ծամածոությունն արեւ եր և ամենալուրջ, հարգալիբ ու անմեղ արտահայտությունն եր ընդունել:

Յերբորդ վաշտը վերջինն եր: Յեւ Կուսուկովն, ըստ յերևույթին, ինչ-վոր բան հիշելով, մտածմունքի մեջ ընկավ: Իշխան Անդրեյը առաջ յեկավ շքախմբից և կամաց ասավ Քրանսերին.

— Կարդաղքեցիք հիշեցնել աստիճանադուրի արված Դուխովի մասին, վոր այս գնդի մեջ և գտնվում:

— Ո՛ւր և այստեղ Դուխովը, — հարցրեց Կուսուկովը:

Դուխովը, արդեն զինվորի դորշ շինել հաղած, ել չապանեց, վոր իրեն կանչեն: Ծիկահեր, պայծառ կապույտ աչքերով զինվորի բարեկազմ կերպարանքը դուրս յեկավ շարքի միջից: Նա մտաեցավ գլխավոր հրամանատարին ու պատվի առավ:

— Դանգձա, — հոնքերը կիտելով՝ հարցրեց Կուսուկովը:

— Սա Դուխովն է, — ասավ իշխան Անդրեյը:

— Ա՛, — ասավ Կուսուկովը: — Հույս ունեմ այս դասը քեզ խելքի կրերի. լավ ծառայիր: Թաղավորը վողորմած եւ Յես ել չեմ մոռանա քեզ, յեթե արժանի լինես:

Դուխովի կապույտ պայծառ աչքերը գլխավոր հրամանատարին նայում եյին նույնպիսի հանդգնությամբ, ինչպես գնդի հրամանատարին, ու իրենց արտահայտությամբ կարծես պատում եյին պայմանականության այն վարագույրը, վոր այնպես խոսպանեց բաժանում և գլխավոր հրամանատարին զինվորից:

— Միայն մի բան եմ խնդում՝ ձերդ բարձր գերազանցություն, — ասավ Դուխովն իր հնչեղ, հաստատուն ու անշտապ ձայնով: — Խնդրում եմ առիթ տաք ինձ մեղքս քաղելու և դեպի կայսրն ու Ռուսաստանն ունեցած անձնվիրությունս ապացուցելու:

Կուտուղովը յերեսը շրջեց։ Նրա դեմքին յերեսաց աչքերի նույն ժպիտը, ինչ յերեսաց կապիտան Տիմոխինից դառնալիս։ Նա դարձավ ու դեմքը կնճռեց, կարծես զբանով ուզում էր ասել, թե այն բոլորը, ինչ ասավ Դուրխովը, և այն բոլորը, ինչ զեռ կարող եր ասել, ինքը վաղուց արդեն գիտի, և այդ բոլորն արդեն ձանձրացրել և իրեն ու այդ ամենը այն չե բնավ, ինչ պետք է։ Նա դարձավ ու գնաց դեպի կառքը։

Դուռը վաշտերի բաժանվեց և ճանապարհ ընկավ Բրաունաուից վոչ հեռու նշանակված բնակատեղին, ուր հույս ունեյին հաղնվել և հանդատանալ յերկար, դժվարին ճանապ կտրելուց հետո։

— Դուք ինձից դանդաղատվոր չեք, Պրոխոր Իգնատիչ, — ասավ զնդի հրամանատարը, հասնելով բնակատեղը գնացող Յ-րդ վաշտին և նրա առջևից գնացող կապիտան Տիմոխինին։ Գնդի հրամանատարի դեմքը, հաջող անցած զորատեսից հետո, անզուսպ ուրախություն եր արտահայտում։ — Թագավորական ծառայություն ե... չի լինի... մեկ ել տեսար հայրոյեցիր... Առաջինը ինքս ներողություն կխնդրեմ, ինձ՝ ճանաչում եք... Շատ շնորհակալ եր։ — Յեկ նա ձեռը մեկնեց վաշտապետին։

— Խնդրեմ, գնե՛րալ, մի՞թե կհամարձակվեմ, — պատասխանեց կապիտանը։ Նրա քիթը կարմրեց, ինքը ժպտաց և ժպտով յերեվան հանեց առաջին յերկու ընկած ատամը, վոր հրացանի կոթով ջարդել եյին Իգնատիի բերդի մոտ։

— Յեկ պարոն Դուրխովին հայտնեցեք, վոր յես իրեն չեմ մոռանա, թող հանդիստ լինի։ Ասացեք, խնդրեմ, յես միշտ մոռանում եմ հարցնել, թե լինչպես ե նա իրեն պահում։ Յեկ...

— Ծառայության մեջ շատ կարգին ե, ձերդ գերազանցություն... բայց բնավորությունը... — ասավ Տիմոխինը։

— Ի՞նչ, բնավորությունն լինչպես ե, — հարցրեց զնդի հրամանատարը։

— Յերբեմն, ձերդ գերազանցություն, իրեն կորցնում ե, — ասավ կապիտանը, — թե խելոք ե, թե կրթված, թե բարի։ Բայց մեկ ել տեսար դադան կտրեց։ Լեհաստանում քիչ մնաց մի հրեա սպաներ...

— Այո, այո, — ասավ զնդի հրամանատարը, — պետք ե խղճալ յերիտասարդին դժբախտության մեջ։ Չե վոր մեծ կապեր ունի... Ուրեմն դուք այնպես...

— Լսում եմ, ձերդ գերազանցություն, — ասավ Տիմոխինը, ժպտով զգացնել տալով, թե պետի ցանկությունը հասկանում ե։

— Այո, այո։

Գնդի հրամանատարը շարքերում գտավ Դուրխովին և ձին պահեց։

— Մինչև առաջին կռիվը — ուստիդրներ, — ասավ նրան:

Դուրսովը նայեց, վռնիչ չասավ և վռնեց հեզնորեն ժպտացող դեմքի արտահայտությունը փոխեց:

— Ե, լավ է, լավ, — շարունակեց գնդի հրամանատարը: — Ձերն-վորներին մի-մի բաժակ ողի իմ կողմից, — ավելացրեց նա, վոր-պեսդի գինվորները լսեն այդ: — Շնորհակալություն բոլորից: Փանոս աստծու:

Յեվ նա ձին քշեց, մոտեցավ մյուս վաշտին:

— Ծիշտն ասած՝ լավ մարդ ե. նրա հետ կարելի չե ծառայել, — ասավ Տիմոխինը կողքից քայլող ստորադրյալ մի սպայի:

— Մի խոսքով՝ Եփեսիկին թաղավոր և (գնդի հրամանատարի անունը դրեց եյին Եփեսիկին թաղավոր), — ձիծաղելով ասավ ստորադրյալ սպան:

Ջարտեսից հետո՝ մեծավորների ուրախ տրամադրությունը վարակեց գինվորներին եւ: Վաշտերը գնում էյին ուրախ-ուրախ: Ամեն կողմից լսվում էյին գինվորների խոսակցության ձայներ:

— Բա ասում էյին թե Կուսուկովի մի աչքը շիւ ա:

— Մթամ բոլորովին կույր ա:

— Չե, ախպեր Զան, քեզանից լավ ե տեսնում: Կոշիկներ, փաթաթաններ — ամեն բան լավ նայեց...

— Հենց վոր, ախպեր Զան, վոտներին մտիկ արավ. եհ, մտածեցի...

— Իսկ մյուսը՝ ավստրիացին, վոր նրա հետ եր, կարծես կա-վիճով սպիտակացրել էյին: Ալլի պես սիպտակ եր:

— Հը՛, Ֆեդյոշա, դու մոտիկ էյիր. ասնով՝ թե կռիվը յերբ պիտի սկսվի: Բոլորն ասում էյին, թե Բոնապարտը Բրուսովումն ե:

— Բոնապարտը՛. Դու յեւ բան ասիր: Ձիմացածդ մի խոսի: Հիմի պրուսացիք են ապստամբել: Ավստրիացիք նրանց, ուրեմն, խաղաղենում են: Հենց վոր դրանք խաղաղեն, են ժամանակ կռիվ կսկսի Բոնապարտի հետ: Թե չե, ասում ա, Բոնապարտը Բրուսովում ա: Յերեսում ա շաշի մեկն ե: Դու ավելի լավ ա ուրիշներին ականջ դնես:

— Ո՛ր, գրողի տարած կվարտիրյերներ (բնակարանորդներ): Հինգերորդ վաշտը, տես, արդեն դեպի գեղը ծովեց. նրանք կաշա կեփեն, իսկ մենք դեռ տեղ չենք հասնի:

— Մի կտոր պաքսիմաթ տուր, տենամ:

— Իսկ դու յերեկ թուխումն տվիր: Հը՛, Դե առ, աստված քեզ հետ:

— Գոնե հանգստանայինք, թե չե դեռ հինգ վերստ պետք ե քաղցած, ծարավ ճամպա կտրենք:

— Լավ կըլնենք՝ չե մի գերմանացիք մեզ կառքեր տային: Նստեցինք ու ուռած-իծոված գնացինք:

— Իսկ եստեղ բոլորովին ուրիշ ժողովուրդ է: Ենտեղ կարծես թե լեհացիք էին, ելի ոռւս արյուն կար մեջները: Հիմի մի գլուխ գերմանացիք են:

— Յերգիշները՝ առաջ, — լավեց կապիտանի ձայնը:

Յեւ տարրեր շարքերից վազելով՝ վաշտի առջև հավաքվեց քսան մարդ: Յերգ սկսող թմրկահաւորը յերգիշներին դարձավ և, ձեռք թափ տալով, սկսեց ղինվորական ծորուն մի յերգ, վորն սկսվում էր. «Աւշալուսը բացվել, արեն և փայլումս և վերջանում եր հետեայալ խոսքերով. «Ո՛ր, ինչ փառք կվաստակենք Կամենսկի հայրիկի հետ...»: Այս յերգը հորինված էր Տաճկաստանում և այժմ յերգվում էր Ավստրիայում այն փոփոխությամբ միայն, վոր «Կամենսկի հայրիկի» տեղ զրեւ էին «Կուսուղով հայրիկ» խոսքերը:

Վերջին խոսքերը ղինվորաբար կտրելով՝ թմրկահաւորը՝ մի չոր-չորուկ ու գեղեցիկ քառասուն տարեկան պինվոր, ձեռները թափ տվեց, կարծես մի բան քցեց գետին, ու խառությամբ յերգիշ ղինվորներին նայելով՝ աչքերը կուշ ածավ: Ապա, համոզվելով, վոր բոլոր աչքերն ուղղված են իր վրա, նա յերկու ձեռով զոռչու-թյամբ, կարծես ինչ-վոր անտեսանելի ու թանկագին մի բան բարձրացրեց գլխից վեր, պահեց այդպես մի քանի վայրկյան ու հանկարծ կատաղորեն նետեց:

Ах, вы, сени мои, сени!

«Сени новые мои...», ձայնակցեցին 20 հոգի միասին, և դա-լավորը (ложечник), չնայած իր ծանր հանգերձանքին, կայտառ նետվեց առաջ, յերեսը շրջելով գետի վաշտը, դնաց նրա առջևից, ուսերն որորելով և գլալներով աւ-վոր սպառնալով: Զինվորները, յերգի տակտով ձեռները թափահարելով՝ ազատ քայլերով գնում էին առաջ: Վաշտի յետևից լավում էր անիվների զղրղոց, դադա-նակների ճոխնչ և ձիերի դոփշուն: Կուսուղովն իր ջգախմբով վերադառնում էր քաղաք: Դլխավոր հրամանատարը նշան արավ, վոր ղինվորները շարունակեն ազատ քայլել, և թե՛ նրա, թե՛ ջգախմբի բոլոր մարդկանց դեմքին բավականութուն նկատվեց, յերբ լսեցին յերգի հնչյունները և յերբ տեսան պարոզ ղինվո-րին և ուրախ-զվարթ քայլող վաշտի ղինվորներին: Վաշտի յերկ-րորդ շարքի մեջ տկամա աչքի ընկավ կապտայա գինվոր Դոլո-խովը, վորն առանձնապես, յերգի տակտով քայլում էր կայտառ, վայելուչ և նայում կառքով անցնողներին մի այնպիսի արտա-

հայտնությամբ, կարծես խղճում եր բոլոր նրանց, ովքեր այդ բուսկին վաշտի հետ չեն քայլում: Կուտուղովի շքախմբի հուսարական կոռնետը, գնդի հրամանատարին տնադողը, յետ մնաց կառքից և մոտեցավ Դոլոխովին:

Հուսարական կոռնետ Ժերկովը մի ժամանակ Պետերբուրգում պատկանում եր այն սանձարձակ խմբին, վորի ղեկավարը Դոլոխովն եր: Արտասահմանում Ժերկովը Դոլոխովին հանդիպեց ղին՝ վոր դարձած, բայց չուզեց ճանաչել, Հիմա, այն բանից հետո, յերբ Կուտուղովը խոսեց աստիճանադուրի Դոլոխովի հետ, նա հին բարեկամի սիրալիրությամբ մոտեցավ նրան:

— Միրելի բարեկամս, լինչպես ես, — ասավ նա յերգի հնչյունների տակ, ձիու քայլը հավասարեցնելով վաշտի քայլին:

— Ի՞նչպես եմ, — սառը պատասխանեց Դոլոխովը, — ինչպես տեսնում ես:

Աշխույժ յերգը առանձին նշտնակություն եր տալիս Ժերկովի արձակ-համարձակ տոնին և Դոլոխովի զիտավարյալ սառը պատասխաններին:

— Ե, լինչպես ես իշխանավորներիդ հետ, — հարցրեց Ժերկովը:

— Վոչինչ, լավ մարդիկ են իշխանավորներս: Դու ինչպե՞ս ես շտարը խցկվել:

— Դործուղեցին, հերթապահություն եմ տնում:

Լոեցին:

«Բաղեն թողեց աջ ձեռից», ասում եր յերգը, հարուցանելով մարդու մեջ կայտառ և ուրախ զգացումներ: Նրանց խոսակցությունը, հավանորեն, ուրիշ կլիներ, յեթե յերգի հնչյունների տակ չխոսեային:

— Հը, ճիշտ ե, վոր ավատրիացիներին ջարդել են, — հարցրեց Դոլոխովը:

— Սատանան պիտի, ասում են:

— Ուրախ եմ, — պատասխանեց Դոլոխովը կարճ ու կարուկ, ինչպես այդ պահանջում եր յերգը:

— Իրիկունն արի մեզ հետ, թուղթ խաղանք, — ասավ Ժերկովը:

— Յերեմի փող շատ ունեք:

— Դու արի:

— Չեմ կարող: Յերգով եմ, Չեմ խմելու և չեմ խաղալու, մինչև աստիճանս չբարձրացնեն:

— Յերկար չի տևի, յերեմի մինչև առաջին կոբիլը...

— Այն ժամանակ կտեսնենք:

Կրկին լոեցին:

— Դու արի, յեթե մի բան հարկավոր լինի, բոլորն շտաբում կ'ողնեն... — ասավ Ժերկովը:

Դուրսովը քմծիծաղ տվեց:

— Ավելի լավ կլինի՝ չանհանդատանաս: Ինձ հարկավորը չեմ խնդրելու, ինքս ձեռք կբերեմ:

— Ե, չե, յես այնպես...

— Ե, յես ել այնպես:

— Ա՛նաս բարով:

— Ինչո՞ւ բարով...

... Յե՛վ բարձր, և հեռու:

Դեպի հայրենի յերկիր...

Ժերկովը խթանեց ձիուն, վերը յերկու-յերեք անգամ, տաքացած, փոխեց վրտները, չիմանալով վճռն առաջ քցել, հետո իրեն հավաքեց և, նույնպես յերգի տակտով արշավեց ու հասավ Կուտուզովի կառքին...

### III

Զորատեսից վերադառնալով Կուտուզովը, ավստրիական զենքերալի ուղեկցությամբ, անցավ իր առանձնասենյակը և, աղյուտանալին կանչելով, հրամայեց բերել իրեն՝ յեկող զորքերին վերաբերող վերոշ թղթեր և առաջապահ բանակի պետ երցհերցոգ Ֆերդինանդից ստացված նամակները: Իշխան Անդրեյ Բալկանսկին պահանջված թղթերը ձեռին մտավ գլխավոր հրամանատարի առանձնասենյակը: Սեղանին փռած պլանի շուրջը նստել նյին Կուտուզովն ու հափկրիսոսաթի ավստրիացի անդամը:

— Ա... — ասավ Կուտուզովը Բալկոնսկուն նայելով, կարծես այդ բացականչությամբ աղյուտանալին հրավիրեց սպասել, և շարունակեց ֆրանսերեն սկսած խոսակցությունը:

— Յես միայն մի բան եմ ասում, զենքերալ, — ասում եր Կուտուզովը հաճելի արտահայտություններով ու առողջանալթյամբ, հարկադրելով լսել իր յուրաքանչյուր անշտապ ասված խոսքը: Յերևում եր, վեր Կուտուզովն ինքն իսկ բավականությամբ ելսում իրեն: — Յես միայն մի բան եմ ասում, զենքերալ, յեթե բանը կախված լիներ իմ անձնական ցանկությունից, այդ զեպքում նորին մեծություն Ֆրանց կայսեր կամքը վաղուց կատարված կլիներ: Յես վաղուց արդեն միացած կլինեյի երցհերցոգին: Յե՛վ հավատացե՛ք ինձ, վեր յես շատ ուրախ կլինեյի, վեր բանակի բարձր հրամանատարությունը անձամբ հանձնեյի ինձնից ավելի տեղյակ ու հմուտ մի զենքերալի, վերոնցով այնքան հարուստ ե

Ավստրիան, և կարողանայի հրաժարվել այս ծանր պատականությունից: Բայց հանգամանքները մեղինից ավելի դժարավոր են լինում, գններալ:

Յեվ Կուսուզովը ժպտաց այնպիսի արտահայտությամբ, կարծես ասում եր. «Ի՞նչ լիակատար իրավունք ունեք ինձ համարալու, և նույնիսկ ինձ համար միևնույն ե՞ հավատում եք ինձ թե չեք հավատում, բայց սոսի՞ չունեք այդ բանն ինձ ասելու, և բանն ել հենց այդ ես:

Ավստրիացի գններալը դժգոհ տեսք ունեւր, բայց չեւր կարող նույն տոնով չպատասխանել Կուսուզովին:

— Ընդհակառակը, — ասավ նա քրթմնջող ու բարկացած տոնով, վոր այնպես հակասում եւր նրա արտասանած խոսքերի քծնական նշանակության, — ընդհակառակը, ձերդ գերազանցության մասնակցությունը այս ընդհանուր պործի մեջ՝ նորին մեծությունը շատ բարձր և գնահատում. բայց մեծը կարծում ենք, վոր ներկա դանդաղումը ուստական փառապանծ գորքերին և նրանց գլխավոր հրամանատարին զրկում և այն զսպնիներին, վոր սովոր են քաղել նրանք կռիվների մեջ, — ավարտեց նա հավանորեն նախապատրաստած ֆրազը:

Կուսուզովը գլուխ ավեց, տանց ժպիտը վտխելու:

— Իսկ յես այնպես եմ համոզված և, հիմնվելով նորին բարձրություն երցհերցոգ Ֆերդինանդի վերջին նամակի վրա (վորն ուղարկելու պատիֆն և արել ինձ), յենթադրում եմ, վոր ավստրիական զորքերը, Մակի պես հմուտ գններալի գեկավարությամբ, այժմ արդեն այնպիսի վճռական հաղթանակ են տարել, վոր այլևս կարիք չունեն մեր աշնության, — ասավ Կուսուզովը:

Գններալը հոնքերը կիտեց: Թեև հաստատ տեղեկություններ չկային ավստրիացիների պարտության մասին, բայց այդ ընդհանուրի համար անշահավետ լուրերը հաստատող շատ հանգամանքներ կային. ուստի և Կուսուզովի յենթադրությունը՝ ավստրիացիների հաղթության մասին՝ շատ նման եր ծագրի: Բայց Կուսուզովը ժպտաց հեղարար, զարձայլ նույն արտահայտությամբ, վոր կարծես ասում եր, թե ինքն այդպես յենթադրելու իրավունք ունի: Իրոք, Մակի բանակից ոտացած վերջին նամակը հայտնում եր հաղթության և բանակի ամենահաջող ստրատեգիական գիւրքի մասին:

— Տվեք այդ նամակը, — ասավ Կուսուզովը, դառնալով իշխան Անդրեյին: — Ահա հաճեցեք լսել: — Յեվ Կուսուզովը հեգնական ժպիտը շրթնաքների ծայրին, ավստրիացի գններալին գերմաներեն կարդաց երցհերցոգ Ֆերդինանդի նամակի հետեյալ



կարբ. «Wir haben vollkommen zusammengehaltene Kräfte, nahe an 70 000 Mann, um den Feind, wenn er den Lech passirte, angreifen und schlagen zu können. Wir können, da wir Meister von Ulm sind, den Vorthell, auch von beiden Ufern der Donau Meister zu bleiben, nicht verlieren; mithin auch jeden Augenblick, wenn der Feind den Lech nicht passirte, die Donau übersetzen, uns auf seine Communications-Linie verfen, die Donau unterhalb repassiren und dem Feinde, wenn er sich gegen unsere traue Allirte mit ganzen Macht wenden wollte, seine Absicht alsbald vereiteln. Wir werden auf solche Weise den Zeitpunkt, wo die Kaiserlich-Russische Armée ausgerüstet sein wird, muthig entgegenharren, und sodann leicht gemeinschaftlich die Möglichkeit finden, dem Feinde das Schicksal zuzubereiten, so er verdient»<sup>1</sup>.

Նամակի այս պարբերությունը վերջացնելով՝ Կառուզովը ծանր հոգոց արձակեց և ուշագիւր ու սիրալիր նայեց հոֆկիրդ-աստի անդամին:

— Բայց դուք դիտեք, ձերդ գերազանցություն, այն իմաստուն սկզբունքը, վոր նրանապատ է յենթադրել վատթարը, — ասով ավատարկացի գնահերայը, հավանորեն կատակներին վերջ տալու և զործի անցնելու ցանկություն:

Ու ահամա նայեց աղյուսանախին:

— Ներեցեք, գնահերայ, — ընդհատեց նրան Կառուզովը և նույնպես դարձավ գեպի իշխան Անդրեյը: — Ահա ինչ, սիրելիս, Կազովսկուց վերցրու մեր լրատեսների բաւոր գեկուցումները: Ահա քեզ կոճա Նաստիցի յերկու նամակը, նորին բարձրություն երցհերցոգ Ֆերդինանդի նամակը և այս, — ասով, իշխանին մի քանի թղթեր տալով: — Այս բոլորից ֆրանսերեն լեզվով մաքուր memorandum, տեղեկագիր կազմիր, վոր հայանի լինի, թե մենք ինչ տեղեկություններ ունենք ավատարկական բանակի զործողությունների մասին: Այդպես, և ներկայացրու նորին գերազանցությունը:

1 ՇՄ-նց ունենք մոտ 70 000 կենտրոնացած զորք, այնպես վոր, Լեիք անցնելու գնալուամ, կարող ենք հարձակվել և Զարգել թշնամուն: Վորովհետեւ արդեն մեր ձեռին և գտնվում Ուլմը՝ մենք կարող ենք մեր ձեռին պահել Դանուբի յերկու ամբողջ հեռաբար ամեն վայրկյան, յեթե թշնամին չանցնի Լեիք, մենք կարող ենք անցնել Դանուբը, հարձակվել թշնամու կոմունիկացիոն գծի վրա, ներքեից նորից անցնել Դանուբը և թշնամուն, յեթե նա մեր հավատարիմ գաշնակներին վրա դնուլ ուղենա, թույլ չտալ իր մատչությունը ի կատար ածել: Այդպիսով մենք արևելքամբ կապուսենք միմե և վոր առաջին կայսրական բանակը բոլորովին կազմ ու պատրաստ լինի, և այնուհետեւ միացալ ույ՝ մերով գլուհությունը կգտնենք թշնամուն արժանի պատիժը տալու հարքը:

Իշխան Անդրեյը գլուխը խոնարհեց ի նշան այն բանի, թե առաջին իսկ խորքից հասկացավ վաղ միայն այն, ինչ ասվեց, այլ և այն, ինչ ցանկանում էր ասել իրեն Կուսուզովը։ Նա թղթերը հավաքեց և, գլուխ տալով, գորգի վրա հուշիկ քայլելով, գուրս յեկավ ընդունարանը։

Թեև շատ ժամանակ էր անցել, ինչ իշխան Անդրեյը մեկնել էր Ռուսաստանից, բայց շատ էր փոխվել այդ ժամանակի ընթացքում։ Նրա դեմքի արտահայտություն, շարժումների ու քայլվածքի մեջ զրեթե նկատելի էր նախկին հոգնած ու ծույլ ձևանալու հակումը։ Նա ուներ այնպիսի մարդու տեսք, վոր կարծես ժամանակ չուներ մտածելու, թե ինչ տպավորություն և թողունք ուրիշների վրա և զբաղված է հաճելի ու հետաքրքրական մի գործով։ Դեմքից յերևում էր, վոր դո՛ւ և իրենից ու շրջապատողներից։ Ժպիտե՛ն ու նայվածքը առաջվանից ավելի ուրախ ու դրավիչ էին։

Կուսուզովը, վորին նա հասավ-միացավ Լեհաստանում, նրան ընդունեց շատ սիրալիք, խոստացավ չմոռանալ նրան, դերադասում էր մյուս աղյուստաններից, իրեն հետ Վեննա տարավ և ավելի լուրջ հանձնարարություններ էր տալիս։ Վեննայից Կուսուզովը իր հին ընկերոջը՝ Անդրեյ իշխանի հորը գրեց։

«Ձեր վորդին, — գրում էր նա, — սպա լինելու հույսեր և տալիս իր արտակարգ յեռանդուն պարապմունքներով, հաստատակամությամբ և հանձնարարությունների կատարմամբ։ Յես ինձ յերջանիկ եմ համարում այսպիսի ստորագրյալ ունենալուս համար»։

Կուսուզովի շտաբում, պաշտոնակից-ընկերների շրջանում և ընդհանրապես բանակում իշխան Անդրեյը, ճիշտ այնպես ինչպես Պետերբուրգի հասարակության մեջ, յերկու, բոլորովին իրար հակասող համբավ ուներ։ Վամանք՝ փաքամասնությունը, իշխան Անդրեյին համարում էին իրենցից և ուրիշներից մի տեսակ առանձին բարձր մարդ, նրանից ակնկալում էին մեծ աջողություններ, լսում էին նրան, հիանում էին նրանով և աշխատում էին նրան նմանվել և այդ մարդկանց հետ իշխան Անդրեյը պարզ էր ու հաճելի։ Մյուսները՝ մեծամասնությունը, իշխան Անդրեյին չէին սիրում։ Նրան համարում էին զոռոգ, սառը և տհաճ մարդ։ Բայց այդ մարդկանց մոտ իշխան Անդրեյն իրեն պահում էր այնպես, վոր նրան հարգում էին և մինչև իսկ վախենում։

Կուսուզովի առանձնատեսչակից ընդունարանը մտնելով իշխան Անդրեյը՝ թղթերը ձեռին մոտեցավ ընկերոջը՝ հերթապահ աղյու-

առանտ Կաղլովակուն, վոր պատուհանի առաջ նստած գիրք երկարդում:

— Հը, ինչ կա, իշխան, — հարցրեց Կաղլովակին:

— Հրամայված ե տեղեկագիր կաղմել, թե ինչու առաջ չենք գնում:

— Ինչո՞ւ համար:

Իշխան Անդրեյը ուսերը թաթվեց:

— Մակից լուր չկա, — հարցրեց Կաղլովակին:

— Վա՛յ:

— Յեթե նրա ջարդվելը ճիշտ լինե՞ր՝ մի լուր կստացվե՞ր:

— Հավանորեն, — ասավ իշխան Անդրեյը և դնաց դեպի դուռը. քայց նույն րոպեյին դուռն արագութեամբ բանալով՝ նրա դեմն յեկավ և արագ-արագ ընդունարան մտավ մի բարձրահասակ, հալանարեն նորեկ, սյուրթուկ հագած ավտարիացի գնե՛րալ՝ գլուխը սե թաշկինակով կապած և Մարիա-Թերեզայի շքանշանը վզին: Իշխան Անդրեյը կանգ առավ:

— Գնե՛րալ-անշեֆ Կուտուզով, — արագ-արագ ասավ նորեկ գնե՛րալը՝ գերմանական կտրուկ առողանութեամբ, չորս կողմը նայելով և առանց կանգ առնելու առանձնասենյակին մոտենալով:

— Գնե՛րալ-անշեֆը զրադված ե, — ասավ Կաղլովակին, հապ-ճեպ անձանթ գնե՛րալին մոտենալով և ճամբան կտրելով: — Ի՞նչպէս կհրամայեք գեկուցել:

Անձանթ գնե՛րալը արհամարհանքով վերից վար նայեց միջահասակ Կաղլովակուն, զարմանալով կարծես, վոր իրեն չեն ճանաչում:

— Գնե՛րալ-անշեֆը զրադված ե, — հանդարտ կրկնեց Կաղլովակին:

Գնե՛րալի դեմքը մթադնեց, շրթունքները քաշվեցին ու դողացին: Ծոցատետրը հանեց, արագորեն մի բան գրեց մատիտով, թուղթը պոկեց ավեց աղյուտանալին, փութկոտ քայլերով մոտեցավ լուսամուտին, նետեց իր մարմինն աթոռին ու նայեց սենյակում դռնվողներին, կարծես հարցնելով. ինչո՞ւ յեն իրեն նայում: Հետո գնե՛րալը գլուխը բարձրացրեց, վիզը ձգեց, կամենալով կարծես մի բան ասել, քայց իսկույն ել, կարծես ցանկալով անփութորեն յերգել ինքն իրեն, մի տարրերնակ ձայն հանեց, վորը սակայն անմիջապէս կտրվեց: Առանձնասենյակի դուռը բացվեց, և շեմքին յերևաց Կուտուզովը: Գլուխը կապած գնե՛րալը, վտանգից փախչողի պէս, կոացած, իր նիւար վտաքերի խոշոր ու արագ քայլերով մոտեցավ Կուտուզովին:

— Vous voyez le malheureux Mack<sup>1</sup>, — ասով նա բեկված ձայնով:

Առանձնասենյակի շեմքին կանգնած Կուսուզովի ղեմքը մի քանի ակնթարթ ընթրողին անշարժ մնաց: Հետո, ալիքի պես, մի կնճիռ անցավ նրա ղեմքի վրայով և ճակատը հարթվեց. նա գլուխը խոնարհեց հարգալիբ, աչքերը փակեց, անխոս թույլ տվեց Մակին կողքից անցնելու և հետո ինքը դուռը ծածկեց իր յետևից:

Առաջուց արդեն տարածված այն լուրը, թե ավատարկացիք պարտվել են և ամբողջ բանական անձնատուր և յեղել Ուլմի մոտ, — ճշտվեց: Կես ժամ հետո արդեն տարբեր ուղղությամբ աղյուստանտներ ուղարկվեցին՝ հատուկ հրամաններով, վոր նշան եր, թե շուտով ուսուսական զորքերը ես, վոր մինչև հիմա անգործ եյին, հանդիպելու յեն թշնամուն:

Իշխան Անդրեյը շտաբի այն հազվագյուտ սպաներից մեկն եր, վոր մեծապես հետաքրքրվում եր պատերազմի ընդհանուր ընթացքով: Տեսնելով Մակին և լսելով նրա պարտության մանրամասնությունները, նա հասկացավ, վոր զործի կեսը տանուլ և արված, ըմբռնեց ուսուսական զորքերի կացության ամբողջ դժգոհարությունը և կենդանի պատկերացրեց մյն, ինչ սպասում և բանակին, և այն ղեբը, վոր ինքը պետք և խաղա բանակի մեջ: Նա ակամա ուրախության զգացում ունեցավ, մտածելով, վոր ինքնահավան Ավստրիան խայտառակվել և, և վոր, մի շարաթ հետո, դուցե, ինքն սկսանաես ու մասնակից լինի ուսաների ու ֆրանսացիների ընդհարումին, մի ընդհարում, վորը, Սուվորովից հետո, առաջին անգամն և լինում: Բայց նա վախենում եր Բոնապարտի հանճարից, վոր կարող եր ավելի զորավոր լինել, քան ուսուսական զորքերի բովանդակ քաջությունը, և զրա հետ միասին մտքովն անդամ չեր ուղում անցնել, թե ուսուսական բանակը կարող և խայտառակվել:

Այս մտքերից հուզված, գրգռված՝ իշխան Անդրեյը գնաց իր սենյակը՝ հորը նամակ գրելու: (Նա հորը նամակ գրում եր ամեն քր): Միջանցքում հանդիպեց իր սենյակի ընկեր Նեսվիցկին, և կատակաբան ժերկովին: Նրանք, ինչպես միշտ, ծիծաղում եյին ինչ-վոր բանի վրա:

— Ինչո՞ւ այդպես մոռյլ ես, — հարցրեց Նեսվիցկին, նկատելով իշխան Անդրեյի դունատ ղեմքը. վորի վրա աչքերը փայլում եյին:

— Ուրախանալու բան չկա, — պատասխանեց Բակոնսկին:

<sup>1</sup> Ձեր առջին և զմարտ Մակը:

Այն միջոցին, յերբ իշխան Անդրեյը հանդիպեց Նեպիցկուհու ու ժերկովին, միջանցքի մյուս կողմից դեպի նրանց յեկան ավատրիացի գեներալ Շտրաուսը, վորը Կառուղովի շտաբում հսկում էր ուսս դորքի պարենավորմանը, և յերեկ յերեկս յեկած հաֆիրիդստաթի անդամը։ Միջանցքն այնքան լայն էր, վոր գեներալներն ազատ կարող էին անցնել յերեք սպայի կողքով։ Բայց ժերկովը, Նեպիցկուհուն ձեռով հրելով, հեղձայն ասաց.

— Դալինս են... գալինս են... մի կողմ քաշվիր, ճամպած, ճամպատուր, խնդրեմ։

Դեներալներն անցան մի այնպիսի տեսքով, վոր ցույց էր տալիս նրանց այդ ավելորդ հարգանքից ազատվելու ցանկությունը։ Կատակարան ժերկովի դեմքին հանկարծ ուրախության մի հիմար ժպիտ յերևաց, վոր իբր թե չէր կարողանում զսպել։

— Զերդ գերազանցություն,— ասավ նա գերմաներեն, մի սխալ առաջ գնալով և ավատրիական գեներալին դիմելով։ — Պատիվ ունեմ շնորհավորելու։

Նա խոնարհեց դուռը և անհամարձակ կերպով, ինչպես պարեկ սովորող յերեխա, սկսեց շարժել նախ մեկ, ապա մյուս վոտը։

Հաֆիրիդստաթի անդամ գեներալը խոսությամբ նայեց նրան, բայց, նշմարելով նրա հիմար ժպիտի լրջությունը, չկարողացավ վայրկենական ուշադրություն չդարձնել նրա վրա։ Նա աչքերը կկոցեց, ցույց տալով, թե լուռ է։

— Պատիվ ունեմ շնորհավորելու, գեներալ Մակը յեկել և, բուրբուրին առողջ, միայն այստեղը մի քիչ քերժվել է,— ավելացրեց նա զվարթ ժպիտով և դուռը ցույց տալով։

Դեներալը դեմքը խոժոռեց, շրջվեց ու առաջ անցավ։

— Gott, wie naiv! — ասավ նա բարկացած, մի քանի քայլ հեռանալով։

Նեպիցկին քրքիջով գրկեց իշխան Անդրեյին, բայց Բալկոնսկին ավելի ևս զուռնատվեց և, կատաղության արտահայտությունը դեմքին, հրեց նրան ու դարձավ ժերկովին։ Այն նյարդային հուզումը, վոր պատճառել էր նրան Մակի տեսքը, նրա պարտություն լուրը և ուսսական բանակին սպասող վտանգը,— յեւք գտավ ժերկովի անտեղի կատակից առաջացած դայրույթի մեջ։

— Յեթե դուք, սիրելի պարոն,— ասավ նա սուր ձայնով ներքին շուրթը թեթևակի ղողացնելով,— կամենում եք ծաղրածու լինել, յես այդ բանին ձեզ չեմ կարող արգելք լինել։ Բայց հայտարարում եմ ձեզ, վոր յեթե դուք մյուս անգամ հալաւաճակվիք

<sup>1</sup> Աստված իմ, վորքան պարզամիտ է։

իմ ներկայութեամբ խեղկատակութիւններ անել, յետ անգ կստ-  
վորեցնեմ, թե ինչպէս պիտի անգ պահեք:

Նեպոլիոնիւն ու ժերկովիւն այնպէս զարմացան իշխանի այդ վար-  
ժուանքի վրաս, վոր անխոտ, աչքերնին չուած, Բալկանսկուէն նայեցին:

— Ինչ կա վոր, յետ շնորհավորեցի միայն, — ասով ժերկովիւն:

— Յետ կատակ չեն անում, բարեհաճեցեք լսել, — պոտայ Բալ-  
կանսկին և, Նեպոլիոնիւն թեր բռնելով, հետացավ ժերկովից, վորք  
չեր իմանում ինչ պատասխանի:

— Հը, ինչ յեղավ, յեղբայր, — հանգստացնելով ասով Նեպ-  
ոլիոնիւն:

— Ինչպէս թե ինչ, — ասով իշխան Անդրեյը, հուզումից  
կանգ առնելով: — Դու մի հասկացիր, վոր մենք կամ սպաներ  
ենք, վոր ծառայում ենք մեր թագավորին ու հայրենիքին և ուրա-  
խանում ենք ընդհանուր հաջողութեամբ ու արտում ընդհանուր  
անաջողութեանից, կամ լաքեյներ ենք, վորոնք չեն հետաքը-  
քովում իրենց տիրոջ գործերով. Quarante milles hommes massac-  
rés et l'armée de nos alliés détruite, et vous trouvez là le mot  
pour rire, — ասով նա, ֆրանսերեն այդ ֆրագով կարծես իր  
կարծիքն ամրապնդելով: — C'est bien pour un garçon de rien,  
comme cet individu, dont vous avez fait un ami, mais pas pour  
vous, pas pour vous<sup>1</sup>. Միայն տղաներ կարող են այդպէս զվար-  
ճանալ, — ասով իշխան Անդրեյը ուսներեն, արտասանելով այդ  
խոսքը ֆրանսերեն առողանութեամբ, նկատելով, որ ժերկովիւն դեռ  
կարող է իրեն լսել:

Նա սպասեց, տեսնելու, թե կոռնետը վորեւ պատասխան չի  
տա արդոյք: Բայց կոռնետը չըջվեց ու միջանքից դուրս յեկավ:

#### IV

Բրաունաուից յերկու մղոն հեռու բանակել էր հուսարական  
Պավլոգրադայան գունդը: Հեծելավաշտը, վորի մեջ ծառայում էր  
Նիկոլայ Ռոստովը իբրեւ յունկեր, տեղավորված էր գերմանական  
Ջալցենեկ գյուղում: Հեծելավաշտի հրամանատար՝ ուսումիստը Դե-  
նիսովին՝ վոր ամբողջ հեծյալ գիվիդիայում հայտնի յեր Վասկա  
Դենիսով անունով, հատկացված էր գյուղի ամենալավ բնակա-  
րանը: Յունկեր Ռոստովը, Լեհաստանում բանակին միանալուց  
ի վեր, ապրում էր հեծելավաշտի հրամանատարի հետ միասին:

<sup>1</sup> Քառասուն հազար մարդ է զոհվել, մեր զաշնակից բանակը վոչնչացել և,  
իսկ դուք հնարավոր եք համարում կատակներ անել: Դա ներքին յետ մի շնչին  
սպայի, ինչպիսին այդ պարոնն է, վորին դուք բարեկամ եք դարձրել, բայց վոչ  
թե անգ, վոչ թե անգ:



Հոկտեմբերի 11-ին, հենց այն օրը, յերբ Մակի պարտության լուրը գլխավոր շտաբում բոլորին վտառի հանեց, հեծելավաշտի շտաբում սպամական կյանքն ընթանում էր սովորականի պես: Գննիստվր, ամբողջ գիշեր թղթախաղում տանուլ տալուց հետո, դեռ տուն չէր յեկել, յերբ Ռոստովը, վաղ առավոտյան, ձիով վերադարձավ խորավորումից (ֆուրածիրովկա): Ռոստովը՝ յունկերական համազգեստը հագնին՝ մոտեցավ տան դռանը, հրեց ձիուն, ճկուն շարժումով մի վտար հանեց ասպանդակից, մի ակնթարթ մնաց այգպես, կարճես չկամենալով ձիուց բաժանվել, վերջապես, թնավ ցած ու ձայն տվեց բանրերին:

— Ա՛, Բոնդարենկո, սիրելի բարեկամ, — ասավ նա իր ձիու մոտ վազող հուսարին: — Սանձն ու թամբը հանի, սիրելիս, — ասավ նա յեղբայրական, ուրախ մտերմությամբ, ինչպես յերեստասարդները դիմում են բոլորին, յերբ յերջանիկ են:

— Լուսմ եմ, ձերդ պայծառափայլություն, — պատասխանեց խախտյր, գլուխն ուրախ թափահարելով:

— Տես, լավ հոգ տար:

Մի ուրիշ հուսար նույնպես վաղեց ձիու մոտ, բայց Բոնդարենկոն արդեն հանել էր լկամի սանձը: Յերեսում էր, վոր յունկերը լավ վարձատրում էր, ուստի և նրան ծառայելը շահավետ էր: Ռոստովը շոյեց ձիու վիզը, հետո զավակն ու կանգնեց տան դռան ստալ:

«Հիանալի՛ յե: Ա՛յ, ձին այնպես կլինի», ասավ նա ինքն իրեն և, ժպտալով ու թուրը բռնած, բարձրացավ պատշգամբ՝ խթանները շրխկացնելով: Գերմանացի-տանտերը, վորը ֆուֆայկայով ու թասակով յեղանը ձեռին մաքրում էր դռմի աղբը, դուրս նայեց: Ռոստովին տեսնելուն պես՝ գերմանացու դեմքը պայծառացավ հանկարծ: Ուրախ ժպտաց ու աչքով արավ. «Schön, gut Morgen! Schön, gut Morgen!»<sup>1</sup>, կրկնեց նա, հավանորեն, յերիտասարդին վողջունելուց բավականությունը դրալով:

— Schön fleissig!<sup>2</sup> — ասավ Ռոստովը նույն ուրախ, յեղբայրական ժպտով, վոր չէր հեռանում նրա զվարթ դեմքից: — Hoch Oestreicher! Hoch Russen! Kaiser Alexander hoch!<sup>3</sup> — դարձավ նա գերմանացուն, կրկնելով տանտերոջ հաճախ զործածած բառերը: Գերմանացին ծիծաղեց, գոմից դուրս յեկավ բոլորովին, թառակը վերցրեց ու, գլխից վեր թափ տալով, բացականչեց.

<sup>1</sup> Լավ է, բարե լույս, լավ է, բարե լույս:

<sup>2</sup> Արդեն աշխատանքի վրա յեք:

<sup>3</sup> Ավստրիացիք — կեցցե՛ն! Ռուսները — կեցցե՛ն! Կայսր Ալեքսանդրը — կեցցե՛ն!



— Und die ganze Welt hoch!<sup>1</sup>

Ռոստովն ինքն ել, գերմանացու նման, գլխարկը թափահարեց գլխից վեր ու, ծիծաղելով, բացականչեց.

«— Und Vivat die ganze Welt!»<sup>2</sup>. Թեև ուրախության տանձին մի պատճառ չկար վաչ իր դոմբ մաքրող գերմանացու համար, վաչ ել դասակի հետ խառն գնացած Ռոստովի համար, բայց նրանք յերկուսն ել յերջանիկ հրճվանքով ու յեղբայրական սիրով նայեցին միմյանց, գլուխները թափ ավին ի նշան փախադարձ սիրո և ժպտալով բաժանվեցին — գերմանացին մտավ դոմբ, Ռոստովը լարճիթը, վորն դրադեցնում եր Դենիսովի հետ միասին:

— Ազան թւո՛ւ ե, — հարցրեց նա Դենիսովի լաքայ Լավրուշկից, վոր ամբողջ գնդին հայտնի չեր վարպես խորամանկ մեկը:

— Ի՞նչ կվանից տուն չի յեկել. Ո՞վ գիտի տանուլ և ավել, — պատասխանեց Լավրուշկան: — Յես գիտեմ արդեն. յերբ տարած և լինում շուտ դալիս և պարձենալու, իսկ յեթե մինչև առավոտ չի դալիս, նշանակում է՝ տանուլ և ավել, ու տուն և դալու բարկացած: Սուրճ կհրամայե՛ք:

— Բեր, բեր:

Տաս բաղեյից հետո Լավրուշկան բերեց սուրճը:

— Գալիս ե, — ասավ նա, — վա՛յ մեզ:

Ռոստովը լուսամուտից նայեց և տեսավ տուն վերադարձող Դենիսովին: Դենիսովը փոքրիկ կարմրադեմ մարդ եր՝ սև փայլուն աչքերով, սև խոփվ բեղերով ու մազերով: Հագինը վերից վար կոճակները բաց մենտիկ եր և ծալքավոր լայն շալվար, իսկ ծածրակին զրեւ եր հուսարական ճմրճած գլխարկը: Գլուխը կախ, մոռյլ մոտեցավ պատշգամբին:

— Լավդ՛ուշկա, — ձայն ավեց նա բարձր ու բարկացած: — Դե, հանիր, տխմար:

— Արդեն հանում եմ, — պատասխանեց Լավրուշկայի ձայնը:

— Ա՛, ադ՛դեն վեղ՛ ես կացել, — ասավ Դենիսովը սենյակի մոտենալով:

— Վաղուց, — ասավ Ռոստովը, — խոտի գնացի արդեն և ֆրեյ-լեն Մատրիդին ել տեսա:

— Այ թե լի՛նչ, Իսկ յես տադ՛վեցի, տխպեղ՛ ջան, յեղ՛եկոյան, շանվոդ՛դու պես տադ՛վեցի, — գռչեց Դենիսովը Ի-երը և Ռ-երը դ արտասանելով: — Այսպես դժբախտության: Այսպես դժբախտության: Բու գնալուց հետո — տադ՛վեցի: Այ, թեյ տուր:

<sup>1</sup> Յեզ ամբողջ աշխարհը — կեցցե՛ս:

Դենիսովը դեմքը կնճեց, կարծես ժպտում եր, ու կարճ պինդ աստամեները բանալով, սկսեց յերկու ձեռի կարճլիկ մատներով խճճել անտառի պես ցցված սև, խիստ մազերը:

— Սասանան դո՛ղեց ինձ դնալ այդ առնետի մոտ (սպայի մականուն), — յերկու ձեռով ճակատն ու յերեսը շփելով՝ շարունակեց նա: — Կադ'ոդ ես յեղ'նակայել վճճ մի թուղթ, վոչ մի թուղթ չեկալ:

Դենիսովը վերցրեց իրեն մատուցված ծխամորճը, սեղմեց բռունցքի մեջ և, կրակը թափելով, գարկեց հատակին, շարունակելով:

— Սեմպելը տալիս և, պադ'սը՝ խփում:

Նա կրակը շող տվեց, ծխամորճը կտրեց ու նետեց: Մի բուպե լսեց, ապա հանկարծ իր սև փայլուն աչքերով Ռոստովին նայեց:

— Դոնն կանայք լինեյին: Թե չե այստեղ, թմեկուց բացի, ուղ'իչ բան չկա անելու: Մ'յ, թվ կա այդտեղ, — դարձավ դեպի դուռը, լսելով խթանալու հաստ կոշիկների դրմիոց և հարգալիր հաղի ձայն:

— Վերական և (վախճիրսը), — ասավ Լավրուշկան:

Դենիսովը դեմքն ավելի խոժոռեց:

— Զգվելի յե, — ասավ նա մի քանի վոսկի պարունակող քսակը շարժելով: — Դոստով, համզ'ի, սիզ'ելիս, ինչքան և մնացել, ու դիզ' բազ'ձիս տակ, — ասավ նա ու դուրս յեկավ:

Ռոստովը փողը վերցրեց և, մեքենայորեն հին ու նոր վոսկիները դասավորելով, սկսեց հաշվել:

— Ա՛, Տեյանին: Բազ'և Յեզ'եկ ինձ մի լավ կեզ'ցրին, — լավեց Դենիսովի ձայնը մյուս սենյակից:

— Ո՛ւմ մոտ: Բըկովի, առնետի մոտ... Յես գիտեյի, — ասավ մի ուրիշ բարակ ձայն, ապա սենյակ մտավ տեղակալ (պորուչիկ) Տեյանինը, նուրս հեծելավաշտի սպան:

Ռոստովը քսակը բարձի տակ կոխեց ու սեղմեց դեպի իրեն պարզված փոքրիկ ու տամուկ ձեռը: Տեյանինը արշավանքից առաջ ինչ-վոր բանի պատճառով դվարդիակից փոխադրվել եր հուսաբական դուռեջը: Նա իրեն շատ լավ եր պահում գնդում. բայց նրան չնայի սիրում, և մանավանդ Ռոստովը չեր կարողանում վոչ հազթահարել, վոչ և թագցնել իր անտաթիզ զգվանքը դեպի այդ սպան:

— Հը՛, յերիտասարդ հեծելակ, Դրաշիկս լինչպես և ծառայում ձեզ, — հարցրեց նա: (Դրաշիկը այն ձին եր, վոր Տեյանինը ծախել եր Ռոստովին):

Տեյյանինը յերբեք խոսակիցների աչքերին չեր նայում. նրա նայվածքը շարունակ հածում եր մի առարկայից մյուսը:

— Տեսա քիչ առաջ ձերով անցաք...

— Վռչինչ՝ լավ ձի յե, — պատասխանեց Ռոստովը, չնայած այդ ձին, վոր գնված եր 700 ռուբլով, դրա կեսն ել չարժեք: — Սկսել ե առաջի ձախ վտարից կաղալ... — ավելացրեց նա:

— Մտրակը ճաքել ե: Այդ վռչինչ, Կոստրեցնեմ, ցույց կտամ, թե ինչպես պիտի մեխել:

— Ցույց տվեք, խնդրեմ, — ասավ Ռոստովը:

— Ցույց կտամ, դա զաղտնիք չե: Բայց ձեր համար շնորհակալ պիտի լինեք:

— Ուրեմն կարգադրեմ ձին բերեն, — ասավ Ռոստովը, ցանկանալով աղատվել Տեյյանինից, ու դուրս յեկավ, վոր ձին բերել տա:

Հաշտում Դենիսովը, ծխամորճն առամենքի՝ արանքին, կուշ յեկած նստել եր շեմքին, վերակայի առաջ, վորը ինչ-վոր բան եր զեկուցում: Ռոստովին տեսնելով Դենիսովը հոնքերը կիտեց ե, ուսի վրայից մատով ցույց տվեց սենյակը, ուր նստած եր Տելյանինը, դեմքը խոժոռեց ու զուլեւը շարժեց զզվածքով:

— Ո՛ր, տանեմ չեմ կարող այդ տղային, — ասավ նա, չքաշվելով վերակայի ներկայութունից:

Ռոստովն ուսերը թոթվեց, կարծես ուզում եր ասել «Յես ել, բայց ինչ կարող եմ անել» ե, կարգադրութուն անելով, վերադարձավ Տեյյանինի մոտ:

Տեյյանինը նստած եր նույն ծուլը դիրքով, ինչպես Ռոստովը թողել եր նրան, ու շփում եր փոքրիկ ճերմակ ձեռները:

«Այ թե հակակրելի մարդիկ կան», մտածեց Ռոստովը, սենյակ մտնելով:

— Հը, կարգադրեցիք ձին բերեն, — ասավ Տեյյանինը, տեղից յեկնելով ու անփույթ շուրջը նայելով:

— Կարգադրեցի:

— Դե մենք ել գնանք: Յես յեկա միայն Դենիսովին յերեկվա հրամանի մասին հարցնելու: Մտացմք, Դենիսով:

— Դես վռչ: Իսկ դուք ծւր եք գնում:

— Ուզում եմ յերիտասարդին սովորեցնել, թե ինչպես պետք ե ձին պայտել, — ասավ Տեյյանինը:

Նրանք դուրս յեկան պատշգամբը ե այնտեղից գնացին դամբ: Տեղակալը ցույց տվեց պայտելու ձևն ու գնաց իր բնակարանը:

Յերբ Ռոստովը վերադարձավ, սեղանի վրա դրված եր ողու մի շիշ ու յերշիկ: Դենիսովը սեղանի առջև նստած՝ գրիչը ճոճապնում եր թղթի վրա: Մոայլորեն նայեց Ռոստովի դեմքին ու ասավ.

— Նրանք եմ գրում:

Նա, գրիչը ձեռքին, արժանեկամ հենվեց սեղանին և, բոլոր յերկ-  
վայթիկն ու բախտանալով գրելիքը բերանացի ասելու առիթից, նա-  
մակի բովանդակութունը պատմեց Ռոստովին:

— Դիտեա, բազմակամ, — ասավ նա: — Մենք քնում ենք, հան-  
գիստ ենք, քանի դեռ չենք սիրում: Մենք հոգեղեն աղ'աղ'ածներ  
ենք... բայց սիրեցիր թե չե՝ — աստված ես, մաքուր ես, ծնված  
առաջին սրվա պես... Այդ ժոկ ե: Քչի, դնա: Ժամանակ չկա, — ձայն  
տվեց նա Լավրուշկային, վոր առանց քաշվելու մոտեցավ նրան:

— Ո՛վ պիտի լինի: Դուք եք կարգադրել: Վերական զոդի յե  
յեկել:

Դենիսովը դեմքը խոժոռեց, ուղեց ինչ-վոր բան ասել, բայց  
լուց:

— Բանը վատ ե, — ասավ նա ինքն իրեն: — Ի՞նչքան փող ե  
մնացել քսակում, — հարցրեց Ռոստովից:

— Յոթը նոր և յերեք հաւ հին:

— Ե, վատ ե Դե, ինչ ես կանգնել, հիմադ', վեղակային ճամ-  
պու գիր դնա, — բղավեց նա Լավրուշկայի վրա:

— Խնդրեմ, Դենիսով, յես կարող եմ տալ, ունեմ, — ասավ  
Ռոստովը կարմրելով:

— Ձեմ սիրում իմ ընկերներից փոխ առնել, չեմ սիրում, —  
փնթփնթաց Դենիսովը:

— Յեթե ընկերաբար ինձից փող չվերցնես, ինձ կվերադարձա-  
նիշտ եմ ասում, ունեմ, — կրկնեց Ռոստովը:

— Ե, չե՛:

Յեվ Դենիսովը մահճակալին մոտեցավ, վոր քսակը վերցնի  
բարձի տակից:

— Վորտեղ ես դրել, Ռոստով:

— Տակի բարձի տակը:

— Ո՛ւր ե, չկա:

Դենիսովը յերկու բարձն ել քցեց հատակին: Քսակը չկար:

— Այ՛ քեզ հրաշք:

— Կաց, հո ցած չքցեցիր, — ասավ Ռոստովը, բարձերը մեկ-մեկ  
բարձրացնելով ու թափ տալով:

Վերմակը նույնպես վերցրեց ու թափ տվեց: Քսակը չկար:

— Մոռացած չլինեմ: Ձե, մոռանցի ել, վոր դա՛նձի պես գլխիդ  
տակն ես դնում, — ասավ Ռոստովը: — Յես քսակն այդտեղ դրի:  
Բայց ձեւ կորավ, — զիմեց նա Լավրուշկային:

— Յես ներս չեմ մտել, Վորտեղ դրել եք, այնտեղ ել կլինի:

— Ձկա...

— Դուք միշտ այդպես եք. քցում եք մի տեղ ու մոռանում: Դրականիդ նայեցեք:

— Ձե, յեթե դանձի մասին մտածած չլինեյի, — ասավ Ռոստովը, — բայց լավ եմ հիշում, վոր այդտեղ դրի:

Լավորուշկան ամբողջ անկողինը խառնեց, նայեց մահճակալի տակը, սեղանի տակը, ամբողջ սենյակը տակն ու վրա արավ և սենյակի մեջտեղը կանգնեց: Դենիսովն անխոս հետևում եր Լավորուշկայի շարժումներին, և յերբ նա դարձացած տարածեց ձեռները, առելով, թե վոչ մի տեղ չկա, Դենիսովը նայեց Ռոստովին:

— Ղոստով, յերեխայություն մի անի...

Ռոստովն զգաց Դենիսովի իր վրա սեռած հայացքը, աչքերը բարձրացրեց և իսկույն ել խոնարհեց ցած: Ամբողջ արյունը յերեսը տվեց, ել չկարողացավ շունչ քաշել:

— Սենյակում ել բացի տեղակալից ու ձեղանից մարդ չի յեղել: Եստեղ մի տեղ պետք ա ըլի, — ասավ Լավորուշկան:

— Դե, դու յել, սատանի ծնունդ, շուգ՝ արի, տնտղի, — դուռաց հանկարծ Դենիսովը, կասկարմիր կտրելով և սպառնալից շարժումով լաքեյի վրա հարձակվելով: — Քսակը պիտի գտնեք, թե չե կշաղ՛դեմ: Բաղդիդ կշաղ՛դեմ:

Ռոստովն, առանց Դենիսովին նայելու, բաճկոնը կռկեց, թուրը պնդացրեց ու գլխարկը դրեց:

— Յես քեզ ասում եմ քսակը պիտի գտնվի, — դուռաց Դենիսովը, սպառնալի (դենչչիկ) ուսերը ցնցելով և նրան դեպի պատը հրելով:

— Դենիսով, դրան թող. յես գիտեմ սվ ե վերցրել, — ասավ Ռոստովը, աչքերն առանց բարձրացնելու, դրանք մոտենալով:

Դենիսովը կանգ առավ, մտածեց և, հավանորեն Ռոստովի ակնարկը հասկանալով, նրա ձեռք բռնեց:

— Հիմադ՛ություն ե, — բացականչեց նա այնպես, վոր վզի ու ճակատի յերակները պարանի պես հաստացան: — Յես քեզ ասում եմ՝ խելքդ թղ՛ցղ՛ել ես. յես այդ թույլ չեմ տա: Քսակն այստեղ ե. այս սղիկայի կաշին կքեղ՛թեմ, և կգտնվի:

— Յես գիտեմ սվ ե վերցրել, — կրկնեց Ռոստովը դողացող ձայնով ու դնաց դեպի դուռը:

— Իսկ յես քեզ ասում եմ՝ չհամադ՛ձակվես այդ բանն անել, — պոռաց Դենիսովն ու նետվեց դեպի յունկերը, վոր չթողնի նրան դուրս գնալու:

Բայց Ռոստովը թե՛ն ազատեց նրա ձեռից՝ այնպիսի չարությամբ, կարծես Դենիսովը նրա մեծապաշտ թշնամին լիներ, և աչքերը վճռականորեն հռեց նրա յերեսին:

— Հասկան՞ում ես ինչ ես ասում, — ասավ նա դողացող ձայնով, — սենյակում ինձնից բացի մարդ չի յեղել: Նշանակում ե՛լ յեթե նա չի, ուրեմն...

Նա չկարողացավ խոսքը վերջացնել ու սենյակից դուրս վաղեց: — Ե՛հ, աստանան տանի քեզ ել, բոլոր՛իդ ել, — Ռոստովի ականջին հասավ Դենիսովի վերջին խոսքերը:

Ռոստովը գնաց Տեյլանինի բնակարանը: — Ազան տանը չի, շտաբ գնաց, — ասավ նրան Տեյլանինի սպասյակը: — Ի՞նչ ե պատահել վոր, — ավելացրեց նա, զարմանալով յունկերի ալալոված դեմքի վրա:

— Վաչինչ:

— Մի փոքր ուշացել եք, — ասաց սպասյակը:

Շտաբը դանձում եր Զալցենսկի դյուզլից յերեք վերստ հեռու: Ռոստովը, ասանց տուն մտնելու, ձին հեծավ ու շտաբ գնաց: Գլուզը, ուր դանձում եր շտաբը, մի ճաշարան կար, վոր հաճախում էին սպաները: Ռոստովն ուղիղ գնաց ճաշարան. դռան մոտ նկատեց Տեյլանինի ձին:

Ճաշարանի յերկրորդ սենյակում նստած եր Տեյլանինը, առջևը՝ սեղանի վրա մի աման սոխիկի ու մի շիշ գինի:

— Ա՛, դուք ել յեկաք, պատանյակ, — ասավ նա ժպտալով ու հոնքերը վեր բարձրացնելով:

— Այո, — ասավ Ռոստովը, կարծես այդ խոսքն արտասանելը մեծ ֆանք եր պահանջում իրենից, ու նստեց հարևան սեղանի մոտ:

Յերկուսն ել լուռ էին. սենյակում նստած էին յերկու գեղամանացի ե մի ուռւ սպա: Բոլորը լուռ էին, լավում էին միայն դանակները՝ ափսոսներին դիպչելու ձայնը ե Տեյլանինի ծամելու չլիշլիփոցը: Յերբ Տեյլանինը նախաճաշն ավարտեց, դրոշանից հանեց կրկնակ քսակը, սպիտակ մատներով ողակը քաշեց, մի վստիկ հանեց ու, հոնքերը վեր քաշելով, ավեց սպասավորին:

— Խնդրեմ, շուտ արեք, — ասավ նա:

Վստիկորամը նոր եր: Ռոստովը վեր կացավ ու մտեցավ Տեյլանինին:

— Թույլ ավեք ձեր քսակին նայելու, — ասավ նա կամաց, հարկիվ լսելի ձայնով:

Թափառուն նայվածքով, բայց շարունակ վեր քաշած հոնքերով Տեյլանինը քսակը ավեց Ռոստովին:

— Այո, լավ քսակ ե... Այո... այո... — ասավ նա ե հանկարծ գունատվեց: — Նայեցեք, պատանյակ, — ավելացրեց նա:

Ռոստովը քսակը ձեռն առավ ու նայեց թե քսակին, թե նրամեջ յեղած փողին ե թե Տեյլանինին: Տեղակալն, ըստ սովորու-

թյան, չորս կողմը նայեց և հանկարծ, թվաց թե շատ ուրախացավ:

— Յեթե Վեննա դնանք, բոլորն այնտեղ ծախսելու յեմ, իսկ այստեղ, այս վողորմելի քաղաքներում ծախսելու տեղ չկա,—ասավ նա:—Դե, տվեք, պատանյակ, յես դնամ:

Ռոստովը լուռ եր:

— Իսկ դուք ինչ՞եւ յեկաք. նույնպէս նախաճաշելու: Լավ կերակրում են,—շարունակեց Տեյլանինը:—Դե, տվեք:

Նա ձեռք մեկնեց ու քսակը բռնեց, Ռոստովը թողեց: Տեյլանինը քսակը վերցրեց ու դրպանը դրեց, և նրա հոնքերը նորից անփութորեն վեր քաշվեցին, իսկ բերանը ծովեց թեթևակի, վոր կարծես ասելիս լիներ. «այո, այո, դրպանս եմ դնում իմ քսակը, և դա շատ պարզ բան է, և վոչ-վոք իրավունք չունի այդ բանին խոսովելու»:

— Հը, թիչ կա, պատանյակ,—ասավ նա, հոգոց քաշելով և վեր քաշած հոնքերի տակից նայեց Ռոստովի աչքերին: Աչքերի մի ինչ-վոր լույս՝ ելեքարական կայծի արագությամբ՝ սկսեց վազել Տեյլանինի աչքերից դեպի Ռոստովի աչքերը և ընդհակառակը, դարձյալ ու նորից, և այս բոլորը մի ակնթարթում:

— Յեկեք այստեղ,—ասավ Ռոստովը, Տեյլանինի ձեռք բռնելով: Ու դրեթե քաշ տվեց նրան դեպի լուսամուտը:—Այս փողերը Դենիսովինն են, դուք վերցրել եք...—չնչաց նրա ականջին:

— Ի՞նչ... Ի՞նչ... Թիչպես եք համարձակվում: Ի՞նչ...—ասավ Տեյլանինը:

Սակայն այդ խոսքերը հնչեցին աղաչական, հուսահատական ճիչով և ներողութուն հայցող յեղանակով: Հենց վոր Ռոստովը այդ ձայնը լսեց, կասկածի քարն ընկավ նրա հոգու վրայից: Ուրախություն դաց, և նույն վայրկյանին ել խղճաց իր առջևը կանգնած թշվառ մարդուն. բայց սկսած գործը պետք և հասցներ իր վախճանին:

— Այստեղ մարդիկ, ով դիտի, ինչ կարող են մտածել,—փրկեփրկեց Տեյլանինը գլխարկը վերցնելով և դեպի դատարկ սենյակը գնալով,—պետք և բացատրվել...

— Յես այդ գիտեմ, և կապացուցեմ,—ասավ Ռոստովը:

— Յես...

Տեյլանինի վախեցած, դուռնադռն դեմքն սկսեց դողալ իր բոլոր մկաններով. հայացքը շարունակում էր թափառել, բայց միշտ ցածերում, ու չէր բարձրանում-նայում Ռոստովի դեմքին. և հանկարծ հեծկլտանք լսվեց:



— Կճմա... յերթասարդ եմ, ինձ մի կործանեք... ահա այդ զմբախտ փողերը, վերցրեք... — Նա փողերը նետեց սեղանի վրա: — Յես ձեր հայր ունեմ, մայր...

Ռոստովը փողը վերցրեց և, առանց Տելյանինին նայելու, առանց մի խոսք ասելու, դուրս յեկավ սենյակից: Բայց դռան մոտ կանգնեց ու յետ դարձավ:

— Աստված իմ, — ասավ նա արտասովալի աչքերով, — լինչպես ձեզ այդպիսի բան թույլ տվիք:

— Կճմա, — ասավ Տելյանինը, յուռկերին մոտենալով:

— Ինձ ձեռ մի տաք, — ասավ նա մի կողմ քաշվելով: — Յեթե կարիքի մեջ եք, առեք այս փողը: — Նա քսակը նետեց նրան ու արագ դուրս յեկավ ճաշարանից:

## V

Նույն օրը յերեկոյան Դենիսովի բնակարանում հեծելավաշտի սպաները տաք-տաք խոսում էին:

— Իսկ յես ձեզ ասում եմ, Ռոստով, դուք պետք և ներողութթյաւն խնդրեք զնդի հրամանատարից, — կաս-կարմիր կտրած, հաւդված Ռոստովին զիմելով ասում եր ալեխառն մաղերով, ահագին բեղերով և կնճոտ դեմքի խոշոր գծերով փոխկապիտանը:

Փոխկապիտան Կիրստենը պատվի խնդիրներով յերկու անգամ աստիճանադուրկ եր արվել մինչև հասարակ զինվորութթյուն և յերկու անգամ ել ձեռք եր բերել իր նախկին աստիճանը:

— Յես վոչ վոքի թույլ չեմ տա ինձ ասելու, թե յես ստում եմ, — բացականչեց Ռոստովը: — Նա ինձ ասավ, թե յես ստում եմ, իսկ յես պատասխանեցի, վոր ինքն և ստում: Այդպես ել կվերջանա: Ինձ հերթադառնութթյան կարող և նշանակել թեկուզ ամեն օր, կարող ե և կալանքի տակ նստեցնել, բայց վոչ-վոք չի կարող ինձ հարկադրել ներողութթյուն խնդրելու, վորովհետեւ յեթե նա, վորպես զնդի հրամանատար, իրեն արժան չի համարում ինձ բավարարութթյուն տալ, ուրեմն...

— Բայց սպասեք, սիրելիս. լսեցեք ինձ, — ընդհատեց փոխկապիտանն իր թավ ձայնով, յերկար բեղերը հարթելով: — Դուք ուրիշ սպաների ներկայութթյամբ զնդի հրամանատարին ասում եք, թե սպան զոդացավ...

— Յես մեղավոր չեմ, վոր խոսակցութթյուն բացվեց ուրիշ սպաների ներկայութթյամբ: Թերեւս նրանց ներկայութթյամբ չպետք և խոսելի, բայց յես զիվանապետ չեմ: Յես զբա համար ել հուսարական դուռդը մտա, մտածելով, վոր այստեղ նրբութթյուններ

պետք չեն. իսկ նա ինձ ասում է, թե յես ստում եմ... թող ուրեմն ինձ բաժարաբուժյուն տա...

— Այդ բոլորը լավ, վոչ-վոք չի կարծում, թե դուք վախկոտ եք, բայց բանն այդ չի. Հարցրեք Դենիսովին. տեսնված բանն է, վոր յաւնկերը բաժարաբուժյուն պահանջի զնդի հրամանատարից:

Դենիսովը, բեղը կոծելով, մտայլ տեսքով ականջ էր դնում խոսակցութեան, ըստ յերեսւթիին չցանկանալով մասնակցել: Փախկապխտանի հարցին ի պատասխան, նա գլուխը շարժեց քաջասարար:

— Սպաների ներկայութեամբ զնդի հրամանատարին ասում եք այդ զազրելի բանը, — շարունակեց փախկապխտանը: — Բողոքանիչը (Բողոքանիչ կոչում էյին զնդի հրամանատարին) ձեզ լուեցրեց:

— Զլուեցրեց, այլ ասավ, թե յես սուտ եմ խոսում:

— Այո, և դուք նմեն տեսակ հիմարութեաններ ասիք նրան, պետք է ուրեմն ներողութեուն խնդրել:

— Վաչ մի գեպըում, — դռնեց Ռոստովը:

— Յես այդ ձեզնից չեյի սպասում, — լքջորեն ու խստութեամբ ասավ փախկապխտանը: — Դուք չեք ուղում նրանից ներողութեուն խնդրել, բայց սիրելիս, դուք վոչ միայն նրա, այլ ամբողջ զնդի, մեր բոլորի առաջ մեղավոր եք վտարից-գլուխ: Ահա թե ինչու. մի մտանք կամ խորհրդակցեք՝ ինչպես վարվիլ այդ գործում, թե չե ուղղակի, այն էլ սպաների ներկայութեամբ, մո հա քեզ — ամեն ինչ ասիք: Հիմի լինչ պիտի անի զնդի հրամանատարը: Սպային դատի հանձնի և ամբողջ դունդը արատավորի: Մի սրիկայի պատճառով ամբողջ դունդը խայտառակի: Այդ և ձեր ուղածը: Մենք այդպես չենք մտածում: Յեվ Բողոքանիչը՝ կեցցեմ. նա ասավ, վոր դուք սուտ եք խոսում: Անախորժ բան է, բայց ինչ արած, սիրելիս, ինքներդ ասի՛ք սովիք: Իսկ հիմա, յերբ ուղում են խնդիրը փակել, դուք ինչ-վոր հպարտութեան պատճառով չեք ուղում ներողութեուն խնդրել, այլ ուղում եք բոլորը պատմել: Զեզ համար վիրավորականն եք համարում հերթափահութեան կանգնելը: Վիրավորականն եք համարում ներողութեուն խնդրել մի հին ազնիվ սպայից: Ինչ էլ լինի Բողոքանիչը, այնուամենայնիվ ազնիվ և հին քաջ զնդապետ է. դուք ներողութեուն խնդրելը վիրավորական եք համարում. իսկ դունդն արատավորելը ձեզ համար վոչի՛նչ: — Փախկապխտանի ձայնն սկսեց դողալ: — Դուք, սիրելիս, զնդի մեջ նորեւուկ եք. այսոր այտեղ եք, վաղը կերթաք մի տեղ աղյուստանտ կղաւնաք. ու ձեզ համար թքած, թե կասեն. Եպավիղորադյան սպաների մեջ գողեր կան: Իսկ մեզ համար այդպես չի: Այնպես չի, Դենիսով:

Դենիսովը շարունակում եր լուել ու չեր շարժում, յերբեմն միայն սև փայլուն աչքերով նայում եր Ռոստովին:

— Ձեր ինքնատիրությունը թանգ ե մեզ համար, ներողություն խնդրել չեք ուզում, — շարունակեց փոխ-կապիտանը, — իսկ մենք, ձերունիներս, վեր մեծացել ե, աստված տա, մեռնելու յենք զնդի մեջ, մեր զնդի պատիվը թանգ ե մեզ համար, ե Բողդանիչն այդ պիտի Ո՞ր, վերքան թանգ ե, սիրելիս: Իսկ քո արածը՝ լավ բան չի, լավ բան չի: Կուզեք վերադարձնել, կուզեք վաղ, յես ճշմարտությունը կասեմ: Լավ չի:

Յեզ փոխ-կապիտանը վեր կացավ ու յերեսը շրջեց Ռոստովից:

— Ըիշտ ե, դո՞ղը տանի, — բացականչեց Դենիսովը տեղից վեր թռչելով: — Դե, Ղոստով: Դե:

Ռոստովը, կարմրելով ու դունատվելով, նայում եր մերթ այս, մերթ մյուս սպային:

— Վաղ, պարոնայք, վաղ... դուք մի կարծեք... յես շատ լավ եմ հասկանում, իզուր եք իմ մասին այդպես կարծում... յես... ինձ համար... յես զնդի պատվի պաշտպանն եմ... ե այդ դործով կապացուցեմ, ե դրաշխի պատիվն ինձ համար... ե, միևնույն ե, ճիշտ ե, յես մեղավոր եմ... — Նրա աչքերը լցվեցին արցունքով: — Մեղավոր եմ, վատից-ղլուխ մեղավոր եմ... Հը, ել լինջ եք ուղում... — Այ այդպես, կոմս, — յերեսը շրջելով՝ զոչեց փոխ-կապիտանը, խոշոր ձեռով նրա ուսին խփելով:

— Յես քեզ ասում եմ վեր, — զոչեց Դենիսովը, — սա լավ սողա յե:

— Այդպես շատ լավ ե, կոմս, — կրկնեց փոխ-կապիտանն ու կարծես նրա խոստովանության համար սկսեց տրադոսներով մեծարել նրան: — Գնացեք ե ներողություն խնդրեցեք, ձերդ պայծառփայլություն, այս-ս:

— Ամեն ինչ կանեմ, պարոններ, վաղ-վաղ ինձնից մի խոսք չի լսի, — ազաչական ձայնով ասավ Ռոստովը, — բայց ներողություն խնդրել չեմ կարող, աստված վկա, չեմ կարող, ինչպես կուզեք: Ինչպես պետք ե ներողություն խնդրեմ. յերեխայի նման թողություն հայցեմ:

Դենիսովը ծիծաղեց:

— Ձեզ համար վատ կլինի: Բողդանիչը հիշաչար մարդ ե, կտուժեք ձեր համառության համար, — ասավ Կիրստենը:

— Աստված վկա, համառություն չի: Ձեմ կարող նկարագրել, թե ինչ դժացում ե, չեմ կարող...

— Ե, կամքը ձերն ե, — ասավ փոխ-կապիտանը: — Իսկ այդ սրիկան ձեր ե կորել, — հարցրեց նա Դենիսովից:

— Հիվանդ ե ձևացել, կաղ՝գաղ՝ված ե վաղը հ'զամանով հեղ'ացնել, — ասավ Դենիսովը։

— Դա հիվանդությունն ե, այլ կերպ չի կարելի բացատրել, — ասավ փոխ-կապիտանը։

— Հիվանդությունն ե թե հիվանդությունն չի, աչքիս չեղ'նա, կսպանեմ, — գոռաց Դենիսովը արյունաբերու ձայնով։

Ներս մտավ Ժերկովը։

— Դու վորտեղից հայտնվեցիր, — դիմեցին սպաները նրան։

— Կռիվ ենք գնում, պարոններ։ Մակն իր ամբողջ բանակով գերի յե ընկել։

— Պարճւմ ես։

— Ինքս եմ տեսել։

— Ի՞նչպես։ Մակին վճիշ տեսար։ Զեռներձով, վտաններձով։

— Արշավանք։ Արշավանք։ Մի շիշ ողի տվեք այդ նորույթյան համար։ Իսկ դու Բնչպես ընկար այստեղ։

— Նորից գունդն ուղարկեցին այդ սաստանայի՝ Մակի պատահառով։ Ավստրիացի զենեքալը զանգառովել ե վրաս։ Յես նրան շնորհավորեցի Մակի գալստյան առթիվ... Այդ Բնչ ե պատահել, Ռոստով, կարծես բաղնիսից նոր ես գուրս յեկել։

— Այստեղ, յեղբայր, յերկու ուր ե մեծ անհամությունն կա։

Ներս մտավ գնդի աղյուստանտը ե հաստատեց Ժերկովի բերած լուրը։ Հրամայված եր վաղը կռվի գուրս դալ։

— Պատերճով, պարոններ։

— Ե, փառք ասածո, այստեղ յերկար մնացինք։

## VI

Կուսուղաղը նահանջեց դեպի Վեննա, իր յետից վոչնչացնելով Իննա (Բրաունաուի մեջ) ե Տրաունա (Լինցի մեջ) գետերի կամուրջները։ Հոկտեմբերի 23-ին ուսսական զորքերը անցնում եյին Ենս գետը։ Ռուսական գումակը, հրետանին ե զարասյունները կետրին անցնում եյին Ենս քաղաքի միջով, կամուրջի այս ու այն կողմը ձիգշարքեր կադմած։

Աշնանային տաք անձրևոտ ուր եր։ Ընդարձակ հեռապատկերը, վաղ բացվում եր այն բարձունքից, ուր կանդնած եր կամուրջը պաշտպանող ուսսական մարտկոցը, մերթ հանկարծ ծածկվում եր թեք իջնող անձրևի վարադույրով, մերթ բացվում հանկարծ, ե արևի լույսի տակ հեռվում պարզ յերևում եյին պայծառացած առարկաները, կարծես լաքով պատած։ Ներքեր յերևում եր փոքրիկ քաղաքը՝ իր սպիտակ տներով ու կարմիր տանիքներով, յեկեղեցով ու կամուրջով, վորի յերկու կողմը լամբված հասում եր

սուսական զորքերի զանգվածը: Դանուբի վտարանի վրա յերևում էին նավեր, և կղզի, և պարտեզով մի զզյակ, վոր շրջապատված էր Լենսի՝ Դանուբը թափվող ջրերով: Երևում էր Դանուբի ձախ՝ մայրոտ և շամի անտառով ծածկված ափը՝ կանաչ դադաթների խորհրդավոր հեռվով ու կապույտին տվող կիրճերով: Յերևում էին վանքի աշտարակներ, վոր բարձրանում էին շամի, կարծես կառական ու վայրի անտառի յետևից: Հեռվում, լեռան վրա, Լենսի մյուս կողմը յերևում էին թշնամու հեծելադետները (սագ-յեղդ):

Թնդանոթների արանքում, բարձրության վրա կանգնած եր վերջապահ զորամասի հրամանատար գնեբրալը՝ չքախմբին պատկանող մի սպայի հետ ու հեռագրատակով նայում-ուսումնասիրում էր շրջական: Նրանից մի քիչ յետ՝ Թնդանոթի փողին նստել էր Նեովիցկին, վոր գլխավոր հրամանատարի կողմից ուղարկված էր վերջապահ զորամասը: Նեովիցկուն ուղեկցող կաղակը՝ պարկն ու ջրամանը տվավ նրան, և Նեովիցկին սպաներին հյուրասիրեց խմորեղենով ու իսկական դոպպել'կյումեկով: Սպաներն ուրախ-զվարթ շրջապատել էին նրան՝ վոմանք չորան, վոմանք տան՝ կակին ձևով թաց կանաչի վրա ծալապատիկ նստած:

— Այո, այդ ավստրիացի իշխանը հիմար չի յեղել, վոր այստեղ զզյակ և շինել: Փառավոր տեղ է: Ինչձև չեք ուտում, պարոններ, — ասավ Նեովիցկին:

— Քորապես շնորհակալ եմ, իշխան, — պատասխանեց սպաներից մեկը, հաճությամբ զրուցելով շտաբի այդպիսի բարձրաստիճան մի պաշտոնյայի հետ: — Հիանալի տեղ է: Մենք հենց պարտեզի կողքով անցանք, յերկու յեղջերու տեսանք, իսկ տունը վորքան հրաշալի յե:

— Նայեքեք, իշխան, — ասավ մի ուրիշը, վորը շատ էր ցանկանում դարձյալ խմորեղեն վերցնել, բայց քաշվում էր, և վոր այդ պատճառով ձևացնում էր, թե դիտում է շրջակայքը, — մի նայեցեք, մեր հետևակներն արդեն հասան այնտեղ: Ա՛յ այնտեղ, փողբիկ մարգագետնի վրա՝ ծառերի յետև, յերեք հոգի ինչ-վոր բան են քաշ տալիս: Նրանք այդ պալատը կքանդեն:

— Այո, այո, — ասավ Նեովիցկին: — Բայց, գիտեք, յես ինչ կցանկանայի, — ավելացրեց նա խմորեղենը իր գեղեցիկ բերանով ծամելով, — մի այնտեղ դնալ:

Նա ցույց տվեց սարի վրա յերևացող աշտարակավոր վանքն ու ժպտաց. նրա աչքերը կուչ յեկան ու փայլեցին:

— Կավ բան կլինեք, չե՞, պարոններ:

Սպաները ծիծաղեցին:

— Գոնե մի քիչ վախեցնեյինք այդ կույսերին: Ասում են՝ իտալուհիներ են. մեջները կան ջահեր եւ, Իսկապես, կյանքիցս հինգ տարի կտանի:

— Ձե վոր նրանք եւ տերում են, — ծիծաղելով ասավ մի սպա, վոր ավելի համարձակն եր յերևում:

Մինչ այդ շքախմբի սպան, վոր կանգնած եր դներալի մոտ, ինչ-վոր բան ցույց տվեց նրան. դներալը նայում եր հեռադիտակով:

— Այո, այդպես եւ կա, այդպես եւ կա, — բարկացած ասավ դներալը, հեռադիտակն աչքերից հեռացնելով և ուսերը թոթովելով, — այդպես եւ կա, խփելու յեն կամուրջին՝ անցնելու ժամանակ: Բայց մերոնք ինչ՞ու յեն դանդաղում:

Այն կողմը պարզ աչքով յերևում եր թշնամին ու իր մարտկոցը, վորից հանկարծ կաթնադուլն մի ծուռ յերևաց: Միից հետո լսվեց մի հեռավոր կրակոց, և յերևաց թե ինչպես մեր զորքերն շտապեցին անցնել կամուրջը:

Նեովիցկին, փքվելով, վեր կացավ և, ժպտալով, դներալին մոտեցավ:

— Ձեյի՞ք բարեհաճի մի քիչ ճաշակել, ձերդ դերազանցություն, — ասավ նա:

— Բանը վատ ե, — ասավ դներալը, չպատասխանելով նրան, — մերոնք դանդաղում են:

— Չմեկնեմ արդյոք, ձերդ դերազանցություն, — ասավ Նեովիցկին:

— Այո, դնացեք, խնդրեմ, — ասավ դներալը, կրկնելով այն, ինչ մի անգամ արդեն մանրամասնորեն հրամայված եր, — և հուսարներին ասեք, վոր ամենից վերջը անցնեն ու կամուրջը վառեն, ինչպես հրամայել եմ, և թող կամուրջի վրա յեղած վառվող նյութերը մեկ եւ ստուգեն:

— Շատ լավ, — պատասխանեց Նեովիցկին:

Նա ձայն տվեց ձին պահող կադակին, հրամայեց վերցնել պարկն ու ջրամանը և իր ծանր մարմինը թեթևորեն քցեց թափի վրա:

— Իսկապես, դնալու յեմ կույսերի մոտ, — ասավ նա սպաներին, վոր ժպտերես նայում էյին իրեն, ու ձին քշեց սարն ի վար ձգվող արահետով:

— Ե, կապիտան, նշան բռնեցեք, — ասավ դներալը, դիմելով թնդանոթաձիգ սպային: — Փարատեցեք ձեր ձանձրութիւնը:

— Թնդանոթաձիգներ՝ թնդանոթների մոտ, — հրամայեց սպան: Յեւ մի բույսի մեջ թնդանոթաձիգները խարույկների մոտից ուրախ-ուրախ վազեցին և սկսեցին թնդանոթները լցնել:



— Առաջինը, — լսվեց հրամանը:

Առաջին համարը ժուռթյամբ յետ ցատկեց: Թնդանոթը վորտայ մետաղի խլացուցիչ ձայնով, և ուռմբը, շաշելով, թռավ սարի ստորոտում դանդող մեր դինվորների գլխի վրայից ու, թշնամուն չհասած, իր անկման տեղը ձխով հայտնի դարձնելով, պայթեց:

Զինվորների և սպաների դեմքերը զվարթացան այդ ձայնից. բոլորը վեր կացան և սկսեցին դիտել ներքևում, ինչպես ձեռի ափում, պարզ յերևացող մեր զորքերի շարժումը ցածում և — մոտեցող թշնամու շարժումը առջևում: Այդ նույն վայրկյանին արևը լուրջովին դուրս յեկավ ամպերի տակից, և այդ միայնակ կրակոցի դեղեկիկ ձայնն ու պայծառ արևի փայլը իրար ձուլվելով՝ ստեղծեցին մի առույգ ու զվարթ արամադրութուն:

## VII

Կամուրջի վրայից թռան-անցան թշնամու յերկու ուռմբը, և կամուրջի վրա ալժամ հրհրոց եր: Կամուրջի մեջտեղը, ձիուց իջած, կանգնել եր իշխան Նեովիցիին՝ իր հաստ մարմնով ճաղերին սեղմված: Նա ձիադադեմ յետ նայեց իր կազակին, վորը, յերկու ձիու սանձերը բռնած, կանգնել եր նրանից մի քանի քայլ հեռու: Հենց վոր իշխան Նեովիցիին ուղեց առաջ շարժվել, դինվորներն ու սայլերը նորից ճաղերին սեղմեցին նրան, ու նրան ել վռնինչ չեր մնում անել, յեթե վոչ մպտալ:

— Ի՜նչ ես անում, ախպեր ջան, — ասավ կազակը պաշարակիր սայլը վարող դինվորին, վոր քշում եր անիմների և ձիերի շուրջը խմրված հետևակների վրա, — Ի՜նչ ես անում: Չես կարող մի քիչ համբերել. տեսնում ես՝ դեներալն ուղում ե անցնել:

Բայց սայլը վարող դինվորն ուշադրութուն չդարձրեց դեներալի անվանն ու ձայն տվեց ճանապարհը կտրող դինվորներին. — Ե՛ր, հայրենակիցներ, ձախ քաշվեցեք, ճամփա տվեք: Բայց հայրենակիցներն իրար սեղմված, սվինները միմյանց դիպցնելով, անընդհատ, մի ընդհանուր զանգված կազմած շարժվում եյին կամրջով: Ծաղերից ցած նայելով՝ իշխան Նեովիցիին տեսավ Ենսի սրընթաց, շատաշուռ, մանրիկ ալիքները, վորոնք կամուրջի վտտների մոտ իրար դալով և ուռչելով, հալածում եյին մեկը մյուսին: Կամուրջին նայելով՝ նա տեսավ դինվորների նույնքան միորինակ կենդանի ալիքները, քութասներ, պայուսակներ, սվիններ, յերկար հրացաններ, բարձրադիր գլխարկների տակից նայող լայն այտասկրներով, փոս ընկած այտերով դեմքեր, վորոնց վրա կար անհոգ-հոգնածության մի արտահայտութուն և կամուրջի տախտակների վրա տրորված լպրծուն ցեխի միջից շարժվող վտռեր:



Յերբեմն զինվորների միորինակ ալիքների միջով, ինչպես Մեսի Երեմիայի մեջ ընկած մի ճերմակ փրփուր, անցնում եր մի սպա՝ իր թիկնոցով և զինվորներից տարբերվող կերպարանքով։ Երբեմն, ինչպես զետի հոսանքով տարվող մի տաշեղ, հետևակ զինվորների ալիքներով տարվում եր մի հետիոտն հուսար, սպասյակ կամ սոսկ բնակիչ։ Երբեմն՝ զետի յերեսին լողացող զերանի պես, ամեն կողմից շրջապատված՝ կամուրջով անցնում եր մի վաշտային կամ սպայական սայլ՝ լիքը բարձած ու կաշիներով ծածկած։

— Տես, ամբարշտակի պես քանդեց անցավ, — հուսահատորեն կանգ առնելով ասավ կազակը։ — Ձերոնցից զեռ շատ կան։

— Մի միլիոնից մի հատ պակաս, — աչքով արավ մատիկից անցնող պատոված շինելով մի ուրախ զինվոր ու անհետացավ։ Նրա յետևից անցավ մի ուրիշ ծեր զինվոր։

— Յերբ ցա (ցա — թշնամին) հիմի կամուրջի վրա կրակ թափի, — մոայլ ձայնով ասավ ծեր զինվորը իր ընկերոջը, — հա՛նաքդ կմոռանաս։

Յեվ զինվորն անցավ։ Նրա յետևից գնում եր սայլի վրա նստած մի զինվոր։

— Տո, գրողի տարած, վոտիս փաթաթաններն ճւր ևս զրել, — ասում եր սպասյակը (զենշիկը), սայլի յետևից վազելով ու նրա յետևի մասը խառնելով։

Դա յեւ անցավ իր սայլով։ Նրա յետևից յեկան ուրախ, բառ յերեսելթին, խմած զինվորներ։

— Կոր, ալպակը ջան, հրացանի կոթով ատամներին չտվեց... — ուրախ-ուրախ ասում եր շինելի փեշերը վեր քաշած մի զինվոր, ձեռները լայն շարժելով։

— Ա՛ռ քեզ քաղցը վիշինա (ապուխտ), — պատասխանեց մի ուրիշը ծիծաղելով։

Դրանք եւ անցան, այնպես վոր Նեպոլիցկին չիմացավ, թե ում ատամներին են խփել և ապուխտը ինչին եր վերաբերում։

— Նո՛ս սառը զենքը տեսան՝ վճնց են վռազում։ Կարծես բա՛լուրին պըտի կոտորի, — ասավ մի յենթասպա բարկացած, կշտամբանքով։

— Կողքիցս վոր անցավ, քեռի ջան, եղ ոռւմբը, — ասում եր ծիծաղը հաղիվ զսպելով մի մեծաբերան զինվոր, — տեղն ու տեղը լեզուս կալ ընկավ։ Աստված վկա, ենպես վախեցա, լեզիս ջուր դառավ, — ասում եր այդ զինվորը, կարծես պարծենալով, վոր ինքը վախեցել ե։

Դա յեւ անցավ, Նրան հետևեց մի սայլ, վոր նման չեր մինչ այդ անցածներին։ Դա զերմանական ֆորշպան եր (սայլ) մի զուլա

ձիով, վորին, թիում եր, մի ամբողջ տուն են բարձել. ֆորշպանի յետևից կապված — գնում եր սիրուն, խայտախար, մեծակուրծ մի կով: Վերամակների վրա նստել եր ձկները դրկած մի կին, մի պատուվ և կասկարմիր դեմքով, ատող զերմանացի աղջիկ: Յերևում եր տեղահանվող բնակիչներ եյին և կամուրջից անցնում եյին հասուկ թուլլալու թյամբ: Բոլոր գինվորները նայեցին կանանց և, մինչ սայլն անցնում եր՝ քայլ առ քայլ շարժվելով, գինվորների ամբողջ խոսակցությունը դառնում եր այդ յերկու կնոջ շուրջը միայն: Բոլոր դեմքերի վրա դրեթե կար այդ կանանց նկատմամբ յեղած անպարկեշտ մտքերի միևնույն ժպտը:

— Տես, յերշիկներն ել են փախչում:

— Բրոջ ձախի, — ասավ մի ուրիշ գինվոր, դիմելով զերմանացուն, վոր աչքերը գետնին, բարկացած ու վախեցած մեծ-մեծ քայլերով գնում եր սայլի հետ:

— Տես վճնց և զուքվել: Ո՛ւ, դրողի տարածներ:

— Նրա կողքին ըլեյի, Ֆյոդատով:

— Տեսել եմ, ախպեր ջան:

— Ո՛ւր եք գնում, — հարցրեց մի հետևակ սպա, վոր խնձոր ուտելով և նույնպես ժպտալով նայում եր սիրուն աղջկան:

Գերմանացին աչքերը փակեց, ցույց տալով, թե չի հասկանում:

— Յեթե ուզում ես՝ մո, — ասավ սպան, խնձորը աղջկանը մեկնելով:

Աղջիկը ժպտաց և խնձորը վերցրեց: Նեավիցկին, ինչպես և կամրջի վրա դառնվող բոլոր մարդիկ, աչքը չհեռացրեց կանանցից, մինչև վոր նրանք չանցան: Յերը նրանք գնացին, նորից յեկանանցան նույնպիսի գինվորներ՝ նույն խոսակցություններով և, վերջապես, բոլորը կանգ առան: Ինչպես այդ հաճախ և պատահում՝ կամուրջի ծայրին վաշտային սայլի ձիերը կանգնեցին — մնացին, և բոլորն ստիպված եյին սպասել:

— Ինչո՞ւ յեն կանգնել: Կարդ-կանոն չկա, — ասում եյին գինվորները: — Ո՛ւր ես քշում: Սատանի ծնունդ: Չեն ուզում սպասել: Ավելի վատ կըլնի, յեթե մա կամուրջը վառի: Տես, աֆիցերին ել սեղմեցին, — խոսում եյին ամեն կողմից կանգ առնող բազմաթյունները, իրար նայելով, ու հրում-սեղմում ելին միմյանց՝ կամուրջից անցնելու:

Նայելով կամրջի տակի ջրերին՝ Նեավիցկին հանկարծ իր համար բոլորովին նոր ձայն լսեց, վոր արագորեն մոտենում եր... մի ինչ-վոր խոշոր բան, վոր հանկարծ ջուրն ընկավ:

— Տես ո՞ւր են խփում, — խոսությամբ ասավ մոտիկ կանգնած մի գինվոր, ձայնի կողմը նայելով:

— Սիրտ ե տալի, վոր շուտ անցնենք, — ասավ մի ուրիշն անհանդիստ:

Ամբողջ նորից շարժվեց, նեավից կին հասկացավ, վոր դա ուսմբ եր:

— Ե՛յ, կազակ, ձին մոտեցրու, — ասավ նա: — Ե՛յ, դուք, մի կողմ քաշվեք, ճամպո տվեք:

Նա մեծ զժվարությամբ մոտեցավ ձիուն, և անդադար դռալով՝ առաջ անցավ: Ձին վորնեքը սեղմվում էյին՝ նրան ճանապարհ տալու, բայց նորից նրան փայտե սեղմեցին, վոր վտար տրորեցին. բայց մոտ դռնվողները մեղավոր չեյին, վորովհետև նրանց ավելի շատ էյին սեղմում:

— Նեավից կիւ, Նեավից կիւ, է՛յ, ուրիշ, — ձայն տվեց մեկն այդ միջոցին նրա յետևից:

Նեավից կին յետ նայեց և տասնուհինգ քայլի վրա՝ շարժվող հետևակի դանդաղ մեջ՝ տեսավ կարմրադեմ, սեւ չյա, մազմազոտ, գլխարկը ծոծրակին թեքած և մենտիկը ուսին քցած Վասկա Դենիսովին:

— Հզ՛ամայի այդ սատանանեղ՛ին՝ ճամպո տան, — դռչեց Դենիսովը. ըստ յերևույթին շատ բարկացած. նրա ածուխի պես սև աչքերը փայլում էյին բորբոքված սպիտակոցների մեջ. ողի մեջ շարժում եր պատյանից հանած թուրը, վոր բռնել եր յերեսի պես կարմրած փոքրիկ ձեռով:

— Ե՛, Վասյան, — ուրախ պատասխանեց Նեավից կին: — Դու ի՞նչ գործ ունես այստեղ:

— Հեծելավաշտը չի կաղ՝ ողանում անցնել, — դռչեց Վասկա Դենիսովը, կատաղությամբ ճերմակ ատամները բանալով և իր սիրուն, սև աղնվացեղ Բեդուխին խթանելով, վորը հանդիպող սվիններից ականջները թարթելով, փնջացնում եր՝ չորս կողմը փրճփուր շաղ տալով. սմբակները շրթկոցով խփում եր կամրջի տակալներին և, թվում եր, պատրաստ և ցատկել կամուրջի ճաղերից, յեթե միայն հեծվորը թույլ տա: — Սա ի՞նչ բան և. վոչխաղ՝ նեղ՛ի պես խաղ՛նվել են. ճիշտ և ճիշտ՝ վոչխաղ՛նեղ՛: Հեղ՛ժ... ճամպո... Ե՛յ, սայլդ կանդնացղ՛աւ, սատանի ծնժնդ: Թղ՛ովս կտող՛կտող՛ կանեմ, — դռաց նա, և իսկապես թուրը մերկացնելով՝ սկսեց շարժել:

Ձին վորնեքը վախեցած դեմքերով իրար կպան և Դենիսովը մոտեցավ Նեավից կուն:

— Ի՛նչ ե, հարբած չե՞ս, — ասավ Նեավից կին Դենիսովին:

— Խմելու ժամանակ ել չեն տալիս, — պատասխանեց Դենիսովը: — Ամբողջ ուր դուռը դես ու դեն են քաշ տալիս: Յեթե կովելու յենք — կովենք: Թե չե, սատանան գիտի, սա ի՞նչ բան ե:

— Ի՞նչպէս ել պճնովել ես, — ասով Նեովիցկին, նայելով նրա նոր մենտրիկին ու ձիու տապանկին:

Դենիսովը մպտաց, զինվորական մախադից թաշկինակը հանելով (վորք անուշ բուրմունք տարածեց շուրջը), մոտեցրեց Նեովիցկու քթին:

— Վճնց կլինի, կոխվ եմ գնում. սափրվեցի, ատամներս մաքրեցի և վրաս անուշահոտություն ցանցի:

Նեովիցկու պարթև կերպարանքը՝ իրեն ուղեկցող կազակով, և Դենիսովի վճռականությունը, վոր թուրը շարժում եր ու դոռում կատապի, — այնպիսի ազդեցություն արին, վոր նրանք կամուրջի այն կողմն անցան և հետևակ զորքը կանգնեցրին: Նեովիցկին կամուրջի ծայրին դտավ այն գնդապետին, վորին հայտնելու յեր բերած հրամանը և, հանձնարարությունը կատարելով, յետ դարձավ:

Ճանապարհը մաքրելով Դենիսովը կանգնեց կամուրջի բերանին: Անփութորեն դպչելով յուրայինների մօտ ձգտող և վտռները ղետնին դարկող նմուշգին՝ նա նայում եր ղեպ իրեն յեկող հեծելազորին: Կամրջի տախտակներն վրա հնչեցին սմբակների պարզ ձայները, կարծես արշավում էին մի քանի ձիեր, և հեծելազորը, սպաներն առնից, չորսական հոգուց շարքեր կազմած ձգվեցին՝ անցան կամրջի այն կողմը:

Կանգնեցրված հետևակ զինվորները կամրջի մօտ տրորված ցեխի վրա հավաքված՝ խորթության անբարյացակամ դպացումով ու ծաղրանքով (ինչպէս սովորաբար հանդիպում են զորքի տարբեր տեսակները) նայում էին մաքուր, պճնոված հուսարներին, վոր կանոնավոր շարքեր կազմած անցնում էին իրենց մօտով:

— Զուքված տղերք են: Մնում է, վոր զրոսանքի գնան:

— Դրանցից ի՞նչ ոգուտ: Յույց տալու համար են ման ածում, — ասով մի ուրիշը:

— Հետևակ, փռլի մի բարձրացնի, — կատակեց մի հուսար, վորի տակ ձին խազս լինելով ցեխի ցալքուններ նետեց մի հետեվակ զինվորի վրա:

— Յես քեզ մի առաջ գնեյի ու քշեյի, վոր հողիդ բերնովդ դուրս դար, — ասով հետևակը, դեմքի ցեխը թևքով սրբելով, — ձի նստողը հո մարդ չի, թաչուն է:

— Այ լավ կլինեք, Զիկին, քեզ մի ձի նստացնեյին, վճնց Կքշեյիք, — ծաղրեց թելանին (յեֆրեյտորը)՝ պայուսակի ծանրության տակ կքած նիհար զինվորին:

— Մահակը կսխի վտռներիդ արանքը, ահա քեզ ձի, — վրա բերեց մի հուսար:

## VIII

Մնացյալ հետևակը հապճեպ անցավ կամրջով, ձախարածե հու-  
տակվելով յեկեի մօտ։ Վերջապես սայլերը բոլորն անցան, ճնշումն  
ու հրհրոցը պակասեց և վերջին դամարտակը վտաք դրեց կամուրջի  
վրա։ Միայն Դենիսովի հեծելավաշտի հուսարներն էլին մնացել  
կամուրջի այն կողմը՝ թշնամու դիմաց։ Հակառակորդը, վոր յերե-  
վում էր հեռվում, դիմացի սարի վրա, ներքեից, կամուրջից դեռ  
չէր տեսնվում, վորովհետև այն ձորակից, վորով հոսում էր գետը,  
հորիզոնը վերջանում էր հանդիպակաց բարձունքներով հաղթի  
կես վերստ հեռավորությամբ։ Առջևը ամայի տարածություն էր,  
ուր տեղ-տեղ շարժվում էին կազակ հեծելազետների խմբերը։  
Հանկարծ ճանապարհի դիմացի բարձրության վրա յերևացին  
կապտադգեստ դորքեր և հրետանի։ Ֆրանսացիներն էլին։ Կազակ  
հեծելազետները ձիերը քշեցին դեպի սարի ստորոտը։ Բուր սպա-  
ները և Դենիսովի հեծելավաշտի զինվորները, թեև աշխատում  
էին խոսել կողմնակի նյութերի վրա ու նայել այս ու այն կողմ,  
բայց շարունակ մտածում էին միայն այն մասին, թե սարի վրա-  
յինը ինչ է արդյոք, ու անդադար նայում էին հորիզոնի վրա  
յերևացող բծերին, վորոնց ընդունում էին հակառակորդի դորքերի  
տեղ։ Կես օրից հետո յեզանակը նորից պարզվեց։ Պայծառ արևը  
խոնարհվեց դեպի Դանուբը և նրան շրջապատող մեծ լեռները։  
Մազակ էր, յերբեմն միայն դիմացի սարից լավում էին թշնամու  
կանչերը և փողերի ձայնը։ Հեծելավաշտի ու հակառակորդի միջև  
այլևս մարդ չկար, բացի հեծելազետների փոքրիկ խմբերից։ Նրանց  
իրարից բաժանողը յերեք հարյուր սաժենաչափ մի դատարկ տա-  
րածություն էր։ Թշնամին դադարեցրեց կրակը, վորից հետո ավելի  
պարզ զգացվեց այն դաժան, ահարկու, անմատչելի ու անշոշափելի  
դժժը, վոր յերկու հակառակորդ բանակները բաժանում էր իրարից։  
Երավական է մի քայլ անես այդ դժի այն կողմը, վորը հիշեցնում  
է կենդանի մարդկանց մեռելներից բաժանող դժժը,— և այնտեղ դու  
կդռնես անհայտ տանջանք ու մահ։ Յեկ ինչ կա այնտեղ, մի կա,  
այնտեղ՝ արևի ճառագայթներով լուսավորված դաշտի, ծառերի ու  
տանիքների այն կողմը։ Վոչ-վոք չգիտի, բայց ուզում էս իմա-  
նալ. և սարսափելի յե այդ դժին անցները, և միաժամանակ ուզում  
էս անցնել այն. և դիտես, վոր վաղ թե ուշ ստիպված էս լինե-  
լու, անցնել ու իմանալ ինչ կա այնտեղ, այդ դժի այն կողմը,  
ինչպես և անհրաժեշտ է իմանալ, թե ինչ կա այնտեղ, մահից  
անդին։ Բայց ինքը ուժեղ էս, առողջ, զվարթ ու զրդոված և շր-  
ջապատված էս նույնպիսի առողջ ու զրդոված-աշխույժ մարդ-

կանցսիւ: Յեթն աշապես չի յել մտածում, գոնե աշապես և զգում թշնամու: Ղեմ դանդաղ յուրաքանչյուր մարդ, և այդ զգացումը առանձին մի փայլ ու խորութիւն և տալիս այդ վայրկյանին նրա շուրջը կատարովոյ յուրաքանչյուր անցուղարձի տպավորութիւններին:

Թշնամու զիրքի վրա կրակոցի ծուխ յերևաց, և ումարք, շաշելով, յեկավանցավ հուսարական հեծելավաշտի գլխի վրայից: Իրար մոտ խմբված սպաները՝ շտապեցին իրենց տեղերը: Հուսարները սկսեցին շարքերը հափստարեցնել: Հեծելավաշտում ամեն ինչ լսեց: Բոլորը նայում էին առաջ՝ թշնամուն և վաշտի հրամանատարին, սպասելով նրա հրամանին: Յեկանանցան յերկրորդ, յերրորդ ումարերը: Յերևում եր' կրակում են հուսարների վրա: Բայց ումարերը համաշափ ուրախ շաշաւնով թռչում էին հուսարների գլխի վրայից և գնում զիպչում նրանց յետևում ինչ վոր մի տեղ: Հուսարները յետ չեցին նայում, բայց թռչող ումարի յուրաքանչյուր ձայնից, կարծես հատուկ հրամանով, ամբողջ հեծելավաշտը՝ իր միասնակ-բաղմատեակ ղեմքերով, շունչը պահած, քանի զեռ թռչում եր ումարը, բարձրանում եր ասպանդակների վրա և նորից իջնում: Զինվորները, առանց գլուխները ծռելու, կողքանց նայում էին իրար, միմյանց ղեմքի արտահայտութիւնը տեսնելու: Դենիսովից սկսած մինչև փողահարը՝ յուրաքանչյուր ղեմքի վրա՝ շուրթերի և կզակի շուրջը յերևում եր ներքին պայքարի, լարվածութեան և հուզմունքի մի ընդհանուր գիծ: Վերական (վախմտաբը), զինվորներին նայելով, հոնքերը կիտում եր, կարծես սպառնում եր պատժել: Յունկեր Միրոնովը յուրաքանչյուր ումարի թոխքից կռանում եր: Ռոստովը իր Գրաշիկը հեծած կանգնած եր ձախ թևում, և մեծ հասարակութեան առաջ քննութիւն տալու կանչված յերջանիկ աշակերտի տեսք ունեւ, աշակերտ, վորը համոզված է, թե գերազանց և հանդիսանալու: Նա պարզ, պայծառ հայացքով նայում եր բոլորին, կարծես խնդրելով, վոր ուշադրութիւն դարձնեն, թե ինչպես և ինքը հանդիստ կանգնել ումարերի տակ: Բայց նրա ղեմքին ել, հակառակ իր կամքի, բերանի շուրջը յերևում եր նույն նոր ու խիստ դիժը: — Ո՛վ և այնտեղ գլուխ խոնաղ՝ հում: Յունկեղ՝ Միդ՝ոնով: Լավ չէ, նայեցէք ինձ, — գոչեց Դենիսովը, վոր մի տեղ կանգնել չեր կարողանում և ձիու վրա գնում-գալիս եր հեծելավաշտի առաջ:

Վասիկ Դենիսովի վեր ցցված քթով սեամազ ղեմքը և նրա ամբողջ փոքր կերպարանքը՝ իր ջղուտ (կարճ մազմազոտ մատներով) ձեռով, վորով բռնել եր մերկացրած թուրը, նույնն եր,



ինչպես միշտ, մանավանդ յերեկոյան դեմ յերկու շիշ կոնծեկուց հետո. միայն սովորականից ավելի կարմրած եր. նա ջուր խմող թռչունի պես՝ մազառատ գլուխը վեր առնկած, փոքրիկ վռտների լթանները անխնա սեղմում եր իր աղնիվ Բեզուլինի կողերին ու կարծես յետևի վրա ընկնելով, քշեց-գնաց վաշտի մյուս թևը և խոպոտ ձայնով պոռաց, վոր ատրճանակներն սառեղեն: Ազա մոտեցավ Կիրստենին: Փոխ-կապիտանը՝ իր հասուլիկ մադյանին նստած՝ հանդարտաքայլ յեկավ դեպի Դենիսովը: Փոխ-կապիտանը, իր յերկար բեզերով, ինչպես միշտ, լուրջ եր. միայն աչքերն եյին փայլում սովորականից ավելի:

— Հը՞, — ասավ նա Դենիսովին, — բանը կովի չի հասնելու: Կտեսնես, յետ ենք գնալու:

— Սատանան գիտի, ինչ են անում, — փնթփնթաց Դենիսովը: — Ա՛, Ղոստով, — ձայն տվեց նա յունկերին, նկատելով նրա դվարթ դեմքը: — Հը, վեղ՛ջապես սկսվեց:

Յեվ նա ժպտաց խրախուսական ժպտով, ըստ յերեույթին ուրախանալով յունկերի վրա: Ռոստովն իրեն լուրջովին յերջանիկ դգաց: Այդ միջոցին կամուրջի վրա յերևաց հրամանատարը: Դենիսովը ձին քշեց դեպի նա:

— Ձեզ՛դ դեզ՛ազանցություն, թույլ տվեք հազ՛ձակվել. յես նզ՛անց կքշեմ:

— Ի՛նչ հարձակում, — ասավ հրամանատարը տաղտուկ ձայնով ու դեմքը խոժոռելով, կարծես աներես ճանճերից: — Ինչ՞ձ յեք այստեղ կանգնել: Տեսում եք՝ ձիավոր կողմնախույզները նահանջում են: Վաշտը յետ տարեք:

Հեծելավաշտը կամուրջն անցավ և դուրս յեկավ կրակի տակից, չկորցնելով և վոչ մի մարդ: Նրա յետևից անցավ և յերկրորդ հեծելավաշտը, վոր գտնվում եր շղթայի մեջ, և ազա վերջին կադակները:

Պավլոգորդցիների յերկու հեծելավաշտը, կամուրջն անցնելով, մեկը մյուսի յետևից սարը բարձրացան: Գնդի հրամանատար Կարլ Բոգդանովիչ Շուբերտը մոտեցավ Դենիսովի վաշտին, և այժմ հանդարտ գնում եր Ռոստովի կողքից, բայց վոչ մի ուշադրություն չդարձնելով նրա վրա, չնայած վոր, Տեյաանինի պատճառով տեղի ունեցած ընդհարումից հետո, նրանք այժմ առաջին անգամն եյին տեսնվում: Ռոստովը (այստեղ՝ ճակատում իրեն զգալով այդ մարդու իշխանության ներքո, մի մարդ, վորի առջև իրեն այժմ մեղավոր եր համարում) աչքը չեր հեռացնում գնդի հրամանատարի ըմբիշային թիկունքից, խաբոյաշ ծոծրակից և կարմիր վզից: Ռոստովին մերթ թվում եր, թե Բոգդանիչն անու-



շաղիր և ձեանում միայն, և թե նրա ամբողջ նպատակն այն և այժմ, վորպեսզի վորձի յունկերի քաջությունը, ուստի և շրտվում էր ու նայում զվարթորեն. մերթ թվում էր թե Բողոանիչը, զիտամար և իր կողքից քայլում, վորպեսզի իր քաջությունը ցույց տա իրեն Ռոստովին: Յերբեմն ել մտքովն անցնում էր, թե իր թշնամին զիտամար վաշտը կուղարկի կատաղի հարձակման, վորպեսզի պատժի իրեն՝ Ռոստովին: Կամ յերևակայում էր, թե կովից հետո նա կմտանա իրեն՝ վերավորվածին և մեծահոգարար հաշտության ձեռք կմեկնի:

Պավլոգրազդիններին ծանոթ վեր բարձրացրած ուսերով Ժերկովը (նա նորերս էր դուրս յեկել նրանց գնդից) մոտեցավ գնդի հրամանատարին: Ժերկովը, շտաբից քշվելուց հետո, գնդում չմնաց, ասելով թե՛ հիմար չի, վոր ճակատում նեղություններ քաշի, յերբ շտաբում, վոչինչ չանելով, ավելի պարզենեւ կստանա. և կարողացել էր արդեն պատվիրակի (որդինարեց) պաշտոն ստանալ իշխան Բազրատիոնի մոտ: Այժմ վերջապահ գնդի հրամանատարից հրաման էր բերել իր նախկին պետին:

— Դնդապետ, — ասավ նա մոռյալ լրջությամբ, զիմելով Ռոստովի թշնամուն ու նայելով ընկերներին, — հրամայված է կանգ առնել և կամուրջն այրել:

— Ո՞վ է հրամայել, — հարցրեց գնդապետը խոժոռ:

— Յեա ել չդիտեմ, գնդապետ, ով է հրամայել, — պատասխանեց Ժերկովը լրջությամբ, — միայն իշխանը ինձ կարգադրեց. քննա և գնդապետին ասա, վոր հուսարները շուտ վերադառնան և կամուրջն այրեն:

Ժերկովի յետևից նույն հրամանով հուսարական գնդապետի մոտ յեկավ չքախմբի սպաներից մեկը: Շքախմբի սպայից հետո՝ կազակի ձի հեծած, վորը հաղիվ էր տանում նրան, յեկավ գերուկ նեովիցկին:

— Ձե վոր, գնդապետ, — գոչեց նա դեռ հեովից, — յես ձեզ ասի, վոր կամուրջն այրեք. մեկը յերևի ձեզ սխալանքի մեջ է քցել. այնտեղ մարդիկ խենթանում են, վոչինչ չի կարելի ջոկել: Դնդապետը առանց շտապելու կանգնեցրեց գունդը և դարձավ նեովիցկուն:

— Դուք ինձ վառվող նյութերի մասին ասիք, — ասավ նա, — իսկ կամուրջն այրելու մասին վոչինչ չտուր:

— Ինչպես չե, յեղբայր, — ասավ նեովիցկին կանգ առնելով և, գլխարկը վերցնելով, փափլիկ մատներով սղալեց քրտինքից թացացած մազերը, — ինչպես չեմ ասել, թե կամուրջը պիտի այրել, յժրբ դուրավառ նյութեր են դրված:

— Յես ձեզ համար «յեղրայր» չեմ, պարոն բարձրակա սպա (շտաբ-օֆիցեր), իսկ դուք ինձ չեք ասել, վոր կամուրջն այրեմ: Յես ծառայությունս դիտեմ և սովորությունս ունեմ հրամանը ճշտությամբ կատարել: Դուք ասիք՝ կամուրջը կայրեն. իսկ թե ով կայրի, յես սուրբ հոգով չեմ կարող իմանալ...

— Ե, միշտ այդպես եք, — ձեռք թափ տալով՝ ասավ Նեովից-կին: — Դու ինչ դորձ ունես այստեղ, — դարձավ նա Ժերկովին:

— Նույն գործով: Բայց դու քրտնել ես, թող սրբեմ:

— Դուք, պարոն բարձրակա սպա, ասիք վոր, — շարունակեց զնդապետը նեղացած...

— Գնդապետ, — ընդհատեց շքախմբի սպան, — պետք է շտապել, թե չե թշնամին թնդանոթները կմտտեցնի՝ կարտեշ կթափի: Գնդապետն անխուս նայեց շքախմբի սպային, հաստիկ Նեովից-կուն, Ժերկովին ու մոռալվեց:

— Յես կամուրջը կայրեմ, — ասավ նա հանդիսավոր յեղանակով, վոր կարծես ուղուժ եր ասել, թե չնայած իրեն պատճառած բոլոր անախարժությաններին, ինքն այնուամենայնիվ կանի այն, ինչ պարտավոր ե:

Իր յերկար մկանուտ վտաները խփելով ձիուն, կարծես ամեն բանում նա յեր մեղավոր, զնդապետն առաջ անցավ և Ձ-րդ հեծելավաշտին (հենց այն վաշտին, ուր ծառայում եր Ռոստովը՝ Դենիսովի հրամանատարության տակ) հրամայեց վերադառնալ յետ՝ զեպի կամուրջը:

«Ե, այդպես ել կա, չեյի սխալվում, — մտածեց Ռոստովը, — նա ուղուժ ե ինձ փորձել: — Նրա սիրտը կծկվեց և արյունը խփեց յերեսը: — Թող փորձի, տեսնենք վախկոտ եմ, — մտածեց նա:

Նորից վաշտի զինվորների ուրախ-զվարթ դեմքերին յերևաց այն լուրջ արտահայտությունը, վոր նկատվում եր այն ժամանակ, յերբ նրանք կանգնել եյին ումարերի տակ: Ռոստովն աչքը չեւ հեռացնում իր թշնամուց՝ զնդի հրամանատարից, ցանկանալով իր յենթադրությունը հաստատող մի նշան տեսնել նրա դեմքին. բայց զնդապետը վոչ մի անգամ չնայեց Ռոստովին. նա իր առջևն եր նայում ի խոտ ու հանդիսավոր: Հրամանը լսվեց:

— Ծնւտ: Ծնւտ, — կրկնեցին մի քանի ձայներ:

Սրերը ձիերի սանձերին դիպնելով, խթաններով ազմկնելով հուսարներն իջան ձիերից՝ իրենք ել չիմանալով, թե ինչ պիտի անեն: Նրանք խաչակնքեցին յերեսները: Ռոստովն ել զնդի հրամանատարին չնայեց, — ժամանակ չկար: Նա վախենում եր, սաստիկ վախենում եր, թե հանկարծ հուսարներից յետ չմնա: Նրա ձեռք դողաց, յերբ ձին հանձնեց ձիապահին, և զգաց, վոր արյունն

արագորեն հոսեց ղեպի սիրտը: Դենիսովը՝ յետ թեքված մի ինչ-  
վոր բան դռնալով՝ անցավ նրա կողքով: Ռոստոֆին, իր շուրջը վա-  
ղող հուսարներից բացի, ել բան չեր տեսնում:

— Պատգարածկ, — կանչեց մի ձայն յետևից:

Ռոստոֆը շատածեց, թե ինչ և նշանակում պատգարակ պա-  
հանջելը. նա վազում եր, աշխատելով բոլորից առաջ անցնել.  
բայց հենց կամրջի մոտ, վոտի տակ չնայելով, սայթաքեց լպրծուն  
ցեխի վրա ու յերեսն ի վայր ընկավ գետին: Մյուսները նրանից  
առաջ անցան:

— Յերկու կողմի վրա ել, ոտամխտը, — լսվեց ղնդի հրամա-  
նատարի ձայնը. վոր առաջ անցնելով՝ հանդիսավոր և ուրախ դեմ-  
քով ձիով կանգնել եր կամրջի մոտ:

Ռոստոֆը, ցեխոտած ձեռները վարտիկին քսելով, նայեց իր  
թշնամուն և ուղեց առաջ վազել, կարծելով թե վորքան առաջ  
անցնի, այնքան լավ կլինի: Բայց Բողդանիչը, թեև չնայեց ու  
չճանաչեց Ռոստոֆին, պոռաց նրա վրա.

— Այդ ձի և կամրջի մեջտեղով վազում: Դեպի անջ: Յուշկեր,  
յետ դարձիք, — բարկացած բղավեց նա և դարձավ Դենիսովին, վոր  
իր քաջությունը ցույց տալու համար, ձին քշեց կամուրջի տախ-  
տակների վրա:

— Իրակելու տեղը չի, ոտամխտը: Լավ կանեք իջնեք, — ասավ  
գնդապետը:

— Ե՛, գնդակը մեղավորին կգտնի, — պատասխանեց Վասկա  
Դենիսովը, թամբի վրա շուռ գալով:

Մինչդեռ Նեովիցկին, Ժերկովը և շքախմբի սպան, կրակոցների  
շրջանից դուրս, միասին կանգնած՝ նայում էին մերթ հուսար-  
ների այդ խեղճ խմբին, վոր իրենց ղեղին բարձրագույն գլխակ-  
ներով, մութ-կանաչ բաճկոններով և կապույտ վարտիկներով  
խանվել էին կամուրջի մոտ, մերթ նայում էին այն կողմը՝ հեռ-  
վից մոտեցող կապույտ կապտառներին և ձիավորների խմբերին,  
վորոնց հեշտությամբ կարելի չեր ընդունել թնդանոթների տեղ:

Գամուռը կարճ ևն վառել թե՛ վոչ: Ո՞վ կարող և կանխել  
Մերոնք կարճ ևն հասնել ու կամուրջը վառել, թե՛ ֆրանսացիք  
առաջ կգան ու կարտեշով կկոտորեն մերոնց: Ակամա, սրտդա-  
ղով այս հարցերն էին տալիս իրենց կամուրջից վեր գտնվող  
բազմաթիվ ղինվորներից յաւրաքանչյուրն ու յերեկոյի պայծառ  
լույսով նայում էին կամուրջին, հուսարներին և այն կողմը՝ սվին-  
ներով ու թնդանոթներով առաջացող կապույտ կապտառ հագած  
թշնամուն:

— Վե՛ր, Հուսարները բանը վաճառեց և լինելու, — ասավ Նեովիցի-կին, — հիմա արդեն հրանոթի կկապեն՝ կարտեչ կթափեն:

— Նա իզուր այդքան շատ մարդ տարավ, — ասավ չքախմբի սպան:

— Իսկապես, — ասավ Նեովիցիկին: — Յերկու քաջ ազա ուղարկե՛ր, մինեռւոյն է, դորձը գլուխ կրերեյին:

— Ո՛հ, ձերդ պայծառութիայլություն, — միջամտեց ժերկովը, աչքը չհեռացնելով հուսարներից, բայց դարձյալ իրեն հատուկ միամիտ ձևով, վորից դժվար էր հասկանալ՝ լժժը և ասում, թե հա՛նաք է անում: — Ո՛հ, ձերդ պայծառութիայլություն, ի՜նչ էք ասում: յեթե յերկու հոգի ուղարկե՛ր, հապա մեզ թվ' Վլադիմիրի շքանշան կտար: Իսկ այսպես, թեև կթափեն, բայց կարելի չէ մի վաշտ ներկայացնել և ժապովենն ստանալ: Մեր Բոգդանիչը կարգն իմանում է:

— Եհէ, — ասավ չքախմբի սպան, — սա արդեն կարտեչ է:

Նա ցույց տվեց ֆրանսական հրանոթները, վորոնք քաշակ-նեքը թողնելով՝ հեռացան:

Ֆրանսական զորքերում, այնտեղ, ուր հրանոթներն էյին, զրեթե միաժամանակ, յերեք ծուխ յերևաց, և այն բողբոյին, յերբ լսվեց առաջին կրակոցի ձայնը, յերևաց չորրորդ ծուխը: Յերկու կրակոց իրար յետևից, ապա յերրորդը:

— Ո՜հ, — անքայ Նեովիցիկին, կարծես այրող մի ցավից, բռնե-լով չքախմբի սպայի ձեռը: — Նայեցեք, մեկն ընկավ, ընկավ, ընկավ:

— Յերկուսը, կարծես:

— Յեթե թագավոր լինեյի, յերեք չեյի պատերազմի, — ասավ Նեովիցիկին՝ յերեսը շուռ տալով:

Ֆրանսացիք հապճեպ հրանոթները լցրին նորից: Կապտա-զգեստ հետևակները վազելով շարժվեցին դեպի կամուրջը: Նորից իրարից տարբեր ժամանակ, ծխեր յերևացին, և կարտեչը տրաք-տրաքեց ու շեպեց կամուրջին: Բայց այս անգամ Նեովիցիկին չկա-րողացավ տեսնել, թե ի՜նչ է կատարվում կամուրջի վրա: Կամուրջից թանձր ծուխ բարձրացավ: Հուսարները հաջողել էյին կամուրջը վառել, և ֆրանսական մարտիկոցները նրանց վրա կրակում էյին արդեն վոչ թե նրա համար, վոր խանդարեն, այլ նրա համար, վոր հրանոթներն արդեն ուղղված էյին թշնամու վրա և կարելի չէր կրակել:

Ֆրանսացիք կարողացան յերեք անգամ կարտեչ արձակել, նախ-քան հուսարները վերադարձան ձիապանների մոտ: Յերկու համա-զարկը վրիպեցին, և կարտեչն անցավ-գնաց, բայց վերջին դարկը դիպավ հուսարների խմբի մեջտեղը և յերեքին գետին տապալեց:

Ռոստովը, մտահոգված իր ու Բաղդանիշի փոխ-հարաբերության մասին, կանգնել էր կամուրջի վրա՝ չիմանալով ինչ անել։ Մարդ չկար, վոր կատարի (ինչպես նա յեր պատկերացնում էր)։ Կամուրջն այրողներին ողնել նույնպես չէր կարող, վորովհետեւ, մյուս զինվորների նման, հետը վերադառնալու չէր վերցրել։ Նա կանգնել-նայում էր, յերբ հանկարծ, թափվող ընկուղների նման, արագ-արագ լավից կամուրջի վրա, և հուսարներից մեկը, վոր ավելի մոտ էր կանգնած նրան, հառաչանքով ընկավ կամուրջի ճաղի վրա։ Ռոստովը՝ ուրիշների հետ միասին, նրա մոտ վազեց։ Նորից մեկը ձայն տվեց. «Պատգարմկա։ Ձորս հողի բռնեցին ընկած հուսարին և սկսեցին բարձրացնել։

— Ոճճ, թողեք, ի սեր Դրիստսի, — պոռաց վերավորը. բայց և այնպես նրան բարձրացրին ու պատգարակի վրա դրին։

Նիկոլայ Ռոստովը յերեսը շրջեց ու, կարծես ինչ-վոր բան վարոնելով, սկսեց նայել դեպի հեռուն, Դանուբի ջրերին, յերկիքին ու արևին։ Ինչպես դեղեցիկ էր թվում յերկինքը, վորքան կապույտ, անդորր ու խորունկ։ Վորքան պայծառ ու վեհ էր մայր մտնող արևը։ Ինչ դուրեկան փայլով ելին շողաղուստ հեռու Դանուբի ջրերը։ Եւ ավելի լավ ու զբավիչ ելին հեռավոր, Դանուբի այն կողմը կապույտին տվող լեռները, վանքը, խորհրդավոր կիրճերը, մինչև կատարները մշուշով լցված շամի անտառները... այնտեղ խաղաղ և ու յերջանիկ... «Վաչինչ, վաչինչ չեյի ցանկանա, վաչինչ չեյի ուղի, միայն թե այնտեղ լինեյի, — մտածում էր Ռոստովը։ — Մենակ եմ և այս արևի մեջ այնքան յերջանկություն կա, իսկ այստեղ... հառաչանք, տանջանք ու սարսափ, և այս անբուշուքյունը, այս շտապողականությունը... Ահա նորից դռնում են ինչ-վոր և բոլորը կրկին յետ են վազում, ու յես նրանց հետ. ահա և նա, ահա և նա — մահը, սովառնում է իմ գլխի վերև ու իմ շուրջը։ Մի ակնթարթ — և յես այլևս յերբեք չեմ տեսնի այս արևը, այս ջրերը, այս կիրճը։

Այդ բողբոջի արեւը ծածկվեց ամպերով։ Ռոստովի առջև յերեսացին ուրիշ պատգարակներ։ Յեւ մահվան ու պատգարակների յերկյուղը և թե արևի ու կյանքի սերը — բոլորը ձուլվեցին մի հիվանդադի-տաղանապալի տպավորության մեջ։

«Տե՛ր աստված։ Նա, ով այս յերկնքումն է, փրկի՛ր, ների՛ր և պաշտպանի՛ր ինձ, շնչաց Ռոստովն ինքն իրեն։

Հուսարները հասան ձիապաններին, ձայները հնչեցին ավելի բարձր ու հանդիսա, պատգարակներն աներևութացան։

— Հը, աղպեղ՝ս, վաղ՝ողի հետն աղ՝ար, — հնչեց նրա ականջին։ Վասկա Դենիսովի ձայնը։

«Ամեն ինչ վերջացավ. բայց յես վախկոտ եմ, այո, վախկոտ եմ», մտածեց Ռոստովը և, մի ծանր հոգոց քաշելով, ձիապահի ձեռից առավ իր Գրաշիկի սանձն ու սկսեց հեծնել:

— Ի՞նչ եր այդ, կարտե՛ն, — հարցրեց նա Դենիսովին:

— Այո, այն ել ինչպիսի՛ք, — բացականշեց Դենիսովը: — Քաջի պես զործ տեսանք: Բայց զգվելի աշխատանք և: Հաղ՝ ձապումը — հիա՛նալի բան և, կոտորի՛ր աջ ու ձախ, իսկ այստեղ, զգ՝ ողբ տանի, այնպես են խփում կարծես նշան են առնում:

Յեղ Դենիսովը դնաց-միացավ Ռոստովից քիչ հեռու. կանգնած զնդի հրամանատարին, նեավիցկուն, Ժերկովին և չքախմբի սպա-յին:

«Բայց, կարծեմ, վոչ-վոք չնկատեց», մտածեց Ռոստովը ինքն իրեն: Յեղ իրոք, վոչ-վոք վոչինչ չեր նկատել, վորովհետև յուր բաքանչյուրին ծանոթ էր այն, ինչ առաջին անգամ զբաց վառողի հոտ չառած յունկերը:

— Այ հիմա վոր կղեկուցվի, — ասավ Ժերկովը, — հանկարծ տեսար ինձ ել փոխ-տեղակալի աստիճան տվին:

— Հայտնեցեք իշխանին, վոր յես կամուրջը վառեցի, — ասավ զնդապետը հանդիսավոր ու զվարթ:

— Իսկ յեթե հարցնի թե՛ն կորուստ եք ունեցել:

— Աննշան բան, — պատասխանեց զնդապետը բամբ ձայնով, — վիրավորված են յերկու հուսար, և մեկը սպանված և տեղն ու տեղը, — ասավ նա նկատելի ուրախությամբ, չկարողանալով զսպել իր յերջանիկ մպիտը, շեշտելով առանձնապես «տեղն ու տեղը» բառը:

## IX

Բռնապարտի հրամանատարության տակ դառնվող ֆրանսական հարյուր հազարանոց բանակից հետապնդվելով, թշնամաբար տրամադրված բնակիչների վերաբերմունքին հանդիպելով, չվստահելով այլևս իր դաշնակիցներին, պարենի պակասությունը զգալով և հարկադրված լինելով կռվել պատերազմական նախատեսված պայմաններում, — ուսական յերեսունուհինգ հազարանոց բանակը՝ Կուտուզովի առաջնորդությամբ, հապճեց նահանջում եր Դանուբի վար, կանգ առնելով այն տեղերում, ուր թշնամին հասնում էր յետևից, և վերջապահ մասերի կռվով պաշտպանվում եր այնքան, վորքան զա հարկավոր եր՝ նահանջել — առանց զինք ու մթերք կորցնելու: Ընդհարումներ յեղան Լամբախի, Ամշտեռենի և Մեկլի մոտ. բայց չնայած ուսաների քաջության ու անվհերքության, մի բան, վոր թշնամին անգամ խոստովանում եր, այնուամենայնիվ այդ



ընդհարու մեքերի հետևանքը լինում էր ուսանողի ավելի ևս արագ նահանջը Ավստրիական զորքերը, վոր Ուլմի մոտ հաղթի ազատվել էյին դերի ընկնելուց և Բրաունաուի մոտ միացել էյին Կուսուղովին, այժմ բաժանվեցին նրանից, և Կուսուղովին մնաց միայն իր թույլ, հյուծված զորքը: Այլևս Վեննան պաշտպանելու մասին մտածելն իսկ ավելորդ էր: Ռազմադիտական որենքների համաձայն խորապես մտածված հարձակողական պատերազմի փոխարեն (վորի ծրագիրը ավստրիական հոֆերիգուստը հանձնել էր Կուսուղովին՝ Վեննայում յեղած ժամանակ), այժմ Կուսուղովին միակ, զրեթե անհասանելի նպատակն այն էր, վոր, առանց բանակը կորցնելու (ինչպես Մակն արավ Ուլմի մոտ), միանա Ռուսաստանից յեկող զորքերին:

Հոկտեմբերի 28-ին Կուսուղովը բանակի հետ միասին անցավ Դանուբի ձախ ափը, և առաջին անգամ կանգ առավ, Դանուբը դարձնելով անջրպետ իր և Ֆրանսական զլխավոր ուժերի միջև: ՅՈւ-ին նա հարձակվեց ձախ ափին գտնվող Մորաեյի դիվիզիայի վրա ու ջարդեց: Այդ կովում ուսաներն առաջին անգամ վերցրին հաղթանիշներ (արոթեյ) — զրոշակներ, թնդանոթներ ու դերի առան նաև յերկու դնիերալ: Յերկու շարաթ տեղող նահանջից հետո ուսաներն առաջին անգամ կանգ առան և կովից հետո պատերազմի դաշտը վաշ միայն իրենց ձեռքում պահեցին, այլև Ֆրանսացիներին քշեցին: Զնայած զորքը մերկ էր, հյուծված, չնայած մի յերբորդ մասը սպանվել, վիրավորվել ու հիվանդացել էր. չնայած Դանուբի մյուս ափին մնացել էյին հիվանդներ ու վիրավորներ, վորոնց Կուսուղովը իր նամակով հանձնել էր թշնամու մարդափրության. չնայած Կրեմսի հիվանդանոցներն ու տները լիքն էյին և բուր հիվանդներին ու վիրավորներին տեղ չկար, — չնայած այս բոլորին, Կրեմսի մոտ կանգ առնելը և Մորաեյի վրա տարած հաղթանակը զգալի չափով բարձրացրին զորքի վոգին: Ամբողջ բանակում և զլխավոր շտաբում ուրախ, թեև վոշ ճիշտ, լուրեր էյին շրջում, իրը թե Ռուսաստանից զորքեր են գալիս, իրը թե ավստրիացիք հաղթանակ են տարել և Բոնապարտը վախեցած նահանջում է:

Իշխան Անդրեյը ճակատամարտի ժամանակ գտնվում էր այդ կովում սպանված ավստրիացի դեներալ Շմիտի մոտ: Նրա տակի ձին վիրավորվել էր, իսկ ձեռը թեթե քերծվել էր զնդակից: Ի նշան զլխավոր հրամանատարի առանձին վոգորմածության՝ նա այս հաղթանակի տեղեկադրով ուղարկվեց ավստրիական արքունիքը, վոր այժմ գտնվում էր վոշ թե Վեննայում, վորին սպառնում էյին Ֆրանսական զորքերը, այլ Բրյուննում: Ծակատամարտի դի-



շերը նա հուզված, բայց վոչ հոգնած (չնայած իր տկար կազմվածքին՝ իշխան Անդրեյը ամենաուժեղ մարդուց ավելի լավ դիմացալ ֆիզիկական հոգնածության) ձիով յեկալ Կրեմս՝ Կուսուղովի մոտ Դոխոտուրովի զեկուցագիրը նրան հանձնելու և նույն զիշերն իսկ իշխան Անդրեյը, իբրև սուրհանդակ, ուղարկվեց Ռբյուենն։ Սուրհանդակ ուղարկվելը, պարզեատրությունից բացի, նշանակում էր մի կարևոր քայլ պաշտոնի բարձրացման ուղղությամբ։

Մուծ, աստղալից զիշեր էր. ճանապարհը սևին էր տալիս ճերմակ ձյունների միջև, վոր տեղացել էր կովի յերեկոյան։ Մերթ անցած ճակատամարտի տապալորությունները վերհիշելով, մերթ ուրախորեն պատկերացնելով այն տապալորությունը, վոր նա թողնելու յև հաղթանակի լուրը հաղորդելով, և՛ հիշելով թե ինչպես ճանապարհ զրին իրեն զխավոր հրամանատարն ու ընկերները, — իշխան Անդրեյը արշավում էր պոստային սայլակ նստած. նա յերկար ժամանակ յերջանկության սպասող և, վերջապես, այդ ցանկալի յերջանկության դուռը հասած մարդու զզացումն ունեւր։ Աչքերը փակում էր թե չէ՝ ականջներում հնչում էր հրացանների ու հրանոթների վորոտը, վոր խոռնվում էր անիմների ձայնին ու հաղթանակի տապալորության։ Մերթ նրան պատկերանում էր, թե ուսները փախչում են, թե ինքն սպանված է. բայց սթափվում էր իսկույն՝ յերջանիկ զզացումով, կարծես նոր էր միայն իմանում, վոր այդպիսի բան չկա, և վոր, ընդհակառակը, փախչողը Ֆրանսացիք էին։ Նորից հիշում էր հաղթության մանրամասնությունները, իր սառնասիրտ արիությունը ճակատամարտի ժամանակ և, հանդատանալով, ննջում... Մուծ աստղալից զիշերից հետո՝ բացվեց մի պայծառ, ուրախ առավոտ։ Ձյունը հալվում էր արևի տակ, ձիերը սլանում էին արագ և աջից ու ձախից իրար հաջորդում էին նորանոր բաղձատեսակ անառներ, զաշտեր ու գլուղեր։

Մի կայարանում նա հանդիպեց ուսւ վիրավորներ տանող սայլերի։ Տրանսպորտի զեկավար ուսւ սպան, առաջին սայլին փրկված-նստած՝ բղավում էր ինչ-վոր ու կողմը խոտքերով հայհոյում մի զինվորի։ Գերմանական յուրաքանչյուր յերկարուկ Ֆորշպանի (սայլ) վրա, քարքարոտ ճանապարհին, ծուլ-ծուլ էին լինում վեց կամ ավելի դւնատ, վիրակապված ու կեղտոտ հիվանդներ։ Նրանցից վոմանք խոսում էին (իշխան Անդրեյը լսեց ուսերեն խոսակցություն), մյուսները հաց էին ուտում, իսկ ամենածանր վիրավորներն անխոս, հեղ ու հիվանդագիրն մանկական հետաքրքրությամբ, նայում էին իրենց մոտով սլացող սուրհանդակին։

Իշխան Անդրեյը հրամայեց կանգնել ու մի ղինվորի հարցրեց, թե զոր կոչում են վերափորվել: Եթե եկ չե, առաջի որը՝ Դանուբի ափին, պատասխանեց ղինվորը: Իշխան Անդրեյը քսակը հանեց և յերեք վտակի տվավ ղինվորին:

— Բայրի համար, — ավելացրեց նա, դառնալով իրեն մոտեցող սպային: — Առողջացեք, տղերք, — դարձավ նա ղինվորնեերին, — դեռ շատ կոնիներ ունենք:

— Ի՞նչ նորություններ կան, պարոն աղյուտանտ, — հարցրեց սպան, ըստ յերեսւյթին խոսակցություն սկսելու ցանկությամբ:

— Լսով նորություններ: Քշիւր, — ձայն տվեց նա կառապանին ու սլացավ տաշ:

Բայրութին մութն եր արդեն, յերբ իշխան Անդրեյը Բրյունն մտավ և իրեն շրջապատված տեսավ բարձր տներով, խանութներին, լուսամուտներին ու լապտերներին առատ լույսով, սալահատակը ուղմկող շքեղ կառքերով, մի խոսքով՝ մեծ յեռուն քաղաքի այն մթնալորտով, վորը միշտ այնպեւ զրավիչ է լինում ղինվորականի համար՝ բանակային կյանքից հետո: Իշխան Անդրեյը, շնայած հապնեղ արշավին և անքուն անցրած գիշերին, պալատին մոտենալով, իրեն ավելի աշխույժ եր զգում, քան նախընթաց որը: Միայն աչքերն եյին պսպղում տենդային փայլով, և մտքերը հաջորդում եյին իրար դարձանալի արագությամբ ու պայծառությամբ: Նորից կենդանի պատկերացան նրան ճակատամարտի մանրամասնությունները, արդեն վաչ թե աղոտ կերպով, այլ վարդակի, հակիրճ ձևով, վորը նա յերեսակայությամբ հայտնում եր Թրանց կայսեր: Կենդանի պատկերացնում եր այն անակնկալ հարցումները, վոր կարող եյին անել իրեն, և այն պատասխանները, վոր ինքը տալու յեր նրանց: Յենթադրում եր, թե իրեն անմիջապէս կներկայացնեն կայսեր: Բայց պալատի մեծ շքամուտքի առաջ նրան մատեցավ մի պաշտոնյա և, իմանալով նրա սուրհանդակ լինելը, առաջնորդեց նրան դեպի մյուս շքամուտքը:

— Միջանցքից դեպի աջ. այնտեղ, Ever Hochgeboren<sup>1</sup>, կպատահեք հերթապահ Ֆլիդել-աղյուտանտին, — ասավ պաշտոնյան, — նա ձեզ կտանի ռազմական մինիստրի մոտ:

Հերթապահ Ֆլիդել-աղյուտանտը, իշխան Անդրեյին ղիմալորելով, խնդրեց մի փոքր սպասել և ինքը զնաց ռազմական մինիստրի մոտ: Հինգ բաղեյից հետո Ֆլիդել-աղյուտանտը վերադարձավ և, առանձին քաղաքավարությամբ խոնարհվելով, իշխան Անդրեյին ճանապարհ տվեց առաջ անցնելու, և ինքը յետեից՝ միջանց

1 Ձերդ գերեզմանութուն:

քով տարավ նրան այն առանձնասենյակը, ուր պարապում էր ռազմական մինիստրը: Չլիզել-ադյուտանտը իր կերթ քաղաքավարությամբ, թվում էր, աշխատում և խուսափել ոուս ադյուտանտի մտերմական վերաբերմունքից: Իշխան Անդրեյի ղվարթ տրամադրություները դալի չափով թուլացավ, յերբ մոտեցավ ռազմական մինիստրի առանձնասենյակի դռանը: Նա իրեն վիրավորված զգաց, և վիրավորանքի այդ զգացումը վայրկենապես, իր համար ել աննկատելի, փոխվեց արհամարհանքի, վորը սակայն ղոչ մի հիմք չունեւր: Բայց նրա ճկուն միտքը թելադրեց նրան այն տեսակետը, վորով նա իրավունք ուներ արհամարհելու թե ադյուտանտին՝ թե ռազմական մինիստրին: Շերանց, յերեւի, շատ հեշտ և թվում հաղթանակ տանելը, առանց վստողի հոտն առնելու, — մտածեց նա. նրա աչքերն արհամարհանքով կկոցվեցին. ու մի առանձին դանդաղությամբ նա մտավ մինիստրի առանձնասենյակը: Այդ զգացումը նրա մեջ ավելի ուժեղացավ, յերբ տեսավ իրեն՝ ռազմական մինիստրին, վոր նստել էր մեծ սեղանի առաջ և առաջին յերկու բոլորին ուշադրություն չդարձրեց նրա վրա: Ռազմական մինիստրը իր ճաղատ, քունքերը ճերմակ մազերով ծածկված գլուխը յերկու մոմի արանքում կոացրած կարդում էր և մատիտով թղթի վրա նշաններ անում: Նա, առանց գլուխը բարձրացնելու, շարունակեց կարդալ նաև այն ժամանակ, յերբ դուռը բացվեց և քայլերի ձայն լսեց:

— Առեք այս և հանձնեցեք, — ասավ ռազմական մինիստրը, իր ադյուտանտին տալով թղթերը և դեռ ուշադրություն չդարձնելով սուրհանդակի վրա:

Իշխան Անդրեյն զգաց, վոր կամ ռազմական մինիստրին զրադեցնող բոլոր գործերից ամենաքիչ հետաքրքրականը Կուսուդովի բանակի գործողություններն են, կամ թե ուղում և այդ զգացնել տալ իրեն՝ ոուս սուրհանդակին: Բայց ինձ համար դա բոլորովին միևնույն է, մտածեց նա: Ռազմական մինիստրը մնացյալ թղթերը հավասարեցրեց իրար և գլուխը բարձրացրեց: Նա խելացի և յուրահատուկ արտահայտություն ուներ: Բայց այն վայրկյանին, յերբ դիմեց իշխան Անդրեյին, նրա գեմքի այդ խելացի հաստատակամ արտահայտությունը, հավանորեն, ըստ սովորության և գիտակցաբար փոխվեց. ու յերեսին մնաց մի հիմար, շինծու, և այդ շինծուությունը չբողարկող ծպիտ, վոր հատուկ և իրար յետեից խնդրարկուներ ընդունող մարդկանց:

— Գեներալ-ֆելդմարշալ Կուսուդովի կողմից եք ուղարկված, — հարցրեց նա: — Հույս ունեմ, լավ լուրեր եք բերել: Մորտեյի հետ ընդհարում ունեցե՞ք: Հաղթություն: Ժամանակն և:

նա վերցրեց իր հասցեյին ուղղած դրությունը և մի տխուր արտահայտութեամբ սկսեց կարդալ:

— Ախ, աստված իմ, աստված իմ: Շմիտ, — ասով նա գերմաներեն: — Ի՞նչ դժբախտութեան, ի՞նչ դժբախտութեան:

Գրութեանը կարդալով՝ զրեց այն սեղանի վրա ու նայեց իշխան Անդրեյին, հաժանորեն, ինչ-վոր բանի վրա մտածելով:

— Ո՛հ, ի՞նչ դժբախտութեան: Հաղթանակը վճակածն ե, ասում եք: Մահայն, Մորտեն գերի չի ընկել: (Նա մտածեց): Շատ ուրախ եմ, վոր լավ լուրեր բերեք, թեև Շմիտի մահը մի թանկագին կորուստ և այդ հաղթանակի դիմաց: Նորին մեծութեանը, հաժանորեն, կցանկանա ձեզ տեսնել, բայց վոչ հիմա: Ծնորհակալ եմ գնացե՛ք հանգստացե՛ք: Վաղը, դորանանդետից հետո, յեկեք ընդունելութեան: Ասե՛ք, յես ձեզ իմաց կտամ:

Մոտակցութեան ընթացքում աներևույթացած հիմար ժպիտը նորից յերևաց ոսղմական մինիստրի դեմքին:

— Յետեւութեան, շատ շնորհակալ եմ ձեզնից: Թագավոր կայսրը, հաժանորեն կցանկանա ձեզ տեսնել, — կրկնեց նա և գլուխը խոնարհեց:

Յերբ իշխան Անդրեյը պալատից դուրս յեկավ, զգաց, վոր հաղթութեան պատճառած հետաքրքրութեանն ու յերջանկութեանը իրեն թողին ու անցան ոսղմական մինիստրի և նրա քաղաքավարի ազլուտանաի անտարբեր ձեռքը: Նրա մտքերը վայրկենապես փոփոխին. ճակատամարտը նրան պատկերացավ վաղուց անցած-գնացած, հեռավոր մի հիշողութեան:

## X

Իշխան Անդրեյը Բրյուննում իջևանեց իր ծանոթ, ոռոս դիվանագետ Բիլիբինի տանը:

— Ա՛, սիրելի իշխան, ավելի հաճելի հյուր չեյի կարող սպասել, — ասավ Բիլիբինը, իշխան Անդրեյին դիմավորելով: — Յրանց, իշխանի իրերը տար իմ ննջարանը, — դարձավ նա Բալկոնսկուն ուղեկցող սպասավորին: — Հը, հաղթութեան համբավարճը: Հիանալի յի: Իսկ յես, ինչպես տեսնում ես, հիվանդ նստած եմ տանը:

Իշխան Անդրեյը, լվացվելով ու շորերը փոխելով, մտավ դիվանագետի ջրեղ սուանձնասենյակն ու ճաշի նստեց: Բիլիբինը հանդարտ նստեց բուխարու մոտ:

Իշխան Անդրեյը վոչ միայն իր ճանապարհորդութեանից, այլև ամբողջ արշավանքից հետո, վորի ընթացքում զրկված եր կյանքի բոլոր հարմարութեաններից ու վայելքներից, հանգստի հաճույք եր զգում այդ փարթամութեան մեջ, վորին սովոր եր մանկութեան

նից: Բացի զրանից, նրա համար հաճելի չէր, ավտորիտացիներէ ընդունելութիւնը հետո, խոսել թե՛ն փոշ հոսսերեն (նրանք խօսակցում էին ֆրանսերեն), զոնե ուսւ մարդու հետ, վորք, իր յենթադրությամբ, նույնպիսի զգմանք եր զգում զեպի ավտորիտացիները, ինչպես և բոլոր ուսաները:

Բիլիբիւնը յերեսունուհինգ տարեկան ամուրի յեր և իշխան Անդրեյի դասին պատկանող մարդ: Նրանք զեռ Պետերբուրգից ծանոթ էին, բայց ավելի մտերմացան, յերր իշխան Անդրեյը Կուտուզովի հետ յեկավ Վեննա: Ինչպես վոր իշխան Անդրեյը զինվորական ասպարիդում հեռուն զնալու հույսեր տփող յերիտասարդ եր, այնպես ել, և զեռ ավելին, խոստանում եր Բիլիբիւնը զիվանագիտական ասպարիդում: Նա զեռ յերիտասարդ եր, բայց արդեն յերկար տարիների զիվանագետ, վորովհետե ծառայել սկսել եր տասնվեց տարեկան հասակից, յեղել եր Պարիզում, Կոպենհագենում և այժմ Վեննայում զրավում եր բավականին աչքի ընկնող զիբը: Թե կանցլերը (ավտորիտական վարչապետը), թե Վեննայի մեր զեսպանը զիտեյին և զնահատում էին նրան: Նա այն բաղձաթիվ զիվանագետներից չէր, վորոնք տարտավոր են ունենալ միայն բացառական արժանիքներ, պարտավոր են անել վորաչ բաներ և ֆրանսերեն խոսել նրա համար, վերպետի շատ լավ զիվանագետ համարվեն: Նա այն զիվանագետներից մեկն եր, վորոնք սիրում են և կարողանում են աշխատել, ու, չնայած իր ծուլության, նա յերբեմն զիշերներ եր լուսացնում զբասեզանի աստջ: Ինչ աշխատանք ել լիներ՝ կատարում եր միտեեսակ լավ: Նրան հետաքրքրում եր փոշ թե շինչիւ հարցը, այլ շինչպեսը: Ինչ ել լիներ զիվանագիտական գործի եութիւնը, նրա համար միևնույն եր. մտությամբ, նրությամբ ու զեղեցկորեն կազմում եր շրջաբերականներ, մեմորանդումներ կամ զեկուցադրեր, — և այդ գործի մեջ զգում եր մեծ բավականութիւն: Բիլիբիւնը, զրական աշխատանքներից բացի, զնահատում էին նաև բարձր շրջաններում լավ վարվելու և փոսելու հարտարության համար:

Բիլիբիւնը, աշխատանքի պես, սիրում եր զրույցը, միայն թե այդ զրույցը լիներ նուրբ, սրամիտ: Հասարակության մեջ միշտ տոթիթի յե սպասում, վոր մի սրամիտ կամ նշանակալից բան ասի, և միայն այդ զեպքում եր խանձվում զրույցին: Նրա զրույցը միշտ համեմվում եր, որիդինալ-սրամիտ, ամբողջական և ընդհանուր շահեկանութիւն ունեցող զարձակմներով: Այդ զարձակմները Բիլիբիւնն իր ներքին լարտատորիայում պատրաստում եր կարծես զիվամար, նրա համար, վորպետե չնչին աշխարհիկ մարդիկ զյուրությամբ հիշեյին և հյուրասարհից հյուրասարհ տանեյին: Յեյ իրոր,

les mots de Bilibine se colportaient dans les salons de Vienne<sup>1</sup> և հաճախ աղղկեցաւ թշուռ էյին ունենում, այսպես անվանված, կարեւոր խնդիրներէ վրա:

Նրա ներսը, հյուսիս գեղնավուն գեմքը ամբողջապես ծածկված էր խոշոր կնճիռներով, վորոնք թվում էյին այնպես մաքուր ու խնամքով լվացված, ինչպես մատներէ ծայրերը բաղնիսից հետո: Այդ կնճիռներէ շարժումներն էյին կազմում նրա գեմքի արտահայտութիւնն ու խաղը: Մերթ ճակատն էր կնճոտում լայն ծալքերով ու հոնքերը բարձրանում էյին վեր, մերթ հոնքերն իջնում էյին ցած, և ալտերի շուրջը գոյանում էյին խոշոր կնճիռներ: Ընդհանրապէս աչքերը նայում էյին միշտ ուրախ ու զմարթ:

— Ե, այժմ պատմեցեր ձեր հերոսութիւնները, — ասավ նա: Բաղկոնսկին ամենահամեստ ձևով և վռչ մի անգամ իրեն չհիշելով՝ պատմեց ամբողջ ճակատամարտը և ռազմական միջիտարի ցույց տված բնգունելութիւնը:

— Ils m'ont reçu avec ma nouvelle, comme un chien dans un jeu de quilles<sup>2</sup>, — յնդրակացրեց նա:

Բիլիբինը քմծիծաղ տվեց:

— Cependant, mon cher, — ասավ նա, հեռվից իր յեղունգին նայելով և գեմքի մաշկը ձախ աչքի վերը հավաքելով, — malgré la haute estime que je professe pour le ուղղափառ ուսանական գործը, j'avoue que votre victoire n'est pas des plus victorieuses<sup>3</sup>:

Նա այդպես էլ փրանսերեն շարունակեց, ուսուերեն արտասանելով միայն այն բառերը, վորոնք ուզում էր ընդգծել արհամարհանքով:

— Այդ ինչպես: Դուք ձեր ամբողջ ուժով հարձակվել էր միայն մի դիվիզիա ունեցող թշվառ Մորեսյի վրա, և այդ Մորսեն զախոճւտ և տվել ձեր ձեռից: Սա յե ձեր հաղթութիւնը:

— Մակայն, լրջորեն ասած, — պատասխանեց իշխան Անդրեյը, — այնուամենայնիվ առանց պարծենալու կարող ենք ասել, վոր սա Ուլմից մի քիչ լավ է...

— Ինչո՞ւ գերի չվերցրիք մի, գեթ մի մարշալ:

— Վորովհետեւ ամեն ինչ չի կատարվում այնպես, ինչպես յենթադրվում է, և վռչ էլ այնպես կանոնավոր ձևով, ինչպես դո-

<sup>1</sup> Բիլիբինի կարծիքները տարածվում էյին Վիեննայի հյուրասրահներում:

<sup>2</sup> Նրանք ինձ այդ տեղեկությամբ ընդունեցին այնպես, ինչպես կծղի խաղը խանգարող շանն են ընդունում:

<sup>3</sup> Մակայն, արելիս, իմ գեղի ուղղափառ ուսանական գործն ունեցած հարգանքով հանգերձ, կարծում եմ, վոր ձեր հաղթանակը փայլուններից չի:



բահանդիսի ժամանակ, Մենք կարծում էյինք, ինչպես ասի, առաջնորդվա ժամը յոթի մոտ անցնել թշնամու թիկունքը, բայց յերեկոյան ժամը հինգին ել չհասանք:

— Իսկ ինչ՞եւ առավոտյան ժամը յոթին չհասաք: Դուք պետք եւ առավոտյան ժամը յոթին այնտեղ լինելիք, — ժպտալով ասավ Բիլիբրինը, — պետք եւ առավոտյան ժամը յոթին այնտեղ լինելիք:

— Ինչ՞եւ դուք դիվանագիտական ճանապարհով չներշնչեցիք Բոնապարտին, թե իր համար ավելի լավ եւ թողնի Ջենովան, — նույն տոնով ասավ իշխան Անդրեյը:

— Գիտեմ, — ընդհատեց Բիլիբրինը, — դուք մտածում եք հիմա, թե մարշալ գերի վերցնելը՝ շատ հեշտ եւ բուխարու առաջ՝ բազմոցի վրա նստած: Դա ճիշտ եւ, բայց եւ այնպես, ինչ՞եւ մեկին գերի չվերցրիք: Յեւ չզարմանաք, վնչ միայն ուղղական միջոցառը, այլեւ ողորտափառ կայսրը եւ Ֆրանց թագավորը իրենց շատ ել յերջանիկ չեն զգա ձեր հաղթությամբ. նույնիսկ յես, ուստի կան ղեկավարութան ղգախա քարտուղարս, վնչ մի պահանջ չեմ զգում ի նշան ուրախության իմ Ֆրանցին մի տալեր տալ եւ բաց թողնել նրան՝ իր սիրուհու հետ Պրատեր դնալու... ճիշտ եւ, այստեղ Պրատեր չկա:

Նա նայեց ուղիղ իշխան Անդրեյին եւ նրա ճակատի կնճիռները բացվեցին հանկարծ:

— Հիմա հերթը իմն եւ ձեզ հարցնելու «ինչու համար», սիրելիս, — ասավ Բալիզնսկին, — խոստովանում եմ, վոր չեմ հասկառնում, թերեւ այստեղ՝ դիվանագիտական ներություններ կան իմ թույլ ուղեգրին անմատչելի. բայց չեմ հասկանում, թե այդ ինչպես Մակը կորցնում ե իր ամբողջ բանակը, երցներցող Ֆերդինանդը եւ երցհերցոգ Կարլը կենդանության վոչ մի նշան չեն ցույց տալիս ե սխալներ են անում սխալների յետեից, վերջապես, Գուտտեղովը մենակ իսկական հաղթություն ե տանում, վոչնչացնում ե ֆրանսացիների հմայքը, ե ուղղական միջոցառը մինչեւ իսկ չի հետաքրքրվում մանրամասնություններն իմանալու:

— Այդ իսկ պատճառով, սիրելիս: *Voyez-vous mon cher!*<sup>1</sup> Եւ ում ցարի համար, Ռուսաստանի համար, հավատի համար. *tout ça est bel et bon*<sup>2</sup>, բայց մեզ համար, ասում եմ, այսինքն ավտարիական արքունիքի համար՝ ի՞նչ նշանակութուն ունեն ձեր հաղթությունները: Բերեք մեզ լավ տեղեկություններ երցներցող Կարլի կամ Ֆերդինանդի՝ (մեկը մյուսին արժի) Բոնապարտի՝ թեկուզ

<sup>1</sup> Գիտեք, սիրելիս

<sup>2</sup> Այդ բոլորը գեղեցիկ եւ եւ լավ եւ



հրէնջ խմբի վրա տարած հաղթութեան մասին, այդ ուրիշ բան ե, մենք թնդանթներ կարձակենք: Թե չե այդ՝ մեզ ծագրել կարող ե միայն: Երցներցող կարլը վոչինչ չի անում, երցներցող Ֆերդինանդը խայտառակում ե: Վեննան թողնում եք իր բախտին ու այլևս չեք պաշտպանում, comme si vous nous disiez<sup>1</sup>. — աստված մեզ պնտկան, ե աստված մեզ ու մեր մայրաքաղաքի հետ: Մի գնենքալ, վորին բոլորս սիրում եյինք, Շմիտն եր. դուք նրան տարաք գնդակների տարափի տակ սպանել տվիք ե շնորհավորում եք մեզ հաղթութեամբ: Համաձայնեցեք, վոր մեր բերած տեղեկութեաներից տվելի ծագրական բան չի կարող լինել: C'est comme un fait exprès, comme un fait exprès<sup>2</sup>. Բացի դրանից, ասենք թե դուք իսկապէս ինչպէս հաղթութեան տարած լինելիք, մինչե իսկ այդ հաղթութեանը տարած լինել երցներցող կարլը, ինչ իրոքախութեան պիտի առաջացներ իրերի ընդհանուր ընթացքի մեջ: Հիմա որդեն ուշ ե, յերբ Վեննան ֆրանսացիք գրավել են:

— Ինչպէս թե գրավել են: Վեննան գրավել են:

— Վոչ միայն գրավված ե, այլև Բոնապարտը Շներբունենում ե, իսկ մեր սիրելի կոմս Վրբնան գնում ե նրա մոտ հրամաններ ասանալու:

Բաղկոնակին հողնածութեանից, ճանապարհորդութեան ե քնդունելութեան տողավորութեանից ե մանավանդ ճաշից հետո դուռ եք, վոր իր լսած խոսքերի բովանդակ նշանակութեանը չի հասկանում:

— Այս աստվոտ այստեղ եր կոմս Լիխտենֆելսը, — շարունակեց Բիլիբինը, — ե ինձ ցույց տվեց մի նամակ, վորի մեջ մանրամասն նկարագրված ե ֆրանսացիների զորահանգներ Վեննայում: Le prince Murat et tout le tremblement<sup>3</sup>... Տեսնում եք, վոր մեր հաղթութեանը մեծ սրբախութեան չեք կարող պատճառել, ե դուք չեք կարող ընդունվել վորպէս իրկիչ...

— Իսկապէս, ինձ համար միենույն ե, քոլորովին միենույն ե, — ասավ իշխան Անդրեյը, կամաց-կամաց հասկանալով, վոր Գրեմսի ճակատամարտի լուրն իրոք մեծ կարևորութեան չեք ներկայացնում այնպիսի զեղքերի հանդեպ, ինչպիսին Ավստրիայի մայրաքաղաքի գրավումն եր: — Ինչպէս թե Վեննան գրավել են: Հապա կամուրջը ե նշանավոր tête de pont-ը, ե իշխան Աուերսպերգը: Մենք լսեցինք, վոր իշխան Աուերսպերգը Վեննան պաշտպանում ե, — ասավ նա:

<sup>1</sup> Ինչպէս, յեթե մեզ ասելիք:

<sup>2</sup> Դա՛ կարծես գիտմամբ Գարծես գիտմամբ:

<sup>3</sup> Իշխան Մյուրատը ե այդ տղուկը:

— Իշխան Առեւտրապետը մեր կողմից և մեզ պաշտպանում։ և կարծում եմ՝ շատ վատ և պաշտպանում, բայց և այնպէս պաշտպանում եւ։ Իսկ Վեննան այն կողմն եւ։ Վոյ, կամուրջը դեռ չի գրավւած և, հուլիս ունեմ, չի գրավւի, վերադնեա եկանւած եւ, և հրամայւած և ողջ հանել։ Հակառակ դեպքում մենք վաղուց Բոհեմիայի սարերում կլինեայինք, և դուք ձեր բանակի հետ միասին վատ բազմներ պիտի անցնեայիք յերկու կրակի միջև։

— Բայց և այնպէս դա չի նշանակում, թե պատերազմը վերջացած եւ, — ասով իշխան Անդրեյը։

— Յեա կարծում եմ՝ վերջացած եւ։ Այդ կարծիքի յե և այստեղի բարձրագոյն իշխանութիւնը, բայց վոյ-վոյ չի համարձակւում այդ ասելու։ Կլինի այն, ինչ ասել եմ յեա պատերազմի սկզբից, վոր ձեր Դյուրենշտեյնի ընդհարումը չի, առհասարակ վատողը չի վճռելու խնդրը, այլ այն հնարողները, — ասով Բիլիբինը, կըրկնելով իր սիրած mots-ից մեկը, բանալով ճակատի կնճիռները և կանգ առնելով։ — Ամբողջ խնդիրն այն եւ, թե ինչ հետեանք կունենա Ալեքսանդր կայսեր և պրուսական թագավորի տեսակցութիւնը Բերլինում։ Յեթե Պրուսիան մտնի դաշնակցութեան մեջ, on forcera la main à l'Autriche<sup>2</sup>, և պատերազմը կշարունակվի։ Յեթե վոյ, այն ժամանակ մեզ կմնա միայն պայմանավորվել, թե վորտեղ պիտի կազմել նոր Campo Formio<sup>3</sup>-ի նախնական հոգովաները։

— Բայց ի՞նչ չտեսնված հանճար եւ, — հանկարծ բացականչեց իշխան Անդրեյը, փոքրիկ ձեռք սեղմելով ու սեղանին խփելով։ — Ի՞նչ բախտ ունի այդ մարդը։

— Buonaparte? — հարցւեց Բիլիբինը, ճակատը կնճռելով, ու դրանով զգացնել տալով, թե շուտով ասելու յե իր mots-ից մեկը։ — Buonaparte? — ասով նա, շեշտելով առանձնապէս ուն։ — Յեա կարծում եմ, սակայն, վոր այժմ, յերբ նա Շիմբրունից որենքներ և թելադրում Ավստրիային, il faut lui faire grâce de l'u<sup>4</sup>։ Յեա մի նորամուծութիւն եմ կատարում, և նրան անվանում եմ Bonaparte tout court<sup>5</sup>։

— Վոյ, առանց կատակի, — ասով իշխան Անդրեյը, — միթե կարծում եք, թե պատերազմը վերջացավ։

— Այ, յեա ինչ եմ կարծում։ Ավստրիան հիմար դրութեան մեջ նկատվ, իսկ նա այդ բանին սովոր չեւ։ Յեկ նա պիտի տուժի Իսկ

<sup>1</sup> Բառերից։

<sup>2</sup> Այդ դեպքում կհաղկադրին Ավստրիային։

<sup>3</sup> Կամպո Ֆորմիո։

<sup>4</sup> Նրան պետք և պատեկ ունի։

<sup>5</sup> Բոլորովին կարճ — Բոնապարտ։

Նա հիմար դրութեան մեջ ընկալ, վորովհետե՛ նախ զավանները քայքայված են, բանակը ջարդված է, մայրաքաղաքը գրավված, և այդ բոլորը նորին Սարգինական մեծութեան գեղեցիկ աչքերի համար: Յե՛վ այդ պատճառով — *entre nous, mon cher*<sup>1</sup>, — հոտառութեամբ զգում էմ, վոր մեզ խորում են, զգում էմ, վոր Ֆրանսայի հետ բանակցութեաններ են տարվում և հաշտութեան ծրագրերն են կան, զազանի, առանձին կնքված:

— Այդ անկարելի չե, — ասով իշխան Անդրեյը, — դա Հափաղանց զարշելի բան կլինե՛ր:

— *Qui vivra verra*<sup>2</sup>, — ասով Բիլիրինը, կնճիռները նորից բանալով, վոր նշանակում եր թե խոսակցութեանը վերջացած է:

Յերբ իշխան Անդրեյը գնաց-մտալ իր համար պատրաստված սենյակը և մաքուր ճերմակեղենով պատկեց փետրյա անկողնում և գլուխը դրեց անուշահոտութեամբ ոծված բարձերի վրա, — զպաց, վոր ճակատամարտը, վորի լուրը բերեց, իրենից հեռու, շատ հեռու չկը: Նրան զբաղեցնում էին Պրուսիայի զաշնակցութեանը, Ավստրիայի զավանանութեանը, Բանապարտի նոր հաղթանակը, վաղվա դորանդեհը և Ֆրանց կայսեր ընդունելութեանը:

Նա աչքերը փակեց, բայց նախն լայրկյանին նրա ականջներում հնչեցին թնդանոթածութեան, համադարեկը, կառքերի անիվների զրդյուն, և նորից ահա սարից իջնում են հրացանակիրները իրար յետեից շար ընկած, ու Ֆրանսացիք կրակում են. և նա զգում է, թե ինչպես և բարախում սիրտը, նա ձի նստած զնում և առջևից, Շմիտի հետ միասին, և գնդակներն ուրախ-զվարթ շաշում-սուլում են նրա շուրջը, և կյանքը տասնապատիկ անգամ հաճելի չե թվում նրան, մի բան, վոր նա չի զգացել մանկութեանից ի վեր:

Նա արթնացավ...

«Այո, այս բոլորը յեղան...», ասով նա ինքն իրեն, մանկական-յերջանիկ ժպտով, ու քնեց մի խորունկ, անուշ քնով:

## XI

Հետևյալ որն ուշ զարթնեց: Նորոգելով յերեկվա տպավորութեանները՝ նա ամենից առաջ հիշեց, վոր այսօր պետք է ներկայանալ Ֆրանց կայսեր. հիշեց ռազմական միջիստրին, քաղաքավարի ավստրիական ֆրեզել-ադյուտանտին, Բիլիրինին և իրիկվա զրույցը: Պալատ զնալու համար հազավ իր տոնական համազգես-

<sup>1</sup> Մեր մեջ, սիրելիս:

<sup>2</sup> Կապրենք — կտեսնենք:

տը, վոր վաղուց չեր հագել, և թարմացած, աշխույժ ու զեղեցիկ տեսքով, ձեռի վերքը կապած, մտավ Բիլիբինի առանձնասենյակը, ուր դռնվում էին զիվանադիտական կորպուսի չորս անդամները։ Իշխան Իսպոլկա Կուրադինը, վոր զեստականության քարտուղարն էր, Բալկոնսկուն ծանոթ էր. մյուսներին ծանոթացրեց Բիլիբինը։

Բիլիբինի մոտ յեղած բարձր շրջանին պատկանող ջահել, հարուստ և կենսաւրախ մարդիկ, թե՛ Վեննայում, թե՛ այստեղ կազմում էին առանձին խումբ, վորին Բիլիբինը, այդ խմբի պարագլուխը լինելով, անվանում էր *Mes amis les nôtres*. Այդ խմբում, վորը բաղկացած էր զբեթեկ բացառապես զիվանադեաներից, ըստ յերևույթիմի, ունեյին իրենց, պատերազմի և քաղաքականության հետ ընդհանուր վոչինչ չունեցող բարձր աշխարհիկ ջահերը, և կապ՝ մի քանի կանանց հետ ու՝ պաշտոնավարության զիվանական հանդամանքներ։ Այս պարոնները, ըստ յերևույթին, սիրով, ինչպես յուրաքանչյուր (մի պատիվ, վորին շատ քչերին էին արժանացնում) իրենց խումբն ընդունեցին իշխան Անդրեյին։ Քաղաքավարության համար, և վորպես խոսակցության նախարար, մի քանի հարցեր տվին նրան բանակի ու ճակատամարտի մասին, ու զրույցը նորից դարձավ անհետեղական, անցավ կատակների և սրահնրա վարքը քննադատելուն։

— Բայց մանավանդ զվարճալին, — ասում էր մեկը, պատմելով զիվանադեան-ընկերոջ անաշտությունը, — զվարճալին այն է, մանավանդ, վոր կանցիւրն ուղղակի ասել է նրան, թե Լոնդոն նշանակվելը պաշտոնի բարձրացում է, և թե այդպես էլ պիտի ընդունի այդ կարգադրությունը։ Պատկերացնում եք նրա կերպարանքը այդ բողեյին...

— Բայց ամենից վատթարն այն է, պարոնայք, վոր յես ձեր ձեռն եմ մատնում Կուրադիին. մարդը դժբախտության մեջ է, և դրանից ողորվում է այս Դոն-ժուանը, այս սոսկալի մարդը։

Իշխան Իսպոլկաը պատկած էր վառերյան բաղկաթոսում, վորոնները բաղկատեղից դուրս պարզած, Նա ծիծաղեց։

— Parlez-moi de ça<sup>1</sup>, — ասավ նա։

— Ո՛ր, Դոն-ժուան։ Ո՛ր, ո՛ձ, — լսվեցին այս ու այն կողմից։

— Դուք չեք իմանում, Բալկոնսկի, — դարձավ Բիլիբինն իշխան Անդրեյին, — վոր ֆրանսական բանակի (քիչ մնաց ասեյի — ռուսական բանակի) բոլոր արհավիրքները վոչինչ են համեմատած այն բոլորի հետ, ինչ արել է այս մարդը կանանց շրջանում։

<sup>1</sup> Ասեք ինձ այդ մասին

— La femme est la compagne de l'homme<sup>1</sup>, — արտասանեց իշխան Բապուխտը և լռենկաով նայեց իր պարզած վռաներին:

Բիլիբինն ու միքսի քրքջացին, նայելով Բապուխտի աչքերին: Իշխան Անդրեյը տեսավ, վոր այդ Բապուխտը, վորին ինքը (պետք է խոստովանած) դրեթե խանդում եր գնալի իր կինը, ծաղրածու յեր այս հասարակության մեջ:

— Լաշ, յես ձեզ պետք է հշուրասիրեմ կուրադինով, — կամացուկ ասավ Բիլիբինը Բալկանսկուն: — Հիանալի յես, յերը դատողություններ և տալիս քաղաքականության մասին, պետք է տեսնել այդ լրջությունը:

Նա նստեց Բապուխտի կողքին և, կնճիռները ճակատին հավաքելով, խոսակցություն սկսեց նրա հետ՝ քաղաքականության մասին: Իշխան Անդրեյն ու մյուսները շրջապատեցին նրանց:

— Le cabinet de Berlin ne peut pas exprimer un sentiment d'alliance, — սկսեց Բապուխտը, նշանակալից նայելով բուրին, — sans exprimer... comme dans sa dernière note... vous comprenez... vous comprenez... et puis si sa Majesté l'Empereur ne désoroge pas au principe de notre alliance<sup>2</sup>...

— Attendez, ja n'al pas fini... — ասավ նա իշխան Անդրեյին. նրա ձեռք բռնելով: — Je suppose que l'intervention sera plus forte que la non-interventie. Et... — Նա լսեց: — On ne pourra pas imputer à la fin de non-recevoir notre dépêche du 28 novembre. Voilà comment tout cela finira<sup>3</sup>.

Յեվ նա թողեց Բալկանսկու ձեռքը, դրանով ցույց տալով, թե ինքն այժմ բուրովին վերջացրեց.

— Demosthenes, je te reconnais au caillou que tu as caché dans ta bouche d'or!<sup>4</sup> — ասավ Բիլիբինը, վորի մազերը բավականությունից շարժվեցին գլխին:

Բուրը ծիծաղեցին: Բապուխտը քրքջաց բուրից բարձր: Նա, ըստ յերևույթին, տանջվում, շնչարգել եր լինում, բայց չեր կա-

<sup>1</sup> Կինը մարդու ընկերուհին է:

<sup>2</sup> Բերլինի կարինտը չի կարող արտահայտել իր կարծիքը դաշնակցության մասին, չարտահայտելով... ինչպես իր վերջին հուշագրում... հասկանում եք... հասկանում եք... Բայց յեթե նորին մեծութուն կայսրը չգոթի մեր դաշնակցության ելությունը...

<sup>3</sup> Ապառնեք, յես չեմ վերջացրել: Յես կարծում եմ, վոր միջամտությունը կլինի ավելի հաստատուն... քան չմիջամտելը: Յեվ... մեր նոյեմբեր 28-ին հեռագրի մեղմումով չի կարելի ամեն բան վերջացած համարել: Այս բուրը պետք է մի բանով վերջանա:

<sup>4</sup> Դեմոսթենես, յես քեզ ճանաչում եմ վռակն քերտնուդ թաղցած քարով:

ըողանում քրքիջը դսպել, վորը ձգում յերկարացնում եր նրա մըշտապես անշարժ դեմքը:

— Ահա թե ինչ, պարոններ, — ասով Բիլիբինը, — Բալկոնսկին այստեղ<sup>1</sup> Բրյուննում իմ հյուրն է և յես ուզում եմ, վորքան կարող եմ, հյուրասիրել նրան այստեղի կյանքի բոլոր հաճույքներով: Յեթե Վեննայում լինեյինք, հեշտ կլինեք. բայց այստեղ, dans ce vilain trou morave<sup>2</sup>, ավելի դժվար է, և յես բոլորիդ ոգնությունն եմ խնդրում: Il faut lui faire les honneurs de Brunn<sup>3</sup>. Դուք հանձն առեք հոգալ թատրոնի մասին, յես — հասարակության, Իպպոլիտը, պարզ է, — կանանց:

— Պետք է նրան ծանոթացնել Ամելիի հետ, — ասով մեռացից մեկը, մատների ծայրերը համբուրելով:

— Ահասարակ այս արյունարբու ղինվորին, — ասով Բիլիբինը, — պետք է ավելի մարդասիրական հայացքներ ներշնչել:

— Հաղիվ թե ձեր հյուրասիրությունից կարողանամ ողովել, պարոններ, իսկ այժմ իմ գնալու ժամանակն է, — ժամացույցին նայելով ասով Բալկոնսկին:

— Ո՛ւր:

— Կայսեր ներկայանալու:

— Ո՛, ճ, ճ:

— Ե, ցտեսություն, Բալկոնսկի: — Յտեսություն, իշխան: Շնորհի շուտ յեկեք, — ասին մի քանի ձայներ: — Մենք հանձն ենք առնում հոգալ ձեր մասին:

— Յերբ կայսեր հետ խոսեք, աշխատեցեք դովել պարենի մատակարարման և մարջրուտների կանոնավորությունը, — ասով Բիլիբինը, ուղեկցելով Բալկոնսկուն մինչև նախասենյակը:

— Կուզեյի դովել, բայց չեմ կարող, վորքան դիտեմ, — ժպտալով պատասխանեց Բալկոնսկին:

— Դե, ընդհանրապես վորքան կարելի յի շատ խոսեք: Նա ամեն բանից ավելի սիրում է — ունեղնություններ. իսկ ինքը խոսել չի սիրում և չի կարողանում, ինչպես ինքներդ ել կտեսնեք:

## XII

Հանդիսավոր ընդունելության ժամանակ Ֆրանց կայսրը ուշադիր նայեց միայն իշխան Անդրեյի դեմքին, վոր ավատրիական սպաների միջև կանգնածիք իրեն հատկացված տեղը, ու բարենց նրան իր յերկար գլխով: Բայց ընդունելությունից հետո յերեկվա ֆլիգել-ադյուտանտը քաղաքավարությամբ հայտ նեց Բալկոնսկուն:

<sup>1</sup> Մորավական այս կեղտոտ փոսում:

<sup>2</sup> Պետք է նրան հյուրասիրել Բրյուննով:



կայսեր ցանկութեանը՝ նրան ունենդրութեան շնորհելու։ Ձրանց կայսրն ընդունեց նրան սենյակի մեջտեղը կանգնած։ Նախքան խոսակցութեանն սկսելը՝ իշխան Անդրեյին դարձացրեց այն՝ վոյ-կայսրը կարծես չիտիվեց, չիմանալով ինչ ասել, ու կարմրեց։

— Ասեք, ճակատամարտը յեւր սկսվեց, — հարցրեց նա հապճեպ։  
 Իշխան Անդրեյը պատասխանեց։ Այդ հարցումին հաջորդեցին ուրիշ նույնքան պարզ, հասարակ հարցումներ. «առձիջ և արդյոք կուտուգովը» վաղձուց և նա դուրս յեկել կրեմսից» և այլն։ Կայսրը խոսում էր այնպիսի արտահայտութեամբ, կարծես նրա ամբողջ նպատակն այն էր միայն, վոյ վորոշ քանակութեամբ հարցեր տա։ Իսկ այդ հարցերի պատասխանը, աններև էր, վոյ նրան չեյին կարող հետաքրքրել։

— Ժամը քանիսին՝ սկսվեց ճակատամարտը, — հարցրեց կայսրը։  
 — Ձեռ կարող ասել, ձերդ մեծութեան, թե վոյ ժամին սկսվեց գլխավոր ճակատի կոխիլը, բայց Դյուրենշտեյնում, ուր դանվում էյի յես, դորքը հարձակում սկսեց յերեկոյան ժամը վեցին, — սասով Բալկոնսկին, վաղեարվելով և դրանից յենթադրելով, թե իրեն կհաջողվի իր տեսածի ու զիտցածի ճիշտ նկարագրութեանը ներկայացնել, ինչ-վոյ գլխումը պատրաստ էր արդեն։

Բայց կայսրը ժպտաց և ընդհատեց նրան։

— Դանի մղձն է։

— Վճրտեկից վորտեղ, ձերդ մեծութեան։

— Դյուրենշտեյնից մինչև կրեմա։

— Յերեք ու կես մղոն, ձերդ մեծութեան։

— Ձրանսացիք հեռացան ձախ ափից։

— Լրտեսների տեղեկութեան համաձայն՝ գիշերը անցել է լատերով։

— Բավականաչափ կեր կամ արդյոք կրեմսում։

— Կերն այն քանակով չէր բերվել, վոյ...

Կայսրն ընդհատեց նրան։

— Ժամը քանիսին սպանվեց զեներալ Շմիտը...

— Կարծեմ ժամը յոթին։

— Ժամը 7-ին։ Շմտ ցավալի յես։ Շմտ ցավալի յես։

Կայսրն ասավ, թե ինքը շնորհակալ է, ու գլխով արավ։ Իշխան Անդրեյը դուրս յեկավ և անմիջապես շրջապատվեց պալատականներով։ Ամեն կողմից նայում էյին նրան սիրալիբ աչքեր և լավում էյին սիրալիբ լոսքեր։ Յերեկվա ֆիդելիտատանտը հանդիմանեց նրան, թե ինչու չէր իջևանել պալատում, ու՝ առաջարկեց նրան իր տունը։ Մտեցյավ ռազմական միլիտարը և շնորհավորեց կայսեր կողմից նրան շնորհված Մարիա-Թերեզայի 3-րդ աստիճանի



շրանշանը՝ Կայսրուհու սենեկապանը հրավիրեց նրան նորին մեծութունն կայսրուհու մոտ։ Երջներցողունին նույնպես փափաղ էր հայտնում նրան տեսնելու։ Նա չգիտեր վերին պատասխանի, ու մի քանի վայրկյան իր մտքերի յետեից էր բնկած։ Ռուսական ղեկավարը՝ նրա ուսից բռնելով, տարավ նրան ղեպի լուսամուտը և սկսեց հետը խոսակցել։

Բիլիբինի ասածների հակառակ՝ նրա բերած լուրն ընդունվեց ուրախությամբ։ Կատարվեց ղոհարանական մաղթանք։ Կուսուղովը պարզեցավեց Մարիա-Թերեզայի մեծ խաչով, և ամբողջ բանակը նվեր ստացավ։ Բալկոնսկին ամեն կողմից հրավերներ ստացավ և ամբողջ առավոտն ստիպված էր այցելություններ տալ Ավստրիայի մեծամեծներին։ Այցելությունները վերջացնելով յերկայան ժամը հինգին և մտքում շարադրելով հորը զբիլիք նամակը՝ ճակատամարտի և իր Բրյունն գալու մասին, — իշխան Անդրեյը վերադարձավ Բիլիբինի տունը։ Բիլիբինի տան առաջ, կիսով չափ իրերով բեռնավորված, կանգնած էր մի կառք, և Բիլիբինի ծառա Ֆրանցը, մի ծանր ճամպուռիկ ձեռին, դուրս յեկավ դռնից։

Նախքան Բիլիբինի մոտ գալը՝ իշխան Անդրեյը գնացել էր դրախտանութ՝ հետը տանելու համար զբքեր գնելու, և այնտեղ մնացել էր յերկար։

— Ի՞նչ կա, — հարցրեց Բալկոնսկին։

— A'ch, Erlauchtl — ասավ Ֆրանցը, դժվարությամբ ճամպուռուկը կառքի վրա գնելով։ — Wir ziehen noch weiter. Der Bösewicht ist schon wieder hinter uns her<sup>1</sup>.

— Ի՞նչ ասիր։ Ի՞նչ, — հարցրեց իշխան Անդրեյը։

Բիլիբինը դուրս յեկավ Բալկոնսկուն դիմավորելու։ Նրա մշտապես հանգիստ ղեմքն այլալված էր։

— Non, non, avouez que c'est charmant, — ասավ նա, — cette histoire du pont de Thabor (կամուրջ Վեննայում). Ils l'ont passé sans soup féir<sup>2</sup>.

Իշխան Անդրեյը վաշինչ չէր հասկանում։

— Բայց վճռադից եք գալիս, վոր տեղեկություն չունեք այնպիսի բաներից, ինչ քաղաքի բոլոր կառավարանները գիտեն արդեն։

— Յես երցներցողունու մոտից եմ գալիս։ Յես այնտեղ վաշինչ չլսեցի։

<sup>1</sup> Ա'հ, մեք ղայծառափայլություն։ Մենք գնում ենք ավելի հեռուն։ Ձառագործն ելի հեռեւում և մեզ։

<sup>2</sup> Վոշ, վոշ, ընդունեցեք, վոր սա հրաշալի յե, այս Տարորյան կամուրջի պատմությունը։ Նրանք անցել են առանց դիմազրություն։

— Յեվ հետեանք, վոր ամեն տեղ մեկնեալու պատրաստութիւն են տեսնում:

— Չտեսա... Բայց ի՞նչ կա, — անհամբեր հարցրեց իշխան Անդրեյը:

— Ի՞նչ կա: Այն կա, վոր ֆրանսացիներն անցել են Աուերս-պերդի պաշտպանած կամուրջը, և պաշտպանողները կամուրջը ողջ չեն հանել, այնպես վոր Մյուրատն այժմ ուղիղ ճանապարհով արարշավ գալիս և Բրյուսնի վրա, և այսօր չե վաղը այստեղ կլինեն:

— Ի՞նչպես թե այստեղ կլինեն: Յեվ ի՞նչպես թե կամուրջն ողջ չեն հանել, յերբ նա ականւթած եր արդեն:

— Այդ նույնը յես ձեզ եմ հարցնում: Այդ վոչ-վոք և ինքը Բանապարտն ել չգիտի:

Բալիսնակին ուսերը թաթկեց:

— Յեթե կամուրջն անցել են, նշանակում է բանակը ևս կորած և նորան դերի կլինցնեն, — ասով նա:

— Բանն ել հենց այդ է, — պատասխանեց Բիլիբինը: — Լսեցեք, ի՞նչպես ասի՝ ֆրանսացիք մտնում են Վեննա: Շատ լավ: Մյուս օրը, այսինքն յերեկ, պարոնայք մարշալներ՝ Մյուրատը, Լաննը և Բելլարը ձի յեն նստում ու դնում զեղի կամուրջը (Նկատեցեք՝ յերեքն ել գասկոն): Պարոններ, — ասում և մեկը, — գիտեք վոր Տարբրի կամուրջը տկանւթած և և հակաականւթած, ու մեր առջևն և ահարկու tête de pont-ը և տասնուհինգ հազարանոց մի բանակ, վորին կարգադրւած և կամուրջն ողջ հանել և մեղ առաջ չթողնել: Սակայն մեր թագաւոր կայսր Նապոլեոնին հաճելի կլինի, յեթե մենք գրավենք այս կամուրջը: Յերեքով դնանք և այս կամուրջը գրավենք: Դնանք, ասում են մյուսները, ու դնում են և կամուրջը գրավում, անցնում և հիմա ամբողջ բանակով Դանուբի այս ափից գալիս են մեղ վրա, ձեղ վրա և ձեր հաղորդած տեղեկութիւններն վրա:

— Կատակները թողեք, — տխուրթյամբ ու լրջորեն ասով իշխան Անդրեյը:

Այդ լուրն իշխան Անդրեյի համար թե դառն եր, թե հաճելի: Հենց վոր իմացավ, թե ուս ընտանիք գտնւթած և մի այդպիսի անհուսալի դրութիւն մեջ, նա մտածեց, վոր հենց իրեն և վիճակւթած փրկել ուս ընտանիք այդ դրութիւնից, վոր ահա դա յե այն Տուլոնը, վոր առաջ կքաշի իրեն անհայտ սպաների շարքից և փառքի ճանապարհ կբանա իր համար: Ականջ դնելով Բիլիբինին, նա յերեկայում եր արդեն, թե ի՞նչպես ինքը, բանակ գալով, գինւորական խորհրդում կհայտնի իր կարծիքը, վորը միայն կա-

րող ե փրկել բանակը, և ինչպես միայն իրեն կհանձնարարվի այդ ձրագրի իրադրծումը:

— Թողեք կատակները, — ասավ նա:

— Կատակ չեմ անում, — շարունակեց Բիլիբինը, — ասածներից ավելի ճիշտ և տեղուր բան չկա: Այդ պարոնները՝ յերեքով զալիս են կամուրջի ծայրը և սպիտակ թաշկինակներ պարզում՝ համատացնում են, թե գինադադար է, և վոր իրենք, մարշալները՝ զնում են իշխան Աուերպերգի հետ բանակցելու: Հեթ թապահ սպան թողնում և նրանք tête de pont-ը: Յեկ նրանք այդ սպային պատմում են հազար ու մի գասկոնական հիմարություններ, թե՛ պատերազմը վերջացած է, թե Յրանց կայսրը տեսակցություն և նշանակել Բոնապարտին, թե իրենք ցանկանում են տեսնել իշխան Աուերպերգին, և այսպես շատ հիմար բաներ: Սպան մարդ է ուղարկում Աուերպերգի յետերից. այդ պարոնները զրկվում են սպաների հետ, հանաքներ են անում, նստում են թնդանոթների վրա, մինչ այդ Փրանսական զուժարտակն աննկատ մոտենում և կամուրջին, դուրսավառ նյութերը և ականները թափում և ջուրը և մոտենում tête de pont-ին: Վերջապես, զալիս և ինքը ղեներալ-լեյտենանտը, մեր սիրելի իշխան Աուերպերգը ֆան-Մաուսերը, Վիլհելմ հակառակորդ. ավտորիական զորականությանն ծաղիկ, տանկական պատերազմների հերոս՝ թշնամությունը վերջացած է. մենք կարող ենք հաշտության ձեռք մեկնել իրար... Նապոլեոն կայսրը ջերմապես փափագում և ճանաչել իշխան Աուերպերգին: Մի խոսքով, այդ պարոնները, իդուր չե վոր գասկոնցի յեն, այնքան շոյիչ խոսքեր են ասում Աուերպերգին, և նա այնպես և հրապուրվում ֆրանսական մարշալների այդ մտերմությունից, այնպես և շլանում Մյուլրաուի պատմաճանից և Ջայլամի փեղույրներից, qu'il n'y voit que du feu, et oublie celui qu'il devait faire, faire sur l'ennemi<sup>1</sup>. (Չնայած իր արագախոսության, Բիլիբինը չմոռացավ կանգ առնել իր այդ mot-ից հետո, վորպեսզի ժամանակ տա այն գնահատելու): Ֆրանսական զուժարտակը վաղեմազ մոտենում և tête de pont-ը, փակում են թնդանոթների բերանը, և ահա կամուրջը զրավված է: Բայց ամենից զավեշտականը, — շարունակեց Բիլիբինը, մեղմելով իր հուզումը սեփական պատմության զրավչությամբ, — դա այն է, վոր թնդանոթի վրա հսկող սերժանտը, վորի ազդանշանով ականները պիտի վառեյին և կամուրջն ողջ հանելին, այդ սերժանտը, տեսնելով վոր ֆրանսական զորքերը վազում են

<sup>1</sup> Վոր նա տեսնում է միայն նրանց կրակը և մոռանում է իրենը, այն, վորը պարտավոր էր բանալ հակառակորդի դեմ:

զեպի կամուրջը, ուղու մ ե կրակել արդեն, բայց Լաննը բռնում ե նրա ձեռքը: Մերժանաբ, վորն ըստ յերևոյթին, ալելի խելացի յե լինում իր ղեներայից, մտնելում ե Աուերսպերգին ե ասում. «Իշխան, ձեզ խարում են, ա՛նձ ֆրանսացիք»: Մուրաբը տեսնում ե, վոր բանը տանուլ ե տված, յեթե սերժանտը խոսի: Նա կեղծ դարձանքով (խկական դասկանացի) դառնում ե Աուերսպերգին. «Յես չեմ տեսնում աշխարհում դժգոհ ալտարիական կարդապահու թշուրը, — ասում ե նա, — ե դուք թմշլ եք տալիս, վոր մի հասարակ սոյա աղպէս խոսի ձեզ հետ: C'est génial. Le prince d'Auersperg se pique d'honneur et fait mettre le sergent aux arrêts. Non, mais avouez que c'est charmant toute cette histoire du pont de Tabor. Ce n'est ni bêtise, ni lâcheté...»<sup>1</sup>

— C'est trahison peut-être<sup>2</sup>, — ասով իշխան Անդրեյը, վառ պատկերացնելով շինկներ, վերալորներ, վառողի ծուխ, վորոտի ձայներ ե իրեն սպասող փառքը:

— Non plus. Cela met la cour dans de trop mauvais draps, — արտահայտեց Բիլիբինը: — Ce n'est ni trahison, ni lâcheté, ni bêtise; c'est comme à Ulm... — Նա կարծես մտածեց համապատասխան արտահայտություն գտնելու. — c'est... c'est du Mack. Nous sommes maskés<sup>3</sup>, — յեզրափակեց նա, զգալով, վոր ասով un mot, ե մի թարմ mot, մի այնպիսի mot, վորը կարող ե բերնե-բերան անցնել:

Մինչ այդ ձակատին հովաքված կնճիռները յետ դնացին ի նշան աւրախության, ե նա, թեթևակի մպտալով, սկսեց յեղունդները դիտել:

— Ո՛ւր, — ասով նա հանկարծ, դիմելով իշխան Անդրեյին, վոր վեր կացավ ու դնաց զեպի իր սենյակը:

— Յես մեկնում եմ:

— Ո՛ւր:

— Բանակ:

— Բայց ուղմւմ ելիք յերկու որ ես մնալ:

— Բայց հիմա մեկնում եմ այս բաղնիքին:

Յեղ իշխան Անդրեյը, մեկնելու համար կարդադրություններ անելով, դնաց իր սենյակը:

<sup>1</sup> Հանճարեզ րան եւ իշխան Աուերսպերգը վերափոքրում ե ե հրամայում ե սերժանտին ձերբակալել: Ղոշ, ընդունեցեք վոր այս կամուրջի պատմությունը հիմնալի րան ե. չեա կարող առել հիմարություն ե, թե ստորություն:

<sup>2</sup> Գուցե դաժաճանություն:

<sup>3</sup> Նույնպէս զոշ: Այս բանը արքունիքը զնում ե անհնդեղ զրության մեջ սա զոշ դաժաճանություն ե, զոշ ստորություն, զոշ հիմարություն. սա Ուլմի մոտ յեղածի պէս րան ե... սա մահաճանություն ե: Մինչ մահացել ենք:

— Գիտեք ինչ, սիրելիս, — ասավ Բիլիբրինը, մտնելով նրա սենյակը: — Յես մտածեցի ձեր մասին և ուզում եմ հարցնել ինչու յեք գնում:

Յեմ իբրև անհերքելի ապացույց այդ պատճառաբանության՝ կնճիռները չքացան նրա դեմքից:

Իշխան Անդրեյը հարցականորեն նայեց իր խոսակցին և չպատասխանեց:

— Ինչու յեք գնում: Գիտեմ, մտածում եք, թե ձեր պարտքն է այժմ իսկ սլանալ բանակ, յերբ բանակը վտանգի մեջ է: Յես այդ հասկանում եմ, mon cher, c'est de l'héroïsme <sup>1</sup>.

— Բնավ, — ասավ իշխան Անդրեյը:

— Բայց դուք un philosophe <sup>2</sup> եք, յեղեք ուրեմն կատարյալ փիլիսոփա, իրերին նայեցեք այլ կողմից, և կտեսնեք, վոր ձեր պարտքն է, ընդհակառակը, խնայել ձեր կյանքը: Թողեք դա ուրիշներին, վորոնք վաղ մի բանի պիտանի չեն... Ձեզ հրամայված չէ՝ յես դառնալ, և այստեղից ել չեն արձակել ղնալու. նշանակում է՝ կարող եք մնալ և մեզ հետ դալ, ուր վոր մեր դժբախտ ճակատադիրը կառաջնորդի մեզ: Ասում են՝ ղնալու յենք Ու՛մյուցը, իսկ Ու՛մյուցը շատ դուրեկան քաղաք է: Յեմ մենք միասին իմ կողքով կերթանք հանդիս:

— Թողեք կատակները, Բիլիբրին, — ասավ Բալկոնսկին:

— Ասում եմ անկեղծորեն և բարեկամարար: Ինքներդ դատեցեք: Ո՛ւր և ինչի՞ համար եք գնում հիմա, յերբ կարող եք մնալ այստեղ: Ձեզ սպասում է յերկու բան (նա մաշկը հավաքեց ձախ քունքի վրա). կո՞մ բանակ չհասած հաշտություն կըկնքվի, կամ պարտություն կլինի և Կուսուզովի ամբողջ բանակը կխայտառակվի:

Յեմ Բիլիբրինը կծկած մաշկը բաց արավ, դալով, վոր իր առաջադրած յերկրնորանքը անհերքելի յե:

— Յես այդ չեմ կարող ասել, — սառնությամբ ասավ իշխան Անդրեյը, բայց մտածեց. գնում եմ, վորպեսզի բանակը չիլկեմ:

— Mon cher, vous êtes un héros <sup>3</sup>, — ասավ Բիլիբրինը:

### XIII

Նույն գիշերը, ռազմական միջխտորին հրաժեշտ տալով, Բալկոնսկին մեկնեց բանակ, ինքն ել չիմանալով, թե ուր կգտնի

<sup>1</sup> Թանկագինն, դա — հերոսություն է:

<sup>2</sup> Փիլիսոփա:

<sup>3</sup> Թանկագինն, դուք հերոս եք:

նրան, և յերկյառ կրելով. թե կրեմս գնալիս հանկարծ չընկնի ֆրանսացիների ձեռք:

Բրյուսնի բոլոր պալատական պաշտոնեւթյունը հավաքվում, հետանալու պատրաստութիւն ևր տեսնում, և արդեն բռններ ելին ուղարկվում Ուլմայո: Եղեւգորֆի մոտ իշխան Անդրեյը հանդիպեց ուսական բանակին, վարը ծայրահեղ շտապողակա- նությամբ և մեծագույն անկարգությամբ շարժվում եր առաջ: Ժանապարհն այնպես եր խճողված սայլերով, վոր կառքով անկա- րելի յեր առաջ գնալ: Կաղակների հրամանատարից վերցնելով մի ձի և մի կաղակ՝ իշխան Անդրեյը, քաղցած ու հոգնած, դումակի առաջն անցնելով, գնաց զլխավոր հրամանատարին և իր սայլակը փնտռելու: Ժանապարհին նա արդեն շատ չարագուշակ լուրեր եր լսել բանակի դրության մասին, և այժմ անկարգ փախչող բա- նակի տեսքը հաստատում եր այդ լուրերը:

— Cette armée russe que l'or de l'Angleterre a transportée, des extrémités de l'univers, nous allons lui faire éprouver le même sort (le sort de l'armée d'Ulm)<sup>1</sup>, — հիշեց նա պատերազմի սկզբին Բոնապարտի հրամանի խոսքերը՝ ուղղված իր բանակին, և այդ խոսքերը նրա մեջ միատեսակ կերպով հարուցանում ելին հիացում՝ հանճարեղ հերոսի նկատմամբ, վիրավորված հպարտու- թյան զգացում և փառքի հույսեր: Իսկ յեթե մեռնելուց բացի ու- րիշ վաշինչ չմնա, մտածեց նա: Ինչ կա վոր, յեթե հարկավոր եւ Եկա այդ բանում ուրիշներից յետ չեմ մնա:

Իշխան Անդրեյն արհամարհանքով նայեց այդ անվերջ, իրար խառնված վաշտերին, սայլերին, հրետանուն ու դարձյալ սայլե- րին, սայլերին, այդ բազմատեսակ սայլերին, վորոնք աշխատում ելին առաջել միմյանց, և յերեք, չորս շարքով բռնել ելին ճանա- պարհը: Ամեն կողմից, յետևից ու առջևից, վորքան կարող եր ձայն հասնել, լսվում ելին կոռքերի ու հրետասայլերի անխմելի զգրդոց, ձիերի զոփոււն, մարակների հարված, քշելու ճիչեր, զին- վորների, սպայականների ու սղանների հայհոյանքներ: Ժանապարհի յերկու կողմը շարունակ պատահում ելին մերթ սատկած՝ մաշկած և վոչ մաշկած ձիեր, մերթ կտրած սայլեր, վորոնց մոտ, ինչ-վոր բանի սպասելով, նստած ելին մենակ զինվորներ, մերթ իրենց գնդերից բաժանված զինվորներ, վորոնք խմբերով գնում ելին գեղի հարեան գլուղերը կամ գլուղերից բերում ելին հավեր, վաշխարներ, խոտ կամ ինչ-վոր բանով լցրած պարկեր: Վայրեջք-

<sup>1</sup> Այդ ուսական բանակը, վորին անգլիական վոսկին աշխարհի մի ծայրից այստեղ և բերել, նույն բախտին կարժանանա (Ուլմի բանակի բախտին):



ներում ու վերելքներում բազմաթիվունները խտանում էյին, ու տիրում էր դոռում-դոշյունների մի անլուելի դոլոսոյ։ Զինվորները, ծնկահար ցիւի մեջ, ձեռներով քաշում էյին հրանոթներն ու ուղղմասայլերը։ Մարտկենքը հարվածում էյին, սմրակները սահում-սայթաքում, ձգափոկերը կտրվում և մարդկանց կոկորդը պատռում էր ճիչերից ու կանչերից։ Շարժումը ղեկավարող սպաները շարունակ յետ ու առաջ էյին դնում սայլերի արանքով։ Նրանց ձայնը հաղիվ էր լսվում ընդհանուր ժողովի մեջ, և նրանց դժափից յերևում էր, վոր այս անկարգության առաջն սոնելը համարում էյին անհուսալի, անհնարին մի բան։

«Yolla le cher! ուղղափառ զորականությունը», մտածեց Բալկոնկին, հիշելով Բիրբրինի խոսքերը։

Յանկանալով վորև մեկից իմանալ դիտավոր հրամանատարի տեղը, իշխան Անդրեյը մոտեցավ դումակին։ Նրա առջևից դնում էր մի տարրերնակ միաձի կառք, ըստ յերևույթին, տնավարի դինվորների ձեռով սարքած մի բան, վորը վոչ սայլ էր, վոչ կարրիսետ, վոչ ևլ զսպանակներով կառք, այլ զրանց խառնուրդը։ Այդ կառքը վարում էր մի դինվոր, իսկ կաշիով պատած վերնածածկի տակ նստած էր մի կին՝ ամբողջովին շալերով փաթաթված։ Իշխան Անդրեյը մոտեցավ և հաղիվ դինվորին հարցում արավ, յերբ նրա ուշադրությունը դրավեց ծածկի տակ նստած կնոջ հուսահատ ճիչերը։ Գումակի ղեկավար սպան խփում էր այդ կառքը վարող դինվորին, թե ինչու յե նա ուղում մյուսներից առաջ անցնել, և մարակի ծայրը դիպչում էր կառքի ծածկին։ Կինը սարսափելի ծղրտում էր։ Իշխան Անդրեյին տեսնելով՝ նա զլուխը հանեց այդ քողի տակից և, նիհար ձեռները թափահարելով, ճշաց.

— Աղյուտանա, Գարոն աղյուտանա. ի սեր աստծո... պաշտպանեցեք... Սա լինչ բան և... Յես 7-րդ յեղերական դնդի բժշկի կինն և... չեն թողնում առաջ անցնելու. մենք յետ ենք մնացել մերոնց կորցրել ենք...

— Գլուխդ կշարգեմ, յետ դարձիր, — գոռում էր կատաղած սպան դինվորի վրա, — յետ դարձիր քա անառակի հետ։

— Գարոն աղյուտանա, պաշտպանեցեք, Սա լինչ բան է, — ճչում էր բժշկի կինը։

— Թույլ տվեք այս սայլակն անցնի։ Չեք տեսնում միթե, վոր կին է, — ասավ իշխան Անդրեյը, ձին քշելով դեպի սպան։

Սպան նայեց նրան և, առանց պատասխանելու, կրկին դարձավ դինվորին։



— Յեւ քեզ ցույց կտամ... Եւտ...

— Թողք անցնի, ասում եմ, — կրկնեց իշխան Անդրեյը, չուրթերը սեղմելով:

— Իսկ դու ճի՞ ես վոր, — հանկարծ հարբածի մոլեղնութեամբ դարձաւ սպան նրան: — Դու ճի՞ ես վոր: Դու (նա առանձնապես չեղտում էր զու-ն) պետ ես, բնէ ես: Այստեղ պետը յեւ եմ և վաջ թե զու: Այ, յեւ դարձիր, — կրկնեց նա, — գլուխդ կշարդեմ: Այս արտասոյտութեան, ըստ յերեւոյթին, զուր եր յնկնլ սպային:

— Լալ չգրեց աղյուսանտիկին, — լալեց մի ձայն յետինը: Իշխան Անդրեյը տեսաւ, վոր սպան դտնվում է մի այնպիսի անտախթ մոլեղնութեան մեջ, յերբ մարդ չի իմանում թի՞նչ է ասում: Նա նկատեց, վոր իր միջամտութեանը՝ հոգուտ բժշկի կնոջ՝ բովանդակում է այն՝ ինչ ամեն բանից ալելի վախեցնում եր նրան, ինչ կոչվում է *ridicule*<sup>1</sup>. Բայց բնադղն ուրիշ բան եր ասում: Սպան վերջին բաւերը զու չեր վերջացրել, յերբ իշխան Անդրեյը, կատապութեանից այլափոխված զեմքով, մոտեցաւ նրան ու մըտ-բանը բարձրացրեց:

— Բարե-հաճեցեք թող-նել:

Սպան ձեռք թափ ալեց և հապճեպ հեռացաւ:

— Ամբողջ անկարգութեանը սրանց, այս շտաբականների յերեսից է, — փնթփնթաց նա: — Արեք ձեր ուղածի պես:

Իշխան Անդրեյը, առանց նայվածքը բարձրացնելու, շտապ հեռացաւ իրեն փրկիչ անվանող բժշկի կնոջ մոտից, զզվանքով հիշելով այս ստորացուցիչ տեսարանի մանրամասնութեանները, ու ձին քշեց դեպի այն դյուղը, ուր, ինչպես ասել էին, դտնվում եր զլիափոր հրամանատարը:

Դյուղ մտնելով՝ ձիուց իջաւ և զնաց առաջին սլատահած տունը՝ զեթ մի բողե հանդատանալու, վորեն բան ուտելու և այդ վիրավորիչ, տանջող մտքերը պարզելու մտադրութեամբ: «Սա սրիկաների ամբոխ է, և վոչ թե դաքք», մտածեց նա, մոտենալով առաջին սլատահած տան լուսամուտին, յերբ մի ծանոթ ձայն կանչեց նրան:

Նայեց և տեսաւ, վոր մի փոքրիկ լուսամուտից դուրս եր նայում Նեովիցիու գեղեցիկ գլուխը: Նեովիցիին, իր հյուսթեգ բերնով մի բան ծամելով ու ձեռները թափահարելով՝ կանչում եր նրան իր մոտ:

— Բալկոնակի՛, Բալկոնակի՛: Ձեռ լսում, ինչ է: Շուտ արի, — գտում եր նա:

<sup>1</sup> Ծիծաղելի:

Ներս մտնելով՝ իշխան Անդրեյը տեսավ Նեսվիցկուհւն և ուրիշ մի աղյուստանտ, վոր ինչ-վոր բան եյին ուստում Անմիջապէս դարձան Բալկոնսկուհւն, թե ճնոր բան չգիտի՝ արդո՞քք: Իշխան Անդրեյը նրանց ծանոթ դեմքերին կարգաց տաղնապի և անհանգստության արտահայտութիւն: Այդ արտահայտութիւնն ավելի նկատելի յեր Նեսվիցկու մշտածիծաղ դեմքին:

— Վորտեղ և գլխավոր հրամանատարը, — հարցրեց Բալկոնսկին:

— Այստեղ, այն տանը, — պատասխանեց աղյուստանտը:

— Հը, ճիշտ և հաշտության և անձնատուր լինելու լուրք, — հարցրեց Նեսվիցկին:

— Եկե ձեզ պիտի հարցնեմ: Վաչինչ չգիտեմ, բացի այն, վոր մեծ դժվարությամբ հասա ձեզ:

— Իսկ մեզ մոտ ինչ կա վոր: Սարսափելի յե մեր դրութիւնը: Մակի վրա ծիծաղում եյինք, իսկ մենք ավելի վատ դրության մեջ ենք ընկել, — ասավ Նեսվիցկին: — Դե, նստիր, մի բան կեր:

— Հիմա, իշխան, ել վոչ սայլ, վաչինչ չեք դտնի, իսկ ձեր Պյոտրն աստված գիտի ուր և, — ասավ մյուս աղյուստանտը:

— Գլխավոր կայանը վճրտեղ և:

— Գիշերելու յենք Յնայմում:

— Իսկ յես իմ իրերն այնպէս կապեցի, վոր յերկու ձիու քնո յեղավ, — ասավ Նեսվիցկին, — և լավ հակեր շինեցին: Գոնե Բոհեմայի լեռներով կարողանանք փախչել: Բաններս վատ և: Հը, ի՞նչ և պատահել, յերեի հիվանդ ես, վոր այդպէս դողում ես, — հարցրեց Նեսվիցկին, նկատելով վոր իշխան Անդրեյը սառսառաց:

— Վաչինչ, — պատասխանեց իշխան Անդրեյը:

Այդ բոպիւնի հիշեց քիչ ատաջ բժշկի կնոջ ու դումակի դեկավար սղայի միջև յեղած ընդհարումը:

— Ի՞նչ և անում գլխավոր հրամանատարն այստեղ, — հարցրեց նա:

— Բան չեմ հասկանում, — ասավ Նեսվիցկին:

— Եկե միայն մի բան եմ հասկանում, վոր այս բոլորը զգվելի յե, զգվելի, զգվելի, — ասավ իշխան Անդրեյը և գնաց այն տունը, ուր իջևանել եր գլխավոր հրամանատարը:

Կուսուղովի կառքի, շքախմբի անդամների հողնած ձիերի և իրար հետ բարձրաձայն խոսող կազակների մոտից անցնելով՝ իշխան Անդրեյը հաշտը մտավ: Ինքը Կուսուղովը, ինչպէս հայտնեցին իշխան Անդրեյին, դտնվում եր այս խոճիթում՝ իշխան Բադրատիւնի և Վեյրոտերի հետ: Վեյրոտերը սպանված Շմիտին փոխարինող ավատրիացի գննեբայն եր: Հաշտում վտիտ Կոլլով-

սկին տղղկ եր գրագրի տաջ: Գրագիրը շուռ տված փոքրիկ տա-  
կաթի վրա շատապ բան եր գրում: Թեքերը յետ ծալած: Կողովակու-  
ղեմքը տանջված եր յերևում: Համանորեն, նա նույնպես գիշերը  
չեք քնել: Նայեց իշխան Անդրեյին և զլիտով անդամ շրարեց:

— Յերկրորդ դիժը... Գրեցիր, — շարունակեց նա, գրագրին թե-  
լատելով: — Կիևի գրենագրեյան, Պողոսիկ...

— Շտապում եք, ձերդ բարձր ազնվութիւն, չեմ հասցնում, —  
պատասխանեց գրագիրը, առանց պատշաճ հարգանքի ու բարկա-  
ցած, նայելով Կողովակուն:

Այդ միջոցին դռան յետևից լսվում եր Կուսուղովի հուզված-  
գոգոն ձայնը, վորին ընդհատում եր մի ուրիշ, անծանոթ ձայն:  
Այդ ձայները շեշտերից, Կողովակու անուշադիր նայվածքից, տանջ-  
ված գրագրի անհարգայիր վերաբերմունքից և այն հանգաման-  
քից, վոր գրագիրն ու Կողովակին՝ զլիտովոր հրամանատարին այդ-  
քան մոտ նստել էին տակաթի կողքին, և՛ այն հանգամանքից,  
վոր ձիերի սանձը բռնած կազակները բարձրաձայն ծիծաղում էին  
տան լուսամտաթի տանջ, — այս բոլորից իշխան Անդրեյն զգում  
եր, վոր մի կարևոր ու զօրախա բան և պատահելու:

Իշխան Անդրեյը պահանջկոտ տոնով Կողովակուն դիմեց մի  
քանի հարցերով:

— Իսկույն, իշխան, — ասով Կողովակին: — Կարգագիրը Բազ-  
րատիոնն և լինելու:

— Իսկ անձնատուր լինելու լնդիբը:

— Այդպիսի բան չկա. կովելու կարգագրութիւններ են արված:  
Իշխան Անդրեյը դնաց դեպի այն դուռը, վորի յետևից ձայներ  
էին լսվում: Բայց այն բաղնիքն, յերբ նա ուզում եր դուռը բա-  
նալ, սենյակում ձայները լռեցին, դուռն ինքն իրեն բացվեց և  
Կուսուղովն իր լեցուն դեմքի արծվային քթով յերևաց շեմքին:  
Իշխան Անդրեյը կանգնել եր ուղիղ Կուսուղովի դիմաց. բայց  
զլիտովոր հրամանատարի տեսող միակ աչքի արտահայտութիւն-  
նից նկատելի չեր, վոր մտքերն ու հոգսերն այնպես են պաշարել  
նրան, վոր կարծես սքողել էին նրա տեսողութիւնը: Նա ուղիղ  
իր աղյուստանաթի դեմքին նայեց և նրան չճանաչեց:

— Հը, վերջացրիք, — դիմեց նա Կողովակուն:

— Այս վայրկյանիս, ձերդ բարձր գերազանցութիւն:

Բազրատիոնը, վոր միջահասակ, արևելյան տիպի պինդ ու ան-  
շարժ դեմքով, չորչորակ, տարիքոտ մարդ եր, դուռն յեկավ գըլ-  
խավոր հրամանատարի յետևից:

— Պատիվ ունեմ ներկայանալու, — կրկնեց բավական բարձր  
իշխան Անդրեյը, նամակը հանձնելով:

— Ա՛հ, Վեննայից: Լավ: Հետո, հետո:

Կուտուզովը Բաղրատիոնի հետ միասին ղուրս յեկավ դուռը:

— Ե, իշխան, դժեք բարե, — ասավ նա Բաղրատիոնին: — Քրիստոսը քեզ հետ: Որհնում եմ քեզ այդ մեծ գործի համար:

Կուտուզովի դեմքն անսպասելի մեղմացավ, և նրա աչքերում արցունք յերևաց: Նա ձախ ձեռով գրկեց, դեպ իրեն քաշեց Բաղրատիոնին, իսկ աջով, վորի վրա մատանի կար, խաչակնքեց նրան ու փափրիկ այտը դեմ արավ, վորի փոխարեն Բաղրատիոնը համբուրեց նրա վիզը:

— Քրիստոսը քեզ հետ, — կրկնեց Կուտուզովն ու մոտեցավ կողքին: — Նստի՛ր մոտս, — ասավ նա Բաղրատիոնին:

— Զեռդ բարձր դերադանցություն, կուզեյի այստեղ ողորակար լինել: Թույլ տվե՛ք իշխան Բաղրատիոնի ջոկատում մնալ:

— Նստի՛ր, — ասավ Կուտուզովը և, նկատելով, վոր Բաղրատիոնին զանդաղում է, — լավ սպաներ ինձ ել հարկավոր են, ինձ ել:

Նրանք կառք նստեցին և մի քանի բողե դնացին անխոս:

— Առաջներև դեռ շատ բան կա, դեռ շատ բան և լինելու, — ասավ նա ձերուհու խորաթափանց հայացքով, կարծես հասկանալով այն բոլորը, ինչ կատարվում է Բաղրատիոնի սրտում: — Յեթև վաղը՝ նրա զորաբանի դեթ մի տասերորդ մասը վերադառնա, յես շնորհակալ կլինեմ ասածուց, — ավելացրեց Կուտուզովը, կարծես ինքն իր հետ խոսելով:

Իշխան Անդրեյը նայեց Կուտուզովին, և ակամա նրա աչքովն ընկավ Կուտուզովի, իրենից՝ (Անդրեյից) կես արշին հեռու դաշվող քուռքի մաքուր լվացված սպին (վորտեղից Իդմայիլյան զնդակը ծակել էր նրա գլուխը), և թափված աչքը: «Այո, սա իրավունք ունի մարդկանց մահվան մասին այսպես հանդիսա խոսելու», մտածեց Բաղրատիոնին:

— Այդ իսկ պատահառով խնդրում եմ ինձ այդ զորաբանին ուղարկել, — ասավ նա:

Կուտուզովը չպատասխանեց: Նա կարծես մոտացել էր ասածը, և նստել էր մաքրի մեջ խորասուզված: Հինդ բողե անց, կառքի փափուկ զսպանակների վրա մեղմ որորվելով, Կուտուզովը դարձավ իշխան Անդրեյին: Նրա դեմքին այլևս հուզումի հետք չկար: Նուրբ հեղնանքով հարձուփորձ արավ իշխան Անդրեյին՝ կայսեր հետ ունեցած տեսակցության մասին, նաև թե ինչ կարծիքներ է լսել արքունիքում Կրեմսի կովի մասին. ու վերջում հետաքրքրվեց մի քանի ընդհանուր ծանոթ կանանցով:

## XIV

Կուսուղոյն իւր լրտեսի միջոցով նոյեմբերի 1-ին մի այնպիսի լուր առաջ, վորն իւր հրամանատարութեան տակ դռնվող բանակը գնում եր գրեթե անկ կացութեան մեջ: Լրտեսը հայտնում եր, թե Ֆրանսացիք ահադին զորքով, Վեննայի կամուրջն անցնելով, գնացին գեպի Կուսուղոյի և Ռուսաստանից յեկող զորքերի հաղորդակցութեան ճանապարհը քանկելու: Յեթե Կուսուղովը վորոշեր մնալ Կրեմում, այդ գեպքում Նապոլեոնի հարյուր հիսուն հազարանոց բանակը կկտրեր նրան ամեն տեսակի հաղորդակցութունից, կըջատատեր նրա քառասուն հազարանոց հյուծված բանակը և նա կընկնէր այն դրութեան մեջ, ինչ դրութեան մեջ ընկավ Մակը՝ Ուլմի մոտ: Յեթե Կուսուղովը վորոշեր թողնել Ռուսաստանից յեկող զորքերի հետ կապվելու ճանապարհը, այդ գեպքում ստիպված պիտի լինէր քաշվել կանոնավոր ճանապարհներից զուրկ Բոննայան լեռների անձանոթ աշխարհը, պաշտպանվելով գերադանոց ուժեր ունեցող թշնամուց, ու պետք է թողներ Բուկոգեղենի հետ կապվելու ամեն մի հույս: Յեթե Կուսուղովը վորոշեր նահանջել Կրեմսից Ուլմուց տանող ճանապարհով՝ Ռուսաստանից յեկող զորքերի հետ միանալու, այդ գեպքում նա պիտի հանդիպէր Վեննայի կամուրջն անցած Ֆրանսական զորքին և այսպիսով ստիպված պիտի լինէր կովիլ յերթի ժամանակ, բոլոր տեսակ ծանրութեաններն ու վտանակը հետը, զորք ունենալով յերեք անգամ իրեն գերադանոցող և յերկու կողմից իրեն շրջապատող հակառակորդի հետ:

Կուսուղոյն ընտրեց այս վերջին յեղը:

Ձրանոցիք, ինչպես լրտեսն եր հայտնում, Վեննայի կամուրջն անցնելով, ամենայն արագութեամբ գնում եյին գեպի Յնայմ, վորն ընկած եր Կուսուղոյի նահանջի ճանապարհին, նրանից ավելի քան հարյուր վերստ առաջ: Յեթե Ֆրանսացիներից շուտ Յնայմ հասնէր — նշանակում է կարող եր լրահույս լինել, վոր բանակը կկրկնէ, իսկ յեթե Ֆրանսացիք կանխեյին իրեն, նրանք շուտ հասնէյին Յնայմ — նշանակում է բանակը յենթարկել խայտառակութեան կամ ընդհանուր կորստի: Բայց չեր կարող ամբողջ բանակով Ֆրանսացիներից շուտ տեղ հասնել: Անհնարին եր: Ձրանոցիքների ճանապարհ Վեննայից մինչև Յնայմ ավելի կարճ եր ու լավ, քան ռուսների ճանապարհ — Կրեմսից Յնայմ:

Լուրն ստանալու գիշերը Կուսուղովը՝ Բադրատիոնի չորս հազարանոց առաջապահ զորքը լեռների վրայով, Կրեմ-Յնայմի ճանապարհից, ուղարկեց գեպի Վեննա-Յնայմ ճանապարհը: Բադրատիոնն առանց հանդիստ առնելու պիտի անցներ այդ ճանապարհ ու կանգ

առնելու յերեսը դեպի Վեննա, թիկունքը դեպի Յնայմ, և յեթե հաջողեալ կանխել ֆրանսացիներին, նա պետք և զբաղեցնելու, կտրել նրանց ճանապարհը, վորքան կարող եր: Իսկ ինքը Կուտուզովը՝ ամբողջ բանակով, հրետանիով ու զուսակով շարժվեց դեպի Յնայմ:

Բաղցած ու բարիկ զինվորներով, առանց ճանապարհի, լեռների վրայով, փոթորկալի դիշերովս մեջ քառասունհինգ վերստ կտրելով, զորարարածն մի յերրորդը ուժասպառ ճամպին թողնելով, Բաղրատինը զուստ յեկավ Գոլլարուն՝ Վեննա-Յնայմի ճանապարհը՝ ֆրանսացիներէից մի քանի ժամ առաջ, վորոնք Գոլլարունին մոտենում էին Վեննայի կողմից: Կուտուզովը դեռ մի ամբողջ սը ու դիշեր պիտի գնար, վոր Յնայմ հասնելու, ուստի և, բանակը փրկելու համար, Բաղրատինը շարս հաղար քաղցած, հալից ընկած զինվորներով պետք և պահել, զիմադրավեր ֆրանսական բանակը, ինչ-վոր, անհնարին բան եր: Բայց տարրերնուկ ճակատադիւրը անհնարինը զարձրեց հնարավոր: Այն խարեյու թյան աջոպությունը, վորով ֆրանսացիք ձեռք գցեցին Վեննայի կամուրջը, զրդեց Մյուլրատին փորձել՝ խարեյու նույնպես և Կուտուզովին: Մյուլրատը Յնայմի ճանապարհին հանդիպելով Բաղրատինի թույլ զորարարածին, կարծեց թե՛ զա Կուտուզովի ամբողջ բանակն և: Վորպեսզի բոլորովին շարքի այդ բանակը, սպասեց Վեննայի ճանապարհին յետ մնացած զորքի գալուստ և այդ նպատակով յերեք որովս զինադադար առաջարկեց, պայմանով, վոր յերկու կողմի զորքերը չփոխեն իրենց դիրքերը և չշարժվեն իրենց տեղերից: Մյուլրատը հաժատացնում եր, թե արդեն հաշտության բանակցություններ են տեղի ունենում և այդ իսկ պատճառով, անողուտ արյունհեղությունից խուսափելու համար, զինադադար և առաջարկում: Ավստրիական զենքերալ կամ Նոստիցը, վոր բռնել եր առաջապոստերը, հավատաց Մյուլրատի բանակցողի խուսերին և յետ քաշվեց, բանալով Բաղրատինի զորարարածն ճակատը: Մի ուրիշ բանակցող գնաց ուստական զորաշղթան՝ նույնը հայտնելու և յերեք որով զինադադար առաջարկելու: Բաղրատինը պատասխանեց, վոր ինքը չի կարող ընդունել կամ չընդունել զինադադարը, և իր առյուտանտին ուղարկեց Կուտուզովի մոտ՝ այդ առաջարկն մասին հայտնելու:

Զինադադարը Կուտուզովի համար միակ միջոցն եր ժամանակ շահելու, Բաղրատինի ուժասպառ զորարարածին հանդիստ տալու, պոսակն ու հրետանին (վորոնց շարժումը ֆրանսացիները չէին կարող տեսնել) մի ավելորդ որով դեպի Յնայմ տանելու: Զինադադարի առաջարկը բանակը փրկելու միակ և անսպասելի հնարավորությունն եր: Այս լուրն առնելով Կուտուզովն անմիջապես իր մոտ գտնվող զենքերալ-ադյուտանտ Վինցենհերոգին թշնամու բա-



նակն ուղարկեց: Վինցենսերոզեն վաշ միայն դինադադարը պիտի ընդունեն, այլև անձնատուր լինելու պայմաններ պիտի առաջարկեն, իսկ մինչ այդ Կուսուղովն իր աղյուսանտներին յետ ուղարկեց՝ շտապեցնել, վորքան նաբավար է, ամբողջ բանակի և զուժակի շարժումը Կրեմ-Մենայի մանապարհով: Բազրատինն ուժասպաս, քաղցած զորարածինը մենակ պետք է քողարկելը ամբողջ զուժակի ու բանակի շարժումը և անշարժ կենար ու թ անզամ ավելի ուժեղ հակառակորդի դիմաց:

Կուսուղովի սպանելիքներն իրականացան, ինչպես անձնատուր լինելու առաջարկի նկատմամբ, վոր վաշնչի չէր պարտավորեցնում, քայց ժամանակ եր տալիս զուժակի վորոշ մասին անցնելու, նույնպես և այն բանի նկատմամբ, վոր Մյուրատի սխալը շատ շուտով պիտի պարզվի: Հենց վոր Բանապարտը (վոր դանվում եր Շենբրունում, Գոլլարբունից 25 վերստ հեռու) ստացավ Մյուրատի տեղեկագիրը և դինադադարի ու անձնատուրթյան նախադիժը, նա հասկացավ խաբելու իշունը և հետևյալ նամակը գրեց Մյուրատին.

Au prince Murat. Schoenbrunn, 25 brumaire  
en 1805 à huit heures de matin.

«Il m'est impossible de trouver des termes pour vous exprimer mon mécontentement. Vous ne commandez que mon avant-garde et vous n'avez pas le droit de faire d'armistice sans mon ordre. Vous me faites perdre le fruit d'une campagne. Rompez l'armistice sur le champ et marchez à l'ennemi. Vous lui ferez déclarer, que le général qui a signé cette capitulation, n'avait pas le droit de le faire, qu'il n'y a que l'Empereur de Russie qui ait ce droit.

«Toutes les fois cependant que l'Empereur de Russie ratifierait la dite convention, je la ratifierai; mais ce n'est qu'une ruse. Marchez, détruisez l'armée russe... vous êtes en position de prendre son bagage et son artillerie.

«L'aide de camp de l'Empereur de Russie est un... Les officiers ne sont rien quand ils n'ont pas de pouvoirs: celui-ci n'en avait point... Les Autrichiens se sont laissé jouer pour le passage du pont de Vienne, vous vous laissez jouer par un aide de camp de l'Empereur.

Napoléon<sup>1</sup>.

<sup>1</sup> Իշխան Մյուրատին. Շենբրուն, 25 Բրյումերի 1805 թվի.

առաջնայն ժամը 8-ին.

«Ճիտք չեմ գտնում զգործությունս ևեդ հայտնելու ձեր հրամանատարության ներքո յե գտնվում միայն իմ առաջապահը և իրավունք չունեք, առանց իմ հրամանի, զինադադար կնքել: Դուք ստիպում եք ինձ պատերազմի արդյունքը



Նապոլեոնի աղյուստանալը, ձին սրաբշավ քշելով, այս ահարկու նամակը տարավ Մյուլրատին: Ինքը Բոնապարտը, իր գեներալներին նվառահելով, ամբողջ զվարդիան շարժեց գեպի կովի դաշտը, վախենալով ձեռից թողնել պատրաստի զոհը, իսկ Բաղրատիոնի 4000-ոց զորաբաժինը, ուրախ-զվարթ խաբուկյններ վառած, չորացնում էին իրենց հագուստները, տաքանում էին, յերեք օրից հետո առաջին անգամ քաշովի էին յեփում, և զորաբաժնի զինվորներից վոչ-վոր չգիտեր և չեր մտածում, թե ինչ է ապաստում իրեն:

## XV

Իշխան Անդրեյը պնդելով իր խնդրի վրա և Կուսուղովից թուլլալով թյուր ստանալով յերեկոյան մամը չորսին յեկավ Գրուշա և ներկայացավ Բաղրատիոնին: Բոնապարտի աղյուստանալը տակավին չեր հասել: Մյուլրատի զորաբաժինը, ու կոիվը զեռ չէր սկսվել: Բաղրատիոնի զորաբաժնում գործերի ընդհանուր ընթացքի մասին վոչինչ չգիտեին, խոսում էին հաշտության մասին, բայց չէին հավատում դրա կարելիության: Մտում էին կովի մասին և նույնպես չէին հավատում, թե շուտով կարող և կովի լինել: Բաղրատիոնը, Բալկոնակում ճանաչելով վարպետ սիրված ու վառահեղի աղյուստանի, ընդունեց նրան առանձին պառվով, բացատրեց, վոր այսօր կամ վաղը կսկսվի կոիվը, և լիակատար ադատություն տվեց նրան՝ կովի ժամանակ իր մոտ լինել կամ վերջապահ մասերում հսկել նահանջի կաշնամուրում: Եվ օրը, նույնպես շատ կարեւոր է:

— Բայց այսօր, հավանորեն, ընդհարում չի լինի, — ասավ Բաղրատիոնը, կարծես իշխան Անդրեյին հանդատացնելով:

«Յեթե սա շտարի սովորական ֆորմաներից մեկն է, վոր ուղարկվել է ինչ ստանալու, այդ դեպքում նա վերջապահում էլ պարզեւ կստանա, իսկ յեթե ուղղում է ինձ մոտ լինել, թող մնա... կհարկավորվի, յեթե քաջ սպա յեւ, մտածեց Բաղրատիոնը: Իշխան

կորցնել Անձիջադե խախտեցը զինագողարը և հորձակվեցը թշնամու վրա: Հայտնեցը նրան, թե անձնատուրթյունը ստորագրող գեներալը այդ իրավունքը չունի, և վոչ-վոց չունի, բայց ուստական կայսրից:

«Սակայն, յեթե Ռուսաստանի կայսրը համաձայնի հրչալ պայմաններին, յես նույնպես կհամաձայնեմ: Բայց դա վոչ այլ ինչ է, յեթե վոչ խորամանկություն: Գնացեք, վոչնչացրեք ուստական բանակը... Գուց ի վիճակի յեք վերցնել նրա գումակը և հրետանին Ռուսական կայսեր գեներալ-աղյուստանալը—մեկն է... Սպանեքը արժեք չունեն, յերե իշխանություն չունեն: Նա նույնպես իշխանություն չունի... Ավստրիացիք խաբվեցին Վեննայի կամուրջը տվին, հիմա մեզ խաբում և կայսեր մի աղյուստանալ:

Նապոլեոնը:

Անդրեյը, վաչինչ չպատասխանելով, թույլտվութիւն լեռդրեց՝ դնալ դրօքերը և ծանոթանալ զորքերի դասավորութեանը, վերադեպի, հանձնարարութեան դեպքում, իմանա ուր և դնում: Զորաբաժնի հերթապահ սպան, վոր լավ հազնված սիրուն տղամարդ էր և ցուցամատիւն աղամանդայ մատանի՝ ունէր, վոր ֆրանսերեն խոսում էր վատ, բայց մեծ սիրով, ցանկութեան հայտնեց առաջնորդել իշխան Անդրեյին:

Ամեն կողմ յերևում էին թրջված, տեւեր դեմքով սպաներ, վոր ինչ-վոր մի բան էին վորոնում կարծես, և զինվորներ, վոր դուզերից քաշ տալով բերում էին զոնէր, նստարաններ և ցանկապտախ մասեր:

— Ահա, իշխան, չենք կարողանում ազատվել այս ժողովրդից, — ասով բարձրակա սպան, զինվորներին ցույց տալով: — Հրամանատարներն են թույլատրում: Իսկ այստեղ ահա, — մատնացույց արալ նպարաւաճառի վրանը, — հովաքովել, նստել են: Այս առավոտ բուրին քշեցի. բայց, տեսեք, դարձյալ լիքն է: Պետք է մոտենալ, իշխան, և վախեցնել զոննց: Այս բողբոջա:

— Գնանք միասին, յես ել պանիր ու հաց կվերցնեմ, — ասով իշխան Անդրեյը, վոր դեռ չէր կարողացել մի բան ուտել:

— Հաղա ինչու չեյիք ասում, իշխան: Յես իմ աղուհացը կառաջարկեյի ձեզ:

Նրանք ձիերից իջան ու մտան նպարաւաճառի վրանը: Կարմրած ու հազնած դեմքերով մի քանի սպաներ՝ սեղանների շուրջը նստած, սւտում-խմում էին:

— Հը, սա ինչ բան է, պարոններ, — ասով բարձրակա սպան հանդիմանանքի տոնով, վորպես մի մարդ, վոր միեկուս ընդ տակ և մի քանի անդամ: — Ձե՛ վոր այսքան բացակայել չի կարելի: Իշխանը հրամայեց, վոր վոչ-վոք չմնա այստեղ: Այ դուք, որինտի, պ. փոխ-կապիտան, — դարձաւ նա փոքրամարմին, կեղտոտ, նիհար թնդանոթաձիգ սպային, վորն առանց կոշիկներ (զրանք չորացնելու համար տվել էր նպարաւաճառին), դուլպաներով կանգնեց ներս մտնողների առջև, փոքր ինչ անբնական ժպտալով:

— Ե, ինչպես դուք, կապիտան Տուշին, չե՞ք ամաչում, — շարունակեց բարձրակա սպան, — դուք, վորպես թնդանոթաձիգ, պետք է վոր, որինտի ցույց տայիք, բայց ինքներդ առանց կոշիկի յեք: Հանկարծ տալնապի փող հնչեցնեն, և դուք առանց կոշիկի հիանալի կլինեք: (Բարձրակա սպան ժպտաց): Բարեհաճեցեք ձեր տեղերը դնալ, պարոններ, բոլորդ, բալորդ, — ավելացրեց նա իշխանաւորի շեշտով:

Իշխան Անդրեյը, կապիտան Տուշինին նայելով, ակամա ժպտաց։ Տուշինն, անխոս, ժպտալով, բորիկ վոտը վոտի վրա դնելով, իր խոշոր, խկնացի ու բարի աչքերով հարցական նայում եր մերթ իշխան Անդրեյին, մերթ բարձրակա-սպային։

— Ջինվորներն ասում են՝ բորիկ մարդն ավելի ճարպիկ է լինում, — ասավ կապիտան Տուշինը, ժպտալով ու ամաչելով, կամենալով, ըստ յերևույթին, իր անհարմար զրույթյունից զուրս դալ կատակով։

Բայց խոսքը դեռ չվերջացրած՝ զգաց, վոր իր կատակը չընդունվեց, ուստի շփոթվեց։

— Բարեհաճեցեք զնալ, — ասավ բարձրակա սպան, աշխատելով լրջությունը պահել։

Իշխան Անդրեյը մի անգամ ևս նայեց թնդանոթաձիգ սպայի կերպարանքին։ Նա մի առանձնահատուկ, վաղ բուրրովին զինվորական, փոքր ինչ կամիկական, բայց անշուք զրավիչ տեսք ուներ։

Բարձրակա սպան ու իշխան Անդրեյը ձիերը հեծան ու դնացին առաջ։

Դյուդից դուրս դալով, անդադար հանդիպելով զնացող յեկող՝ տարրեր վաշտերի զինվորների ու սպաների, նրանք ձախ կողմի վրա տեսան նոր փորված ու նոր շինվող կարմրին տվող ամրություններ։ Մի քանի զուամարտակ զինվորներ, չնայած սառը քամուն, շապկանց, սպիտակ մրջյունների նման, շարժվում էին այդ ամրությունների վրա. հողաթմբի այն կողմից աներևույթ մեկը անդադար կարմիր կավ եր դուրս ածում։ Նրանք մոտեցան այդ ամրություններից մեկին, նայեցին ու շարունակեցին իրենց ճամպան։ Հենց ամրության յետևը հանդիպեցին մի քանի տառնյակ զինվորների, վորոնք անդադար փոխվում, դուրս էին վազում ամրությունից։ Նրանք ստիպված էին քիթները բռնել և ձիերը քշել արագ, վորպեսզի շուտ հեռանան այդ թունալուրված մթնոլորտից։

— Voilà l'agrement des camps, monsieur le prince<sup>1</sup>, — ասավ հերթապահ բարձրակա սպան։

Նրանք դիմացի սարը բարձրացան։ Այդ սարից արդեն ֆրանսացիք յերևում էին։ Իշխան Անդրեյը կանգ առավ ու սկսեց զիտել։

— Այնտեղ ահա մեր մարտկոցն է, — ասավ բարձրակա սպան, ցույց տալով սարի ամենաբարձր կետը, — հենց այն տարրերնակ սպայի մարտկոցը, վոր առանց կոշիկ նստել եր. այնտեղից ամեն բան յերևում է. դնանք, իշխան։

<sup>1</sup> Անսովորիկ բանակային կյանքի բավականությունը, իշխան։

— Խորապես շնորհակալ եմ, հիմա մենակ կերթամ, — ասավ իշխան Անդրեյը, ցանկանալով աղատվել բարձրակա սպայից, — մի անհանգստանաք, խնդրեմ:

Այսան կանդ առավ, և իշխան Անդրեյը մենակ շարունակեց ճանապան:

Վորքան առաջ եր զնոււմ դեպի թշնամին, այնքան ավելի կանանավոր և զվարթ եյին յերևում զինվորները: Կատարյալ անկարգութեան և վնասութեան եր տիրում այն դումակի մեջ, վոր առավոտյան հանդիպեց իշխան Անդրեյը Յնայի մօտ և վորը տասը վերստ հեռու յեր զանվում Ֆրանսացիներից: Գրունտում նույնպես ինչ-պար տաղնայ ու յերկաղ եր զգացվում: Բայց վորքան ավելի յեր մտնեաւ իշխան Անդրեյը Ֆրանսական զորաշղթային, այնքան ավելի ինքնավատան եր յերևում մեր զորքը: Շարք կազմած կանգնել եյին զինվորները շինելներով, և վերական ու վաշտապետը համրում եյին նրանց, մատը դեմ անելով ջոկի ծայրին կանգնած զինվորի կրծքին, հրամայելով, վոր նա ձեռք բարձրացնի: Գնդած ամբողջ տարածութեան վրա՝ զինվորները փայտ ու խոփ եյին կրում և հալիկներ շինում, ուրախ-զվարթ ծիծաղելով ու խոսակցով: Խառնակներ շուրջը նստած եյին հագնված ու մերկ զինվորներ, վորանք չորացնում եյին իրենց շապիկները, վորս փաթաթանները կամ կարկատում եյին կոշիկներն ու շինելները: Վոմանք ել խմբվել եյին կերակրի կաթսաների ու խոհարարների շուրջը: Մի վաշտում ճաշն արդեն պատրաստ եր, և զինվորներն ազան դեմքերով նայում եյին գոլորշի արձակող կաթսաններն ու սպասում փորձնական բամբին, վոր մթերապանը փայտե ամանով տարավ-տվեց իր հոլիկի առջև դերանին նստած սպային:

Մի ուրիշ, ավելի յերջանիկ վաշտում (վորովհետև բոլորը ողի չուներին) զինվորները խմբված կանգնել եյին ծաղկաառար դեմքով լայնաթիկունք վերակայի շուրջը, վորը, տակառիկը ծռելով, հերթով ողի յեր լցնում տակառի տակ զրովող ջրամանների խուփերի մեջ: Զինվորները բարեպաշտ դեմքերով ողին տանում եյին դեպի շուրթները, ամանը դատարկում և, բերանները վողողելով ու շինելի թիքերով սքրվելով, զվարթացած դեմքերով հեռանում վերակայից: Բոլոր դեմքերն այնքան հանդիստ եյին, կարծես այդ բոլորը կատարվում եր վոչ թե թշնամու դիմաց, Կովից առաջ (ուր զորաբամբի կեսը պիտի մնար անշունչ փոված), այլ հայրենիքում հանդիստ կայանի սպասելիս: Անցնելով յեղբրյան դուռը, իշխան Անդրեյը Կիևի գրենագրւյան դորքի մեջ մտավ, ուր զինվորները նույն խաղող զործերով եյին զբաղված: Զնդի հրամանատարի բարձր, մյուսներից տարբերվող հոլիկից քիչ հեռու, նա մտնեցավ

գրենադերները մի զասակի, վորոնց առջև պահուած եր մի մերկացրած մարդ։ Յերկու զինվոր բռնել էյին նրան, իսկ ուրիշ յերկուսը զալար ճիպտոներով խփում էյին նրա բաց մեջքին։ պատմվողը ճշուժ եր անընակա՛ն ձայնով Դեր մայորը գնում-գալիս եր ֆրոնտի առջև ու, ճիշերին ուշադրութեան չզարձնելով, ասում եր միայլար։

— Զինվորի համար խայտառակութեան և զոգութեան անկը։ զինվորը աղնիվ, վեհանձն ու քաջ պիտի լինի։ իսկ յեղբորից զոգութեան անողը անազնիվ և սրիկա յե։ Դարձյալ, ելի։

Յեզ լավում էյին ճկուն հարվածներ ու հուսահատ, բայց կեղծ ճիշեր։

— Ելի, ելի, — ասում եր մայորը։

Մի յերիտասարդ սպա՝ տարակուսանքի ու տանջանքի արտահայտութեանը ղեմքին, հեռացավ պատմվողից, հարցական նայելով մոտից անցնող աղյուսանտին։

Իշխան Անդրեյը, առաջավոր գիծը դուրս դալով, գնաց ֆրոնտով։ Մեր և թշնամու զորաշղթաները թե աջ, թե ձախ թևերի վրա դառնում էյին իրարից հեռու, իսկ մեջտեղը, այնտեղ, ուր առավոտը բանադնացներ յեկան, զորաշղթաներն այնքան էյին մոտեցել իրար, վոր կարող էյին միմյանց յերես տեսնել ու խոսակցել։ Այգտեղ, զինվորներից բացի, թե այս, թե այն կողմը, հավաքվել էյին շատ հետաքրքիրներ, վորոնք, ծիծաղելով նայում էյին տարորինակ ու իրենց համար ոտարոտի հակառակորդներին։

Վաղ առավոտից, չնայած զորաշղթային մոտենալու արգելքին, վաշտապետերը չկարողացան հետաքրքիրներից ազատվել։ Զինվորներն այլևս ֆրանսացիներին չէյին նայում, այլ դիտում էյին այդ այցելուներին և, ձանձրութեամբ սպասում հերթափոխութեան։ Իշխան Անդրեյը կանգ առավ ֆրանսացիներին նայելու։

— Տես, տես, — ասում եր մի զինվոր իր ընկերաջը, ցույց տալով մի հրացանակիր ռուս զինվորի, վոր սպայի հետ մոտեցավ զորաշղթային և սկսեց արագ ու տաք-տաք խոսել ֆրանսացի գրենադերի հետ։ — Տեսնում ես վոնց ա վրա տալի։ Ֆրանսուզը յետևից չի կարում հասնի։ Դե, դու յե խոսի, Սիգորով։

— Կաց, լսի։ Ինչ լավ ա խոսում, — ասավ Սիգորովը, վոր ֆրանսերեն լավ խոսող եր համարվում։

Զինվորը, վորին մատնացույց էյին անում ծիծաղելով, Դալթոնիլն եր, Իշխան Անդրեյը ճանաչեց նրան ու ականջ դրեց նրա խոսակցութեան։ Դալթոնիլն իր վաշտապետի հետ զորաշղթան եր յեկել ձախ թևից, ուր դառնում եր նրանց դուռդը։

— Հը, շարունակի, շարունակի, — խրախուսում եր վաշտի հրամանատարը՝ առաջ թեքվելով և ջանալով բաց չթողնել իրեն ան-

հասկանալի և զոչ մի բառ: — Խնդրեմ, շուտ-շուտ: Ի՞նչ և ասում:

Դոլոխովը չէր պատասխանում վաշտի հրամանատարին. նա ամբողջովին տարված էր իր տաք վիճարանությամբ: Նրանք խոսում էին, ինչպես և պետք և լինելը, կոպի մասին: Փրանսացի զբոնադերսն ապացուցում էր, ավտորիացիներին ոռւանների հետ շփոթելով, թե ոռւաններն անձնատուր են յեղել և փախել հենց Ուլմի մոտից: Դոլոխովն ապացուցում էր, թե ոռւաններն անձնատուր չեն յեղել, այլ չարդել են ֆրանսացիներին:

— Այստեղ ել հրամայեն՝ քշել ձեզ, կքշենք, — ասում էր Դոլոխովը:

— Աշխատեցեք միայն, վոր ձեզ բոլորիդ զերի չվերցնենք ձեր բոլոր կադակները հետ միասին, — ասում էր ֆրանսացի-զբոնադերսը:

Ունկնդրող ֆրանսացիները ծիծաղեցին:

— Ձեզ կստիպենք պարել, ինչպես Սուվորովի ժամանակ պարեցիք, — ասավ Դոլոխովը:

— Qu'est-ce qu'il chante?<sup>1</sup> — ասավ մի ֆրանսացի:

— De l'histoire ancienne<sup>2</sup>, — ասավ մի ուրիշը, զլխի ընկնելով, վոր խոսքը վերաբերում է նախկին պատերազմներին: — L'Empe-  
reure va lui faire voir à votre Souvara, comme aux autres...<sup>3</sup>

— Բանապարտը... — սկսեց Դոլոխովը, բայց ֆրանսացին ընդհատեց նրան:

— Բանապարտ չկա, այլ կա կայսր! Sacré mon<sup>4</sup>... Բղավեց ֆրանսացին բարկացած:

— Դրողը տանի ձեր կայսեր, — և Դոլոխովն ոռւաններն, կոպիտ, զինվորավորի հայհայելով, հրացանն ուսը քցելով՝ հեռացավ:

— Գնանք, Իվան Լուկիչ, — ասավ նա վաշտի հրամանատարին:

— Այ եղպես կխոսեն ֆրանսուզներն, — ասին զինվորները: — Գե, զոչ յեկ, Սիգորով, սկսի:

Սիգորովն աչքով արավ և, ֆրանսացիներին դառնալով, սկսեց շուտ-շուտ իրար յետևից անհասկանալի բառեր ասել:

— Կարի, մալա, տաֆա, սաֆի, մուտեր, կասկա, — բլբլացնում էր նա, աշխատելով արտահայտիչ շեշտեր տալ ձայնին:

— Հո, հո, հո. հա, հա, հո... Ուհ ու ու ժ... — հնչեց առողջ և ուրախ քրքրի մի այնպիսի վորոտ, վորն ակամա վարակեց և ֆրանսացիներին, վորից հետո պետք էր, թվում է, հրացանները

<sup>1</sup> Դա ինչ և յերգում:

<sup>2</sup> Հնագարյան պատմութուն:

<sup>3</sup> Կայսրը ձեր Սուվորովն ել ցույց կտա, ինչպես և մյուսներին:

<sup>4</sup> Դրողը տանի:



դատարկեային, լիցքերը պայթեցնեային ու բուրբը ցրվեային իրենց տները:

Բայց հրացանները լցված ֆնացին, հրակնատները տներում ու ամբուխուներում առաջվա պես սպառնալից նայում էյին իրար և առաջվա պես իրար դեմ էյին ուղղված թնդանոթները:

## XVI

Ջորգերի բռնած ամբողջ գիծը՝ աջ թևից մինչև ձախն անցնելով՝ իշխան Անդրեյը բարձրացավ այն մարտկոցը, վարտեզից, բարձրակա սպայի ասեղով, յերևում եր ամբողջ դաշտը: Այստեղ նա ձիուց իջավ ու կանգ առավ քարշակներից վերցրած չորս թնդանոթներից վերջինի մաս: Թնդանոթների առջև գնում-դալիս եր հերթադահ-թնդանոթաձիգը, վոր ուղեց ձգվել-պատիվ տալ սպային, բայց վերջինի նշանի վրա՝ վերսկսեց իր համաշարի, տաղանկալի յերթևեկությունը: Հրանոթների յետև ընկած էյին քարշակները (передки), իսկ դրանց յետևը, ափելի հեռու գտնվում էյին ձիակապարանը և թնդանոթաձիգների խարույկները: Զախ կողմը, ծայրի թնդանոթից վոչ հեռու գտնվում եր դալար ճյուղերից հյուսած մի հովիկ (шалаш), վարտեզից սպանների աշխույժ ձայններ էյին լսվում:

Արդարև, մարտկոցից յերևում եր ոռւսական զրեթև ամբողջ դորքը և հակառակորդի դորքի մեծ մասը: Մարտկոցի ճիշտ դեմը, գիմացի բլրի հորիզոնի վրա նշմարվում եր Շենդրաբեն գյուղը: Ափելի ձախ և ափելի աջ, յերեք տեղ, խարույկների ձխի մեջ կարելի յեր նկատել ֆրանսական դորքի բաղմունքունը, վորի մեծ մասը, հավանորեն, գտնվում եր գյուղում և սարի յետևը: Դյուղից դեպի ձախ, ծխի մեջ, մարտկոցի նման մի բան եր յերևում, բայց հասարակ աչքով դժվար եր ջուկել Մեր ձախ թևը տեղավորված եր մի քավական զատիվեր բարձրության վրա, վոր իշխում եր ֆրանսական դիրքերին: Այդտեղ եր մեկ հետևակը, իսկ ծայրին յերևում էյին զրադոնները: Կենտրոնում, ուր գտնվում եր Տուշինի մարտկոցը և վարտեզից իշխան Անդրեյը գիտում եր գիրքերը, ամենաթեք զատիվայրն եր և ուղիղ վայրենջը դեպի գետակը, վորը մեղ բաժանում եր Շենդրաբենից: Դեպի ձախ մեր դորքերը հասնում-միանում էյին անտառին, մեր ձխում էյին մեր, վայլ կտրող հետևակի խարույկները: Ֆրանսական դիժը մերից ափելի ընդարձակ եր, և պարզ յերևում եր, վոր ֆրանսացիք հեշտությամբ կարող էյին յերկու կողմից մեր թիկունքն անցնել: Մեր գիրքերի յետևը գտնվում եր մի զատիվայր ու խոր ձոր, վորով հրետանու և հեծելազորի համար շատ դժվար կլիներ նահանջել:



Իշխան Անդրեյը, ինդանոթին կրթնելով և ծոցառետրը հանելով, սկսեց զենել իր համար դուրքերի զսասվորումը։ Յերկու տեղ մատիտով նշան արելով, մտադրվելով դրանց մասին հայտնել Բաղրատարներին։ Յենթագրում եր՝ նախ, ամբողջ հրեականին կենտրոնացնել մեջտեղը և, յերկրորդ, հեծեալադուր տանել յետ, ձորի այն կողմը։ Իշխան Անդրեյը միշտ գլխավոր հրամանատարի մոտ դարձնվելով, դուրքի շարժումներին և ընդհանուր կարգադրություններին հետևելով և շարունակ պատերազմների պատմական նկարագրություններ կարգադրով, այս աստիճակա նահատաժարտի սպառաշնթուղը նույնպես՝ ակամա պատկերացնում եր ընդհանուր զենքով։ Նա պատկերացնում եր լուկ հետևյալ խաչոր պատահականությունները։ Եթե թշնամին հարձակում դարձի աջ թևի վրա, — ասում եր նա ինքն իրեն, — Երեյան գրենադերյան և Պողոսյան յեղեբայան դարձառետրն ստիպված պիտի լինեն իրենց զիրքերը պահել այնքան, մինչև վոր կենտրոնի ուժանդակ մասերն աղետալթյան հասնեն։ Այդ դեպքում գրադոնները կարող են հարձակվել թևի վրա և յետ մղել նրանց։ Իսկ կենտրոնի վրա հարձակվելու դեպքում՝ մենք այս բարձրություն վրա կդնենք կենտրոնական մարտկոցը և նրա պաշտպանություն տակ՝ ձախ թևը յետ կգաշենք ու շարաններով (հեղին) կհահանջենք զեպի ձորը, մտածում եր նա ինքն իրեն։

Մտախոսում, ինդանոթի մոտ դառնված ժամանակամիջոցում նա շարունակ լսում եր հուլիկում գրուցող սպանների ձայնը, բայց նրանց ասածների վոչ մի բառը չեր հասկանում։ Հանկարծ խոսողների ձայնի սրտադին տոնը զարմացրեց նրան և նա ակամա ականջ դրեց։

— Ձե, սիրելիս, — ասում եր մի դուրեկան և իշխան Անդրեյին կարծես ծանոթ մի ձայն, — յետ ասում եմ՝ յեթե հնարավոր լիներ իմանալ, թե ինչ և լինելու մահից հետո, այն ժամանակ վոչ-վոջ մեզնից մահից չեր վախենա։ Այդպես, սիրելիս։

Աւերիչ, ավելի ջանել մի ձայն ընդհատեց նրան։

— Վախենա թե չվախենա, միևնույն և, — մահից չես կարող խուսափել։

— Բայց մարդ շարունակ վախենում եւ և, դուք, գիտուններ, — ասով մի յերրորդ առնական ձայն, յերկուսին և ընդհատելով։ — Դուք, թնդանոթաձիգներդ, նրանից եք այդքան գիտուն, վոր ամեն ինչ կարողանում եք ձեզ հետ վերցնել՝ թե ողի, թե ակոսա (закусочка)։

Յեզ այդ առնական ձայնի տերը, վոր հավանորեն հետևակ սպա յեր, ծիծաղեց։

— Բայց շարունակ վախենում ես,— շարունակեց առաջին ծանոթ ձայնը։— Վախենում ես անհայտից, այ թե ինչ։ Վերջան առաջին հոգին յերկինք և գնում... բայց դիտենք վոր յերկինք չկա, այլ կա միայն մթնոլորտ։

Առնական ձայնը նորից ընդմիջեց։

— Հապա, Տուշին, հյուրասիրիր ձեռխոտովդ, — ասավ նա։

«Հա, սա այն կապիտանն է, վոր առանց կոշիկների կանգնած եր նպարավանսի վրանում», մտածեց իշխան Անդրեյը, գոհությամբ ճանաչելով դուբեկան ու փլիսոփայոգ ձայնը։

— Կարելի չե, — ասավ Տուշինը, — բայց և այնպես հանդերձ այլ կյանքն իմանալ...

Նա չկարողացավ խոսքը վերջացնել։ Այդ միջոցին սղի մեջ սուլոց լավեց, վորը դնալով ավելի ու ավելի մոտեցավ, ավելի լսելի դարձավ, և ուսմբը, կարծես ամեն ինչ չնսնելով, ինչ հարկավոր եր, դերմարդկային ուժով, կտորտանքներ շաղ տալով, դեռնովը գիպավ, հոլիկից վոչ հեռու։ Գետինը կարծես հառաչեց այդ ահավոր հարվածից։

Նույն վայրկյանին հսկիկից դուրս թռավ ամենից առաջ փոքրամարմին Տուշինը՝ ձեռամորճը բերանի անկյունում։ Նրա բարի, խելացի դեմքը փաքը ինչ գունատ եր։ Նրա յետեից դուրս յեկավ առնական ձայնի տեր, կտրիճի տեսքով հետևակ սպան ու կռակվելով վազեց դեպի իր վաշտը։

## XVII

Իշխան Անդրեյը ձին նստած մնաց մարտկոցի վրա, նայելով ուսմբ արձակագ հրանոթի ձխին։ Նրա հայացքը թափառում եր ընդարձակ տարածության վրա։ Նա տեսավ միայն, վոր Ֆրանսացիների առաջվա անշարժ բազմությունները շարժվում են, և ձախ կողմն իրոք մարտկոց կար, վորի ծուխը դեռ չեր ցրվել։ Ֆրանսացի յերկու ձիավոր, հավանորեն, աղյուտանտներ, որբաշավ գնացին սարավ։ Սարի տակ, հավանորեն, զորաշղթան ուժեղացնելու համար, շաբժվում եր թշնամու մի սակավաթիվ զորասյուն։ Առաջին կրակոցի ծուխը դեռ չեր ցրվել, յերբ յերեսաց մի նոր ծուխ ու լավեց մի նոր կրակոց։ Ծակատամարտն սկսվեց։ Իշխան Անդրեյը ձիու գլուխը թեքեց ու արշավեց յետ դեպի Գրունտ՝ իշխան Բազրատիունին փնտռելու։ Լուռ եր, թե ինչպես յետևում թնդանոթները վորոտում եյին ավելի հաճախ և ուժգին։ Յերևի, մերոնք սկսեցին պատասխանել։ Ներքևում, այնտեղ, վորտեղից անցան բանադնացիները, հրացանի կրակոցներ լավեցին։

Լեմարոլան (Lemarrols) Բանաստեղծութի սպասնայլոց նամակը հենց նոր էր հանձնել Մյուրատին, և ամօթահար Մյուրատը, կամենալով իր սխալն ուղղել, անմիջապես զորքերը շարժեց դեպի կենտրոնը և սուսական յերկու թևի թիկունքը՝ հույս ունենալով մինչև յերեկո և մինչև կայսեր ժամանումը՝ վռնչապնակ իր առջև կանգնած չնչին զորաբաժինը:

«Սկսվեց: Ահա նահատամարտը, մտածում եր իշխան Անդրեյը, զղալով, թե ինչպես և բարախում սիրտը: Քիչաց մը և: Ինչպես և արտահայտվելու իմ Տուլոնը», մտածում եր նա:

Անցնելով նույն վաշտերի միջով, վար քառորդ ժամ առաջ քաշովի ելին ուստում և ողի խմում, նա ամեն տեղ տեսավ կարգի մեջ մանազ և զենքեր վերցնող զինվորների միևնույն արագ շարժումները, ու բոլոր զենքերին կարգաց աշխուժության այն զղապումը, ինչ կար իր սրտում: «Սկսվեց: Ահա նահատամարտը: Մարտափելի՛ յե, և հետաքրքիր», կարելի չեր կարդալ յուրաքանչյուր զինվորի ու սպայի դեմքին:

Երկուդ ամբառթյուններին չհասած, նա աշնանային ամպամած սրվտ իրիկնային լույսով նշմարեց դեպի իրեն յեկող ձիավորները: Առջևից յեկողը, վար յափունջով եր և դառան մորթուց կարած կարտուղով, ճերմակ ձի յեր նստած: Դա իշխան Բադրատինն էր: Իշխան Անդրեյը կանգ առավ, սպասելով վար նա մոտենա: Իշխան Բադրատինը ձին կանգնեցրեց և, իշխան Անդրեյին ճանաչելով, զլիտով բարեկց: Յե՛վ մինչ իշխան Անդրեյը խոսում եր իր տեսածների մասին՝ նա շարունակ առջևն եր նայում:

«Սկսվեց. անձ նահատամարտը» արտահայտությունը յերևում էր մինչև իսկ իշխան Բադրատինի պինդ ու թուխ դեմքին. նրա ուղտար աչքերը կիսախուփ ելին, կարծես քնատ լինելը: Իշխան Անդրեյն անհամբեր հետաքրքրությամբ նայում եր այդ անշարժ զենքին, և ուզում եր իմանալ, թե նա մտածում ու զղում և արդյոք, և թե ինչ և մտածում ու զղում այդ մարդն այդ վայրկյանին: «Կ՛մ առհասարակ մի վորեն բան այդ անշարժ զենքի յետեւ, հարց եր տալիս իշխան Անդրեյն իրեն, նրան նայելով: Իշխան Բադրատինն զլիտով հավանության նշան արավ իշխան Անդրեյի խոսքերին, և ասով չլավ, մի այնպիսի արտահայտությամբ, վար կարծես բալորը, ինչ կատարվում եր և ինչ հաղորդում ելին իրեն, հենց այն եր, ինչ ինքը նախատեսել եր արդեն: Իշխան Անդրեյը, արագ վազբից հեալով, խոսում եր շտապ-շտապ: Իշխան Բադրատինը խոսքերն արտասանում եր արևելյան առողանությամբ, դանդաղ, կարծես կամենալով ներշնչել, թե շտապելու կարիք չկա: Սակայն ձին արագորեն քեց Տուլինի մարտկոցի կողմը: Իշխան

Անդրեյը հետեւեց նրան՝ զորաւորի հետ միասին: Իշխան Բագրատիոնի յետեւից դնում էին՝ շքաւորի սպան, իշխանի անձնական աշխուտանոր, Ժերկովը, պատվիրակը (որդինարեց), հերթապահ բարձրակա սպան՝ իր զեղեցիկ ձիու վրա նստած և մի դաստական աստիճանավոր, վոր հետաքրքրությունից խնդրել էր իրեն ևս տանել ճակատամարտը տեսնելու: Աստիճանավորը, վոր լեցուն մարդ էր լիքը դեմքով, ուրախության միամիտ ժպտով շուրջն էր նայում ձիու վրա ժուլածուլ լինելով: Նա իր կամուսնի շինելով տարորինակ ապավորություն էր թողնում հասարակների, կազակների և աշխուտանորների շրջանում:

— Սա ուզում և ճակատամարտ տեսնել, — ասավ Ժերկովը Բալիկոնսկուն, աստիճանավորին ցույց տալով, — բայց սիրան աղդեն դող և ընկեր:

— Լավ, հերիք եմ, — ասավ աստիճանավորը փայլուն, միամիտ և միամտանակ խորամանկ ժպտով, կարծես իրեն շոյված էր զգում, վոր Ժերկովը հանաքներ և անում իր հետ, ու կարծես դիտմամբ աշխատում էր ավելի հիմար յերեսը, քան էր իսկապես:

— Très drôle, mon monsieur prince<sup>1</sup>, — ասավ հերթապահ բարձրակա սպան: (Նա հիշում էր, վոր Ֆրանսիերեն մի ուրիշ տեսակ և սալում իսլամ տիրոջը, ու վաճ մի կերպ չէր կարողանում ասել):

Այդ ժամանակ նրանք մոտենում էին արդեն Տուշինի մարտկոցին, յերբ մի ուսմբ յեկավորնկավ նրանց առաջ:

— Այդ ի՞նչ ընկավ, — հարցրեց աստիճանավորը պարզամտորեն:

— Ֆրանսական բռնաններ են, — ասավ Ժերկովը:

— Ուրեմն դրանով են խփում, — հարցրեց աստիճանավորը: — Ի՞նչ յերկյուղալի յե:

Յեվ նա, թվաց թե, գահունակությունից անչափ ուրախացավ: Նա խոսքը հաղիվ էր վերջացրել, յերբ կրկին անսպասելի ահավոր մի շաշյուն լսվեց, վորն ընդհատվեց հանկարծ ինչ-վոր հեղուկ բանի դիպած հարվածից, — չըը-լը-փ, — աստիճանավորի յետեւից յեկող կազակն իր ձիու հետ տապալվեց դետին: Ժերկովն ու հերթապահ սպան կոացան թամբերի վրա ու, ձիերի դուխը շուռ տալով, քշեցին: Աստիճանավորը կանդ առավ կազակի առաջ, ուշադիր հետաքրքրությամբ նրան նայելով: Կազակը մեռած էր, ձին դեռ կենդանի յեր:

Իշխան Բագրատիոնը, աչքերը կկոցելով, յետ նայեց և, իրաբանցման պատճառը տեսնելով, յերեսը շրջեց անտարբեր, կարծես

<sup>1</sup> Նառ զովեշտական է, իմ պարոն իշխան:

ուղում եր ասել, թե արժի՛ արդյոք հիմարություններով զբաղվել՝ նա ձին կանգնեցրեց հմուտ հեծվորի ձեռքով, մի փոքր կուցավ և ուղղեց յայնչաւ փեշովն ընկած թուրը։ Դա շատ հին թուր եր, վորի նմանը վոչ-վոր չեր կրում հիմա։ Իշխան Անդրեյը հիշեց այն պատմությունը, թե ինչպես Սուվորովն Բապլիայում իր թուրը նվիրել և Բաղրատիոնին, և առանձին մի հաճույք զգաց այդ հիշ-պատմութից։ Նրանք մոտեցան հենց այն մարտկոցին, վորի մոտ Բախնուսկին կանգնած-դիտում եր կովի դաշտը։

— Ո՛վ և այս վաշտի հրամանատարը, — հարցրեց Բաղրատիոնը Փեյերովերկերին<sup>1</sup>, վորը կանգնած իր ռազմավթերքներէ սնդուկ-ներէ մոտ։

Նա հարցրեց՝ մի և հրամանատարը, բայց եսպես հարցնում եր, թե չէ՞ք վախենում արդյոք։ Յե՛վ Փեյերովերկերը հասկացավ այդ։

— Կապիտան Տուշինը, ձերդ գերադանցություն, — ձգվելով, աւրախ ձայնով բացակասչեց կարմրաշեկ, պեպկնոտ դեմքով Փեյեր-ովերկերը։

— Լավ, լավ, — ասավ Բաղրատիոնը, ինչ-վոր մոմտալով, և քարշակներէ մոտով ձին քշեց դեպի ամենավերջին հրանոթը։

Այն վայրկյանին, յերբ նա մոտենում եր՝ նրան և ջրախմբին խլացնող մի կրակոց լավեց այդ թնդանոթից, և հրանոթը հան-կարձակի ջրխաղատող ձիւ մեջ յերևացին թնդանոթաձիգներ, վոր թնդանոթը բռնած՝ աշխատում էին իր նախկին տեղը դնել։ Ա՛ 1-ին լայնաթիկաւնք, վիթխարի դինվորը փարտիչը ձեռին, վոտները լայն դնելով, վոտանեց դեպի անիվը, Ա՛ 2-րդ դինվորը զոդացող ձեռով լցնում եր թնդանոթը։ Մի փոքրամարմին մարդ՝ կապի-տան Տուշինը, սայթաքելով, առաջ վաղեց, գեներալին շտեմե-լով և փոքրիկ ձեռը ճակատին դրած՝ սկսեց նայել։

— Ավելացրու յերկու գիծ ել. այդպես — յեղավ, — զուեց նա իր բարակ ձայնով, վորին աշխատում եր տալ կարճի շեշտ, ինչ-վոր չեր սաղում նրա փոքրիկ մարմնին։ — Յերկրորդը՝, — ձվովաց նա — նորոտակիր դրան ց, Մեզովեղիվ։

Բաղրատիոնը կանչեց սպային, և Տուշինը, ամաչկոտ ու խեղճ շարժումներով բարեկեց գեներալին վոչ թե այնպես, ինչպես գին-վորականներն են բարեւում, այլ այնպես, ինչպես քահանաներն են սրհնում։ Երեք մատը քունքին դրած մոտեցավ գեներալին։ Թե-պես Տուշինի թնդանոթները նրա համար էին, վոր կրակի տակ առնի ձորը, բայց նա հրկիզաքնդերն արձակում եր հեռվում յերե-

<sup>1</sup> Թնդանոթի պարույգ վոտող դինվոր

վացող Շենգրաբեն դյուզի վրա, վերտեղից առաջանում էյին ֆրանսացիները հոծ բազմություններ:

Կռչ-վաք Տուշինին չեր հրամայել, թե ուր և ինչի վրա պիտի կրակի, և նա, խորհրդակցելով իր վերակա Զախարչենկոյի հետ, վորին հարգում եր մեծապես, վորոշել եր, վոր լավ կլինի, յեթե դյուզը հրդեհի: «Լավ», ասով Բադրատիոնը սպայի ղեկուցումը լսելով և սկսեց իր առջև յերկացող կովի դաշտը դիտել, կարծես ինչ-վոր մոմտալով: Աջ կողմից ֆրանսացիք շատ առաջ էյին յեկել: Այն բարձունքի ներքե, ուր դանվում եր Կիեյան դունդը, գետի հեղեղատում սարսափելի հրացանաձողություն եր լսվում, իսկ ավելի աջ կողմը, դրադոնների յետեք, չքալամբի սպան Բադրատիոնին ցույց տվեց մեր թևի յետեն անցնող ֆրանսական զորասյուներ: Զախ կողմը հորեղունը փակվում եր մոտակա անտառով: Իշխան Բադրատիոնը կենտրոնի յերկու դումարտակի հրամայեց՝ ողնության հասնել աջ թևին: Շքալամբի սպան սիրտ արավ դիտել տալ իշխանին, թե այդ դումարտակների հեռանալով հրանոթները կմնան անպաշտպան: Իշխան Բադրատիոնը յերեսը շրջեց դեպի չքալամբի սպան ու անփայլ աչքերով նրան նայեց անխոս: Իշխան Անդրեյին թվաց, թե սպայի դիտողությունն իրավացի յեր և թե իրոք վոր ասելու բան չկար: Բայց այդ ժամանակ սրարշավ մի աղյուստանտ յեկավ ձորակում գտնվող դնդի հրամանատարի կողմից, թե ներքևով ֆրանսական ահադին դորք և զալիս, թե դունդը քայքայված և և նահանջում և դեպի Կիեյան պլենտադներները: Իշխան Բադրատիոնը դառալ խոնարհեց ի նշան համաձայնության ու հավանության: Զին մանրաքայլ քշեց դեպի աջ և աղյուստանտին ուղարկեց դրադոնների մոտ՝ ֆրանսացիների վրա հարձակվելու հրամանով: Բայց կես ժամ հետո այդ աղյուստանտը վերադարձավ լուր բերելով, թե դրադոնների դնդի հրամանատարը նահանջիլ և արդեն ձորի այն կողմը, վորովհետև սաստիկ կրակ և յեղեղ ուղղված իր դեմ, և նա իդուր տեղ դոնեք և տվել, ուստի և զորքն շտապով տանում և դեպի անտառ:

— Լավ, — ասով Բադրատիոնը:

Այն միջոցին, յերբ նա հեռանում եր մարտկոցից, ձախ կողմից նույնպես կրակոցներ լսվեցին անտառում, և վորովհետև ձախ թեք քավական հեռու յեր և ինքը չեր կարող ժամանակին հասնել, Բադրատիոնն այնտեղ ուղարկեց Ժերկովին՝ ավագ ղեներալին հայտնելու (հենց այն ղեներալին, վորը Բրաունաուում դունդը ներկայացրեց Կուսուղովին), վորպեսզի նա վորքան կարելի յե շուտ նահանջի ձորի յետեք, վորովհետև աջ թեք, յերևի, ուժ չի ունենա յերկար դիմադրել թշնամուն: Իսկ Տուշինն ու նրան պաշտ-



պանոց դուժարտակր մոռացվեցին։ Իշխան Անդրեյն ուշադրութեամբ հետևում էր Բաղրատիոնի՝ զորավարների հետ ունեցած խոսակցութեաններին ու նրա տված հրամաններին և զարմանքով նկատում էր, վոր վոչ մի հրաման էլ չէր տրվում, այլ վոր միայն իշխան Բաղրատիոնն աշխատում էր ցույց տալ, թե ինչ տրվում է անհրաժեշտաբար, պատահաբար և մասնավոր զորավարների կամքով, — այդ բոլորն արվում է թեև վոչ իր հրամանով, բայց իր մտադրութեաններին համաձայն։ Իշխան Բաղրատիոնի ցույց տված տակտի շնորհիվ, իշխան Անդրեյը նկատում էր, վոր (չնայած զեղքերի պատահականութեան ու զորավարների կամքից անկախ լինելուն) նրա ներկայութեանը անչափ սղոսկար է։ Այն զորավարները, վոր այլայլված զեմքերով զալիս ելին իշխան Բաղրատիոնի մոտ, հանգստանում էին, զինվորներն ու սպաները ուրախութեամբ վազմունում էին նրան, աշխուժանում էին նրա ներկայութեամբ և, հայտնապես, ուղում էին իրենց քաջութեանը ցույց տալ նրան։

## XVIII

Իշխան Բաղրատիոնը հասնելով մեր աջ թևի ամենարարժեք կետին՝ սկսեց իջնել ցած, վորտեղից վորտառին հրաձգութեան էր լսվում և վորտեղ վաշինչ չէր յերևում վառողի ծխի պատճառով։ Վարձան մտենում էին ձորակին, այնքան քիչ էին բան տեսնում, բայց այնքան ավելի յեր զգացվում իսկական ճակատամարտի զաշտի մոտիկութեանը։ Հանդիպեցին վիրավորներ։ Անդրապրկ, արուեստաված գլխով մեկին՝ թևատակերից բռնած քաշ էին տալիս յերկու զինվոր։ Նա խոխոսցնում էր ու թքատում։ Գնդակը, հալանքներն, մտել էր բերանը, կամ կոկորդը։ Մյուսը, վոր հանդիպեց, առույգ քայլում էր մենակ, առանց հրացանի, բարձրաձայն տնքալով և թարմ ցավից ձեռք թափահարելով, վորից արյուն էր, ինչպես շշից, թափվում էր շինելի վրա։ Նրա զեմքի վրա տվելի վախ կար, քան թե ցավ։ Նա վիրավորվել էր մի բաղկ առաջ։ Ծանաղարհն անցնելով՝ նրանք սկսեցին դառիվայրով իջնել և վայրեջջին տեսան մի քանի մարդ, վոր պահկած էին։ Հանդիպեցին զինվորների մի մեծ խմբի, վորոնց մեջ կային և վոչ վիրավորներ։ Զինվորները, հետևով, սարն էին բարձրանում և, չնայած զենքային տեսան, այնուամենայնիվ շարունակեցին խոսել բարձրաձայն ու ձևների շարժումներով։ Առջևում, ծխի մեջ յերևում էին դարձադղեւտ զինվորների շարքերը, և սպան, Բաղրատիոնին տեսնելով, պոռալով վազեց խմբով հեռացող զինվորների յետևից, պահանջելով, վոր յետ դառնան։ Բաղրատիոնը մտեցավ շարքե-



րին, ուր մերթ այստեղ, մերթ այնտեղ հրացաններ եյին տրաք-տրաքում, խլացնելով խոսակցությունն ու հրամանների ձայնը: Ողն ամբողջ հագեցած եր վառողի ծխով: Զինվորների դեմքն ամբողջովին սևացած եր վառողից ու կենդանացած: Վոմանք հրացանները լցնում եյին շամփուրներով, մյուսները խանձոցների մեջ վառող եյին ածում, զնդակներ եյին հանում պարկերից, ուր ընկնեը կրակում եյին: Բայց թե ում վրա եյին կրակում, այդ չեր յերևում վառողի անշարժ ծխի պատճառով: Բազմապես հաճախ լսվում եյին բզկոցի և շվիվոցի հաճելի ձայներ: «Սա լինչ բան ե, — մտածեց իշխան Անդրեյը, մոտենալով զինվորների այդ խմբին: — Սա չի կարող հարձակում լինել, վորովհետե նրանք չեն շարժվում. չի յեղ կարող կտես լինել. նրանք այնպես չեն կանգնած:»

Գնդի հրամանատարը՝ Նիհար, տեսքով թուլակաղմ ու հաճելի մպրիտով մի ծերուկ, վորի թերթերունքները կիսով չափ ծածկում եյին նրա դառամյալ աչքերը, տալով նրան հեղ կերպարանք, — մոտեցավ իշխան Բադրատինին և ընդունեց նրան, ինչպես տանտերը մի թանկագին հյուրի: Նա ղեկուցեց իշխան Բադրատինին, թե ֆրանսական հեծելազորը հարձակում դործեց իր գնդի վրա, և թեև այդ հարձակումը յետ մղվեց, բայց գունդը կորցրեց իր կիսից ավելին: Գնդապետն ասում եր՝ հարձակումը յետ մղված, բայց իսկապես ինքն ել չեր իմանում, թե այս կես ժամվա մեջ լինչ և անցնում-դառնում իր զորքերի մեջ, ու հաստատապես չեր կարող ասել՝ հարձակումն ե յետ մղված, թե իր գունդն և ջարդված հարձակումից: Կովի սկզբում նա գիտեր միայն, վոր ուսմբեր ու նռնակներ սկսեցին տեղալ իր գնդի վրա ու մարդիկ սպանել, վոր հետո մեկը ձայն ավեց՝ «հեծելազորը», ու մերոնք սկսեցին կրակել: Ենվ միչև այժմ կրակում եյին վոչ թե հեծելազորի վրա, վոր անհետացել եր արդեն, այլ հետևակ ֆրանսացիների, վոր յերևացել եյին ձորում ու կրակում եյին մերոնց վրա: Իշխան Բադրատինը գլուխն իջեցրեց ի նշան այն բանի, թե այդ բոլորը կատարվել և այնպես, ինչպես ինքն և ցանկացել ու յենթադրել: Դառնալով աղյուստանտին՝ նա հրամայեց — սարից Ծ-րդ յեղբայրա՝ նից բերել յերկու զուսմարտակ, վորոնց մոտով քիչ առաջ անցան: Այդ վայրկյանին իշխան Անդրեյին զարմացրեց Բադրատինի դեմքի վրա կատարված փոփոխությունը: Նրա դեմքն արտահայտում եր մի կենտրոնացած ու յերջանիկ վճռականություն, վոր ունենում և շող ուրը ջուրը նետվելու պատրաստ մարդը: Աչքերն այլևս քնառ, անփայլ չեյին, և ինքը չուներ շինծու-խորամիտ տեսք. կլոր, ուժեղ, բազեյի աչքերը հիացումով ու փոքր ինչ արհամարհանքով նայում եյին առաջ, ըստ յերևույթին, վոչ մի բանի վրա կանգ չառնելով,

թիւն նրա շարժումների մեջ մնացել եւ նախկին դանդաղեցում-  
թիւնն ու շարժումները:

Գնդի հրամանատարը Բաղրատիոնին խնդրեց՝ յետ դառնալ,  
վորովհետեւ այստեղ շատ վտանգավոր եւ: Եթե սեր ասածո, ձերդ  
պայծառութեամբ խնայում եւ, առում եւ նա ու իր խոսքը հաստատելու  
տեղեկացում խնայում չգտնուի սպային, վորը սակայն խու-  
սափում եւ նրանից: ՔԱՅ, բարեհաճեցեք տեսնել, — ցույց եւ տա-  
լիս նա զնդակները, վոր շարունակ վղղում, յերգում ու սուլում  
եյին նրանց շուրջը: Նա խոսում եւ խնդրանքի ու հանդիմանու-  
թյան այնպիսի տոնով, վորով հյուան եւ խոսում կացինը ձեռն  
տոած սպայի հետ. ժմեղ համար սովորական ա, բայց դուք ձեռ-  
նեղ մագու կանեք: Նա խոսում եւ այնպես, կարծես այդ զնդակ-  
ներն իրեն չեյին կարող սպանել, ու նրա կրախում անհասկ  
նրա խոսքերին տալիս եյին ավելի համոզիչ արտահայտութիւն:  
Բարձրակա սպան միացավ զնդի հրամանատարի հորդորներին. բայց  
իշխան Բաղրատիոնը չպատասխանեց նրանց եւ հրամայեց միայն՝  
կրակը դադարեցնել եւ դասավորվել այնպես, վոր յեկող յերկու  
զուգարտակների համար տեղ լինի: Այդ միջոցին, յերբ նա խոսում  
եւ, բարձրացած քամին, անտես ձեռի նման, ալից դեպի ձախ տա-  
րով ձորը ծածկող ձիւի վարագույրը, եւ դիմացի սարը՝ վրան շարժ-  
վող ֆրանսացիներով, բացվեց նրանց առաջ: Բոլոր հայացքներն  
սկսեցին ուղղվել ֆրանսական այդ դրախտներին, վոր սարի ծա-  
ղաններով շարժվում եւ դեպի մեզ: Յերեսում եյին արդեն դի-  
վորների բրդաւ դղակները. կարելի չեւ արդեն սպաններին ջուկել  
շարժայիններէից. յերեսում եւ, թե ինչպես եւ դրոշակը ֆոֆոալով  
դիպչում իւր կոթին:

— Լավ են դալիս, — ասով մեկը Բաղրատիոնի չքաւմբում:  
Ջորասյունի դուռն արդեն ձորը մտավ: Ընդհարումը պիտի  
տեղի ունենար վայրէջքի այս կողմը...

Կովի մասնակցող մեր զնդի մնացորդները, հապճեպ դասա-  
վորվելով, քաշվեցին դեպի աջ. նրանց յետեից, յետ մնացորդներին  
քշելով, մոտեցան Երդ յեղերյանի յերկու զեղակազմ զուգարտակ-  
ները: Նրանք դեռ Բաղրատիոնին չեյին հասել, բայց լսվում եւ  
արդեն նրանց ծանր ու համաշփ քայլվածքը: Ձախ կողմից, Բաղ-  
րատիոնին մատիկ քայլում եւ վաշտի հրամանատարը՝ կլոր դիմ-  
քով, բարեկազմ մի աղամարդ՝ ախմար ու յերջանիկ արտահայտու-  
թյամբ, հենց այն սպան, վոր դուրս վաղեց հալիկից: Նա, հաժա-  
նորեն, այդ վայրկյանին վռ՝ մի բանի մասին չեւ մտածում, բացի  
այն, վոր կարիճի պես անցնի իւր իշխանավորների առջեից: Բաղ-  
մական ինքնարաւական տեսքով իւր ջլապինդ վտտներով քայլում

եր թեթևորեն, կարծես լողում եր, առանց նվազագույն ճիղի ձգվելով և իր այդ թեթևությունը ջրի վրա հետեղ դինվորների ծանր քայլվածքից: Նա վռտի յերկարությունը բռնել եր մերկացրած նեղլիկ թուրը և, մերթ իշխանավորներին, մերթ յետ նայելով, քայլի համաչափությունը չկորցնելով, ճկունությունը շրջվում եր իր ամբողջ հաղթ իրանով: Թվում եր՝ իր հոգու ամբողջ կարողությունը գործադրում և, վերադառնալով լավագույն ձևով անցնի իշխանավորների յետևից, և զգալով, վրա այդ բանը կատարում և լավ, — յերջանիկ եր: «Ձախը՝... ձախը՝... ձախը՝...», թվում եր ներսս կրկնում եր նա յուրաքանչյուր քայլն անելիս, ու ըստ այդ տակտի շարժվում և եր բազմաառնակ-խառն դեմքերով դինվորների պատը, կաշեպարկեր կտալած, հրացաններն ուսները քցած, ու կարծես այդ հարյուրակ դինվորներից յուրաքանչյուրը ամեն մի քայլից հետո կրկնում եր մտքում. «ձախը՝... ձախը՝... ձախը՝...»: Հաստ մայրը, փնջացնելով ու լք-լք անելով՝ անցավ ճանպին բուսած թուփը. յետ մնացած մի դինվոր, հետսպառ, իր անճշտապահությունից վախեցած դեմքով, սնգանդալով հասավ վաշտին. ուսմբը, սղը ճնշելով, թուփ յեկավ-անցավ իշխան Բագրատիոնի և նրա շքախմբի գլխի վրայից և, «ձախը-ձախը» տակտով, դարկեց զորասյուներին: «Ետքերը խտացրեք», լսեց վաշտի հրամանատարի ցուցամով ձայնը: Զինվորները աղեղաձև շարքով անցան այն տեղից, ուր ուսմբն ընկավ. մի ծեր յենթասպա, մի քանի վայրկյան կանգնելով սպանվածների մոտ, վաղելով հասավ իր շարքին, ծուլ լինելով քայլից ու քայլվածքը հարմարեցրեց մյուսներին և բարկացած շուրջը նայեց: «Ձախը՝... ձախը՝... ձախը՝...», թվում եր լսվում և սպառնալից լուռությամբ միջից և միաժամանակ գետին դարկվող վռտների միատեսակ ձայնից:

— Կեցցեք, տղերք, — ասավ իշխան Բագրատիոնը:

«Պատրաստ ենք ձեռքը. թյճն...» լսվեցին շարքերից: Ձախ կողմից քայլող մի մոռյալ դինվոր, պոռալով, աչքերով նայեց Բագրատիոնին մի այնպիսի արտահայտությամբ, կարծես ասում եր. «Ինքներս գիտենք»։ մի ուրիշը, առանց նայելու և կարծես վախենալով ուրախանալ, բերանը բռնալով՝ պոռաց ու անցավ: Կարգադրվեց կանգ առնել և պայուսակները հանել:

Բագրատիոնն անցավ շարքերի առջևից և ձիուց իջավ: Մանձր տվեց կազակին, յափնջին վերցրեց և նույնպես նրան տվեց, ապա կարտուղն ուղղեց գլխին: Ֆրանսական զորասյուներ գլուխը, սպաներն առջևից, յերեսաց սարի տակից:

«Աստված ողնական», ասավ Բագրատիոնը պինդ, լսելի ձայնով. մի ակնթարթ նայեց ճակատ կազմած դինվորներին և, ձեռները

թեթիկակի քցելով, հեծվորի անհաստատ քայլերով, կարծես դժվարաթյամբ, առաջ գնաց անհարթ դաշտով: Իշխան Անդրեյն զգաց, վար մե անդիմադրելի ուժ իրեն առաջ և մղում, ու մեծ յերջանկություն եր դղում<sup>1</sup>:

Ֆրանսացիք արդեն բաժական մտեցել էին. իշխան Անդրեյը, վոր քայլում եր Բադրատիոնի կողքից, պարզ ջոկում եր նրանց լանջակալերը, կարմիր ուսադիրները, անգամ զեմքերը: (Նա պարզ տեսավ մի ձեր ֆրանսացի սպայի, վոր զուրս ընկած վտռներով դժվարությամբ քայլում եր սարն ի վեր): Իշխան Բադրատիոնը նոր հրաման չտվեց և շարունակեց անխռ անցնել շարքերի առջևից: Հանկարծ ֆրանսացիների շարքերից մի կրակոց լավեց, ապա յերկրորդը, յերրորդը... և թշնամու ցրիվ շարքերում ծուխ բարձրացավ և հրացանները ճարճատեղին: Մի քանի մարդ ընկավ մերոնցից, դրանց թվում և կլոր զեմքով սպան, վոր քայլում եր այնպես ուրախ ու ջանասիրությամբ: Բայց այն վայրկյանին, յերբ առաջին կրակոցը հնչեց, Բադրատիոնը շուրջը նայեց ու գոչեց. «Ուսմա-ա-մա» դիւ կանչերով տարածվեց մեր զորադժում և, մերսնք իշխան Բադրատիոնին ու միմյանց առաջելով, անկարգ, բայց գվարթի ու աշխույժ բազմությամբ վազեցին սարն ի վար՝ ցրված ֆրանսացիների յետևից:

## XIX

Երգ յեզերյան դումարտակի հարձակումն ապահովեց աջ թևի նահանջը: Կենտրոնում՝ Տուշինի մոռացության մասնված մարտկացի զործողությունը, վոր արդեն հաջողել եր վառել Շենդրաբենը, կանգնեցրել եր ֆրանսացիների առաջախաղացումը: Ֆրանսացիները հանդցնում էին քամուց տարածվող հրդեհը, և այդպիսով մերոնց ժամանակ տալիս նահանջելու: Կենտրոնի նահանջը ձորի միջով կատարվեց հաղճեալ ու մեծ աղմուկով. սակայն նահանջելիս՝ զորամասերը չխառնվեցին իրար: Բայց ձախ թևը, վոր

<sup>1</sup> Այստեղ տեղի ունեցավ այն հարձակումը, վորի մասին Տիեքը գրում է. «les russes se conduisirent vaillamment, et chose rare à la guerre, on vit deux masses d'infanterie marcher résolument l'une contre l'autre sans qu'aucune des deux cédât avant d'être abordée». Իսկ նապոլեոնը ու Հեղինայի կզգում տեսել է. «Quelques bataillons russes montrèrent de l'intrepidité». (Այսինքն «Ռուսները կովեցին քաջաբար, և մի բան, վոր հազվագեղ է պատերազմում, յերկու հետևի զուեղ վճառեալ գնացին իրար դեմ, և յերկուսից վոչ մեկը չգրկեց, մինչև վոր չհարձակվեցին նրա վրա: Նապոլեոնի խոսքերը. «Մի քանի ուսու դումարտակներ անգնհերություն ցույց տվին»:

միաժամանակ յենթարկվեց Լաննի ղեկավարության տակ գտնվող ֆրանսական զերազանց ուժերի հարձակմանն ու թիկնանց շարժումին և վորը կազմված էր Ազովյան ու Պոդոլյան հետևակ և Պավլոգրադյան հուսարական զնդերից, — քայքայվեց: Բազրատիոնը ժերկովին ուղարկեց ձախ թևի հրամանատար ղեներալի մոտ, հրամայելով անմիջապես նահանջել:

Ժերկովին առույգորեն, ձեռք քուռքից չհեռացնելով, ձին շարժեց ու քնք արարչավ: Բայց հաղիվ մի փոքր հեռացավ Բազրատիոնից — ուժերը զավաճանեցին նրան. անդիմադրելի մի յերկյուղ ընկավ սիրտը, — ու չկարողացավ դնալ վտանգի յենթակա վայրը:

Ձախ թևի զորքերին մոտենալով՝ նա չզննաց տուալ, ուր հրաձգություն կար, այլ ղեներալին ու զորապետներին փնտռեց այնպիսի տեղեր, ուր նրանք չեյին կարող լինել, ուստի և հրամաններ տեղ չհասցրեց:

Ձախ թևի հրամանատարությունն ըստ ավագության պատկառնում էր այն զնդի հրամանատարին, վոր Բրաունաուի մոտ ներկայացավ Կառաուզովին և ուր իրրե ղինվոր ծառայում էր Դսոխովը: Իսկ ծայրագույն ձախ թևի հրամանատար էր նշանակված Պավլոգրադյան զնդի (ուր Թոստովն էր ծառայում) հրամանատարը, վորի հետևանքով և թյալիմացություն տեղի ունեցավ: Յերկու զորապետն էլ սաստիկ զրդոված էյին իրարու դեմ, և այն ժամանակ, յերբ աջ թևում կոխվ էր զնում և ֆրանսացիք արդեն սկսել էյին հարձակումը, այս յերկու զորապետներն զբաղված էյին իրար վիրավորելու նպատակ ունեցող բանակցություններով: Իսկ զնդերը՝ թե հեծելազորը, թե հետևակը պատրաստ չեյին առաջնելու կովի համար: Զինվորից սկսած մինչև ղեներալը ճակատամարտ չեյին սպասում և հանդիստ զբաղված էյին խաղաղ զործով: Հեծելազորում կեր էյին տալիս ձիերին, հետևակում — վառելափայտ էյին հավաքում:

— Քանի վոր նա աստիճանով ինձնից բարձր է, — ասում էր ղերմանացի հուսարական զնդապետը, կարմրելով ու խոսքն ուղղելով իրեն մոտեցած աղյուստանտին, — Թող ինչ ուղում է անի: Յես իմ հուսարներին չեմ կարող զոհաբերել: Փողահմար: Հնչեցրու նահանջի փողը:

Բայց զրությունը դառնում էր տաղնապալից: Թնդանոթաձգությունն ու հրացանաձգությունը, ի մի ձուլված, վորտառում էյին թե աջից և թե կենտրոնում, և Լաննի ֆրանսական հրաձիգները անցնում էյին արդեն ջրաղացի ամբարղակը և վերադասավորվում հրացանաղարկի յերկու տարածություն հեռու: Հետև-

մտիկի զնդապետը իր նյարդային քայլվածքով մոտեցավ ձիուն և, նրան հեծնելով (դարձավ ավելի ուղիղ ու բարձր) քշեց պալլո-դրադյան գնդի հրամանատարի կողմը: Յերկու հրամանատարները հանդիպեցին իրար քաղաքավարի բարեններով և շարուխյուսնը սրտներում թաղցրամ:

— Այսուամենայնիվ, զնդապետ, — ասավ գեներալը գերմանացուն, — չեմ կարող, սակայն, զորքի կեսը թողնել անտառում: Յես ձեզ խնդրում եմ, յես ձեզ խնդրում եմ, — կրկնեց նա, — դիք գրավել և հարձակման պատրաստություն տեսնել:

— Իսկ յես ձեզ խնդրում եմ մի խառնվեք ձեզ չվերաբերող գործին, — պատասխանեց զնդապետը տաքացած: — Յեթե դուք հեծելակ լինեյիք...

— Յես հեծելակ չեմ, զնդապետ, բայց ուս գեներալ եմ, և յեթե այդ չդիտեք...

— Դիտեմ, ձերդ գերազանցություն, — զույց հանկարծ զնդապետը, ձին տեղից շարժելով ու կասկարմիր կտրելով: — Համեցեք ու մի տեսեք, թե դա դիրք բռնելու տեղ ե: Ձեմ ուզում իմ գունդը ջարդել տալ ձեր բավականության համար:

— Դուք չափն անցնում եք, զնդապետ: Յես իմ բավականության մասին չեմ մտածում և արդելում եմ այդպես խոսել:

Դեներալը, ընդունելով զնդապետի հրավերը՝ քաջության տուր-նիրի գնալու, կուրծքն ուղղելով և դեմքը խոժոռելով, գնաց նրա հետ միասին դեպի դորաշղթան, կարծես նրանց ամբողջ տարածայնությունը պետք և լուծվեր այնտեղ, դորաշղթայում, զնդակների տակ: Հասան այնտեղ, մի քանի զնդակներ անցան նրանց գլխի վրայից, և անխոս կանգ առան: Եղթային նայելու կարիք չկար, վորովհետև նրանց առաջվա տեղից ել պարզ եր, վոր հեծելազորը թփերի մեջ և ձորերում չեր կարող դործել, և վոր ֆրանսացիք անցնում են ձախ թևի թիկունքը: Դեներալն ու զնդապետը, ինչպես կովի պատրաստվող յերկու աքաղաղ, խստությամբ ու նշանակալից նայեցին իրար, իզուր միմյանց դեմքի վրա վախկոտության նշաններ փնտռելով: Յերկուսն ել քննություն բռնեցին: Վորովհետև սակաւ բան չկար, թե մեկը, թե մյուսը չուզեց մյուսին ասիթ տալ ասելու, թե առաջինը նա հեռացավ գնդակների տակից, և նրանք յերկար կմնային այդտեղ, փոխադարձաբար միմյանց քաջությունը փորձելու, յեթե այդ ժամանակ անտառում, գրեթե նրանց յետև, չլսվեր հրացանների ճարճատյուն և մի խուլ աղաղակ: Յրանսացիք հարձակվել եյին անտառում գտնվող փայտ բերող զինվորների վրա: Հուսարներն այլևս չեյին կարող հետևակի հետ նահանջել: Նրանց նահանջի ճանապարհը



կտրել եր ֆրանսական շղթան: Այժմ, վարձան ել տեղն անհարմար եր, անհրաժեշտ եր հարձակումով ճանապարհ բանալ:

Հեծելավաշտը (ուր ծառայում եր Ռոստովը) հաղիվ կարողացավ ձի նստել, ստիպվեց կանգնեղմնալ թշնամու դեմ-դիմաց: Նորից, ինչպես Ննսի կամուրջի վրա, հեծելավաշտի և թշնամու միջև վտռվեց չկար, և նրանց միջև, նրանց բաժանելով, ընկած եր անհայտությունը ու սարսափի նուշն ահավոր դիժը, վտր կենդանի մարդկանց կարծես բաժանում և մեռելներին: Բոլորն ել զգում էյին այդ դիժը, և այն խնդիրը, թե կանցնեն արդյոք այդ դիժը թե վտռ ու ինչպես կանցնեն, հուզում եր նրանց:

Գնդապետը մոտեցավ ճակատ կազմած հեծելավաշտին, բարկացած ինչ-վոր պատասխան տվեց սպանների հարցումներին և, վտրպես իր կարծիքի վրա պնդող մի մարդ, մի ինչ-վոր հրաման տվեց: Վաշ-վաք վտրոշ բան չասավ, բայց հեծելավաշտում լուր տարածվեց հարձակում դարձելու մասին: Մարտակիարդի հրաման տրվեց, և պատյաններից հանվող սրերը կրճատցին: Բայց վաշ-վաք չշարժվեց տակավին: Ջախ թեի դրոքը՝ թե հետևակը, թե հուսարները, զգում էյին, թե հրամանատարությունն ինքն ել չդիտի ինչ անի, և պետերի անվճռականությունն անցավ զորքին:

Շուտ լինել, շուտ, մտածում եր Ռոստովը, զգալով, թե հասել և, վերջապես, հարձակման հաճույքը ճաշակելու ժամանակը, վտրի մասին այնքան բան եր լսել հուսար-ընկերներից:

— Աստված ողնական, տղեղ՛ք, — լսվեց Դենիսովի ձայնը, — ձիեղ՛ը քշեցեք: Մաղ՛չ!

Առաջին շարքի ձիերի գավակները շարժվեցին: Գրաչիկը սանձը ձիդ տվեց և ինքը շարժվեց:

Ռոստովն ալ կողմը տեսնում եր իր հուսարների շարքերը, իսկ ավելի դեմը, առջևը յերևում եր մի մութ շերտ, վտր չեր կարողանում ջոկել, բայց համարում եր թե դա թշնամին և: Կրակացներ էյին լսվում, բայց հեռվում:

— Բայելերն արագացրեք, — կանչեց հրամանատարը, և Ռոստովն զգաց, թե ինչպես իր Գրաչիկը շարժում արավ քառասմբակ վաղելու:

Նա առաջուց գուռակում եր նրա շարժումները, և քանի դնում, իրեն ավելի ուրախ եր զգում: Առջևը նկատեց մի մենավոր ծառ: Այդ ծառն սկզբում շատ առաջ եր, այն դժի մեջտեղը, վտր այնպես սարսափելի յեր թվում: Անցան ահա այդ դիժը, և վտռ միայն սարսափելի բան չկար, այլ քանի դնում՝ ուրախություն և աշխույժ եր գալիս վրան: Շի՛ն, ինչպես պիտի թրատեմ նրանց, մտածում եր Ռոստովը, թրի յերախակալը ձեռին սեղմելով:



— Ուսում-ան- — վորտապիւն ձայները: Ե՛կ թող հիմա մեկն տառաջ գա՛ւ, մտածեց Ռոստովը, խթանելով Դրաչիկին, ու, մյուս-ներին առաջնելով, ձիու գլուխը բաց թողեց: Թշնամին արդեն յերե-վում էր առջևում: Հանկարծ, լայն ափելի պես մի բան մարակեց հեծելադարին: Ռոստովը թուրը բարձրացրեց, պատրաստվելով թրա-սել, բայց այդ ժամանակ նրա առջևից սրարշավ գնացող գինվոր Նիկիտենկոն բաժանվեց նրանից, և Ռոստովն զգաց, ինչպես յե-րազուտ, թե շարունակում է առաջ գնալ անընտանի արագությամբ և միաժամանակ տեղից չի շարժվում: Յետեից ժանոթ հուսար Բոնդարչուկը ձին քշեց նրա վրա ու նայեց բարկացած: Բոնդար-չուկի ձին ընկավ, և նա անցավ-գնաց առաջ:

ՔԱՍ ԲՆՆ ՐԱՆ Ե. յես առաջ չեմ գնում: — Յես ընկել եմ, յես սպանված եմ... մի վայրկյանում հարցրեց ու պատասխանեց Ռոստովն իրեն: Նա դաշտի մեջ արդեն մենակ էր: Շարժվող ձիերի և հուսարների թիկունքների վտխարեն իր շուրջը տեսնում էր միայն անշարժ գետին ու հնձած արտեր: Տաք արյուն էր գնում իր տակից: ՔԱՍ, յես վիրավորված եմ, իսկ ձիս սպանված: Դրա-չիկն ուղեց բարձրանալ առաջին վտանքի վրա, բայց ընկավ, առկաջն անելով և հեծվարի վտը: Ձիու գլխից արյուն էր հոսում: Ձին ջանք էր թափում, բայց չէր կարողանում վտաքի կանգնել: Ռոստովն ուղեց բարձրանալ, բայց նույնպես ընկավ: Թուրն ըն-կել էր թամբի փոկերի մեջ, Վորտեզ եյին մերտնք, վորտեզ եյին ֆրանսացիք — չգիտեր: Շուրջը վոչ-վոչ չկար:

Վառն ազատելով, նա վեր կացավ: ՔՈ՛ւր է, վժը կողմն և այժմ այն գիծը, վոր յերկու բանակը խառորեն բաժանում էր իրա-րից, — հարցնում էր ինքն իրեն ու չէր կարողանում պատաս-խանել: ՔԱՐԴՅԱՐ մի վատ բան չի՞ պատահել ինձ: Լինճւմ են ար-դյոք այսպիսի դեպքեր, և ԲՆՆ պիտի անել այսպիսի պարադան-բուժա, հարցրեց ինքն իրեն, վեր կենալով. և այդ միջոցին զգաց, վոր մի ափելուդ բան և կախված իր ձախ ընդհարմացած ձեռից: Ձեռի թաթը կարծես իրենը չլիներ: Նայեց ձեռին, իզուր նրա վրա արյուն փնտռելով: ՔԱՆԱ և մարդիկ, — մտածեց նա ուրախացած, տեսնելով դեպի իրեն վազող միջանի մարդու: — Սրանք ինձ կոչ-նեն: Այդ մարդկանց առջևից վազում էր տարորինակ կիվերով և կապույտ շինելով մեկը, վորի թուխ արևառ դեմքի վրա յերևում էր կեռ քիթը: Նորից յերկու և ելի շատ մարդիկ եյին վազում յետեից: Նրանցից մեկը մի բան ասավ տարորինակ, վոչ ուսուերեն լեզվով: Յետևում նույնպիսի կիվերներով նույնպիսի մարդկանց արանքում կանգնած էր մի ուսու հուսար. նրա ձեռները բռնել էյին, իսկ նրա յետեք սանձից բռնել էյին նրա ձին:

«Յերեմի, մեր հուսարը դերի յե ընկել... Այո, ՄԲԹե ինձ ել են գերի վերցնելու», մտածում եր Ռոստոմլը, աչքերին չհավատալով: «ՄԲԹե ֆրանսացիներ են»: Նա նայում եր մոտեցող ֆրանսացիներին, և, չնայած մի վայրկյան առաջ արշավում եր նրանց հասնելու և թրատելու, սակայն նրանց մոտիկութունն այժմ այնպես սարսափելի յեր թվում նրան, վեր աչքերին չեր հավատում: «ՄՎժեր են սրանք: Ինչու յեն վազում: ՄԲԹե դեպի ինձ են վազում: Յեվ ինչու: Սպանելու: Ի՞նչ, վորին բոլորն այնպես սիրում են: Հիշեց մոր, ընտանիքի, բարեկամների սերը, և իրեն սպանելու թշնամու մտադրությունը անկարելի թվաց: «Բայց դուցե և զալիս են սպանելու»: Նա տաս վայրկյանից ավելի անշարժ կանգնեց իր տեղում, չհասկանալով իր կացութունը: Առջևից յեկող կեռ ըթով ֆրանսացիին այնքան մոտեցավ, վոր նրա դեմքի արտահայտությունն յերևում եր արդեն: Յեվ սկիւր թեք բռնած, շունչը պահած դեպի իրեն վազող այդ մարդու բորբոքված յերեսահարքը վախեցրեց Ռոստոմլին: Նա ատրճանակը ձեռն առավ, և նրա վրա կրակելու փախարեն, նետեց այն ֆրանսացու վրա և, վերջան վոտներում ուժ ուներ, վազեց դեպի թփերը: Փախչում եր վոչ թե կասկածի ու պայքարի այն զգացումով, վորով զնաց Մնսի կամուրջի վրա, այլ շներից փախչող նապաստակի զգացումով: Նա ամբողջ եռութամբ սարսափ եր զգում իր ջանք յերջանիկ կյանքի համար: Շտապ-շտապ արտերի միջնակներից ցատկելով՝ նա սլանում եր դաշտի միջով: Իսկ յերբեմն, յերբ իր գունդաթափ, բարի, ջանքի դեմքը դարձնում — յետ եր նայում, սարսուռ եր անցնում մեջքով: «Ձե, ավելի լավ և յետ չնայեմ», մտածեց նա, բայց թփերին մոտենալով մի անգամ ել յետ նայեց: Ֆրանսացիք յետ ելին մնացել, և նույնիսկ այն բողբոջին, յերբ նա յետ նայեց, առջևից յեկող ֆրանսացիին արդեն ել չեր վազում, այլ քայլում եր և, յերեսը շրջելով բարձրաձայն մի բան եր ասում յետևի ընկերոջը: Ռոստոմլը կանգ առավ: «Ձե, չեր կարող պատահել, վոր սրանք ինձ սպանել ուղենային: Այդպես չի կարծես», — մտածեց նա և զգաց, վոր ձախ ձեռն այնքան ծանր և, կարծես յերկու փթանոց կռաքար եր կախված նրանից: Նա ել չկարողացավ առաջ վազել, ֆրանսացիին նույնպես կանգ առավ ու նշան բռնեց: Ռոստոմլը աչքերը փակեց ու կռացավ: Բզալով յերկու զնդակ յեկան-անցան իր կողքով: Հավաքեց իր վերջին ուժերը, աջ ձեռով բռնեց ձախը և վազեց մինչև թփերը: Թփերում ոտս հրաձիգներ կային:

## XX

Անտառի մեջ հանկարծակիի բերված մեր հետեակ գնդերը դուրս թափվեցին անտառից, և վաշտերը, տարրեր վաշտերի խառնվելով, սկսեցին անկարգ խմբերով փախչել: Մի ահարեկված զինվոր բացականչեց պատերազմի դաշտում սարսափելի ու անիմաստ բառք. «կարեցի՜ն», և այդ բառը յերկյուզի ու ահի զգացումով համակեց բոլարին:

— Մեր թիկունքն են անցել: Կտրված ենք: Կորածնք, — զուտում եյին փախչողները:

Գնդի հրամանատարը, այն վայրկյանին, յերբ յետեից կրակոցներ ու ճիչեր լսեց, հասկացավ, վոր իր գնդին դժբախտություն և պատահել, և այն միտքը, — թե ինքը, յերկար տարիներ ծառայած և վոչ մի բանում հանցավոր չգտնված որինակելի սպան, կարող և հանկարծ անհաղթյան կամ անփութության համար հանցավոր համարվել իշխանության առաջ, — այնպիս ցնցեց նրան, վոր նա անմիջապես, մոռանալով թե հեծելազնդի անհնազանդ գնդապետին և թե իր գնեհալի աստիճանը, բայց ամենից զլիավորը — մոռանալով միանգամայն ժառանգն ու ինքնապահպանման զգացումը, թամբի կեղը բռնելով ու ձին խթանելով, սրարշավ գնաց զեպի գաւնդը՝ կարկուտի պես թափվող գնդակների տարափի տակ, վորտեք բարեբախտաբար չդիպան նրան: Նա միայն մի բան եր փափաղում. հասկանալ ինչ և պատահել, ոգնել և ինչ գնով ել յնրի սխալն ուղղել, յեթե դա յեղել և իր կողմից, ու ինքը չգտան հանցավոր, ինքը՝ քսան յերկու տարի ծառայած, վոչ մի նկատողություն չստացած որինակելի սպան:

Անփնաս անցնելով ֆրանսացիների միջով՝ նա սրարշավ հասավ անտառի յետեր տարածվող դաշտը, վորով փախչում եյին մերածն ու, հրամանի ականջ չդնելով, իջնում եյին սարի ստորոտը: Հասավ բարոյական կերպարանափոխության անցն վայրկյանը, վորը վճռում և ճակատամարտի բախտը, — զինվորների քայքայված խմբերը կլսե՞ն արդոք իրենց հրամանատարի ձայնը, թե, նրան նա յեկով, կշարունակեն փախչել: Չնայած գնդի հրամանատարի հուսահատ կանչին (վորի ձայնն առաջ այնքան ահարկու յեր զինվորի համար), չնայած գնդի հրամանատարի կատաղած, կարմրած, ալլափախված դեմքին ու թրի թափահարումին, — զինվորները շարունակեցին փախչել, խոսել, կրակել ողուս և հրամաններ չլսել: Ծակատամարտի բախտը վճռող բարոյական կերպարանափոխությունը, ըստ յերևույթին, լուծվեց հոգուս վախի:

Պտակուց և վառաղի ձիոց նեղվելով գնեհերալը հաղաց ու կանգ առավ հուսահատ: Ամեն ինչ կորած եր թվում, բայց այդ բոպելին

մերոնց վրա հարձակվող ֆրանսացիք հանկարծ, առանց նկատելի պատճառի, դեպի յետ վազեցին, թաղնվեցին անտառի փեշերում, և անտառում յերևացին ուս հրացիդներ, Դա Տիմոխինի վաշտն էր, վոր իր կարգապահությունը չխախտելով, մենակ մնացել էր անտառում և, մի փոս տեղ դիրք մտած, հանկարծ հարձակում դարձեց ֆրանսացիների վրա: Տիմոխինը ֆրանսացիների վրա հարձակվեց մի այնպիսի կատաղի գոռոցով և այնպիսի խելադար վրձնականությամբ՝ միայն մի թուր ձեռին, վար ֆրանսացիք հանկարծակի դալով, դնեցերը նետեցին ու փախան: Տիմոխինի կողքից վազող Դուլիովը մոտիկից սպանեց մի ֆրանսացու և առաջինը բռնեց անձնատուր յեղող սպայի ոձիքը: Փախչողները յետ դարձան, գումարտակները հավաքվեցին, և ֆրանսացիք, վոր քիչ էր մնացել ձախ թևի դորքերը յերկու մասի բաժանելին, մի վայրկյանում յետ մղվեցին: Պահեստի մասերը կարողացան միանալ, և փախչողները կանգ առան: Գնդի հրամանատարը՝ մայոր Եկոնոմովի հետ կամուրջի մոտ կանգնած, նայում էր իր մոտով անցնող վաշտերին, յերբ նրան մոտեցավ մի դինվոր և ասպանդակը բռնելով՝ դրեթե հենվեց նրան: Զինվորի հադինը դարձաբանային կապույտ մահուդե շինել էր. նա վռչ պայտուակ ուներ, վռչ կիվեր, դուլիը կապված էր և ուսովն անցրել էր ֆրանսական մի փամփշտապարկ, իսկ ձեռին բռնել էր սպայի թուր: Զինվորը գունաթափ էր, կապույտ աչքերն ամբարտաժանորեն նայում էին զնդի հրամանատարին, իսկ բերանը ժպտում էր: Թեպետ հրամանատարն զբաղված էր մայոր Եկոնոմովին հրամաններ տալով, բայց և այնպես չէր կարող ուշադրություն չդարձնել այդ դինվորի վրա:

— Զերդ գերազանցություն, ահա յերկու հաղթանիշ, — ասավ Դուլիովը ֆրանսական թուրն ու պարկը ցույց տալով: — Յես դերի վերցրի մի սպա: Յես կանգնեցրի վաշտը: — Դուլիովը հողնածությունից դժվարությամբ էր շնչում, ու խոսում էր ընդմիջումներով: — Ամբողջ վաշտը կարող է վկայել, թնդրում եմ հիշեք, ձերդ գերազանցություն:

— Լավ, լավ, — ասավ գնդի հրամանատարը և դարձավ մայոր Եկոնոմովին:

Բայց Դուլիովը չհեռացավ. նա դիմի կապը բաց արավ և ցույց տվեց մազերի մեջ լերդացած արյունը:

— Սվինի վերք է, բայց ճակատից չհեռացա: Զմոռանաք, ձերդ գերազանցություն:

Տուշինի մարտկոցը մոտացվել էր, և միայն կռիվ վերջում իշխան Բաղրատիոնը, շարունակելով սկանչ ղենկ կենտրոնից յեկող թնդանոթաձգությունը, նախ հերթապահ բարձրակառավարին և ապա իշխան Անդրեյին ուղարկեց այնտեղ՝ վորպեպի մարտկոցին հրամայեմ նախանշել, վորքան կարելի չե շուտ։ Տուշինի թնդանոթները մոտ յեղած պաշտպանողական ջոկատը, ինչ-վոր մեկի հրամանով, հետացավ կռիվ կիսին։ Բայց մարտկոցը շարունակեց կրակել և ֆրանսուցիները այն չվերցրին միայն այն պատճառով, վորովհետև չեյին կարող յենթադրել, թե այդ հանդուգն հրաձգությունը չորս անդաշտողան թնդանոթից և Լնդհակառակը, մարտկոցի յետանդուն զործողությունից թշնամին յենթադրում էր, թե այնտեղ, կենտրոնում են համախմբված թշնամու գլխավոր ուժերը, և յերկու անգամ փորձեց հարձակում զործել այդ կետի վրա և յերկու անգամն էլ յետ քշվեց այդ բարձունքի վրա մենակ մնացած չորս թնդանոթի կարանչային կրակոցներից։

Շուտով, իշխան Բաղրատիոնի հետանալուց հետո, Տուշինը կարողացավ հրդեհել Շենդրաբենը։

— Տեսնո, իրար անցան, շփոթվեցին։ Տես, ժախ, ժուխ Լափ ե, բափ Ծախ, ևլի ծախ, — առում էր թնդանոթաձիգներից մեկը, հետզհետե աշխուժանալով։

Բայր թնդանոթները, առանց վորևե հրամանի, խփում էյին հրդեհի ուղղությամբ։ Կարծես իրար խրախուսելու համար, զին-վորները ամեն մի կրակոցն ուղեկցում էյին բացականչություններով։ Վա՛յ էր։ Այ եղպես, եղպես։ Տեսա՛ր... Լափ եր՛։ Հրդեհը, բամու. շնորհիվ, արագությամբ տարածվեց։ Դյուզի այս կողմն անցած ֆրանսական զորասյուները յետ դարձան, բայց այդ անհաջողության համար իրեւ պատիժ, թշնամին գլուզի ոջ կողմը տասը թնդանոթ դրեց և սկսեց կրակել Տուշինի մարտկոցի վրա։

Հրդեհի պատճառած ուրախության և ֆրանսուցիներին հաջողապես կրակի բռնելու բուռն վրդեփրության հետևանքով մեր թնդանոթաձիգները թշնամու այդ մարտկոցը տեսան այն ժամանակ միայն, յերբ յերկու ուժեր, զրա յետևից նաև չորսը յեկան խփեցին թնդանոթների միջտեղը. ուժերից մեկը տապալեց յերկու. ձի, մյուսը կտրեց արկղավարի վրա։ Սակայն, նրանց մի անգամ արդեն համակած աշխուժը չթուլացավ, այլ տրամադրությունը փոխեց միայն։ Ձիերը փոխարինվեցին նորերով, վիրավորին վերցրին—տարան հեռու, և չորս թնդանոթն էլ ուղղվեցին թշնամու տասթնդանոթյա մարտկոցի դեմ։ Տուշինի ընկերական սպանվեց կռիվի հենց սկզբում, և մի ժամվա ընթացքում քառասուն զինվորից շարքից դուրս յեկան տասյոթ հոգի, բայց

Թնդանութեան հերոսներն առաջվա պէս զվարթ եյին և յեռանդուն Յերկու անգամ նկատեցին, վոր ներքեւում, իրենց մօտիկ, Ֆրանսացիք յերեւացին, — ու անմիջապէս կարտեհահար արին նրանց։

Թույլ, անհարակ շարժումներով փոքրիկ մարդը սպասակից (գննչիկ) շարունակ պահանջում եր մի ծխամորճի ել դրա համար, ինչպէս նա յեր ասում, և ծխամորճի կրակը շաղ տալով, շուտ-շուտ առաջ եր նետվում ու, փոքրիկ ձեռք ճակատին դրած, նայում Ֆրանսացիների կողմը։

— Պորտակեք դրանց, տղերք, — ասում եր նա և ինքը բռնում Թնդանութի անիմները և պտուտակները հանում։

Միտ մեջ, խլամալով անընդհատ կրակոցներից, վորոնք ամեն անգամ ստիպում եյին նրան ցնցվել, Տուշինը առանց ծխամորճը բերնից հանելու, մի Թնդանութից վազում եր դեպի մյուսը, մերթ նշան եր բռնում, մերթ ղնդակներն եր համրում, մերթ կարգադրում եր փոխել ու փոխարինել սպանված ու վիրավոր ձիերը, ու յերբեմն ճշում եր իր Թույլ բարակ, անվճռական ձայնով։ Նրա դեմքն ավելի ու ավելի կենդանանում եր։ Բայց յերբ մարդ եյին սպանում կամ վիրավորում նա հոնքերը կիտում եր և յերեւը շրջում սպանվածից, բարկացած պոռում եր զինվորների վրա, վորոնք, ինչպէս միշտ, հապաղում եյին վիրավորին կամ սպանվածի դիակը վերցնելու։ Չինվորները, մեծ մասամբ զեղեցիկ կարիճներ (ինչպէս և միշտ լինում և մարտկոցային վաշտում, յերկու գլուխ բարձր եյին իրենց սպայից և կրկնակի թիկնեղ), բոլորը, ինչպէս յերեխաները զովարին զրության մեջ, նայում եյին իրենց հրամանատարին, և նրա դեմքի արտահայտութիւնն անխորհրդ կերպով անդրադառնում եր նրանց դեմքի վրա։

Այդ սարսափելի վորտի, աղմուկի, լարված ուշադրության ու գործունեության հետևանքով Տուշինը ամենանվազ չափով իսկ ահի յերկյուղի տհաճ զգացում չաւներ և մաքսիմ իսկ չեր անցնում, թե կարող և սպանվել կամ ծանր վիրավորվել։ Ընդհակառակը, նա հեռոճեռեռ ավելի զվարթանում եր։ Նրան թվում եր, թե շատ վաղուց, դուցե հենց յերեկ եր, յերբ նկատեց թշնամուն ու կրակեց առաջին անգամ, և թե այն դաշտամասը, ուր հիմա կանգնած եր, վաղուց ծանոթ ու հարազատ և իրեն։ Չնայած վոր ամեն ինչ հիշում եր, ամեն բան կշռադատում, ամեն բան անում, ինչ կարող եր անել ամենալավ սպան նրա զրության մեջ, նա գտնվում եր մի վիճակում, վոր նման եր տենդազին դառանցանքի կամ հարբած մարդու վիճակի։

Ի՞ր Թնդանութների ամեն կողմից արձակվող խլացուցիչ ձայների պատճառով, թշնամու ոռամբերի շայտունի և հարվածների



տակ, տեսնելով թնդանոթների մոտ աշխատող քրտնամխած, կարմրատակած զինվորներին, տեսնելով մարդկանց ու ձիերի արյունը, տեսնելով այն կողմը թշնամու արձակած ձիերը (վորոնցից հետո ամեն անգամ ուսմբ եր թռչում ու դալիս խփում գետին, մարդկանց, թնդանոթներին կամ ձիերին), — ի տես այս բոլորի նրա գլխում ստեղծվել եր մի ֆանտաստիկ աշխարհ, վորը նրա հաճույքն եր կաղմում այդ բոպեյին: Թշնամու թնդանոթները նրա յերևակայության մեջ թնդանոթներ չեյին, այլ ծխամորճեր, վորոնցից նոսր քուլաներով ծուխ եր արձակում աներևույթ ձեռքը:

— Տես, էլի փոտացրեց, — շշնջում եր Տուշինն ինքն իրեն, յերբ սարից ձիի քուլա յեր բարձրանում ու քամուց տարվում գեպի ձախ, — հիմա սպասիր խաղաղնդակին:

— Ի՞նչ կհրամայեք, ձերդ ազնվություն, — հարցրեց ֆեյերվերկերը, վոր մոտ կանգնած լինելով լսեց թե ինչ-վոր բան ե քըրթնջում նա:

— Վոչինչ, ուսմբ... — պատասխանեց նա:

Ելալա Մատվեֆուս, ասով ինքն իրեն: Նրա յերևակայության մեջ Մատվեֆուսն ամենածայրի, հին ձեռ թնդանոթն եր Թրանսպիր իրենց թնդանոթների մոտ նրան պատկերանում էյին իրեն մրջյուններ: Յերկրորդ թնդանոթի համար առաջին գեղեցիկ, հարեցող զինվորը նրա աշխարհում էնտի յեր: Տուշինն ամենից շատ նրան եր նայում ե հրճվում նրա յուրաքանչյուր շարժումից: Մերթ մարդ, մերթ սաստկացող հրացանածաւթյունը սարի տակ նրան թվում եր ինչ վոր մեկի շնչառություն: Ու ականջ եր դնում այդ ձայների մարումին ու բնկումին:

— Տես, էլի շունչ քաշեց, շունչ քաշեց, — ասում եր նա ինքն իրեն: Ինքն իրեն պատկերանում եր վիթխարի բոյով, ուժեղ տղամարդ, վոր յերկու ձեռով ուսմբ ե նետում ֆրանսացիների վրա: — Դե, Մատվեֆուս, սիրելիս, ամթով չթողես, — ասով նա, թնդանոթից հետանալով, յերբ նրա գլխավերեք հնչեց մի ոտար, անծանոթ ձայն:

— Կապիտան Տուշին: Կապիտան:

Տուշինը վախեցած յետ նայեց: Դա այն բարձրակառքան եր, վոր Գրուշտից քչեց իրեն: Նա շնչասպառ ձայնով դռում եր:

— Այդ ի՞նչ բան ե. խենթացել եք: Յերկու անգամ հրամայել են ձեզ նահանջել, խեղ դուք...

«Ե, ինչմե համար են ինձ...» մտածեց Տուշինն ինքն իրեն, յերկուդով նայելով սպային:

— Յես... վոչինչ... — ասով նա, յերկու մատը քունքին դնելով: — Յես...



Բայց գնդապետը չասավ բոլորը, ինչ ուզում էր: Մտախիկից անցնող ուսման ստիպեց նրան կռանալ ձիու վրա: Նա լուրջ, բայց հենց վոր ուղեց կի ինչ-վոր բան ասել, մի նոր ուսման խանգարեց կրկին: Նա ձիու գլուխը շուտ ավել ու սրարչավ հեռացավ: — Նահանջեցեք, բոլորդ նահանջեցեք, — ձայն ավել նա հետվից: Զինվորները ծիծաղեցին: Մի բողե հետո աղյուտանան յեկավ նույն հրամանով:

Դա իշխան Անդրեյն էր: Վառք գնելով Տուշինի մարտկոցի դրաված տարածությունը՝ նա տեսավ վտոր կոտրած, լծարձակ մի ձի, վոր խրխնջում էր լծված ձիերի կողքին: Արյունն աղբույրի պես գնում էր նրա վտակից: Քարշակների արանքում ընկած էյին մի քանի սպանվածներ: Յերբ նա մոտենում էր մարտկոցին՝ ուսմարերն իրար յետեից անցնում էյին նրա գլխավերևից, և նա զգում էր թե ինչպես մի ներվային դող անցավ մեջքով: Բայց այն միտքը, թե վախենում է, նորից արիություն ներշնչեց նրան: «Յես չպետք է վախենամ», մտածեց նա և դանդաղ իջավ ձիուց՝ հենց թնդանոթների արանքում: Հրամանը հայանեց ու մնաց: Վորոշեց, վոր իր ներկայությունը թնդանոթները հանել կտա գիրքից ու կտանի հետը: Յեղ Տուշինի հետ, զիակների վրայից լռա տալով, ֆրանսուսացիների սարսափելի կրակի տակ, դրադվեց թնդանոթների հավաքումով:

— Դիչ առաջ մի մեծավոր յեկավ ու իսկույն էլ պհկ, — ասավ ֆելդբերկերը իշխան Անդրեյին, — ձեզ նման չեք սկի, ձերդ աղնվություն:

Իշխան Անդրեյը վռչինչ չխոսեց Տուշինի հետ: Յերկուան էլ այնքան դրազված էյին, վոր, կարծես, իրար չէյին տեսնում: Յերբ չարսից անմիտս մնացած յերկու թնդանոթը քարշակներին դրած՝ սկսեցին ցած իջնել, իշխան Անդրեյը մոտեցավ Տուշինին:

— Ե, ցտեսություն, — ասավ իշխան Անդրեյը, ձեռը Տուշինին մեկնելով:

— Շտեսություն, սիրելիս, — ասավ Տուշինը, — ցտեսություն, հողիս, գնաք բարով, — և չգիտես ինչու աչքերը լցվեցին արցունքով:

## XXI

Դամին դադարեց, սե ամպերը կախվեցին ցած՝ ճակատամարտի դաշտի վրա, հորիզոնում ձուլվելով վառողի ձխին: Մթնում էր, և այդ պատճառով պարզորեն յերկու տեղ հրդեհի բոցեր էյին յերևում: Թնդանոթաձուլությունը թուլացավ, բայց հրացանների ճարճատյունը յետևում է աջ կողմը հաճախանում էր ու մոտե-

նույն: Եւեր Տուշինն իր թնդանոթներով կրակի գծից դուրս յեկաւ և ձորն իջաւ, նրան զիմաւորեց վերին հրամանատարությունը իր աղջուտանաներով, վարոնց թվումն էյին բարձրակառքան ու ժերկովը, վոր յերկու անգամ ուղարկվել, բայց վոչ մի անգամ Տուշինի մարտիցը չեր հասել: Բոլորն, իրար ընդմիջելով, հրամաններ էյին տալիս և հրամաններ էյին հաղորդում, թե ուր պետք և դնալ և ինչպես, և հանդիմանություններ ու նկատողություններ էյին անում Տուշինին: Տուշինն ինքը վոչ վոքին կարգադրություն չեր անում և անխոս (նա վախենում եր խոսել, վարովհետեւ, ինքն եւ չգիտեր ինչու, յուրաքանչյուր խոսքից պատրաստ եր արտասովել) գնում եր բոլորի յետևից: Թեև կարգադրված եր վերափոխներին թողնել, բայց նրանցից շատերը քաբշ էյին գալիս դուրսի յետևից և խնդրում էյին տեղ տալ թընդանոթների վրա: Այն քաջարի հետեակ սպան, վոր ճակատամարտից առաջ դուրս վազեց Տուշինի հովիկից, գնդակը փորում զրվեց Մատվեմայի լափնաի վրա: Սարի տակ մի գունաթափ հուսարական յունկեր, մի ձեռով մյուս ձեռը բռնած մոտեցաւ Տուշինին և խնդրեց նստել:

— Կապիտան, ի սեր աստծո, յես ձեռս սալջարդ եմ արել, — ասաւ նա ամաչկոտ: — Ի սեր աստծո, քայլել չեմ կարող: Խնդրում եմ: Եւերում եր, վոր այդ յունկերը շատերին եր խնդրել, բայց ամենքից եւ մերժում եր ստացել: Նա խնդրում եր անհամարձակ ու աղերսագին ձայնով:

— Հրամայեցեք նստեցնեն, ի սեր աստծո:

— Նստեցրեք. նստեցրեք, — ասաւ Տուշինը: — Երեսիլ տակը դիր, քեռի, — գործաւ նա իր սիրելի գինձորին: — Իսկ վերափոր սպան ճւր ե:

— Ես զրինք, վախճանվեց, — պատասխանեց մեկը:

— Նստեցրեք: Նստիր, սիրելիս, նստիր: Երեսիլ փոխ, Անտոնով:

Յունկերը Նիկոլայ Ռոստովը եր: Նա մի ձեռով բռնել եր մյուս ձեռը, գեմքը գունաթափ եր, ներքին ծնոտը ցնցվում եր տենդային դողից: Նրան նստեցրին Մատվեմայի վրա, հենց այն իսկ թնդանոթի վրա, վարից իջեցրել էյին մեռած սպային: Ռոստովին առաջարկված շինելի վրա արյուն կար, վորից նրա վարտիկն ու ձեռներն արյունոտվեցին:

— Հը, վերափորված ես, աղափնյակս, — ասաւ Տուշինը՝ Ռոստովի նստած թնդանոթին մոտենալով:

— Վոչ, սալջարդ եմ յեղել:

— Հապա վարտիկդ արյունն ինչեց ե, — հարցրեց Տուշինը:

— Ես, ձերդ ազնվութիւն, սպան ե արյունոտել, — պատասխանեց թնդանոթածիդ զինվորը, շինելի թեքով արյունը սրբնելով ե կարծես ներողութիւն խնդրելով, վոր թնդանոթը մաքուր չի:

Մի կերպ, հետեակի ոգնությամբ, թնդանոթները սարք հանեցին ե, Գունտերադորֆի գլուղին հասնելով, կանդ առան: Արդեն այնպես եր մթնել, վոր տասը քայլի վրա զինվորների համադգնատը դժվար եր ջոկել, հրացանածղութիւն յերկու կողմից ել սկսեց դադարել: Բայց հանկարծ աջ կողմից՝ մոտիկ նորից ազդակներ ու կրակոցներ լսվեցին: Յեղ կրակոցներն արդեն փայլում եյին մթնում: Դա ֆրանսացիների վերջին հարձակումն եր, վորին պատասխանում եյին գլուղի տներում պահված մեր զինվորները: Նորից բոլորը փախան դուռից, բայց Տուշինի թընդանոթները չկարողացան շարժվել, ե թնդանոթածիդները, Տուշինն ու յունկերը անխոս իրար եյին նայում, սպասելով, թե ինչ ե վիճակվելու իրենց: Հրաձղութիւնը յերկու կողմից ել սկսեց դադարել ե կողքի փողոցից դուրս թափվեցին աշտուժորեն խոսող զինվորներ:

— Կենդանի՞ յես, Պետրով, — հարցրեց մեկը:

— Այ, լավ ուտեցրինք հա, — ասավ մյուսը: — Հիմի ել չեն դա:

— Ենքան մուծն ե, մարդ բան չի տեսնում: Վաճի իրար կրակեցին: Ստեղծ խմելու բան չկա:

Ֆրանսացիք այս վերջին անգամ ես յետ մղվեցին: Յեղ նորից, կատարյալ խավարի մեջ, Տուշինի թնդանոթները, խոսակցող հետեակներով շրջապատված, շարժվեց առաջ:

Մթան մեջ կարծես մի աներևութ, մոռյալ գետ եր հոսում միշտ միևնույն ուղղությամբ՝ շշուկների ու խոսակցության աղմուկով ե սմբակների ու անիվների ձայներով: Այս ձայների ընդհանուր ժողովի մեջ, գիշերվա խավարում ամենից ավելի պարզ լսվում եյին վերավորների տնքոցն ու հեծեծանքը: Յեղ նրանց հեծեծանքը, կարծես, լցնում եր զորքին շրջապատող այդ ամբողջ խավարը: Նրանց հեծեծանքը ե այդ գիշերվա խավարը — միևնույն բանն եր: Վորոշ ժամանակից հետո շարժվող բազմության մեջ իրարանցում առաջացավ: Ինչ-վոր մեկը ճերմակ ձիով անցավ ջգախմբի հետ ե, անցնելիս, ինչ-վոր բան ասավ: Ինչ ասավ: Ո՛ւր պիտի գնալ հիմա: Կանդ առնել արդյոք: Թե՛ շնորհակալութիւն հայտնեց, — լսվում եյին ազան հարցուփորձեր այս ու այն կողմից ե շարժվող բազմութիւնն սկսեց ինքն իրեն սեղմել (յերեխ, առջև-վից գնացողները կանդ եյին առել), ե լուր տարածվեց, թե կարգադրված ե կանդ առնել: Բոլորը կանդ առան իրենց տեղերում, հենց ճանապարհի ցլխի մեջտեղը:

Կրակներ վառեցին և խոսակցութիւնը վերսկսեց: Կապիտան Տուշինը, վաշտին կարգադրութիւններ անելով, դինվորներից մեկին ուղարկեց յունիկերի համար վերակապութեան կայան կամ բմելի դառելու, և ինքը նստեց դինվորների վառած խարույկի մոտ: Ռոստովը նույնպէս մի կերպ քաշ դաշով մոտեցավ կրակին: Յափից, ցրտից ու խոնավութիւնից առաջացած տենդային դողը ցնցում էր նրա ամբողջ մարմինը: Դուռը տանում էր սաստիկ, բայց ձեռք տանջալի ցափից չէր կարողանում քնել: Նա մերթ աչքերը փակում էր, մերթ նայում կրակին, վոր նրան թվում էր վառ-կարմիր, մերթ էլ դեռնին ծալապատիկ նստած փոքրամարմին Տուշինին, վորի բարե ու խելացի աչքերը համակրանքով ու կարեկցութեամբ դառնում էին իրեն: Ռոստովը նկատում էր, վոր Տուշինն ամբողջ սրտով ցանկանում, բայց և վող մի բանով չէր կարողանում ողնել իրեն:

Ամեն կողմից լսվում էին մոտեցող, հեռացող և նրանց շուրջը տեղափոխող հետահայների քայլերը, խոսակցութիւնը: Յեւ խոսակցութեան, քայլերի ու ցեղի մեջ խրվող ձիերի սմբակների ձայները, և հետփից մ. մոտիկից լսվող փայտերի ճարճառայուն խառնվում էին մի ընդհանուր, յերերուն միտքի մեջ:

Այժմ արդեն, առաջվա պէս, խավարի մեջ անընդհատ դետը չէր հոսում, այլ փոխորկից հետո, կարծես, հանդարտում և դողում էր մի մտայլ ծով: Ռոստովն անդիտակցաբար նայում ու ահանջ էր դնում, թէ ինչ և կատարվում իր առջին ու իր շուրջը: Մի հետեակ դինվոր մոտեցավ խարույկին, սպսկեց, ձեռները մեկնեց կրակին ու յերեսը շրջեց:

— Կարելի՞ չէ, մերզ ազնվութիւն, — ասավ նա, հարցականորեն դառնալով Տուշինին: — Վաշտա կորցրել եմ, մերզ ազնվութիւն, չդիտեմ վորտեղ ե:

Ձինվորի հետ միասին խարույկին մոտեցավ յերեսը կապած մի հետեակ սղա և, Տուշինին դառնալով, խնդրեց կարգադրել, վոր թնդանոթը տեղից շարժեն մի քիչ, վորպէսզի սայլը անցկացնեն: Վաշտային հրամանատարի յետեից խարույկի մոտ վազեցին յերկու դինվոր: Նրանք կատաղած հայհոյում ու կռվում էին, իրար ձեռից մի դույզ կռիկ քաշքշելով:

— Վճեց թե՛ դու վերցրիր: Տես հլա, սրան տես, — պոռում էր մեկը խոզոտ ձայնով:

Հետո մոտեցավ նիհար, վիզն արյունոտ փաթաթանով կապած մի դինվոր և բարկացած ձայնով ջուր պահանջեց թնդանոթաձիգներից:

— Ի՞նչ ա, շան պէս պիտի սատկենք ետեղ, — ասավ նա:

Տուշինը հրամայեց ջուր տան նրան:

Ապա վազեցավ մոտեցավ մի ուրախ ղինվոր և կրակ խնդրեց հետևակի համար՝ խարույկ վառելու:

— Մի թեժ կրակ եմ ուղում: Շեն մնաք, հայրենակիցներ՝ շնորհակալ եմ կրակի համար, տոկոսներով կվերադարձնենք, — ասավ նա, մթան մեջ բոցավառ խանձոզն ուր-վոր տանելով:

Այն ղինվորի յետևից խարույկի կողքով անցան չորս ղինվոր, շինելի մեջ ինչ-վոր ծանրություն տանելով: Նրանցից մեկը սայթաքեց:

— Տես, գրոգի տարածները ճանպի վրա փետ են քցել, — փշթփշ փռեթաց նա:

— Մեռավ, ել ուր ենք տանում վոր, — ասավ նրանցից մեկը:

— Ն', ձեր ել:

Յեւ նրանք իրենց բեռի հետ չքացան խավարում:

— Հը՞, ցավ՞ում ե, — շուկով հարցրեց Տուշինն Ռոստովին:

— Յովում ե:

— Ձերդ աղնվություն, դենեքալը կանչում ե: Նստեղ խրճիթում ե, — ասավ ֆեյերվերկերը, Տուշինին մոտենալով:

— Իսկույն, ազավնյակա:

Տուշինը վեր կացավ և, շինելը կոճկելով ու իրեն կարգի բերելով, հեռացավ խարույկից...

Թնդանոթաձիղների խարույկից քիչ հեռու, իր համար պատրաստած խրճիթում, Բաղրատիոնը նստած ճաշում եր, ու խոսակցում մոտը հավաքված մի քանի զորապետների հետ: Այդտեղ եր կիսափակ աչքերով ծերուկը, վոր ազահարար վոշխարի մի վոսկոր եր կոծում, և քսաներկու տարվա սներին դենեքալը՝ խմած ողուց և ճաշից կարմրատակած, և բարձրակապուն՝ իր անվանատառերը վրան փորագրած մատանիով, և Ժեբկովը, վոր անհանդիստ նայում եր բոլորին, և իշխան Անդերյը՝ շուրթերը սեղմած, տենդադին փայլող աչքերով:

Խրճիթի անկյունում դրված եր ֆրանսացիներից առնված դռազակը, դատական աստիճանավորը պարզամիտ դեմքով շոշափում եր դրոշակի գործվածքն ու գլուխը շարժում տարակուսած, Թերևս այն պատճառով, վոր դրոշակն իրոք հետաքրքրում եր նրան, դուցե և այն պատճառով, վոր ծանր եր քաղցած փորով նայել ճաշին, վորից նրան բաժին չեր հասել: Հարևան խրճիթում եր դառնվում դրադոսների կողմից գերի վերցված ֆրանսացի դնդապետը: Նրա շուրջը, նրան նայելու համար, խմբվել էին մեր սպաները: Իշխան Բաղրատիոնը շնորհակալություն եր հայտնում առանձին զորապետների ու հարցուփորձում կովի մանրամասնու-

թշուաշներին և կորուստներին մասին: Բրաունաուի մաս կուտուղովին ներկայացող զնդի հրամանատարը ղեկուցում էր իշխանին, թե հենց Վոր կոթն սկսվեց, ինքը նախնեց անտառից, հավաքեց փայտանատ գինյութներին և, զրանց յետ ուղարկելով, յերկու դուռտակով սփռամարտի դնաց ու յետ մզեց Ֆրանսացիներին:

— Հենց տեսա թե չե, ձերդ պայծառափայլություն, վոր առաջին դուռտակը քայքայված է, կանգնեցի ճանապարհին ու մտածում եմ՝ քրանց կթողնեմ ու անընդհատ կրակով կդիմավորեմ թշնամունք: այդպես էլ արի:

Դնդի հրամանատարն այնպես էր փափաղում այդ բանն անել, այնպես ցավում էր, վոր չէր կարողացել այդ անել, վոր նրան թվում էր, թե այդ թուրն իրոք յեղել է: Դուցե, իսկապես, և յեղել էր: Հնարավոր էր միթե այս խառնաշփոթության մեջ ջուրկել թե ինչ և յեղել, ինչ չի յեղել:

— Այս էլ պետք է նկատեմ, ձերդ պայծառափայլություն, — շարունակեց նա, հիշելով Դուրխովի խոսակցությունը կուտուղովի հետ և թե ինչպես վերջին անգամ ինքը տեսավ այդ Դուրխովին, վոր առաքնանապուրի, շարքային Դուրխովը իմ աչքի առաջ զերի վերցրեց մի Ֆրանսացի սպա և առանձնապես աչքի ընկավ:

— Հենց այդտեղ էլ յետ, ձերդ պայծառափայլություն, տեսա պովոդորացիների հարձակումը, — անհանդիսա շուրջը նայելով խոսակցությանը միջամտեց Ժերկովը, վոր այդ որը ընավ էլ հուսարներին չէր տեսել, այլ նրանց մասին լսել էր միայն հետևակ սպայից: — Յերկու կտոք ջարդեցին, ձերդ պայծառափայլություն:

Ժերկովի խոսքերի վրա մի քանիսը ժպտացին, ինչպես միշտ նրանից կատակներ սպասելով. բայց նկատելով, վոր նրա խոսքը նույնպես վերաբերում է մեր զինքի և այսորվան փառաբանության, լուրջ կերպարանք ընդունեցին, թեև շատերը հիանալի գիտեին, վոր Ժերկովի ստաժը անհիմն սուտ է: Իշխան Բադրատիոնը դարձավ ձերուկ-զնդապետին:

— Բայրիցդ էլ՝ շնորհակալ եմ, պարոնայք. բոլոր զորամասերն էլ հետևակը, հեծելազորը, հրեամանին՝ կովել են հերոսաբար: Ինչպես և պատահել, վոր կենտրոնում յերկու թնդանոթ են Ֆացեկ, — աչքերով ինչ-վոր մեկին վորոնելով ստավ նա: (Իշխան Բադրատիոնը ձախ թևի թնդանոթների մասին չէր հարցնում. գիտեր արդեն, վոր կովի հենց սկզբում զրանք բոլորը թողնվել էին): — Յես ձեզ, կարծեմ, խնդրեցի, — դարձավ նա հերթապահ բարձրակառավարին:

— Մեկը քնատվել էր, — պատասխանեց հերթապահ բարձրակառավարն, — մյուսը՝ չդիտեմ իսկապես. յես ինքս շարունակ այն-



տեղ եյի և կարգադրութիւններ եյի անում և հետացա թե չե... Կոիվը տաք եր, ճիշտ և, — ավելացրեց նա համեստորեն:

Մեկը հայտնեց, թե կապիտան Տուշինն այստեղ հենց գլուզի մտն և, և թե նրա յետևից արդեն մարդ և ուղարկված:

— Հա, դուք ել այնտեղ յեղեւ եք, — ասավ իշխան Բաղրատիոնը, դիմելով իշխան Անդրեյին:

— Բայց ինչպես և վոր իրար չենք հանդիպել, — ասավ հերթապահ բարձրակառավար, հաճելիորեն Բալկոնսկուն ժպտալով:

— Յես ձեզ տեսնելու բախտը չեմ ունեցել, — սառն ու կըտրուկ պատասխանեց իշխան Անդրեյը:

Բոլորը լռեցին: Շեմքին յերևաց Տուշինը, վոր ամաչկոտ առաջ եր գալիս դներալների յետևից: Ինչպես միշտ, իշխանութիւնը ներկայանալիս՝ նա շփոթված անցավ նեղ խրճիթում գտնվող դներալների յետևից և, դռնակի կոթը չտեսնելով, վրտը դիպրեց նրան ու քիչ մնաց ընկնելու: Մի քանի հոգի ծիծաղեցին:

— Ի՞նչպես և յեղել, վոր թնդանոթները թողել եք, — հարցրեց Բաղրատիոնը հոնքերը կիտելով վոչ այնքան կապիտանի վրա վորքան ծիծաղողների, վորոնց մեջ ամենից բարձր լավում եր Ժերկովի ձայնը:

Տուշինին այժմ միայն, իր ահեղ իշխանավորի առաջ, պատկերացավ իր հանցանքի ու խայտառակութիւն ըովանդակ սարսափը, վոր ինքը, վողջ մնալով, յերկու թնդանոթ և կորցրել: Նա այնքան հուզված եր, վոր մինչև այս վայրկյանը չեր կարողացել այդ մասին մտածել: Սպաների ծիծաղն ավելի ևս շփոթեց նրան: Բաղրատիոնի առջև կանգնած՝ նրա ներքին ծնոտը դողում եր, և հազիվ կարողացավ ասել:

— Զգիտեմ... ձերդ պայծառափայլութիւն... մարդիկ չկային, ձերդ պայծառափայլութիւն:

— Կարճ եյիք պաշտպան զորամասից վերցնել!

Վոր պաշտպան զորամաս չկար, այդ Տուշինը չասավ, թեև դա զուտ ճշմարտութիւն եր: Նա վախենում եր դրանով անհաւատ դուրքան մեծ դնել մի ուրիշ զորապետի և անխոս, անշարժ աչքերով նայում եր ուղիղ Բաղրատիոնի դեմքին, ինչպես նայում և շփոթվող աշակերտը ըննողի աչքերին:

Լուսթիւնը բավական յերկար տեհց: Իշխան Բաղրատիոնն, ըստ յերևույթին, չցանկանալով խիտ լինել, չեր իմանում ինչ ասի. մյուսները չեյին համարձակվում միջամտել խոսակցութիւն: Իշխան Անդրեյը հոնքերի տակից չնայում եր Տուշինին, և նրա մատները շարժվում եյին ջղաձգորեն:



— Զերդ պայծառափայլություն, — խղեց իշխան Անդրեյը չտախտան իր կարուկ ձայնով, — դուք հաճեցիք ինձ ուղարկել կապիտան Տուշինի մարտկոցը: Դնացի և տեսա զինվորներին ու ձիերի յերկու յերրորդ մասը սպանված, յերկու թնդանոթը ջարդված, և վոչ մի պաշտպան դորամաս:

Իշխան Բաղրատիոնն ու Տուշինը միատեսակ սեևուն հաշտցեով նայում էին այժմ դստված ու հուզված խոսող Բալկոնսկուն:

— Եկ՛ւ յեթե, ձերդ պայծառափայլություն, թույլ կտաք ինձ կարծիքս հայտնելու, — շարունակեց նա, — այսօրվա հաջողությամբ մենք պարտական ենք ավելի այդ մարտկոցի դործողության և կապիտան Տուշինի ու նրա վաշտի հերոսական զիմադրության, — ասե՛ք իշխան Անդրեյը և, պատասխանի չսպասելով, անմիջապես վեր կացավ ու հեռացավ սեղանից:

Իշխան Բաղրատիոնը նայեց Տուշինին և, ըստ յերևույթին, չցանկանալով անվստահություն ցույց տալ ղեպի Բալկոնսկու կարուկ յեկրտկացությունը և, դրա հետ միաժամանակ, զգուշով վար անկարող և լիովին հավատալ նրան, զուխն իջեցրեց և Տուշինին ասավ, թե կարող է դնալ: Իշխան Անդրեյը դուրս յեկավ նրա յետևից:

— Այ, շնորհակալ եմ. փրկեցիք, աղամնյակս, — ասավ Տուշինը նրան:

Իշխան Անդրեյը նայեց Տուշինին և, բան չասելով, հեռացավ գնաց: Նա տխուր եր ու ծանր խոհերով պաշարված: Այդ բոլորն այնքան արատառց էին, և այնքան հեռու իր սպասածից:

«Ո՛վքեր են սրանք: Ի՞նչ դործ ունեն այստեղ: Ի՞նչի յեն սպասում: Եկ՛ւ յերբ պիտի վերջանա այս բոլորը», մտածում եր մտատուր, նայելով առջի փոփոխվող սովերներին: Զեռի ցավը քոնի դնում տանջալից եր դառնում: Բուռը տանում եր սաստիկ, աչքերի առաջ կարմիր շրջանակներ էին դառնում, և այդ ձայների ու ղեմքերի տղավորությունը և մենակության զգացումը խառնվում եր ֆիզիկական ցավի հետ: Այդ նրանք են, այդ վերավոր ու վոչ վերավոր զինվորները, վոր արդուում, ձգում-քաշում են իր ջարդված ձեռի և ուսի ջղերն ու այրում միսը: Եկ՛ւ նրանցից պղատվելու համար՝ նա աչքերը փակեց:

Նա ինքնամոռացության մեջ ընկավ մի բողբ, և այդ կարճ ժամանակամիջոցում յերազում տեսավ բազմաթիվ բաներ. տեսավ մորը և նրա խոշոր սպիտակ ձեռը, տեսավ Սոնյայի նիհարիկ ուսե-

բը, Նատաշայի աչքերն ու ծիծաղը, և Դենիսովին՝ իր ձայնով ու բեղերով, և Տեյանինին, և իր ամբողջ պատմությունը՝ Տեյանինին ու Բողզանիչի հետ։ Այդ ամբողջ պատմությունը միեւնույն բանն էր, ինչ վոր սուր ձայնով այս գինձորը թե այդ պատմությունը և թե այս գինձորը տանջում, ճնշում և շարունակ մի կողմ ելին ձգում իր ձեռը։ Նա ուղղում էր ազատվել զրանցից, բայց նրանք վաչ մի վայրկյան չեյին թողնում իր ուսը։ Ուսը չեւր ցավի, նա առողջ կլիներ, յեթե զրանք չձգեյին։ Բայց զրանցից ազատվել անկարելի յեր։

Նա աչքերը բաց արավ ու վեր նայեց, Դիշերվա սև վարադաւը կախվել էր անխաղաղ խարույկի վրա։ Կրակի լույսերի մեջ թռչկոտում ելին իջնող ձյունի փաթիլները։ Տուշինը չվերադարձավ, բժիշկը չեկավ։ Նա մնացել էր մենակ, միայն մի փոքրիկ գինձոր մերկ նստել էր այժմ կրակի այն կողմն ու տաքացնում էր իր նիհար, դեղին մարմինը։

«Ի՞նչ մեկին ել պետք չեմ յես, — մտածում էր Թոստովը, — Զկա մեկը, վոր ողնի, խղճաւ։ Բայց չե՞ վոր մի ժամանակ յես ել յեղել եմ տան, ընտանիքի մեջ։ Եղել եմ ուժեղ, ուրախ-զվարթ, սիրված։

Նա հոգոց քաշեց ու հոգոցի հետ միասին տնքաց ակամա։

— Ո՞վ գիտի մի տեղդ ցավում ա, — հարցրեց փոքրիկ գինձորը, շապիկը կրակի վրա թափ տալով, և, պատասխանի չսպասելով, ավելացրեց. — Եսուր քիչ ժողովուրդ չփչացրին — եհ։

Թոստովը գինձորին չեւր լսում։ Նա նայում էր կրակից վեր ձյունի թռչկոտող փաթիլներին և հիշում ուսուսական ձմեռը իր տաք, լուսավոր տներով, մորթե մուշտակներով, սրընթաց սահնակով, առողջ մարմնով և ընտանիքի ամբողջ սիրով ու հոգացողությամբ։ «Յեւ յես ինչ՞ա համար յեկա այստեղ», մտածում էր նա։

Մյուս ուրը ֆրանսացիք հարձակումը չնորոգեցին, և Բաղրատիոնի զորարարման մնացորդը միացավ Կուսուղովի բանակին։

## ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

### I

Իշխան Վասիլին իր ծրագրերները չէր կշռադատում։ Ավելի ևս քիչ էր մտածում ուրիշներին վատութիւն անել, վորպեսզի ինքը շահվի։ Նա պարզապէս բարձր շրջանի մարդ էր, այդ շրջանում հաջողութիւն ունեցած և այդ հաջողութիւնից վորոշ սովորութիւն ձեռք բերած։ Նայած հանգամանքներին ու հանդիպած մարդկանց՝ նա շարունակ ծրագրերն էր կազմում ու խորհուրդներ հղանում, վստեղ մասին այնքան էլ լավ հաշիվ չէր տալիս իրեն, բայց վորոշք սակայն կազմում էլին նրա կյանքի ամբողջ հետաքրքրութիւնը։ Նա մի կամ յերկու այդպիսի ծրագիր չուներ, այլ տասնյակներ, վորոշից մի քանիսը նոր միայն սկսում էլին պատկերանալ նրան, մյուսներն իրազօրծվում էլին, մնացյալները վաղնչանում չքանում էլին։ Որինակ, նա ինքն իրեն չէր ասում. «Այս մարդը հիմա գիրքի տեր է, ուժ ունի, աշխատեմ ձեռք բերել նրա վստահութիւնն ու բարեկամութիւնը և նրա միջոցով միանումս նոյապէս աջակցենմ ինձ համար»։ Կամ չէր ասում թե՛ «Ահա վասիլ Պիեռը հարուստ մարդ է, աշխատեմ զրափել նրան՝ վոր ազջկաս հետ ամուսնանա և ինձ հարկավոր քառասուն հազարը փոխ վերցնեմ»։ Բայց գիրքի տեր մարդը նրան հանդիպում էր թե չէ, նույն բաղնիքն բնազդը թելադրում էր նրան, թե այս մարդը կարող և սպասկար լինել, և իշխան Վասիլին մտերմանում էր նրան և առաջին իսկ հնարավորութիւն դեպքում, առանց նախապատրաստութիւն, բնազդով, շողոքարթում էր, մտերմանում, և ասում այն, ինչ պետք էր։

Յեզ անա Մոսկվայում Պիեռին հանդիպելով՝ իշխան Վասիլին նրա համար հաջողեցրեց կամեր-յունկերի աստիճան, ինչ վոր այն մասնանակ հովասար էր պետական-խորհրդականի աստիճանի, ու պնդեց-պահանջեց, վոր յերիտասարդն իր հետ մեկնի Պետերբուրգ և իջնանի իր տանը։ Կարծես թե ցրված և զրա հետ միաժամանակ մի հաստատ վստահութամբ, թե այդպէս էլ պիտի լինի, իշ-

խան Վասիլին դարձադրոււմ եր բոլոր հարկավոր միջոցները, վոր Պիեոին ամուսնացնի իր աղջկա հետ: Յեթե իշխան Վասիլին առաջուց կշտադատեր իր ծրագիրները, նա չեր կարող իրենից բարձր և ցածր գիրք ունեցող մարդկանց հետ վարովել այդպես բնականորեն, այդպես պարզ և մտերմաբար: Նրան շարունակ ինչ-վոր մի բան քաշում եր դեպի իրենից բարձր գիրք ունեցող ու հարուստ մարդիկ, և նա ստոված եր մի հազմադրուստ ճարտարութեամբ, վորով կարողանում եր վարսալ ճիշտ այն վայրկյանը, յերբ պետք եր և կարելի յեր ոգտովել մարդկանցից:

Պիեոն, անսպասելի հարուստ մարդ և կոմս Բեզուխով դառնալով, իր առաջիմ մենակ ու անհող կյանքից հետո, իրեն այն աստիճան շրջապատված ու զրազված գղաց, վոր միայն անկողնում եր կարողանում ինքն իր հետ լինել: Նա պետք և թղթեր ստորագրեր, ատյաններ դնար, վորոնց դերի ու նշանակութեան մասին պարզ հասկացողութեան չուներ, գլխավոր կառավարչից ինչ-վոր բան պիտի հարցներ, պետք և դնար Մոսկվայի մոտի կալվածները և ընդունելու բազմաթիվ մարդկանց, վորոնք առաջ չեյին ել ուղում նրա գոյութեանն ընդունել, իսկ հիմա կվիրավորվեյին ու կվշտանային, յեթե ինքը չցանկանար նրանց տեսնել: Բոլոր այս բազմազան մարդիկ — ազգականներ, ծանոթներ, պաշտոնյաներ — բոլորը միատեսակ լավ, սիրալիկ եյին տրամադրված յերիտասարդ ժառանգի վերաբերմամբ: Բոլորը, հովանորեն և անկասկած, համոզված եյին, վոր Պիեոը բարձր արժանիքներ ունի: Յեւ Պիեոը շարունակ այսպիսի խոսքեր եր լսում. «Ձեր շտեմնված բարութեամբ» կամ «գուց լավ սրտի տեր լինելով», կամ «գուց ինքներդ այնքան մաքուր եք, կոմս... կամ էյեթե նա այնքան խելացի լիներ, վորքան դուք և այլն, այնպես վոր ինքն ել սկսեց հավատալ իր շտեմնված բարութեան ու արտակարգ խելքին, մանավանդ վոր, միշտ ել, սրտի խորքում նրան թվում եր, թե ինքն իրոք շատ բարի յե և շատ խելացի: Մինչև իսկ առաջիմ չար և թշնամաբար տրամադրված մարդիկ հիմա հետը մեղմ եյին ու սիրալիկ: Այնքան բարկացկոտ, յերկարիրան ու տիկնիկի պես հարթ մազերով մեծ իշխանադուստրը, թագումից հետո Պիեոի սենյակն յեկավ: Աչքերը ցած խոնարհած և շարունակ հուզվելով, նա ասավ, թե շատ և ցավում իրենց միջև տեղի ունեցած թշուրիմացութեաններէ համար և այժմ իրեն իրավունք չի համարում վորեն բան խնդրելու, բացի այն, վոր իրեն թուլլատրվի, այս ծանր հարվածից հետո, մի քանի շաբաթ մնալ այս տանը, վորն այնքան եր սիրում նա և ուր այնքան զոհողութեաններ և արել: Նա չկարողացավ իրեն պահել ու այս խոսքերն արտասանելիս լաց յեղավ:

Ձրացված, վոր արձանանման իշխանադուստրը կարող է այդպես փոխվել, Պիեռը բռնեց նրա ձեռքը և ներողություն խնդրեց, ինքն էլ չիմանալով ինչու համար։ Այդ որովանից իշխանադուստրն սկզբնեց մի շերտավոր շարֆ գործել Պիեռի համար և միանգամայն փոխվեց նրա հանգեպ։

— Այս բանն արա նրա համար, mon cher. Այնուամենայնիվ նա շատ է տանջվել հանգուցյալի ձեռին, — ասավ իշխան Վասիլին, Պիեռին աստջարկելով մի ինչ-վոր թուղթ ստորագրել հոգուտ իշխանադուստրի։

Իշխան Վասիլին վճռել էր այսուամենայնիվ այդ վտակորը՝ յերեսուն հազարի մուրհակը՝ նետել խեղճ իշխանադուստր, վոր նա էլ չկարողանա խոսել, թե իշխան Վասիլին ինչ մասնակցություն ունեցա՞վ ծագկավոր պարտքելի գործում։ Պիեռն ստորագրեց մուրհակը, և այդ որովանից իշխանադուստրն էլ ավելի բարի դարձավ։ Փոքր քույրերը նույնպես շատ սիրալիկ էյին ղեպի նա, մանավանդ կրտսերը, լավիկը, խալավորը, հաճախ շփոթություն էր պատճառում Պիեռին իր մայրաներով և Պիեռին հանդիպելիս մի տեսակ էր լինում։

Պիեռին այնպես բնական էր թվում, վոր բոլորը սիրում են իրեն և այնպես անբնական էթվար, յեթե մեկը չսիրեր իրեն, վոր էլ չեր կարող իրեն ջրջապատողների անկեղծությանը չհավատալ։ Առենք մամանակ էլ չուներ այդ մարդկանց անկեղծ կամ կեղծ լինելու մասին մտածելու։ Նա շարունակ դրադված էր և շարունակ իրեն դղում էր մի հեղ ու դվարթ արեցնության վիճակում։ Նա դղում էր, վոր ինքը մի կարևոր ընդհանուր շարժման կենտրոն է. դղում էր, վոր իրենից շարունակ ինչ-վոր բան և սպասվում է յեթե այս բանը չանի՝ շատերին կվշտացնի ու կզրկի իրենց սպասելիքից, իսկ յեթե այս, այս բաներն անի, ամեն ինչ լավ կլինի, — ու անում էր այն, ինչ պահանջում էյին, բայց այդ ինչ-վոր լավը զեռ մնում էր հետագային։

Այս աստջին շրջանում, բոլորից ավելի, թե Պիեռի գործերին և թե իր Պիեռին վրա տիրեց իշխան Վասիլին։ Կոմս Բեզուխովի մահից ի վեր՝ նա Պիեռին բաց չեր թողնում իր ձեռից։ Իշխան Վասիլին ուներ մի մարդու տեսք, վորը թեև ծանրաբեռնված և գործերով, հոգնած է, տանջված, բայց կարեկցությունից չի կարող, վերջապես, բախտի ու խորամանկ խտրերանների քմահաճույքին թողնել անող-անպաշտպան պատանուն, իր բարեկամի վորդուն, *cprès tout*<sup>1</sup>, այն էլ մի այդպիսի հսկայական կարողությամբ։ Այն

<sup>1</sup> Վերջի վերջու

մի քանի որը, վոր կոմս Բեզուխովի մահից հետո մնաց Մոսկվայում, նա Պիեռին կանչում էր իր մոտ կամ ինքն էր գնում նրա սենյակը և հրահանգներ տալիս, թե ինչ պետք և անել, հողնածուծության ու վստահության մի այնպիսի տոնով, վոր ամեն անգամ կարծես ասելիս լիներ.

«Vous savez, que je suis accablé d'affaires et que ce n'est que par pure charité, que je m'occupe de vous, et puis vous savez bien, que ce que je vous propose est la seule chose faisable»<sup>1</sup>.

— Ե, բարեկամս, վաղը մեկնում ենք, վերջապես, — ասում էր մի անգամ, աչքերը փակելով, Պիեռի արժունիքը բռնելով և մի այնպիսի տոտով, կարծես այն, ինչ ասում էր, իրենց մեջ վաղուց ի վեր վճռված բան է և այլ կերպ էլ չէր կարող վճռված լինել. — Վաղը մեկնում ենք. դու նստում ես իմ կառքում: Շատ ուրախ եմ: Այստեղ բոլոր կարևոր բաները վերջացրինք: Յես վաղուց պետք և մեկնելի: Ահա կանցլերից եմ ստացել: Յես նրան խնդրել եյի քեզ պաշտոն տալ, և ահա նշանակված ես արդեն Ղիվանագիտական կորպուսը և ստացել ես կամեր-յուսկերի աստիճան: Այժմ Ղիվանագիտության ճամպան բաց և առկա:

Զնայած այդ խոսքերն ասվեցին հողնածուծության և աներկբայության հանատառուն տոնով, Պիեռը, վոր այնքան մտածել էր իր կարիերայի մասին, ուղից առարկել: Բայց իշխան Վասիլին նրա խոսքը կտրեց իր թով ձայնով, վորը թույլ չէր տալիս իր խոսքն ընդհատելու և վորը նա զործ էր ածում խոսակցին վերջնականապես համոզելու համար:

— Mais, mon cher, յես այդ արել եմ ինձ համար, խիղճս հանգստացնելու համար, և ինձ շնորհակալություն հայտնելու հարկ չկա: Յերբեք վոչ-վոք չի դժգոհել, վոր իրեն շատ են սիրում. և հետո, դու աղատ ես, թեկուզ վաղը թե՛ղ հեռացիր: Բայց դու ինքդ բախրը Պետերբուրգում կտեսնես: Յե՛վ վաղուց ժամանակ և, վոր հեռանաս այս սարսափելի հիշողությաններից: — Իշխան Վասիլին հոգոց քաշեց: — Այդպես, հոգիս... Իսկ իմ սննեկապահը թող քո կառքով դնա: Ա՛, քիչ մնաց մոռանայի, — ավելացրեց դարձյալ իշխան Վասիլին, — գիտես, mon cher, վոր հանդուցյալի հետ հանքիվեր ունեյի. ուրեմն յես Ռյազանից ստացա և մնում ե ինձ մոտ. քեզ հարկավոր չի: Մենք հաշիվ կտեսնենք:

Այն, ինչ իշխան Վասիլին անվանում էր «Ռյազանից»՝ մի քանի հազար կալվածահարկ էր, վոր մնացել էր մոտը:

<sup>1</sup> Գիտեք, զործերի մեջ խրված եմ. բայց անխղճության կլինեք ձեզ թողնել այդպես. պարզ է, ինչ ասալարկում եմ ձեզ, զա միակ հնարավոր բանն է:



Պետերբուրգում էլ, ինչպես Մոսկվայում, նրան շրջապատեց քնքշալի, սիրազորով մարդկանց մի խումբը: Նա չկարողացավ հրաժարվել այն պաշտոնից կամ, ավելի շուտ, կոչումից (վորովհետև նա վախճել էր անուամբ), վոր հաջողեցրել էր նրա համար իշխան Վասիլին, իսկ ծանոթությունները, հրավերներն ու հանրային գրադումներն այնքան շատ էին, վոր Պիեռն ավելի էս, քան Մոսկվայում, համակել էր անորոշության, փութկոտության և շարունակ մոտեցող, բայց չիրականացող ինչ-վոր յերջանիկ ակընկալության դրացումը:

Իր նախկին, ամուսին ընկերներից շատերը Պետերբուրգում չէին: Դժարդիման դնացել էր կոնվ, Իոլոխովն աստիճանադուրկ էր արվել, Անատուր քանակումն էր, զաւառում, իշխան Անդրեյը արտասահմանում, ուստի և Պիեռն հաջողեց իր սիրած ձևով գիշերներ լուսացնել, վոչ էլ մի սրտագին դրույց ունենալ իր հարգելի ամսագ բարեկամի հետ: Նրա ամբողջ ժամանակն անցնում էր ճաշկերույթներում, պարահանդեսներում և առավելապես իշխան Վասիլիի տանը—գիրուկ իշխանուհու՝ իշխանի կնոջ, և գեղեցիկուհի Ելենի շրջանում:

Աննա Պավլովնա Երերը էս, ուրիշների նման, ցույց տվեց Պիեռն այն փոփոխությունը, վոր տեղի յեր ունեցել հասարակության մեջ նրա նկատմամբ:

Պիեռն ասող, Աննա Պավլովնայի ներկայությունը, շարունակ դուռն էր, ին այն, ինչ ինքն ասում է—անփազաքավարի յն, անտակա, մի խոքով այն չի, ինչ պետք է. դուռն էր, վոր իր խոսքերը իրեն թվում էին խելացի, քանի գն պատրաստում էր մաքում, բայց հիմարանում էին, հենց վոր ասում էր բարձրաձայն և վոր, ընդհակառակը, Իպոլիտի ամենաբուր խոսքերը դառնում էին խելացի ու դուրեկան: Իսկ այժմ, ինչ ասում էր, բոլորը դառնում էին charmant: Յեթե մինչև իսկ Աննա Պավլովնան այդ չէր էլ ասում, Պիեռը նկատում էր, վոր ցանկանում է այդ տեղ, և միայն իր՝ Պիեռի համեստությունը հարգելով՝ զբաղում է իրեն:

1805—1806 ձմրան սկիզբը Պիեռը Աննա Պավլովնայից ստացավ ստորական վարդապետի հրավերատոմսը, վորի վերջում ավելացված էր. «Vous trouverez chez moi la belle Hélène, qu'on ne se lasse jamais de voir»<sup>2</sup>.

Այս բառերը կարդալով՝ Պիեռն ասողին անդամ դրաց, վոր իր և Ելենի միջև ստեղծվել է մի ինչ-վոր կապ, վոր ուրիշներն էլ

<sup>1</sup> Սքանչելի:

<sup>2</sup> Ինչ մտ և լինելու գեղեցիկուհի Ելենը, վորին նայելուց չես կշտանա:



ընդունում են, և այդ միտքը միաժամանակ թե վախեցրեց նրան, — կարծես նրա վրա դրվում եր մի պարտավորութուն, վորն ինքը չի կարող կատարել, — և թե դուր յեկավ նրան, վորպես զվարճալի յենթադրութուն:

Աննա Պավլովնայի յերեկույթը նույնն եր, ինչ վոր առաջինը, միայն նորութունը, վորով Աննա Պավլովնան պատվեց իր հյուրերին, այժմ վոչ թե Մարտեմարն եր, այլ մի դիվանագետ, վոր յեկել եր Բեռլինից և ամենաթարմ մանրամասնութուններ եր բերել Ալեքսանդր Թադավորի Պատսղամ լինելու մասին և այն մասին, թե ինչպես յերկու վեհափառ բարեկամներ յերգվել են այնտեղ անցակտելի միաբանությամբ պաշտպանել արդար դատն ընդդեմ մարդկային ցեղի թշնամու: Աննա Պավլովնան Պիեռին ընդունեց մի թեթև տխրությամբ, վոր վերաբերում եր, հավանորեն, յերիտասարդին հասած դժբախտության — կոմս Բեզուխովի մահվան (բոլորը շարունակ իրենց պարտքն եյին համարում հաճատացնել Պիեռին, թե նա շատ և վշտացած հոր մահով, վորին նա համարյա չեր ճանաչում), — Աննա Պավլովնայի այդ տխրությունը նման եր այն տխրության, վոր յերեան եր դալիս նրա ղեմքին ողորտափառ կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի անունը հիշատակելիս: Դրանից Պիեռն իրեն շոյված զղաց: Աննա Պավլովնան իր սովորական ճարտարությամբ խմբեր կազմեց հյուրասրահում: Առաջին մեծ խումբը, ուր գտնվում եյին իշխան Վասիլին ու զեներալները, վայելում եր դիվանագետի ներկայությունը: Մյուս խումբը հավաքվել եր թեյի սեղանի շուրջը: Պիեռն ուզում եր միանալ առաջին խմբին, բայց Աննա Պավլովնան (ուղեմաղաչաւով զտնվող զորավարի զրգոված վիճակում լինելով, յերբ մարդու գլուխ հաղարավոր նոր փայլուն մտքեր են դալիս, վորոնք հաղթել ես կարողանում ի կատար ածել), Պիեռին տեսնելով՝ մասը դիպրեց նրա թեքին:

— Attendez, j'ai des vues sur vous pour ce soir<sup>1</sup>, — Աննա Պավլովնան նայեց Նեկին ու ժպտաց: — Ma bonne Hélène, il faut, que vous soyez charitable pour ma pauvre tante, qui a une adoration pour vous. Allez lui tenir compagnie pour 10 minutes<sup>2</sup>. Բայց վորպեսզի շատ չձանձրանաք, ահա մեր սիրեցյալ կոմսը, վոր չի հրաժարվի հետեկ ձեզ:

<sup>1</sup> Սպասեք, դուք այս յերեկո ինձ հարկավոր եք:

<sup>2</sup> Միքելիդ իմ Նեկն, դուք այսօր պետք և կարեկից լինեք զեպել իմ խեղճ մորաքույրը, վորը պաշտում և ձեզ: Մի տաս րոպեյի շափ մնացե՛ք մոտը:

Ինդեղեկուհին դնաց դեպի պատով մորաքույրը, բայց Աննա Պավլովնան Պիեռին պահեց զարձալ, ցույց տալով, վոր իրը թե դեռ անհելու չէ իր վերջին անհրաժեշտ կարգադրությունը:

— Ընդոտ ասեք, հիանալի չե, չէ,— ասավ Աննա Պավլովնան Պիեռին ցույց տալով նազանքներով հեռացող վեհապանձ զեղեցիկուհուն: — Et quelle tenue<sup>1</sup>. Այսքան ջահել աղջիկ և այսպիսի տակտ, իրեն պահելու այսպիսի շնորհք: Դա բղավում է սրտից: Յերջանիկ կլինի նա, ում Ելենը կպատկանի: Ամենահասարակ մարդն էլ, չեթե ամուսնանա հետը, ակամա ամենափայլուն դիրքը կունենա բարձր շրջանում: Այնպես չի: Յես ուզում եմ միայն ձեր կարծիքն իմանալ, — և Աննա Պավլովնան թողեց Պիեռին:

Պիեռն անկեղծորեն հաստատեց Աննա Պավլովնայի կարծիքը՝ թե Ելենն իրոք շատ լավ է պահում իրեն: Յեթե Պիեռն ինքն էլ յերբիցե մտածում եր Ելենի մասին՝ մտածում եր հենց նրա զեղեցիկության մասին և այն մասին, թե ինչպես նա արտասովոր ձևով՝ կարողանում է անխռ-արժանապատվությամբ պահել իրեն հասարակության մեջ:

Մորաքույրը յերիտասարդներին ընդունեց իր անկյունը, բայց, կարծես, ցանկացավ թաղցնել իր պաշտամունքը Ելենի նկատմամբ և ավելի յերկյուղ արտահայտել Աննա Պավլովնայի հանդեպ: Նա նայում եր Աննա Պավլովնային, ու կարծես հարցնելիս լինեւր, թե ինչ անի այս յերիտասարդներին: Հեռանալով Պիեռից՝ Աննա Պավլովնան նորից մտաւ դիպցրեց նրա թեքին ու ասավ.

— J'espère, que vous ne direz plus qu'on s'ennuie chez moi<sup>2</sup>, — ու նայեց Ելենին:

Ելենը ժպտաց մի այնպիսի տեսքով, վորն ասում եր, թե անկարելի չէ համարում, վոր մեկն իրեն տեսնի ու չաքանչանա: Մորաքույրը հազաց, թուքը կուլ տվեց ու ֆրանսերեն ասավ, թե շատ ուրախ է Ելենին տեսնելուն. հետո նույն վողջույնով ու գլխի նույն շարժումով դիմեց Պիեռին: Տաղակալի ու անկապ խոսակցության կիսին Ելենը նայեց Պիեռին ու ժպտաց նույն պայծառ, զեղեցիկ ժպտով, վորով ժպտում եր բոլորին: Պիեռն այնպես եր ընտելացել այդ ժպտին, դա այնքան քիչ բան է ասում նրան, վոր վաչ մի ուշադրություն չդարձրեց: Այդ միջոցին մորաքույրը խոսում եր Պիեռի հանդուցյալ հոր՝ կոմս Բեզուլտովի ունեցած քթախոտի տուփերի կոլեկցիայի մասին, ու ցույց տվեց իր քթախոտի տուփը: Իշխանազուտաւ Ելենը խնդրեց տուփը՝ տես-

<sup>1</sup> Յեզ ինչպես է իրեն պահում:

<sup>2</sup> Հույս ունեմ, վոր մի ուրիշ անգամ էլ չեք ասի, թե ինձ մոտ ձանձրալի չե:

նեկու հորաքրոջ ամուսնու պատկերը, վորով դարդարված եր այդ տուփը:

— Սա, յերեկի Վինեան և նկարել, — ասավ Պիեռը, տալով հայանի մանրանկարչի անունը, ու կոացավ դեպի սեղանը, վոր տուփը վերցնի, միաժամանակ ականջ դնելով մյուս շեղանի խոսակցութեան:

Նա վեր կացավ, կամենալով մյուս կողմն անցնել, բայց մորաքույրը տուփը նրան տվեց Ելենի թիկունքի վրայով: Ելենը կոացավ մի փոքր, վոր տեղ տա և, ժպտալով, յետ նայեց: Նա, ինչպես միշտ յերեկոյթներին, հաղել եր, այն ժամանակվա մոզայի համաձայն, առջևից ու յետևից բաց դռնատ: Նրա բյուստը, վոր Պիեռին միշտ թվացել եր մարմարյա, այնքան մոտ եր իրեն, վոր կարճատես աչքերն ակամա ջնկում եյին նրա ուսերի ու պարանոցի կենդանի հրապույրը, և այնպես մոտ իր շուրթներին, վոր նրանց հպելու համար բավական եր մի փոքր կոանալ: Նա զգում եր նրա մարմնի ջերմութունը, անուշահոտ յուղերի բուրմունքը և լսում կորսետի ճռնոցը, յերբ Ելենը շարժվում եր: Նա տեսնում եր վոչ թե նրա մարմարյա դեկոնկոթյունը, վոր նրա զգեստի հետ մի ամբողջութուն եր կազմում, այլ տեսնում ու զգում եր նրա մարմնի ամբողջ թովչանքը, վորը սքողված եր միայն հագուստով: Յեւ մի անգամ տեսնելով այդ՝ նա չեւ կարող տեսնել այլ կերպ, ինչպես մենք չենք կարող վերադառնալ մի անգամ արդեն բացատրված պատրանքին:

Երուզ ուրեմն մինչև այժմ չեք նկատել, թե վորքան յես չքնաղ եմ, — կարծես ասավ Ելենը: — Ձեք նկատել, վոր յես կին եմ: Յես, այո, կին եմ, վորը կարող և պատկանել բոլորին, և ձեզ նույնպես, — ասում եր նրա նայվածքը: Յեւ նույն վայրկյանին Պիեռն զգաց, վոր Ելենը վոչ միայն կարող և, այլև պետք և իր կինը լինի, և վոր այդ ուրիշ կերպ էլ չի կարող լինել:

Նա այդ բանում այդ բոլորին համոզված եր այնպես, ինչպես համոզված կլիներ նրա հետ պատկվելիս: Ինչպես կլինի այդ և յիջր — չգիտեր. չգիտեր նույնիսկ, արդյոք լավ կլինի այդ (նա մինչև իսկ զգում եր, թե այդ չգիտես ինչու, լավ չե), բայց գիտեր, վոր այդ բանը կլինի:

Պիեռն աչքերը խոնարհեց, կրկին բարձրացրեց և նորից ուղեց տեսնել նրան՝ վորպես իրեն ստար, հեռավոր մի դեղնակուհու, ինչպես տեսնում եր առաջ ամեն օր. բայց այլևս չեւ կարող: Ձեւ կարող, ինչպես մարդ չի կարող, սկզբում մշուշի մեջ նմարվող քուլախոտը ծառ համարելով, այդ քուլախոտը տեսնելուց հետո նորից ծառ համարի: Ելենն արդեն շատ մոտ եր նրան: Նա արդեն

իշխում էր Պիեռին: Յեւ յերկուսի միջև այլևս վոչ մի պատահեչ չկար, քացի Պիեռի սեփական կամքի պատահեչից:

— Bon, je vous laisse dans votre petit coin. Je vois, que vous y êtes très bien<sup>1</sup>, — լսեց Աննա Պափլոֆնայի ձայնը:

Յեւ Պիեռը, յերկուսով մտածելով, թե պարտավելի մի բան չի արել արդոք, կարմրելով շուրջը նայեց: Նրան թվում էր, վոր բոլորն իր պես գիտեն, թե ինչ է պատահել իրեն:

Փարլանց, յերբ նա մտեցավ առաջին մեծ խմբին, Աննա Պափլոֆնան ասով նրան.

— On dit que vous embellissez votre maison de Pétersbourg<sup>2</sup>.

(Դա ճիշտ էր. ճարտարապետն ասել էր, թե դա հարկավոր է, և Պիեռը, ինքն էլ չիմանալով ինչու, նորոգում էր Պետերբուրգի իր հսկայական տունը):

— C'est bien, mais ne déménagez pas de chez le prince Basila. Il est bon d'avoir un ami comme le prince, — ասով նա մղտալով իշխան Ասսիլին: — J'en sais quelque chose. N'est-ce pas?<sup>3</sup> Իսկ դուք դեռ այնքան յերիտասարդ եք: Դուք խորհրդատուի պեսք ունեք: Զնեղանաք, վոր պատավի պես խրատում եմ ձեզ: Յեթև ամառնանալու յեք՝ ուրիշ բան և նա լոց, ինչպես լուռ էմ կանայք, իրենց տարիքը հայտնելուց հետո՝ աղատելով ինչ-վոր բանի: Յեւ Աննա Պափլոֆնան մի ընդհանուր նայվածք նետեց յերկուսի վրա: Պիեռն Ելենին չէր նայում, Ելենը՝ նրան: Բայց Ելենն էլի սարսափելի մոտ է թվում նրան: Պիեռն ինչ-վոր մորլուսաց ու կարմրեց:

Տուն վերադառնալով՝ Պիեռն յերկար չկարողացավ քնել, մտածելով իրեն պատահածի մասին: Իսկ ի՞նչ էր պատահել նրան: Առջինչ, Ըմբռնում էր միայն, վոր այն կինը, վորին ճանաչում էր մանկությունից, վորի մասին անտարբեր ասում էր. «այո, դեղեցիկ է», յերբ նրան ասում էին, թե Ելենը դեղեցիկուհի չէ, նա հասկացավ, վոր այդ կինը կարող է պատկանել իրեն:

«Բայց նա հիմար է, յես ինքս եմ ասել, վոր հիմար է, — մտածում էր Պիեռը: — Ինչ-վոր զգվելի ու արդելող մի բան կա այն զգացումի մեջ, վոր նա հարուցեց իմ սրտում: Ինչ մասին, վոր նրա Անատոլ յեղբայրը սիրահարված է յեղել իր վրա, և Ելենն

<sup>1</sup> Լավ, յես ձեզ թողնում եմ ձեր փոքրիկ անկյունում: Տեսնում եմ՝ դուք ձեզ այդանց լավ եք զգում:

<sup>2</sup> Ասում են՝ Պետերբուրգի ձեր տունը զեղեցիկացնում եք:

<sup>3</sup> Այդ լավ է, բայց իշխան Ասսիլին անից մի անգամիովն: Այդպիսի բարեկամ ունենալը լավ բան է: Այդ մասին արդեն վորոշ բան գիտեմ: Այնպես չէ:

եւ սիրահարված ե յեղեւ յեղբոր վրա, վոր մի ամբողջ պատմություն ե յեղեւ, ե այդ պատճառով Անատոլին աքսորել են: Ելենի յեղբայրը Իպպոլիտն ե... Հայրը — իշխան Վասիլին... Այդ լավ չի», մտածում եր նա. ե այդ միեւնույն ժամանակ, յերր նա խորհրդածում եր այսպես (այդ խորհրդածությունները դեռ չեյին վերջացել), նկատեց, վոր ինքը ժպտում ե ե դիտակցեց, վոր առաջին խորհրդածությունների յետեից յեւնում են նոր խորհրդածություններ, վոր ինքը միեւնույն ժամանակ մտածում ե թե Ելենը վռնչեցություն ե ե յերազում ե այն մասին, թե ինչպես նա իր կինը կդառնա, ինչպես կսիրի իրեն, թե ինչպես նա՝ Ելենը կարող ե բոլորովին փոխվել, ե թե ինչպես այն բոլորը, ինչ մտածել ու լսել ե նրա մասին, կարող ե սուտ լինել: Յեւ կրկին տեսավ նրան վրա թե վորպես մի իշխան Վասիլիի ազնկա, այլ տեսավ նրա ներքին մարմինը միայն գորշ զգեստով ծածկված: Բայց ինչ՞եւ առաջ այդ բանը մտքովս չեւ անցնում: Յեւ նորից գտավ, վոր դա անկարելի յե: Նրան թվում եր, թե այդ ամուսնության մեջ ինչ-վոր զղվելի, հակաբանական ու անաղնիվ մի բան կա: Նա հիշեց Ելենի առաջին խոսքերը, նայվածքները ե միաժամանակ իրենց միասին տեսնող մարդկանց խոսքերն ու հայացքները: Հիշեց Աննա Պավլովնայի խոսքերն ու հայացքները, յերր նա խոսք բացեց իր տան նորոգության մասին, հիշեց իշխան Վասիլիի ե մյուսների հաղարավոր այգորինակ ակնարկները, ու սարսափեց, թե արդյոք ինքն իրեն վորեն բանով չի կաշկանդեւ արդեն՝ կատարելու մի այնպիսի գործ, վորը պարզապես վատ եւ վորն ինքը չպիտի անի: Բայց այդ միեւնույն ժամանակ, յերր նա այդպիսի վերջում ընդունեց, հոգու խորքերից վեր բարձրացավ Ելենի պատկերը՝ իր կանացի բովանդակ դեղեցկությամբ:

## II

1805 թվի նոյեմբերին իշխան Վասիլին վերաստուգության գործերով մեկնելու յեր չորս նահանգ: Նա այդ գործուղումն իր համար գլուխ եր բերել, վորպեսզի միաժամանակ այցելի իր քայքայված կալվածները ե, Անատոլ վորդուն (նրա զնդի բանակած տեղից) առնելով՝ նրա հետ միասին գնա իշխան Նիկոլայ Անդրեևիչ Բալկոնսկու մոտ այն նպատակով, վոր վորդուն ամուսնացնի այդ հարուստ ծերունու ազնկա հետ: Բայց մեկնելուց ու այդ նոր գործերից առաջ՝ իշխան Վասիլին անհրաժեշտ եր համարում նախ վերջացնել Պիեռի խնդիրը, վորը, ճիշտ ե, վերջնա իր ամբողջ որերն անցնում եր տանը, այսինքն՝ իշխան Վասիլիի տանը, ուր ե ապրում եր, հետո Ելենի ներկայությամբ իրեն պահում եր ծի-

մազելի, հուզված ու հիմարացածի պես (ինչպես և պետք և լինի սիրահարվածը), բայց տակավին առաջարկություն չէր արել:

«Tout ça est bel et bon, mais il faut, que ça finisse<sup>1</sup>, — ասավ իշխան Վասիլին ինքն իրեն մի առափառ, տիրության հառաչանքով, մտածելով, վոր Պիեռը, այնքան բաներով իրեն պարտական լինելով (և, Բրիտանոսը նրա հետ), այս խնդրում իրեն այնքան էլ լավ չի պահում: — Ջահելություն... Թեթևամտություն... Եւ, աստված իր հետ, — մտածեց իշխան Վասիլին, գոհունակությամբ զգալով իր բարությունը. — mais il faut, que ça finisse. Վաղը չէ մյուս սրը Ելենի անվանականությունն և, մի քանի մարդ կկանչեմ, և յեթև Պիեռը չհասկանա թե ինչ պետք և անի, այդ զեղքում արդեն յես զիտեմ, թե ինչպես պիտի վարվել: Այո, յես — հայր եմ:

Պիեռ Աննա Պալմիտայի յերեկույթից ամիս ու կես հետո և այդ յերեկույթին հետևող անքուն, հուզումնալից գիշերից հետո, մի գիշեր, յերբ նա վորոշեց, թե Ելենի հետ ամուսնանալը դժբախտություն կլիներ, և թե պետք և խուսափի նրանից ու թողնի հետանա, այնուամենայնիվ Պիեռն այդ վորոշումից հետո (վորից արդեն ամիս ու կես էր անցել) զեռ չէր տեղափոխվել իշխան Վասիլիի տնից և սարսափով զգում էր, թե որեցոր մարդկանց տչքում ինքն ավելի չէ կապվում Ելենի հետ, թե էլ չի կարող մնալ նրա նկատմամբ ունեցած նախկին կարծիքին, թե չի կարող և կարվել նրանից, թե դա սարսափելի կլինի, բայց ստիպված պիտի լինի իր բախառը կապել նրա հետ: Դուցե և նա կարողանար խույս տալ, բայց որ չէր անցնում, վոր իշխան Վասիլիի տանը (ուր հյուրասիրությունները հաղվազեպ էյին) յերեկույթ չլիներ, ուր պարտավոր էր լինել և Պիեռը, յեթև չէր ցանկանում փչացնել բնդհանուրի տրամադրությունը և չարդարացնել նրանց սպասելիքները: Իշխան Վասիլին այն հաղվազեպ բոպեններին, յերբ տանն էր լինում, Պիեռի մոտից անցնելիս, նրա թևքը քաշում էր ցած, ցրված արտահայտությամբ՝ համրույրի համար զեմ էր անում նրան իր սափրած, կնճռառ այտը և ասում կամ բժինչե վաղը՝ կամ ճճաշի մոտերքը, թե չէ էլ քեզ չեմ տեսնիք, կամ քչես քեզ համար եմ մնում: Եւ այլն: Բայց չնայած վոր իշխան Վասիլին մնում էր Պիեռի համար (ինչպես ինքն էր ասում), նա Պիեռին մի յերկու խոսք չէր ասում. Պիեռն էլ չէր կարողանում չարդարացնել նրա սպասելիքները: Նա ամեն որ միևնույն բանն էր ասում իրեն. «Պետք է, վերջապես, հասկանամ Ելենին և ինձ

<sup>1</sup> Այս ամենը լավ, բայց պետք և վերջացնել:



հաշիվ տամ, թե ով է նա: Արդյոք առաջ եմ սխալվել, թե՞ հիմա եմ սխալվում: Վաչ, Ելենը հիմար չի. վոչ, նա սքանչելի ազդիկ է, — ասում եր յերեկոյն Պիեռն ինքն իրեն: — Ելենը յերեկո վոչ մի բանում չի սխալվում, յերեկո հիմար բան չի ասել: Նա քիչ է խոսում, բայց այն ինչ ասում է՝ միշտ հասարակ է ու պարզ: Նա հիմար չի: Յերեկո չի շփոթվել և չի շփոթվում: Ուրեմն նա՝ վատ կի՛ն չի: Հաճախ եր պատահել, վոք Պիեռը նրա հաս խոսել-խոք-հրդածել եր, և ամեն անգամ Ելենը նրան պատասխանել եր կամ կարճ, բայց տեղին ասված դիտողությամբ, վոք ցույց եր տալիս, թե այդ բանը նրան չի հետաքրքրում, կամ անխոս ժպտով ու նայվածքով, վոքոնք ամեն բանից ավելի, շոշափնելի կերպով ցույց ելին տալիս Պիեռին նրա գերազանցությունը: Ելենն իրավացի չէ՝ բոլոր այդ դատողությունները իր ժպտի հետ համեմատած դատարկ բան համարելով:

Ելենը Պիեռին դառնում եր միշտ զվարթ, հավատով լի, միայն նրան՝ Պիեռին վերաբերող ժպտով, վոքի մեջ ինչ-վոք ավելի նշանակալից մի բան կար, քան մշտապես նրա գեմքը զարդարող սովորական ժպտում: Պիեռը գիտեր, վոք բոլորն սպասում են, վոքպեսդի նա, վերջապես, մի խոսք ասի, անցնի հայտնի սահմանագիծը, ու նա գիտեր, վոք վազ թե ուշ անցնելու չէ. բայց ինչ-վոք մի անհասկանալի սարսափ եր տիրում նրան հենց միայն այդ քայլն անելու մտքից: Ամիս ու կեսվա մեջ (վոքի ընթացքում իրեն ավելի ու ավելի խրված եր զգում այդ իրեն սարսափեցնող անգուցիղը), Պիեռը հազար անգամ ասել եր իրեն. «Սա լինչ բան է: Վճռականություն և պետք: Միթե յես այդ վճռականությունը չունեմ»:

Նա ուզում եր վճռական լինել, բայց սարսափով զգում եր, վոք այս դեպքում իրեն պակասում եր այն վճռականությունը, ինչ իսկապես զգում եր մեջը և ինչ իրոք ուներ: Պիեռը պատկանում եր այն մարդկանց թվին, վոքոնք ուժեղ են միայն այն ժամանակ, յերբ իրենց միանգամայն մաքուր են զգում: Բայց այն որից, յերբ նրան տիրեց ցանկասիրության զգացումը (վոքն սալրեց Աննա Պավլովնայի յերեկույթին, քթախոտի տուփը նայելիս), մեղավորության չգիտակցված զգացումը թուլացնում-կոտրում եր նրա վճռականությունը:

Ելենի անվանակոչության որը իշխան Վասիլիի տանն ընթրում եր ամենամոտ մարդկանց մի փոքր հասարակություն, կամ ինչպես իշխանուհին եր ասում, հարադատներն ու բարեկամները: Բոլոր այս հարադատներին ու բարեկամներին զգացնել եր տրված, թե այդ որը վճռվելու չէր Ելենի բախտը: Հյուրերը նստած ելին



ընթերցելի սեղանի շուրջը: Իշխանուհի Կուրադինան, այդ դեր, յերբնմեի սիրտն, ներկայանալի տեսքով կինը նստած եր տանտիրոջ սեղանը նրա աջ ու ձախ կողմը նստել էյին պատմալոր հյուրերը — մի փեր դեներալ, նրա կինը, Աննա Պալլոմբա Շերերը, սեղանի ծայրին նստած էյին ավելի պակաս տարիքով և նվազ հարսկէի հյուրերը. այդտեղ էլ նստած էյին տնեցիք, Պիեռն ու Լէկենն իրար կողքի: Իշխան Վասիլին ընթերցելն չէր մասնակցում. նա ուրտի տրամադրությամբ պտտւում էր սեղանի շուրջը և նստում մերթ մայս, մերթ մշուս հյուրի կողքին: Ամեն մեկին մի անգիտէի ու հաճելի խոսք եր տտում, բացի Պիեռից ու Լէկենից, վարանց ներկայությանը նա չէր նկատում կարծես: Իշխան Վասիլին կենդանացնում, աշխուժի յեր բերում բողբոխն: Մեղրամոմերը վտտւում էյին պայծառ, վտայում-շողշողում էյին արծաթն ու հաթապակաս ամանները, կանանց դարդերն և ուսագիրքերի արծաթն ու վոսկին. սեղանի շուրջն անցնում-դառնում էյին կարմիր կանթառն հազած սպրտալորները. լսվում էյին դանակների, բաժակների, ավանների ձայներ և սեղանի մի քանի մասերում կտատրվող զրույցների տաք-տաք խոսոցը: Լսվում էր, թե ինչպես փերուհի կամերները սեղանի մի ծայրում հալառացնում եր պտտալորտնուհուն, թե ինքը բուռն կերպով սիրում և նրան և ինչպես և պտտալոր փրծաղում. սեղանի մշուս ծայրում պտտում էյին ինչ-վոր Մարիա Վիկտորովնայի անաշղոթկան մասին: Սեղանի մեջտեղը իշխան Վասիլին եր ունկնդրներ հալաքել իր շուրջը: Նա, հեղնական մոխոր շուրթերին, կանանց պտամում եր պետական խորհրդի վերջին նիտի մասին, ուր Պետերբուրգի նոր գինւորական ընդհանուր նահանգապետ Սերգէյ Կուզմիշ Վաղմիտինովը կարդացել էր Ալեքսանդր Պալլոմբի թաղալորից ստացած, բանտկից ուղարկված, այն ժամանակ նշանավոր հրովարտակց, վորի մեջ թաղալորը, Սերգէյ Կուզմիշին դիմելով, տտում եր, թե ինքը յերկրի բոլոր կողմերից հայտարարություններ և ստանում մողովրդի անձնվորության մասին, և թե Պետերբուրգի հայտարարությունը մասնավորապես հաճելի չե իրեն, թե ինքը հպարտ և, վոր այդպիսի աղդի դուռը լինելու պատիվն ունի և կաշխատի նրան արժանի լինել: Այդ հրովարտակն սկսվում եր այս խոսքերով: Սեղեյ Կուզմիշ! Ամեն կողմից լուրեր են հասնում ինձ և այլն:

— Ուրեմն այդպես էլ «Սերգէյ Կուզմիշից» զենը չգնաց, — հարցրեց մի տիկին:

— Այո, այո, մաղաչափ անդամ, — փրծաղելով պտառախանց իշխան Վասիլին: — Սերգէյ Կուզմիշ... ամեն կողմից: Ամեն կողմից՝ Սերգէյ Կուզմիշ... Խեղճ Վաղմիտինովը վոչ մի կերպ չկարողա-

ցաւ առաջ զնայ: Մի քանի անգամ սկսեց նորից կարդալ նամակը, բայց հենց վոր ասում եր՝ Սերգեյ... հեկեկոց... Կազ... մի... չ— արցունքներ և ամեն կողմից բարձրաձայն հեկեկանքներ, և նա եւ շարունակեւ չկարողացաւ: Նորից թաշկենակներ, և նորից ամեն կողմից Սերգեյ Կազմիչ, ու արցունքներ... այնպես վոր խնդրեցին արդեն մի ուրիշը կարդալ:

— Կազմիչ... ամեն կողմից... և արցունքներ... — կրկնեց մեկը ծիծաղելով:

— Չար մի լինեք, — մատով սպառնալով, սեղանի մյուս ծայրից, ասաւ Աննա Պավլովնան, — c'est un si brave et excellent homme notre bon Viasmitinoff...<sup>1</sup>

Բոլորը շատ ծիծաղեցին: Սեղանի վերին պատվաւոր մասում ամենքն եւ, թվում եր, ուրախ եյին և ամենատարբեր զվարթ տրամադրությունների ազդեցության ներքո. միայն Պիեռն ու Ելենն եյին, վոր անխոս նստել եյին իրար կողքի, սեղանի զրեթե վարի ծայրում. յերկուսի դեմքին եւ փայլում եր մի զուսպ ժպիտ, վորը կապ չուներ Վերդեյ Կազմիչի: Հետ, — ամաթխածության ժպիտ իրենց զգացմունքների հանդեպ: Ինչ եւ ասելին և վորքան եւ ծիծաղելին ու կատակելին մյուսները, վորքան եւ ախորժակով ունեւելին խմելին և սոսե ու պաղպաղակ ուտելին, վորքան եւ խուսափելին այս զույգին նայելուց, վորքան եւ անտարբեր, անուշադիր եյին թվում դեպի այս զույգը, այսուամենայնիվ չգիտես ինչու, յերբեմն նրանց վրա նետովոյ հայացքներից զգացվում եր, վոր թե Սերգեյ Կազմիչի մասին յեղած անեկդատը, թե ծիծաղը, թե ուտելիքները — բոլորը շինծու եյին, և այդ ամբողջ հասարակության վողջ ուշադրությունն ուղղված եր միայն այդ զույգի — Պիեռի և Ելենի վրա: Իշխան Վասիլին ներկայացնում եր Սերգեյ Կազմիչի հեկեկանքը և միևնույն ժամանակ մի թեթեւ հայացք նետում աղջկա կողմը. ու այն ժամանակ, յերբ նա ծիծաղում եր, նրա դեմքի արտահայտությունն ասում եր. Վյդպես, այդպես, ամեն ինչ լավ և զնում. հիմա ամեն ինչ կլուծվի: Աննա Պավլովնան սպառնաց նրան notre bon Viasmitinoff-ի համար, բայց նրա աչքերում, վորոնք այդ վայրկյանին անցողակի նայեցին Պիեռին, իշխան Վասիլին կարդաց ապապափեալի և աղջկա յերջանկության շնորհավորանքը: Պատաւ իշխանուհին, տխուր հաղոցով իր հարեանուհուն դինի առաջարկելով ու բարկացկոտ աղջկանը նայելով, այդ հաղոցով ասաւ կարծես. այո, մեզ եւ վոչինչ չի մնում, յեթե վոչ քաղցր դինի խմել, սիրելիս:

<sup>1</sup> Դա մի այնպիսի սքանչելի մարդ է՝ մեր բարի Վյազմիտինովը:

Հիմա այս յերիտասարդների աշդպես արձակ-համարձակ յերջանիկ լինելու ժամանակն է: Բնութը հիմար բան է, ինչ պատմում էմ, կարծես դա ինձ հետաքրքրում է, — մտածում եր զիվանապետը սիրահարների յերջանիկ դեմքերին նայելով: — այս սա յերջանիկութուն էա:

Այդ հասարակութունն իրար կապող մանր, չնչին ու արհեստական շահերի մեջ բնկել եր գեղեցիկ ու առողջ յերիտասարդ ազամարդու և կնոջ գեղի միմյանց ձգտելու պարզ, հասարակ զգացմունքը: Յեւ մարդկային այդ զգացմունքը ճնշել եր ամեն ինչ ու սափառում եր նրանց բոլոր. արհեստական թոթովանքներից վեր: Կատակները զվարճալի չեյին, նորությունները — անհետաքրքիր էյին, կենդանությունը — ակներև շինծու: Վոչ միայն նրանք, այլև սեզանին սպասավորող լաքնները, թվում եր, վոր զգում էյին նույնը և մոռանում ծառայութան կարգը, նայելով գեղեցիկուհի Ելենի փայլուն դեմքին ու Պիեռի կարմիր, լեցուն, յերջանիկ ու անհանդիստ յերեսին: Թվում եր՝ մոմերի լույսերը նույնպես կենտրոնացած էյին միայն այդ յերկու յերջանիկ դեմքերի շուրջը:

Պիեռն զգում եր, վոր ամեն ինչի կենտրոնն ինքն է, ու այդ հանդամանքը թե ուրախացնում և թե ճնշում եր նրան: Նա զանգում եր ինչ-վոր մի գրազումի մեջ խորատուղված մարդու վիճակում: Վոչ մի բան պարզ չեր տեսնում, չեր հասկանում և չեր լսում: Յերբեմն միայն հատուկտոր տպավորություններ և մտքեր եր ունենում:

«Սեբեմն ամեն ինչ վերջացածի արդեն, — մտածում եր նա: — Յեւ ինչպես յեղավ այս բոլորը: Այսքան շուտ: Հիմա յես դիտեմ, սա վոչ միայն Ելենի համար, վոչ միայն ինձ համար, այլև բոլորի համար առ անխուսափելորեն պետք է կատարվեր: Նրանք բոլորն այնպես են սպասում առաջ, այնպես հավատացած են, թե դա կլինի, վոր յես չեմ կարող, չեմ կարող խորեղ նրանց: Բայց լինչպես և լինելու: Զգիտեմ. բայց կլինի, անպայման կլինի, — մտածում եր Պիեռ, նայելով Ելենի՝ հենց իր աչքերի առաջ փայլող ուսերին:

Մեկ էլ հանկարծ ամառում եր ինչ-վոր մի բանից: Անհարմար եր զգում, վոր ինքը գրավել և բոլորի ուշադրությունը, վոր ինքը բախտավոր և ուրիշների աչքում, վոր ինքն իր տղեղ դեմքով ինչ-վոր մի Պարիս է՝ Հեղինեյին ախրացած: «Բայց, յերես, այս բանը միշտ այսպես և լինում և այսպես և հարկավոր, — մոխթաբում եր նա իրեն: — Բայց յես լինեմ արեւ այս բանի համար: Սա յերբ սկսվեց: Մտեկվայից մեկնեցի իշխան Վասիլի հետ միասին: Այստեղ գետ վաչինչ չկար: Հետո լինու նրա տանը չիջեա-

նեյի, Հետո յես Ելենի հետ թուզի՞ խաղացի և բարձրացրի նրա ընկած ուղիկայուլը, նրա հետ կառքով դրոսնելու գնացի: Իսկ յԵրբ սկսվեց սա, յերբ կատարվեց այս բոլորը, Յեվ ահա վորպես փեսացու նստած և նրա կողքին. լսում, տեսնում, զգում և նրա մերձավորությունը, նրա շնչատությունը, նրա շարժումները, նրա գեղեցկությունը: Մեկ ել նրան թվում էր, թե այդ Ելենը չե, այլ նա ինքն և այդպես չտեսնված գեղեցիկ, և այդ և պատճառը, վոր այնպես նայում են իրեն, և նա, ընդհանուր հիացումից յերջանիկ, կուրծքն ուզողում է, զլուխը բարձրացնում և ուրախանում իր բախտավորության վրա: Հանկարծ մի ձայն, մեկի ծանոթ ձայնը լսեց, վոր յերկրորդ անգամն արդեն ինչ-վոր բան և ասում իրեն: Բայց Պիեռն այնպես և դրադոված, վոր չի հասկանում ինչ են ասում իրեն:

— Հարցնում եմ, յԵրբ ստացար Բալիսնսկու նամակը, — կրկնեց իշխան Վասիլին յերրորդ անգամ: — Վորքան ցրված ես, սիրելիս:

Իշխան Վասիլին ժպտում և, Պիեռը տեսնում և, վոր բոլորը, բոլորը ժպտում են իր և Ելենի վրա. «Ե, ինչ կա վոր, յեթե բոլորդ դիտե՞ք», — ասում էր Պիեռն ինքն իրեն: «Ե, լինչ կա վոր. չի՞շտ ե՞ս, և նա ինքն ել ժպտում և իր հեզ, մոսկակա՞ն ժպտով, Ելենն ել և ժպտում:

— Բայց յԵրբ ստացար նամակը: Ումյուցլից եր ուղարկված, — կրկնում և իշխան Վասիլին, կարծես այդ բանը պետք և նրան վե՞ճը լուծելու համար:

«Կարելի՞ և արդյոք խոսել ու մտածել այդտեսակ դատարկ բաների մասին, մտածում և Պիեռը:

— Այո, Ումյուցլից, — պատասխանում է նա հառաչելով:

Ընթրիքից հետո Պիեռն իր դամային մյուսների յետևից տարավ հյուրասրահ, Հյուրերն սկսեցին ցրվել և վոմանք մեկնեցին առանց Ելենին մնալ բարե ասելու: Կարծես չցանկանալով կտրել նրան իր լուրջ դրադումից՝ վոմանք մոտենում էին մի վայրկյան և իսկույն հեռանում, չթողնելով, վոր նա ուզեկցի իրենց: Դիվանագետը հյուրասրահից դուրս յեկավ տխուր լուրթյամբ: Իր գիվանագիտական կարիերան ունայն բան էր թվում նրան՝ Պիեռի յերջանկության հետ համեմատած: Մերուների գեներալը բարկացած քրթնջաց կնոջ վրա, յերբ նա հարցրեց իր վոտի դուրթյան մասին: «Ե, տգեղ արարած, — մտածեց նա: — Այ, Յեկենա Վասիլենան հիսուն տարեկան ել դառնա՞ գեղեցկուհի կմնա:

— Կարծում եմ կարող եմ ձեզ շնորհավորել, — շնջաց Աննա Պավլովնան իշխանուհուն և պինդ համբուրեց նրան: — Յեթե դժբաղ-  
ցավս չլինե՞ր՝ կմնայի:

Իշխանուհին վռնէնէ չպատասխանեց. նրան տանջում էր ազնկա յերջանկության նկատմամբ ունեցած նախանձը:

Պիեռը հյուրերին համարու դնելու միջոցին յերկար մնաց Ելենի հետ մենակ՝ փոքրիկ հյուրասրահում նստած: Նա առաջ էլ, վերջին ամիս ու կեսիս ընթացքում, հաճախ մնում էր Ելենի հետ մենակ, բայց յերբեք սիրո մասին չէր խոսում նրա հետ: Այժմ զգում էր, վոր դա անհրաժեշտ է, բայց վռնէ մի կերպ չէր կարողանում այդ վճռական քայլն անել: Ամաչում էր. նրան թվում էր, վոր այստեղ, Ելենի կողքին ինքը զբաղում է ոտար մեկի տեղը: — Այս յերջանկությունը քեզ համար չէ,—ասում էր նրան մի ներքին ձայն: Այս յերջանկությունը նրանց համար է, ովքեր շունեն մյն, ինչ վոր դու ունես: Բայց պետք էր մի բան ասել, և նա ասավ: Հարցրեց Ելենից, թե զո՞ւ է արդոք այստեղ յերկուշից: Ելենն իր սովորական պարզությամբ պատասխանեց, թե այս վերջին տոնախմբությունն իր համար ամենահաճելիներից մեկն էր:

Դերձավոր հարադատներից մի քանիսը դեռ մնացել էին մեծ հյուրասրահում նստած: Իշխան Վասիլին ծուլ քայլերով մտեցավ Պիեռին: Պիեռ վերկացավ և նկատեց, թե ուշ է արդեն: Իշխան Վասիլին խոսությամբ ու հարցականորեն նրան նայեց, կարծես Պիեռի ասածն այնքան ոտարոտի բան էր, վոր չէր կարելի լսել անգամ: Բայց խոսության արտահայտությունն իսկույն փոխվեց, և իշխան Վասիլին Պիեռի թեքը ձգելով, նստեցրեց նրան ու սիրալիր ժողտաց:

— Հը, ի՞նչ կա, Լիլյա, — զարձավ նա անմիջապես ազնկան, սովորական քնքշության այն անփույթ տոնով, վոր յուրացնում էն ծնողները՝ յերկտաներին մանկությունից դուրսը: Ելով, բայց իշխան Վասիլին այդ տանը յուրացրել էր ուրիշ ծնողների ընդունակելով:

Յեվ նա նորից Պիեռին զարձավ.

— Սերվիլ Կուզմիչ, ամին կողմից — ասավ նա, միևտի վերին կանակն արձակելով:

Պիեռ ժողտաց, և նրա այդ ժողտից յերևաց, թե հասկանում է, վոր այդ միջոցին Սերվիլ Կուզմիչի անեկդոտը չէր, վոր հետաքրքրում էր իշխան Վասիլին. իշխան Վասիլին էլ հասկացավ, վոր Պիեռն բմբունեց այդ, և հանկարծ, ինչ-վոր վրա տալով, զուրա յեկավ Պիեռին թվաց, թե անգամ իշխան Վասիլին շփոթված է: Յեվ այդ խոտարարու աշխարհիկ մարդու շփոթված տեսքը հուզեց Պիեռին. նայեց Ելենին — նա յեկ, կարծես, շփոթված էր, բայց նայվածքն ասում էր. «Ինչ կա վոր, դուք ինքներդ եք մեղավոր»:

«Պետք է անպատճառ սահմանադիմ անցնել, բայց չեմ կարող, չեմ կարող», մտածեց Պիեռը, և նորից խոսեց կողմնակի նյութերի մասին, Սերգեյ Կուզմիշի մասին, հարցնելով, թե ինչ եր այդ անեկդոտի իմաստը, վորովհետև ինքը չի լսել, Ելենը ժպտալով պատասխանեց, թե ինքը նույնպես չգիտի:

Յերբ իշխան Վասիլին հյուրասրահ վերադարձավ, իշխանուհին մի տարիքոտ կնոջ հետ կամացուկ խոսում եր Պիեռի մասին:

— Իհարկե, c'est un parti très brillant, mais le bonheur, ma chère...<sup>1</sup>

— Les mariages se font dans les cieux<sup>2</sup>, — պատասխանեց տարիքոտ կինը:

Իշխան Վասիլին, իբր թե կանանց չլսելով, դնաց նստեց անկյունի բազմոցին: Աչքերը փակեց ննջողի պես: Հանկարծ գլուխը հակեց, և նա աչքերը բաց արավ:

— Aline, — ասավ նա կնոջը, — allez voir, ce qu'ils font<sup>3</sup>.

Իշխանուհին մոտեցավ դռանը, անտարբեր անցավ նրա մոտով ու մի հայացք նետեց փոքրիկ հյուրասրահի ներսը: Պիեռն ու Ելենը առավիս պես նստած զրուցում էին:

— Նույն դրությունն է, — պատասխանեց նա մարդուն:

Իշխան Վասիլին հոնքերը կիտեց, բերանը ծոց մի կողմ, այտերը ցնցվեցին անհամ ջգածությունով, և նա ինքն իրեն թափահարելով, վեր կացավ ու, գլուխը յետ գցած, վճռական քայլերով, կանանց մոտով, անցավ-դնաց փոքրիկ հյուրասրահը: Փութկոտ քայլերով մոտեցավ Պիեռին մի այնպիսի շտենսված հանդիսավոր կերպարանքով, վոր Պիեռը, նրան տեսնելով, վախեցած վոտի կանգնեց:

— Փաճոք աստծո, — ասավ նա: — Կինս բոլորը պատմեց: — Նա մի ձեռով զրկեց Պիեռին, մյուսով աղջկան: — Լեյլա, սիրելիս: Յես շատ, շատ ուրախ եմ: — Նրա ձայնը դողաց: — Պիեռ, յես սիրում եմի հորդ... Ելենը քեզ համար լավ կին կլինի... Թճոք աստծու որդի-նությունը ձեզ վրա լինի...

Նա զրկեց աղջկան, հետո նորից Պիեռին ու համբուրեց նրան վատ հոտ արձակող բերանով: Յեվ արցունքներն, իբր թե թրջեցին նրա այտերը:

— Իշխանուհի, արի այտեղ, — ձայն տվեց նա:

Իշխանուհին ներս մտավ և նույնպես արտասովեց: Տարիքոտ կինն էլ թաշկինակը տարավ դեպի աչքերը: Պիեռին համբուրե-

<sup>1</sup> Իհարկե, շատ փայլուն գույք է, բայց յերջանկությունը, սիրելիս...

<sup>2</sup> Ամուսնությունները կատարվում են յերկնքում:

<sup>3</sup> Ալինա, գնա տես ինչ են անում:



ցին, և նա ինքն էլ մի քանի անգամ համբուրեց զեղեցկուհի Ելենի ձեռքը Փոքր անց նրանց նորից թողին մենակ։

«Այս բոլորն այսպես էլ պիտի լիներ և ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, — մտածում էր Պիեռը, — ուստի ավելորդ և հարցնել՝ լնոյ և այս թե զատ։ Լնոյ և, վորովհետև վորոշ և, և առաջվա տանջող կասկածը չկա։ Պիեռն անխոս բռնել էր հարսնացուի ձեռք և նայում էր նրա բարձրացող ու իջնող զեղեցիկ կրծքին։

— Ելեն, — ասավ բարձրաձայն ու կանգ առավ։

«Այսպիսի զեպքում մի ինչ-վոր ասանձին բան են ասում, մտածեց նա, բայց վաղ մի կերպ չկարողացավ հիշել, թե իսկապես ինչ են ասում այդպիսի զեպքերում։ Նայեց Ելենի զեմքին։ Ելենը՝ չիկնած զեմքով ավելի մոտեցավ նրան։

— Ահ, վերցրեք այդ... այդ... — նա ցույց տվեց ակնոցը։

Պիեռն ակնոցը վերցրեց, և նրա աչքերը, ակնոցը վերցրած մարդկանց աչքերի տարբերակ արտահայտությունից զատ, վախեցած հարցական նայվածք ունեյին։ Նա ուղեց կռանալ համբուրել Ելենի ձեռքը, բայց, Ելենը զլիտ արագ ու մոլեղին շարժումով շուրթերը հպեց Պիեռի շրթունքներին։ Նրա զեմքը՝ իր վրձնված ու անհաճոցրված արտահայտությամբ՝ զարմացրեց Պիեռին։

«Այժմ արդեն ուշ է, ամեն ինչ վերջացած է, յես էլ արդեն սիրում եմ նրան, մտածեց Պիեռը։

— Je vous aime!<sup>1</sup> — ասավ նա, հիշելով, վերջապես, թե ինչ պիտի ասել այդպիսի զեպքերում։ Բայց այդ խոսքերը հնչեցին այնպես հասարակ, վոր ինքն իրենից ամաչեց։

Ամիս ու կես հետո Պիեռը պակովեց և, ինչպես ասում էյին, իրրե զեղեցիկ կնոջ ու միլիոնների յերջանիկ տեր, բնակություն հաստատեց կամ Բեզուլթոնների Պետերբուրգի մեծ՝ նոր միայն նորոգված տանը։

### III

Ծերունի իշխան Նիկոլայ Անդրեևիչ Բալկոնսկին 1805 թվի զեկտեմբերին՝ իշխան Վասիլիից մի նամակ ստացավ, վորով նա տեղեկացնում էր, թե վորդու հետ միասին գալիս և («Յես դնում եմ վերստուգության և, իհարկե, հարյուր վերստն ինձ համար ավելորդ ճանապարհ չի, վորպեսզի այցելեմ ձեզ, հարգելի բարերար, — դրում էր նա. — ինձ ուղեկցում և և Անատոլ վորդիս, վոր բանակ է՝ դնում, և հույս ունեմ, վոր թույլ կտաք իրեն անձամբ արտահայտելու այն խորին հարգանքը, վորը նա, հորը հետեւով, տածում և զեպի ձեզ»)։

<sup>1</sup> Յես ձեզ սիրում եմ



— Ահա վասիկ, Մարիային եւ մայրաքաղաքները տանելու կարիք չկա. փեսացուներն իրենք են մեզ մոտ դալիս, — անդգուշաբար ասավ փոքրիկ իշխանուհին, այդ լուրը լսելով:

Իշխան Նիկողայ Անդրեևիչը դեմքը կնճռեց և վռչինչ չափով: Նամակն ստանալուց յերկու շաբաթ հետո, մի յերևիս, առաջուց յեկան իշխան Վասիլիի սպասավորները, իսկ հետեյալ որն յեկան ինքն ու վորդին:

Ծերունի Բալկոնսկին առհասարակ բարձր կարծիք չուներ իշխան Վասիլիի նկարագրի մասին, մանավանդ վերջին ժամանակներս, յերբ իշխան Վասիլին նոր թագավորներ Պավլիկ և Ալեքսանդրի որոք շատ առաջ էր դնացել և բարձր աստիճանների ու պատիվների արժանացել: Իսկ այժմ, նամակի և փոքրիկ իշխանուհու ակնարկներից հասկացավ նրա դալու սպասակը, և նրա մասին ունեցած վաղ բարձր կարծիքը իշխան Նիկողայ Անդրեևիչի սրտում փոխվեց անբարյացակամ արհամարհանքի: Նրա մասին խոսելիս՝ նա շարունակ փնչացնում էր: Իսկ իշխան Վասիլիի դալու որն առանձնապես դժգոհ էր և վատ արամադրության մեջ: Արդյոք նրանք երկուսն էլ վատ արամադրության մեջ, վոր իշխան Վասիլին դալիս էր, թե նրա դալուց առանձնապես դժգոհ էր, վորովհետև արամադրությունը վատ էր. այսպես թե այնպես նրա արամադրությունը տեղը չէր, և Տիխոնը դեռ առավոտը ճարտարապետին խորհուրդ չտվեց իշխանի սենյակը մտնել իր ղեկուցումով:

— Կո՛ւ՛մ եք, ինչպես և քայլում, — ասավ Տիխոնը, ճարտարապետի ուշադրությունը իշխանի քայլերի վրա հրավիրելով: — Կրունկների վրա յե քայլում — յես արդեն գիտեմ, թե ինչ և նշանակում...

Սակայն, սովորականի պես, ժամը իննին իշխանը դուրս յեկավ դրոսներու՝ կղաքիս փափախը դրած և նույն մորթի ոճիքով թափշյա կիսամուշտակը հաղած: Գիշերը ձյուն էր յեկել: Ծանապարհը, վարով իշխան Նիկողայ Անդրեևիչը դնում էր դեպի ջերմոցը, մաքրված էր. ավելի հետքերն յերևում էին սրբած ձյունի վրա, և թին խրված էր փերու՛ն ձյունի կիտուկի մեջ, վոր բռնել էր ճանապարհի յերկու կողմը: Իշխանը հոնքերը կիտած ու անխոս անցավ դիտեց ջերմոցներն ու նոր կառուցվող շենքերը:

— Իսկ սահնակով կարելի՞ յե ճամպա դնալ. — հարցրեց նա մինչև տունն իրեն, ուղեկցող պատվելի դեմքով և շարժ ու ձևերով ասանտիրոջ նմանող կառավարչին:

— Քոր ձյուն և, ձերդ պայծառափայլություն: Յես արդեն կարգադրեցի ծառուղին մաքրեն:

Իշխանը գլուխն իջեցրեց ու մոտեցավ պատշգամբին:

«Փանօք քեզ աստված,— մտածեց կառավարիչը, — վոթորին անցաւ»:

— Մեծ դժգոհությամբ առաջ ղենացինք, ձերդ պայծառափայլություն,— ափեկացրեց կառավարիչը: — Կեցինք, ձերդ պայծառափայլություն, վոր մինխտար և դալիս ձերդ պայծառափայլության մաս:

Իշխանը յերեսը դարձրեց դեպի կառավարիչը և կիտած հոնքերի տակից նայեց նրան:

— Ի՞նչ: Մինխտար: Ի՞նչ մինխտար: Ո՞վ և թույլ տվել, — խոսեց նա իր ձգրտան, կոշտ ձայնով: — Զանազարհը իշխանադատեր, իմ ազնկա համար չեք մարերել, այլ մինխտարի համար: Յեւ մինխտարներ չեմ ճանաչում:

— Զերդ պայծառափայլություն, յես կարծեցի...

— Դու կարծեցիր, — պոսաց իշխանը, խոսքերն հետզհետե արագ ու անկապ արտասանելով: — Դու կարծեցիր... Այադակներ, արկաններ... Յեւ քեզ կարծել կտոբրեցնեմ, — և ձեռնափայաբ բարձրացնելով՝ վրա բերեց: Ալպատիչի գլխին ու կրփեր, անշուշտ, յեթե կառավարիչն ակամա խույս չտար հարվածից: — Կարծեցիր... Անդդամներ, — շտաղ-շտաղ պոսաց նա: Բայց, չնայած վոր, Ալպատիչն, ինքն իր հանդդնությանից վախեցած (վոր խույս տվեց հարվածից), մտեցավ իշխանին, ճաղատ գլուխը հնազանդորեն իջեցրեց նրա տառ, թե դուք ևս այդ իսկ պատճառով իշխանը, շարունակելով սանդղամեք զոտով, փայտն էլ չբարձրացրեց ու իրեն քցեց ներս՝ տուն:

Ճաշից ասաջ իշխանադատարն ու m-lle Բուրիենը, իմանալով, վոր իշխանի արամադրությունը վատ և, կանգնած սպասում եյին նրան. m-lle Բուրիենի վայլոյ դեմքը կարծես ասում էր. «Յեւ վոչինչ չդիտեմ. նույնն էմ, ինչպե՞ս միշտ». իսկ իշխանադատար Մարիան — գունատ էր, վախեցած և աչքերը ցած խոնարհած: Իշխանադատար Մարիայի համար ամենից ծանր այն էր, վոր նա գիտեր, թե այդպիսի դեպքերում պետք և վարվել m-lle Բուրիենի պես, բայց չէր կարողանում այդ անել: Նրան թվում էր. «այնպես անեմ, վոր իբր թե չեմ նկատում, կկարծի թե իրեն չեմ կարեկցում. իսկ յեթե ցույց տամ, վոր ինքս տխուր եմ ու վատ արամադրության մեջ, նա կտախ (ինչպես և մի անգամ յեղով), թե քիթն կախել եմ», և այլն:

Իշխանը նայեց ազնկա յերկուգած դեմքին ու փնջացրեց:

— Հիմա՞ր... — ասավ նա:

«Նա յեւ չկամ. յերեկ նրան էլ պատմել են», մտածեց նա փոքրիկ իշխանուհու մասին, վոր սեղանատանը չէր:

— Իսկ իշխանուհին ձևը և, — հարցրեց նա: — Թագնովն և...

— Մի քիչ հիվանդ և, — զվարթ ժպտալով պատասխանեց m-lle Բուրիենը, — այսօր ճաշին չի դա: Յեվ այդ հասկանալի յն նրա դրուժյան մեջ:

— Հը՛մ, հը՛մ, — ասավ իշխանն ու սեղան նստեց:

Ախանն անմաքուր թվաց նրան. բիծը ցույց տվեց ու նետեց մի կողմ: Տիտոնը բռնեց ու տվեց բուֆետապահին: Փոքրիկ իշխանուհին անառողջ չեր. բայց այն աստիճան անհաղթահարելի կերպով վախենում էր իշխանից, վոր լսելով թե նրա տրամադրությունը վատ է, վորոշեց սեղանատուն չդնալ:

— Յես յերեխայի համար եմ վախենում, — ասավ նա m-lle Բուրիենին, — աստված գիտի ինչ կարող և պատահել վախից:

Առհասարակ փոքրիկ իշխանուհին Լիսյո Գորում ապրում էր միշտ վախը սրտում ու հակակրանք էր դրում գեպի իշխանը, վորն ինքը չեր գիտակցում, վորովհետև վախն այնքան էր գերակշռում, վոր նա այդ բանը չեր կարողանում դալ: Հակակրանքի զգացում ուներ և իշխանը, բայց արհամարհանքը խլացնում էր այն: Փոքրիկ իշխանուհին առանձնապես համակրում էր m-lle Բուրիենին, որեւէ անցնում էր նրա հետ, խնդրում էր նրան գիշերել իր սենյակում և հաճախ նրա հետ խոսում էր կեսրարի մասին ու քննադատում նրան:

— Il nous arrive du monde, mon prince <sup>1</sup>, — ասավ m-lle Բուրիենը, իր վարդապետ ձեռնբերով ճեմակ անձնոցիկը բանալով: — Son excellence le prince Kouraguine avec son fils, à ce que j'ai entendu dire? <sup>2</sup> — հարցականորեն ասավ նա:

— Հըմ... այդ excellence-ը չնչին տղա յե... յես եմ նրան կոչելեդայի մեջ ընդունել տվել, — ասավ իշխանը վերափորված: — Իսկ վորդին ինչու համար և, հասկանալ չեմ կարողանում: Իշխանուհի Լիզավետա Կառլովնան և իշխանադուստր Մարիան, պուցե, գիտեն. յես չգիտեմ ինչու համար և վորդուն բերում այստեղ: Նա ինձ հարկավոր չի: — Յեվ նա նայեց կասկածիւր կտրած աղջկան:

— Հիվանդ ես, ինչ և Միխայսրի յերկյուղից, ինչպես քիչ առաջ այդ հիմար Ալեքսանդրն ասավ:

— Վո՛ւ, mon père.

Վորքան էլ m-lle Բուրիենը խոսակցության անաջող նյութ ընտրեց, նա այնուամենայնիվ կանդ չառավ և շարունակեց շա-

<sup>1</sup> Մեզ մոտ հյուրեր են գալիս, իշխան:

<sup>2</sup> Նորին պաթառափալություն իշխան Կուրագինը վորդու հետ, վորքան լսեցի:

դակրատել ջերմոցների մասին, նոր բացվող ծաղկի դեղեկելու թյան մասին, և իշխանն աղանդակից հետո մեղմացավ:

Ճաշից հետո նա դնաց հարսի սենյակը: Փաքրիկ իշխանուհին պատիկ սեղանի մոտ նստած խոսում էր պապուհի Մաշայի հետ: Արևարայրին տեսնելով՝ իշխանուհին դունատվեց:

Փաքրիկ իշխանուհին շատ էր սիրովել: Նա այժմ ավելի ազնկ էր, քան դեղեկի: Այսօր էր կախ էլին ընկել, շուրթը բարձրացել էր վեր, աչքերը սուս էլին ընկել:

— Այո, մի տեսակ ծանրութուն, — պատասխանեց նա իշխանի այն հարցին, թե ինչ է զգում:

— Վարեհ բան հարկավոր չի:

— Վոչ, merci, mon père<sup>1</sup>.

— Դե, լավ, լավ:

Նա դուրս յեկավ և դնաց մինչև պապարսը: Ալպատիչը, դուրս կախ, կանգնած էր այդտեղ:

— Ձյունը շաղ ավելի ճանապարհի վրա:

— Այո, ձերդ պայճատափայլութուն. ներեցեք, ի սեր ասածս, այդ յեղել և հիմարությամ:

Իշխանն ընդհատեց նրան ու ծիծաղեց իր անբնական ծիծաղով:

— Դե, լավ, լավ:

Նա յերկարեց ձևոր, վարն Ալպատիչը համբուրեց, և իշխանը մտավ իր ստանձնատանյակը:

Յերեկոյան յեկավ իշխան Վասիլին: Մտառադում նրան դիմափորեցին կատաղաններն ու սպասափորները և նրա սայլակն ու սահնակը աղմուկով, դիմամբ ձյուն շաղ աված ճանապարհով բերին մինչև տան թևակը:

Իշխան Վասիլին ու Անատոլին տառնձին սենյակներ հասկացրին:

Անատոլը կամգուր հանած և ձեռները մեջքին կանխած՝ նստել էր սեղանի առաջ, վորի անկյունին և սեռեղ էր իր դեղեկի խոշոր աչքերը: Նա իր ամբողջ կյանքը համարում էր մի անբնական զփարճության, վոր ինչ-վոր մեկը, չգիտես ինչու, պարտավորվել էր սարքել նրա համար: Այդպես էլ պատկերացում էր իր այս ճամպորդությանը և այցելությունը չար ծերունուն և նրա հարուստ ու տղեղ ժառանգունուն: Այս ամենը, նրա յենթադրությամբ, կարող էր շատ լավ և զփարճալի ընթացք ունենալ: Յեկ ինչ՞ու, հպարտվել, յերբ այդ իշխանադուստրը հարուստ և Դա ընտել չի խանդարում, մասածեց Անատոլը:

<sup>1</sup> Ենթահակալ էմ, հարիկ:

Նա ամիլլից, խնամով ու արձնասիրությամբ ոծվեց բուրավետ ոծանելիքներով և իր բնածին բարեհոգի-հաղթական արտահայտությամբ, գեղեցիկ դուխը բարձր բռնած՝ զնաց հոր սենյակը։ Իշխան Վասիլիի յերկու սենեկապահը խնամով հաղցնում էյին նրան։ Նա ինքն յեռանդով շուրջն էր նայում. զվարթությամբ գլխով արավ ներս մտնող վորդուն, վոր կարծես ասելիս լիներ. «Այդպես, դու ինձ այդպես ել պետք ես»։

— Ձե, հայրիկ, առանց կատակի, շատ և տղեղ։ Հը՞, — հարցրեց նա, կարծես շարունակելով մի խոսակցություն, վոր ճանապարհին շատ անդամ էյին ունեցել։

— Հերիք եւ Հիմարություն եւ Գլխավորը — աշխատիր հարգալից ու խոհեմ լինել ծեր իշխանի հետ։

— Յեթե հանդիմանի՝ կթողնեմ-կերթամ, — ասով Անատուլը։ — Յես այդ ծերունիներին տանել չեմ կարող։ Հը՞։

— Հիշիր, վոր քս վարժից և կախված ամեն ինչ։

Այդ միջոցին աղջկանոցում վոչ միայն մինխտրի ու նրա վորդու գալն էր հայանի, այլև նրանց արտաքինն արդեն մանրամասնորեն նկարագրված էր։ Իշխանադուստր Մարիան մենակ նստել էր իր սենյակում և իդուր աշխատում էր զսպել-հաղթահարել իր ներքին հուզումը։

Երնչճև էյին դրում, ինչճև Լիզան ասով ինձ այդ մասին։ Ձե վոր այդ բանը չի կարող դուխ գալ, — ասում էր նա ինքն իրեն, հայելուն նայելով։ — Ել ի՞նչպես դնամ հյուրասրահ։ Յեթե անդամ նա ինձ դուր գա, յես չեմ կարող այժմ նրա հետ անկեղծ լինել։ Սակայն հոր նայվածքը հիշելով միայն սարսափ էր զգում։

Փոքրիկ իշխանուհին և m-lle Բուրիենը բոլոր հարկավոր տեղեկություններն արդեն ստացել էյին սպասուհի Մաշայից, թե վորքան կարմրեհա, սևահոն գեղեցիկ տղամարդ և մինխտրի վորդին, թե ինչպես հայրը վտտները հաղիվ էր փոխել աստիճանները բարձրանալիս, իսկ վորդին, արծվի պես, յերեք աստիճան միանգամից էր անցել։ Այս տեղեկություններն ստանալով, փոքրիկ իշխանուհին ու m-lle Բուրիենը, զեռ միջանցքում յեռանդուն խոսակցելով, մտան իշխանադատեր սենյակը։

— Ils sont arrivés, Marie<sup>1</sup>, դիտեք, — ասով փոքրիկ իշխանուհին, փորը դժվարությամբ շարժելով և ծանրորեն բազկաթուռ նստելով։

Նա այլևս առավոտյան հազուստով չէր. հազել էր իր ամենալավ զգեստներից մեկը. դուխը հարգարել էր խնամով, իսկ դեմքը փայլում էր մի առանձին կենդանությամբ, վորի տակից, սակայն,

<sup>1</sup> Նրանք յեկան. Մարի։

յերևում էյին նրա ամբօժած ու քարացած դիմադժերը։ Այդ հագուստի մեջ, վարով սովորաբար լինում էր նա Պատերազմի աշխարհիկ շրջաններում, ավելի ևս նկատելի չէր, թե վարքան շատ և աղեկացել նա։ M-lle Բուրիենին վրա նույնպես յերևացել էր հազուադէպ աննկատելի բարեկամում, վարք նրա սիրունիկ, թաքմ գեմքին ավելի շատ հմայք էր տալիս։

— Eh bien, et vous restez comme vous êtes, chère princesse? — խոսեց նա։ — On va venir annoncer, que ces messieurs sont au salon; il faudra descendre, et vous ne faites pas un petit brin de toilette! <sup>1</sup>

Փոքրիկ իշխանուհին վեր կացավ տեղից, դանդահակեց սպասուհուն և ուրախ-զվարթ սկսեց մտածել, թե ինչպես հագցնել իշխանազուստը։ Մարիային։ Իշխանազուստը Մարիան իր սեփական արժանապատիւ թխան զգացումը վերափոխած էր համարում, վար խոստացված փեսացուի դալուստը հուզեց իրեն, և էլ ավելի վերափոխված էր նրանից, վար իր յերկու ընկերուհին չէին ևլ յենթադրում, թե դա այլ կերպ կարող և լինել։ Ասել նրանց, թե ամսթ և զգում իր և նրանց համար, նշանակում և մատներ իր հուզումը։ Բացի դրանից՝ նրաժարվեր առաջարկված հագուստներից՝ դա ասել կտար յերկար ու բարակ կատակների ու թախանձանքների։ Նա կարմրեց, գեղեցիկ աչքերը հանդան, դեմքը ծածկվեց բծերով և նա, դոնարեքովի այն վոչ գեղեցիկ արտահայտութեամբ, վար համար լինում էր նրա գեմքին, անձնատուր յեղավ m-lle Բուրիենին ու Լիզային։ Այդ յերկու կիներն ևլ միանգամայն անկեղծորեն աշխատում էին գեղեցկացնել նրան։ Նա այնքան աղեղ էր, վար վոչ մեկը չէր կարող մտածել հետք մըցելու մասին։ Ուստի նրանք միանդամայն անկեղծորեն, կանացի միամիտ ու հաստատ համոզումով, թե հազուադէպ գեղեցկութուն և տալիս գեմքին, սկսեցին հագցնել նրան։

— Վոչ, ma bonne amie <sup>2</sup>, այս հազուադէպ լավ չի, — ասում էր Լիզան, հեռից, կողքանց իշխանազուստը գննելով։ Դու այնտեղ մուդ կարմիր զգեստ ունես, ասն թող բերեն։ Բակապես Գուցե և այսար վճռվում և բախտդ։ Սա չափազանց պայծառ և լավ չի, վոչ, վատն է։

Վատը վոչ թե հազուադէպ էր, այլ իշխանազուստը գեմքն ու կազմվածքը, բայց m-lle Բուրիենին ու փոքրիկ իշխանուհին այդ

<sup>1</sup> Եւ, իսկ դուք միայն յեր ձեր հագի զգեստներով, իշխանազուստը չիմա կդան կհայանեն, թե սեղանատու ևն յեկել։ Ստիպված պիտի լինենք ցած իջնել։ Իսկ դուք գտնե մի քիչ զարգարվելք։

<sup>2</sup> Իմ բարի բարեկամ։

չեյին զգում. նրանց շարունակ թվում էր, թե յեթե վերև սանրած մազերին յերկնազույն ժողովեն կապեյին, և յեթե կինամոնազույն հազուստի վրայից մի յերկնազույն շարժի իջնցնեյին և այլն, այդ գեպքում ամեն ինչ լավ կլիներ: Նրանք մոռանում էին, վոր ահարեկված դեմքն ու կազմվածքը չէր կարելի փոխել, ուստի և վորքան էլ ձևափոխում էին այդ դեմքի շրջանակն ու զարդարանքը, դեմքն ինքը մնում էր վողորմելի ու աղեղ: Յերկու թե յերեք փոփոխությունից հետո, վորին իշխանադուստրը համակերպեց հլությամբ, յերբ նրա մազերը սանրեցին գեպի վեր (ինչ-վոր բուրբուկին փոխեց ու փշացրեց նրա դեմքը), յերբ նա հազով մուգ կարմիր զգեստը՝ յերկնազույն շարժով հանդերձ, փոքրիկ իշխանուհին մի յերկու անգամ պտտվեց նրա շուրջը, փոքրիկ ձեռով ուղղեց զգեստի ծալքը, շարժեց և, դուրսը թեքելով, դիտեց մերթ այս, մերթ մյուս կողմից:

— Վոչ, այս չի կարելի, — ասավ նա ձեռներն իրար զարկելով. — Non, Marie, décidément ça ne vous va pas. Je vous aime mieux dans votre petite robe grise de tous les jours. Non, de grâce, faites cela pour moi<sup>1</sup>. Կատյա, — ասավ նա սպասուհուն, — դնա իշխանադուստր մոխրազույն զգեստը բեր, և հիմա կոեսնեք, m-lle Բուրիենն, թե ինչպես կհարմարեցնեմ, — ասավ նա արտիստական հաճույքը նախաճաշակողի ժպիտով:

Բայց յերբ Կատյան պահանջված հազուստը բերեց, իշխանադուստր Մարիան անշարժ հայելու առջև նստած, նայում էր իր դեմքին, մեկ էլ նկատեց, վոր աչքերը լցվել են արցունքով, բերանը զոդում է, պատրաստվելով հեկեկալ:

— Voyons, chère princesse, — ասավ m-lle Բուրիենն, — encore un petit effort<sup>2</sup>.

Փոքրիկ իշխանուհին, շրջազգեստն սպասուհու ձեռից առնելով, մոտեցավ Մարիային:

— Վոչ, հիմա կանենք բուրբուկին պարզ կերպով, — ասավ նա: Նրա, m-lle Բուրիեննի և Կատյայի (վոր ծիծաղում էր ինչ-վոր բանի վրա) ձայները միախառնվեցին մի ուրախ թոթովանքի մեջ, վոր նման էր թռչունների գեղգեղանքի:

— Non, laissez-moi<sup>3</sup>, — ասավ իշխանադուստրը:

<sup>1</sup> Վոչ, Մարի, ես քեզ բուրբուկին չի սաղում: Յեւ քեզ քո ամենօրյա մոխրազույն շրջազգեստով ավելի յեմ սիրում. ինչպե՞ս էմ, այդ բանն արա ինձ համար:

<sup>2</sup> Դե, իշխանադուստր, զիմացեք մի փոքր էլ:

<sup>3</sup> Վոչ, թողեք ինձ:



Յեւ ձայնը հնչեց այնպես լուրջ և տառապանքի այնպիսի շեշտով, վոր խնչունների գեղգեղանքն իսկույն լռեց: Նայեցին նրա արցունքով ու մտածումներով լեցուն աչքերին, վորոնք աղբրանքով հասել էր իրենց վրա, և հասկացան, վոր անողուտ և նույն-իսկ անդթություն և պնդելը:

— Au moins changez de coiffure, — ասով փոքրիկ իշխանուհին: — Je vous disais, — հանդիմանանքով ասով նա, m-lle Բուրինին դանդաղ: — Marie a une de ces figures, auxquelles ce genre de coiffure ne va pas du tout. Mais du tout, du tout. Changez de grâce<sup>1</sup>.

— Laissez-moi, laissez-moi, tout ça m'est parfaitement égal<sup>2</sup>, — պատասխանեց արցունքները զմարությամբ զսպող իշխանագուստը:

M-lle Բուրինին և փոքրիկ իշխանուհին ստիպված էին խոստովանել իրենք իրենց, վոր իշխանազուստը Մարիան այդ կերպ ավելի աղեղ էր, քան յերբեք. բայց արդեն ուշ էր: Նա նայեց նրան՝ մտածումների ու ակնթափյան մի արտահայտությամբ, վոր ծանոթ էր նրանց և վախ չէր ներշնչում իշխանազուստը Մարիայի հանդեպ: (Նա այդպիսի դրացում չէր ներշնչում և վաշ-վաքի): Բայց դիտեցին, վոր յերբ այդ արտահայտությունը յերևում և նրա դեմքին, նա դանդաղ և լռակցաց և իր վորոշումների մեջ անհողողով:

— Vous changerez, n'est-ce pas<sup>3</sup>, — ասով Լիզան, և յերբ իշխանազուստը չպատասխանեց, Լիզան դուրս յեկավ սենյակից:

Իշխանազուստը մնաց մենակ: Նա Լիզայի ցանկությունը չկատարեց. վաշ միայն գլխի սանրվածքը չփոխեց, այլև հայելուն չնայեց: Նա, աչքերը խոնարհելով և ձեռներն անդոր ցած կախելով, մնաց անխոս ու մտածկոտ նստած: Նրան պատկերացավ ամուսինը, մի ազամարդ, ուժեղ, գերիշխող և անըմբռնելիորեն-գրավիչ մի եակ, վորը հանկարծ փոխադրում և նրան իր, միանդամայն այլ, յերջանիկ աշխարհը: Եւ յերեխան (այնպիսի մի յերեխա, վոր յերեկ տեսավ սանտուհի աջկա դրկին) պատկերանում էր նրան իր սեփական կրճերն: Ամուսինը կանգնել ու քնքշությամբ նայում և իրեն ու յերեխային: Եւ բայց վաշ, դա անհնարին բան և յես չափազանց աղեղ եմ, մտածեց նա:

— Համեցեք թիկի: Իշխանը հիմա դուրս կգա, — ասով սպասուհին դուռն յետևեց:

<sup>1</sup> Դռն մազերի սանրվածքը փոխեցեք: Մարիայի գեմքն այնպիսի գեմքերից է, վորոնց այդ մեկ սանրվածքը չի սաղում: Փոխեցեք, խնդրեմ:

<sup>2</sup> Թույլ եմ, միևնույն և ինձ համար:

<sup>3</sup> Դուք կփոխեք, այնպես չի:

Իշխանազուստըն սթափվեց ու սարոսափեց իր մտածումներին: Յեղ նախքան ցած իջնելը, նա վեր կացավ, անցավ սրբապատկերներով զարդարված աղոթասենյակն ու, աչքերը սևեռելով կանթեղի լույսով լուսավորված փրկչի խոշոր սրբապատկերին, ձեռները ծալած մնաց մի քանի րոպե կանգնած: Տանջող մի կասկած կար նրա հոգում: Ի՞ր համար հնարավոր է արդյոք սիրո խնդում, յերկրային սեր դեպի ազամարդը: Ամուսնության մասին մտածելով՝ իշխանազուստը յերազուստ երևալով, ընտանեկան յերջանակություն է յերեխաներ, բայց նրա գլխովոր, զորավոր ու թաղուն յերազը՝ յերկրային սերն երբ Այդ զղացմունքն այնքան ավելի յեր սաստկանում, վորքան ավելի յեր աշխատում թաղցնել ուրիշներից և անդամ իրենից: «Աստված իմ, — ասում եր նա, — լինչպես անեմ, վոր սըրտումս ճնշեմ այս սաստանայական մաքերը: Ինչպես անեմ, վոր ընդմիջտ հրաժարվեմ շար մաքերից, վորպեսզի հանդիստ սրտով կատարեմ քո կամքը: Հազիվ եր նա այս հարցը տվել, յերբ աստված արդեն պատասխանեց նրան իր սեփական սրտում. «Վաչկնչ մի ցանկա քեզ համար. մի վորոնիք, մի հուզվիր, մի նախանձիր: Մարդկանց ապագան ու քո ճակատագիրը պետք է անհայտ մնա քեզ. բայց ապրիր այնպես, վոր պատրաստ լինես ամեն ինչի: Յեթե աստծուն հաճելի լինի փորձել քեզ ամուսնության պարտականությանց մեջ, պատրաստ յեղիր կատարելու նրա կամքը: Այս հանդատացուցիչ մաքով (բայց և այնպես իր արդեված, թաղուն յերկրային յերազանքի իրագործման հույսով) իշխանազուստը Մարիան, հոգաց քաշելով, խաշակնքեց յերեսն ու ցած իջավ, չմըտածելով վաչ շրջադեհատի, վոչ մաղերի սանրվածքի մասին, վոչ ել այն մասին, թե ինչպես պիտի ներս մտնի և ինչ պիտի ասի: Այս բոլորն ինչ նշանակություն ունեն աստծու նախասահմանության հետ համեմատած, առանց վորի կամքի մի հատիկ մաղչի ընկնում մարդու գլխից:

#### IV

Յերբ իշխանազուստը Մարիան ցած իջավ՝ իշխան Վասիլին ու վորդին արդեն հյուրասարհում զրուցում էին փոքրիկ իշխանուհու և m-lle Բուրբինի հետ: Յերբ նա իր ծանր քայլվածքով, կրունկների վրա քայլելով, ներս մտավ, ազամարդիկ և m-lle Բուրբիննք վեր կացան տեղներից, իսկ փոքրիկ իշխանուհին նրան ցույց տալով՝ ասավ ազամարդկանց. Voilà Marie! Իշխանազուստը տեսավ բոլորին և տեսավ ամենայն մանրամասնությամբ: Տեսավ իշխան Վասիլի դեմքը, վոր իրեն տեսնելիս մի ակնթարթ մնաց անշարժ, ապա անմիջապես ժպտաց. և փոքրիկ իշխանուհու դեմքը, վոր հետա-

քրքրուիլամբ հետեւում էր հյուրերին՝ Մարիայի թողած ապաւորու-  
 թյունը նրանց դեմքին կարդալու։ Իշխանադուստրը տեսաւ և m-ile  
 Բուրիենին՝ իր ժապավենով ու սիրունիկ յերեսով, վոր հետեւեալ  
 յետեւողուն նայեալաքը սեւեւել էր նրա վրա։ Բայց իշխանադուստրը  
 չկարողացաւ տեսնել նրան։ Եւ տեսաւ միայն խոշոր, պայծառ ու  
 զնգեցիկ մի բան, վոր զեղ իրեն զարձակ, յերբ ինքը սենյակ  
 մտաւ։ Ատեցաւ նախ իշխան Վասիլին, և իշխանադուստրը համ-  
 բուրեց նրա ճաշատ դուռը, վոր իջեցրել էր իր ձեռը համբուրե-  
 լու, և նրա խոսքերին պատասխանեց, թէ ինքն, ընդհակառակը,  
 նրան՝ իշխանին շատ լավ և հիշում։ Հետո նրան մտեցաւ Անա-  
 տուրը։ Իշխանադուստրը զարձակ չտեսաւ նրան։ Զգաց միայն իր  
 ձեռն ամուր բռնող նուրը ձեռքը, և շուրթերը հաղիվ մտեցրեց  
 ճերմակ ճակատին, վորի վերը պոմաղով սծված զնգեցիկ շեկ մա-  
 դեր կային։ Յերբ իշխանադուստրը նրան նայեց, նրա զնգեցիկ-  
 թյունն աղչեցրեց իրեն։ Անատուրն աջ ձեռի բթամատը մուշկրի  
 կոճակի տակը դրած, կուրծքը դուրս, իսկ մեջքը յետ գցած, մի  
 վտան սրորելով, դուռը թեթեւակի կախած, անխոս, զվարթ նայում  
 էր իշխանադուստր Մարիային, հազանորեն ամեններն նրա մասին  
 չմտածելով։ Անատուրը դուրեցելու մեջ վոչ հնարամիտ էր, վոչ ճկուն,  
 վոչ էլ պերճախոս, բայց դրա փոխարեն ուներ աշխարհիկ կյանքի հա-  
 մար մի թանկագին ընդունակութիւն — ստանալաւթիւն և ան-  
 ստանալ ինքնավստահութիւն։ Առաջին ծանոթութեան ժամանակ  
 վոչ ինքնավստահ մարդը յիմե լոկ և ցույց տա, թէ զիտակցում  
 և ալ յուր յանձնեալ անպատշաճութիւնն ու ցանկանում և վորեն  
 չէր դանել — վտա կլինի։ Բայց Անատուրը, վտան սրորելով, լուռ  
 էր և զվարթութեն զիտում իշխանադուստր Մարիայի մաղերի սանր-  
 վածքը։ Յերեսում էր, վոր նա ալգպես հանդիսա կարող էր լոկ  
 յերկար ժամանակ։ «Եթե մեկին անհարմար և թվում իմ լուս-  
 թյունը, թող խոսի, իսկ յես չեմ ցանկանում», ասում էր կարծես  
 նրա կերպարանքը։ Բացի դրանից Անատուրն ուներ կանանց հետ  
 վարովելու մի ձե, վորն ամենից ավելի կանանց ներշնչում և հե-  
 տաքրբութիւն, ահ և մինչեւ իսկ սեր, — սեփական արժանապա-  
 վութեան և գերադանցութեան զիտակցութեան ձեռ։ Նա իր տես-  
 քով կարծես ասում էր նրանց։ «Ծանաչում եմ ձեզ, ճանաչում եմ,  
 չարժի դուրս գնել ձեզ հետ։ Դուք ուրախ կլինեցիք։ Թերեւ, կա-  
 նանց հանդիպելիս, նա այս բանը չէր մտածում (չտա հազանա-  
 կան և, վոր — վոչ, վարովհետեւ նա ստանալաւ քիչ էր մտածում),  
 բայց այդպիսի տեսք ուներ և այդ տեսակ մաներ։ Իշխանադուստրն  
 զգաց այդ և, կարծես ցույց տալու համար, թէ չի համարձակ-  
 վում նրան դրադեցնելու մասին մտածել, զարձակ իշխան Վասի-

լինին։ Սկսվեց մի ընդհանուր ու կենդանի խոսակցություն՝ շնորհիվ փոքրիկ իշխանուհու ձայնի ու բեղիկներով շուրթի, վոր շարունակ բարձրանում-բացում էր նրա ճերմակ ատամները։ Նա իշխան Վասիլին զիմալորեց կատակախառն ձևով, վոր հաճախ զործարում են ուրախ-շաղկիբատող մարդիկ, վորոնց միջև յենթադրվում են վաղուց ի վեր հաստատված մտերմական կատակներ, հաճախ վոչ բոլորին հայտնի, զվարճալի հիշողություններ, այն ինչ վոչ մի աղալիսի հիշողություն չկա, ինչ վոր չուենյալին և փոքրիկ իշխանուհին ու իշխան Վասիլին։ Իշխան Վասիլին սիրով յենթարկվեց ընդունելության այդ յեղանակին։ Փոքրիկ իշխանուհին այդ մտերմական զրույցին մասնակից դարձրեց և Անատոլին, վորին գրեթե չեր ճանաչում։ Mlle Բուրինը նույնպես մասնակցեց այդ ընդհանուր զրույցին, և մինչև իսկ իշխանազուստր Մարիան հաճույքով զգաց, վոր ինքն ևս գտնվում և այդ զվարթ հիշողությունների վրոլորում։

— Այ, հիմա գտնե, մենք ձեզ լիովին կվայելենք, սիրելի իշխան, — ասում էր փոքրիկ իշխանուհին, իշխան Վասիլին, ի հարկե ֆրանսերեն, — այստեղ Annette-ի յերեկույթները չեն, վորտեղից միշտ թողնում-փախչում եյիք։ հիշում եք cette chère Annette<sup>1</sup>։

— Բայց Annette-ի նման քաղաքականության մասին չխոսեք։

— Իսկ հիշում եք մեր թեյի փոքրիկ սեղանը։

— Ո՛ր, այո։

— Իսկ դուք ինչու յերեք Annette-ի տուն չեյիք գալիս, — հարցրեց փոքրիկ իշխանուհին Անատոլին։ — Բայց յես գիտեմ, գիտեմ, — ասով նա, աչքով անելով, — ձեր Իպպոլիտ յեղրայրը պատմել և ինձ ձեր դործերի մասին։ Ո՛ր։ — Իշխանուհին մատը թափ ավելց նրա վրա։ — Պարզի՛ ձեր արկածները նույնպես գիտեմ։

— Իսկ նա, Իպպոլիտը քեզ չի՞ ասել, — ասով իշխան Վասիլին (վորդուն դառնալով և իշխանուհու ձեռք բռնելով, կարծես-նա ուղում էր փախչել, բայց ինքը հաղիվ պահեց նրան), — չի՞ ասել, թե ինչպես ինքը՝ Իպպոլիտը հալածաշ նր լինում այս սիրունիկ իշխանուհու սիրուց և ինչպես իշխանուհին le mettait à la porte?<sup>2</sup>։

— Oh! C'est la perle des femmes, princesses!<sup>3</sup>, — դարձավ նա իշխանազուստր Մարիային։

<sup>1</sup> Սքանչելի Աննետին։

<sup>2</sup> Դուրս արավ նրան տնից։

<sup>3</sup> Ո՛հ, սա վտակ էին և։

«Պարիզ» խոսքի միտ *mille* Բուրինը առիթը չփախցրեց նույնպէս ընդհանուր դրույցին խառնովելու: Նա իրեն թույլ տվեց հարցնել, թե վաղուց և արդարեւ Անատոլը հետացել Պարիզից, և թե վերջապէս և նրան զուր չեկել այդ քաղաքը: Անատոլը մեծ սիրով պատասխանեց Ֆրանսուսին և, ժպտերես, նրան նայելով, խոսեց հետք նրա հայրենիքի մասին: Սիրունիկ Բուրինին տեսնելով՝ Անատոլը վռնեց, վոր այստեղ էլ, դուռըս, ժամանակը ձանձրալի չի անցնի: «Այս Ֆրանսուսին լավիկն է, — մտածում եր նա, — որի որդին նայելով, — նույն ունեմ, վոր իշխանադուստր Մարիան, ամուսնանալով, օրան հետք կրերի, — մտածում եր նա, — *la petite est gentille*»:

Սիրունի իշխանը հանգարտ հաղնվում եր իր առանձնասենյակում, հոնքերը կիտելով ու անելիքը կշտադատելով: Հյուրերի դալուստը բարկացնում եր նրան: «Իմ ինչն են իշխան Վասիլին ու նրա վորդին: Իշխան Վասիլին գատարկ պարծենկոտի մեկն է. վորդին էլ, յերեկ, իր նաման կլինի», քրթմնջում եր նա ինքն իրեն: Նրան բարկացնում եր այն, վոր հյուրերի դալուստն իր սրտում դարձեցրել եր մի չուծված և շարունակ նրա առաջ ծառացող ու նրա կողմից յետ մղված մի խնդիր, — մի խնդիր, վորի նկատմամբ իշխանը միշտ խարում եր ինքն իրեն: Խնդիրն այն եր, թե ինքը կարո՞ղ և արդյո՞ք յերբիցե բաժանվել իշխանադուստր Մարիայից և հանձնել նրան ամուսնուն: Իշխանը յերբեք այդ հարցն ուղղակի չէր առաջ իրեն, ստաջուց իմանալով, վոր կպատասխանի արդարությամբ, իսկ արդարությանը վոչ միայն կհակասեր նրա զգացմունքին, — այլև կխախտեր նրա կյանքի հիմքերը: Իշխան Նիկոլայ Անդրեևիչին կյանքը, ստանց իշխանադուստր Մարիայի (չնայած վոր նրան քիչ եր դնահասում), անխմտ եր թվում: «Յե՛վ ինչ՞ն. համար և նա ամուսնանում, — մտածում եր նա, — յերեկ զմիտախառնալու: Անավատիկ Լիդան ամուսնացել և Անդրեյի հետ (այժմ նրանից լավ ամուսին, կարծեմ, զմիտ և զանել): Բայց մի՞թե Լիդան դո՞ւ և իր վիճակից: Յե՛վ ճի կնախյան կառնի նրան սիրուց: Տղե՞կ և, անճարակ: Կառնեն միայն կատերի, հարստության համար: Բայց մի՞թե առանց ամուսնության, աղջիկ մնալով չեն տպրում: Ապրում են ավելի յերջանիկ»:<sup>4</sup> Այսպէս եր մտածում իշխան Նիկոլայ Անդրեևիչը հաղնվելով, բայց և այնպէս շարունակ հետամզղվող խնդիրը շտապ լուծում եր պահանջում: Իշխան Վասիլին վորդուն բերել և, հալմանքեն, առաջարկ անելու մտադրությամբ և, յերեկ, այստեղ կամ վաղն ուղղակի պատասխան կդա-

<sup>4</sup> Այս մտնիկը — շատ լավիկն է:

հանջի: Կարգին անուն և դիրք ունի բարձր շրջանում: Երեւել Կա-  
վոր, յես դեմ չեմ, — ասում եր իշխանն ինքն իրեն, — բայց տես-  
նենք տղան արժանի չե Մարիային: Յեվ այդ հիմա կտեսնենք:

— Յեվ այդ հիմա կտեսնենք, — ասավ բարձրաձայն: — Այդ  
հիմա կտեսնենք:

Յեվ նա, ինչպես միշտ, առույգ քայլերով մտավ հյուրասրահ,  
մի արագ հայացք քցեց բոլորի վրա, նկատեց թե՛ փոքրիկ իշխա-  
նունու փոխած շրջազգեստը, թե՛ Բուրիենի ժապավենը, թե՛ իշխա-  
նադուստր Մարիայի մազերի անճոռնի սանրվածքը, թե՛ Բուրիենի  
ու Անատոլի մպիտները և թե՛ իր իշխանադուստեր մենակու-  
թյունն ընդհանուր խոսակցության մեջ: Էջուլով և հիմարի-  
պես, — մտածեց նա, չարացած նայելով աղջկան: — Զի ամաչում  
իսկ փեսացուն նրան բանի տեղ ել չի դնում:

Մտեցավ իշխան Վասիլին:

— Ե, բարև, բարև. ուրախ եմ տեսնելուս:

— Լավ բարեկամի համար Յերուսաղեմ ել կերթան, — խոսեց  
իշխան Վասիլին, ինչպես միշտ, արագ, ինքնավստահ ու մտերմա-  
բար: — Ահավասիկ յերկրորդ վորդիս, խնդրում եմ սիրել և հովա-  
նավորել...

Իշխան Նիկոլայ Անդրեևիչը մի հայացքով զննեց Անատոլին:

— Կեցցե, շնորհքով տղա յե, — ասավ նա, — դե, մտեցիր համ-  
բուրի, — և նա այսքալ դեմ արավ Անատոլին:

Անատոլը համբուրեց ծերունուն և հետաքրքրությամբ ու մի-  
անգամայն հանգիստ նայեց նրան, սպասելով, թե շուտով արդյոք  
կսկսի նա իր տարրինակությունները, վորոնց մասին խոսել եր  
հայրը:

Իշխան Նիկոլայ Անդրեևիչը նստեց իր սովորական տեղը՝ բաղ-  
մոցի անկյունում, բազկաթու քաշեց իշխան Վասիլի համար, մատ-  
նացույց արավ, վոր նստի և սկսեց հարցուփորձել քաղաքական  
խնդիրներից ու նորություններից: Նա իշխան Վասիլիի պոտամածը  
լսում եր կարծես ուշադրությամբ, բայց շարունակ իշխանադուստր  
Մարիային եր նայում:

— Ուրեմն Պոտոլամից են գրժւմ, — կրկնեց նա իշխան Վա-  
սիլիի վերջին խոսքերը և հանկարծ, վեր կենալով, մտեցավ  
աղջկան:

— Դու այդ հյուրերի համար ես այդպես զուգվել, հը, — ասավ  
նա: — Գեղեցիկ ես, շատ գեղեցիկ: Դու հյուրերին ներկայանալու  
համար սանրվել ես նոր ձևով, յես ել հյուրերի ներկայությամբ  
ասում եմ քեզ, վոր այսուհետև արդուգարդդ չփոխես առանց ինձ  
հարցնելու:



— Mon père, մեղաւորը յետեմ, — կարծրելով միջամտեց փոքրիկ իշխանուհին:

— Դուք լիովին ազատ եք ձեր ուղածն անելու, — ասավ իշխանն Նիկողայ Անդրեևիչը՝ հարսի առջև խոնարհվելով, — իսկ նա կարիք չստի իրեն այլանդակելու, առանց այն էլ տղեղ ե:

Յեւ ինչ նորից նստեց իր տեղը, այլևս ուշադրութիւն չդարձնելով աղջկա վրա, վորի աչքերն աշցուէքով լցվել էին արդեն:

— Ընդհակառակը, այս ձեռք սանրվածքը շատ է սաղում իշխանագետեր, — ասավ իշխանն Վասիլին:

— Ե, սիրելիս, չեթոտասաւղ իշխան, ինչպէս ե նրա անունը, — ասավ իշխանն Նիկողայ Անդրեևիչը՝ Անատոլին դիմելով, — արի այստեղ, խոսենք, ծանոթանանք:

«Անա թե յերբ ե սկսվում գվարճալին», մտածեց Անատոլը ե մայրաք դեմքին նստեց ձեռք իշխանի մոտ:

— Անա թե ինչ, դուք, սիրելիս, ասում են արտասահմանում եք կրթվել, ե վոչ թե ինձ ու հորդ նման տիրացուից եք դրադիտութիւն սովորել: Անպեք խնդրեմ, սիրելիս, դուք հիմա հեծյալ գվարդիայում եք ծառայում, — հարցրեց ձեռուներն, մոտիկից ե ուշադիր Անատոլին նայելով:

— Վաչ, փոխադրվել եմ բանակը, — պատասխանեց Անատոլը, ծիծաղը հաղիմ գտնելով:

— Հը՛, լավ եք արել, աւգում եք ուրեմն ծառայել թագաւորին ե հայրենիքին: Պատեւադմի ուրեք են. ձեղ նման կաշիճը պետք ե ծառայել, պետք ե ծառայել Դարձող բանակին՝ մեջ եք:

— Վաչ, իշխան: Մեր դունդը դնացել ե պատերադմի գաշտը, բայց յետ համարվում եմ նրա մեջ: Վա՛ր դնդի մեջ եմ համարվում, պապա, — ծիծաղելով հորը դարձավ Անատոլը:

— Հիանալի ծառայութիւն, հիանալի: Վա՛ր դնդի մեջ եմ համարվում: Հա՛ւան՛ւան, — քրքջաց իշխանն Նիկողայ Անդրեևիչը:

Անատոլը քրքջաց ավելի բարձր:

Հանկարծ իշխանն Նիկողայ Անդրեևիչը հոնքերը կիտեց:

— Դե, դնա, — ասավ նա Անատոլին:

Անատոլը մայրաք դեմքին նորից մտեցեալ կանանց:

— Դու փորդիներիդ կարծեմ, արտասահմանում ես կրթել, իշխանն Վասիլի: Հը՛, — դարձավ ձեռք իշխանին իշխանն Վասիլին:

— Արել եմ ինչ կրթողացել եմ. ե յետ ձեղ կառեմ, վոր այնտեղի կրթութիւնը շատ ավելի լավ ե մերիներ:

— Այո, հիմա ամեն բան փոխված ե, ամեն ինչ նոր ձեռով: Գարեճ աղա յե, կեցցե: Դե, դնանք սենյակս:

Նա իշխանն Վասիլի թեք բռնեց ու տարավ իր առանձնասենյակը:



Իշխան Վասիլին նրա հետ մենակ մնալով անմիջապես հայտնեց իր ցանկությունը:

— Ի՞նչ ես կարծում վոր, — ասավ ծեր իշխանը հերոսոտ, — վոր յես նրան պահում եմ, չեմ կարող բաժանվել: — Յերևակայում եմ, — վրա բերեց բարկացած: — Ինձ համար մեկ է, թեկուզ վաղն ամուսնանա: Միայն թե ասում եմ քեզ, վոր փեսայիս ուղում եմ ավելի լավ ճանաչել: Դու իմ սկզբունքը դիտես. ամեն ինչ բացաշկարա յես: Վաղը քո ներկայությամբ կհարցնեմ. յեթե իշխանադուստրը ցանկանա, թող վորդիդ աղբի մեզ մոտ: Թող աղբի՜ կտեսնեմ: — Իշխանը փնջացրեց: — Թող ամուսնանա, ինձ համար միևնույն է, — դռնեց նա այն ծղրտան ձայնով, վորով պոռաց վորդուն հրաժեշտ տալիս:

— Յես ձեզ ուղղակի կասեմ, — ասավ իշխան Վասիլին խորամանկ մարդու տոնով, վորը համոզվել է թե խորամանկությունն ավելորդ է թափանցամիտ խոսակցի հանդեպ: — Դուք մարդկանց ներքին ետթյունը շատ լավ եք տեսնում: Անատոլը հանճար չե, բայց աղնիվ, պարկեշտ տղա յես և հիմնալի վորդի:

— Դե, լավ, կտեսնենք:

Ինչպես այդ միշտ պատահում է յերկար ժամանակ տոռնց տղամարդկանց հասարակության ապրող կանանց, Անատոլի յերևուածով իշխան Բալիկոնսկու տանն ապրող յերեք կիներն էլ միատեսակ զգացին, վոր իրենց կյանքը մինչ այդ կյանք չի յեղել: Մտածելու, զգալու, դիտելու կարողությունը իսկույն առանապատկվեց յերեքի մեջ էլ, և կարծես մինչև այժմ խավարի մեջ անցնող նրանց կյանքը հանկարծ լուսավորվեց մի նոր, նշանաւկալից լույսով:

Իշխանադուստրն այլևս չեր մտածում դեմքի ու սանրվածքի մասին: Նրա ամբողջ ուշադրությունը կլանել եր յերիտասարդի բաց, դեղեցիկ դեմքը, յերիտասարդի, վորը, թերևս, իր ամուսինն եր լինելու: Անատոլը նրան թվում եր բարի, քաջ, վճռական ու արիասիրտ: Իշխանադուստրը համոզված եր այս բանում: Ապագա ընտանեկան կյանքի մասին հազարավոր յերազանքներ եյին անցնում-դառնում նրա յերևակայության մեջ: Նա վառում է աշխատում եր թաղցնել դրանց:

Երայց յես չափազանց սառը չեմ նրա հետ, — մտածում եր իշխանադուստրը: — Աշխատեմ զսպել ինձ, վորովհետև սըրտիս խորքում ինձ արդեն շատ մոտ եմ դրում նրան. բայց չեմ վոր նա չի իմանում, թե ինչ կարծիք ունեմ իր մասին և ինչե՞ր եմ մտածում, ու կարող է յերևակայել, թե ինքն անհաճոյ է ինձ:

Սեւ իշխանադուստրն աշխատում ու չէր կարողանում սիրա-  
լիր լինել նոր հյուրի հետ: «La pauvre fille! Elle est diablement  
laide»<sup>1</sup>, — մտածում էր Անատոլը նրա մասին:

M-lle Բուրիենը, վոր նույնպես շատ հուղձած էր Անատոլի դա-  
լուց, տարբեր բան էր մտածում: Իհարկե, առանց վորոշ դիժքի  
առանց հարապատենքի ու բարեկամների և անգամ առանց հայրենիքի  
այդ սիրուն հասնել ազնիվը չէր մտածում իր կյանքը նվիրել իշխան  
նիկողայ Անդրեևիչին ծառայելու, նրա համար դրքեր կարդալու  
և իշխանադուստր Մարիային ընկերություն անելու: M-lle Բու-  
րիենը վաղուց պատում էր մի ուսու իշխանի, վոր մեկին կարող է  
դնտառակ իր առաջնությունը ազնի, վատ հաղնված, անճարակ  
ուսու իշխանուհիների հանդեպ, սիրաճարվել իրեն ու տանել: և  
այդ ուսու իշխանն ահա յեկել էր, վերջապես M-lle Բուրիենը սի-  
րում էր իր յերեակայության մեջ կրկնել մի պատմություն, վոր  
լսել էր մորաբարձից և լրացրել էր ինքը: Պատմությունը վերա-  
բերում էր մի դաշխակղձած աղջկա, վորին հայտնվում հանդիմա-  
նում է խղճ մայրը, թե ինչու առանց պատկի անձնատուր է  
յեղել աղամարդու: M-lle Բուրիենը հաճախ արտասովելու չափ հուղ-  
ձում էր, յերեակայության մեջ այդ պատմությունը ցրան՝ դաշ-  
խակղիչին պատմելով: Այժմ այդ ցաւն, իսկական ուսու իշխանը,  
յեկել էր: Սա կտանի իրեն, հետո կհայտնվի ma pauvre mère, և  
ցա կամուսնանա իր հետ: Այսպես էր պատկերանում m-lle Բու-  
րիենին իր ապագա կյանքը՝ հենց այն ժամանակ, յերբ Անատոլի  
հետ խոսում էր Պարիզի մասին: Հաշիվը չէր զեկավարում m-lle  
Բուրիենին (նա մի վայրկյան անգամ չէր կշտադատում այն, ինչ  
պիտի տներ), այլ այդ բոլորը վաղուց արդեն պատրաստ էին նրա  
ղլխում և այժմ միայն կենտրոնանում էին նարեկ Անատոլի շուրջը,  
վորին, աշխատում էր վորքան կարելի չէ շատ դուր դուր:

Փոքրիկ իշխանուհին, ինչպես զորադնդի պատով ձին փողի  
ձայնը լսելիս, անդիտակցաբար ու իր դրությունը մոռանալով,  
պատրաստվեց կոկետության սովորական արշավանքի, առանց  
յետին մտքի կամ մրցակցության նպատակի, այլ միամիտ ուրա-  
խությամբ:

Զնայած վոր Անատոլը կանանց հասարակության մեջ իրեն  
սովորաբար պահում էր այնպես, թե ձանձրացել և կանանց հե-  
տադնորումից, բայց սնապարծությամբ բավականություն էր զգում,  
տեսնելով իր ազդեցությունն այդ յերեք կնոջ վրա: Բացի զբա-  
նից, զեպի սիրունիկ ու զրգոյիչ m-lle Բուրիենն զգում էր մի

<sup>1</sup> Խեղճ աղջիկ. զարհուրելի աղեղ և:

դազանային կիրք, մի կիրք, վոր վայրկյանապես տիրում եր նրան և զրդում ամենակողմիտ ու համարձակ քայլերի:

Թեյից հետո բոլորն անցան բազմոցաբան, և իշխանազուստը Մարիային խնդրեցին դաշնամուր նվագել: Անատուլը թիկն տվեց նրա առջև, m-lle Բուրիենի կողքին, և ուրախ-ծիծաղկոտ աչքերով դիտում եր իշխանազուստը Մարիային: Իշխանազուստը տանջալից և ուրախ հուզումով զղում եր նրա՝ իր վրա սեևոած հայացքը: Մի րած ստնատը նրան փոխադրում եր մի գլավիչ-բանաստեղծական աշխարհ, իսկ իր վրա հռոած հայացքը՝ այդ աշխարհը դարձնում եր ավելի դուլթիչ: Իսկ Անատուլի հայացքը, թեև հռոած եր նրան, բայց նրան չեւր վերաբերում, այլ m-lle Բուրիենի վատի շարժումներին, վորին այդ միջոցին, դաշնամուրի տակ, Անատուլը հալածում եր իր վտաքով: M-lle Բուրիենը նույնպես նայում եր իշխանազուստը Մարիային, և նրա զեղեցիկ աչքերում նույնպես իշխանազուստը կարգաց յերկյուղած ուրախության ու հույսի մի նոր արտահայտություն:

Վորքան սիրում և ինձ Բուրիենը, — մտածեց իշխանազուստը: — Վորքան յերջանիկ եմ յես և ինչպէս կարող եմ յերջանիկ լինել այսպիսի բարեկամուհու և այսպիսի ամուսնու հետ: Մըթե ամուսինք, մտածեց նա, չհամարձակվելով նայել Անատուլի դեմքին, զղալով նրա նույն սեևոուն հայացքը:

Յերեկոյան, ընթրիքից հետո, յերբ բաժանվում էյին, Անատուլը համբուրեց իշխանազուստը Մարիայի ձեռը: Իշխանազուստըն ինքն ել դարձացավ, թե ինչպես համարձակություն ունեցավ ուզիդ նայել իր կարճատես աչքերին մոտեցող զեղեցիկ դեմքին: Ապա Անատուլը համբուրեց m-lle Բուրիենի ձեռը (դա անվայել եր, բայց Անատուլն այդ արավ վստահ և պարզ ձեռով), և m-lle Բուրիենը, կասկարմիր կտրելով, վախեցած նայեց իշխանազուստը Մարիային:

„Quelle délicatesse<sup>1</sup>, — մտածեց իշխանազուստը: — Մըթե Amelie-ն (այդպես էյին կոչում m-lle Բուրիենին) կարծում և, թե կարող եմ իրեն խանդել և չգնահատել իմ նկատմամբ ունեցած իր անրիժ քնքշությունն ու անձնվիրությունը: Նա մոտեցավ m-lle Բուրիենին ու պինդ համբուրեց նրան: Անատուլը մոտեցավ փոքրիկ իշխանուհու ձեռն ևս համբուրելու:

— Non, non, non! Quand votre père m'écrira, que vous vous conduisez bien, je voue donnerai ma main à baiser. Pas avant<sup>2</sup>. — Յեվ, մատը բարձրացնելով ու ժպտալով, դուրս յեկավ սենյակից:

<sup>1</sup> Ինչ զեկեպատություն

<sup>2</sup> Վոչ, վնչ վճշ: Յերբ քեր հայրն ինձ կզրի, թե ձեզ լավ եր պահում, այն ամառնակ թուլ կտամ, վոր ձեռս համբուրեք: Դրանից առաջ — վոչ:

## V

Բուրբը ցրվեցին, և այդ գիշեր յերկար վառ-վառ չէր կարողանում աչք փակել, բացի Անատոլից, վառ պատկերուն պես քնեց:

«Եթե ես դա չեմ ամուսինը, հենց այդ սառը, գեղեցիկ, քաղի աղամարդը, մանավանդ քարիչ, մտածում եր իշխանադուստր Մարիան, և սէր, վառ զրեթե անժանոթ եր նրան, տիրեց նրա սրտին: Վախենում եր շուրջը նայել. թվում եր, թե մեկը կանդնած և պարտակի յետե, մութ անկյունում: Յեվ այդ մեկը նա չէր — սատանան, և նա — այդ ճերմակ ճակատով, սև հոնքերով և կարմիր շուրթերով աղամարդը:

Նա դանդաղաբեց սպասուհուն և խնդրեց, վառ պատկեր իր սենյակում:

Mlle Բուրիենն այդ յերեկո յերկար շրջեց ձմեռային պարտիզում, իդուր մեկին սպասելով. մերթ ժպտում եր ինչ-վառ մեկին, մերթ աշտատվելու հափ հուզվում եր խեղճ մար յերեսկայական խառքերից, վառ կշամքում եր իրեն՝ անկումի համար:

Փոքրիկ իշխանուհին քրթմնջում եր սպասուհու վրա, վառ անկողինը լավ չի շտկել: Չէր կարողանում պատկել վառ կողքի, վառ ել կրծքի վրա: Ամեն կերպ էլ ծանր եր և անհարմար: Փոքր խանդարում եր նրան: Թանգարում եր ավելի, քան յերեկ, մանավանդ այժմ, յերբ Անատոլի ներկայութունն իրեն փոխադրել եր մի այլ մտմանակ, յերբ այդ չկար և ինքը թեթև եր ու զվարթ: Կոփտան հաղած ու համշիկ դրած նստել եր քաղկաթոսին. խեղ կառայան՝ քնտա ու խճճված մաղերով՝ արդեն յերբորդ անդամն եր դարձնում ու շտկում ծանր ներքնակը:

— Յես քեզ տաի վառ փոսեր ու թճրեր կան, — կրկնում եր փոքրիկ իշխանուհին, — շատ ուրախ կլինեյի, վառ քնեյի, նշանակում և մեղավորը յես չեմ, — և նրա ձայնը զոգաց, լացի պատրաստվող յերեսայի ձայնի պես:

Մեր իշխանը նույնպես արթուն եր: Տիտոնը քնի մեջ լսում եր, թե ինչպես և նա հերոսա քայլում ու քթով փնջացնում: Մեր իշխանին թվում եր, թե իրեն վիրավորել են ազնկա համար: Ամեն շածանք վիրավորանքը, վորովհետե դա վերաբերում եր վառ թե իրեն, այլ ազնկան, վորին սիրում և իրենից ավելի: Նա ինքն իրեն ասով, թե նորից կմտածի այդ սուաջարկության մասին և ինչ արդարացի դանի, այն էլ կանի, բայց դրա փոխարեն ավելի ևս հուզում-զրդում եր իրեն:

«Առաջին պատահած մարդը յերեսաց թե չե — մոռացավ թե հայր, թե ամեն ինչ. վաղում և վեր, սանրվում ու պոչ շարժում...

Ուրախ ե, վոր հորը կթողին: Յե՛վ իմացել ե, վոր յես կնկատեմ: Փը՛... փը՛... փը՛... Ձեմ տեսնում միթե, վոր այդ հիմարը հետեւում ե միայն Բուրիենին (նրան պետք ե վռնդել): Յե՛վ այնքան ինքնասիրություն չունի, վոր այդ բանը հասկանա: Յեթե վոչ իր համար, թե հպարտություն չունի, զեթ ինձ համար: Պետք ե նրան հասկացնել, վոր այդ անասունը իր մասին չի յել մտածում, այլ աչքը Բուրիենի վրա յե: Մարիան ինքնասիրություն չունի, բայց յես կսովորեցնեմ նրան:...

Յեթե աղջկանն ասի, թե նա՝ մոլորության մեջ ե, թե Անատոլը մտադիր ե սիրարանել Բուրիենի հետ, ծեր իշխանը դիտեր, վոր այդպիսով կզրզի իշխանադուստր Մարիայի ինքնասիրությունը ե իր ցանկությունը (չքամանվել աղջկանից) կկատարվի, ուստի հանդատացավ այս վորոշումով ե Տիխոնին կանչելով՝ սկսեց հանվել:

«Վոր սատանան բերեց դրանց, — մտածում եր նա այն միջոցին, յերբ Տիխոնը զիշերային շաղիկը հաղցնում եր նրա կաշի ու վրակոր կտրած, պատալած մարմին, վորի կուրծքը ծածկված եր անբժակ մաղերով: — Յես նրանց չեմ հրավիրել: Յեկել են կարճատե կյանքս տակն ու վրա անելու:»

— Կորչեն, — ասավ նա այն բողբյին, յերբ շաղիկը զեռ նոր եր զլուխն անցրել:

Տիխոնը դիտեր, վոր իշխանը սովորություն ունի մտքերը յերբեմն բարձրաձայն արտահայտելու, ուստի ե անփոփոխ դեմքով ընդունեց իշխանի՝ շաղիկ տակից դուրս յեկած զեմքի հարցական հերոտ հայացքը:

— Պառկե՛լ են, — հարցրեց իշխանը:

Տիխոնը, բոլոր լավ լաքեյների նման, հոտառությամբ զգում եր իր տիրոջ մտքերի ուղղությունը: Գլխի ընկավ, վոր հարցը վերաբերում ե իշխան Վասիլին ու վորդուն:

— Բարեհաճել են պառկել ե լույսը հանջցնել, ձերդ պայծառափայլություն:

— Լավ, լավ... — ասավ իշխանն արագ-արագ ե, հողաթափերն ու խալաթը հաղնելով, զնաց զեպի բաղմոցը, վորի վրա ե քնում եր:

Ձնայած վոր Անատոլն ու m-lle Բուրիենը իրար վռչինչ չեյին ասել, բայց կատարելապես հասկացել էյին միմյանց, հասկացել էյին, վոր իրար շատ բան պիտի ասեն ծածուկ, ուստի ե առավոտից առիթ էյին փնտռում առանձին տեսնվելու: Այն ժամանակ, յերբ իշխանադուստրը սովորական ժամին զնաց հոր մոտ, m-lle Բուրիենը Անատոլին հանդիպեց ձմեռային պարտիզում:

Իշխանազուստը Մարիան այդ որն առանձին սրտողողով մտածեցով հոր առանձնասենյակին։ Նրան թվում էր, թե բոլորը վռչ միայն գիտեն, վոր այդ որն իր նախատաղիքը պիտի վճռվի, այլ և գիտեն, թե ինքն ինչ և մտածում այդ մասին։ Նա այդ արտահայտությունը կարդաց թե Տիխոնի և թե իշխան Վասիլիի սենեկադարնի գեմքին, վոր տաք ջուրը ձեռին հանդիպեց միջանցքում և խորը գլուխ ավելց նրան։

Մեր իշխանն այդ առափոս չափազանց սիրավոր և հողածուխյամբ վերաբերվեց ազնկան։ Հողածուխյան այդ արտահայտությունը ծանոթ էր իշխանազուստը Մարիային։ Այդ արտահայտությունն իշխանի գեմքին յերևում էր այն վայրկյաններին, յերբ նրա չորչսրուկ ձեռները կծկվում — բռնեցք էլին դառնում այն պատճառով, վոր իշխանուհի Մարիան չէր հասկանում թվարանական խնդիրները, և տեղից վեր կենալով հեռանում էր ազնկանից և կամացուկ ձայնով միենույն խոսքը կրկնում մի քանի անգամ։

Նա անմիջապես գործի անցավ և սկսեց խոսել ռուսերով։

— Ինձ առաջարկ արին ձեր մասին, — ասավ նա, բռնադրոսիկ մղկտով։ — Կարծում եմ՝ դու շահած կլինեք, — շարունակեց նա, — վոր իշխան Վասիլին վարդուն իմ գեղեցիկ աչքերի համար չի բերել այստեղ։ Յերեկ ձեր վերաբերմամբ ինձ առաջարկ արին։ Յեղ վարդինեան դուք դիտեք իմ սկզբունքները, ուստի և դիմում եմ ձեզ։

— Ինչպես հասկանամ ձեզ, mon père, — ասավ իշխանազուստըր գունատովելով ու կարմրելով։

— Ինչպես հասկանամ, — պոռաց հայրը բարկացած։ — Իշխան Վասիլին քեզ համարում է իր ճաշակին հարմար հարս և առաջարկություն և անում վարդու համար։ Ահա ինչպես պիտի հասկանալ։ Ինչպես հասկանամ... Իսկ յես քեզ եմ հարցնում։

— Յես չգիտեմ, դուք ինչպես եք վերաբերվում, mon père, — շշնջաց իշխանազուստըր։

— Յեւ. յեւ. յես ի՞նչ դարձ ունեմ։ Ինձ թող Յես մարդու գնալու չեմ։ Դե՛ւմ լինչ եք մտածում, ցանկալի յե այդ իմանալ։

Իշխանազուստըր նկատեց, վոր հայրն անբարյացակամ վերաբերում ունի գեպի այդ խնդրը, բայց միենույն ժամանակ մտածեց, վոր իր բավար զնովելու յե այժմ կամ յերբեք։ Նա աչքերը խոնարհեց, վոր շտանի հոր հայացքը, վորի ազդեցությունը ներքս չէր կարողանում մտածել, այլ կարողանում էր ըստ սովորություն հնազանդել միայն, ուստի և ասավ։

— Յանկանում եմ միայն մի բան — ձեր կամքը կատարել, — ասավ նա, — բայց յեթե հարկ լինի իմ ցանկությունը հայտնելու...



Նա չկարողացավ վերջացնել: Իշխանն ընդհատեց նրան:

— Դեղեցիկ, — գոչեց նա: — Դեղ առնելու յե ամիսովդ ես, ի դեպ հետը տանելու յե m-lle Բուրիենին: Նա կինն է լինելու, իսկ դու...

Իշխանը կանդ առավ: Նկատեց, թե խոսքերն ինչ տպավորություն աշին աղջկա վրա: Իշխանադուստրը գլուխն իջեցրեց, լացի պատրաստվելով:

— Դե, դե, կատակ եմ անում, կատակ, — առավ նա: — Հիշի՛ր, Մարիա, յես այն կարծիքի յեմ, թե աղջիկը լիակատար իրավունք ունի ամուսին ընտրելու: Յեզ քեզ աղատություն եմ տալիս: Հիշի՛ր միայն, վրո քո վորոշումից ե կախված կյանքիդ յերջանկությունը: Իմ մասին ավելորդ ե խոսել:

— Բայց յես չգիտեմ... mon père.

— Ավելորդ ե խոսել: Նա աղատ չի. նրան կարգադրում են ամուսնանալ, ե նա կամուսնանա վոչ միայն քեզ հետ, այլև ում հետ վոր կամենաս. իսկ դու աղատ ես ամուսին ընտրելու... Գնա սենյակդ, մտածի՛ր ե մի ժամ հետո արի այստեղ ու նրա ներկայությամբ ասա՝ այո կամ վոչ: Գիտեմ, պիտի զննա աղոթեա: Ա՛հ, աղոթի՛ր: Միայն ավելի լավ ե մտածեա: Գնա: Այո կամ վոչ, այո կամ վոչ, այո կամ վոչ, — կրկնելով պոռում եր նա դեռ այն միջոցին ել, յերբ իշխանադուստրը, կարծես մշուշի մեջ, որորվելով, դուրս յիկավ հոր առանձնասենյակից:

Նրա բախտը վարոշվեց ե վորոշվեց շատ ուղի: Բայց ինչ ասավ հայրը m-lle Բուրիենի մասին, — այդ սկնարկը սարսափելի յեր, ե իշխանադուստրը չեր կարող այդ մասին չմտածել: Իր մտածումներով տարված՝ անցավ ձմեռային պարտիզով: Ե հանկարծ m-lle Բուրիենի ծանոթ շշուկն սխափեց նրան: Իշխանադուստրն աչքերը բարձրացրեց ե յերկու քայլ հեռու տեսավ Անատոլին, վոր ֆրանսուհուն գրկած՝ ինչ-վոր բան եր շշնջում նրան: Անատոլը գեղեցիկ դեմքի մի սարսափելի արտահայտություն նայեց իշխանադուստր Մարիային ե առաջին վայրկյանին ժողացավ թողնել թիկունքը Մարիային դաշձրած m-lle Բուրիենի մեջքը:

«Ո՞վ կա այդպեղ: Ի՞նչ կա Սպասեցեք», ասում եր կարծես Անատոլի գեմքը: Իշխանադուստր Մարիան անխոս նայում եր նրանց: Նա չկարողացավ ըմբռնել այդ: Վերջապես, m-lle Բուրիենը հչաց ու փախավ: Անատոլը մի զվարթ ժպիտով գլուխ ավեց իշխանադուստր Մարիային, կարծես հրավիրելով, վոր ծիծաղի այս տարորինակ դեպքի վրա ե ինքն ուսերը թոթվելով՝ ուղղվեց դեպի իր սենյակը:



Մի ժամ հետո Տիխոնն յեկավ իշխանազուսար Մարիային կանչելու. իշխանի մոտ և հայտնեց, թե իշխան Վասիլի Սերգեյիչն էլ այնտեղ և։

Այն ժամանակ, յերբ Տիխոնն յեկավ, իշխանազուսարն իր սենյակի բաղնիքին նստած՝ գրկել էր արտասովոր m-lle Բուրիենին ու հանդարտ շոյում էր նրա գլուխը։ Մարիայի զեզկոյիկ աչքերն իրենց նախկին անզորութիւնով և ճառագայթալից պայծառութիւնով՝ բնքանքով ու կարեկցանքով նայում էին m-lle Բուրիենի սիրունիկ դեմքին։

— Non, princesse, je suis perdue pour toujours dans votre cœur<sup>1</sup>, — ասում էր m-lle Բուրիենը։

— Pourquoi? Je vous aime plus, que jamais, — ասում էր իշխանազուսարը, — et je tâcherai de faire tout, ce qui est en mon pouvoir pour votre bonheur<sup>2</sup>.

— Mais vous me méprisez, vous si pure, vous ne comprendrez jamais cet égarement de la passion. Ah, ce n'est que ma pauvre mère...<sup>3</sup>

— Je comprends tout<sup>4</sup>, — պատասխանեց իշխանազուսարը, տխրութեամբ ժպտալով։ — Հանգստացեք, բարեկամս։ Յես դնամ հայրիկիս մոտ, — ասով նա ու զուրս յեկավ։

Իշխան Վասիլին, ծանկիւր վեր ծալած, քթախոտի տուփը ձեռին և կարծես չափից ավելի հուզված՝ նստած էր խանդադատանքի ժպտալ դեմքին, յերբ իշխանազուսար Մարիան ներս մտավ։ Նա հազոճեց մի պազուկից քթախոտ տարավ դեպի քիթը։

— Ah, ma bonne, ma bonne<sup>5</sup>, — ասով նա, վեր կենալով և Մարիայի յերկու ձեռք բռնելով նա հոգոյ քաշեց և ավելացրեց. — Le sort de mon fils est en vos mains. Décidez, ma bonne, ma chère, ma douce Marie, qui j'ai toujours aimée, comme ma fille<sup>6</sup>.

Նա հետացավ։ Աչքերում խկապես արցունք յերևաց։

— Փք... հը... — փնչացնում էր իշխան Նիկոլայ Անդրեյիչը։

— Իշխանն իր վարդու կողմից քեզ առաջարկ և անում։ Յանկանում ևս արդյոք իշխան Անատոլ Կուրազիևի կինը լինել, թե

<sup>1</sup> Վաչ, իշխանազուսար, յես բնդմբշտ կորցրի ձեր բարեկամութիւնը։

<sup>2</sup> Ինչպէս։ Յես ձեզ ավելի յիմ սիրում, քան յերբեք, և ձեռնցս յեկածը պիտի ամեն ձեր յերջանկութեան համար։

<sup>3</sup> Բայց զուր տոյքան մարութ եք, զուր կարհամարհեք ինձ. զուր յերեք յեք հառկանա կրքի այդ հրապույրը։ Ա՛հ, խեղճ մայրս...

<sup>4</sup> Յես ամեն ինչ հասկանում եմ։

<sup>5</sup> Ահ, սիրելիս, սիրելիս։

<sup>6</sup> Վարդուս բախտը ձեր ձեռին և Վահեցեք, իմ սերելի, իմ թանկագին, իմ հեղաբարս Մարի. յես միշտ ազգկառ պես սերել եմ ձեզ։

վույ՝ Դու ասա միայն՝ այժ կամ վճշ, — պոռաց իշխանը, — այնուհետև յես ինձ իրավունք եմ վերադառնում՝ հայտնել և իմ կարծիքը։ Այո, իմ կարծիքը, միայն իմ կարծիքը, — ավելացրեց իշխան Նիկոլայ Անդրեևիչը, դառնալով իշխան Վասիլիին և նրա աղերսագիրն արտահայտությանը պատասխանելով։ — Այժ թե վոյ։

— Յես, mon père, ցանկանում եմ ձեզ յերբեք չխոզնել, յերբեք կյանքս չքաժանել ձեր կյանքից։ Յես չեմ ուզում ամուսնանալ, — ասավ նա կտրուկ, իր գեղեցիկ աչքերով նայելով իշխան Վասիլիին ու հորը։

— Դատարկ, հիմար, բաներ ևս ասում, — հոնքերը կրակելով պոռաց իշխան Նիկոլայ Անդրեևիչը, բռնեց աղջկա ձեռք, քաշեց դեպի իրեն, բայց չհամբուրեց, այլ ճակատը նրա ճակատին դիպցնելով, աղջկա ձեռն այնպես պինդ սեղմեց, վոր իշխանազուսարը դեմքը կնճռեց ու ճշաց։

Իշխան Վասիլին վեր կացավ։

— Ma chère, je vous dirai, que c'est un moment que je n'oublierai jamais, jamais; mais, ma bonne, est-ce que vous ne nous donnerez pas un peu d'espérance de toucher ce coeur si bon, si généreux. Dites, que peut-être... l'avenir est si grand. Dites: peut-être<sup>1</sup>.

— Իշխան, ինչ վոր ասի — դա բուրն եր, ինչ կար իմ սրտում։ Ծնորդակալ եմ ձեր արած պատվի համար, բայց յերբեք ձեր վորդու կինը չեմ լինի։

— Ե, ամեն բան ուրեմն վերջացավ, սիրելիս։ Ծատ ուրախ եմ քեզ տեսնելուս, շատ ուրախ եմ, — կրկնեց ձեր իշխանը, դրկելով իշխան Վասիլիին։ — Ծատ ուրախ եմ քեզ տեսնելուս։ Իսկ դու, Մարի, դնա, դնա սենյակդ։

«Իմ կոչումն այլ և, — մտածում եր իշխանազուսարն ինքն իրեն, — իմ կոչումն և — յերջանիկ լինել այլ յերջանկությամբ, սիրո և անձնազոհության յերջանկությամբ։ Ինչ գնով ել լինի՝ յես խեղճ Amelie-ին պիտի յերջանկացնեմ։ Նա այնպես բուռն և սիրում նրան։ Այնպես ղղջաց։ Ամեն ինչ պիտի տնեմ, վոր աշողեցնեմ նրա և Անատոլի ամուսնությունը։ Յեթև Անատոլը հաբուստ չի, յես Amelie-ին ոժիտ, միջոցներ կտամ. և դրա համար հայրիկին կխնդրեմ, Անդրեյին կխնդրեմ։ Յես ինձ շատ յերջանիկ

<sup>1</sup> Սիրելիս, ձեզ պիտի տեսեմ, վոր այս վայրկյանը յերբեք չեմ մոռանա, բայց, իմ ամենաբարեի, ինձ ավել ճանաչողության գոնե մե փոքրիկ հույս՝ ձեր այնքան բարի ու վեհ սիրտը հուզելուս Ասեք՝ թերեւս։ Ապագան այնքան մեծ ևս Ասեք՝ թերեւս։

կողքամ, յերբ Amelie-ին նրա կինը դառնաւ նա այնպես դժբախտ և, առար, մենակ, անողնակաւ: Եեմ աստիճան իմ, վարքան բուռն և սիրում, վոր այդպես ինքնամոռացութեան մեջ եր ընկել: Թերևս ինքս ել նույնն անկէի, մտածեց իշխանադուստր Մարիան:

## VI

Ռոստոփները յերկար ժամանակ լուր չունեցին Նիկոլայի մասին. մահալա կիսին միայն կոմսին մի նամակ տվին, վորի հասցեագրից նա հանաչեց վորդու ձեռքը: Նամակն ստանալով՝ կոմսը վախեցած ու հապառկա, աշխատելով չնկատվել, վորտի ծայրերի վրա վաղեց իր առանձնասենյակը, փակվեց ու սկսեց կարդալ: Աննա Միխայլովնան, իմանալով (ինչպես և իմանում եր տանը կատարվող ամեն բան) նամակ և ստացվել, կամացուկ քայլերով կոմսի առանձնասենյակը մտավ և տեսավ, վոր կոմսը նամակը ձեռին հեկեկաւ. և և միևնույն ժամանակ ծիծաղում:

Աննան Միխայլովնան, չնայած վոր իր դործերը կարգին ելին ընկել, շարունակում եր աղբիլ Ռոստոփների տանը:

— Mon bon ami? — ասով Աննա Միխայլովնան հարցականախոսը շեշտով, պատրաստ ամեն տեսակի կարեկցութեան:

Կոմսը հեկեկաց ավելի սաստիկ:

— Նիկոլայչիկա... նամակ... վիրավորված ե... յեղել... ma chère... վիրավորված... ապախակա... կոմսուհի... ապառքեան աստիճան և ստացել... փոքր աստծո... Միքելի կոմսուհու ինչպես հայտնեմ...

Աննա Միխայլովնան նստեց կոմսի մոտ, իր թաշկինակով սրբրեց նրա աչքերը, թրջված նամակը, ապա իր արցունքները, կարգաց նամակը, հանգատարեց կոմսին և վորոշեց, վոր մինչև ճաշ, մինչև թեյը ինքը կնախադատարաստի կոմսուհուն, իսկ թեյից հետո, ասածու. ողնութեամբ, ամեն ինչ կհայտնի:

Ճաշի ժամանակ Աննա Միխայլովնան շարունակ խոսում եր պատերազմի լուրերից, Նիկոլայչիկայի մասին. մի յերկու անգամ հարցրեց, թե նրա վերջին նամակը յերբ և ստացվել, թեև այդ պատեր ասաջ ել, նկատեց, թե շատ կարելի չե հիմա յեկ նամակ ստացվի: Ամեն անգամ, յերբ այդ ակնարկների ժամանակ կոմսուհին սկզբում եր անհանդգատանալ ու առգնապալից հայացքներ նետել մերթ կոմսի, մերթ Աննա Միխայլովնայի վրա, Աննա Միխայլովնան աննկատելիորեն խոսքը դարձնում եր աննշան բաների վրա: Նա առաջ, վոր ամբողջ ընտանիքի մեջ ամենից ավելի ուշիմն եր, վոր սմոված եր առանձին շեշտերից, նայվածքներից և դեմքերի արտահայտութեանից շատ բան զգալու կարողութեամբ, ճաշի հենց սկզբից ականջները սրեց և գլխի ընկավ, վոր ինչ-վոր մի բան

կա հոր և Աննա Միխայլովնայի միջև, մի բան, վոր յեղբորն և վերաբերում, և վոր Աննա Միխայլովնան նախապատրաստում և։ Զնայած իր համարձակության (Նատաշան գիտեր, թե վորքան զգայուն և մայրը Նիկոլային վերաբերող ամեն բանի նկատմամբ) նա չհամարձակվեց՝ ճաշի ժամանակ հարց տալ և անհանգստությունից բան չկերպով, սրբովեց աթոռի վրա, ականջ չդնելով իր դաստիարակչուհու գիտողություններին։ Ծաշից հետո նա գլխապատառ վաղեց Աննա Միխայլովնայի յետևից և բազմոցաբաժնում նրա վզովն ընկավ։

— Մորաքույր, սիրելիս, ասեք, թե՛ և պատահել։

— Վոչինչ, սիրելիս։

— Վոչ, հոգյակս, աղափնյակս, սիրելի մորաքույր, չեմ թողնի, մինչև չասեք. գիտեմ վոր մի բան գիտեք։

Աննա Միխայլովնան գլուխն սրորեց։

— Vous êtes une fine mouche, mon enfant<sup>1</sup>, — ասավ նա։

— Նիկոլայից նամակ և յեկել, այնպես չի, — պատասխանեց Նատաշան, դրական պատասխան կարդալով Աննա Միխայլովնայի գեմքին։

— Բայց, ի սեր ասածո, զգույշ կաց. գիտես չե, թե ինչպես կարող և ազդել այդ բանը մորդ վրա։

— Այո, անպայման զգույշ կլինեմ, բայց ասեք տեսնենք։ Ձեք պատմում։ Դե վոր այդպես ե՞ իսկույն կերթամ կասեմ։

Աննա Միխայլովնան համառոտ խոսքերով պատմեց Նատաշային նամակի բովանդակությունը, պայմանով, վոր վոչ-վոքի չտալ։

— Ազնիվ խոսք, — յերեսը խաչակնքելով ասավ Նատաշան, — վոչ մեկին չեմ ասի, — և անմիջապես վաղեց Սոնյայի մոտ։ — Նիկոլենկան... վերավորված ե... նամակ կա... — ասավ նա հանդիսավոր և ուրախ։

— Nicolas! — արտասանեց Սոնյան ու գունատվեց։

Նատաշան, նկատելով թե յեղբոր վերավորելու լուրն ինչ ազդեցություն արավ Սոնյայի վրա, նոր միայն հասկացավ հաղորդած լուրի տխուր կազմը։ Ու Սոնյային զրկելով՝ լաց յեղավ։

— Մի քիչ վերավորված և, բայց սպայի աստիճան են տվել. իսկ հիմա առողջ ե, և նամակը գրողն ինքն ե, — ասավ նա արտասովալից աչքերով։

— Այ յերևում և արդեն, վոր բոլոր կանայք ել—լալկան են, — ասավ Պետյան, վճռական քայլերով սենյակում անց ու դարձ անկելով։ — Յես շատ ուրախ եմ, իսկապես, շատ ուրախ եմ, վոր

<sup>1</sup> Դու սուր խելք ունես, քեթեռնիկս։

յեղբայրս աչքի յե ընկել, աստիճանն ե տաղել: Դուք բոլորդ լալկանն եք, վաշինչ չեք հասկանում:

Նատաշան ժպտաց արցունքներէ միջից:

— Դու նամակը չես կարդացել, — հարցրեց Սոնյան:

— Զեմ կարդացել, բայց Աննա Միխայլովնան ասով, վարածին ինչ անցել է, և վար Նիկոլայն արդեն սպա յե...

— Փառք ասածո, — ասով Սոնյան յերեսը խաշակնքելով: — Բայց դու ցե խորել ե քեզ, ամեն բան չի ասել: Արի զնանք *maman*-ի մոտ: Պետյան անխոս զնում-դալիս եր սենյակում:

— Եկի՛ն յես Նիկոլուշկի տեղը լինելի, ափելի շատ ֆրանսացի կտպանելի, — ասով նա, — այնքանն զղվելի յեն զբանք: Այնքանն կշարդելի, վար նրանցից զեղեք զնեյին, — շարունակեց Պետյան: — Զայնդ կարի, Պետյա, ինչ հիմարն ես...

— Հիմարը յես չեմ, այլ դուք, վար շնչին բաներից լաց եք լինում, — ասով Պետյան:

— Դու նրան հիշում ես, — բոսկեական լուսթյունից հետո հարցրեց հանկարծ Նատաշան: Սոնյան ժպտաց. «Հիշում եմ արդյաք Նիկոլային»:

— Վաչ, Սոնյա, հիշում ես այնպես, վար ամեն բան լնով մտաբերես, — ասանձին շեշտով ասով Նատաշան, ըստ յերեսլթին, կամենալով իր խոսքերին շատ լուրջ նշանակություն տալ: — Եես ել եմ հիշում Նիկոլենկային, — ասով նա: — Բայց Բորիսին չեմ հիշում: Բոլորովին չեմ հիշում...

— Ինչպես: Բորիսին չես հիշում, — հարցրեց Սոնյան դարձանքով:

— Վաչ թե՛ չեմ հիշում. — դիտեմ ինչպես եր, բայց այնպես չեմ հիշում, ինչպես Նիկոլենկային: Եերր աչքերս փակում եմ նրան հիշում եմ, բայց Բորիսին վաչ (նա աչքերը փակեց), այնպես, վաշինչ չկա:

— Ահ, Նատաշա, — ասով Սոնյան, խանդավառ ու լուրջ տեսքով ընկերուհուն նայելով, կարծես նրան արժանի չեր համարում լսելու այն, ինչ մտադիր եր ասել, և կարծես այդ պատճառս եր ասել ուրիշ վարեն մեկին, վար լավ կհասկանար իրեն: — Քանի վար յեղբորդ սիրել եմ, ինչ ել պատահե նրան, թե ինձ, յերեսք ամբողջ կյանքս չեմ դադարել նրան սիրելուց:

Նատաշան դարձապես, հետաքրքիր աչքերով նայեց Սոնյային ու լսեց: Զգում եր, վար Սոնյայի ասածը ճիշտ եր. նրա ասածի նման սեր յեղել է. բայց ինքը՝ Նատաշան այդպիսի բան զես չեր զգացել: Հասկատում եր, վար այդպիսի բան կարող եր լինել, բայց չեք հասկանում:

— Դու նրան նամակ ես գրելու, — հարցրեց նա:

Սոնյան մտածեց: Այդ խնդիրը, — թե պետք է արդո՞ք Նիկոլային նամակ գրել և ինչպե՞ս պետք է գրել, — նրան տանջող մի խնդիր էր: Այժմ, յերբ նա սպա յեր արդեն և վերաժողոված հերոս, արդո՞ք լավ բան արած կլինե՞ր, յեթե հիշեցներ նրան իր դոյությունը և այդպիսով կարծես այն պարտավորությունը, վոր հանձն էր առել Նիկոլայը իր նկատմամբ:

— Զգիտեմ. կարծում եմ՝ յեթե նա գրի, յես ել կգրեմ, — կարմրելով ասավ նա:

— Յեվ չե՞ս ամաչի վոր գրես:

Սոնյան ժպտաց. գլուխ:

— Յես կամաչեցի Բորիսին գրել, և չեմ գրի:

— Ամաչելու Բո՞չ կա վոր:

— Այնպես, չգիտեմ: Անհարմար է, ամոթ է:

— Իսկ յես գիտեմ զա ինչո՞ւ յե ամաչում, — ասավ Պետյան, Նատաշայի առաջին նկատողությունից վերաժողոված, — նրանից, վոր սիրահարվել էր այն հաստ ակնոցավորի վրա (Պետյան այդպես էր կոչում իր անվանակիցին, նոր կոմս Պիեռ Բեզուսովին). հիմա յեւ սիրահարված և յերգչի վրա (Պետյան ակնարկում էր Նատաշայի յերգեցողության խաւաղի ուսուցչին). զրա համար ել ամաչում է:

— Պետյա, դու հիմար ես, — ասավ Նատաշան:

— Բեզանից հիմար չեմ, քույրիկս, — ասավ ինքը տարեկան Պետյան, ինչպես հասակն առած մի բրիգադիր:

Աննա Միխայլովնայի ճաշի միջոցին արած ակնարկներն արդեն նախապարտատել էին կոմսուհուն: Իր սենյակը գնալով նստեց նա բաղկաթոնին ու ել աչքը չեր հեռացնում վորդու մանրանկար պատկերից, վոր շինված էր քթախոտի տուփի վրա, և շուտով արցունքը թրջեց նրա աչքերը: Աննա Միխայլովնան նամակը ձեռին, վոտների ծայրի վրա քայլելով, մտավ կոմսուհու սենյակը և կանգ առավ:

— Դուք մի մտնեք, — ասավ նա իր յետևից յեկող ծեր կոմսին, — հետո կկանչեմ, — և դուռը ծածկեց իր յետևից:

Կոմսն ականջը դեմ արավ բանալու անցքին և սկսեց ականջ դնել:

Նախ անտարբեր խոսակցություն լսեց, հետո Աննա Միխայլովնայի ձայնը, վոր յերկար ճառ ասավ, ապա մի ճիչ, նորից լռություն տիրեց, և կրկին յերկու ձայները միասին խոսեցին ուրախ շեշտելով, հետո քայլեր, և Աննա Միխայլովնան դուռը բաց արավ: Աննա Միխայլովնայի դեմքը դժվարին անդամահատություն կա-

տարող վերաբույժի տեսք ունենալ, վորը մարդկանց ներս և թոյնում նրա համար, վորպեսզի իր հմտությունը գնահատեն:

— C'est fait<sup>1</sup>, —ասով նա կոմսին, հանդիսավոր ձևով ցույց տալով կոմսուհուն, վորը մի ձեռին բռնել էր վորդու պատկերով դարդարած քթախոտի տուփը, մյուսին — նամակը, և մերթ ասվին էր համբուրում, մերթ նամակը:

Կոմսին տեսնելով նա ձեռները պարզեց նրան, զրկեց նրա ճաղատ գլուխը և ճաղատ գլխի վրայից նորից նայեց նամակին ու պատկերին և վորպեսզի դարձյալ կարողանա հպել զրանք իր շուրթերին, թեթեակի հրեց մարդու ճաղատ գլուխը Վերան, Նատաշան, Սանյան ու Պետյան ներս մտան, և սկսեցին նամակը կարգալի նիկուլայը համատես նկարագրում էր արշավանքը և այն յերկու ճակատամարտը, վորանց մասնակցել էր ինքը. զրում էր սպայի սատիճան ստանալու մասին և վերջում ավելացնում էր, թե համբուրում և maman-ի ձեռք և papa-ին, խնդրում և նրանց սրհնությունը, և համբուրում և Վերային, Նատաշային և Պետիային: Բայց զրանից, բարեւում և m-r Եկինդին և m-me Ծախին և զայակին, և, զրանից բացի, խնդրում և համբուրել թանկագին Սանյային, վորին սիրում և ստաջիա տես ու միշտ հիշում: Այս լսելով Սանյան այնպես կարմրեց, վոր աչքերը լցվեցին արցունքով: Ու չկարողանալով դիմանալ իր վրա դարձած հայացքներին վազեց դռնից, պտույտ ավել շրջադեպտն ուղցնելով և, կարմրած ու մպրաք զեմքին, նստեց հատակին: Կոմսուհին լալիս էր:

— Բայց ինչու յես լալիս, maman, — ասով Վերան: — Նրա զրածներին համար պետք և սւրախանալ, և վոչ թե լաց լինել:

Նա միանգամայն ճիշտ էր, բայց թե կոմսը, թե կոմսուհին և թե Նատաշան — բոլորը հանդիմանանքով նայեցին նրան. «Սա տեսնես ժամ և քաշել», մտածեց կոմսուհին:

Նիկուլայի նամակը հարչուր անդամ կարգացվեց, և նրանք ովքեր արժանի էյին համարվում այդ նամակը լսելու, պետք և զային կոմսուհու մոտ, վոր նամակը միշտ իր մոտ էր պահում: Յեկան դատախարակները, զայակները, Միտենկան, մի քանի ծանոթներ, և կոմսուհին ամեն անգամ նամակը կարդում էր մի նոր բավական նությամբ և ամեն անգամ այս նամակով նոր տառախնություններ էր հայտարարում իր Նիկուլայի մեջ: Նրա համար տարբերակ, զարմանալի և սւրախալի յեր, վոր իր վորդին — այն վորդին, վոր արանից 20 տարի ստաջ մարմնի փոքրիկ անդամներով հագնված շարժվեց իր արդանդում, այն վորդին, վորի համար նա կովում

<sup>1</sup> Գործը վերջացած է:



եր յերեւեաներին յերես տվող կոմսի հետ, այն վորդին, վոր խոսելիս առաջ տաւնձ խոսքը սովորեց, հետք գնիւիլը», — վոր այդ վորդին այժմ այնտեղ է, ոտար յերկրում, ոտար միջավայրում, քաջ ուզովիկ է, մենակ, առանց ողնության ու դեկավարության, կատարում է տղամարդու ինչ-վոր մի գործ: Արար աշխարհի դարավոր փորձը, վոր ցույց է տալիս, թե մանուկներն աննկատելի ճանապարհով որորոցից տղամարդ են դառնում, զոյություն չունեներ կոմսուհու համար: Վորդու արբունքի հասնելը (արբունքի յուրաքանչյուր շրջանում) նրա համար նույնքան անսովոր, դարձմանալի չէր, կարծես թե յերեք միլիոնավոր ու միլիոնավոր մարդիկ այդպես չեյին արբունքի հասել: Ինչպէս 20 տարի առաջ չէր հավատում, վոր այն փոքրիկ եակը (վոր ապրում էր սրտի տակ ինչ-վոր մի տեղ) ճշա, կուրճքը ծծի ու խոսի, այդպես էլ հիմա չէր կարողանում հավատալ, թե այդ իսկ եակը կարող է լինել այն ուժեղ, քաջ տղամարդը, ինչպիսին հիմա էր, այս նամակից դատելով:

— Ինչ վո՞ն է, վորքան լավ է նկարագրում, — ասում էր նա, կարդալով նամակի նկարագրական մասը: — Յե՛վ տեսեք ի՞նչ սիրտ ունի: Իր մասին վոչինչ... Վճշ մի խոսք: Գրում է ինչ-վոր Դեմիսովի մասին, իսկ ինքը, յերեւի, այդ բոլորից քաջ է ավելի: Ինչ սիրտ ունի: Բոլորին հիշել եւ Վաշ մեկին չի մոռացել: Յեւ միշտ, միշտ ասում եյի, յերբ դեռ այս սպքան էր, միշտ ասում եյի...

Շարթից ավելի անով-տեղով Նիկոլային նամակներ գրելու համար պատրաստություն եյին տեսնում, սեպագրություններ անում է արտագրում. կոմսուհու հսկողությամբ է կոմսի հոգածությամբ հավաքում եյին անհրաժեշտ իրեր ու դրամ՝ սպայություն ստացած Նիկոլային զգեստավորելու և հարկավոր իրերով ապահովելու: Աննա Միխայլովնան, վորպես դարձնական կին, կարողացել էր քանակում անդամ իր և վորդու համար պրոտեկցիա ստրքել՝ նամակագրության համար: Նա պատահություն ուներ իր նամակներն ուղարկելու մեծ իշխան Կոնստանտին Պավլովիչին, վոր զվարդիայի հրամանատարն էր: Ռոստովները յենթադրում եյին, թե ռուսական գլարդիան արասանմանում մի բոլորովին հաստատու վորոշ հասցե չէ և չեթե նամակը հասնի զվարդիայի հրամանատար մեծ իշխանին, անպատճառ կհասնի և Պավլովիչիան գունդը, վորը պետք է վոր նրա մոտ մի տեղ լինելու: Ուստի և վորոշվեց նամակներն ու դրամը մեծ իշխանի սուրհանդակի միջոցով ուղարկել Բորիսին, իսկ Բորիսն արդեն կհասցնէր Նիկոլային: Նամակներ գրել եյին ծեր կոմսը, կոմսուհին, Պետյան, Վերան, Նատաշան, Սոնյան. և, վերջապես կոմսը վորդուն ուղարկում էր 6 000 ռուբլի զգեստավորման համար և՛ զանազան իրեր:

# VII

Նախմբերի 12-ին Ումյուցի մոտ բանակած Կուսակազմի դա-  
րարանակը պատրաստվում էր հաջորդ որվա դորատեմին, վոր  
պետք է տեղի ունենար ուսաց և ավարտիացոց կայարներ  
սաջև Դիմարդիան, վոր Ռուսաստանից հենց նոր էր տեղ հասել,  
դիշերեց Ումյուցից 15 վերստ հեռու և մյուս որը, առավոտյան  
մամը 10-ին, դուրս էր յեկել Ումյուցի դաշտը:

Նիկալայ Ռուստովն այդ որը Բորիսից մի գրութչուն ստացավ,  
թե Բիմայուցիան դունդը դիշերում և Ումյուցից 15 վերստ հեռա-  
վորութչյան վրա, և թե ինքն սպասում է նրան՝ նամակ ու գրամ  
հանձնելու: Ռուստովը փողի մեծ կարիք էր զգում մանավանդ  
այժմ, յերբ դարձն արշավանքից վերադառնալով, բանակել էր  
Ումյուցի մոտերքը, և լավ մատակարարվող դորական մթերավա-  
ճատները, և ավարտական հրեաները, բանակատեղը դալով, առա-  
ջարկում էին ամեն տեսակ դալթակիչ բաներ: Պալլոգրադյան  
զնդի սպաներն ամեն նր կերութումով տոնում էին իրենց աստի-  
ճանի բարձրացումներն ու ստացած պատվանշանները, հաճախ  
Ումյուց էին գնում, նորից այնտեղ վերադարձած ունդարուհի  
Կարսլինայի մոտ, վոր ճաշարան էր բացել էին սպասուհիներով:  
Մի քանի որ առաջ Ռուստովը տոնել էր իր կարնետի աստիճան  
ստանալը, գնել էր Դենիսովի Բեդուին անուանով ձին, ու պարտ  
էր մնացել թե ընկերներին թե մթերավաճատներին: Բորիսի գրու-  
թչունն ստանալով Ռուստովը մի ընկերով հետ գնաց մինչև Ու-  
մյուց, այնտեղ ճաշեց, մի շիշ գինի խմեց, ու մենակ գնաց դվար-  
դիայի բանակատեղը՝ իր մանկութչյան ընկերովը վարնելու: Ռու-  
ստովը դեռ չէր կարողացել իր նոր աստիճանի համեմատ զգես-  
տավորվել: Հագինը յունկերական մաշված բաճկոն էր՝ դինվորի  
խաշը վրան, նույնպիսի վարտիկ և սպասական սրեալքով սուր-  
տակի ձին գնել էր զանեցի կազակից: հուսարական տորված  
զլիտարիը իդիթի պես զրել էր յետ ու ծոկ մի կողմի վրա: Բի-  
մայուցիան գնդի բանակատեղին մոտենալով՝ նա մտածում էր,  
վոր Բորիսին և ընկեր-դվարդիականներին կզարմացնի իր մար-  
տական հուսարական տեսքով:

Դիմարդիան իր մարդջ արշավանքը կատարել էր դրոսանքի  
պես, ցուցադրելով իր մարբութչաւնն ու կարգապահութչաւնը:  
Անցումները կայանից կայան — կարճ էին յեղել, պայուսակները  
փախադրել էին սալերով, ամեն մի կայանում ավարտական  
դինվարական մարմինները հիանալի ճաշեր էին տվել սպաներին:  
Դնդերը մտել և քաղաքներից դուրս էին յեկել յերաժշտալմարի

նվազող, և ամբողջ ճանապարհը (վորով և հպարտանում եյին գվարդիականները), մեծ իշխանի հրամանով, զինվորները քայլել եյին համաչափ քայլերով, իսկ սպաները վտռով՝ իրենց տեղերը բռնած: Արշավանքի ընթացքում Բորիսը միշտ յեղել եր Բերդի հետ, վորը հիմա վաշտի հրամանատար եր արդեն: Բերդը, արշավանքի միջոցին վաշտի հրամանատարութիւն ստանալով, իր լավ ծառայութեամբ և ճշտապահութեամբ, կարողացել եր շահել հրամանատարութեան վստահութիւնը և լավապես կարգադրել իր տնտեսական գործերը. Բորիսն արշավանքի ընթացքում շատ ծանոթութիւններ եր հաստատել, վորոնք կարող եյին իրեն ոգտարկար լինել, իսկ Պիեռից վերցրած հանձնարարական նամակով ծանոթացավ իշխան Անդրեյ Բալկանսկուն, վորի միջոցով հուշս ունեւր մի պաշտոն ստանալ գլխավոր հրամանատարի շտաբում: Բերդն ու Բորիսը, կռիւ և մաքուր հաղնված, վերջին ցերեկվա անցումից հանգստացած, իրենց հատկացված մաքուր բնակարանում կլոր սեղանի շուրջը նստած՝ շահմատ եյին խաղում: Բերդը ժխտմորճը բռնել եր ծնկների արանքում: Բորիսն իրեն հառուկ ճշտապահութեամբ, սպիտակ նուրբ ձեռներով դասավորում եր քարերը, սպասելով Բերդի խաղին, և խաղակցի դեմքին նայելով, ըստ յերևութին մտածում եր խաղի մասին, ինչպես և միշտ մտածում եր միայն այն մասին, ինչով զբաղված եր լինում:

— Հապա տեսնենք, ինչպես դուրս կդաք այստեղից, — ասավ նա:

— Կաշխտենք, — ասավ Բերդը, ձեռք պեշկային դիպցնելով ու յետ քաշելով:

Այդ միջոցին դուռը բացվեց:

— Վերջապես քեզ գտա, — բացականչեց Ռոստովը: — Բերդն ել այստեղ ե: Այ դու պիեռզմեծան ալի կուռի դուրիւր, — դռնեց նա, կրկնելով դայակի խոսքերը, վորոնց վրա մի ժամանակ ժիծաղում եյին Բորիսի հետ:

— Վա՛յ. ինչպես փռվել ես! — Բորիսը վեր կացավ Ռոստովին դիմավորելու, բայց, վեր կենալով, չմոռացավ. ընկնող շահմատները բռնել և իրենց տեղը դնել և ուղեց բարեկամին զրկել, բայց Նիկոլայը մի կողմ քաշվեց: Նա չեր ուզում սովորական ձեռով, ուրիշներին ընդարինակելով, արտահայտել իր զգացումները. ուղում եր իրենց տեսակցութեան ժամանակ մի առանձին բան անել. կամթել, հրել Բորիսին, բայց վոչ մի դեպքում չհամբուրել, ինչպես անում են բոլորը: Իսկ Բորիսն ընդհակառակը, հանդիստ, մտերմաբար զրկեց Ռոստովին ու յերեք անգամ համբուրեց:

Վեց ամիս եր գրեթե իրար չեյին տեսել և այդ այն հասակում, յերբ յերիտասարդները կյանքի ճանապարհին իրենց առա-

ջին քայլերն են անում: Յերկուսն էլ իրար շատ փոխված դասն. յերկուսն էլ իրենց վրա կրում էյին դրոշմը այն միջավայրի, ուր արել էյին իրենց ստաջին քայլերը: Վարավհեան վերջին տեսակ-ցություննից ի վեր շատ էյին փոխվել՝ ուղեցինց ցույց տալ մի-մյանց իրենց մեջ կատարված փոփոխությունները:

— Եյ դու, անխճար: Այնպես մաքուր, թարմ են, կարծես զրո-սանքից են յեկել, վաշ թե մեզ՝ մեղավորներին նման, — ասում եր Ռոստովը՝ Բորիսի համար բոլորովին նոր բարխոտնային հըն-շյուններով և զինվորի շարժ ու ձեւերով, ցույց տալով իր ցեխոտ-ված վարտիկը:

Ռոստովի բարձր ձայնից՝ ամենաերգերմանուհին դուխը հա-նեց դասն արանքից:

— Հը, լավիկն է, — աչքով արավ Ռոստովը:

— Ի՛նչ ևս դուստմ Կվախենան, — ասավ Բորիսը: — Յես քեզ այստը չեյի սպասում, — ավելացրեց նա: — Գրությունս յերեկ միայն Կուսուզովի՝ ծանոթ աղյուսանաի — Բալիկոնսկու միջոցով ուղարկեցի քեզ: Զեյի՞ կարծում, թե այսքան շուտ կհասցնի... Ե, ի՛նչպես ես: Արդեն մկրաված ես, — հարցրեց Բորիսը:

Ռոստովն, ասանց պատասխանելու, ձեռը խփեց յուր կրծքի ու Գիւրգիի խաչին և կապած թեր ցույց տալով, ժպտալով նայեց Բերդին:

— Ինչպես տեսնում ես, — ասավ նա:

— Այ թե ինչ, — ասավ Բորիսը ժպտալով: — Մենք էլ փո-ստովար արշավանք կատարեցինք: Գիտես, նորին բարձրությունը, մեծ իշխանը շարունակ մեր դնդի հետ եր, այնպես վար ամեն տեսակ հարմարություններ ունեյինք: Լեհաստանում այնպիսի ընդունելություններ, ճաչեր, պարահանդեսներ յեղան, — վար պատ-մել չի կարելի: Յե՞վ թաղամասանդը շատ վաղորմած վերարերմունք ուներ զեպի մեր բոլոր սպաները:

Յե՞վ ընկերները պատմեցին միմյանց — մեկն իր հուսարական կերուխումների և ուղմական կյանքի մասին, մյուսն այն մասին, թե վարքան հոճելի ու շահավետ և ծառայել բարձրաստիճան ան-ձերի հրամանատարության ներքո և այլն:

— Ո՛ր, դիւրդիան, — ասավ Ռոստովը: — Դե, ուրեմն զինի բե-րել տուր:

Բորիսը դեմքը կնճակ:

— Յեթե անպատճառ ուղում ես, — ասավ նա:

Յե՞վ, մահճակալին մոտենալով, մաքուր բարձի տակից հանեց քսակն ու հրամայեց զինի բերել:

— Այո, և զրամդ ու նամակդ տամ քեզ, — ավելացրեց նա:

Ռոստովը նամակը վերցրեց և, դրամը բաղմոցի վրա նետելով, արմուկները հենեց սեղանին ու սկսեց կարդալ: Կարդաց մի քանի տող ու Բերդին նայեց չարացած: Սակայն, նրա հայացքին հանդիպելով, յերեսը ծածկեց նամակով:

— Յերևում ե կարդին դուժար են ուղարկել, — ասավ Բերդը, նայելով բաղմոցին ընկած ծանր քսակին: Մենք միայն ոռճիկով ենք աղբուս, կոմս: Յես իմ մասին կարող եմ ասել...

— Գիտեք, սիրելի Բերդ, — ասավ Ռոստովը, — յեթե դուք ձեր տնից նամակ ստանաք և հանդիպեք մի բարեկամ մարդու, վորից ուզենաք հարցուփորձել ամեն ինչից, և յեթե յես այստեղ լինեմ, իսկույն կհեռանամ, վոր ձեզ չխանդարեմ: Լսեք, դնացեք, խնդրում եմ, մի վորեւե տեղ, վորեւե մի տեղ... Թեկուզ սատանայի ծոցը, — պոռայ նա և անմիջապես, նրա ուսերից բռնելով ու մեղմուքյամբ յերեսին նայելով, աշխատելով մեղմել իր խոսքերի տալովորուքյունը, ավելացրեց. — գիտեք, չբարկանաք. յես բարեկամաբար եմ ասում, վորպես հին ծանոթի:

— Ա՛խ, կոմս, յես շատ լավ եմ հասկանում, — ասավ Բերդը, վեր կենալով և ինքն իրեն խոսելով կոկորդային ձայնով:

— Տանտիրոջ մոտ գնացեք. նա ձեզ կանչել և, — ասավ Բորիսը:

Բերդը հազալ իր մաքուր, անրիժ սյուրթուկը, քունքի մաղերը հայելու առաջ կտրեց զեպի վեր՝ Թադավոր Ալեքսանդր Պավլովիչի նման և, Ռոստովի հայացքից համոզվելով, վոր իր սյուրթուկը նկատվեց, ժպտն. յերեսին դուրս յեկավ սենյակից:

— Ա՛հ, ինչ անասունն եմ յեղել, — ասավ Ռոստովը, նամակը կարդալով:

— Ի՞նչ և պատահել:

— Ո, կատարյալ խող եմ յեղել, վոր վոչ մի անգամ նամակ չեմ գրել և այնպես վախեցրել եմ նրանց: Ո՛հ, ինչ խողն եմ յեղել, — կրկնեց նա, հանկարծ կարմրելով: — Մ, Գավրիլին ուղարկիր սղի բերելու:

Հարադատների նամակների հետ կար և մի հանձնարարական նամակ՝ իշխան Բազրատիոնի անունով, վոր, Աննա Միխայլովնայի խորհրդով, կոմսուհին ձեռք եր բերել ծանոթների միջոցով և ուղարկել վորդուն, խնդրելով հանձնել ըստ պատկանելույն և ազտվել դրանից:

— Ա՛յ քեզ հիմարություն: Շատ ել հարկավորս և, — ասավ Ռոստովը, նամակը սեղանի տակ նետելով:

— Ինչ՞ն նետեցիր: — հարցրեց Բորիսը:

— Ինչ՞-վոր հանձնարարական նամակ և, ինչիս և պետք:

— Ի՞նչպէս թե ինչիդ և պետք, — ասով Բորիսը, նամակը հասակից վերցնելով ու հասցեն կարդալով: — Այս նամակը քեզ համար շատ հարկավոր նամակ և:

— Ինձ մոչինչ ել հարկավոր չի, և յես չեմ ուզում վերևե մեկի աղյուսանալը դատնալ:

— Ինչո՞ւ, — հարցրեց Բորիսը:

— Կարելի պաշտոն և:

— Ինչպէս տեսնում եմ, դու նույն յերազրդն ես մնացել, — ասով Բորիսը, դու ինչ որ արելով:

— Իսկ դու նույն դիպումաւք: Բայց այդ կարեւոր չի... Դու ինչպէս ես, — հարցրեց Ռոստովը:

— Այ, ինչպէս տեսնում ես: Մինչև հիմա ամեն բան լավ երայց, խոստովանում եմ, շատ կուզեի աղյուսանալ պաշտոն ունենալ, և զորքի մեջ չմնալ:

— Ինչո՞ւ:

— Նրա համար վոր, յերբ միանգամից սկսում ես դիւստրական ծառայութեան կարիերան, պետք և աշխատել, վորքան կարելի յե փայտե կարիերա անել:

— Ահա թե ի՞նչ, — ասով Ռոստովը, ըստ յերևոյթի՛ն ուրիշ բանի մասին մտածելով:

Նա սեկսուե ու հարցական նայեց բարեկամի աչքերին, իզուր վորանելով իրեն գրողեցնող հարցի լուծումը:

Մերսենի Գալիլիլ դի՛նի բերեց:

— Ձկանչենք հիմա Ալֆոնս Կարլիչին, — ասով Բորիսը — նա կխմի քեզ հետ, յես չեմ կարող:

— Կանչի, կանչի: Իսկ այդ գերմանացին ի՞նչպէս և, — ասով Ռոստովը արհամարհական մղրտով:

— Շատ լավ, աղնիվ և հաճելի մարդ և, — ասով Բորիսը:

Ռոստովը մի անգամ ես ուշադիր նայեց Բորիսի աչքերին ու հասաչեց: Բերդը վերադարձով, և մի շիշ գինու շուրջը կենդանալով յերեք սպայի զրույցը: Գլարդիականներն Ռոստովին պատմում էին իրենց արշավանքի մասին և այն մասին, թե ինչպէս են պատվել իրենց Ռուսաստանում, Լեհաստանում և արտասահմանում: Պատմում էին իրենց հրամանատար մեծ իշխանի խոսքերից ու վարմաւքներից, անեկդատներ նրա բարութեան ու դուրադրդութեան մասին: Բերդն, ըստ սովորութեան, լուս երգանի խոսքն անձամբ իրեն չէր վերաբերում, բայց անեկդատների և մեծ իշխանի դուրադրդութեան ասիթով հաճույքով պատմեց, թե ինչպէս Գալիլիայում իրեն աջակցեց խոսել մեծ իշխանի հետ, յերբ նա ձի նստած գնդից-դուռը եր անցնում և դայրանում զորքի



անկարգ-անկանոն շարժվելու համար, Հանույքի ժպիտը դեմքին՝  
Բերդը պատմեց, թե ինչպես մեծ իշխանը, սաստիկ զայրացած,  
մոտեցել և իրեն ու պոռացել. «Առնառններ» (բարկացած, ժա-  
մանակ թաղամասառնող սիրում էր այդ բառը զորձածել) և պա-  
հանջել վաշտի հրամանատարին:

— Կհավատաք արդյոք, կոմս, յես բոլորովին չվախեցա, վորով-  
հետե զիտեյի վոր իրավացի յեմ: Յես, գիտեք, կոմս, առանց պարծե-  
նալու կարող եմ ասել, զնդերին տրված հրամանները, նույնպես և  
կանոնադիրքը «Հայր մերի» պես անդիր գիտեմ: Այդ իսկ պատ-  
ճառով, կոմս, իմ վաշտում զանցառություններ չեն լինում: Խիղճս  
հանդիստ եր: Ներկայացա (Բերդը վեր կացավ և ցույց տվեց, թե  
ինչպես և ներկայացել ձեռք քաշելն զրած: Իսկապես, դժվար եր  
պատկերացնել զրանից ավելի հարգանք ու ինքնապաշտություն  
արտահայտող դեմք): Նա ինձ, ինչպես ասում են, մի լավ շշտընց,  
հանդիմանեց, մահացու նախատինք տվեց, ել «Առնառններ», ել  
սատանաներ, ել Սիրիբ քչել, — ասում եր Բերդը մի նաւր բայի-  
տով: — Գիտեմ իրավացի յեմ, և զրա համար լուռ եմ: Երև համբ  
ես, ինչ ես, — զոռաց նա: Յես շարունակում եմ լսել: Յեվ լինչ  
եք կարծում, կոմս: Մյուս որը վոչինչ ել չեղավ: Եւ ինչ և նշա-  
նակում գլաւ չկորցնել, շշտութիւ: Այսպես բաներ, կոմս, — ասավ  
Բերդը, ձխամորճը ձխելով և ձխի ողակներ թողնելով:

— Այո, հիանալի յե, — ժպտալով ասավ Ռոստովը:

Բայց Բորիսը նկատելով, վոր Ռոստովն ուղղում և Բերդին ծաղ-  
րել, վարպետորեն խոսակցությունը փոխեց: Ռոստովին խնդրեց,  
վոր պատմի թե ինչպէս և վճրտեղ և վիրավորվել: Այդ Ռոստովին  
դուր յեկավ, և նա սկսեց պատմել, հետզհետե վազեւորվելով: Նա  
պատմեց նրանց Շենգրաբենի կռիվը ճիշտ այնպես, ինչպես սովոր-  
աբար մասնակիցները կպատմեն իրենց ճակատամարտի մասին,  
այսինքն այնպես, ինչպես ցանկալի կլինեի, վոր լինեի, այնպես,  
ինչպես լսել եյին ուրիշ պատմողներից, այնպես, ինչպես ավելի  
գեղեցիկ կլինեի պատմել, բայց բնավ վոչ այնպես, ինչպես յեղել  
եր: Ռոստովը ճշմարտախոս յերիտասարդ եր, և վոչ մի դեպքում  
սուտ չեր խոսի: Նա սկսեց, մտադիր լինելով պատմել բոլորը, ինչ-  
պես իսկութեամբ յեղել և, բայց իր համար ել աննկատելի, ակամա  
և անխուսափելի կերպով անցավ անճշտությունների: Յեթե նա  
ճշմարտությունը պատմեի իր ունկնդիրներին, վորոնք իր նման  
շատ պատմություններ եյին լսել կռիվներ ժամին և վորոշակի  
հասկացողություն ունեյին, թե ինչ բան և հարձակումը, և սպա-  
սում եյին ճիշտ աշդպիսի մի պատմութեան, — կամ իրեն չեյին  
հավատա, կամ, վոր ավելի վատ և, պիտի կարծեյին, թե Ռոստովն





Բերդն առիթից ողտվեց առանձին հարգանքով հարցնելու, թե հիմա վաշտի հրամանատարներին, ինչպես խոսում են, տալու չեն արդյոք կրկնակի խարադրամ: Դրան իշխան Անդրեյը ժպտալով պատասխանեց, թե ինքն այդքան կարևոր պետական կարգադրութայնց մասին դատել չի կարող, և Բերդը զվարթ ծիծաղեց:

— Դալով ձեր դործին, — դարձավ իշխան Անդրեյը նորից Բորիսին, — մենք հետո կխոսենք, ու նայեց Ռոստովին: — Մոտս լեկեք զորատեսից հետո. կարելին՝ կանենք:

Յեղ, սենյակը դիտելով, դարձավ Ռոստովին, վորի մանկական շփոթութունը կատաղության եր փոխվում (իշխան Անդրեյն այդ չուղեց նկատել) և հարցրեց.

— Դուք, կարծեմ, Շենգրաբենի կովի մասին եյիք պատմում: Դուք յեղեղ եք այնտեղ:

— Յես յեղել եմ այնտեղ, — չարությամբ ասավ Ռոստովը, կամենալով կարծես զրանով վիրավորել աշուտանտին:

Բալկոնակին նկատեց հուսարի տրամադրութունը, և այդ նրան ծիծաղելի թվաց: Թեթևակի-արհամարհանքով ժպտաց:

— Այո, այդ կովի մասին հիմա շատ պատմություններ են անում:

— Այո, պատմություններ, — խոսեց Ռոստովը բարձր, հանկարծորեն կատաղած աչքերով մեկ Բորիսին, մեկ Բալկոնակուն նայելով, — այո, պատմությունները շատ են, բայց մեր պատմությունները — թշնամու կրակի մեջ յեղած մարդու պատմություններ են, մեր պատմությունները կշիռ և արժեք ունեն, և վճի թե շտաբի ճարպիկ տղերանցը, վորոնք, վոչինչ չանելով, պարզենք են ստանում:

— Վորոնց թվին, ձեր յենթադրությամբ, պատկանում եմ և յՅո, — հանդիստ և առանձնապես հաճելի ժպիտով ասավ իշխան Անդրեյը:

Ռոստովը չարության և զրա հետ միաժամանակ հարգանքի մի տարրերնակ զգացում ունեցավ զեպի այդ հանդիստ մարդը:

— Յես ձեր մասին չեմ խոսում, — ասավ նա, — յես ձեզ չեմ ճանաչում և, խոստովանում եմ, ճանաչել չեմ ուզում: Յես խոսում եմ առհասարակ շտաբականների մասին:

— Իսկ յես ձեզ ահա թե ինչ կասեմ, — հանդստությամբ ընդհատեց նրան իշխան Անդրեյը: — Դուք ուզում եք վիրավորել ինձ, և յես պատրաստ եմ համաձայնել ձեզ հետ, վոր դա շատ հեշտ բան է, յեթե ինքներդ բավականաչափ հարգանք չունենաք զեպի ձեզ. բայց ընդունեցեք, վոր զրա համար վատ ժամանակ և վատ տեղ նք ընտրել: Այս քանի ուրը մենք բոլորս պիտի մասնակցենք

մի մեծ, ավելի լուրջ մենամարտի, բայցի դրանից, Դրուբեցկոյը, վեր ասում է, թե ինքը ձեր հին ընկերն է, բնավ մեղավոր չի, վեր իմ ֆիզիոնոմիան դժբախտության ունի ձեզ դուր չգալու: — Ասում, — ավելացրեց նա, վտար կանգնելով, — դուք դիտեք իմ աղջանունը, դիտեք, թե վտարեղ եմ լինում: Բայց մի մտաւնայք, վեր յես թե մեզ, թե ինձ բնավ վիրավորված չեմ համարում, և խորհուրդ կտամ, վտարեա ձեզնից ավելի տարեքով մարդ, թողնել այն գործը անհետանք: Աւրեմ ուրախ որք, դորատեսից հետո, ապաստւեմ եմ մեզ, Դրուբեցկոյ. ցտեսութեան, — ասով իշխան Անդրեյը և, յերկուսին ել դուրս տալով, դուրս յեկավ:

Ռոստովն իր ասելիքն իշխան Անդրեյին մտարեցից այն ժամանակ միայն, յերբ նա արդեն դուրս եր գնացել: Ուստի ավելի բարկացավ, վեր տախիբ վախցրել եր Ռոստովն անմիջապէս առհանջեց ձին և, Ռոբիսին սաղը հրածեշտ տալով, մեկնեց: Վաղը գնաց շտաբ և այդ կտարտիզ աղյուտանաին մենամարտի հրավիրել, թե դարձն, իսկապես, թողնել այդպես: — ամբողջ ճանապարհին այն հարցն եր տանջում նրան: Մերթ շարութեամբ մտածում եր, թե վտարիս բաժականութեամբ կուգիւ տեսնել այդ փոքրիկ, թույլ ու հաղորդ մարդուկի վախժարած դեմքն իր ատրամանակի տառջ, մերթ գործմանքով զգում եր, վեր իրեն ճանաչած բոլոր մարդկանցից փոշ մեկին այնպէս չեր ցանկանա բարեկամ ունենալ, ինչպէս այդ իրեն տեսլի աղյուտանաիկին:

### VIII

Ռոբիս և Ռոստովի տեսիցութեան հետեյալ որք ավտարեական ու սուսական դորքերի դորատեսն եր, վերին մասնակցում էին թե Ռուսաստանից նոր յեկած թաւ գնդերը և թե կուտուրգովի գեկավարութեամբ արշավանքից վերադարձած դորամաները: Ռուս կայսրն իր թաղածուտանդի հետ և ավտարեական կայսրը՝ երջհարցոյի հետ՝ կատարեցին դաշնակից 80-հազարանոց բանակի դորատեսը:

Վաղ տառիտից մաքուր հաղնիված դորքերն սկսեցին շարժել ու շարժել դաշտում՝ բերդի տառջ: Մերթ շարժում էին հազարավոր վառներ ու ափններ՝ փողփողուն դորակներով և աղաների հրամանով կանգ էին առնում, պտտւում ու դասավորւում միջանցներում, անցնելով ուրիշ նուշնալիս հետեակ բաղմութեան կողքով: մերթ համաշափ քայլատրոփով ու գրնդացով առաջ եր գալիս գեղեցիկ-կանոնավոր հեծկողորդ՝ կապուշտ, կարմիր, կանաչ անդնադործ մուշդիրներ հաղած յերամիշտներն առջևից — սև, շեկ, մոխրադուշն ձիեր նստած. մերթ՝ լափեաների վրա դրած մաքրած վաշ-

լուսն թնդանոթներով, հետևակի ու հեծելազորի արանքով, առաջ եր սողում հրետանին և բռնում իրեն հատկացրած տեղը: Վաշ միայն զորահանգեսային համազդեստով գեներալները՝ իրենց չափազանց սեղմված հաստ և բարակ իրաններով, ցածից դեպի վեր ոձիքների մեջ սեղմված, շարֆներով փաթաթված կարմիր վզերով ու իրենց բոլոր շքանշաններով՝ վաշ միայն պոմադոված, դուգված սպաները, այլև յուրաքանչյուր ղինվոր, — վոր մաքրվել, ամօրվել եր ու ղենքերը փայլեցրել ծայր աստիճան, յուրաքանչյուր ձի, վորի մաղը թրջած ու կանոնավոր սանրած՝ մաքրությունից փայլում եր աստիճանի պես, — բոլորն էլ զգում էին, վոր կատարվում և մի նշանակալից ու հանդիսավոր բան: Յուրաքանչյուր գեներալ ու ղինվոր զգում եր իր վոնչությունը, գիտակցելով, վոր ինքը ավադի մի հատիկ և մարդկային այդ ծովում, և միաժամանակ զգում էին իրենց հզորությունը, գիտակցելով իրենց այդ վիթխարի ամբողջության մի մասը:

Վաղ առավոտից սկսվեց մի լարված աշխատանքի յեռ ու ղեռ, և ժամը 10-ին ամեն ինչ կարգի ընկավ: Զորաշարքերը բռնեցին ընդարձակ դաշտը: Ամբողջ բանակը կանգնել եր յերեք շարք: Առջևից հեծելազորը, ապա հրետանին, վերջում հետևակը:

Յուրաքանչյուր շարքի արանքը կարճես փողոց լինելու բանակի յերեք մասերը շատ վորաշ կերպով բաժանված էին իրարից. — Կուտուզովի գործող բանակը (վորի առաջին գծի աջ թևը բռնել էին պավլոգրադցիները), Ռուսաստանից յեկած բանակային ու զվարդիական զնդերը և ավտորիական զորքը: Բայց բոլորը կանգնած էին մի գծով, մի հրամանատարության ներքո և միատեսակ կարգով:

Տերևների վրայից անցնող քամու նման մի հուզված ջշունջ տարածվեց. զգալիս են, զգալիս են: Լավեցին վախեցած ձայներ, և ամբողջ բանակով՝ վերջին պատրաստության մի ալիք անցավ:

Առջևում յերևաց Ումյուցից յեկող մի խումբ: Յեղ այդ խակ միջոցին, թեև անքամի ուր եր, մի թեթև հով անցավ բանակի վրայով և թեթևակի ուրուհեց նիզակների ֆլյուդերները և բացված զրաշակները, վոր թրթռալով դեպան իրենց ձողերին: Կարճես բանակն ինքը այդ թեթև շարժումով իր ուրախությունն եր արտահայտում թաքավորների մոտենալու առթիվ: «Զգո՞ստ», — լսվեց մի ձայն: Ապա, ինչպես աքաղաղները լուսաբացին, այդ բառը կրկնեցին բանակի տարբեր ծայրերում: Ու ամեն ինչ լռեց:

Մեռելային լուսթյան մեջ լսվում եր միայն ձիերի վռտնատրոփ: Դա յերկու կայսեր ջջախումբն եր: Թաքավորները մոտենցան բանակի մի թևին և առաջին հեծելազնդի փողահարները նվագեցին

դշխապետը մտադրել էր՝ թե՛ քան ժողովուրդները չեն նվազում, այլ բռնակն ինքը, թագավորի մոտենալուց ուրախացած, բռնականորեն աշխարհի մայրն էր և հանում էր Այդ հնչյուններին միջին վորոշակի լսվեց Ալեքսանդր կայսեր ֆառնը և զգալի մայրը՝ նա ժողովուրդի խոսքը առաջ, և առաջին դունդը բացականչեց՝ ուռում, — այնպես խաղաղից, յերկարատև ու զգալի էր այդ «ուռում», վոր զինվորներն իրենք սարսափեցին այն ահեղի բաղձության ուժից ու բռնակից, վոր կազմում էին իրենք:

Ռոստոմը, վոր կանգնած էր Կոստանդուպի բռնակի առաջին շարքերում, վորին նախապես մոտեցավ թագավորը, նրան աղյուսմունքն ունեցավ, ինչ վոր այդ բռնակի յուրաքանչյուր անդամը, — ինքնամոտացու թշուռն, հարսության հարստ դիտակցություն և բռնն համակրանք դեպի այն մարդը, վորը այս հանդիս պատճառն էր:

Նա դուռ էր, վոր այս մարդու մի խոսքից և կախված, վոր պեսպի այս ահեղի բաղձությունը (և ինքը, նրա հետ կապված — ավագի ջնջին մի հասկից) նետեր իրեն հրի ու ջրի մեջ, դնար վոնիքներ դորձելու, մեռնելու կամ մեծադույն հերոսությունը կատարելու, ուստի և նրա սիրտը դողում ու մարում էր շուտով սրտատանվելիք այդ խոսքից:

— Ուսում, Ուսում, Ուսում, — աղաղակում էին ամեն կողմից, և դնեքն իրար յետից թագավորին ընդունում էին զլիազորմարդի նվազով. հետո՝ Ուսում... Դշխապետ-մարդ և նորից Ուսում և Ուսում, վորոնք հեռուհեռ ուժեղանալով՝ միանում-դառնում էին մի խաղաղից զղբիցան:

Բանի դեռ թագավորը չէր մոտեցել, յուրաքանչյուր դունդ իր լուսնյամբ ու անշարժությամբ՝ անկենդան մարմին էր թվում, բայց հենց վոր թագավորը համասարվում էր նրան, դունդը կենդանանում էր ու վորտե՛ս, ձայնը միացնելով մյուս դնդերի ձայնին, վորոնց մոտով թագավորն անցել էր արժև: Այդ ձայների սարսափելի, խաղաղից վորոտների մեջ, անշարժ, կարճև քառակուսիների մեջ քարաղած դարձերի արանքով անփութորեն, բայց համաշուք և, վոր զլիազորն և, աղատորեն շարժվում էին ջրաթմբի հարյուրավոր ձիավորներ և նրանց առջևից — յերկու կայսրը: Անվ հենց նրանց վրա յեր կենտրոնացած այս ահաղին բաղձության դադիված-բռնն ուշադրությունը:

Դեպիցիկ, ֆառն Ալեքսանդր կայսրը՝ հեծյալ-զվարդիական մուս-դիր հաղած, յետանկյունի զլիարկով, իր դուրեկան դեմքով և հնչեղ ու փոշ բարձր ձայնով գրավում էր բոլորի ուշադրությունը:

Ռոստոմը, վոր կանգնած էր ժողովուրդների մոտ, դեռ հեռվից իր սրտեռն աչքերով ճանաչեց թագավորին և հետեց նրա առաջ

դալուհ: Յերբ թաղավորն արդեն ըսան քայլի վրա յեր և Նիկոլայը պարզ, ամենայն մանրամասնությամբ, դիտեց կայսեր ղեկեցիկ-ջանել ու յերջանիկ ղեմքը, նրան տողորեց զորովի և հիացումի մի զգացում, վորի նմանը յերբեք չեր ապրել: Թաղավորի յուրաքանչյուր դիմադիծը, յուրաքանչյուր շարժումը — նրան հիանալի յեր թվում:

Կանգ առնելով Պավլոգրադյան դնդի դիմաց, թաղավորը ֆրանսերեն ինչ-վոր բան ասավ ավստրիական կայսրին ու ժպտաց:

Այդ ժպիտը տեսնելով, Ռոստովը ինքն ակամա սկսեց ժպտալ և ել ավելի ուժգին դորով զգաց ղեպի նա: Ուղում եր մի վորեն բանով իր սերն արտահայտել ղեպի թաղավորը: Նա դիտեր, վոր այդ անկաբեկի յե, և քիչ եր մնում լաց լինի: Թաղավորը կանչեց ղնդի հրամանատարին ու մի քանի խոսք ասավ նրան:

«Աստված իմ, ինչ կլիներ իմ զրուխունը, յեթե հանկարծ թաղավորը դիմեր ինձ, — մտածում եր Ռոստովը, — յես յերջանկությունից կմեռնեյի»:

Թաղավորը դարձավ և սպաներին.

— Ամբողջ սրտովս շնորհակալ եմ բոլորիցդ, պարոններ:

Թաղավորի յուրաքանչյուր խոսքը Ռոստովին յերկնքից լսվող ձայն եր թվում: Վերջին յերջանիկ կլիներ Ռոստովը, յեթե կալողանար հենց հիմա մեռնել իր թաղավորի համար:

— Դուք վատապնդեք ո. Գիւրգիի զրոշները և արժանի յեղեք նրանց:

«Միայն մեռնել, մեռնել նրա համար», մտածում եր Ռոստովը: Թաղավորը դարձյալ ինչ-վոր խոսք ասավ, վոր Ռոստովը չլսեց, և ղինվորներն ուժ տալով իրենց կրծքերին՝ աղաղակեցին. — Ուսում:

Ռոստովը նույնպես, թամբի վրա կռանալով, աղաղակեց վորջան ուժ ունեք, կամենալով այդ աղաղակով մնասել իրեն, միայն թե իր հիացումը լիովին արտահայտած լինի ղեպի թաղավորը:

Թաղավորը մի յերկու վայրկյան, կարծես տատանման մեջ, կանգնեց հուսարների առաջ:

«Ի՞նչպես կարող ե թաղավորը տատանման մեջ լինել», մտածեց Ռոստովը, իսկ հետո այդ տատանումն անդամ Ռոստովին վեհ ու հմայիչ թվաց, ինչպես և ամեն բան, վոր անում եր թաղավորը:

Թաղավորի անվճռականությունը տեսեց միայն մի ակնթարթ: Թաղավորի նեղ, սրաքիթ կոշիկի ծայրը (ինչպիսին հաջնում եյին այն ժամանակ) գիպավ իր՝ պոչը կտրած խայտախար մաղյանի դորատակին. ճերմակ ձեռնոցով ձեռը սանձը հավաքեց, ու նա շարժից բաղմամբիվ աղյուտանտների ուղեկցությամբ: Հետդհետե



հետանում եր նա, ուրիշ գնդերի մաս կանդ առնելով, և Ռաստովը, յերկու կայսեր շրջապատող շքախմբի մեջ, տեսնում եր միայն նրա գլխարկի ճերմակ գիւսուրը:

Ռաստովը շքախմբի մարդկանց թվում տեսավ և Բալկանսկուն, վար ծալարեն ու անգույնի նստել եր իր ձին: Ռաստովը հիշեց իր յերեկվա վեճը նրա հետ և յերեկվա հարցը ծառայած նրա առաջ, — պետք և նրան մենամարտի հրավերել, թե շարժի: Եւ հարկե, շարժի, — մտածեց նա... — Յեւ արժի արդյոք մի աշտպիսի հանդիսավար վաշիկանին մտածել ու խոսել զրա մասին: Սիրո, հիացումի և անձնապահաթյան մի աշտպիսի բողբոջին ինչ արժեք ունեն մեր վեճերն ու վիրավորանքները: Յեւ բոլորին սիրում եմ, բոլորին ներում եմ այժմ, մտածում եր Ռաստովը:

Յերբ թաղավորը դիտեց զբեթե բոլոր գնդերը, զսրբերն սկսեցին հանդիսավար յերթով անցնել նրա առջևից, և Ռաստովը՝ Դենիսովից նոր գնած Բեդուինի վրա անցավ իր հեծելափաշտի առաջից, աշտնքն մենակ և միանգամայն թաղավորի աչքի առաջ:

Թաղավորն չհասած Ռաստովը, վարպես դերազանց հեծվոր, յերկու անգամ խթանեց իր Բեդուինին և նրան հասցրեց իր ուղած կատակի ու արագ քելքի, վրով բեթանում եր Բեդուինը տաքացած ժամանակ: Փոփոած մասիք կրծքին թեքած, պաշը մարմնից տանձնացրած և կարծես աղում թռչելով ու հողին չդիպչելով, վտանքը վաշիկանին բարձր փոխելով, Բեդուինը, նույնպես զգալով թաղավորի հայացքն իր վրա, անցավ հիանալի:

Ինքը Ռաստովը, վտանքը յեւ պահած, փորը սեղմած և իրեն զգալով ձիուն ծալված, հանքերը վրա տված, բայց յերանափետ գեմքով, Դենիսովի առած, սառանի պես անցավ թաղավորի մոտով:

— Կեցցեք պալիսդրադյաներ, — առավ թաղավորը:

Եւստոված իմ, վարքան յերջանիկ կլինեյի, յեթե հրամայեր ինձ անմիջապես կրակը նետվել, մտածեց Ռաստովը:

Յերբ զսրատեսը վերջացավ, թե նոր յեկած գնդերի և թե Կուստուզովի բանակի աղաները խմբեր կազմելով՝ սկսեցին խոսել պարզեների, ավարիայիների, նրանց զղեստների ու Քրանտի մասին, Բանադարտի մասին և այն մասին, թե վարքան վատ կլինի նրա զրաթյանը հիմա, մանավանդ յերբ Նասենի կորսուան էլ մատենա, և Պրուսիան մեր կողմն անցնի:

Բայց բոլոր խմբերում էլ ամեն բանից ավելի խոսում էին Ալեքսանդր թաղավորի մասին, բերնե-բերան պատմում էին նրա յարաքանչյուր խոսքը, շարժումն ու հիանում էին նրանով:

Բոլորը միայն մի բան էին փափաղում. թաղավորի առաջնորդաթյամբ շուտով գնալ թշնամա զեմ: Ի՞ր, թաղավորի՞ հրամանա-



տարութեան ներքո անկարելի յեր չհաղթել՝ ո՛վ էլ լինել թշնամին. այսպէս ելին մտածում Ռոստոփն ու սպաների մեծ մասը:

Զորատեսից հետո բոլորն էլ վստահ ելին հաղթութեանը ավելի, քան կարող ելին վստահ լինել յերկու ճակատամարտ շահելուց հետո:

## IX

Զորատեսի հաջորդ որը Բորիսը, իր լավագույն համադրեցութեան հաջած և իր ընկեր Բերդի՝ հաջողութեան բարեմագլխութուններն առած, զնաց Ումյուց՝ Բալիոնսկու մօտ, ցանկանալով ողջովել նրա սերալիրութունից և լավագույն մի դիրք ստեղծել իր համար, հատկապէս մի կարեւոր անձնավորութեան աղյուտանալը դառնալ, վորը նրան առանձնապէս դրավիչ էր թվում բանակում: Երոստովի համար, վոր հորից տաս հազարներ և ստանում, հեշտ և ասել, թե չի ուղում վորեւ մեկին գլուխ ծռել և վորեւ մեկի լաքեյը դառնալ. բայց յես, վոր վոչինչ չունեւ իմ չոր գլխից բացի, պետք է աշխատեւ կարիւրա անել և առիթներ չփախցնել, այլ ողավել այդ առիթներէն:

Իշխան Անդրեյն այդ որն Ումյուցում չեր, Բայց Ումյուցը, ուր գտնվում էր գլխավոր կայանը, դիվանագիտական կորպուսը, ուր ապրում էին յերկու կայսրներն իրենց շքախմբով, պալատականներով ու մերձավորներով, — ավելի ևս բարբոքեց նրա՝ այդ բարձր շրջանին պատկանելու փափագը:

Նա վոչ-վոքին չեր ճանաչում, և, չնայած իր պճնամովի գլխարդիական համադրեցութիւն, բոլոր այդ բարձրագիւր մարդիկ, վոր փողոցներով անցնում էին շքեղ կառքերով, փետրազարդ զլխարկներով, ժապավեններով ու շքանշաններով դարդարված, բոլոր այդ պալատականներն ու զինվորականները, թվում էր, այնքան բարձր են կանգնած իրենից, գլխարդիական մի փոքրիկ սպայից, վոր վոչ միայն չէին ցանկանում, այլ և չէին կարող ճանաչել իր գոյութիւնը: Դիւանագիտական հրամանատար Կուսուզովի տանը, ուր ուղեց տեսնել Բալիոնսկուն, բոլոր աղյուտանալիքը և անգամ սպասյակները նրան նայում էին այնպէս, կարծես ցանկանում էին ներշնչել, թե նրա նման սպաներ շատ են թրև դալիս այստեղ և թե նրանք բոլորն արդեն ձանձրացրել են շատ: Չնայած դրան կամ, ավելի շուտ, դրա հետեանքով, մյուս որը, ամսի 15-ին, ճաշից հետո, նորից զնաց Ումյուց և, Կուսուզովի բնակած տունը մտնելով, հարցրեց Բալիոնսկուն: Իշխան Անդրեյը տանն էր. Բորիսին առաջնորդեցին մի ընդարձակ դահլիճ, ուր առաջ, համանորեն, պար էր տեղի ունեցել, իսկ այժմ դրված էին հինգ մահճա-

կալ, սեղան, աթոռներ և մի յերգեհոն: Մի աղյուստանա պարսկական խալաթը հագին, զոտն մոտ զոլմած սեղանի առաջ նստած՝ զրուսւմ երբ մի ուրիշը՝ կարմրած, գիրուկ նեւալիցիին, պատկել երանկաղանի վրա, նկենեկը զլիւի տակ, ու ծիծաղում եր մտքը նստած սպայի հետ: Երբորդը յերգեհոնի վրա վննակաւն վալս եր նվազում, շորբորդը պատկել եր այդ յերգեհոնի վրա ու նայնակցում եր նրան: Բայկոնսկին այգտեղ չեր: Բորիսին նկատելով՝ այդ պարաններից և վոչ մեկն իր գիրքը չփոխեց: Բակ գիր զրոգ աղյուստանաւոր, վորին գիմեց Բորիսը, դմկամությամբ յետ դարձավ ու առաւ, թէ Բայկոնսկին հերթապահ ե, և յեթե ուղում ե նրան տեսնել, պետք ե զնա զեպի նախ՝ ընդունարանը: Բորիսը շնորհակալություն հայտնեց ու զնայ ընդունարանը, ուր տասի չափ զննեարայն եր ու սպան եր կային:

Այն միջոցին, յերբ Բորիսը ներս մտավ, իշխան Անդրեյը, աչքերն արհամարհանքով կկոցած (վայելուչ հողնածության մի տառնձին տեսքով, վորն ասում ե թէ՝ յեթե պարտականությունս չլինել, մի րապե անգամ նեղ հետ չեյի խոսի) սկանջ եր զնում կուրծքը շքանշաններով դարդարած մի ուս ոններայի, վորը զրեթե վտաների ծայրի վրա, նդված, զինվորի ստորաքաղ շարահայտությունը կարմիր դեմքին, ինչ-վոր բան եր զկեւցում իշխան Անդրեյին:

— Նոտ լափ, հանեցիք սպանել, — ասավ նա զններային, ուսներինն արտասանելով Ֆրանսական մի այնպիսի ստոգանությամբ, վորով խոսում եր այն մամանակ, յերբ ցանկանում եր խոսել արհամարհանքով, և Բորիսին նկատելով, այլեւ չգտնալով զններային (վոր աղերսանքով վազում եր նրա յետից, խնդրելով դարձյալ ինչ-վոր մի բան լսել), իշխան Անդրեյը զվարթ մայրտով, նրան գլխով անելով, դարձավ Բորիսին:

Բորիսն այդ րապեյին արդեն պարզ կերպով հասկացավ այն, ինչ նախատեսում եր ասած, այն ե, թե րանակում, րացի այն յենթակայությունից ու կարգապահությունից, ինչ զրված եր կանոնադրում, և վորը գիտեյին զնում, և ինքը գիտեր, զրանից զուրա կար մի այլ, սովելի ետկան մի յենթակայություն, վորն ստիպում եր այդ կարմրադեմ զններային հարդանքով սպանել, այն մամանակ, յերբ կապիտան իշխան Անդրեյը իր րափականության համար սովելի հարմար եր դանում խոսակցել վառակիր Դրուրեցկոյի հետ: Ավելի քան յերբեք Բորիսը վորեւեց աշուհետե մտաւել վոչ թե կանոնադրում զրանի համաձայն, այլ այս չգըրված յենթակայության համաձայն: Նա այժմ զգում եր, վոր ինքը իշխան Անդրեյին հանձնարարված լինելու հանգամանքովն իսկ՝

արդեն ավելի բարձր և կանգնած գններալից, վորը ուրիշ զնադե-  
րում, զորամասում կարող եր վռննչացնել իրեն, գլարդիական վա-  
ռակիրին: Իշխան Անդրեյը մոտեցավ նրան ու ձեռը բռնեց:

— Շատ ափսոս, վոր յերեկ այստեղ չեմ յեղել: Ամբողջ օրը  
քարշ եյի գալիս գերմանացիների հետ: Վեյրոտների հետ զնացինք  
զիսպողիցիան ստուգելու: Յերբ գերմանացիների ակուրատու-  
թյունը բռնում և — ել դրան վերջ չկա:

Բորիսը ժպտաց, կարծես հասկանում եր այն, ինչի մասին,  
վորպես հանրածանոթ բանի, ակնարկում եր իշխան Անդրեյը: Բայց  
նա առաջին անգամն եր լսում թե՛ Վեյրոտների ազգանունը, թե՛  
մինչև իսկ զիսպողիցիա բառը:

— Հը, ինչ կա, սիրելիս, ուղճւմ եք աղյուտանալ դառնալ ելի:  
Յես ձեր մասին մտածել եմ:

— Այո, մտադիր եյի, — ահամա ինչ-վոր բանից կարմրելով,  
ասավ Բորիսը, — խնդրել գլխավոր հրամանատարին. իշխան Գու-  
րադինը նրան նամակ և գրել իմ մասին. ուղում եյի խնդրել մի-  
այն նրա համար, — ավելացրեց նա, կարծես ներդուրյուն խընդ-  
րելով, — վորովհետև վախենում եմ գլարդիան կովին չմասնակցի:

— Լավ, լավ, այդ ամենի մասին կխոսենք, — ասավ իշխան  
Անդրեյը, — թույլ տվեք միայն զեկուցեմ այս պարոնի մասին, և  
այնուհետև ձեր տրամադրության տակ եմ:

Այն ժամանակ, յերբ իշխան Անդրեյը զնաց կարմրողն և գե-  
ներալի մասին զեկուցելու, այդ գններալն, ըստ յերևույթին, հա-  
մամիտ չլինելով Բորիսի՝ չորոված յենթակայության շահավետու-  
թյան մասին ունեցած հակացողության, աչքերն այնպես սեւե-  
ռեց հանդուգն վառակիրի վրա, վորը խանդարել են նրան  
իր ասելիքն աղյուտանալի հետ վերջացնելու, վոր Բորիսն անհար-  
մար զգաց: Նա յերեսը շրջեց և անհամբեր սպասում եր, թե յերբ  
պիտի վերադառնա իշխան Անդրեյը գլխավոր հրամանատարի կա-  
րիներից:

— Ահա թե, սիրելիս, ինչ եմ մտածել ձեր մասին, — ասավ իշ-  
խան Անդրեյը, յերբ անցան այն ընդարձակ դահլիճը, ուր յերդե-  
հոն եր դրված: Գլխավոր հրամանատարի մոտ գնալու հարկ  
չկա, — ասավ իշխան Անդրեյը, — նա ձեզ շատ սիրալիկ խոսքեր  
կասի, ճաշի կհրավիրի (եղա այնքան ել վատ չեմ լինի ծառայու-  
թյան համար՝ այն յենթակայության տեսակետից), — մտածեց  
Բորիսը, բայց դրանից վռնիչ չի ստացվի: Աղյուտանալներին և  
պատվիրակներին թիվը չուտով մի դամարտակի կհասնի: Բայց  
ահա թե մենք ինչ կարող ենք անել. յես մի լավ բարեկամ ունեմ —  
դա գններալ-աղյուտանալ և սքանչելի մարդ՝ իշխան Դուդուրուկովն և:

և թեև դուք այդ կարող եք չիմանալ, ինչդիրն այն է, վոր այժմ Կուսուղոյն իր շտաբի հետ միասին և մենք քաղաք վող մի նշանակութուն չունենք: Այժմ ամեն ինչ կենտրոնացվում և թաղապարի ձեռքին: Դե ուրեմն դեանք Գողգորուկովի մաս. յես պետք և դեամ նրա մաս. ձեր մասին արդեն խոսել եմ հետք. նրա հետ կմտածենք-կտեսնենք. արդյոք հնարավոր չի համարի ձեզ մի պաշտան տալ իր գնդում կամ մի վորեն տեղ... արևին ափելի մաս:

Իշխան Անդրեյը միշտ առանձնապես վողգորուկում եր, յերբ իրեն վիճակվում եր զկեպարել մի յերիտասարդի և նպաստել նրա աշխարհիկ աջողության: Ուրիշին ողնություն հասցնելու պատրիակով, ողնություն, վոր ինքը հոյարաությունից յերբեք չեւր ընդունի իր համար, նա դանդում եր այն միջավայրին մոտիկ, վորը աջողություն եր չնորում և վորը քաշում եր նրան զեպի իրեն: Նա ամենայն սիրով Բորիսին իր հովանավորության տակ տաով և նրա հետ միասին գնաց իշխան Գողգորուկովի մաս:

Ուշ յերեկո յեր արդեն, յերբ նրանք բարձրացան Ումյուցի պալատը, ուր ապրում էին թաղապորներն իրենց մերձավորներով:

Այդ սրբ ապամական խորհրդակցություն կար, վորին մասնակցում էին հաֆիրիդաստի բոլոր անդամները և յերկու կայսր: Խորհրդակցությունը — հակասակ ձերուներեքի կարծիքի, այն է՝ Կուսուղովի և իշխան Շվարցներեքի կարծիքի, վորոշեց անմիջապես հարձակում գործել և գլխավոր ճակատամարտ տալ Բոնապարտին: Բաղմական խորհրդակցությունը հենց նոր եր վերջացել, յերբ իշխան Անդրեյը, Բորիս ուղեկցությամբ, պալատ յեկավ իշխան Գողգորուկովին փնտռելու: Գլխավոր կայանի բոլոր մարդիկ դեռ դանդում էին աշտով, յերիտասարդների կուսակցության համար հաղթական, ապամական խորհրդակցության տղա-վորության տակ նրանք, ովքեր խորհուրդ էին տալիս հնարձակվել, այլ դեռ սպասել ինչ-վոր բանի, նրանց ձայները խեղդել էին և բերած պատճառարանությունները հերքել, աղաքացելով հարձակման շահափնտությունը, այնպես վոր այն, ինչի մասին խոսել էին խորհրդակցության մեջ — ազազա ճակատամարտը և, անկասկած, հաղթանակը, թվում եր այլևս վաղ թե ուղաղա, այլ անցյալ: Բոլոր տաղվելությունները մեր կողմն էին: Հակառակն բանակը, վոր անկասկած գերադանցում եր Նապոլեոնի գործին, հաղթած եր մի տեղ. գործերը, կայսրների ներկայությունից վողերտված, վառվում էին կավելու ցանկությամբ. ստրատեգիական այն կետը, ուր պետք և տեղի ունենային գործողությունները, ամենայն մանրամասնությամբ ծանոթ եր ամստրիական զենեւալ Վեյրաուերին, վոր զկեպարում եր գործը (կարծես յերջանիկ զիպ-

վածի արդյունք եր այն, վոր ավստրիական զորքերն անցյալ տարի զորաշարժ եյին կատարել հենց այն դաշտերում, ուր պետք է կռիւն հիմա Ֆրանսացիների դեմ)։ ամենայն մանրամասնությամբ ծանոթ եր և քարտեզի վրա դժված նրանց առջև ընկած տարածութիւնը։ Իսկ Բոնապարտն, ըստ յերևույթին, թուլացած, վռչինչ չեր ձեռնարկում։

Դուդորուկովը, հարձակման ամենախառնաշաւառ կողմնակիցներէ մեկը, հենց նոր վերադարձել եր խորհրդակցութիւնից հողնած, տանջված, բայց տարած հաղթանակով զվարթ ու հպարտ Իշխան Անդրեյը իր հովանավորյալ սպային ներկայացրեց նրան, բայց իշխան Դուդորուկովը քաղաքավարությամբ և ամուր սեղմելով նրա ձեռքը, վռչինչ չասավ Բորիսին, ակներև չկարողանալով զսպել իրեն այդ վայրկյանին ամեն բանից ավելի իրեն զբաղեցնող մտքերն արտահայտելուց, Ֆրանսերեն զարձակ իշխան Անդրեյին։

— Ն, սիրելիս, գիտես ի՞նչ ճակատամարտ մղեցինք քիչ առաջ։ Տա աստված, վոր դրա հետեանքը լինի նույնքան հաղթական։ Սակայն, սիրելիս, — ասավ նա կցկտուր ու զվարթ, — պետք է խոստովանեմ մեղքս ավստրիացիների և մանավանդ Վելրոտերի հանդեպ։ Ի՞նչ ճշտութիւն, ի՞նչ մանրամասնութիւններ, անգիր, վայրի ինչպիսի ծանոթութիւն և ամեն տեսակ հնարավորութիւնների, պայմանների ու փոքրիկ մանրամասնութիւնների վորպիսի կանխատեսութիւն։ Վաչ, սիրելիս, սրանից ավելի ձեռնառու պայմաններ, վորոնց մեջ գտնվում ենք, գիտավորությամբ ել չեր կարելի ստեղծել։ Ավստրիական ճշտութիւնը ուստական քաջության հետ միացած, — սրանից ավել ել ի՞նչ եք ուզում։

— Ուրեմն հարձակումը վերջնականապես վորոշված է, — ասավ Բալկոնսկին։

— Դիտեք ի՞նչ, սիրելիս, ինձ թվում է, թե Բոնապարտն ուղղակի դուռը կորցրել է։ Դիտեք, քիչ առաջ նրանից նամակ եր ստացվել կայսեր անունով։

Դուդորուկովը նշանակալից ժպտաց։

— Ա՛յ թե ինչ, Իսկ ի՞նչ է գրում, — հարցրեց Բալկոնսկին։

— Ի՞նչ կարող է գրել։ Տրադիթիգիրա և այլն, բոլորը միայն ժամանակ շահելու նպատակով։ Յես ձեզ ասում եմ, վոր նա մեր ձեռին է արդեն, համոզված եմ։ Բայց վոր ամենից զվարճալին է, — ասավ նա, հանկարծ բարեհոգությամբ ժպտալով, — այն է, վոր վոչ մի կերպ չկարողացան իմանալ թե ինչպես հասցեագրեն պատասխանը։ Ինձ թվում ե՛ր՝ յեթե վոչ կոնսուլին, ինքնին պարզ և վոչ կայսեր, գոնե պետք եր գրել գնեւրալ Բոնապարտին։

— Բայց կայսր չճանաչելու և պեներալ Բանապարտ կոչելու միջև մեծ տարբերութիւն կա, — ասով Բալկոնսկին:

— Բանն ել հենց այդ է, — ծիծաղելով և խոսակցին ընդհատելով, ասով Դուդարուկովն արագութեամբ: — Բիլիբինին ճանաչում եք, շատ խելոք մարդ է, տալարկեց հասցեագրել. «Հափշտակիչին և մարդկային ցեղի թշնամուն»:

Դուդարուկովն ուրախ քրքշաղ:

— Միայն այդ չով, — նկատեց Բալկոնսկին:

— Այնուամենայնիւ Բիլիբինը հասցեյի համար լուրջ տիպոս դասով: Թե սրամիտ, թե խելոք մարդ է:

— Իսկ ինչպէս:

— Նրանտական կառավարութեան պետին (au chef du gouvernement français), — լուրջ ու բովանդակութեամբ ասով իշխան Դուդարուկովը: — Լավ է, այնպէս չի:

— Լավ է, բայց նրան բոլորովին դուր չի դա, — նկատեց Բալկոնսկին:

— Ո՞ր բոլորովին: Անդրայրս ճանաչում ե նրան. մեկից ավելի անգամ Գարբիցում ճաշել և նրա՝ այժմյան կայսրի մոտ և ինձ պատմել է, վար ավելի նուրբ ու խորամանկ զիմանաղեւ չի տեսել. դիտեք, Գրանտական ճարտկութեանը միացրած խալական պերասանութեան հետ: Դիտեք նրա և կոմս Մարկովի միջև պատահած անեկզոտային զեպքը: Միայն կոմս Մարկովն և կարողացել նրա հետ վարովել ինչպէս հարկն և: Թաշկինտակի պատմութեանը դիտեք: Սքանչելի՛ բան է:

Յեւ դուրստեր Դուդարուկովը մերթ Բորիսին, մերթ իշխան Անդրեյին դառնալով, պատմեց, թե ինչպէս Բանապարտը կամենալով մեր զեպքան Մարկովին փորձել, զիտմամբ թաշկինտակ քցում և հաստակին ու կանգնում, աչքերը Մարկովի յերեսը քցած, սպասելով, յերեկ, թե նա կվերցնի այն ու կմատուցի իրեն. բայց Մարկովն անմիջապէս դրա կողքին քցում և իր թաշկինտակը և իրենը վերցնելով, Բանապարտի թաշկինտակը թողնում և տեղում:

— Charmant<sup>1</sup>, — ասով Բալկոնսկին, — բայց ահա թե ինչ, իշխան, յեկել եմ ձեզ մօտ այս յերիտասարդի համար բան խնդրելու: Դիտեք ինչ...

Բայց իշխան Անդրեյը խոսքը զեռ չեր ավարտել, յերբ մի աղյուսանա ներս մտավ և իշխան Դուդարուկովին կանչեց կայսեր մօտ:

— Ահ, ցավում եմ, — ասով Դուդարուկովը, հապճեպ տեղից յեկնելով և իշխան Անդրեյի ու Բորիսի ձեռները սեղմելով: — Դի-

<sup>1</sup> Սքանչելի:



տեղ, շատ ուրախ կլինեմ անել այն ամենը, ինչ վոր ինձնից կախված է՝ թե՛ ձեզ համար, թե՛ այս լավ յերթասարդի համար։—Նա մի անգամ ես սեղմեց Բորիսի ձեռք բարեհոգությամբ ու անկեղծությամբ։— Բայց տեսնե՛մ եք... մյուս անգամ։

Բորիսին հուզում էր բարձրագույն իշխանությանը մոտ լինելու միտքը։ Նա գիտակցում էր, վոր ինքն այստեղ շփվում է այն զսպանակների հետ, վորոնք ղեկավարում էին մասսաների վիթխարի շարժումները, վորոնք (զսպանակների փոքրիկ, հնազանդ ու չնչին մասն էր համարում նա իրեն՝ յերբ դառնվում էր իր գնդում։ Նրանք իշխան Դուգորուկովի յետևից դուրս յեկան միջանցքը և հանդիպեցին քաղաքացու հազուստով մի վոչ բարձրահասակ մարդու (վորը դուրս յեկավ թաղավորի սենյակի այն դռոնից, վորից ներս մտավ Դուգորուկովը), վոր խելացի դեմք ուներ և զգալիորեն առաջ ընկած մի ծնոտ, վորը նրա դեմքը չաղարտելով, տալիս էր նրան առանձին կենդանություն և ճարտարամիտ արտահայտություն։ Այդ վոչ բարձրահասակ մարդը, վորպես յուրայինի, գլխով արավ Դուգորուկովին և սեեռուն ստոք հայացքով նայեց իշխան Անդրեյին, ուղիղ նրա դեմք դնալով և, հավանորեն, սպասելով, վոր իշխան Անդրեյը գլուխ խոնարհի կամ ճանապարհ տա իրեն։ Իշխան Անդրեյը չարավ վոչ մեկը, վոչ մյուսը։ Նրա դեմքին չարություն յերևաց, և յերիտասարդը, շուտ գալով, անցավ միջանցքով։

— Այդ ձվ է, — հարցրեց Բորիսը։

— Դա ամենանշանավոր, բայց ինձ համար ամենաանհաճո մարդկանցից մեկն է։ Արտաքին գործերի մինիստր իշխան Ադամ Զարտորիժսկին է։

— Այս մարդիկ են ահա, — ասավ Բալկոնսկին հառաչանքով, վորը չկարողացավ պահել պալատից դուրս գալու միջոցին, — այս մարդիկ են ահա վճռում ժողովուրդների բախտը։

Հետևյալ որը զորքերը դուրս յեկան արշավանքի, և Բորիսն էլ մինչև Աուստրիլիցի ճակատամարտը չկարողացավ լինել վոչ Բալկոնսկու, վոչ Դուգորուկովի մոտ և մի առժամանակ մնաց Իգմայլովյան գնդում։

## X

Նոյեմբերի 16-ի արշավույսին Դենիսովի հեծելավաշտը, վորտեղ ծառայում էր Նիկոլայ Ռոստովը, և վորը դառնվում էր իշխան Բազրաթիժի ջոկատում, գիշերատեղից դնաց կոխվ և ինչպես ասում է յին, մի վերստաչափ պնալով մյուս զորասյունների յետևից, կարգադրություն ստացավ կանգ առնել։ Ռոստովը տեսավ,



թիւ ինչպէս իրենց կողքով տալի անցան կադակները, հաւասարների 1-ին և 2-րդ հեծելազորները, հետևակ զուգարտակները՝ հրետանիով, զենեկաւորներ Բաղրատիանն ու Գողթուկովը՝ իրենց աղյուսաւաններով: Այն վախը, վառ նա, ինչպէս միշտ զգում էր կրովի ատաղձ, այն ներքին պայքարը, վերով հաղթահարում էր այդ վախը, իր բոլոր յերազմները, թէ հաւասարաբար քաջություն կցարժի այդ կովում, — իդուր անցան: Նրանց հեծելազորը թողնվեց իրեն պահեստի ուժ, և Նիկոլայ Ռոստովն այդ որն անցրեց ախար ու ձանձրայի: Առաջադան ժամը Զին դիմացից հրացանաւանջության տարաբարաց լսեց, ուստաներ, տեսավ յետ բերվող վիրավորներ (զրանք սակավաթիվ էին) և վերջապէս տեսավ, թէ ինչպէս կադակների մի հարյուրակ շրջապատած բերում և Ֆրանսական հեծելակների մի ամբողջ ջոկատ: Ըստ յերևույթին, կովի վերջացել էր և ակներև դա յեղել էր մի թիւթի, բայց հաջողակ կովի: Յետ յեկող դիմորներն ու սպաները պատմում էին, վառ մերանք վաղուհի հաղթանակ են տարել, զրավիլ են Վիշաու քաղաքը և դերել են Ֆրանսական մի ամբողջ հեծելազորա: Գիշերվա ստանդից ցրտից հետո որը պարզ էր, արևոտ, և աշնանային այդ որովա դվարի արշաւանությունը զուգադիպում էր հաղթանակի յարերին, հաղթանակ, վառի մասին պատմում էին վառ միայն մասնակիցները, այլև Ռոստովի կողքով անցող ու զարնող դիմորներին, սպաներին, զենեկաւորների ու աղյուսաւանների զեմքերի ուրախ արտահայտությունը: Նիկոլայի սիրտը ճվվեց մանավանդ, վառ հակասամարտից ատաղ իդուր յերկրաւ ունեցով և այդ ուրախ որն անցրեց անդործության մեջ:

— Դոտտով, աղի աշտակ, զաղից խմենք, — ձայն տվեց Դենիսովը, հանապարհի յեղերին նստելով, զինով լիքը ջրամանը և ակասան աջիք զնելով:

Սպաները ուտելով ու խոտակցելով շրջան կադակներին Դենիսովի ուտելիքների շուրջը:

— Ահա մի դերի յեկ, — տալով սպաներից մեկը, ցույց տալով Ֆրանսական մի դերի զրադանի, վառին վառով բերում էին յերկու կադակ:

Նրանցից մեկը սանձից բռնած բերում էր դերուց տնված Ֆրանսական խաչար ու զեղեցիկ ձին:

— Զին ծախի ինձ, — ձայն տվեց Դենիսովը կադակին:

— Համեցեք, ձերդ աղնվություն...

Սպաները յեկան շրջապատեցին կադակներին ու դերի Ֆրանսացուն: Ֆրանսական զրադանը յերիտասարդ էր, աղյուսի, Ֆրանսերեն խոսում էր զերմանական առաքանությամբ: Հուզումից զբմ-

վարությամբ եր շունչ քաշում, դեմքը կասկարմիր եր կտրել, բայց ֆրանսերեն լսելով, արագ-արագ խոսեց սպաների հետ, մերթ մեկին, մերթ մյուսին դառնալով: Նա ասում եր, վոր իրեն չնային կարող գերի վերցնել, և վոր ինքը մեղավոր չի, վոր գերի յն ընկել, այլ մեղավոր և le caporal-ը, վոր ուղարկեց իրեն ձիու տապալակներ վերցնելու, ասելով թե ուսաներն արդեն հեռու յեն: Յեվ ամեն մի խոսքից հետո ավելացնում եր. mais qu'on ne fasse pas de mal à mon petit cheval<sup>1</sup>, ու փառաբանում եր ձիուն: Յերևում եր, վոր լավ չի հասկանում, թե ո՛ւր և զտնվում: Նա մեկ ներողութուն եր խնդրում, վոր իրեն գերի յեն վերցրել, մեկ ել, յենթադրելով թե զտնվում և իր իշխանավորներին առաջ, ցույց եր տալիս դիմելու կարդապահութուն և հողածութուն իր ծառայության նկատմամբ: Նա իր հետ մեր արիերգարդը բերեց ֆրանսական զորքի թարմ մթնոլորտը, վոր այնպես խորթ եր մեզ համար:

Կազակները ձին ծախեցին յերկու շերվոնեցով, և Ռոստովը, վոր փող ստանալուց հետո, ամենահարուստ սպան եր, դնեց այն:

— Mais qu'on ne fasse pas de mal à mon petit cheval<sup>2</sup>, — բարեհարուստ վարձատր ասավ ալզասցին Ռոստովին, յերբ ձին հանձնվեց հուսարին:

Ռոստովը, ժպտալով, հանգստացրեց զրազոնին և զրոմ ավելց նրան:

— Այ՛մ, Այ՛ո! — ասավ կազակը, հրելով գերու թևը, վոր առաջ դնա:

— Թաղավորը! Թաղավորը! — հանկարծ բացականչեցին հուսարները:

Յեվ ամեն վաք վաղեց, շտապեց իր տեղը, և Ռոստովը նկատեց, վոր յետևից ճանապարհով մի քանի ձիավորներ են դալիս՝ ճերմակ ցցուկները գլխարկների վրա: Մի բուպեյի մեջ բուլդոն իրենց տեղերը բռնելով՝ սպասում եյին:

Ռոստովը չհասկացավ և չզգաց, թե ինչպես վաղեց իր տեղը ու նստեց ձին: Այդ ակնթարթում անցավ կովին չմասնակցելու ավստաստեքը, այդ մարդկանց շրջանում անցավ առորյա տրամադրությունը և վայրկյանապես անհետացավ իրեն վերաբերվող ամեն մի միտք. նա ամբողջովին կլանվեց թաղավորի մերձավորութունից բղձող յերջանկության զգացումով: Այդ մերձավորությամբ միայն իրեն վարձատրված եր զգում այս որը կորցնելու համար: Նա յերջանիկ եր, ինչպես մի սիրահար, վոր արժանացել և

<sup>1</sup> Բայց ձիուն մի նեղացնեք:

<sup>2</sup> Բայց ձիուն մի նեղացնեք:

ապագայի մեծահայրը ինչպե՞ս։ Չհամարձակվելով շուրջը նայել և, իրոք, չնայելով, խանդավառ հոտառությամբ զգում էր նրա մոտեցումը։ Ենով նա այդ զգում էր վուժ միայն մոտեցող շքախմբի միերի վառ-նատարփից, այլև զգում էր նրանից, վոր նրանց մոտենալուն հետո շուրջն ամեն ինչ պայծառանում, ուրախանում ու տոնա-կան տեսք էր ընդունում։ Հեռզինակ ավելի յեր մոտենում Ռոս-տովի համար այդ արևը, իր շուրջը տարածելով հեղ և վեճ լույսի ճառագայթներ, և ահա նա իրեն զգում և այդեն այդ ճառագայթ-ների տակ, լուսւ և թաղավորի ձայնը — զգվող, հանդարտ, վեճ, և դրա հետ միասին այնքան պարզ-հասարակ։ Ինչպես և Ռոստովը զգում էր՝ մեծկային լուսնյուն տիեզից, և այդ լուսնյան մեջ հնչեցին թաղավորի խոսքերը։

— Les huzards de Pavlograd? <sup>1</sup>, — հարցականորեն ասավ նա։

— La réserve, sire! <sup>2</sup> — հնչեց մի ուրիշ ձայն, վոր այնքան մարդկային էր այն վաճ-մարդկային ձայնից հետո, վորն ասավ. Les huzards de Pavlograd?

Թաղավորը հաղաճորփեց Ռոստովին ու կանգ առավ։ Ալեք-սանդրի գեմբն ավելի զեզեցիկ էր, քան յերկու որ ասավ — զո-րատեխին։ Նա վաշլում էր այնպիսի զվարթությամբ ու ջանելու-թյամբ, այնպիսի անմեղ ջանելությամբ, վոր հիշեցնում էր տա-նքա տարեկան մանկան կայտառությու, և դրա հետ միասին նա այնուամենայնիվ վեճապանձ կայսեր գեմբ էր։ Հեծելավաշտին նայելիս՝ թաղավորի աչքերը պատահարաբ հանդիպեցին Ռոստովի աչքերին և յերկու վայրկյանից վուժ ավելի սևեռած մնացին նրանց վրա։ Հասկացնով արդյոք թաղավորը, թե ինչ և դառնում Ռոս-տովի սրտում (Ռոստովին թվաց, թե նա ամեն ինչ հասկացավ), բայց նա իր յերկնադույն աչքերով յերկու վայրկյանի չափ նայեց Ռոստովի գեմբին։ (Թաղավորի աչքերից քնքաշ ու հեղ լույս էր ձորում)։ Հետո հանկարծ հոնքը բարձրացրեց, խիստ շարժումով ձախ վառով խփեց միտն և սրարշավ ասավ զնայ։

Երկրառարդ կայսրը չկարողացավ զսպել ճակատամարտին ներ-կա լինելու ցանկությունը և, չնայած պաշտտականների բոլոր առա-կություններին, ժամը 12-ին, բաժանվելով Յ-րդ զորասյունից, վո-րին հեռանում էր, արշավեց զեպի առջադառն։ Դեռ հուսարներին չհասած, մի քանի աղյուսաձառ հանդիպեցին և լուր տվին նրան կովի հաջող յեքի մասին։

Տեպի ունեցած ճակատամարտը, վորի արդյունքը յեզել էր մի-այն այն, վոր գերի յեր առնվել ֆրանսական մի հեծելավաշտ, հա-

<sup>1</sup> Գովադրացյան հուսարները։

<sup>2</sup> Գահեռի զորաբաժինն և, ձերզ մեծություն։

մարում եյին ֆրանսացիներէ վրա տարած մի փայլուն հաղթանակ, ուստի և թագավորը և ամբողջ բանակը (մանավանդ յերբ վառողի ծուխը դեռ չէր վերացել կովի դաշտից) հավատացած եյին, թե ֆրանսացիները պարտւած են ու նահանջում են՝ հակառակ իրենց կամքի: Թագավորի զնալուց մի քանի բոլե անց, կարգադրվեց, վոր պավլոգրազցիներէ դիվիզիոնը առաջ գնաւ: Վիշաուէ մեջ, գերմանական այդ փոքրիկ քաղաքում, Ռոստովը մի անգամ ևս տեսավ թագավորին: Քաղաքի հրապարակում, ուր մինչև թագավորի դալը բալական ուժեղ հրացանաձգութիւնն էր յեղել, ընկած եյին մի քանի սպանված ու վերավոր մարդիկ, վորոնց դեռ չեյին կարողացել հավաքել: Թագավորը, զինվորականների և վոչ զինվորականների շքախմբով շրջապատված, արդեն վոչ թե զորատեսի ժամանակվա, այլ մի ուրիշ, պոչը կտրած շիկակամբիր օրն էր տեսած և մի կողմի վրա թեքված, շնորհալի շարժումով վոսկե լոռնետն աչքին բռնած, նայում էր յերեսն ի վայր պառկած առանց դիտարկի, արյունոտած գլխով զինվորին: Վերավոր զինվորն այնքան անմաքուր էր, կոպիտ ու անճոռնի, վոր Ռոստովին վերավորում էր նրա մոտիկութիւնը թագավորին: Ռոստովը տեսավ, թե ինչպես, կարծես հանկարծակի սառնամանիքից, ցնցվեցին թագավորի փոքր ինչ կոացած ուսերը, ինչպես ձախ վտար ջգձգորեն սկսեց խթնելով խփել ձիու կողին, և թե ինչպես ձեռնաստուն ձին նայում էր անտարբեր ու անզից չէր շարժուամ: Մի աղբուրտանտ ձիուց իջնելով բռնեց զինվորի թևատակերից և զրեց բերված պատգարակի մեջ: Չինվորը տնքաց:

— Կամաց, կամաց, միթե կամաց չի կարելի, — ըստ յերեսույթին, մեռնող զինվորից ավելի տանջվելով, ասավ թագավորն ու ձին քշեց-հեռացավ:

Ռոստովը տեսավ թագավորի աչքերն արցունքով լցված և լսեց թե ինչպես նա, հեռանալով, ֆրանսերեն ասավ Զարտրիստիւն:

— Խնչ սարսափելի բան է պատերազմը, ինչ սարսափելի բան է: Quelle terrible chose que la guerre!

Առաջապահ զորամասերը տեղավորվեցին Վիշաուէ այն կողմը, թշնամու զորաշղթայի հանդեպ, վոր տեղի տվին մեկ որվա ընթացքում յեղած թեթև հրացանաձգութեան ժամանակ: Առաջապահ զորամասին կարդացվեց թագավորի շնորհակալութիւնը, խոստացան պարգևներ, և զինվորներին կրկնակի չափով ողի բաժանվեց: Ավելի ուրախ ճարճատեցին բանակատեղիի խարույկները և ավելի ուրախ հնչեց զինվորների յերգը: Դենիսովն այդ զիշեր տոնեց իր նոր ստացած մայրուքի շքանքներ, և Ռոստովն արդեն բալական կան խմած խնձույթի վերջում առաջարկեց թագավորի կենացը:

բայց քօղ թաղափոր-կայսեր, ինչպես առում են, պաշտոնական  
ձաշերին, — առավ նա, — այլ թաղափորի, բարի, հմայիչ ու մեծ  
մարդու կենացը. խմենք նրա կենացը և ֆրանսացիների վրա ան-  
վիճելի հաղթություն տանելու համար՝»:

— Յեթե մենք առաջ ել կովեյինք, — առավ նա, — և ֆրանսա-  
ցիներին մոտ չթողնեյինք, ինչպես Եհնդրաբենի մոտ... իսկ ինչ ե  
լինելու հիմա, յերբ նա առաջներես եւ մենք բոլորս կմտնենք,  
համալքով կմտնենք նրա համար: Այդպես, պարտնելու: Թերեւս,  
յես այնպես չեմ խոսում, յես շատ խմել եմ. այո, յես այդպես  
եմ դղում, և դուք նույնպես: Այեքսանդր առաջինի կենացը!  
Ուսում:

— Ուսում, — զոգանջեցին սպաների լողեսրված ձայները:

Յեւ մեր սոսմիտար Կիրատենը բացականչեց լողեսրված և վոչ  
պակաս անկեղծ, քան քսան տարեկան Ռոստովը:

Յերբ սպաները խմեցին ու բաժակները շարգեցին, Կիրատենը  
լցրեց մյուսները, և միայն շաղկափ ու վարտիկով, բաժակը մեռին  
մոտեցավ դինփորական խարույկներին և վեհապանծ դիբրով մեռը  
բարձրացրեց վեր, ու յերկար ճերմակ բեղերով և շաղկի արան-  
քից յերեւոյ սպիտակ կրծքով կանդ առավ խարույկի լույսի մեջ:

— Տղերք, թաղափոր-կայսեր կենացը, հանուն հաղթության,  
ուսում, — բացականչեց նա կտրինի պես, պատավ հաւատարման բա-  
րեւոնով:

Հաւատները խմրվեցին և արձադանքեցին նրան բարձր կան-  
չերով:

Ինչերիմա ուշ մամին, յերբ բոլորը ցրվեցին, Դենիսովն իր կարճ  
ձեռով թափվեց իր սիրելի Ռոստովի աւր:

— Բանակում մեկը չկա, վորի վրա մարդ սիղ'անարվի, նա յեւ  
սիղ'անաղ'վել և թաղափորի վզ'ա, — առավ նա:

— Դենիսով, դու այդ բանը մի ծաղրի, — զոչեց Ռոստովը, —  
դու մի այնպիսի բարձր, այնպիսի դեղեցիկ զոչացմունք ե, այն-  
պիսի...

— Հա՛վատում եմ, բաղ'եկամ, հա՛վատում եմ. համամիտ եմ և  
հա՛վանություն եմ տալիս...

— Վաչ, չես հասկանում:

Յեւ Ռոստովը վեր կացավ ու դնաց շրջելու խարույկներին  
շուրջը, յերազելով այն մասին, թե ինչ յերջանելութուն կլինել  
մեռնել, ասանց կշանքը փրկելու (նա այդ մասին չէր եւ ուղում  
յերազել), այլ ուղղակի մեռնել թաղափորի աչքի աջին Նա իսկա-  
պես տարված եր թե թաղափորի, թե ուսական դների փառքի  
սիրով և թե ազադա հաղթականի հույսով: Յեւ մենակ նրան չէր

համակել այդ զգացումը այն հիշատակելի Առևտերլիցի ճակատամարտին նախորդող օրերին. ոռւս բանակի տասը զինվորից իննը այդ ժամանակ տարված էր, թեև պակաս խանդավառությամբ, իր թագավորի և ոռւսական զենքի փառքի սիրով:

## XI

Հետեյալ օրը թագավորը կանգ առավ Վիշաուում: Թագավորի անձնական բժիշկ Վիլեն մի քանի անգամ կանչվեց նրա մոտ: Դիւանդոն կայանում և մոտիկ գտնվող զորքերի մեջ լուր տարածվեց, թե թագավորը հիվանդ և Նա վոչինչ չէր կերել և զիշերը վատ էր քնել, ինչպես ասում էին մերձավորները: Տկարության պատճառը այն ուժեղ տպավորութեանն էր, վոր ստացել էր նրա զգայուն սիրտը վիրավորներին ու սպանվածներին տեսնելով:

Նոյեմբերի 17-ի արշալույսին մեր առաջապետներից մի Ֆրանսուզի սպա յեկավ բանադնացի զրոշակով, վոր տեսակցութեան էր խընդրում ոռւս կայսեր հետ: Այդ սպան Սավարին էր: Թագավորը նոր էր միայն քնել, ոռւսի և Սավարին ստիպված էր սպասել: Կես օրին թագավորն ընդունեց նրան և մի ժամ հետո նա իշխան Դուգորուկովի հետ զնաց Ֆրանսական բանակի առաջավոր պահակակետը:

Լուր կար, թե Սավարին յեկել էր առաջարկելու, վոր Ալեքսանդր կայսրը տեսակցութեան ունենա Նապոլեոնի հետ: Անձնական այս տեսակցութեանը, ի մեծ ուրախութեան ամբողջ բանակին, մերժվեց, և թագավորի փոխարեն Նապոլեոնի հետ բանակցութեանն էր վարելու ուղարկվեց Վիշաուի մոտ հաղթանակ տանող իշխան Դուգորուկովը, յեթե իսկապես այդ բանակցութեանները, հակառակ ակնկալության, հաշտության նպատակ ունեին:

Յերեկոյան Դուգորուկովը վերադարձավ, ուղիղ զնաց թագավորի մոտ և յերկար մնաց նրա հետ առանձին:

Նոյեմբերի 18 և 19-ին ոռւս զորքն ավելի առաջ զնաց, և թըշնամու առաջավոր պահակակետերը՝ կարճատև հրացանաձգութեանից հետո՝ նահանջեցին: 19-ի կեսօրից սկսած բանակի վերին շրջաններում սկսվեց մի տենդային ու հուզումնալից շարժում, վորը շարունակվեց մինչև հետեյալ օրվա, նոյեմբերի 20-ի առավոտը, յերբ տեղի ունեցավ Առևտերլիցի անմոռաց ճակատամարտը:

Մինչև 19-ին կեսօրը շարժումը, բուն խոսակցութեանները, վազվզուկը, աղուտանտների առաքումն այս ու այն կողմ կենտրոնացած էր միայն կայսրների դիւանդոն կայանում. կեսօրից հետո այդ շարժումն անցավ Կուտուզովի դիւանդոն կայանը և զորատաների հրամանատարներին շտաբները: Յերեկոյան, աղուտանտների միջոցով, այդ շարժումը տարածվեց բանակի բոլոր ծայրերում ու

մասերում, և 19-ի լույս 20-ի գիշերը դաշնակից զորքի 80 հազարանոց բաղմամբ լույս վեր կացավ քնից, աղմկալի ձայներով ու խառակցութեամբ շարժվեց ու ձգվեց, վորպէս իննը վերստ յերկարութեան ունեցող մի ժապավեն:

Կենտրոնացած շարժումը, — վոր առաջինը սկսվեց կայսրների գլխավոր կայանում և ընթացք առնեց հետագայ վողջ շարժմանը, — նման էր աշտարակային խոշոր մամացույցի կենտրոնական անիվի առաջին շարժմանը: Նախ դանդաղորեն շարժվեց մի անիվը, պատվեց յերկրորդը, յերրորդը, և հետզհետե արագ-արագ սկսեցին պտտվել անիվները, ճախարակները, առաջնավոր անիվը, հետո խփեցին դարկերը, ֆիգուրներ դուրս թան, և սլաքներն սկսեցին համաշարժյամբ առաջ խաղալ, զույգ առյւծ շարժման արդյունքը:

Ինչպէս մամացույցի մեխանիզմում, այնպէս ևլ աղմկական զորքի մեխանիզմում մի անգամ արդեն ընթացք առացած շարժումը անարգել և մինչև վերջին կայանը, և ընդհատակը՝ միանգամայն անշարժ են մեխանիզմի այն մասերը, վորոնք դեռ շարժման մեջ չեն գրգռւ: Ըննչում են անիվները, առաջնեքով բռնելով իրար, արագութեանից վողում են դարձող ճախարակները, իսկ հարեան անիվը այնպէս հանգիստ ու անշարժ է, կարծես հարշուրավոր տարիներ պատրաստ և մնալ այդ անշարժութեան մեջ. բայց անա յեկա՞վ ժամանակը — լծակը շարժվեց ու գլխով նրան, և անիվով, հետադարձելով շարժմանը, սկսում և դառնալ ու շխշկալ և միախառնվել այն ընդհանուր շարժմանը, վորի նպատակն ու արդյունքը անհասկանալի չեն իրեն:

Ինչպէս բաղմամբի ու բաղմապիս անիվների ու ճախարակների բարդ շարժման արդյունքը միայն ժամանակը զույգ առյւծ պարզ դանդաղ ու համաշարժ շարժումն է, այնպէս ևլ այդ 150 000 ուսանների ու ֆրանտացիների բոլոր մարդկային բարդ շարժումները, — այդ մարդկանց բոլոր կրքերի ու հույզերի, իղձերի, գղձումները, նվառացումները, առաջանքները, հպարտութեան ու դուրսութեան բռնկումները, սարսափի և հիացումների հետեանքը — Առաջակիցի պարտութեանն էր միայն. մի պարտութեան, վոր արդյունք էր այսպէս կաշված յերեք կայսրների ճակատամարտի, վորն առաջ ընկեց համաշխարհային-պատմական սլաքի դանդաղ առաջ-խաղաղումը մարդկային պատմութեան ցիֆերըլատի վրա:

Իշխան Անդրեյն այդ որը հերթագահ էր և շարունակ գլխավոր հրամանատարի մաս էր:

Յերեկայան ժամը 6-ին Կուսուղովը դնաց կայսրների գլխավոր կայանը և, մի կարճ միջոց թաղավորի մաս մնալով, դնաց արև-համարալ կոն Տոլստոյի մաս:



Բալկոնսկին ողորդագրեց այդ ժամանակամիջոցը և գնաց Դուգորուկովի մոտ՝ կովի մանրամասնություններն իմանալու։ Իշխան Անդրեյն զգուժեմ էր, վոր Կուտուզովն ինչ-վոր բանից հուզված և ու դժգոհ, և վոր գլխավոր կայանում նրանից դժգոհ են, և վոր կայսերական գլխավոր կայանի մարդիկ նրա հետ խոսում են այնպիսի տոնով, կարծես իրենք գիտեն մի բան, վոր ուրիշները չգիտեն։ Ուստի և իշխան Անդրեյն ուզում էր խոսել Դուգորուկովի հետ։

— Բարե, mon cher, — ասավ Դուգորուկովը, վոր թեյում էր Բիլիբինի հետ նստած։ Տոնակատարությունը վաղն և լինելու։ Ի՞նչպես և ձեր ձերուկը. տրամադրությունը վառ և։

— Ձեմ կարող ասել, թե տրամադրությունը վառ և, բայց նա, կարծեմ, ուզում և, վոր իրեն լսեն։

— Բայց իրեն լսեցին ուղղմական խորհրդում և կլսեն, յեթե կարգին բան ասի. սակայն ձեռքի ու ինչ-վոր բանի ապասել այժմ, յերբ Բոնապարտն ամեն բանից ավելի վախենում և գլխավոր ճակատամարտից, — անկարելի չի։

— Դուք նրան տեսա՞ք, — ասավ իշխան Անդրեյը։ — Ե, ի՞նչպես մարդ և այդ Բոնապարտը։ Ի՞նչ ապավորություն թողեց ձեզ վրա։ — Այո, տեսա և համոզվեցի, վոր աշխարհում ամեն բանից ավելի վախենում և գլխավոր ճակատամարտից, — կրկնեց Դուգորուկովը, ըստ յերևույթին, թանկ գնահատելով այդ ընդհանուր լեզրակացությունը, վոր արել էր նապոլեոնի հետ տեսակցելուց։ — Եթե ճակատամարտից չվախենար, ել ինչ՞ու յեր տեսակցություն խնդրում, բանակցություններ վարում և, վոր գլխավորն և, ինչ՞ու յեր նահանջում, յերը նահանջը այնպես հակառակ և պատերազմ վարելու իր ամբողջ մեթոդին։ Հավատացե՛ք ինձ, նա վախենում և գլխավոր ճակատամարտից. նրա ժամը հնչել և։ Այդ ասում եմ յես։

— Բայց պատմեցե՛ք տեսներե՛ք ի՞նչպիսի մարդ և, — նորից հարցրեց իշխան Անդրեյը։

— Դուք դույնի սյուրթուկ հաղած մարդ և. շատ եր վաժապում, վոր յես իրեն չձերդ մեծությունն ասեմ. բայց, ի մեծ վիշտ իրա, ինձնից չստացավ և վոչ մի տիտղոս։ Ահա ինչ տեսակ մարդ և, և ուրիշ վաչկիչ, — պատասխանեց Դուգորուկովը, ժպտալով Բիլիբինի յերեսին նայելով։ — Չնայած ձերուների Կուտուզովի հանդեպ ունեցած իմ խորին հարգանքին, — շարունակեց նա, — մենք հիմարներ կլինեյինք, յեթե սպասեյինք ինչ-վոր բանի և այդպիսով առիթ տայինք նրան հեռանալու կամ մեզ խաբելու, մինչդեռ այժմ նա հաստատապես մեր ձեռին և։ Վոչ, չպետք և մոռանալ Սուվորովին և նրա սկզբունքը — չդնենք մեզ հարձակման յենթարկվողի

փրճակում, այլ հարձակվե՛նք ինքներս: Հախառացեք, պատերազմում չեթառասարդների յետնողջ հաճախ ավելի ճիշտ և ցույց տալիս ուղիքն, քան ձեր դանդաղկոտների փող՝ փորձասուխյունը:

— Բայց նրա մեր գիրքի վրա չենք հարձակվելու: Յեւ այսօր չեղա՞ մեր առաջավոր պահակակետերում, և սկսեք և ասեմ, վոր զմեզ և վարսել, թե վարտեղ են դանդում նրա ղլխավոր ույ՝ ձերք, — ասավ իշխան Անդրեյը:

Նա ուղում եր իշխան Գուդրուկովին պարզել իր կազմած հարձակման ծրագիրը:

— Ա՛հ, դա բարբոսի՛ն միե՛նույն և, — ասավ Գուդրուկովը, վեր կենալով ու քարտեղք սեղանին փեղկով: — Ամեն ինչ նախատեսված և չեմք նա դանդում և Բրյունին մտերքը...

Յեվ իշխան Գուդրուկովը հապնեղ ու վաճ պարզ մեով պատմեց Վեյրտների թեանց շարժման ծրագիրը:

Իշխան Անդրեյն սկսեց առարկել և ապացուցել, վոր իր ծրագիրը փոշնչով պակաս չե՛ Վեյրտների ծրագրից, բայց այն պակասուխյունն ունի, վոր Վեյրտների ծրագիրն ընդունված և արդեն: Հենց վոր իշխան Անդրեյն սկսեց ապացուցել իր ծրագրի առաջելու թյունները և մյուսի պակասուխյունները, իշխան Գուդրուկովը դադարեց նրան լսելուց և ցրված նայում եր փոշ թե քարտեղիքն, այլ իշխան Անդրեյի գեմքին:

— Ասե՛նք, Կուսուզովի մոտ այսօր ապամական խորհրդակցություն և լինելու: զորք այդ բոլորը կարող եր այնտեղ ասել, — ասավ Գուդրուկովը:

— Այդպես ել կանեմ, — ասավ իշխան Անդրեյը, քարտեղից հետանալով:

— Յեվ Բե՛շի մասին եր այդպես հողում, պարոններ, — ասավ Բիլիբինը, վոր մինչ այդ զվարթ ծպխած սկանջ եր դնում նրանց դրույքին և այժմ, բոտ յերևույթին, պատրաստվում եր կատակել: — Վաղը հաղթություն կլինի թե պարտություն, միե՛նույն և, ուսս զենքի աջգությունն ապահովված և: Ձեր Կուսուզովից բացի, այլևս փոշ մի ուսս զորավար չկա: Զորավարներ՝ Heer general Wimpfen, le comte de Langeron, le prince de Lichtenstein, le prince de Hohenloe et enfin Prsch... prsch... et ainsi de suite, comme tous les noms polonais<sup>1</sup>.

— Taisez vous, mauvaise langue<sup>2</sup>, — ասավ Գուդրուկովը: Օրիշ չե, արդեն յերկու ուսս ունենք — Միլերազովիչը և Դոխաու-

<sup>1</sup> Վիսոգի՛ն, կոմս Լանճերոն, իշխան Լիխտենշտեյն, իշխան Հոհենլոս և Գրիշդրիգովը: Ինչպես լինական բոլոր անունները

<sup>2</sup> Զաղեր ձեր չար լեզուն:

բովը, պիտի ունենայինք յերբոքոյն եւ, կոմս Արակչեկը, բայց նրա ջգերը թույլ են:

— Սակայն, Միխայիլ Իլարիոնովիչը, կարծում եմ, յեկամ կլինի, — ասով իշխան Անդրեյը: — Յերջանկություն եւ հաջողություն եմ ցանկանում, պարոններ, — ավելացրեց նա եւ, Գուլգուրուկովի ու Բիլիբինի ձեռները սեղմելով, դուրս յեկավ:

Տուն վերադառնալով՝ իշխան Անդրեյը չկարողացավ իրեն զսպել եւ լուռ նստած Կուսուզովին հարցրեց, թե ի՞նչ եւ մտածում նա վաղվա ճակատամարտի մասին:

Կուսուզովը մի խիստ հայացք քցեց իր աղյուստանալի յերեսը եւ, մի փոքր լռելուց հետո, պատասխանեց.

— Յեւ կարծում եմ, վոր ճակատամարտը տանուլ ենք տալու, յեւ այդպես ասի կոմս Տոլստոյին եւ խնդրեցի իմ այս կարծիքը հայտնել թագավորին: Ի՞նչ եւ կարծում ի՞նչ ինչ պատասխանեց. — Eh, mon cher général, ja me mêle du riz des cotelettes, mêlez vous des affaires de la guerre<sup>1</sup>. Այո... Ահա ի՞նչ պատասխան տվին ինձ:

## XII

Յերեկոյան ժամը 10-ին Վեյրոտերն իր ծրագիրներով յեկավ Կուսուզովի բնակարանը, ուր եւ նշանակված եր ուղղմական խորհրդի նիստ: Բոլոր զորայոււնների հրամանատարները կանչված ելին զլիսավոր հրամանատարի մօտ, եւ բոլորը, բացի իշխան Բադրատիոնից, վոր հրաժարվել եր զալ, ներկայացան նշանակված ժամին:

Վեյրոտերը, վոր լիակատար տնօրենն եր նախատեսնվող ճակատամարտի, իր աշխուժությամբ ու փութկոտությամբ կատարյալ հակապատկերն եր ներկայացնում զժգոհ ու քնատ Կուսուզովի, վոր ակամա կատարում եր ուղղմական խորհրդի նախադասի ու ղեկավարի դերը: Վեյրոտերն, ակներեւ, զգում եր իրեն շարժման գլուխ, մի շարժում, վոր այլեւս անարդել եր դարձել: Նա նման եր մի լծած ձիու, վոր սայլի հետ վազում եւ սարն ի վար: Ինքն եր քաշում սայլակը, թե սայլակն եր քշում իրեն, — չգիտեր. բայց, վորքան կարելի յեր, առաջ եր վազում, ժամանակ չունենալով այլեւս մտածելու, կռադատելու, թե ուր կտանի այդ շարժումը: Վեյրոտերն այդ յերեկո յերկու անգամ գնացել եր թշնամու զորաշղթաները անձամբ դիտելու, յերկու անգամ յեղել եր ոտուսաց եւ ավտորիացոց թագավորների մօտ՝ ղեկուցում եւ բացատրություն:

<sup>1</sup> Ե՛հ, սիրելի գններալ: Յեւ զբաղված եմ բրնձով ու կոտլետներով, դուք եւ զբաղվեցեք ուղղմական գործերով:

տալու: համար, նաեւ իր դրամանշակում, ուր դերմաներեն լեզվով ինկադրեց իր գիտադպիցիան: Այժմ հողնած յեկեղ եւ Կուտուղովի մաս:

Նա, քան յերեսոյթին, այնքան դրագոված եր, վար մտանում եր անդամ քաղաքավարի լինել ղլխավար հրամանատարի հետ. քնդ-հասում եր նրան, խոսում եր արագ, անարշ, առանց խոսակցի յերեսին նայելու, չպատասխանելով իրեն տրված հարցումներին: Ենթադրած եր, տեսքը վաղորմելի, տանջված, չգոթված եւ դրա հետ միասին ամբարտապան ու զստոց:

Կուտուղովի տալուսւմ եր Ոստրուլիցի մոտ գտնվող աղնվական մի փաքրիկ զոչակում: Իլխավար հրամանատարի տաննապանշակը դարձած բնդարձակ հյուրատարում հաճաքով ելին — ինքը Կուտուղովը, Վեյրտտերը եւ ուղեական խորհրդի անդամները: Նրանք ինկում ելին եւ տպուսում միայն իշխան Բաղրատիոնին, վար խորհրդակցությունն սկսեն: Ժամը 8-ին Բաղրատիոնի սուրհանդակը լուր բերեց, թե իշխանը գալ չի կարող: Իշխան Անդրեյը յեկավ այդ րանը հայտնելու. ղլխավար հրամանատարին եւ, աղավելով Կուտուղովի կողմից նախապես իրեն ամած՝ խորհրդակցությանը ներկա լինելու. թուշտովությանից, մնաց սենյակում:

— Քանի վար իշխան Բաղրատիոնը չի գալու, մենք կարող ենք սկսել, — ասով Վեյրտտերը, հազանոց տեղից յեկնելով եւ մոտենալով այն սեղանին, վարի վրա փռված եր Բրյուննի շրջակայքի անաղին քարտեզը:

Կուտուղովը, (կանակները բաց մունդիրի սփրից զուրս եր ընկել նրա պարտառ վիզը) նստել եր Վալտերյան բազկաթոսում, փափլիկ պտտովական ձեռները արմեկատակերին դրած, եւ դեկթե քննել եր: Վեյրտտերի ձայնից զժվարությամբ բաց արավ իր միակ աչքը:

— Այո, այո, խնդրեմ, թե չե՝ ուշ ե, — ասով նա եւ, ղլխով անելով, դուռն իջեցրեց ու աչքը փակեց նարից:

Ենթե տոպթին պանին խորհրդի անդամները կարծում ելին, թե Կուտուղովը քնած եւ ձեռնում, բայց վերջին ընթերցումի մամա-նակ նրա քթի հանած խոտցները ցույց տվին, վար այդ բաղնին ղլխավար հրամանատարն ավելի կարեւր դործով եւ դրագոված, քան թե ցանկություն ունի արհամարհել գիտադպիցիան կամ ինչ-վար մի այլ րան. նա րավարարում եր մարդկային անդիմադրելի պահանջը — նա իրար քնել եր: Վեյրտտերը չափազանց դրագոված մարդու շարժումներով, վար չափազանց դրագոված է՝ ինկուզ մի բաղե կորցնելու. համար, նայեց Կուտուղովին եւ, համոզվելով, վար նա քնած եւ, թուղթը վերցրեց եւ քարձը միարինակ ձայնով սկսեց

կարգալ ապագա ճակատամարտի զիսպողիցիան հետեյալ վերնադրով, վորը նա նույնպես կարգաց.

«Կորեկնիցի և Սոկոլնիցի յետեւ դառնալով թշնամու զիրքերի վրա հարձակվելու զիսպողիցիան, 30 նոյեմբեր 1805 թ.»

Դիսպողիցիան շատ բարդ էր և զովարին: Դիսպողիցիայի բնադրում ստված էր.

Da der Feind mit seinem linken Fluegel an die mit Wald bedeckten Berge lehnt und sich mit seinem rechten Fluegel laengs Kobelnitz und Sokolnitz hinter die dort befindlichen Teiche zieht, wir im Gegentheil mit unserem linken Fluegel seinen rechten sehr debordiren, so ist es vortheilhaft letzteren Fluegel des Feindes zu attakiren, besonders wenn wir die Doerfer Sokolnitz und Kobelnitz im Besitze haben, wodurch wir dem Feind zugleich in die Flanke fallen und ihn auf der Flaeche zwischen Schlapanitz und dem Thuerassa-Walde verfolgen koennen, indem wir dem Detileen von Schlapanitz und Bellowitz ausweichen, welche die feindliche Front decken. Zu diesem Endzwecke ist es noethig... Die erste Kolonne marschirt... die zweite Kolonne marschirt... die dritte Kolonne marschirt<sup>1</sup>... և այլն, կարգում էր Վեյրտները: Գեներալները, կարծես, զովամությամբ ելին լուսմայդ զովարին զիսպողիցիան: Ուարայալ բարձրահասակ զենեքալ Բուկահեղձներ կանգնել էր՝ մեջքը պատին տված և, աչքերը վառվող մոմին հառած, կարծես չէր լուսմ և անդամ մինչև իսկ չէր ուղղում, վոր կարծեն, թե լուսմ է: Վեյրտների ուղիղ դիմացը, բաց փայլուն աչքերը նրա վրա սեևած, ազմատենչ դիրքով, արմունկները ծնկներին հենած՝ նստել էր կարմրադեմ Միլորադովիչը՝ ընդերը և ուսերը վեր ցցած: Նա համառորեն լուսմ էր, Վեյրտներին նախիով, և աչքը նրանից կտրեց այն ժամանակ միայն, յերբ ավաարիական շտաբի պետը լռեց: Այդ ժամանակ Միլորադովիչը նշանակալից նայեց մյուս զենեքալներին: Բայց այդ հայացքից զովար

<sup>1</sup> Վարովհեստ թշնամին իր ձախ թեով հենվում և անսառածածակ սարերին, իսկ աջ թեով տարածվում և Կորեկնիցի և Սոկոլնիցի յերկարությամբ, նրանց յետև գտնվող լճակներին այն կողմը, իսկ մենք, ընդհակառակը, մեր ձախ թեով զերազանցում ենք նրա աջ թեւը, ուստի մեզ ձեռնառու յն հարձակվել թշնամու սեւին վերջին թեւի վրա, մանավանդ յեթե գրավենք Սոկոլնից և Կորեկնից գյուղերը, և այդպիսով հնարավորություն ստանանք հարձակում գործել թշնամու զորաթեւի վրա, և հետագանքի նրան Շլապանիցի և Տյուրաուի անսառի մեջք գտնվող դաշտավայրում, խուսափելով միաժամանակ Շլապանիցի և Բելովիցի մեջք գտնվող ռեզ անցքից, վորով պաշտպանվում է թշնամու ճակատը: Դրա համար անհրաժեշտ է... Առաջին զորայուսը գնում է... յերրորդ զորայուսը գնում է...

եր հասկանալ, թե համաձայն և նա զիսպագրիցիային թե վաշ, զմե և թե զժողով և Վեյրառերին ամենից ազիլի մաս նստող կամ Լանժերանը հարազատին քրանուացու նուրը ժողովով, ընթերցման սմբողջ ընթացքում, նայում եր իր բարակ մատներին, վոր արագորեն քթախառի մի պատկերազարդ տուփ ելին խաղացնում և հետագայ տարբերություններից մեկի կիսին նա դադարեցրեց քթախառի տուփի շարժումը, զլուրը բարձրացրեց և, անախորժ քաղաքավարությունը նուրը շուրթերի ծայրին, ընդմիջեց Վեյրառերին և ուղեց ինչ-զոր բան ասել. բայց ախարիացի զենեկալը, ընթերցումը շրջադասակով, հանձնեց բարկացած և արմուշկները թափահարեց, վոր կարծես ուղում եր ասել. — հետո, հետո կասեք ինձ ձեր կարծիքը, այժմ համեցեք նայել քարտեղին ու սկիանջ գնել, Լանժերանը տարակուսանքով աչքերը բարձրացրեց վեր, նայեց Միլորադովիչին, կարծես բացատրություն փնտելու համար, բայց սեանելով Միլորադովիչի նշանակալից, սակայն վորինչ արտահայտող հայացքը, աչքերը խոնարհեց տխրությամբ և նորից սկսեց քթախառի տուփը խաղացնել:

— Une leçon de géographie<sup>1</sup>, — ասավ նա, կարծես ինքն իրեն, բայց բախկան բարձր, վարպետի բոլոր լսեն:

Պրծերիչեակին հարգալիք, բայց արժանազատից քաղաքավարությամբ ձևով սկիանջը դարցրեց զեղի Վեյրառերը, մի այնպիսի տեսքով, սակս կլանված և ուշադրությամբ: Կարճահասակ Դոխտուրովը նստել եր ուղիք Վեյրառերի գիմաց՝ ջանասեր ու համեստ տեսքով և, փոխած քարտեղի վրա կուցած, բարեխղճությամբ առամնասիրում եր զիսպագրիցիան և իրեն անձանթ վայրերը: Նա մի քանի անգամ խնդրեց Վեյրառերին՝ կրկնել լավ չլսած խոսքերը և զյուզերի զժողով անունները: Վեյրառերը կատարեց նրա ցանկությունը, և Դոխտուրովը զրի ասավ զշամբ:

Երբ մոմից ազիլի տեղ ընթերցումը վերջացավ, Լանժերանը, նորից քթախառի տուփը թողնելով և ասանց Վեյրառերին և ասանձնապես վարեւ մեկին նայելու, սկսեց խոսել այն մասին, թե վորքան զժողով կլինի իրադարձել մի այսպիսի զեսպագրիցիա, ուր թըշնամու գերբը չհեղձադուրում և իրեւ հայտին ու վորոշ, մինչդեռ այդ զիրքը կարող և մեղ հայտին չլինել, վորովհետեւ թշնամին շարժման մեջ և Լանժերանի ասարկությունները հիմնավոր ելին, բայց սկիւրեւ եր, վոր այդ ասարկությունների նպատակը զլսափարապես այն եր, վոր գեներալ Վեյրառերին (վոր ինքնապատահությամբ, ինչպես զպրոցական-աշակերտների ասաջ, կարգում եր

<sup>1</sup> Աշխարհագրության դաս

իր դիսպոզիցիան) զգացնել տա, թե նա գործ չունի միայն հիմարների հետ, այլև այնպիսի մարդկանց, վորոնք կարող են ուղղամական գործից իրեն ևս բան սովորեցնել: Յերբ Վեյրաուերի միտքինակ ձայնը լսեց, կուտուզովն աչքը բաց արավ, ինչպես ջաղացպանը, վոր արթնանում է քնարեր չափախի դադարի միջոցին, ու ականջ դրեց Լանժերոնի խոսքերին, և կարծես ինքն իրեն ասում էր. «Գուք դեռ այդ հիմար բաների մասին եք խոսում»: և աչքը փակեց արագ ու գլուխն ավելի կախ քցեց:

Աշխատելով վորքան կարելի յե խայթիչ վիրավորանք հասցնել Վեյրաուերի ուղղական հեղինակության ինքնասիրությունը, Լանժերոնն ապացուցում էր, թե Բոնապարտը, հարձակման յենթարկվելու փոխարեն, դուռնություն արող և հարձակվել ինքը և այդպիսով այս ամբողջ դիսպոզիցիան բոլորովին անողոտ դարձնել: Վեյրաուերը բոլոր առարկություններին պատասխանում էր մի արհամարհոտ ժպիտով, վոր հավանորեն առաջուց էր պատրաստել ամեն տեսակ առարկություն համար, անկախ այն բանից, թե ինչ են ասելու:

— Յեթե Բոնապարտը կարողանար հարձակվել մեզ վրա, այսօր իսկ կհարձակվեր, — ասավ նա:

— Դուք, ուրեմն, կարծում եք թե՛ նա ուժ չունի, — ասավ Լանժերոնը:

— Շատ է, յեթե 40 000 ել ունենա, — պատասխանեց Վեյրաուերը մի բժշկի ժպիտով, վորին բուժակը բուժելու միջոց և ցույց տալիս:

— Այդ դեպքում նա իրեն կորստի յե մատնում, սպասելով մեր հարձակման, — նուրբ հեղճական ժպիտով ասավ Լանժերոնը, հավանություն տալով համար նորից նայելով մոտիկ նստած Միլորադովիչին:

Բայց Միլորադովիչն այդ բողեյին, հավանորեն, ավելի քիչ մտածում էր այն մասին, թե ինչի վրա յեն վիճում գնեկրալները:

— Ma foi! — ասավ նա, — վազն ամեն բան կտեսնենք կովի դաշտում:

Վեյրաուերը քմծիծաղեց նորից մի ժպիտով, վոր ասում էր, թե ի՞նչ համար ծիծաղելի է տարրինակ և առարկություններ լսել ուսու գնեկրալներից և ապացուցել մի բան, վորին վու՛յ միայն ինքն էր խորապես հավատացած, այլև թաղավոր-կայսրները:

— Թշնամին կրակները հանգցրել է, և նրա բանակից անընդհատ ազմուկ է լսվում, — ասավ նա: — Այդ թնչ և նշանակում:



Կամ հետամնամ եւ զորից մենք պետք ե զախենանք, կամ զիր-  
քերն ե զսխաւս (նա քամիժաղ ազեց): Բայց մինչեւ իսկ չեթիւ նա  
զիրք ել քանի Տյաքասում, մեզ կաղատի միայն մեծ զլխացա-  
վանքից, ե քորի կարգադրություններք, ամենայն մանրամաս-  
նաւ թշամբ, կլնան նաւնք:

— Ի՞նչպիսի... — ասով իշխան Անդրեյը, վոր վաղուց արդեն  
ասիթի չեւ աղատում իւր կասկածները հայտնելու:

Կատուզովն արթնացավ, ծանր հազաց ե զենեւալներին նայեց:  
— Գարոններ, վաղվա կամ նաւնիսկ աշտոժա (վորովհետեւ  
արդեն մամբ մեկն ե) զխաղաղիցիան չի կարելի փոխել, — ասով  
նա: — Իսա ք լսելիք աշն, ե մենք քոչորս կկատարենք մեր պարտքը:  
Իսկ հակառակմարտից ասաջ... (նա լսեց) լավ քնելուց ազելի կա-  
րետք քան չկա:

Նա զայց ազեց, թե ուզում ե վեր կենայ: Ինեւերալներք զլուխ  
ազին ու հետադան: Կեւ զիշերից անց եւ արդեն: Իշխան Անդրեյը  
նաւնպիսի դուրս չեկավ:

Թաղմական խորհուրդը, ուր իշխան Անդրեյը, աղատածի հա-  
կատակ, չկարողացավ իւր կարծիքը հայտնել, անորոշ ու ասղնա-  
տայի տաղաժորություն թողեց նրա վրա: Ո՞վ եւ իրավացի, —  
Դուդարուկովն ու Վեյրառերք թե Կատուզովը, Լանժերանք ե մյուս-  
ներք, վոր հաժանություն չեյին տալիս հարձակման ծրարին, —  
չեւ իմանում: «Բայց մթթի Կատուզովը չեւ կարող իւր կարծիքն  
ուզղակի տակ թաղաժորին: Թթթե զա աշ կերպ չի կարող լինել:  
Թթթե որդատականներ ե անձնական նկատառումներ պատճա-  
տով պետք ե սխիլ չենթարկել ասանձակ հաղարներ ե իմ, իմ  
կյանքը», մտածում եր նա:

«Այո, շատ կարելի չեւ, վաղն աղանեն», մտածեց նա: Եւ վան-  
կարծ, մահվան աշա մարի հետ՝ հետաժոր ու սխիլի հիշողություն-  
ներ դարթեցին նրա յերեւակայության մեջ: Հիշեց վերջին հրա-  
մեշտը հար ու կնոջ հետ: Հիշեց կնոջ սխիլու ասաջին սրերը:  
Հիշեց կնոջ հզորությունը, ե ափսոսաց թե նրան, թե իրեն, ե  
նշարդային ու հուզված վիճակում դուրս չեկավ խրճիթից, ուր  
աղտում եր նեղիցեկա հետ միասին, ե սկսեց յերթեկեկ տան  
ասաջ:

Մտախփաղատ զիշեր եւ, ե մշուշի մթջից խորհրդաժոր կեր-  
պով իւր շարերն եւ արձակում լուսինը: «Այո, վաղը, վաղը, —  
մտածեց նա: — Վաղը, զուցե, ամեն ինչ վերջանա ինձ համար:  
քոչոր աշա հիշողություններն աշխա չեն լինի, քոչոր աշա հիշ-  
ողություններն աշխա վաջ մի իմաստ չեն ունենա ինձ համար:

Իսկ վաղը, թերեւ, նույնիսկ հաստատապէս կարելի չե ասել՝ վաղը, յես այդ նախազգում եմ, առաջին անգամ, վերջապէս, յես պիտի ցույց տամ այն բոլորը, ինչ կարող եմ անել։ Ու նրան պատկերացաւ ճակատամարտը. — իրենք պարտվում են, կռիվները կենտրոնացել են մի կետում և բոլոր հրամանատարները շփոթութեան մեջ են։ Յեւ վաղ, վերջապէս, ներկայանում և իրեն այն յերջանիկ վայրկյանը, այն Տուլոնը, վորին յերկար սպասում եր այնպէս։ Նա հաստատ ու պարզ իր կարծիքն և հայտնում թե Կուսուղովին, թե Վեյրտտերին, թե կայսրներին։ Բոլորը դարմացած են նրա ճիշտ յենթադրութեանների վրա, բայց վոշ-վոք հանձն չի առնում իրագործել այն, և ահա նա վերցնում և մի գունդ, մի դիվիզիա, պայման և դնում, վոր վոշ-վոք չխառնվի իր կարգադրութեաններին, ու իր դիվիզիան առաջնորդում և զեպի ճակատամարտի վճռական կետը և հաղթութեան և տանում մենակ։ Իսկ մահն ու տանջանքները, — ասում և մի ուրիշ ձայն։ Բայց իշխան Անդրեյն այդ ձայնին չի պատասխանում և շարունակում և իր աջոգութեանը։ Հետեյալ ճակատամարտի դիպուկորէին մենակ ինքն և կարգադրում։ Նա կրում և բանակի որսպանի կոչումը, բայց ամեն ինչ մենակ և անուամբ։ Հետեյալ ճակատամարտը շահում և դարձյալ մենակ։ Կուսուղովին փոխում են, և նշանակվում և ինքը... Ե, իսկ հետո, — ասում և նորից մյուս ձայնը, — իսկ հետո, յեթե դրանից առաջ տասն անգամ չվերափոխես, չսպանվես կամ չխաբվես. և, իսկ հետո թնշ, — Են, իսկ հետո, — պատասխանում և իշխան Անդրեյն ինքն իրեն, — չդիտեմ ինչ կլինի, չեմ ուզում և չեմ կարող իմանալ. բայց յեթե այդ եմ ուզում, փառք եմ ցանկանում, ուզում եմ հռչակվել, սիրելի դառնալ մարդկանց. բայց չե վոր յես մեղավոր չեմ, վոր այդ եմ ցանկանում, վոր միայն այդ եմ ցանկանում, միայն դրա համար եմ ապրում։ Այո, միայն դրա համար։ Յես յերբ վոշ-վոքի չեմ ասի այդ, բայց, ասոված իմ, ապա ինչ անեմ, յեթե վոշինչ չեմ սիրում, բայց յեթե միայն՝ փառք և սերը մարդկանց։ Մահ, վերքեր, ընտանիքի կորուստ — այդ բոլորը սարսափելի չեն ինձ համար։ Յեւ վորքան եւ թանկ ու սիրելի յեն ինձ շատ մարդիկ — հայր, քույր, կին. — իմ ամենասիրելի մարդիկ, — բայց վորքան և սարսափելի ու անբնական և թվում այդ, յես նրանց բոլորին կտամ փառքի մի վայրկյանի համար, մարդկանց վրա իշխելու, մարդկանց սերը վայելելու համար, մարդիկ, վորնց յես չեմ ճանաչում և չեմ ճանաչելու, ահա այդ մարդկանց սերը վայելելու համար, մտածեց նա, ակամջ դնելով Կուսուղովի բակից լավոդ խոսակցութեան։ Կուսուղովի բակից լավում եր ճանապարհի պատ-

բառաստեղծութիւն տեւանող սպասարկիւնքի մայնը: Կատարանը, Կուսուղաթի մեր խաւարարին ծագրելով ասում եր. «Տիտ, աչ Տիտ»:

— Հը, — պատասխանեց մերունին:

— Տիտ, դեռ քանիդ, — ասում եր հանաքշի կատարանը:

— Ռա, գրողը տանի քեզ, — պատասխանեց Տիտը, սպասարկիւնքի և ծառանքի միմայի տակ:

«Բայց և այնպէս յետ սիրում եմ և բարձր եմ դնահատում նրանց բոլորին իշխելը, բարձր եմ դնահատում այդ խորհրդավոր ումն ու փառքը, վոր հենց այստեղ, այս մշուշի մեջ, ստվածում ե իմ պիտաւորները»:

### XIII

Ռոստոմը այդ պիշեր իր դասակով հեծալ կողմնախույզների շղթայումն եր, Բաղրատիանի դարարամնի առջևում նրա հուսարները պույգ-գույգ ցրված էլին այդ շղթայի մեջ. ինքը մի նստած անցնում եր շղթայի չերկարութեամբ, աշխատելով հաղթահարել քանը, վոր անհաղթահարելի կերպով իջնում եր նրա վրա: Նրա չեանք չերում էլին՝ մեր քանակի աւազին տարածութեան վրա՝ մշուշի մեջ ազատ կերպով վառվող խարույկները. առջեր քանել եր մշուշապատ խաւարը: Վարքան էլ Ռոստոմը տեսողութեանը չարում եր այդ մշուշաւ խաւարի մեջ մի քան տեւեկութ, — վաշինչ չեր տեսնում. մերթ դարշանում, մերթ սեին եր տալիս ինչ-վոր մի քան. մերթ կարծես կրակներ էլին չերում աշտեղ, ուր տեղ և թշնամին չինել. մեկ էլ կարծում եր, թէ միտջն իր աչքերն ևն առկայծում այդպէս: Աչքերը փակվում էլին, և չերեակայծութեան մեջ պատկերանում եր մերթ թաղաւորը, մերթ Դենիսովը, մերթ Մակովայի հիշողութեանները, և նա աչքերը հապանկ քանում եր նորից ու առջեր տեսնում եր միտ. դրախն ու տեւեկները, չերեկն՝ հուսարներին սե կերպարանքը, չերը վեց քայլի վրա մտակցած եր լինում նրանց, իսկ հեղում միշտ նույն մշուշապատ խաւարը: «Ինչն է չե. շատ կարելի չե, — մտածում եր Ռոստոմը, — վոր թաղաւորն, ինձ հանդիպելով, հանձնարարութեան անի, ինչպէս և ամեն մի սղայի, թէ՛ «Դեռ, իմացի ինչ կա այնտեղ»: Շատ ևն պատում է չե, թէ ինչպէս պատահարաւ ճանաչել և աշտեղ մի ինչ-վոր սղայի և մտակցել իրեն: Հանկարծ, չեթե ինձ էլ մտակցել իրեն: Ո՛ր, ինչպէս կարանայանելի նրան, ինչպէս ամբողջ ճշմարտութեանը կասելի նրան, ինչպէս կմերկացնելի նրան խարույկներին», և Ռոստոմը, վոր տեղի ամիւրի կենդանի պատկերացնի իր սերն ու նվիրվածութեանը թաղաւորին, չերեակայծում եր մի թշնամի կամ խարերա-

գերմանացի, վորին հաճույքով մոշ միայն սպանում էր, այլև սպտակներ էր հասցնում թաղավորի աչքի առաջ: Հանկարծ հեռ-վից յեկող մի աղաղակ սխափեցրեց Ռոստովին: Նա ցնցվեց և աշ-քերը բաց արավ:

«Վորտեզ եմ Այո, շղթայում: Լսողները և պարսիք — առեզ, Ումյուչ: Ափսոս, վոր մեր հեծելավաշտը վաղը պահեստի յե... — մտածեց նա — Կլինդրեմ, վոր թույլ տան կովին մասնակցեմ: Սա, թերևս, միակ առիթն է թաղավորին տեսնելու: Այո, այժմ քեզ և մնացել մինչև հերթափոխությանը: Կանցնեմ մի անգամ ևլ է, վերադարձա թե չե, կերթամ դեներալի մաս ու կլինդրեմ: Նա թամբի վրա ուղղվեց ու ձին շարժեց, վարպետի մի անգամ ես անցնի ու դիտի իր հուսարներին: Նրան թվաց, թե լուսանում է: Չախ կտգոր յերևում էր մի լուսավորված դատիվայր և դիմացի սև բլուրը, վոր պատի պես ուղղահայաց էր թվում: Բլրի վրա մի սպիտակ բիժ կար, վոր Ռոստովը չէր հասկանում լուսնի լուսով լուսավորված բացնա և անտեսում, թե՛ մնացած ձյուն, թե՛ սպի-տակ աներ: Նրան թվաց նույնիսկ, թե այդ սպիտակի վրա ինչ-վոր բան շարժվեց. «Այդ սպիտակը, յերևի, ձյուն է, բիժ է — une tache», — մտածեց Ռոստովը: Ահա քեզ ե... Նե տաշ...»

Նստաշտան, քույրս, սև աչքերը: Նա... տաշկա (Այ կղարմանա հա, յերբ նրան տեսն ինչպես եմ թաղավորին տեսել): Նատաշկին... տաշկին վերցրու... — Երևի աջ դնացեք, ձերդ աղնվաթյուն, այս կողմը թփեր են», ասավ մի հուսար, վորի կողքով, քունք գլխին, անցնում էր Ռոստովը: Նա բարձրացրեց գլուխը, վեր կա-ցել էր համարյա մինչև ձիու բաշը և ձին կանգնեցրեց հուսարի կողքին: Մանկական անհաղթահարելի քունք սաստիկ տանում էր: «Հա, ի՞նչ էլի մտածում — չմոռանամ: Թաղավորի հետ ի՞նչպես պիտի խոսեմ: Չե, այդ չի — դա վաղն է: Այո, այժմ: Նատաշկին, կզա... Ում — հուսարներին: Իսկ հուսարները... Տվերսկոյ փողոցով անցնում էր այդ բեղերավոր հուսարը, Գուրևի տան դիմաց... Ծե-բուռնի Գուրևը... Ե, սքանչելի աղա յե Գենիսովը: Բայց այդ բո-լորը դատարկ բան է: Հիմա գլխավորն այն է, վոր թաղավորն այստեղ է: Ի՞նչպես նայեց վրաս, արդոք ուղում էր մի բան ասել և չհամարձակվեց... Վոչ, այդ յես չհամարձակվեցի: Այդ դատարկ բան է, գլխավորը — չմոռանամ, վոր հարկավորը մտածել եմ, այո: Նատաշկին... այո, այո, այո: Այդ լավ է: — Ենվ նրա գլուխը նորից կախ ընկավ մինչև ձիու վիզը: Հանկարծ նրան թվաց թե կրակում են իր վրա: Բե՛նչ: Ի՛նչ: Ի՛նչ... Կոտորվի: Ի՛նչ...», ասավ Ռո-ստովը, արթնանալով: Այն վայրկյանին, յերբ աչքերը բացեց, Ռո-ստովն իր առջևից, այնտեղից, ուր թշնամին էր, լսեց հաղարավոր

ձայների ազդակները։ Նրա և հուսարի ձիերը, վոր կանգնած էին իրար կողքի, ականջները լուրջցին այդ ձայների վրա։ Այնտեղ, վորտեղից ազդակներ լսվեցին, մի կրակ վառվեց ու հանգավ, հետո մի ուրիշը, ապա ֆրանսական զորքերի շղթայովը մեկ, սարի վրա կրակներ վառվեցին, և ազդակներն ավելի սաստկացան։ Ռոստովը ֆրանսերեն խոսակցութուն լսեց, բայց չկարողացավ բառերը ջոկել։ Ազմկող ձայները չափազանց շատ էին։ Լսվում էր միայն՝ ամառ և բ՛ոռո։

— Ի՞նչ բան և սա։ Ի՞նչ ես կարծում, — դարձավ Ռոստովը կողքին կանգնած հուսարին։ — Ձայները թշնամու կողմից են գալիս չէ։

Հուսարը վռչինչ չպատասխանեց։

— Հը, միթե դու չես լսում, — բավական յերկար պատասխանի սպասելով, նորից հարցրեց Ռոստովը։

— Ո՞վ ա իմանում, ձերդ աղնվություն, — ակամա պատասխանեց հուսարը։

— Տեղին նայած՝ թշնամին պիտի լինի, — նորից կրկնեց Ռոստովը։

— Կարելի ա նա ա, կարելի ա հենց ննպես, — ասավ հուսարը, — գիշերվա բան ա, ինչ իմանաս։ Դե, հանգիստ, — պոռաց նա ձիու վրա, վոր շարունակ շարժվում էր տակին։

Ռոստովի ձին նույնպես շտապում էր, վտար խփում էր սառած գետին, ձայներին ականջ դնելով ու կրակներին նայելով։ Ազդակները հետզհետե սաստկանում էին և դառնում-ձուլվում մի ընդհանուր վորոտ, վոր կարող էր առաջ բերել միայն մի քանի հազարանոց բանակը։ Կրակներն ավելի ու ավելի տարածվում էին, հավանորեն, ֆրանսական բանակատեղի դժով։ Ռոստովի քունը փախավ, թշնամու բանակի ուրախ, հաղթական կանչերը դժբաղձին ներդրվեցին ունեցան նրա վրա։ Vive l'empereur, l'empereur!<sup>1</sup> հիմա արդեն վորոշ լսում էր Ռոստովը։

— Հեռու չեմ. յերևի, գետակի այն կողմը, հը, — ասավ նա կողքին կանգնած հուսարին։

Հուսարը, վռչինչ չպատասխանելով, հողոց քաշեց ու հազաց բարկացած։ Հուսարների շղթայի կողմից ձիու վտռնատրոփ լսվեց, և գիշերային մառախուղի միջից հանկարծ, ահադին փղի նման, յերևաց հուսարական յենթասպայի կերպարանքը։

— Ձերդ աղնվություն, գետերալները, — ասավ յենթասպան, Ռոստովին մոտենալով։

<sup>1</sup> Կեցցե կայսրը, կայսրը!

Ռոստոփը, շարունակելով նայել կրակներին ու կանչերին, յենթասպայի հետ յեկող ձիավորներին ընդատալ զնայց։ Մեկն սպիտակ ձիով եր։ Իշխան Բաղրատիոնը՝ Դոդղարուկովի և աղյաւտանաւների հետ յեկել էյին նայելու թշնամու բանակում տեղի ունեցող տարբերակ յերևոյթին — կրակներին ու աղաղակներին։ Ռոստոփը, Բաղրատիոնին մտենալով, զեկուցում ավելց ու խառնվեց աղյաւտաններին, ակամօ զնելով, թե ինչ են ասում զենեկավորները։

— Հալատացեք, — ասում եր իշխան Դոդղարուկովը, զիմելով Բաղրատիոնին, — դա վաչ ալ ինչ է, բայց յեթե խորամանկութեան. ինքը նահանջել և և արիերդարդին հրամայել՝ կրակներ վառել ու աղմուկ բարձրացնել, վար մեղ խաբի։

— Հաղով թե, — ասով Բաղրատիոնը, — յերեկոյան յես նրանց տեսել եմ ըլլել վրա. յեթե նահանջել են, այնտեղից ել պետք և քաշված լինեն։ Պ. սպա, — դարձով իշխան Բաղրատիոնը Ռոստովին, — նրա հեծյալ կողմախույզները զես այնտեղ են։

— Յերեկոյան այնտեղ էյին, հիմա չգիտեմ, ձերդ պայծառափայլութեան։ Կհրամայեք, հուսարներիս հետ կերթամ, — ասով Ռոստոփը։

Բաղրատիոնը ձին կանգնեցրեց և, ասանց պատասխանելու, աշխատեց մշուշի միջից գիտել Ռոստովի զեմքը։

— Լավ, զնացեք տեսեք, — ասով նա, փոքր ինչ լուելուց հետո։  
— Լսում եմ։

Ռոստոփը խթանեց ձիուն, կանչեց յենթասպա Ֆեդչենկոյին ու մի յերկու հուսարի, հրամայեց հետեւել իրեն և ձին քշեց սարն ի վար՝ շարունակվող աղաղակների կողմը։ Ռոստոփը և սարապի եր զդուււ և ուրախ եր, վար մենակ, յերեք հուսարի հետ զնուււ և այնտեղ, այդ խորհրդավոր ու վառնդավոր մշուշոտ հեռուն, ուր իրենից առաջ վաչ-վաչ չի յեղել Բաղրատիոնը սարի գլխից ձայն ավելց, վար նա զետակից զենը չղնա, բայց Ռոստոփը այնպես ձեացրեց, իբր թե նրա խոսքերը չլսեց, և ասանց կանգ առնելու ձին շարունակ առաջ եր քշում, շարունակ խաբվելով թփերը ծախ և սորսորները մարդկանց տեղ ընդունելով և անդադար բացատրութեան տալով իր պատրանքներին. լեռան ստորոտն իջնելով, նա ալիս չեր տեսնում վաչ մերունց, վաչ թշնամու կրակները, բայց ավելի բարձր ու վորոշ եր լսում ֆրանսացիների աղաղակները։ Զորակում իր առջև զետի նման մի բան նշմարեց, բայց յերբ մոտեցավ տեսավ ճանապարհ և ճամպի վրա վրա զնելով՝ ձին կանգնեցրեց, ինչ անելը չիմանալով. — զնամր ճանապարհով, թե՛ կտրեք անցներ այն ու սե զաշտով սարը բարձրա-

նար: Մշուշի մեջ սպիտակին տվող ճանապարհով դնալը անվտանգ էր, վարովհետեւ մարդկանց ավելի շուտ կարելի չեր ջոկել: «Յետե-վիցս յեկեք», ասաւ Նա, անցաւ ճանապարհի մյուս կողմը և սկսեց քառարշավ բարձրանալ սարը, այն տեղը, ուր իրիկվանից կանգնած էր ֆրանսական պահակախումբը:

— Ձերդ պնդություն, հրեն, — ասաւ հուսարներից մեկն իր յետեից:

Յեւ Ռոստովը դեռ չեր կարողացել նայել հանկարծ մշուշի մեջ սևին տվող բանին, յերբ մեկն կրակ փայլատակեց, հրազեն ճայ-թեց, և դնդակը, կարծես ինչ-վոր բանից զանգատվելով վզղաց բարձր մշուշի մեջ և ապա անլսելի դարձաւ, կորաւ: Յերկրորդ հրա-ցանը չկրակեց, բայց խանձոցի վրա կրակ փայլատակեց: Ռոստովը ձիւ գլուխը շուտ տվեց ու քառատրոփ յետ վերադարձաւ: Չորս կրակոց եւ լսվեց ընդհատումներով և զնդակները տարբեր ձայնե-րով յերգեցին մշուշում: Ռոստովը՝ իր նման, կրակոցներից ուրա-խացած ձիւ սանձը ձգեց ու քայլով առաջ դնաց: «Հապա ելի՛, ելի՛», ասում էր նրա սրտում մի ինչ-վոր ուրախ ձայն: Բայց այլևս կրակոցներ չեղան:

Միայն Բազրատիոնին մոտենալիս Ռոստովը նորից բաց թո-ղեց ձիւ գլուխը և, ձեռը քունքի մոտ բռնած, մոտեցաւ նրան: Գուզորուկովը շարունակում էր պնդել, թե ֆրանսացիները նահանջել են և այդ կրակներն արել են մեզ խաբելու համար միայն:

— Դա ի՞նչ և ապացուցում, — ասում էր Նա այն ժամանակ, յերբ Ռոստովը մոտեցաւ նրան: — Նրանք կարող եյին նահանջել և պահակախմբեր թողնել:

— Ինչպես յերևում է, բոլորը դեռ չեն հեռացել, իշխան, — ասաւ Բազրատիոնը: — Առավոտն ամեն բան կիմանանք:

— Ձերդ պայծառափայլություն, պահակախումբը դեռ սարի վրա չե, իրիկվա տեղը, — զեկուցեց Ռոստովը՝ առաջ թեքված, ձեռը քունքին բռնած, չկարողանալով զսպել ուրախության յայտը, վոր ինքը դնացել թշնամու պահակախմբին էր հասել և մանավանդ զնդակների ձայն եր լսել:

— Լավ, լավ, — ասաւ Բազրատիոնը, — շնորհակալ եմ պ. սպա:

— Ձերդ պայծառափայլություն, — ասաւ Ռոստովը, — թույլ տվեք խնդրել...

— Ի՞նչ կա:

— Վաղը մեր հեծելավաշտը մնում է պահեստի. խնդրում եմ ուղարկեք ինձ 1-ին հեծելավաշտը:

— Ի՞նչպես է ձեր ազգանունը:



— Կոմս Ռոստով:

— Ա, լավ: Մնացեք ինձ մտտ պատվիրակ:

— Իյյա Անդրեևիչի վորդեն էս, — առավ Դուգորուկովը: Բայց Ռոստովը նրան չպատասխանեց:

— Ուրեմն հայտ աւնենամ, ձերդ պայծառափայլություն:

— Յես կհրամայեմ:

«Շատ կարելի չէ հենց վաղը մի հանձնարարությամբ ուղարկեն ինձ թաղավորի մաս, — մասնակց նա: — Փառք ասածոք:

Թշնամու բանակի կրակներն ու ազադակները հետևանք էյին այն բանի, վոր այն ժամանակ, յերբ զորքին կարդում էյին Նապոլեոնի հրամանը, ինքը Նապոլեոնը ձի նստած անցնում-գիտում էր իր բացթյաղները (бывуаки): Զինվորները, կայսեր տեսնելով՝ ծղտաի փնջեր էյին վառում և «Vive l'empereur!»<sup>1</sup> ազադակներով վազում յետևից: Նապոլեոնի հրամանը հետևյալն էր.

«Զինվորներ! Ռուս բանակը դայիս և մեր վրա՝ ավադրիական, Ուլմի բանակի վրեժն առնելու: Դրանք նույն դուժարտակներն են, վորոնց դուք ջարդեցիք Հոլարբուսի մաս և հետապնդեցիք շարունակ՝ մինչև այստեղ: Մեր դրոված դիրքերը — շատ ամուր են, և մինչ թշնամին կփորձի անցնել իմ թիկունքս աջից, նա իր թեր ցույց կտա մեզ: Զինվորներ! յես ինքս պիտի ղեկավարեմ ձեր դուժարտակները: Յես կրակից հետո կմնամ, յեթև դուք, ձեր սովորական քաջությամբ, անկարգություն ու շփոթություն մըտցնեք թշնամու շարքերը. բայց յեթև հաղթությունը դեթ մի բողկ կտակածելի դառնա, դուք ձեր կայսեր կտեսնեք թշնամու առաջին հարվածների տակ, վորովհետև տարակուսանք չի կարող լինել հաղթության նկատմամբ, մանավանդ այն որը, յերբ խոսքը վերաբերում և Ֆրանսական հետևակի պատվին, վոր այնքան անհրաժեշտ և իր ազդի պատվի համար:

«Վերադարձեր տանելու պատրվակով շարքերը չքայքայել! Զեղնից յուրաքանչյուրը թող տողորվի այն մտքով, թե պետք և հազթի Անդլիայի վարձկաններին, վոր այնպես բուռն առելություն ունեն մեր ազդի դեմ: Այս հաղթությամբ կվերաջացնենք մեր արշավանքը, և կարող ենք վերադառնալ մեր ձմեռոցները, ու կդան միանալու մեզ Ֆրանսական նոր զորամասեր, վոր այժմ կաղմակերպվում են Ֆրանսայում. և այն ժամանակ իմ կնքած հաշտությունը արժանի կլինի իմ ժողովրդին, ձեզ և ինձ:

Նապոլեոնը:

<sup>1</sup> Գեղցն կայսրը:

## XIV

Առաջնայան ժամը հինգին դեռ բոլորովին մութն էր: Կենտրոնի զորքերը, պահեստիները և Բազրատիոնի աջ զորաթևը դեռ անշարժ էին: Բայց ձախ թևում հետևակի, հեծելազորի և հրետանու զորասյուները, — վոր առաջին հերթին իրենց պիտի իջնեյին բարձունքներից՝ ֆրանսական աջ թևի վրա հարձակվելու և նրան, ըստ դիսպոզիցիայի, Բոհեմյան լեռները շարտելու, — արդեն դարձնել, շարժման մեջ էին: Պարուկյների (վորոնց մեջ նետում էին բոլոր ավելորդ բաները) ծուխը աչք եր կուրացնում: Ետևա եր և մութ: Մպաները շտապ թեյում էին և նախաճաշում, զինվորները պարսիմաթ էին ծամծամում և, տաքանալու համար, վոտեռնին խփում էին դետին, հալաքվում էին խարուկյների առաջ և նրանց մեջ նետում հուլիի մնացորդները, աթոռներ, սեղաններ, անիմներ, տակառիկներ, բոլոր ավելորդ բաները, ինչ-չեյին կարող հետները վերցնել-տանել: Ավստրիացի ձիավորները շրջում էին սուս զորքի մեջ, վորպես կովի դուրս դալու: Նախախարապետներ: Հենց վոր ավստրիական սպան յերևում եր զնդի հրամանատարի կայանի մոտ, դունդն սկսում եր շարժվել, զինվորները վազում-գալիս էին խարուկյների մոտից, ձխամորձները թաղցնում էին կռիկների ճոցերում, տապրակները դնում էին սայլերի վրա, և հրացանները վերցնելով՝ սկսում էին շարքեր կազմել: Մպաները կոճկվում էին, թրերն ու պայուսակները քցում ուտները և, անցնում շարքերի առջևից: Գումակի զինվորներն ու սպասակները սայլերը բարձում էին, կապկպում և լծում: Աղյուստանաները, դամարտակների և զնդերի հրամանատարները ձի էին նստում, յերեսները խաշակնքում և վերջին հրամանները, ցուցմունքներն ու հանձնարարությունները տալիս մնացող դումակավարներին, և լսվում եր հազարավոր վոտների միորինակ զոպյունը: Զորասյուները շարժվում էին՝ չիմանալով ուր, և իրենց շրջապատող մարդկանց, ծխի ու խտացող մատախուղի պատճառով չեյին կարողանում տեսնել վոչ այն տեղը, վորից հեռանում էին, վոչ ել այն, ուր վոտք էին դնում:

Շարժման մեջ դառնվող զինվորը նույնքան շրջապատված, սահմանափակված և ու տարվում և իր զնդով, վորքան նավի վրա դառնվող նավագիր: Վորքան ել հեռուները դնա նա, վորքան ել խորթ, անհայտ ու վտանգավոր տարածություններ մտնի, նրա շուրջը — ինչպես նավադի համար միշտ և ամենուրեք իր նավի նույն տախտակամաններն են, նույն կայմերը, նույն ճոպանները, — միշտ և ամենուրեք նույն ընկերներն են, նույն շարքերը,

նույն վերակա Իվան Մխորիչը, վաշտային նույն Ժուլիկա շունը, նույն հրամանատարությունները: Զինվորը հազվագեղ է ցանկանում իմանալ-հանաչել այն տարածությունը, ուր գտնվում է իր նավթ-բայց ճակատամարտի արը, առաված դիտի թև ինչպես և վորակ-դից, դորքի բարեյական աշխարհում լավում է բոլորի համար մի ներքին ահեղ ձայն, վորը հնչեցնում է ինչ-վոր մի վճռական ու հաղթական բանի մատչումը և արտակարգ հետաքրքրություն և առաջնում նրանց մեջ: Ընկալաամարտի արերին խոտմանայց գին-վորները աշխատում են դուրս դալ իրենց գնդի շահերի շրջանա-կից, ահանջ են գնում, գիտում և աշահարեն հարցափորձում, թե ինչ և կատարվում իրենց շուրջը:

Մատախուզն այնպես խռացավ, վոր չնայած լուսանում էր, բայց տարբ քայլի վրա բան չեր յերևում: Թփերը թվում էին վիթխարի ծառեր, հարթ տեղերը — փոսեր ու գոտիվայրներ: Ամեն-նալք և ամեն կողմ տասը քայլի վրա անտեսանելի թշնամուն հանդիպելու վտանգը կար: Բայց զորայուները յերկար գնում էին միշտ նույն մատախուզի միջով, սարերից իջնելով ու սարերը բարձրանալով, այդինների ու ցանկապատերի մոտով անցնելով, նոր, անծանոթ տեղերով, առանց թշնամուն հանդիպելու: Գրան հակառակ, մեր գինվորները տեսնում, իմանում էին, վոր թե յետից, թե առջևից, թե ամեն կողմից նույն ուղղությամբ գնում են մեր սուս զորայուները: Յուրաքանչյուր գինվորի հադին հրճվում էր, յերբ իմանում էր, թե այնտեղ, այն անհայտ կողմը, ուր ինքն և գնում, գնում են և մերոնցից շատ-շատերը:

— Տես, Կուրսկի գնդի գինվորներն ել անցան, — խոսում էին շարքերում:

— Զտեսնված բան ա, ախպեր ջան, ենքան դորը ա հավաքվել: Իրիկունը, կրակ վառելու ժամանակ, վոր մտիկ արի՝ ձերը չեր յերևում: Մի խոսքով — Մոսկվա յե:

Թեև զորայուների պետերից վաշ-վոք չեր մոտենում շարքերին և չեր խոսում գինվորների հետ (զորապետները, ինչպես տեսանք ուղմական խորհրդում, լավ տրամադրություն մեջ էին յե և դժգոհ էին ձեռնարկվող կովից, ուստի և հրամաններ էին կատարում միայն և հոգ չէին տանում գինվորների տրամադրությունը բաժ-րացնելու մասին), այնուամենայնիվ գինվորները քայլում էին ուրախ-զվարթ, ինչպես միշտ, կովի գնալիս, մանավանդ հարձա-կողական կովի: Բայց մի ժամի չափ թանձր մատախուզի մեջ առաջ գնալով, դորքի մեծ մասն առիված են կանգ առնել, և շարքերին համակից կատարվող անկարգություն ախուր գիտակ-ցությունը: Ինչպես և այդ գիտակցությունը անցնում-համակում

մարդկանց,— շատ դժվար և վերոշել. բայց անկասկած և, վոր դա փոխանցվում և անսովոր կերպով — տարածվում և արագ, աննկատելի ու անարգել, ինչպես ջուրը ձորակում: Յեթե ուս զորքը լինել մենակ, առանց դաշնակիցների, այդ դեպքում, դուցե, դեռ շատ ժամանակ անցներ մինչև վոր անկարգության այդ դիտակցությունը դառնար ընդհանուր համոզում. բայց այժմ, առանձին դաշնակցությամբ ու բնական զգացումով անկարգության պատճառը վերագրելով անհասկացող գերմանացիներին, բոլորը համոզվեցին, վոր փաստակար շփոթ և տեղի ունենում, մի շփոթ, վոր առաջացրել էին յերշիկամուրները:

— Ինչ՞նչ յենք կանգնել: Առաջինս կտրել են: Թե ֆրանցուզին ենք հանդիպել:

— Ձե, եղպես բան չի յերևում: Նա լինել — կկրակել:

— Սրա համար էլին շտապեցնում, թե ճամպա ընկեք. հիմի ել ճամպա յենք ընկել, բերել են հանդի միջին կանգնեցրել անտեղի,— բոլորն եղ անիծած գերմանացիներն են սխալեցնում: Ինչ անհասկացող մարդիկ են:

— Դրա համար ել յես նրանց առաջ կքցեյի: Թե չե, ով գիտի, յետևում կուչ են դալիս: Դե հիմի արի ու անոթի կանգնի:

— Հը, շուտ առաջ կերթան: Հեծնազորն, ասում են, ճանապարհը կտրել և, — ասում եր մի սպա:

— Նհ, անիծյալ գերմանացիներ, իրենց յերկիրն ել չեն ճանաչում, — ասում եր մի ուրիշը:

— Դուք վճիռ դիվիզիայից եք՝ մոտենալով սղոռաց մի աղյուստանա:

— Տասութերորդ:

— Հապա ինչ՞նչ յեն այստեղ. դուք վազուց պետք և առաջ գնացած լինեյիք, հիմա մինչև յերեկո տեղ չեք հասնի:

— Այ քեզ հիմար կարգադրություն. իրենք ել չգիտեն ինչ են անում, — ասում եր սպան ու ձին քշում հեռանում:

Հետո ձիով անցնում եր մի գնեհրալ բարկացած, ոտար լեզվով ինչ-վոր գոռոզում:

— Տաֆա լաֆա, թե ինչ ա փնթփնթում, բան չես ջոկում, — ասում եր մի ղինվոր, հեռացող գնեհրալին տնազելով: — Դեղակահար կանեյի յես եղ սրիկաներին:

— Հրամայված և, վոր ժամը իննին տեղ հասած լինենք, բայց ճամպի կեսն ել չենք անցել: Այ քեզ կարգադրություն, — կըրկում էլին ամեն կողմից:

Յեվ յետանդի այն զգացումը, վորով զորքերը ճամպա ընկան կռիվ գնալու, սկսեց տեղի տալ դժգոհության ու զայրույթի՝ անմիա կարգադրությունների ու գերմանացիների դեմ:

Այս խառնաշփոթութեան պատճառն այն էր, վոր յերր ավարիական հեծելազորը ձախ թևում առաջ էր շարժուած, բարձր հրամանատարութեանը դատով, վոր ռուսական կենտրոնը աջ թևից անշափ հեռացել է և ամբողջ հեծելազորին հրամայեց աջակողմն անցնել: Մի քանի հազար դինվորներ էլին անցնում հետևակի սովերից, և հետևակն ստիպված էր սղասել:

Առջևում մի բնդհարում տեղի ունեցավ ավարիական զորասյունի առաջնորդի և ռուս ղեկերաւի միջև: Մուս գեներալը պոռում էր, պահանջելով, վոր հեծելազորը կանդ առնի. ավարիացին ապացուցում էր, վոր մեղավորն ինքը չի, այլ բարձր հրամանատարութեանը: Մինչ այդ՝ զորքը մնացել էր կանդնած, ձանձրացած ու հոգեպէս բնկնված: Մի ժամաշափ կանդ առնելուց հետո, վերջապէս, զորքերը շարժվեցին առաջ և սկսեցին իջնել սարի ստորոտը: Մատախուզը, վոր ցրվել էր սարի վրա, ավելի խտացել էր ներքեւում, այնտեղ, ուր իջնում էին զորքերը: Առջևում, մատախուզի մեջ լսվեց մի, յերկու կրակոց, նախ անհամասար տարրեր բնդմիջումներով — ճրթ-ճրթ... ճաթ, — ապա ավելի կանոնավոր ու ավելի հաճախ, և կոխվր ծայր տառվ Հոլզրախ դեռի շուրջը:

Չափաւելով, թե ներքեւում, դեռի մօտ կհանդիպեն թշնամուն և հանկարծ մատախուզի մեջ նրան հանդիպելով՝ սուս զորքը, վողեորութեան խոսք չլսելով բարձրագույն պետերից, վոր դըլ-խավորն է, թանձր մատախուզի մեջ իր առջևն ու շուրջը վոշինչ շտեմնելով, ծուլորեն ու դանդաղ կրակում էին, առաջ դնում և նորից կանդ առնում, ժամանակին հրամաններ չստանալով պետերից ու աղյուսանաններից, վորոնք, իրենց զորամասերը չդառնելով, խորխափում էին անձանոթ տեղում, մատախուզի մեջ: Ներքեւ իջած առաջին, յերկրորդ և յերրորդ զորասյուների համար կոխվեալայեւ սկսվեց: Չորրորդ զորասյունը, վորի հետ էր ինքը կուսուղովը, դառնվում էր Պրացի բարձունքների վրա:

Ստորոտներում, ուր կոխվե սկսվել էր, դեռ թանձր մատախուզ էր, վերերը պարդել էր, բայց դեռ վոշինչ չէր յերևում, թե ինչ և կատարվում առջևում: Արդոյք թշնամու բոլոր ուշժերը, ինչպէս մենք էինք յենթադրում, տասը վերստ հեռու էին մեզնից, թե այստեղ էին, մատախուզի այս շրջանումն, — մինչև ժամը իննը վոշ-վոք չդիտելու:

Առավոտյան ժամը 9-ն էր: Մատախուզը համատարած ծովի պէս բռնել էր սարի ստորոտը, բայց Շլապանից դուզի մօտ՝ բարձունքի վրա, ուր դառնվում էր նապոլեոնն՝ իր մարշալներով շրջապատված, բոլորովին պարզ էր: Նրա գլխավերեւ ծովավիում էր պայծառ կապույտ յերկինքը, և արևի ահագին զունդը, վիթխարի դատարկ

կարմիր լողանի նման, որորվում եր մառախուղի կաթնադույն ծովի յերեսին: Վոչ միայն ֆրանսական ամբողջ դորքը, այլև ինքը Նապոլեոնն իր շտաբով դառնվում էյին վոչ թե զետակի և Սոկրուհից և Շլապանից դյուզերի այն կողմը (վորոնց յետև մենք մտադրի էյին զորքի գլուխ ու կոխվ սկսել), այլ այն կողմը, մեր զորքերին այնքան մոտիկ, վոր Նապոլեոնը հասարակ աչքով կարող եր մեր զորքի մեջ հեծվորը տարրերել հետևակից: Նապոլեոնը կանգնած եր իր մարշալներից փոքր ինչ առաջ՝ իր փոքրիկ արարական մոխրադույն ձին նստած, կապույտ շինելը հագին, այն շինելը, վորով կատարել եր իտալական արշավանքը: Նա նայում եր մառախուղի ծովից դուրս յեկող բլուրներին, վորոնց վրա հեռվում շարժվում էյին ոռու զորքերը, ու ականջ եր դնում ձորակից լսվող հրացանածղության: Այդ ժամանակ նրա տակավին նիհար դեմքի և վոչ մի մկանք չեր շարժվում: Գայլուն աչքերը անշարժ սևեռել եր մի կետի: Նրա յենթադրությունները ճշտվեցին: Ռուս զորքերը մասամբ արդեն իշել էյին ձորը՝ լճակների ու լճերի մոտերքը, մասամբ ազատել էյին Պրացի այն բարձունքները, վորոնց վրա մտադիր եր հարձակվել և վորոնք իր դիրքի բանալին եր համարում: Նա մառախուղի մեջ տեսավ, թե ինչպես Պրաց դյուղի մոտ, յերկու սարի արանքով, միևնույն ուղղությամբ, սվինները փայլեցնելով, դեպի ձորն էյին գնում ոռու զորասյունները և մեկը մյուսի յետևից աներևութանում մառախուղի ծովում: Իրիկունն ստացած տեղեկություններից, դիշերը առաջավոր պահակետերից լսվող անիվների ու քայլերի ձայներից, ոռուսական զորքերի անկարող առաջխաղացումից նա պարզ տեսնում եր, վոր դաշնակիցներն իրեն շատ հեռու յեն կարծել, իրենցից շատ առաջ, վոր Պրացի մոտ շարժվող զորասյուները ոռուսական բանակի կենտրոնն են կազմում, և վոր կենտրոնը՝ բավականաչափ թուլացած և և ինքը կարող և աջող հարձակում գործել: Բայց դեռ չեր սկսում: Այսօր հանդիսավոր որ եր նրա համար — նրա թագադրության տարեդարձն եր: Առավոտյան դեմ քնեց մի քանի ժամ և արթնացավ առողջ, զվարթ, թարմ, մի այնպիսի լավ տրամադրության մեջ, յերբ ամեն ինչ հնարավոր և թվում և ամեն բան աջողվում և, ձի նստեց ու դուրս յեկավ դաշտը: Նա անշարժ կանգնել ու նայում եր մշուշի միջից յերևացող լեռնադադաթները, և նրա սառը դեմքի վրա կար աներկբա յերջանկության մի արտահայտություն, վոր ունենում և սիրահարը և բախտավոր տղան: Մարշալները կանգնել էյին նրա յետևը և չէյին համարձակվում ցրել նրա ուշադրությունը: Նա նայում եր մերթ Պրացի բարձունքներին, մերթ մառախուղից դուրս յեկող արևին:



Յերբ արեւը բուրբոսովն դուրս յեկավ մշուշից և իր կուրացուցիչ շողերը ցրեց դաշտի ու մասախուզի վրա (Նապոլեոնը կարծես հենց զրան եր սպասում ճակատամարտն սկսելու համար), նա ձենոցը հանեց զեղեցիկ սպիտակ ձեռից, նրանով նշան արավ մարշալներին և հրամայեց կռիվն սկսել: Մարշալներն՝ իրենց ագլուսառանգների հետ սլացան դանդաղան կողմեր և մի քանի բաղե հետ Փրանսական բանակի գլխավոր ուժերն արագորեն շարժվեցին զեպի Պրացի այն բարձունքները, վարտեղից ուսս դորքերը բաշխւմ էյին հետզհետե և իջնում ձախ կողմը դանդաղ ձորը:

## XV

Առավոտյան ժամը 8-ին կուսուղովը ձի նստած, չորրորդ դորայունի գլուխն անցած, դնաց Պրաց: Դա Միլորայովիչի այն դորայունն էր, վոր պեաք և բռներ Պրժերիշեակու և Լանժերոնի դորայունների տեղը, վորոնք արդեն ցած էյին իջել: Նա բարե ավեց առաջին զնդի դինժորներին և հրամայեց առաջ շարժվել, ցույց տալով, թե մտադիր և ինքն անձամբ առաջնորդել այդ դորայունը: Պրաց գլուզին հասնելով՝ նա կանգ առավ: Իշխան Անդրեյը, գլխավոր հրամանատարի ջրախումբը կազմող բաղմաթիվ անձանց հետ միասին, կանգնել էր նրա յեակ: Իշխան Անդրեյն իրեն զգում էր հուզված, զրդոված և դրա հետ միասին զուսպ հանդիստ, ինչպես լինում է մարդ վաղուց փափաքած վայելչանք հասնելու պահին: Նա հաստատապես համոզված էր, վոր այստր իր Տուլունի կամ Արկալյան կամուրջի որն և թե ինչպես կլինեք — չդիտեր, բայց համոզված էր հաստատապես, վոր կլինի Տեղը և մեր դորքերի դիրքը հայտնի յեր նրան, վորքան հայտնի կարող էր լինել մեր բանակից վորեւե մեկին: Իր սեփական ստրատեգիական պլանը, վորի իրադարձման մասին հիմա կարիք էլ չկար մտածելու, նա մոռացել էր: Այժմ Վեյրոտերի պլանին հասու յեղած՝ իշխան Անդրեյը մտածում էր, թե ինչ պատահականություններ կարող են տեղի ունենալ ու անում էր նոր յենթադրություններ, այնպիսի յենթադրություններ, վորոնց մեջ կարող էր հարկավորվել իր թափանցամտությունն ու վճռականությունը:

Ձախ կողմի վրա, ներքեւում, մառախուղի մեջ, հրացանածաղություն էր լավում աներևույթ դորքերի միջև: Իշխան Անդրեյին թվում էր, թե հենց այդտեղ էլ կկենտրոնանա ճակատամարտը, այդտեղ մերոնք խոչընդոտի կհանդիպեն և շինձ մի բրիգադով կամ դիվիզիայով կուղարկեն այնտեղ, — մտածում էր նա, — և այդտեղ էլ դրոշակը ձեռիս առաջ կերթամ և կջարգեմ կխորտակեմ, առջև յեղած ամեն բան:



Իշխան Անդրեյը չէր կարողանում անտարբեր նայել անցնող դումարառակների դրոշակներին: Այս կամ այն դրոշակին նայելով՝ նա մտածում էր. թերևս սա յե այն դրոշակը, վերով վիճակվելու յե ինձ առաջնորդել զորքը:

Դիշերվա մառախուղը առափոտյան դեմ բարձունքների վրա թողել էր միայն յեղյամ, վոր հետո փախվեց ցողի, իսկ ձորերում գետ փոխած էր մառախուղի կաթնազույն ծովը: Ձախակողմի այն ձորում, ուր իջել էյին մերոնք և վորտեղից հրացանաձուլթյուն էր լսվում, վոչինչ չէր յերևում: Բարձունքների վրա պարզ յերկինքն էր, իսկ աջ կողմի վրա՝ արևի ահագին զուռգը: Առջևում, հեռու, մառախուղի ծովի մյուս ափին, յերևում էյին անտառոտ բլուրներ, վորոնց վրա և պետք և լիներ թշնամու բանակը, այնտեղ յերևում էր նաև ինչ-վոր բան: Աջ կողմի վրա մառախուղի շրջանն էր մոտում գլորդիան՝ քայլերի ու անիմների ազմուկով և սվինների յերբեմնակի շողշողոցով. ձախ կողմից, դյուզից դենը հեծելազորի նույնպիսի բազմություններ էյին անցնում ու աներեվոյթթանում ծով-մառախուղում: Առջևից ու յեակից շարժվում էր հետևակը: Դիտավոր հրամանատարը կանգնել էր դյուզի պոնկին, և դորքերը անցնում էյին նրա առջևից: Այդ առափոտ Կուտուզովը հաջնած ու ջղայնացած էր թվում: Առջևից անցնող հետևակն առանց հրամանի կանգ առավ, յերևի նրա համար, վոր առջևում մի բան էր պատահել:

— Ասացեք, վերջապես, վոր դումարառակներ կազմեն և դյուզի բարձրքով դնան, — բարկացած ասավ Կուտուզովը իրեն մոտեցող գեներալին: — Ինչպես դուք չեք հասկանում, ձերդ գերազանցություն, վորդորմած տեր, վոր դյուզի այս նեղ փողոցով տարածվել չի կարելի, յերթ թշնամու դեմ ենք գնում:

— Եես մտադիր էյի դյուզից դուրս դասավորել զորքը, ձերդ բարձր գերազանցություն. — պատասխանեց գեներալը:

Կուտուզովը մաղձատ ժպտաց:

— Խելացի՛ բան եք մտածել — զորքը դասավորել թշնամու աչքի առաջ. հիանալի՛ յե:

— Թշնամին դեռ հեռու յե, ձերդ բարձր գերազանցություն: Դիսպոզիցիայի համաձայն...

— Դիսպոզիցիալ — մաղձատ պոռաց Կուտուզովը, — իսկ այդ թվ և ձեղ ասել... Հաճեցեք անել, ինչ ձեզ հրամայում են:

— Լսում եմ:

— Mon cher, — շնչաց իշխան Անդրեյին Նեսպիցկին, — le vieux est d'une humeur de chien<sup>1</sup>.

<sup>1</sup> Թիրելիս, մեր ձերուկի տրամադրությունը շատ վատ է:

Կուստուղովին սրաբշավ մտակցով ճերմակ համազգեստ հագած և կանաչ փետրավոր գլխարկով ավաարիացի մի սպա և կայսեր անունից հարցրեց, թե չորրորդ դարսյաւներ զնացել և արդյոք ճակատամարտի:

Կուստուղովին, առանց պատասխանելու, յերեսը շրջեց, և նայվածքը պատահաբար բնկավ կազբին կանգնած իշխան Անդրեյի վրա: Բալիսնսկուն տեսնելով՝ Կուստուղովը մեղմացրեց նայվածքի շար ու կծու արտահայտութիւնը, դիտակցելով կարծես, վոր առջուտանաւ մեղավոր չի կատարվածի համար: Յեւ, ավաարիական աղակտանախն չպատասխանելով, դարձավ Բալիսնսկուն.

— Allez voir, mon cher, si la troisième division a dépassé le village. Dites-lui de s'arrêter et d'attendre mes ordres<sup>1</sup>.

Հաղիվ իշխան Անդրեյը մի քանի քայլ եր արեւ, նորից կանգնեցրեց նրան:

— Et demandez-lui, si les tirailleurs sont postes, — ավելացրեց նա: — Ce qu'ils font, ce qu'ils font!<sup>2</sup> — ասով ինքն իրեն, զեռ չպատասխանելով ավաարիացուն:

Իշխան Անդրեյը ձին քշեց հանձնարարութիւն կատարելու: Հասնելով առջևից անցնող գումարտակներին, նա Յ-րդ գիվիդիան կանգնեցրեց և համոզեց, վոր իրոք մեր դորսյաւներն առջևում հրացանածիղներն շղթա չկա: Դնդի առջևից զնացող հրամանատարը շատ զարմացավ գլխավոր հրամանատարի իրեն հայտնված հրամանի վրա, թե հրացանածիղներին պէտք և ցրել պահադան տեղեր: Դնդի հրամանատարը կանգնել եր այդտեղ լիովին համառացած, թե իր առջևը զեռ դորք կա և թե թշնամին չի կարող 10 վերստից ավելի մոտ լինել: Իսկապես, առջևում վռչինչ չեւ յերևում, բացի ամայի տարածութիւնից, վոր թեքվում եր ցած ու ծածկված եր թանձր մառախուղով: Դիտաւոր հրամանատարի անունից հրամայելով ուղղել զանցառութիւնը, իշխան Անդրեյը սրաբշավ յետ յեկավ: Կուստուղովը նույն տեղը կանգնած, իր զեւր մարմնով պառավի պես թամբին ընկած, ծանր հորանջում եր աչքերը խփած: Զորքերն ել չէին շարժվում. կանգնել եյին հրացանները ցած բռնած:

— Լավ, լավ, — ասով նա իշխան Անդրեյին և դառնալով զեւերային, վոր ժամացույցը ձեռին բռնած ասում եր, թե ժամա-

<sup>1</sup> Դնացեք, սիրելիս, տեսեք յերրորդ գիվիդիան դուդից դուրս և յնկել արդյոք: Կարողեցեք կանգ առնի և հրամանէս սպասի:

<sup>2</sup> Հարցրեք նաև, հրացանածիղները տեղավորված են արդյոք: — Դնչ են անում զբանք, ինչ են անում:

նական և շարժիկու, վարժակեան ձախ թևի դորասյուններն արդեն իջել են ցած:

— Դեռ ժամանակ ունենք, ձերդ գերազանցություն, — հորանջելով ստալ Կուսուզովը: — Ժամանակ ունենք, — կրկնեց նա:

Այդ միջոցին Կուսուզովի յետև հեծվում լավեցին ուսուցիչ ձայներ, վորոնք արագ տարածվեցին ուսանական հարձակվող դորասյունների գծի ամբողջ յերկարությամբ: Յերևում էր, վոր նա, վորին դորքերն թուողած էին կանչում, գալիս էր արագությամբ: Յերբ Կուսուզովի մոտ գտնվող գունդն էլ թուողած կանչեց, նա մի փոքր առաջ դնաց և դեմքը կնճռելով նայեց: Պրացիներ ճանապարհով գալիս էր յերկներանդ ձիավորների մի հեծելավաշտ կարծես: Նրանցից յերկուսը խոշոր քայլերով արշավում էին իրար կողքի, բոլորից առաջ ընկած: Մեկը սև մուշկերով էր, ճերմակ ցցունքով, պոչը կտրած շիկակարմիր ձիու վրա, մյուսը՝ սպիտակ մուշկերով, սև ձիու վրա: Դրանք յերկու կայսրներն էին իրենց ջգրամբով: Կուսուզովը դորքի շարքերում գտնվող զինվորականի հասունի շեշտով, կանգնած դորքերին հրամայեց եղգաստած և, վողջունելով, մտանցավ կայսեր: Նրա ամբողջ կերպարանքն ու ձևերը միանգամայն փոխվեցին: Ընդունեց ստորոգրյալի և դատողություն չտվող մարդու տեսք: Հարգանքի անրնական արտահայտությամբ, վորը, յերևի, տհաճ տպավորություն արավ Ալեքսանդր կայսեր վրա, մտանցավ ու վողջունեց նրան:

Տհաճ տպավորությունը, պարզ յերկնքի յերեսին մնացած մասնաւորի մնացորդի պես, անցավ յերիտասարդ կայսեր յերջանիկ դեմքով ու չքացավ: Նա, տկարությունից հետո, այդ որը մի փոքր նիհար էր յերևում, քան Ումյուցի դաշտում, ուր արտասահմանում առաջին անգամ տեսավ նրան Բալկոնսկին: Բայց վեհության ու հեղության նույն հմայիչ արտահայտությունն էր իր մոխրադուրան չափերում, իսկ նուրբ շուրթերի վրա՝ դանազան տեսակի արտահայտություններով: Իմանուելն հնարավորությունը և բարեհաջի ու անմեղ յերիտասարդության դերակշռող արտահայտությունը:

Ումյուցի դորատեսին նա ավելի վեհ էր, այստեղ ավելի ուրախ ու յեռանդոտ: Այս յերեք վերստն արշավելուց կարմրել էր մի քիչ: ձին կանգնեցնելով՝ հանդատացած շունչ քաշեց և նայեց ջգրամբի անդամների իր նման ջհնել ու աշխույժ դեմքերին: Զարտորիժակին ու Նովոսիլցեք, թե իշխան Վալկոնսկին, թե Ստրոգանովը, թե մյուսները, բոլորը հարուստ հագնված, ուրախ յերիտասարդներ, դեղեցիկ, թարմ, հենց նոր թեթև քրտնած ձիերով, խոսակցելով ու ժպտալով, կանդ առան թագավորի յետև: Չրանց կայսրը, կարմիր յերկարադեմ յերիտասարդ, դարմանալի ուղիղ

նստել եր իր զեղեցիկ սև նմուշը և մտահոգ ու հանդարտ շուրջն եր նայում։ Նա իր սպիտակադեղևոտ աղյուսաճուղիներից մեկին կանչեց ու հարցրեց ինչ-վոր։ «Ճիշտը, վոր ժամին են սրանք դուրս յեկել», մտածեց իշխան Անդրեյը, դիտելով իր հին ծանոթին, մի ապրտավ, վոր չէր կարողանում գտել, հիշելով իր ունկնդրությունը Ֆրանսիայից կայսեր պալատում։ Կայսրների շքախմբում կային բնարժի կտրիճ պատվիրակներ, ուսաներ ու ամսորիացիներ՝ զվարդիական և մյուս զնդերից։ Դրանց սրանքում բերեցաորները ման ելին ամուսնացալիս ամուսնացալիս թագավորական պալատի մերթ։

Կարծես բաց լուսամուտից հանկարծ դաշտային թարմ ող լցվի հեղձուցիչ մթնոլորտով ի սենյակը, այդպիսի արագօրություն թողին Կուսուզովի անուրախ շտաբի վրա սրբաշավ յեկած այս փայլուն յերիտասարդները, իրենց հետ բերելով ջանքերը։

— Ինչո՞ւ չէր սկսում, Միխայիլ Լարիոնովիչ, — հազճեղ դարձավ Ալեքսանդր կայսրը Կուսուզովին, միևնույն ժամանակ հարգանքով նայելով Ֆրանսիայի կայսեր։

— Յեա սպասում եմ, ձերդ մեծություն, — պատասխանեց Կուսուզովը, հարգանքով առաջ թեքվելով։

Կայսրն ականջը թեքեց մատով, հանքերը թեթևակի՝ կրտեղով ու ցույց տալով, թե չլսեց։

— Սպասում եմ, ձերդ մեծություն, — կրկնեց Կուսուզովը (իշխան Անդրեյը նկատեց, վոր Կուսուզովի վերին շուրթը, այդ ասպասում եմ խոսքն ասելիս, ցնցվեց անբնական կերպով)։ — Բոլոր զորայունները զեռ չեն հավաքվել, ձերդ մեծություն։

Թագավորը լսեց, բայց այդ պատասխանն, ըստ յերևույթին, դուր չեկավ նրան։ Նա թոթվեց կորացած ուսերը, նայեց կողքին կանգնած Նովոսիլցեին, այդ հայացքով կարծես ասելով, թե զանգառվում և Կուսուզովից։

— Ձե վոր մենք Ցարիցին հրապարակում չենք, Միխայիլ Լարիոնովիչ, ուր զորահանդեսը չեն սկսում, մինչև բոլոր զնդերը չհավաքվեն, — ասավ թագավորը, նորից նայելով Ֆրանսիայի կայսեր, կարծես նրան հրավիրելով, յեթե վոչ մասնակցելու, զոնե լսելու, թե ինչ և ասում ինքը. բայց Ֆրանսիայի կայսրը, շարունակելով շուրջն նայել, չէր լսում։

— Դրա համար ել չեմ սկսում, թագավոր, — ասավ Կուսուզովը հնչուն ձայնով, կարծես չլսվելու հնարավորությունը կանխելով, և նրա զեմքի վրա ինչ-վոր մի բան ցնցվեց դարձյալ։ — Նրա համար ել չեմ սկսում, թագավոր, վորովհետև մենք վոչ զո-

բաճանդիսում ենք և վաղ ել Յարիցին հրապարակում, — արտասանեց նա պարզ ու վարդ:

Թաղավորի շքախմբի անդամները մի ակնթարթում իրար նայեցին, և նրանց դեմքերին յերևաց զժգոհություն ու հանդիմանություն: Եվարքան ել ձեր և, բայց չպետք և, չպետք և այդպես խոսեր, կարդացվում եր այդ դեմքերի վրա:

Թաղավորն ուշադիր նայեց Կուսուղովի աչքերին, սպասելով, թե դեռ ինչ կասի: Բայց Կուսուղովն իր հերթին, հարգանքով դուրս խոնարհելով, նույնպես, կարծես, սպասում եր: Լուսթյունը տեսց մոտ մի րոպե:

— Բայց, յեթև հրամայում եք, ձերդ մեծություն, — ասավ Կուսուղովը, դուրսը բարձրացնելով և նորից բուժ, իր դատողությունը հունեցող, բայց հնազանդող գեներալի նախկին տոնն ընդունելով:

Նա ձին տառջ քշեց և, գորսայունի պես Միլորադովիչին իր մոտ կանչելով, հարձակվելու հրաման տվեց:

Ջորքը նորից շարժվեց. Նովգորոդյան գնդի յերկու զուամարտակ և Ապշերոնյան գնդի մի զուամարտակ, Թաղավորի առջևից անցնելով, գնացին առաջ:

Ապշերոնյան զուամարտակի անցնելու միջոցին, կարմրադեմ Միլորադովիչը, առանց շինելի, մաւնդիրով և շքանշաններով, ցցունապարզ գլխարկը թեք դրած, առաջ սլացավ և, ձին յետ-յետ պահելով, վողջունեց Թաղավորին:

— Աստուծո աքնությամբ, գեներալ, — ասավ Թաղավորը նրան:

— Ma foi, sire, nous ferons ce que qui sera dans notre possibilité, sire<sup>1</sup>, — պատասխանեց նա դվարթ, բայց և այնպես հեղ-նական ժպիտ առաջացրեց Թաղավորի շքախմբի մարդկանց դեմքին՝ իր վրա ֆրանսական առողանությամբ:

Միլորադովիչը ձեռն դուրս թեքեց հանկարծ ու գնաց կանգնեց Թաղավորի յետև, փոքր ինչ հեռու: Ապշերոնցիները, Թաղավորի ներկայությունից հուզված, խրախուսված, աշխուժորեն ու համաչափ քայլով, անցան կայսրների ու նրանց շքախմբերի առջևից:

— Տղերք, — գոչեց Միլորադովիչը բարձր, ինքնավստահ ու զվարթ ձայնով, ըստ յերևույթին հրացանաձգությունից, սպասվող ճակատամարտից, և Թաղավորի առջևից անցնող ապշերոնցիներին՝ իր սուվորովյան ընկերների խիզախ տեսքից հուզված եր այն աստիճան, վոր Թաղավորի ներկայությունը մոռացավ: — Տղերք, առաջին գլուղը չե, վոր պիտի զբավեք, — բացականչեց նա:

<sup>1</sup> Ձերդ մեծություն, կաննք, ինչ ձեռներիցս կզա, ձերդ մեծություն:

— Ավելի կաշխատենք:

Թաղավորի ձին խրանեց այս անակնկալ աղաղակից: Այս ձին վոր դեռ Ռուսաստանում թաղավորին դորատեսներին չէր տանում: Առևտուրը կը դադարում, դիմանալով իր հեծվորի ձախ վտարից ցրված-անուշադիր հարվածներին, ականջները խլշում էր կրակոցների ձայնից, ճիշտ այնպես, ինչպես անում էր այդ Մարոյան դաշտում, չհասկանալով ինչ այդ լավոդ կրակոցների, ինչ Ֆրանց կայսեր սե ձիու հարեանաթխան նշանակաթխանը և ինչ էլ այն բոլորը, ինչ ասում, մատածում, գդում էր այդ որն իր վրա նըստողը:

Թաղավորը մոլորեց դեմքին դարձավ իր մերձավորներից մեկին և, խիզախ ապշերոնցիներին ցույց տալով, ինչ-վոր բան ասավ:

## XVI

Կուտուզովը, իր աղյուսանաների ազդեցությամբ, ձի նստած՝ քայլով դնաց հրացանակիրներին յետևեց:

Կես վերստաչափ դնալով՝ նա կանգ առավ մի մենավոր լեքալ տան մոտ (հովանորեն, նախկին պանդոկ էր), չերկու ճանապարհի ճյուղավորման անգում: Յերկու ճանապարհն էլ իջնում էին սարն ի վար, և չերկուսով էլ զորքեր էին դնում:

Մասախուզն սկսել էր ցրվել և, անորոշ կերպով, չերկու վերստ տարածության վրա, չերկում էին արդեն թշնամու զորքերը՝ դիմացի բարձունքներին: Զախակոզը, ներքում, հրացանածողությունն ավելի լսելի դարձավ: Կուտուզովը կանգ առավ, ավստրիացի զենքերալի հետ խոսակցելով: Իշխան Անդրեյը, փոքր ինչ հեռու կանգնած, նայում էր նրանց և, կամենալով հեռագիտակը լռեցրել աղյուսանախից, դիմեց նրան:

— Նայեցեք, նայեցեք, — ասավ այդ աղյուսանառը, նայելով ինչ թե հեռվում դռնվող զորքին, այլ իր առջև, սարի ստորոտին: — Ահա ֆրանսացիները:

Յերկու զենքերալն ու աղյուսանառը նայեցին, հեռագիտակն իրար ձեռից խլելով: Բուլորի դեմքերը փախվեցին և բուլորի դեմքի վրա սարսափ չերկաց: Ֆրանսացիներին չերկու վերստ հեռու էին կարծում, բայց հանկարծ, անսպասելի հայտնվեցին իրենց առաջ:

— Դա թշնամին ե... Վոչ... Այո, նայեցեք, նա յե... անկասկած... Սա լինչ բան է, — լավում էին այս ու այն կողմից:

Իշխան Անդրեյը հասարակ աչքով տեսավ ներքևում, աջ կողմից ապշերոնցիների դեմ յեկնող ֆրանսական մի զորասլան, վոր վաչ ավելի, քան հինգ հարյուր քայլ հեռու էին հառադովի կանգնած անդրից:



«Ահա վճռական վայրկյանը: Յեկալ իմ գործելու ժամը», մտածեց իշխան Անդրեյը և, ձիուն խփելով, մոտեցավ Կուսուղովին: «Ապշերոնցիներին պետք է կանգնեցնել, ձերդ բարձր գերազանցություն», ազադակեց նա: Բայց այդ վայրկյանին ամեն ինչ ծածկվեց ծխով, հրացաններ ճարճատեղին մոտիկ և, իշխան Անդրեյից յերկու քայլ հեռու, մեկն ազադակեց մանկական, վախեցած ձայնով. «Ե, յեղբայրներ բռններս պրծավ: Յեվ այդ ձայնը կարծես հրաման լինելու: Այդ ձայնը լսելով բոլորն սկսեցին փախչել:

Իբար խառնված, հետզհետե ավելացող բաղմությունները փախչում էին յետ, դեպի այն տեղը, ուր հինգ բողբ ատաջ դորքերն անցնում էին կայսրների առջևից: Վաղ միայն դժվար եր կանգնեցնել այդ բաղմությունը, այլև անկարելի յեր չէնթարկվել այդ լուռնապին և շնահանջել մյուսների հետ: Բալիստակին աշխատում եր միայն յետ չմնալ բաղմությունից և տարակուսած նայում եր չկարողանալով հասկանալ, թե ինչ և կատարվում իր առջև: Նետվիցիկն՝ բարկությունից կարմրած, այլափոխված դեմքով՝ դուռում եր Կուսուղովին, թե յեթե նա անմիջապես չհեռանա, գերի կընկնի անկասկած: Կուսուղովը կանգնած-մնաց նույն տեղը և, պատասխան չտալով, թաշկինակը հանեց դրպանից: Նրա այտից արյուն եր գնում: Իշխան Անդրեյը, մի կերպ ճամպա բանալով, մոտեցավ նրան:

— Դուք վիրավորված եք, — հարցրեց նա, ներքին ծնոտի զոզը հաղիվ զսպելով:

— Ահա ուր է իմ վերքը, — ասավ Կուսուղովը, թաշկինակը վիրավոր այտին սեղմելով ու փախչողներին մատնացույց անելով: — Կանգնեցրեք դրանց, — պոռաց նա և միևնույն ժամանակ, հավանորեն համոզվելով, վար նրանց կանգնեցնել անկարելի յե, ձիուն խփեց ու գնաց դեպի աջ:

Փախչողների նոր հորդած բաղմությունը նրան իր մեջ առավ ու յետ տարավ:

Զորքերը փախչում էին այնպիսի հոծ բաղմությամբ, վոր մի անդամ այդ բաղմության մեջն ընկնողը՝ դժվար կարող եր դուրս գալ: Մեկը դուռում եր. «Բնա, ի՞նչ ես յետ ընկնում»: Մի ուրիշը հենց այդտեղ, յետ դառնալով, կրակում եր ողի մեջ. յերրորդը խփում եր Կուսուղովի ձիուն: Մեծ դժվարությամբ բաղմության հոսանքից ազատվելով՝ Կուսուղովը իր շքախմբով, վորը պակասել եր կրկնակի չափով, գնաց դեպի ձախ, մոտիկից լսվող թնդանթաձգության կողմը: Փախչողների բաղմությունից ազատվելով, իշխան Անդրեյը, աշխատելով Կուսուղովից յետ չմնալ, սարի վայրեջքին, ձխի մեջ տեսավ դեռևս կրակող ոռոսական մարտկոցը և



վաղեվադ նրան մտեցող ֆրանսացիներին: Քիչ վերև կանգնած եր ուստական հետեակը, վոր վնչ առաջ եր դնում մարտկոցին ադ-նելու, վնչ ել յետ եր դնում՝ փախչողների ուղղությամբ: Զի նստած մի գններալ ջոկվեց այդ հետեակից ու մոտեցավ Կուսու-ղովին: Կուսուղովի շքախմբից մնացել եր միայն չորս հոգի: Բա-լորը գունատ և լուս իրար էյին նայում:

— Կանդնեցրեք այդ սրկաններին, — շնչատապա լինելով ասավ Կուսուղովը գնդի հրամանատարին՝ փախչողներին մատնացույց անելով: Բայց հենց այդ վայրկյանին, կարծես այդ խոսքերին ի պատիժ, դնդակները, թռչնակների յերամբ պես, սուլելով թռան-անցան գնդի և Կուսուղովի շքախմբի վրա:

Ֆրանսացիք հարձակվում էյին մարտկոցի վրա, բայց Կուսուղ-ովին տեսնելով, կրակ բացին նրա կողմը: Այդ համադարկի հե-տեանքով՝ գնդի հրամանատարը վտար բռնեց, մի քանի զինվոր ընկան, և զրոշակը բռնող յենթասպան՝ զրաշակը թողեց ձեռից, վոր ցնցվեց ու ընկավ, կախվեց հարեան զինվորների հրացան-ների վրա: Զինվորներն առանց հրամանի սկսեցին կրակել:

— Ոճի՛, — հուսահատորեն անքաց Կուսուղովն ու շուրջը նայեց: — Բալկանսկի. — շշնջաց նա, ծերության անզորությունն արտահայտող զոզգոջուհուն ձայնով, — Բալկանսկի, — շշնջաց նա, ցույց տալով քայքայված գումարտակը և թշնամուն, — սա լինչ բան և:

Բայց նա իր խոսքը դեռ չեր վերջացրել, իշխան Անդրեյն, զգալով վոր ամսթի և կատաղության արցունքները մոտենում են կոկորդին, ձիուց ցատկեց ու վաղեց դեպի զրոշակը:

— Տղերք, հառմջ, — գոռաց նա մանկան-ծղրտան ձայնով:

«Ահա նա», մտածեց իշխան Անդրեյը, զրոշակի ձողը բռնելով և հաճույքով լսելով զնդակների սուլոցը, վորոնք, ակներև, ուղղված էյին իր դեմ: Մի քանի զինվոր ընկան:

— Ուռւռ, — բացականչեց իշխան Անդրեյը, ծանր զրոշակը հա-զիվ ձեռին պահելով, և առաջ վաղեց մի անհրկրա հավատով, թե ամբողջ գումարտակը կհետևի իրեն:

Բակապես, նա մենակ առաջ վաղեց միայն մի քանի քայլ. դրա-նից հետո շարժվեց մի զինվոր, հետո մի ուրիշը և ապա ամբողջ գումարտակը շուռած կանչելով վաղեց առաջ ու անցավ նրանից: Գումարտակի յենթասպան մոտ վաղեց, բռնեց իշխան Անդրեյի ձեռին ծանրությունից ճոճվող զրոշակը, բայց անմիջապես սպան-վեց տեղնուսեղը: Իշխան Անդրեյը նորից բռնեց զրոշակը. ձողից բռնած քաշ տալով, վաղեց գումարտակի հետ: Իր առջև տեսավ մեր թնդանոթաձիգներին, վորոնցից վոմանք կովում էյին, մյուս-

ները թնդանոթները թողած՝ վազում դեպի իրեն. նա տեսավ և ֆրանսացի հետեակ ղինվորներին, վորոնք հրետանու ձիերին բռնելով՝ թնդանոթները դարձնում էյին: Իշխան Անդրեյը դուժմարտակի հետ միասին գտնվում եր թնդանոթներուց 20 քայլ հեռու: Նա լսում եր գնդակներին անընդհատ սուլոցը իր գլխավերև, և նրա տջ ու ձախ կողմը շարունակ հառաչում ու ընկնում էյին ղինվորները: Բայց իշխան Անդրեյը նրանց չեր նայում, նայում եր միայն, թե ինչ և կատարվում առջևում — մարտկոցում: Նա պարզ տեսնում եր արդեն կիվերը գլխին ծոված մի թնդանոթաձիգ ղինվորին, վոր փարատիչէ. ծայրը բռնած քաշում եր դեպի իրեն, իսկ մյուս ծայրը իր կողմն եր քաշում ֆրանսացի ղինվորը: Իշխան Անդրեյը պարզ տեսնում եր արդեն այդ յերկու ղինվորներին շփոթված և կատաղի արտահայտությունը, վորոնք, ըստ յերևույթին, չեյին հասկանում, թե ինչ են անում:

«Այդ ինչ են անում», — մտածեց իշխան Անդրեյը, նրանց նայելով. — ինչո՞ւ, այդ շեկ թնդանոթաձիգը՝ չի փախչում, յերբ հրացան չունի: Ինչո՞ւ ֆրանսացին նրան սվինահար չի անում: Բայց բավական և մի քանի քայլ անի, հրացանը ֆրանսացու միտը կընկնի և նրան սվինահար կանիք:

Արդարև, մի ուրիշ ֆրանսացի վազեկազ մոտեցավ կովոզներին, և շեկ թնդանոթաձիգի բախտը (վորը դեռ չեր հասկանում ինչ և սպասում իրեն, ու փարատիչը հանդիսավոր ձևով խլեց հակառակորդին) պիտի վճռվեր: Բայց իշխան Անդրեյը չտեսավ, թե այդ ինչով վերջացավ: Հանկարծ, նրան թվաց թե՛ մոտիկ գտնվող ղինվորներից մեկը մի ամուր փայտով խփեց իր գլխին: Դա մի քիչ ցավ պատճառեց, բայց, գլխավորապես, տհաճությունը, վորովհետև այդ ցավը զբաղեց իր ուշադրությունը և խանգարեց տեսնել այն, ինչի նայում եր:

«Սա ի՞նչ բան և. վայր եմ ընկնում. ծնկներս թուլանում են», մտածեց նա ու ընկավ մեջքի վրա: Նա սաչքերը բաց արավ, հույս ունենալով տեսնել, թե ինչով վերջացավ ֆրանսացիների ու թնդանոթաձիգների կռիվը, և ցանկանալով իմանալ՝ շեկ թնդանոթաձիգը սպանված և թե վոչ, թնդանոթները թշնամու ձեռն են ընկել, թե ազատվել են: Սակայն վոչինչ չտեսավ: Նրա գլխավերևն այլևս վոչինչ չկար, բացի յերկնքից — բարձր յերկնքից, վոր պարզ չեր, բայց և այնպես անսահման բարձր եր. նրա յերեսով հանդարտ սողում էյին մախրաղույն ամպերը: «Վորքան հանդիստ, անգործ ու հանդիսավոր և. բոլորովին այնպես չե, ինչպես վազելում միջոցին, — մտածեց իշխան Անդրեյը, — այնպես չե, յերբ վազում էյինք, գոռում ու կովում. բոլորովին այնպես չե, յերբ

Ֆրանսուային ու թնդանթաձիրքը՝ կատարած ու վախեցած դեմքերով՝ փարառելն ուղում էլին խլիլ իրար ձեռից, — ամպերն էլ բոլորովին այնպես չեն սողում այս բարձր, անսահման յերկնքի յերեսին։ Ի՞նչպես է վար յես առաջ չեմ տեսել այս բարձր յերկնքը։ Յե՛վ վարքան յերջանիկ եմ, վար տեսա վերջապես։ Այո, ամեն ինչ աւնայն է ու պատրանք, բացի այս անսահման յերկնքից։ Վաշինչ, վաշինչ չկա, նրանից բացի։ Բայց նույնիսկ այդ էլ չկա, վաշինչ չկա, բացի լուսթյունից ու անդորրությունից։ Յե՛վ փնտր ասածուհւ։

## XVII

Բաղրատիւնի աջ դորաթեւում ժամը 9-ին կտիվը դեռ չեր սկսւ-վել։ Զկամենալով համաձայնել Դուդորուկովի՝ կոխն սկսելու պահանջին և ցանկանալով պատասխանատուությունը հետացնել իրենից, իշխան Բաղրատիւնը Դուդորուկովին առաջարկեց՝ մարդ ուղարկել այդ մասին գլխավոր հրամանատարին հարցում անելու։ Բաղրատիւնը դիտել, վար յեթե սուրհանդակը ճանապարհին չըսպանվի (ինչ վար շատ հաժանեպան էր) և յեթե անդամ հրամանատարին դանի, ինչ-վար շատ դժվար էր, նա իրիկիմանից շուտ չեր կարող վերադառնալ, վորովհետեւ մի թեր մշտսից բաժանողը դրեթե 10 վերստ տարածություն էր։

Բաղրատիւնն իր խոշոր, վաշինչ արտահայտող, քնտա աչքերով նայեց իր չքաւմարին, և առաջինը նրա աչքին ընկալ Ռոստովի հաւաքմից ու հուշից մարդը դեմքը։ Բաղրատիւնը նրան ուղարկեց վարպես սուրհանդակ։

— Իսկ յեթե, ձերդ պայծառափայլություն, նորին մեծությանն աղկել շուտ հանդիպե՛մ, քանի գլխավոր հրամանատարին, — ասալ Ռոստովը, ձեր քաւնքին բռնած։

— Կարո՞ղ եք հայտնել նորին մեծության, — հապճեպ Բաղրատիւնին ընդհատելով, պատասխանեց Դուդորուկովը։

Հերթապահությունից հետո Ռոստովը կարողացել էր առավոտյան դեմ մի քանի ժամ քնել և այժմ իրեն դղում էր զվարթ, համարձակ ու վճռական։ շարժումների ճկունություն ունեն, հաժատում էր իր բախտին և լավ արամադրության մեջ էր, յերբ ամեն ինչ թվում է ճիշտ, ուրախալի ու հնարավոր։

Նրա բալը ցանկություններն իրականացան այդ առավոտ։ գլխավոր ճակատամարտը տեղի ունեցաւ։ Նա մասնակցեց դրան. բացի դրանից՝ նա պատվիրակի պաշտոն ունեն ամենաքաջ դեմերալի մաս։ Բացի դրանից, հատուկ հանձնարարությամբ դնում էր Կուտուզովի մոտ, և դուրս իրեն՝ Թադաւորի մոտ։ Առավոտը պայ-

ծառ եր, տակի ձին լավը: Հողեպես ուրախ եր և յերջանիկ: Հրամանս սասանալով նա ձիու գլուխը բաց թողեց ու արշավեց զորագծի յերկարությամբ: Սկզբում գնում եր Բաղրատիոնի այն զորքերի կողքով, վարձեց դեռ կովին չեյին մասնակցել և կանգնած մնացել եյին անշարժ. ապա նա վտռեց զրեց Ուվարովի հեծելազորի բռնած տարածությունը, և այստեղ արդեն նկատեց շարժում և կովի պատրաստվելու նշաններ. Ուվարովի հեծելազորից հեռանալով, նա պարզորոշ թնդանոթաձողություն ու հրանոթաձողություն լսեց առջևից: Հրաձողությունը քանի գնում սաստկանում եր:

Առավոտյան թարմ ոգւում լսվում եյին արդեն, վոչ թե առաջվա պես անհավասար ընդմիջումներով, յերկու-յերկու, յերեք-յերեք կրակոցներ և ապա մի կամ յերկու թնդանոթաձողություն, այլ լեռների լանջին, Պրացի առջևը լսվում եյին հրացանաձողության վորոտընդոտ համադարկեր, վարձեց ընդմիջում եյին թնդանոթի նույնպիսի դարկեր, այնպես, վոր յերբեմն մի քանի թնդանոթադարկեր արդեն վոչ թե ջոկվում եյին իրարից, այլ ձուլվում-միանում եյին մի ընդհանուր վորոտի մեջ:

Յերևում եր, թե ինչպես հրացանի կրակոցի ծխերը, մեկը մյուսի յետևից, կարծես վազում եյին լեռնալանջերով, և ինչպես թնդանոթների ծխերը դուրս եյին գալիս կծիկ դառած, ցրելվ եյին դալիս և ձուլվում միանում մեկը մյուսին: Ծխի մեջ վաշխող սվիններից նկատելի յեր հետևակի շարժվող բազմությունը և հրետանին՝ իր կանաչ արկղներով:

Ռոստովը բլրի վրա մի բազմ ձին կանգնեցրեց, վոր լավ տեսնի, թե ինչ և կատարվում. բայց վորքան ել աշաղրությունը լարում եր՝ վռչինչ չեր կարողանում հասկանալ, թե ինչ և կատարվում. ծխի մեջ ինչ-վոր մարդիկ եյին շարժվում. թե առջևում թե հետևում շարժվում եյին ինչ-վոր զորամասեր. բայց լինչու համար. ռժմեր եյին, թւր եյին գնում, — դժվար եր հասկանալ: Այդ տեսարանն ու լսվող կրակոցները նրա սրտում չեյին հարուցանում վոչ միայն վնասության ու յերկշտության զգացում, այլ, ընդհակառակը, յետանդ և վճռականություն եյին հաղորդում նրան:

«Դե, ելի՛, ելի՛...», — գիմում եր նա մտքում այդ ձայներին ու նորից ձիու գլուխը բաց թողնում զորագծի յերկարությամբ. բավական առաջ գնալով, հասավ մի տեղ, ուր զորքերն արդեն կովի մեջ եյին:

«Թե ինչ կլինի այնտեղ՝ չգիտեմ, բայց կարծում եմ ամեն ինչ լավ կլինի» մտածում եր Ռոստովը:

Ավստրիական ինչ-վոր զորաբաժիններից անցնելով, Ռոստովը նկատեց, վոր հետևյալ զորաբաժինն արդեն կովի մեջ եր: (Դա գվարդիան եր):

«Ամբիլի լավ, մոտիկից կնայեմ», մտածեց նա:

Նա գնում էր գրեթե առաջավոր դժոժի Մի քանի ձիավորներ զայլիս էլին իր կողմը՝ Դրանք մեր կայսեր անձնապահ ուսուցիչներն էին, վոր ցրիվ շարքերով վերադառնում էին հարձակումից: Ռոստովը տվեց անցավ դրանց, ակամա նկատեց արշունտոված մեկին, ու ձին քշեց առաջ:

«Ըմ ի՞նչ դարձն ե» մտածեց նա: Հաղիվ մի քանի հարյուր քայլ էր արել, ձախ կողմը՝ առջևից յերեսաց ամբողջ զաշտովը մեկ հեծելակիներ ձի հոծ բազմություն, բոլորը սև ձիերի վրա, ճերմակ փայլուն համազգեստներ հագած, անդանդալով զայլիս էին զեպ իրեն: Ռոստովը ձիու գլուխը բաց թողեց, վոր հեռանա այդ հեծելակիների ճանապարհից, և նա կանցներ, կհեռանար, յեթե նրանք շարունակ արագացնում էին իրենց ընթացքը, այնպես վոր մի քանի ձի արգեն արշավում էին: Ռոստովին հետզհետե ավելի լսելի էին զոսնում ձիերի վառնաբուրիք և զենքերի շրթկոցը: Ապա նա տեսավ նրանց ձիերին, նրանց կերպարանքը և մինչև իսկ նրանց զեմքերը: Դա մեր ընտիր և արտոնյալ հեծելավաշտն էր, վոր հարձակման էր գնում իր զեմն յեկող ֆրանսական հեծելազորի վրա:

Հեծելակիները արշավում էին, բայց տակավին ձիերի սանձը պահած: Ռոստովն արգեն տեսնում էր նրանց զեմքերը, և լսում ապալի հրամանը. «Մարշ, մարշ»: Սպաս ամբողջ թափով բաց եր թողել իր ալնվացեղ ձին: Ռոստովը՝ վախենալով նրանց վառի տակն ընկնելուց և ֆրանսացիներին զեմ հարձակման գիժոց դրժի հասնելով տարվելուց՝ ձիու ամբողջ թափով սլանում էր ֆրոնտի յերկարություն, բայց և այնպես չկարողացավ խուսափել նրանցից:

Ծայրի ձիավորը վիթխարի հասակով, մի չեշտ աղամարդ՝ Ռոստովին տեսնելով հանքերը կիսեց շարացած: Այդ հեծելակը, անշուշտ, զետին պիտի առաջներ Ռոստովին իր Բեղուխին հետ (Ռոստովն ինքն իրեն այնքան փոքր ու թույլ էր թվում այդ վիթխարի մարդկանց ու ձիերի հետ համեմատած), յեթե Ռոստովը գլխի չընկներ՝ նրա ձիու աչքի առաջ իր մարակը թափ տալու: Սև, ծանրամարմին ձին խրտենց՝ ականջները սրելով, բայց չեշտ հեծվորը ամբողջ ուժով խթանեց նրա կողերը, և ձին, պոչը թափ տալով ու վիզը յերկարելով սլացավ ավելի արագ: Հեծելավաշտը հաղիվ էր անցել նրա մոտից, յերբ Ռոստովը լսեց նրանց «ուռուռ»-ն, և յետ նայելով տեսավ, վոր նրանց առաջին շարքերը խառնվել են ոտար, հավանորեն ֆրանսական, կարմիր ու-

սաղիւրներով հեծեալակներին: Այնուհետեւ եւ վոչինչ չեր կարելի տեսնել, վորովհետեւ զրանից անմիջապէս հետո, չգիտես վորտեղից, թնդանոթներն սկսեցին կրակել, և ամեն ինչ կորով ձխի մեջ:

Այն բաղեային, յերբ հեծեալաշտն անցավ ու աներևոյթացավ ձխի մեջ, Ռոստովը տատանվեց՝ ձին քշի նրանց յետեից, թե դնա աշնանց, ուր պետք է գնար: Դա մեր ընտիր հեծեալաշտի այն փայլուն հարձակումն էր, վոր հիացում պատճառեց անգամ Ֆրանսացիներին: Ռոստովը հետո սարսափով լսեց, վոր բոլոր այդ վիթխարի զեղեցիկ տղամարդկանց բաղձաւթյունից, բոլոր այդ փայլուն, հաղարանոց ձիերի վրա նստած, հարուստ պատանիներից, սպաներից ու յաւնկերներից — հարձակումից հետո մնացել և միայն տատնութ հողի:

Էտախանձկու ինչ ունեմ, դեռ ժամանակ ունեմ և այժմ, թերեւս, տեսնեմ թաղավորին՝ մտածեց Ռոստովն ու սլացավ առաջ:

Դվարդիական հետեակին մոտենալով՝ նկատեց, վոր նրա գլխովեքից ու նրա մտտով ուսմբեր են թռչում, և այդ վոչ այնքան նրանից, վոր ուսմբերի ձայն լսեց, վորքան այն բանից, վոր զինվորների զեմքին անհանգստություն տեսավ, իսկ սպաների զեմքին մի անբնական, ռազմաշունչ հանդիսավորություն:

Դվարդիական հետեակ զնդի զծերից մեկի յետեից անցնելիս լսեց, վոր մի ձայն կանչում է իրեն:

— Ռոստով:

— Ինչ ե, — ասավ նա, Բորիսին չհանաչելով:

— Ի՞նչպէս ե, առաջավոր գիծն ենք յեկել, Միւր գունդը հարձակումից է վերադառնում, — ասավ Բորիսը առաջին անգամ կովի կրակի մեջ յեղած յերիտասարդի յերջանիկ ժպիտով:

Ռոստովը կանգ առավ:

— Ա՛յ թե ինչ, — ասավ նա: — Ե, ի՞նչպէս յեղավ:

— Յեռ մղեցինք, — աշխուժով ասավ Բորիսը, խոսելու տրամադիր: — Կարճը եւ յերեակայել:

Յեւ Բորիսը պատմեց, թե ինչպէս զվարդիան իր առջև զորք տեսնելով՝ ընդունում է այն ավատրիացիների տեղ և հանկարծ այդ զորքի արձակած ուսմբերից իմանում է, վոր ինքն առաջավոր զծումն է և անսպասելի պետք է կովի մեջ մտնի: Ռոստովը մինչև վերջը Բորիսին չլսեց և ձին քշեց:

— Ո՛ւր ես գնում, — հարցրեց Բորիսը:

— Նորին մեծության մոտ՝ հատուկ հանձնարարությամբ:

— Ահա նա, — ասավ Բորիսը, վորն այնպես լսեց, թե Ռոստովին հարկավոր է նորին բարձրությունը, նորին մեծության փոխարեն:



Յեղ նա ցույց տվեց մեծ իշխանին, վոր հարյուր քայլ հեռու, առգավարտը գլխին և արտառյալ հեծեկակի կաշի բաճկոնով, առսերը բարձրացրած առ հանքերը կիտած, պոռալով ինչ-վոր բան երատում ավարիական սղիտակազգեստ ու զուներտված սպային:

— Բայց դա մեծ իշխանն է, իսկ յես ազարկված եմ գլխավոր հրամանատարի կամ թագավորի մաս, — սուսց Ռոստովը և ուզեց ձին քշել:

— Կամ, կամ, — ձայն տվեց Բերդը, Բորիսի նման աշխույժ ձայնով, մյուս կողմից մոտ վազելով, — կամ, յես աջ ձեռիցս վորավորվեցի (սասով նա, ձեռի թաթը ցույց տալով, վոր արյունոտված եր և թաշկինակով կապած) և մնացի շարքերում: Կամ, սուրը ձախ ձեռքովս եմ բռնում. մեր Ֆոն-Բերգները ցեղով ապկառնեք են յեղեկ, կամ:

Բերդը դարձյալ ինչ-վոր բան սասով, բայց Ռոստովը, չլսելով, ձին քշեց առաջ:

Դվարդիան թողնելով առ մի զատարկ տարածության անցնելով, Ռոստովը, նորից առաջավոր գիծը չբնկնելու համար, ինչպես հեծեկակների հարձակման ժամանակ, զնաց պահեստների գծով, բավական հեռանալով այն տեղից, ուր տեղի յեր առնենում ամենասաստիկ հրացանաձգությունն առ թնդանթաձգությունը: Հանկարծ իր առջևը և մեր զորքերի յետևը, մի տեղում, ուր յերբեք չեր կարելի թշնամի յենթադրել, Ռոստովը լսեց մոտիկ հրացանաձգության ձայն:

«Սա ի՞նչ կարող է լինել: — Թշնամին մեր զորքերի թիկնեքն է անցել, — մտածեց Ռոստովը և սարսափ զգաց, թե իր և թե ամբողջ հակառակաբախ յելքի համար: — Սակայն, ինչ էլ ուղում է լինի, — մտածեց նա, — հիմա այլևս կարիք չկա առաջ անցնելու համար պոռույտ դարձել: Յես գլխավոր հրամանատարին պետք է լինտոեմ այստեղ, և յեթե ամեն ինչ կորած-վերջացած է, թող յես էլ կորչեմ բուրի հետ միասին»:

Հանկարծորեն Ռոստովին համակած վատ նախազգացումը հետքահետե ավելի յեր ճշտում, վորքան ավելի առաջ եր գնում Պրաց գյուղի այն կողմն ընկած տարածության մեջ, վորը բռնել էյին բազմատեսակ զորքերի բազմությունները:

— Ի՞նչ է պատահել: Ի՞նչ է պատահել: Ո՞ւմ վրա յեն կրակում: Ո՞վ է կրակում, — հարցնում եր Ռոստովը ռուս և ավստրիացի զինվորներին, վոր խառը խմբերով փախչում էյին իր առջևով, իր հանապարհը կտրելով:

— Ե՛, սատանան դիտի: Բուրին ջարդեց: Կորավ ամեն ինչ, — պատասխանում էյին նրան փախչող խմբերը ռուսերեն, գերմա-



ներեն և չեխերեն, վորոնք, Ռոստովի նման, չեյին հասկանում, թե այդտեղ ինչ և կատարվում:

— Պետք և խփել գերմանացիներին, — գոռում էր մեկը:

— Ե, գրողը տանի գրանց, — դավաճաններին:

— Zum Henker diese Russen...<sup>1</sup> — քրթմնջաց գերմանացին:

Ճանապարհով գնում էյին մի քանի վերավորներ, Հայհայանք, զոռզոռոց, հեծեծանք խառնվել էյին իրար մի ընդհանուր մոճոռոցի մեջ, Հրացանաձգութունը լոնց և, ինչպես Ռոստովը հետո իմացավ, իրար վրա կրակել էյին ուս և ավտարիացի զինվորները:

«Տեր աստված, սա ի՞նչ բան է, — մտածեց Ռոստովը: — Այն ել այստեղ, յերբ թագավորն ամեն բոլե կարող է տեսնել նրանց... Բայց վոչ, դա, յերևի, մի քանի սրիկաներ են: Սա կանցնի, սա այն չի, այդ չի կարող լինել, — մտածում էր նա: — Միայն թե շուտով, շուտ անցնեմ գնամ»:

Ռոստովը չէր կարողանում հաշտվել պարտության և փախուստի մտքին: Թեև ֆրանսական թնդանթներ ու զորքեր տեսավ Պրացի սարի վրա (հենց այն սարի վրա, ուր հրամայված էր զքտնել գլխավոր հրամանատարին), նա չէր կարողանում և չէր ուզում հավատալ դրան:

## XVIII

Ռոստովին հրամայված էր Կուտուզովին ու թագավորին փրկուել Պրաց դուռդի մոտերքը: Բայց այստեղ վոչ միայն նրանք չկային, չկար և վոչ մի զորապետ, այլ կային քայքայված զորքերի տարրեր բաղմություններ: Նա քչեց իր արդեն հողմած ձին, վորքան կարելի յե շուտ այս ամբոխից դուրս գալու, բայց վորքան առաջ էր գնում, ամբոխն այնքան խառնիճաղանճ էր դառնում: Յերբ դուրս յեկավ մեծ ճանապարհը — տեսավ այդտեղ խոնվել են ամեն տեսակի կռքեր ու սայլեր, ուս և ավտարիացի զինվորներ՝ ամեն տեսակ զորքից, վերավորներ և վոչ վերավորներ: Այս բոլորն աղմուկով և իրար խառնված առաջ էյին շարժվում Պրացի բարձունքներին դրված ֆրանսական մարտկոցներից յեկող ուժերերի ահեղ բամբուխների ներքո:

— Վորտեղ և թագավորը, վորտեղ և Կուտուզովը, — հարցնում էր Ռոստովը բոլորին, ուժ կարողանում էր կանգնեցնել, ու վոչ մեկից չէր կարողանում պատասխան ստանալ:

Վերջապես, մի զինվորի ոձիք բռնելով, ստիպեց պատասխանել իրեն:

<sup>1</sup> Գրողը տանի գրանցներն...

— Ե՛ր, ախպերս: Նրանք բոլորը վաղուց ենտեղ են, ճղեցին, — ասավ զինվորն ինչ-վոր բանի վրա ծիծաղելով և Ռոստովի ձեռից գուրս պրծնելով:

Թողնելով այդ զինվորին, վորն, ակներեհ, հարբած էր, Ռոստովը կանգնեցրեց մի կարեւոր անձնավորության սպասյակի թե բերեյ-տորի (ձիավար) ձին և սկսեց հարցաւորքներ: Սպասյակը Ռոստովին հայտնեց, թե մի ժամ առաջ թաղավորին կառքով ամենայն արա-դությամբ տարան այս ճամպով, և թե թաղավորը նանր վիրավոր-ված է:

— Զի կարող պատահել, — ասավ Ռոստովը, — յերեկ, ուրիշ մեկն և յեղել:

— Իմ աչքով տեսա, — ասավ սպասյակն ինքնավատան քմծի-ծաղով: — Յես վոր չճանաչեմ թաղավորին, ել ով պաի ճանաչի. Պետերբուրգում քանի անգամ այ ետղես եմ տեսել: Դույնը քցած, սպրդնած նստած էր կառեռում: Զորս սե ձի յեր լծած. յեկան զրդաւով անցան. յես վոր թաղավորական ձիերին ու Իլյա Իվա-նիչին չճանաչեմ, ել ով պաի ճանաչի. կարծեմ՝ կառապան Իլյան մենակ թաղավորի կառքն ա քշում ու վաչ թե ուրիշներ:

Ռոստովը թողեց զրան և ուղեց զնալ առաջ: Մտաից անցնող մի վիրավոր սպա զիմեց նրան:

— Դուք ճւմ եք փնտռում, — հարցրեց նա: — Դլխավոր հրամա-նատարի՞ն: Ռուսին սպանեց նրան մեր զնդում:

— Սպանված չե, վիրավորված է, — ուղղեց մի ուրիշ սպա:

— Ո՞վ, Կուտուզովսի և վիրավորված, — հարցրեց Ռոստովը:

— Կուտուզովը չե, ինչպես էր նրա անունը, — է, բոլորը մեկ և, միենուն և, կենդանի քիչ մարդ է մնացել: Այ զնացեք այնտեղ, այն գլուղի կողմը, բոլոր զորապետները հավաքված են այնտեղ, — ասավ այդ սպան, Դոստոեւրադիկ գլուղը ցույց տալով, ու անցավ-զնաց:

Ռոստովը քայլով առաջ գնաց, չիմանալով, թե ո՛ւր և գնում և ո՛ւմ է փնտռում: Թաղավորը վիրավորված է, ճակատամարտը տա-նուլ տրված: Այլևս անկարելի յեր զրան չհավատալ: Ռոստովը գնաց ցույց տրված ուղղությամբ, ուր հեռվում յերևում էր մի աշտարակ ու մի յեկեղեցի: Ել ո՛ւր և շտապում: Հիմա ել թնչ պիտի տաի թաղավորին ու Կուտուզովին, յեթե նույնիսկ նրանք վողջ լինեն և առողջ:

— Զերդ աղնվություն, ես ճամպով գնացեք, թե չե եղպես կապանեն, — ձայն տվեց նրան մի զինվոր: — Եղպես կապանէն:

— Ո՛ր, թնչ ես ասում, — ասավ մի ուրիշը: — Մնպես ճւր է գնում: Եսպես ավելի մոտ է:

Ռոստովը մի բողոք մտածեց ու զնաց հենց այն ուղղությամբ, ուր, դինավորների ասելով, պիտի սպանեյին:

Շիրմա միևնույն է. յերբ թագավորն արդեն վերավորված ե, յնա իմ անձը պիտի սպանանեմ մտածեց նա: Հասավ մի տարածություն, ուր շատ մարդ եր սպանվել՝ Պրացից փախչելիս: Ֆրանսացիներն այդ տեղը դեռ չեյին զբաղվել, իսկ ռուսները, ովքեր կենդանի եյին մնացել կամ վերավոր, այդտեղից վաղուց եյին հեռացել: Դաշտում, ամեն մի զենայատինսնալով տարածություն վրա, ինչպես լավ արտի խուրձեր, ընկած եյին տաս, տասնուհինգ սպանվածներ, վերավորներ: Վերավորները յերկ-յերկու, յերեք-յերեք սողում եյին միասին, և լավում եր նրանց անհաճո, յերբեմն, ինչպես Ռոստովին եր թվում, կեղծ աղաղակներն ու հեծեծանքները: Ռոստովը ձիու քայլերն արագացրեց՝ այս մարդկանց տառապանքները չտեսնելու համար, ու վախ զգաց: Վախեցավ վոչ թե իր կյանքի համար, այլ այն արիության համար, վոր պետք եր իրեն, և վորը, դիտել, չեր, կարող տանել այս դժբախտների տեսքը:

Ֆրանսացիները, վոր դադարեցրել եյին կրակը սպանվածներով ու վերավորներով ծածկված այդ դաշտի ուղղությամբ, — վորովհետե նրա վրա այլևս կենդանի մարդ չկար, — ձիավոր աղյուտանալին տեսնելով՝ թնդանոթն ուղղեցին նրա կողմը և մի քանի ռումբ արձակեցին: Այս սուլող, ահարկու ձայները և շրջապատող մեռելները սարսափելի աղավորություն արին Ռոստովի վրա և սրտում կարեկցություն զարթեցրին զեպի իրեն: Հիշեց մոր վերջին նամակը: Ե՛նչ կզգար նա, յեթե հիմա տեսներ ինձ այստեղ, այս դաշտում և ինձ վրա ուղղած թնդանոթները, մտածեց Ռոստովը:

Գոստիրբադեկ գյուղում թեև խառնված, բայց բարեկարգ ուսուցողներ կային, վորոնք հեռանում եյին ճակատամարտի դաշտից: Ֆրանսական ռումբերն այստեղ չեյին հասնում այլևս, և հրացանաձուլության ձայները թվում եյին հեռավոր: Այստեղ բոլորն արդեն պարզ տեսնում և ասում եյին, թե ճակատամարտը տանուլ և տրված: Ում ել դիմում եր Ռոստովը, վոչ-վոչ չեր կարողանում ասել, թե ուր և թագավորը, վորտեղ և Կուսուզովը: Վոմանք ասում եյին, թե թագավորի վերավորվելու լուրը ճիշտ ե, մյուսներն ասում եյին — վոչ, և այդ սուտ տարածված լուրը բացատրում եյին նրանով, թե, իրոք, թագավորի կարեւորվ կովի դաշտից յետ ե զնացել սպրդնած ու վախեցած որբ-հոգեմարշալ կոմս Տոլստոյը, վոր կայսեր շքախմբի հետ յեկել եր կովի դաշտը: Մի սպա Ռոստովին ասավ, թե գյուղի այն կողմը, զեպի ձախ, տեսել և բարձրագույն հրամանատարներից մեկին, և Ռոստովը զնաց այն կողմը, այլևս հույս չուռնենալով, թե կգտնի վորեւե մեկին, այլ

միայն նրա համար, վոր ինքն իր խղճի առաջ արդար լինի, Յերեք վերառ գնալով և առասպեան վերջին գործերն անցնելով, խրամատով շրջապատված մի բանջարանոցի մոտ՝ Ռոստովը տեսավ խրամատի դեմը կանգնած յերկու ձիավոր։ Մեկը, վոր գլխարկի վրա ճերմակ ցցուռք ուներ, Ռոստովին ծանոթ թվաց։ Մյուսը, անծանոթ հեծվորը, իր սքանչելի շիկակարմիր ձիով (այդ նաև Ռոստովին ծանոթ թվաց) մոտեցավ փոսին, խթանեց ձիուն և, սանձը թողնելով, հեշտությամբ թռավ-անցավ բանջարանոցի առույից։ Միայն ձիու յետին վոտները մի քիչ հող թափեցին հողաթմրից, Ձին դարձնելով նա նորից անցավ փոսը և հարդանքով գիմեց ցցուռադարդ գլխարկով ձիավորին, ակներե, առաջարկելով նրան՝ անել նույնը։ Ձիավորը, վորի կերպարանքն Ռոստովին ծանոթ թվաց և, չգիտես ինչու, ակամա դրավեց նրա ուշադրությունը, գլխով ու ձեռով բացասական շարժում արավ, և այդ շարժումից Ռոստովին իսկույն ճանաչեց իր պաշտելի թաղավորին, վորին վողբում եր քիչ առաջ։

«Բայց սա չի կարող նա լինել, այս ամայի դաշտի մեջ մենակ, մտածեց Ռոստովը։ Այդ միջոցին Ալեքսանդրը գլուխը դարձրեց, և Ռոստովը տեսավ իր հիշողության մեջ կենդանի աղավորված սիրելի դիմադները։ Թաղավորը դառնառ եր, այտերն ու աչքերը փոսեյին ընկել։ Բայց դիմադներն այդպես ափսիս դրավչաթյուն և հեղություն եյին ստացել։ Ռոստովն իրեն յերջանիկ զգաց, համարվելով, վոր թաղավորի վիրավորվելու լուրը ճիշտ չեր։ Նրան տեսնելով իսկ յերջանիկ եր։ Գիտեր, վոր կարող և, նույնիսկ պարտավոր և ազդակի դիմել նրան և հայտնել Դուդորուկովի պատվերը։

Բայց ինչպես սիրահար պատանին առաջին հանդիպումին դողում և և կարկամում, չհամարձակվելով պատմել իր անքուռ գիշերներին յերազները, ու աղջկա կողքին կանգնած, վախեցած շուրջն և նայում, փնտռելով բացատրությունը հետաձգելու և փրկառատի հնարավորություն, յերբ հասել և ցանկանալ բռնուն և նա կանգնած և մենակ՝ իր սիրելիի հետ. այնպես ել Ռոստովն այժմ աշխարհի մեջ իր ամենամեծ նպատակին հասնելով, չգիտեր ինչպես մոտենալ թաղավորին, և հազար ու մի յենթադրություններ եր անում, թե ինչու այդ անհարմար և, անպատշաճ ու անկարելի։

«Ինչպես! Կարծես ուրախ եմ ողորկել ափսթից, վոր նա մենակ և ու վնասության մեջ։ Տխրության ու վշտի այս վայրկյանին անծանոթ մեկը կարող և նրան անախորժ ու ծանր թվալ։ Հետո ինչ կարող եմ ասել նրան հիմա, յերբ նրան նայելուց իսկ սիրտս մարում և և լեզուս չորանում։ Յերեսկայության մեջ, թաղավորին գիմելու համար, պատրաստած բազմաթիվ ճառերից և ղուշ մեկը

չեր հիշում հիմա: Այդ ճառերը մեծ մասամբ ասվելու եյին այլ պայմաններում, մեծ մասամբ հաղթության բողոքներին և առավելապես ստացած վերքերից մեռնելու ժամին, այն վայրկյանին, յերբ թաղավորը շնորհակալություն պիտի հայտներ նրան՝ ցույց տված հերոսության համար, և ինքը, մեռնելով, պիտի արտահայտեր գործով ապացուցած իր սերը:

«Հետո ինչ պիտի հարցնեմ թաղավորին՝ աջ զորաթևին հրաման տալու ժամին, յերբ իրիկվա ժամի 4-ն և արգեն, և ճակատամարտը տանուլ տված: Վաչ, չպետք և մոտենամ նրան, բոլորովին: Զպետք և խանդարեմ նրա մտածումները: Հազար անգամ մեռնելն ավելի լավ է, քան թե նրա վատ հայացքին, վատ կարծիքին արժանանալը, — վերջեց Ռոստովը և տխրությամբ ու հուսահատությունը սրտում հեռացավ, շարունակ յետ դառնալով ու նայելով թաղավորին, վեր տակավին մնացել էր նույն անվճռական դիրքում:

Այն պահին, յերբ Ռոստովն այս յենթադրություններն անելով տխրությամբ հեռանում էր թաղավորից, կապիտան Փոն-Տոլը պատահարաբար յեկավ այդ նույն տեղը և, թաղավորին տեսնելով, մտնեցավ ուղղակի, իր ծառայությունն առաջարկեց և ոգնեց վառքով առուն անցնելու: Թաղավորը կամենալով հանդատանալ և իրեն մի փոքր տկար դրալով, նստեց խնձորենու տակ, և Տոլը կանգնած-մնաց նրա մոտ: Ռոստովը հեռվից նախանձով ու զղջումով տեսավ, թե ինչպես Փոն-Տոլը յերկար ու տաք-տաք խոսում էր թաղավորի հետ, ինչպես թաղավորն, ըստ յերևույթին, լաց լինելով, աչքերը ծածկեց ձեռով ու սեղմեց Տոլի ձեռքը:

«Նրա փոխարեն յես կարճոց եյի լինել», մտածեց Ռոստովը հաղիվ պահելով ափսոսանքի արցունքները և թաղավորին խղճալով, բոլորովին հուսահատ հեռացավ, չիմանալով, թե ուր և գնում և ինչու:

Նրա հուսահատությունը սաստկանում էր մանավանդ այն պատճառով, վերսկզբան զգում էր, վեր իր՝ վշտի պատճառը իր սեփական թուլությունն է:

Նա կարող էր... վոչ միայն կարող էր, այլև պարտավոր էր մտենալ թաղավորին: Յեվ դա միակ առիթն էր՝ իր նվիրվածությունը թաղավորին ցույց տալու: Յեվ ինքն այդ առիթը չաղտադորձեց... «Ի՞նչ արի յես», մտածեց նա: Յեվ նա ձիու գլուխը ծռեց ու սլացավ դեպի այն տեղը, ուր տեսել էր կայսեր. բայց փոսի այն կողմն այլևս մարդ չկար: Սայլեր ու կառքեր եյին անցնում միայն: Ռոստովը մի պաշարակիր զինվորից իմացավ, վեր կուտուղովի շտաբը գտնվում է մոտակա գյուղում, ուր գնում եյին մթերակիր սայլերը: Ռոստովը հետևեց դրանց:

Առջևից գնում եր Կուսուզովի ձիապանը, տանելով սթարներով ծածկված ձիերին: Ձիապանի յեակից գնում եր մի սայլ, սայլի յեակից մի ծուռ վոտներով ձերուների ճարտ ծառս՝ կարտուզը գլխին, կիսամուշտակը հագին:

— Տիտ, ա՛յ Տիտ, — ասով ձիապանը:

— Ի՞նչ ա, — ցրված հարցրեց ձերուներին:

— Տիտ, գնա բանիդ:

— Ի՛, հիմար, թե՛, — բարկացած թքելով ասով ձերուներին:

Բաժական տեղ գնացին անխոս, և նույն կատակը կրկնվեց նորից:

Իրիկվա ժամը հինգին մերձեք պարտուխյուն կրեցին բալոր ռազմակետերում: Հարյուրից ավելի թնդանոթներ ընկան ֆրանսացիների ձեռքը:

Պրժերիշկակին իր զորարանակով գնեք վար զրեց: Մյուս զորասյունները, իրենց կիսից ավելին կորցրած, նահանջում էյին անկարգ, իրար խառնված բազմություններով:

Լանմերձի և Դոխտուրովի զորամասերի ֆացորդները, իրար խառնված, կուտակվել էյին Աուգեստս գյուղի լճակների ամբարտակների վրա ու ափերին:

Ժամը 6-ին Աուգեստս ամբարտակի մոտ լսվում եր միայն ֆրանսացիների սաստիկ թնդանոթածղությունը. նրանք Պրացի բարձունքների վայրէջքին շարել էյին բազմաթիվ մարտկոցներ և ամբակսծում էյին մեր նահանջող զորքերը:

Վերջապահում Դոխտուրովն ու մյուսները, գումարտակները հաժաքելով, պաշտպանվում էյին ֆրանսական հեծելազորից, վոր հետապնդում եր մերձեց: Սկսեց մթնածուղ, Աուգեստի նեղլիկ ամբարտակի վրա, ուր յերկար տարիներ ձերուկ-ջաղացպանը հանդիստ նստում եր կառթը ձեռին, իսկ նրա թոռը, վերնաշապկի թեքերը քշտած, խաղում եր զույլում թփրտացող ձկան հետ. այդ ամբարտակի վրա, վորով բրդոտ փափախով և կապույտ բանկոն հագած մորաֆները իրենց զույգ յեղներով, ցորենարարձ սայլերը խաղաղ բերում էյին ջրաղաց, և ավրաթաթախ ու սպիտակած սայլերով վերադառնում նույն ամբարտակով, — այդ նեղ ամբարտակի վրա այժմ մթերակիր սայլերի ու թնդանոթների արանքում, ձիերի և անիվների արանքում խմբվել էյին մահվան յերկյուղից ալափոխված մարդիկ, վոր միմյանց ճնշելով, անցնելով մահացողների վրայից, իրար մեռցնում, վոտնակոխ էյին անում նրա համար միայն, վորպեսզի մի քանի քայլ անելուց հետո, իրենք ճիշտ նույնպես սպանվեն:



Յուրաքանչյուր տասը վայրկյանը մի անգամ մի ուսմը կամ նոսակ, ողբ ճնշելով, դալիս պայթում եր այս խիտ ամբոխի մեջ, սպանում մարդկանց և արյունաթաթախ անում մոտիկ գտնվող ներին: Այստեղ եր ձեռից վիրավորված հետիոտն, Դուլտովը իր վաշտի (նա արդեն սպայի աստիճան եր ստացել) տասի չափ զինվորի հետ և նրա գնդի հրամանատարը՝ ձի նստած. այս եր նրանց ամբողջ գնդի մնացորդը: Ամբոխի հասանքով տարված՝ նրանք սեղմվել էյին ամբարտակի մուտքի առաջ և, ամեն կողմից ճնշված, կանգ էյին առել, վորովհետև առջևում մի ձի յեր ընկել թնդանոթի տակ, և մարդիկ աշխատում էյին դուրս քաշել նրան: Նրանց յետև ուսմըն սպանեց ինչ-վոր մեկին, մի ուրիշն ընկավ իրենց ահլև և արյան շիթեր ցանեց Դուլտովի վրա: Ամբոխը հուսահատ առաջացավ, սեղմվեց, մի քանի քայլ արավ և նորից կանգ առավ:

Յուրաքանչյուրը մտածում եր, յեթև հարյուր քայլ ել առաջ գնա, անշուշտ, կիրկվի, իսկ յեթև յերկու բողե ել մնա, կորած և անկասկած:

Դուլտովն ամբոխի մեջտեղից դուրս յեկավ, նետվեց ամբարտակի ծայրն ու վազեց կանգնեց լճակի յերեսը բռնող սառցի վրա:

— Թնդանոթն այս կողմը դարձրեք, — ձայն տվեց նա, թռչկոտելով սառցի վրա, վորը ճոճուսում եր նրա վոտների տակ, — դարձրեք դեսը: Դիմանում ե...

Սառուցը պահում եր նրան, բայց ճկում եր և ճոճուսում, և պարզ եր, վոր վոչ միայն թնդանոթին ու ժողովրդի բազմությանը չեր դիմանա, այլև հենց իր Դուլտովի ծանրության տակ խորտակվելու յեր անմիջապես: Մարդիկ նայում էյին նրան և սեղմվում ափին, սիրտ չանելով վոտ գնել սառուցի վրա: Գնդի հրամանատարը, վոր ձին նստած-կանգնած եր ամբարտակի մուտքի առաջ, ձեռը բարձրացրեց և բերանը բաց արավ Դուլտովին բան տեսելու: Հանկարծ ամբոխի գլխավերև, շատ ցած, մի ուսմը շաչեց. բոլորը գլուխները կոացրին: Ինչ-վոր մի բան շրպպաց, և գններալն իր ձիու հետ ընկավ արյան մեջ, վոչ-վոք չնայեց գններալին, վոչ-վոք չմտածեց նրան տեղից բարձրացնելու:

— Գնացե՛ք սառուցի վրա, գնացե՛ք սառուցով: Գնացե՛ք, չեք լսում: Գնացե՛ք, — հանկարծ, գններալին դիպչող ուսմրից հետո, լսվեցին բազմաթիվ ձայներ, վոր իրենք ել չէյին իմանում, թե ինչու էյին ճշում:

Յետևը գտնվող թնդանոթներից մեկը, վոր ուղում եր տեղավորվել ամբարտակի վրա, քշեց դեպի սառուցը: Զինվորների խմբերը ամբարտակից վազեցին դեպի սառած լիճը: Առաջ անցած զինվորներից մեկի վոտի տակ սառուցը ճաքեց և զինվորի մի վոտն



ընկալ ջուրը, նա ուղեց իրեն հավաքել, բայց մինչև դոտկատեղը խրվեց: Մոտիկ կանգնած գինձորները կանգ առան, թնդանալը վարդոզ գինձորը կանգնեցրեց իր ձիերը, բայց յետեից դեռ ազագակում էին: Վրնացեք սառուցով, ինչ էք կանգնել, գնացե՛ք, գնացե՛ք: Ու բազմաթյան մեջ լավում էին սարսափի ճիչեր: Թնդանալը շրջապատող գինձորները քշում, խփում էին ձիերին, վոր թեքվին, գնան սառուցով: Ձիերը ափից շարժվեցին զեպի սառուցը: Հանկարծ, հետիտե գինձորներին տակ գանձող սառուցը կոտրվեց և վրան դանձող քառսուն հոդին նեավեցին յետ ու առաջ, իրար ջրերի մեջ քցելով:

Ռումերը շարունակում էին նույն համաշափաթյամբ շահել ու խփել սառուցին, ջրին և մանավանդ ամբարդակը, լճակն ու ափը ծածկող բազմաթյան:

## XIX

Պրացի սարի վրա, հենց այնտեղ, ուր ընկալ նա դրոշակը ձեռին, պատկած էր իշխան Անդրեյ Բալկոնսկին, արշաճաքամ լինելով, և ինքն էլ այդ չիմանալով, հեծեծում էր կամացուկ ու մանկան վողբադին հեծեծանքով:

Յերեկոյան դեմ նրա հեծեծանքը դադարեց և նա բուրբուլին լսեց: Ձգիտեր վորքան յերկար տեսց իր ինքնամոռացումը: Հանկարծ իրեն նորից վողջ զգաց և դրա հետ միասին՝ մի տանջող ու այլող գլխացավ:

ՔՄԼ-ը և նա, այն բարձր յերկինքը, վոր չեյի տեսել մինչև այժմ և տեսա քիչ առաջ, յեղավ նրա առաջին մտածությունը: ՔԱյս տանջանքը նույնպես չեյի զգում, — մտածեց նա: — Այո, յես վոչինչ, վոչինչ չեմ իմացել մինչև այժմ: Բայց վորտե՞ղ եմ:

Նա սկսեց ականջ դնել, ու լսեց մտանցող ձիերի վռտնատրոփ և ֆրանսերեն խոսակցություն: Իշխան Անդրեյն աչքերը բաց արավ: Նրա գլխավերևը դարձյալ նույն բարձր յերկինքն էր՝ ավելի ևս բարձր լողացող ամպերով, վորանց միջից տեսնվում էր կապույտին տվող անսահմանությունը: Նա գլուխը չթեքեց և չտեսավ նրանց, ովքեր, — ինչպես կարելի չէր յենթադրել սմբակների ու ձայների ազմուկից, — մտանցան իրեն ու կանգ առան:

Մոտեցող ձիավորները — Նապոլեոնը և իր յերկու աղյուստանան էյին: Բռնապարտը, ճակատամարտի դաշտը շրջելով, տալիս էր իր վերջին հրամանները՝ Առգետտի ամբարտակն ուժակոտող մարտկոցն ուժեղացնելու վերաբերմամբ, և դիտում էր սպանվածներին ու կոպի դաշտում մնացած վիրավորներին:

— De beaux hommes!<sup>1</sup> — ասով Նապոլեոնը, նայելով սպանված ուսու գրենադերին, վոր յերեսը հողի մեջ խրած և ծոծրակը սևացած պառկել էր փորի վրա, փայտացած ձեռք իրենից հեռու պարզած:

— Les munitions des pièces de position sont épuisées, sire!<sup>2</sup> — ասով այդ միջոցին աղյուտանալը, վոր դալիս եր Առաքեստն ոմբակոծող մարտկոցից:

— Faites avancer celles de la réserve<sup>3</sup>, — ասով Նապոլեոնը ու, մի քանի քայլ ասով դնալով, կանգ առավ իշխան Անդրեյի գլխավերև, վոր պառկած եր մեջքի վրա, գրոշակի ձողը կողքին (գրոշակն արդեն, վորպես հաղթանիշ, տարել էյին ֆրանսուցիք):

— Voilà une belle mort<sup>4</sup>, — ասով Նապոլեոնը, Բալկոնսկուն գիտելով:

Իշխան Անդրեյը հասկացավ, վոր այդ խոսքերն իրեն են վերաբերում և վոր այդ ասողը Նապոլեոնն և Նա լսեց, թե ինչպես sire<sup>5</sup> էյին կոչում այդ խոսքերն ասողին: Բայց նա այդ խոսքերը լսեց այնպես, ինչպես ճանճի տողոցը կլսեր: Նա վսշ միայն չհետաքրքրվեց նրանցով, այլև չնկատեց ել, ու անմիջապես մոռացավ նրանց: Նրա գլուխն այրվում եր. զգում եր, վոր արյունաքամ ելինում, և իր գլխավերև տեսնում եր միայն հեռու-հեռու, բարձր ու հավերժական յերկինքը: Նա դիտեր, վոր դա Նապոլեոնն ե — իր հերոսը, բայց այդ վայրկյանին Նապոլեոնը նրան թվում եր փոքրիկ, չնչին մի մարդ՝ համեմատությամբ այն բանի, ինչ կատարվում եր իր հոգու և այս բարձր, լողացող ամպերով անհուն երկնքի միջև: Այդ բոլորին նրա համար բոլորովին մեկ եր, թե ի՞նչ ե կանգնած իր գլխավերև, ինչ են խոսում իր մասին. ուրախ եր միայն, վոր մարդիկ կանգ են առել իր մոտ, և կուղեր միայն, վոր այդ մարդիկ ողնեն իրեն և կյանք տան, կյանք, վոր այնքան սքանչելի յեր թվում նրան, վորովհետև այժմ բոլորովին այլ կերպ եր ըմբռնում այն: Նա հավաքեց իր բոլոր ուշիները, վորպեսզի շարժվի և մի վորևե ձայն հանի: Թույլ կերպով շարժեց վոտը և արձակեց մի թույլ, հիվանդադին հեծեմանք, վորից ինքն իսկ խզճահարվեց:

— Ա՛, վողջ ե, — ասով Նապոլեոնը: — Վերցրեք այս յերիտասարդին, ce jeune homme, և տարեք վիրակապույթյան կայանը:

<sup>1</sup> Գեղեցիկ տղամարդիկ:

<sup>2</sup> Ծարակոցային ուսմբեր այլևս չկան, ձեռք մեծություն:

<sup>3</sup> Հրամայեցեք պահեստի ուսմբերից բերեն:

<sup>4</sup> Ահա մի գեղեցիկ մահ:

<sup>5</sup> Զեռք մեծություն:

Այս ասելով Նապոլեոնը դնաց զեպի մարշալ Լանը, վոր գլխարկը հանած, ժպտալով և հազթաւթյունը շնորհալորելով մոտենում եր կայսեր:

Իշխան Անդրեյն այնուհետեւ բան չեր հիշում. պատգարակի վրտ դնելու սարսափելի ցավերից, փոխադրութեան ցնցումներից և վիրակապութեան կայանում վերքը դնելուց — նա դիտակցութեանը կորցրեց: Ուշքի չեկաւ միայն յերեկոյան դեմ, յերբ նրան, մյուս վիրավոր ու գերի ուսն սովաներին միացնելով, տարան հիւանդանոց: Այս փոխադրութեան միջոցին նա փոքր ինչ թարմացած զգաց իրեն և կարողացաւ շուրջը նայել և մինչեւ իսկ խոսել:

Առաջին խոսքերը, վոր լսեց ուշքի գալիս — դա ֆրանսացի ուղեկցորդ սպայի խոսքերն էին:

— Պեռք և այտակ կանգ առնել. կայսրը հիմա պիտի անցնի. նա բաժականութեան կզգա այս գերի պարտններին տեսնելով:

— Այսոր գերիներն այնքան շատ են, համարյա ամբողջ ուսն բանակը գերի չե. այնպես վոր, նա, յերեկ, ձանձրացած կլինի, — ասով մի ուրիշ սպա:

— Այնուամենայնիւ: Այս մեկը, ասում են, Ալեքսանդր կայսեր ամբողջ զփարզեալի հրամանատարն է, — ասով առաջին սպան, ցույց տալով արտոնյալ հեծքնդի ճերմակ նշանազդեհատով ուսն վիրավոր սպային:

Բալկոնսկին ճանաչեց իշխան Ռեպնինին, վորին հանդիպել եր Պետերբուրգի բարձր շրջաններում: Նրա կողքին կանգնած եր մի ուրիշը — 19 տարեկան մի տղա, նույնպես արտոնյալ հեծքնդի վիրավոր սպա:

Բռնապարտը մտեցաւ քառասմբակ ու ձին կանգնեցրեց:

— Ո՞վ և ավագադու՞յնը, — հարցրեց նա, գերիներին տեսնելով: Ասին՝ գնդապետ իշխան Ռեպնինը:

— Դճւք եք Ալեքսանդր կայսեր արտոնյալ հեծքնդի հրամանատարը, — հարցրեց Նապոլեոնը:

— Յես հեծելավաշտի հրամանատար եյի, — պատասխանեց Ռեպնինը:

— Ձեր դունդը պատվով կատարեց իր պարտքը, — ասաց Նապոլեոնը:

— Մեծ զորավարի գովեստը զինվորի համար լավագույն պարգէն է, — ասով Ռեպնինը:

— Այդ գովեստը տալիս եմ սիրով, — ասով Նապոլեոնը: — Ո՞վ և ձեր կողքի յերիտասարդը:

Իշխան Ռեպնինը տվեց տեղակալ սպա Սուխտելնի անունը: Նրան նայելով՝ Նապոլեոնը ժպտալով ասով:

— Il est venu bien jeune se frotter à nous<sup>1</sup>.

— Ձահկությունը չի խանդարում քաջ լինելուն, — խոսեց Սուխոեկենն ընդհատովոյ ձայնով:

— Սքանչելի պատասխան, — ասավ Նապոլեոնը: — Յերիտասարդ, դուք շատ առաջ կերթաք:

Իշխան Անդրեյը, վորին (գերի հաղթանիշների պատկերը լիակատար դարձնելու համար) ցուցադրել էին առջևում՝ կայսերն ի տես, չէր կարող նրա ուշադրութեանը չգրավել: Նապոլեոնն, ըստ յերևույթին, հիշեց վոր նրան տեսել է դաշտում և, նրան դառնալով, դորձածեց այն յերիտասարդ բառը, — jeune homme, վորով Բալկոնսկին առաջին անգամ տպավորվել էր նրա հիշողութեան մեջ:

— Et vous, jeune homme? Ե, իսկ դժեք, յերիտասարդ, — դարձավ Նապոլեոնը նրան՝ Քնչպես եք զգում, ձեզ, mon brave?

Ձնայած, վոր հինգ բոլե ասաջ իշխան Անդրեյին իրեն փոխադրող ղեկավարներին կարող էր մի քանի խոսք ասել, բայց հիմա, աչքերը հառելով Նապոլեոնի վրա, լռում էր... Նրան այդ վայրկյանից այնքան չնչին էին թվում Նապոլեոնին զբաղեցնող խնդիրները, այնքան մանր, աննշան էր թվում նրան իր հերոսը՝ իր մանր անափառութեամբ և հաղթութեան ուրախութեամբ — համեմատած այն բարձր, արդար ու բարի յերկնքի հետ, վորը տեսնում էր, — և հասկացավ, վոր ինքը չի կարող պատասխանել նրան:

Յեկ առհասարակ նրան ամեն ինչ թվում էր անողուտ ու չքնչին՝ համեմատած մտքերի այն վեհ ու հոյակապ աշխարհի հետ, վոր առաջացրել էին նրա մեջ արյունաքամութեանը, ուժասպառութեանը, տառապանքը և մոտալուտ մահը: Նայելով Նապոլեոնի աչքերին՝ իշխան Անդրեյը մտածում էր փառքի ու մեծութեան վոշնչութեան մասին, կյանքի վոշնչութեան մասին, կյանքի, վորի նշանակութեանը վոշնչոք չի կարողացել հասկանալ, և՛ մանավանդ՝ մահվան վոշնչութեան մասին, վորի իմաստն ապրողներից վոշնչոք չի կարողացել հասկանալ ու բացատրել:

Կայսրը, պատասխան չտանալով, յերեսը շրջեց և, հեռանալով, գիմեց իր զորապետներից մեկին:

— Թող հոգ տանեն այս պարոնների մասին և տանեն իմ բացօթյազը. և թող իմ բժիշկը՝ Լաուեյը քննի սրանց վերքերը: Յտեսութեան, իշխան Ռեպին, — և նա, ձին շարժելով, քառաթորփ հեռացավ:

<sup>1</sup> Այդքան փոքր էք և այժմյանից ուղում եք՝ մեզ հետ չափվել:

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՅԵՎ  
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ


խոստանում: Առավոտյան դեմ բոլոր խոկուքներն ու մտապատկերները խառնվեցին ու միաձուլվեցին այն անհուշության ու ինքնամոռացության քառսի ու խավարի մեջ, վորոնք, նապուլեոնի բժիշկ Լաոեյի հավանական յենթադրությամբ, ավելի շուտ պետք է լիբըջանային մահով, քան ապաքինումով:

C'est un sujet nerveux et bilieux, — ասավ Լաոեյը, — il n'en rchappera pas<sup>1</sup>.

Իշխան Անդրեյը, մյուս անհուսալի վիրավորների հետ միասին, հանձնվեց բնակիչների խնամքին:

## ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

<sup>1</sup> Դա ջղային է մազձուտ մարդ է. չի առողջանալ:






խոստանում: Առավոտյան դեմ բոլոր խոկումներն ու մտապատկերները խառնվեցին ու միաձուլվեցին այն անհուշության ու ինքնամոռացության քառսի ու խավարի մեջ, վերոնք, նապուհոնի բժիշկ Լառեյի հավանական յենթադրությամբ, ավելի շուտ պետք է վերջանային մահով, քան ապաքինումով:

C'est un sujet nerveux et bilieux, — ասով Լառեյը, — il n'en rattrapera pas<sup>1</sup>.

Իշխան Անդրեյը, մյուս անհուշալի վերադարձերի հետ միասին, հանձնվեց բնակիչների խնամքին:

## ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

<sup>1</sup> Դա ջղային և մաղձոտ մարդ է. չի առողջանալ:



ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՅԵՎ  
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ



# ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

## I ԳԼՈՒԽ

Եւ 19. Վեպի ամբողջ առաջին հատորը նվիրված է ԽՈՒՍ-Ֆրանսական ար-  
տասանմանյան 1803 թ. պատերազմին, զորը վերջանում է Առևտերիլիցի ճակա-  
տամարտով։ Այս հատորի ամբողջ պատմական մասը հասկանալու համար՝ սկսած  
առաջին իսկ էջերից, առաջին իսկ նախադասութիւնից, պետք է նկատի առնել  
Նապոլիոնի միջազգային դրութիւնը այդ ժամանակաշրջանում, և պատկերաց-  
նել Յեփրոսայի բոլոր խոշոր պետութիւններին դերը։

1799 թվի Քրյուսների 18-ի (Նոյեմբերի 9) հեղաշրջումից հետո Նապոլիոնը  
հեղափոխական Դիրեկտորիայի ստեղծական գններալի աստիճանից հասավ Ֆրան-  
սիայի գլխավոր կառավարչի պաշտոնին՝ առաջին կոնսուլի կոչումով։ Յերեք  
տարի հետո, նա զարմով կառավարութեան գլուխ՝ ցման իսկ յերկու տարի  
հետո յիւ (1804 թ. գեկտեմբեր) հռչակվեց Ֆրանսիայի կայսրը։ Նրա այս արտաոս-  
տիւր հաջողութեանը Ֆրանսիայում համապատասխանում էր նրա նշանակու-  
թեան և իշխանութեան տեւումը ամբողջ Յեփրոսայում։ Դեռ 1796/97 թ. առաջին  
իտալական արշավանքին, Կոմպո-Պորոիայի գաղապարութեամբ իրավունք ստա-  
նալով տեր-անորին լինել իտալիայի հյուսիսում և Հոննոսի ձախ ափին, Նապո-  
լիոնը 1800 թ. յերկրորդ իտալական արշավանքով վերջնականապէս ամբարշտեց իր  
այդ իրավունքը և մինչև իսկ ընդարձակեց այն։ Սկզբում շատ քերք ցանկա-  
ցան լրջորեն խնդարել նրան այդ գործում։ Ամենամօտ հարեանները, զորոն-  
ցից նա հոգեր եր խել, այն է՝ Գրուսիան ու Ավստրիան, զորոնք նրանից շատ  
անգամ քաղց էին կերել, վախենում էին նրանից, և բացի այդ, կորցնելով Նա-  
պոլիոնի գրաւումն հողերը, միեթարվում էին այն հակադասական պատասխանքով,  
զոր բաժին էր ընկել նրանց Լինհատանի յեռապատիկ բաժանումից։ Յեփրոսա-  
յում նա կարող էր ունենալ միայն յերկու խոշոր հակառակորդ՝ Ռուսաստանը  
և Անգլիան։ Ռուս յերեսասարդ թագավորը շատ շուտ հասկացավ, թէ զորքան  
վատնեղավոր են Յեփրոսայի համար Նապոլիոնի նվաճողական ձգտումները, աս-  
կայն հեշտ չէր նրա համար միանգամից հաղթանակել Գրուսիայի և Ավստրիայի  
իններցիան և զգույշ էր իր ծրագրերնեով, այնպէս զոր Նապոլիոնը նախ և առաջ  
սկսեց պատրաստվել պատերազմելու Անգլիայի դեմ։ 1803 թ. նա Բուլնոնում,  
ժովափին մի հակադասական ռազմական ամուր համբար և պատրաստում՝ զորքեր  
կենտրոնացնելու համար, Սպանիայի հետ գաղանկեցած մեծ նավատորմ և պա-  
րատում՝ Անգլիայի ամերիկ գորք իջնելու, և գրավում և յեփրոսական ցամաքի  
զրա գտնվող Անգլիային պատկանող Հաննովերը։ Հաջորդ 1804 թ. Նապոլիոնյան  
նավատորմը պետք է ակաթիվ ժովային կովի բռնվեր Անգլիայի հետ և նախապա-  
րատուր այնպէս կոչված Բուլնոնի արշավանքը. պատերազմն սկսվեց և 1805 թ.  
դեռ չարուհակվում էր, բայց ժովակալ Վիրնյովը այնքան էլ հաջողութեամբ  
չէր գործում, իսկ 1805 թ. Ֆրանսական ամբողջ նավատորմը գլխովին քաղց-

վեց Տրաֆալգարի մոտ Նույն 1804 թվին տեղի ունեցավ մի զեպը, վորը թեև վերաբերում էր Ֆրանսիայի ներքին քաղաքականության, բայց մեծ ազդեցություն ունեցրեց Յեփրոպայում և առաջին անգամ շարժեց Յեփրոպայի տկտիվությունը։ Նապոլեոնի ազդեցությամբ այն հանգամանքից, վոր իր դեմ կազմված և բացված զավթագրության (Կապուլալի և Պոնդերյուսի) մեջ խառն և Բուրբոնների մասը և, ուսար յերկրում (Քաղերի) բռնկելով Նեպոլեոնի թագաժառանգին, մահապատժի յենթարկեց իր մոտ՝ Վենեսիեի գլխավում։ Բուրբոնները ներկա մամանակի գեղեցություններ էլին լուրում բանակի թագաժառանգի մարտերուսական մահվանն առթիվ, բայց տկտիվ վերաբերմունքը ցույց տվեց միայն Ալեքսանդր I, յես կանչելով Ֆրանսիայից իր զեպական և խելով գիտման գիտական հարաբերությունները։ 1805 թվին Ֆրեյլին Շերերի սալոնում տեղի ունեցող գրույցները (վորոնցով սկսվում և Վատսերազ և Խաղաղությանը)՝ տակավին չի յեն արուեստական բուռն գայրույթով՝ Նապոլեոնի դեմ։— Երանաժանում են հրեշ, Նեո, հափշտակիչ։ վոչ-վոր Երան չի անվանում կայսր (թեև նա արգեն կես տարի բացահայտեին ու պաշտոնապես զան եր բարձրացել)։ վոչ էլ Նապոլեոն, այլ պարզապես Բանապարս կամ Նույնիակ Քուսնապարս։ Նեպոլեոնը ընդգծելով Երան վոչ Ֆրանսական ծագումը։

Բայց 1805 թ. հունիսի սկզբներին շերերն և շալերն էլ տվել շատացան, բորբոքելով Յեփրոպայի գայրույթը. նախ՝ մարա ամսին նա Բաալիայում թագաժառանգության կազմեց և Միլանում թագազվեց վորպես Իտալիայի թագավոր։ Իսկ քիչ հետո Ֆրանսիային կցեց Ջենովայի հանրապետությունը և Լուիկան շնորհեց իր Նիկոն քրոջը. այս թարմ նորույթներով էլ սկսվում և վերջը։

Ա. Գ. Շերերն ամեն կերպ աշխատում է, վոր իշխան Վատիկան տա իրեն։ Թե Թուսաստանը Ֆրանսիային պատերազմ և հայտարարելու։ Շերերն իրավացի էր. այդ մամանակ վերջանում էին Ալեքսանդրի նախաձեռնությանը սկսված բանակցությունները յերազանց արքունիքների հետ։ Մարտին զաշնագրեցին Նեպոլեոնի հետ. այդ զաշնագրի նպատակն էր ստիպել Նապոլեոնին, վոր նա զորքերը հանի Հաննովերից ու Իտալիայից և ճանաչի Հոլանդիայի ու Շվեյցարիայի անկախությունը։ Մայիսին Ավստրիա ուղարկվեց զենեքալ Վինցենզերգեն, վորն իր հետ տարավ Երան զաշնակցության (Անգլիա, Թուսաստան, Շվեդիա, Ավստրիա և Նեպոլ) ընդհանուր զործողությունները մրազելու։ Յեն-թագրվում էր տատանվող Գրուսիային մասնակից անել զաշնակցության՝ մասամբ հարկադրաբար Այդ մրազի մասին տվել մանրամասն խոսքում և XXXV գլխում, ուր ձերբան Քաղերիկին քննում և այն վորդու— իշխան Անգլիան։ Հենց նաև Շվեդիայի հետադիմը Նապոլեոնը, տեղեկանալով իր դեմ կազմված զաշնակցության մասին, անպատեղի հաշտության առաջարկեց Անգլիային, նպատակ ունենալով քայքայել այդ կոալիցիան։ Անգլիան խնդրեց Ալեքսանդրի միջնորդությունը, վորը և Գարիկ ուղարկեց Նոթոնցիներին, իրեն իր ներկայացուցչի Բայց Քերլին համեկով (հուլիսի 15-ին) Նոթոնցիներ տեղեկացավ Ջենովայի զրավման մասին և այլևս Գարիկ չլցնաց Գատերազմայած անխուսափելի յեր, և չուսով սկսվեց (թեև Գրուսիան այնուամենայնիվ խույս տվեց)։

Նշ 19. Փոքիլինա.— Գալատական որդիդ

Նշ 22. Հատվածի յեվ Հարոնները.— Գրուսիան յերկու միևնաբերներ, վորոնք 1802 և 1803 թ. թ. փոխարինեցին միմյանց արտաքին զործերի վարումության մեջ, բայց յերկուսն էլ, Նապոլեոնի յերկյուղից, անվճարական քաղաքականություն էլին հետևում։

Նշ 22. Արա Մորիս.— Այս անվան տակ Նեպոլեոնը նկատի յե ունեցել իտալացի արքա Գիսարդին, վորը մի մամանակ յեղել և գառախարակը յերկուս

սարգ Ալամ Չարտարիմսկու (Ալեքսանդր I-ն է հայանի խորհրդական, մինիստր) և միամտամանակ մտն է յեղեկ հայտեր Գիատուլիի համադրեանկան խաղաղության ծրագրերը մի վարկային շահագրգռել և Գեաերբուրգը, վորովհետև ծրագրի մեջ աչքի ընկնող գերը հաւակացվել և Ռուսաստանին:

Եջ 23. Լաֆատեր. — Եվեցարացի գրող (1741—1801), իր շնորհիմով ինչպէս գրեւոր ապացուցում էր, թէ մարզու հաւակութեանները կարելի չէ նանաչել նրա ամբողջ կերպարանքից, մանավանդ զինագծերից ու զլիւն ձևից, ըստ վորում առանձին նշանակութեան էր տրվում գանգի ուսուցչներին: Նրա թեւորան հետաքրքրական է, բայց սակաւ գիտական: XIX դարի սկզբում այդ դիրքը մեծ ժողովրդականութեան էր վայելում Յեվրոպայում:

Եջ 25. Իշխ. Բալիւնսկի, պրուսական թագավոր կոնցյալ — Լանձին այս Բալիւնսկու, վոր կենդանի բնույթագրված է XXV դիւրում, Տուստոյը նկարագրել է իր պոպին (մոր կողմից), իշխ. Ն. Ս. Վալիւնսկու՝ Յեկատերինայի գեներալ: Նրա միակ զտեր հետ պատկեր էր Լեվ Տուստոյի նայրը Ն. Ի. Տուստոյը Բալիւնսկին աղա յի ունեցել, այնպես վոր իշխ. Անգրեյը Տուստոյի ստեղծած արկն է հանգիստանում:

## II ԳԼՈՒԽ

Եջ 26. Երֆր կամ, Վենցել միապետական Ռուսաստանում նշանակում էր թագավորոց հայտեր անվան առաջին տառը, վորը, վորպես աչքի ընկնող նշան, կրում էլ'ն զգեստների վրա: Մասնավորապես շիֆը կրում էին պալատական կանայք, զորդարելով այն դուշարեղենով:

Եջ 26. Վորքերի իշխ. Բալիւնսկայան — ունեցել է իր նախափայլը Տուստոյի որովհետև և Լուիզա Վալիւնսկայայի (ծնյալ Տրուգան) գծերից, վորին Տուստոյը նանաչել է գեո 1850 թ. Տուստոյի շրջանում նմանութեանը նկատվել է վեպը լույս տեսնելուն պես Լուիզա Վալիւնսկայայի նին պորտին միջոց կախված է յեղեկ Տուստոյի՝ առանձնատեսնակում: Այդ պորտին մինչև այսօր էլ մեռն է Յոսանայա Մայլանայում. նրա յետին կողմը Տուստոյի կնոջ ձեռքով գրված է. Վորքերի իշխ. Բալիւնսկայան:

Եջ 27. Ժաքո — ապամարզու հնորոյա հազուադէ մի մտքը. վերին շաղկիէ առաջին մասն ու ունիքը զարգարված անկվածներով ու ժանյակներով:

Եջ 28. Պրեո Բեզուիսով, վեպի զլիւսվոր հերոսն ստեղծված է հեղինակի յերեմկայութեամբ, բայց ցույց են տալիս վորոշ իրական գծեր, վոր կապ ունեն այն ժամանակվա մի շարք հանգամանքների հետ: Տուստոյը նրան տվել է մի աղգանուն, վոր ակնում հիշեցնում է Յեկատերինյան ամպանի Բեզուրոզկոյին (Պրեո-ուրով, Բեզ-բորով): Վեպում Պրեոն հորը վերաբերող շատ մանրամասնութեաններ առգում են կանցիւր Ա. Ա. Բեզուրոզկոյին, վորը յերկար ժամանակ՝ Թե Յեկատերինայի, Թե Գալիլ Լորոց իր ձեռքին էր պահում Ռուսաստանի արտաքին հարաբերութեանները. նա խոշոր կալվածներ ուներ Ուկրայնայում (Պրեոն վեպում խոշոր ժառանգութեան է ստանում Կիևի նահանգում), շատ հարուստ էր, ամուսնի, ուներ կողմնակի զավակներ, սիրում էր պատկերներ և շքեղ իրեր, ապրում էր հոգի, փարթամ կյանքով, մեռավ ծերութեան հասակում, չորս անգամ կախված ստանալուց հետո, 1799 թվին:

## III ԳԼՈՒԽ

Եջ 30. Մեւոք դ'առել. — Մեծահարուստ տան կամ հյուրանոցի տնտեսութեան ու սեպանը զեկավարող ապաստվորը:



եջ 32. Մաղոմազնի ժողով (1786—1867). — Ֆրանսացի նշանավոր փոքրիկ գերատեսուհի, ժոր մի քանի տարի կապված էր Նապոլեոնի հետ 1808 թ. հրաժարվեց Պետերբուրգի բեմի վրա խաղալու, ուր ազնվալի տղադուքյուն ունեցավ Այդ ժամանակ Նառաշան լսում է նրա զեկյամացիան Այն Քաղախովայի առթում (Վեպի II հատորը)։

## IV Գ. Լ. Ռ. Ի. Խ.

եջ 34. Իլի. Անդրեյ Բալկոնսկի. — Հիշեցինք արգեն, ժոր այս անձնավորությունն ստեղծված է հեղինակի յերեսնայությամբ. բայց ազյայներ կան կարծելու, ժոր շատ աշխարհիկ գիտություններին թայի, Տոլստայր նրան սման է իր տվազ յեղբայր Սերգեյի մի քանի գծերով։

եջ 34. Մ. Ի. Առտուգով (1743—1813). 1803 թվին արգեն սողմական խոշոր համարի տեր էր։ Սեկտաներին ժամանակ ժամանկեղն էր և առհեկան պատերազմներին, վերջին է Աշակովը, Բզմայիլը (Մուգորովի հետ միասին), մի քանի անգամ վերադարձել էր և զրկվել մի աշխից Ամուրիային 30 հազար բանակով ողնելու. համար թագավորը կանչում է նրան գյուղից, ուր յերեք տարի ապրում էր աշխից բնկած, վորովհետև վարդան Պետերբուրգի բնդհանուր նահանգապետ շնանայացով Այեքոսնայր 1-ին։

## V Գ. Լ. Ռ. Ի. Խ.

եջ 39. Բուրյոններ. — Ֆրանսական թագավորական տուն, ժոր կառավարում էր Ֆրանսիան XVI դարից սկսած։ Ֆրանսական մեծ հեղափոխությունը Այուգովիկոս XVI Բուրյոնին յենթարկեց գլխիտանին Նապոլեոնից հետո ևս Բուրյոններն բնառներին միայն յերկու ներկայացուցիչ յեղան Ֆրանսիայի թագավորին. — Այուգովիկոս XVIII և Կառլ X, յերկուսն էլ — մահապատժի յենթարկված Այուգովիկոս XVI-ի յեղբայրները։ Վեպում մի քանի տող վեր կա մի անձնան սխալ, ժոր կրկնվել է բոլոր հրատարակությունների մեջ։ Վիկտուար, կշատմբելով յեղբայրական թագավորներին, ժոր նրանք չեն միջամտել մահապատժի յենթարկված Այուգովիկոս XVI-ի հարազատների համար և թույլ են տվել նրանց կործանվելու, հիշում է յերեք անձն և առաջին տեղը պնում է Այուգովիկոս XVIII-ին։ Բայց նա բնավ չկործանվեց, այլ 1814 թվից սկսած տարբ տարի նստեց թագավորական գահի վրա։ Պետր և կարգալ Այուգովիկոս XVII, վորը մահապատժի յենթարկված թագավորի վորդին էր. նա իսկապես մեռավ բանտում։ Հոր մահապատժից յերկու տարի հետո Այն ժամանակ միշտ իմաստ և ստանում այն տեղը, թե՛ Սեկտան չկարողացավ կամ չկամեցավ փրկել յերկին — Այուգովիկոս XVI-ի վորդու, նրա կնոջ՝ Մարիա Անտուանետին և նրա բորջը՝ Սեկիզավետային (կինը մահապատժի յենթարկվեց միևնույն տարում, ինչ վոր մարգր, ջույր — մի տարի հետո)։

եջ 39. Անտոնյի անմանիլը. — Կնոզն — մեծ գերդաստան էր Ֆրանսիայում, ժոր ազգայական կապեր ուներ Բուրյոնների հետ։

եջ 40. Ռայալիստներ կոչվում էին այն ժամանակ զանգնեց արված թագավորական տան կողմակիցները։

եջ 42. Contrat Social (Հասարակական գաշինք) — Ժան Ժակ Ռուսսոյի քաղաքական գրվածքի անունը, ժոր բարձր էր գնահատվում հեղափոխության ժամանակ. այնտեղ խոսվում է ժողովրդի՝ միապետին իշխանությունից զրկելու իրավունքի մասին։

եջ 43. Որյուններ 18-ը. — Ըստ հեղափոխական որոշույցի 1793 թ. Նոյեմբերի 9-ը, յերեք Նապոլեոնը՝ Միլենի հետ՝ կատարեցին պետական հեղաշրջում։

հեղափոխական Գրեկոստորիայի իշխանութիւնը փոխարինելով յերեք կոնսուլի իշխանությամբ Գա առաջին քայլն եր զեպի Նապոլեոնի կայսրութիւնը, զորը բացարձակորէն Նապոլեոն ինչդ տարի հետո:

Եջ 43. Գրեկները սպառնալովն Սֆորէկայում. — Յոսքը վերաբերում է այն դաման միջոցներին, զորոնցով հնչեց Նապոլեոնը իր զեմ բարձրացած խռովութիւնը՝ Յեղիպոսական արշավանքի մամանակ:

Եջ 43. Յակոբին. — Սկզբում նշանակում եր զամենիկ յան վարդապետ, կրօնաւոր, իսկ այն որից, յեր Ծրանասական մեծ հեղափոխութիւն մամանակ Գաւրիլի զամենիկ յան վանքի շնորհում հիմնեց ծայրահեղ հեղափոխականների քաղաքական ակումբը, զորոնց թվին էլին պատկանում հեղափոխութիւն ամենաակառաւոր գործիչները, էյակոբին՝ խոսքն սկսեց նշանակել՝ քաղաքական ծայրահեղ նայացքների տեք մարդ:

Եջ 43. Երկու յան կամուրջ. — Արկուլե — լատական փորթիկ քաղաքը Գրամոս Նապոլեոնը իր՝ առաջին խառնական արշավանքի մամանակ՝ 1796 թվին ջարդեց ավաւորացիներին, վասնզի յենթարկելով կյանքը՝ զրոշակը ձեռնի կամուրջով հարձակման տալիստեղծով զորքը:

Եջ 43. Հիփանգանոց Յաֆֆայում. — Յեղիպոսական արշավանքի մամանակ Նապոլեոնը մարշալներ Քերսիէյի ե Քեսիէյի հետ այցելեց մանաթաւաւորներին հիփանգանոցը՝ Յաֆֆայի սիրիական նաւահանգստում: Այս քայլը այն մամանակ շատ եր զովարանում, զորպես Նապոլեոնի անձնական արիւթիւն մի սիրաւոր ծովային ե նովերմացից Անտուան Գրոյի նկարով, զորը զետեղեցած է Լուվրի պատկերասրահում:

# VI ԳԼՈՒԽ

Եջ 43. Ծցունազարդ յնռանկայուն. — Յեռանկայունի գլխարկները կրում էին զհեղափոխականը. զքա զործածութիւնը Ռուստաան մացել էր Գետրոս Մեծը ե պահպանում էր մինչև Ալեքսանդր I-ը, յեր զրանք փոխարինեցին երկրորդ, բայց նրանց թաղիքի բարձրաստիճան անձերի համար: Այստեղ խոսքը զհեղափոխի ցցունազարդ յեռանկայունի գլխարկի մասին եր Եռուսով այդ յեռանկայունները զրկեցին իրենց մի անկուշիւն, զորը կրօնացիելով բարձրացեց վեր, իսկ մյուս յերկուսը թաղիքն սրածայր:

Եջ 47. Ռեդիմպտ. — Այն մամանակները նոր զործածեղ անգլիական նորաձե տպամարդկային վերին հագուստ, զոր յերկար եր ու լայն:

Եջ 47. Փորոյտոր. — ձեռն ե ցուցանել կյանք վայելող էին աղնականները անգամ քաղաքում մի կառուում սովորաբար լծում էին շատ ձերն, զոր դուրսէրում անխոնտափելի յեր վատ ճանապարհներէ ե ծանր կառքերի պատճառով: Յեզ անա մի յերկու փողոց անցնելու համար՝ կառնթում լծում էին 4—6 ձի, լծում էին յերկէշաք, ե առաջին զույգի վրա նստում եր մի հեծվոր, զորը ե կոչվում եր ֆորեյտոր:

Եջ 48. Կնսարի հիշատակարան. — Այսինքն համեական զորաւոր Հուլիոս Կեսարի հիշատակարանը՝ Գաղղիւում ունեցած պատերազմի մասին: Ենորհիվ XVIII ե XIX դարերի անընդհատ պատերազմներէ՝ այդ գիրքը մեծ հարց ու պատիվ ուներ բոլոր զինվորականների համար:

Եջ 48. Կամուրջագար. — Հեծգունը՝ Ալեքսանդր I-ից սկսած: Այդ զնդի, ինչպես ե ամբողջ զվարդապէի սպաները կազմված էին հարուստ ե նշանավոր ազնականներից:

Եջ 48. Դաստիարակ-արքա. — Այն մամանակվա մեծաւորուստ աղնականները, հետեւելով Յեզիպոյին, սովորութիւն ունէին իրենց պատանի վորդի-

ներին արտասահման ուղարկել՝ կրթությունն ավարտելու համար Ուղարկում էլին սովորաբար, ժամերկությամբ արտասահմանից ապագրած արքայի, այսինքն՝ լուրջ կրթություն և կենսոգեոր կոչում ունեցող մի յերիտասարդի հետ Գա ազնվականներին դատարարակի մի առանձին տեղ եր, հաճախ ճիզգիթական վանական զորքերիցից յեկած:

## VII ԳԼՈՒԽ

Եջ 50. Փլիզել-ազյուտանու. — Աշուտաններ առա զորքի մեջ մասն Պետրոս Մեծի որդի Քաղափորն ուներ զենքալ-ազյուտաններ և Փլիզել-ազյուտաններ, վորոնց ընարում եր իր անձնական հայեցողությամբ:

## IX ԳԼՈՒԽ

Եջ 59. Իմպերիալ. — Աստված վրեկի գրամբ, վորն ընդհանուր անունով կոչվում եր էլերվանեց: Հատվում եր յերկու մեծությամբ — Իմպերիալ և կիսա-Իմպերիալ. արմերը 10 ա. և 5 աւրլի յեր:

Եջ 59. Լեյբ-հուսար. — Քլեյբը բառը ցույց է տալիս, վոր մաս ասընչություն ունի արքունիքի և Քաղափորական ընտանիքի հետ. Լեյբ-մեդել (բժիշկ), Լեյբ-կառապան, Լեյբ-հուսարական գունդ:

## X ԳԼՈՒԽ

Եջ 62. Իլյա-Ռուստով. — Այս անձնավորությանը Տոլստոյը տվել է իր պատկերիլյա Անդրեյիչ Տոլստոյի վրձ միայն առանձին գծերը, այլև ամբողջ գիմադիքը, ընտվորությունը, ապրելակերպն ու սովորությունները, այն բոլորը, ինչ վոր Տոլստոյը նկարագրում է և իր հիշողությունների մեջ այդ անձը մասնաշաղկապում ունեն, այնպես, ինչպես կամուհի Ռուստովան ընդհանուր ըստ բան ունի նկերնակի տատի՝ Պ. Ն. Տոլստայայի հետ:

Եջ 62. Ռաժիվիլով. — Ավան Վոլինյան նահանգում, վոր մաս եր այն մասնակից ավաորիական սահմանին Ռուսական բանակը, Կուսուգովի գլխավորությամբ, պետք է նախադիք Ռաժիվիլովում և գնաք Ավաորիա՝ ավաորիական զորքին միանալու:

Եջ 63. Մադրկմների սենյակ. — Բնակիչի տան մեջ հատուկ սենյակ՝ թաղաբով ու տակառով ծաղիկների և բույսերի համար. հետադայում կոչվում եր անսային պարտեզ:

Եջ 65. Մոլդա. — Նեկա գետի բազուկը Պետերբուրգի սահմանագծում:

Եջ 65. Քառուսն նապար Նոգի. — Սովորույթ եր հին Ռուսաստանում կալվածատիրոջ կարողությունը վորոնք ճորտ ընակչության թվով:

Եջ 65. Լուսն. — Այն ժամանակվա հայտնի բժիշկ:

## XI ԳԼՈՒԽ

Եջ 68. Ռուստոֆների տան յերիտասարդներին ընույթպարելիս՝ Տոլստոյն առատորեն պատկել է իր ընտանեկան ավանդություններից և անձնական ապավորություններից: Հանձին Նիկոլայի տվել է իր հոր շատ գծերը, թողնելով անգամ նրա իսկական անունը (Նիկոլայ Իլյիչ), Սույան — զա նրա ազգականունի և դատարարակունի Տ. Ա. Յերգուսկայան և, ինչպես, ըստ պատմածների, ներկայացել է նրան նա՝ իր ֆանելության բոքո Վերան հիւնեցնում և Ս. Ա. Տոլստոյի (Տոլստոյի կնոջ) մեծ քրոջը, իսկ նառաջան շատ նման է փոքր քրոջը՝ Տալյանա Անդրեևնա Կուզմինսկային: Ռուստոֆների ընտանիքի ամբողջ մթնոլորտը կենդանի վերաբարադրում է Բերսերի (Տոլստոյի կնոջ ազգանունը Բերս

եր) ընտանեկան շրջանուր Գա ակնբախ պարզում է ընթերցողին ՀՏ. Ա. Կուզմիսկայի նիշարություններն անունով գրավել գիրքը, վոր լույս տեսավ վերջերս Մոսկվայում:

## XII Գ. Լ. ՈՒՆ

Եջ 69. Մալոմոնի. — 1805—6 թ.թ. ուղեբային գերատեսուհի՝ գերմանական ժուրի մեջ, վոր ներկայացումներ եր տալիս Մոսկվայում:

Եջ 69. Քուզմիս. — Հորեղբոր, մորեղբոր, հորաքրոջ կամ մորաքրոջ տղա կամ աղջիկ կամ թոռ, վերջապես ազգական:

## XIV Գ. Լ. ՈՒՆ

Եջ 74. Ե. Մ. Գրուսեցկոյա. — Այս շնորհանուր մորաքրոջ ազգանունը, վորով միայն մի անգամ է նշվում նրա վեպում, թեթեակի փոփոխությունն է Տրուսեցկոյ ազգանվան (Տոլստոյի սովորական տրեմը), բայց նրա անձնավորությունը աղբյուրացած ազնվականի մի պայծառ տիպ է. նաբարկ ու ամեն անգ մտնող, վորպես կարիերի համար ամեն ինչի պատրաստ:

Եջ 76. Մալադ ղո-ժանիս. — Ֆրանսիացի կին-գրող XVIII և XIX դարերում, գաղափարակցական յերկրի է բազմաթիվ վեպերի հեղինակ. նրա յերկերը սիրով կարդացվում էյին և առաջ ազնվական ընտանիքներում. նրա վեպերից մեկը Տոլստոյի այս վեպում կարգում է և Կուսուզովը՝ Բուրգինոյի կովի նախորդին նրա վեպերը պատկերացնում էյին բարձր ազնվականության կյանքը՝ վայելուչ ու կրթի, վորի պատճառով է տալիս էյին գեղահասներին կարգալուրջ այց Մոստոմիրի յերեխաներն, ինչպես յերևում է, մանքանում էյին այց լիզված գրքերից և իզուր չէ, վոր այդ անունն են տալիս Վերային, վորը նրանց կատարեցնում է իր բարոյախոսություններով և պատշաճավորության մասին ունեցած հոգներով:

## XV Գ. Լ. ՈՒՆ

Եջ 79. Փողոցը ծղնտով ծածկված. — Մանր նիվանդ ունեցող տան առջև՝ փողոցը ծղնտի հասո շերտով ծածկելու սովորութիւնը միայն գրեթե մաքուր չի չորսի ընթացքում և չբացավ հեղուկեան ուստին անիմիերի և առօրեական փողոցների շնորհիվ, իսկ մեր ժամանակներում՝ նաև սովորութիւնների շնորհիվ Արմայան սերունդը դժգոհությամբ կարող է պատկերացնել, թե ինչպիսի ազմուկով ու զգրգոցով էյին լցնում փողոցները՝ բեռնակիր ապլերն ու կառքերը գետ 23 տարի առաջ:

## XVI Գ. Լ. ՈՒՆ

Եջ 83. Վեպլայի վերջն հ. — կարծում է Գրեյը, նկատել ունենալով, վոր Նապոլեոնը հենց 1803 թ. ամառը վեպի վերջնապես իր զորքը Անգլիայի ափը հանել և Բուլոնում յերկար սպասեց իր նախատրուին, մինչև վոր համոզվեց, վոր ծովային Վերնայի խնկարեան ճանփույթ է յեղել, ու շտապեց կանխել իր դաշնակիցների յելույթն իր գեմ՝ ցամաքում:

Եջ 83. Պիթ. — Սա Վիլյամ Գիթ կրտսերն է, անգլիական գլխավոր մինիստրը, վոր ղեկավարում էր Յեվրոպայի մաքուր պայքարը Նապոլեոնի գեմ մինչև 1806 թիվը:

## XVII Գ. Լ. ՈՒՆ

Եջ 90. Մ. Դ. Ալեքսանդր. — Այդ բնորոշ անձնավորությունը վերցված է իրականութենից. ինքնատիպ ազնվական այս տիկերը, վոր ամեն ինչ համարձակութեն տաւ է մարդկանց նախախն, շնարհելով վոր առաքնան, վոյ

կոչում, ծանոթ էր XIX դարակազմի մոտիվներին, հիշվում է այն մամուլակա մեմուարներին մեջ և անգամ գրական յերկերում: Գրիբոեդովը նրանից հիշուել է պատմիկ Պրեստոպոյեի տեղը: Տոյստայը պահպանելով նրա հայրանունն ու ազգանունն անփոփոխ (նրա անունը Նատալիա յեր, է վոչ թե Մարիա), պահպանել է անգամ նրա խոսքերը (վորանք ընթմած են Ժիխարեայի հիշողությունում): Թե ինչպես է ծանոթներին ամայնցնում, յերը նրանք ունենալուսում են բանակում գտնված իրենց վորդներին համար:

#### XIX Գ. Լ. Ո Ւ Խ

Եջ 98. «Սուվորովին նլ ծծծծցին և plate couture».— Պրանսական արտահայտություն, վոր բառացի անթարգմանելի չէ, նշանակում է՝ միանգամայն, գլխովին: Պարեն, ի հարկե, Սուվորովի շվեդարական անաշուղ արշավանքի մասին է, բայց Շենշինն այդտեղ տարվում է յեվրոպեյիզմով, չնայած իր առածներին և թերազնախառն է Սուվորովին. ապմական պատմություն այլ կերպ է նայում Սուվորովի՝ Շվեդարիայում ունեցած անտջողությունը, ուր վոչ-վոր նրան շվեդներին չի ջարդել:

#### XX Գ. Լ. Ո Ւ Խ

Եջ 101. Բաստոնի սեղաններ.— Այսինքն՝ թղթախաղի սեղաններ՝ բոստոն խաղալու համար, մի խաղ վոր շատ տարածված էր այն մամանակ:

Եջ 104. Նրոսեզ.— Հին շաղանդական պար:

Եջ 105. Անշլեզ.— Անգլիական պար, վորը փոխադրվելով Պրանսիա՝ կոչվեց կոնսերվան, այսինքն մի պար, ուր պարող զույգերը կանգնում են գեմ-գեմաց:

#### XXI Գ. Լ. Ո Ւ Խ

Եջ 106. Համի խոտտովանելիք.— Կրոնական ձև, վորով քահանան խոզուկուն է տալիս մեանողի մեղքերին, բավականապես նրանով, վոր ինքը նրա ականջին թվում է նրա գլխովոր մեղքերը: Ըստ վորում յենթադրվում է, թե հիմանցը, յեթե չի յել կարողանում խոսել, այդուամենայնիվ հասակաւում է քահանայի խոսքը և կարող է իր համաձայնությունը հայտնել աչքերի կամ ձեռքի շարժումով:

#### XXII Գ. Լ. Ո Ւ Խ

Եջ 114. «Յերկու մարդ լաղընու նազուտով...».— Մրանք դադադաճաններ են, վորոնք նուովք ակնդես հետեւում էյին մանամեքծ նիվանդ ունեցող աներին և հարուստ թաղութներին, կաշառում էյին սպասավորներին, ծածուկ մտնում էյին սենյակները, վորպեսզի կանխեն իրենց մրցակիցներին և դադադի պատվեր ստանան:

Եջ 115. «Ծեր սպասավորը գուլպա յեր գործուծ».— Ծեր սպասավորները հաճախ կատարում էյին կանայքի աշխատանք:

#### XV Գ. Լ. Ո Ւ Խ

Եջ 129. Գննեքալ-անշեք.— Գնաբու Մեծի մամանակ այս գինվորական տախիճանը նշանակում էր միայն ֆելդմարշալ, բայց Յեկատերինայի որոք արվում էր անեն մի գնեքալի, վորը հասնում է յերբորդ, գնեքալական վերջին տախիճանին:

ևէ 131. Շնորհից եււա. — Սա ծագր եւ հայրը շատ լավ գիտի, զոր նամակը մշտնի կարագիւնայից եւ, բայց կամենում եւ նշեցնել Ռուստոյի շնորհի, կամ նոր Նյուիքսա զեղը, կամենալով անցողակի խաթիւն այն ժամանակ մոզա դարձած սանտիմենտալութիւնը, զոր արձամարնում եր, զորպէս Վոյտեքի եւ սուրբ բանակաւորութեան յերկրագաւառ:

## XXVI ԳԼՈՒԽ

ևէ 146. Կառակ-յերբը Մալբորոկի մասին, զոր կոչի եւ գնացել, բայց աստ՝ ժամ գիտի, յերբ կվերագաւառ, յերգում եր Յրանախալում XVIII դարի սկզբում, յերբ անգլիական ներքոց Մալբորո (Mariborough)՝ անգլիական զորքի գլուխ անցած՝ կոչում եր Յրանախալի դեմ Մերուներ Բալկոնսկին մարտաբար չի հաճատում զաշխակիցներէ հաջողութեամբ:

## XXVII ԳԼՈՒԽ

ևէ 148 Տոմարանական ծառ. — Հնումը սուս ազնվականները շատ ելին պարծենում իրենց ծագումով, եւ շատերը տոժմարանական ցուցակներ ելին կազմում. սովորութիւն եւ յնդել նկարել դրանք նշանք ու զոտեր ունեցող ծառն շեւով, վորոշնք տրտի համապատասխանելին առաջին նախնոր ժառանգութեամբ. զերպույն հարաւորութիւն եր համարում, յեթե հաջողում եր, սուս ու շեւտակ միջոցներով, իրենց ծագումը հասցնել մինչեւ Րյուրիկը (Ռուսաստանի առաջին կառավարի իշխանը) Բալկոնսկիները ալեկի քիչ, քան վորեւ տոժ, կարիք ունեյին այդպիսի, հաճախ կանխածելի ազատույցներ բերել իրենց տոժմականութիւնը հաստատուի եւ իշխ. Անգլիքը նկնանքով եւ վերաբերում հոր այդ գործին, համարելով այն իր արժանապատուութիւնից ցած:

ևէ 150. Հոթն-կրիզ-վորստ-չնապս-նաւ. — Բալկոնսկին ծագում եւ սովորելական բարձր զինուորական հաստատութիւնը, զորն իրոք շատ խանգարում եր Սուվորովին պատերազմներէ մամանակ՝ Ավստրիայի նկա զաշխակցած միջոցին, այդ զուրյցից 5 թե 6 տարի առաջ նա կոչում եր շալաւատական ազգական խորհուրդ, իսկ Բալկոնսկին զարձնում եւ այն զՊալատական ազգական յերշիկա-դիական խորհուրդ: Ստորե Տոլստոյն իր պատմութեամբ հաստատում եւ Բալկոնսկու կարծիքը:

ևէ 150. Սուվորով. — Ալեքսանդր Վասիլիեի (1729—1800)՝ սուս զորավար Մասնակցեց Յոթնամյա պատերազմին, սուս-առնական պատերազմներին Յեկատերինա II-ի որդը. հաղթանակներ տարով Յոկչանի մոտ (1788) եւ Ռիմնիկի մոտ (1789), գրոհով առավ Իդմայի բերդաքաղաքը (1790), մանակցեց լեւերի դեմ սկսած արշաւանքին՝ Լեւաստանը բաման-բաման ետելու. չրջանում, եւ 1794 թ. զրոհով վերցրեց Վարչավայի արմարնան Պրագան Իդմային ու Պրագան վերցնելիս ցույց տվեց ծայրահեղ զամանութիւններ:

## XXVIII ԳԼՈՒԽ

ևէ 152. ՇՄի արկիկ... — Ծանապարհի փոքրիկ տնով ուսելու եւ խմելու պարագաներով, յերբեք եւ կերակրի պաշարով Այդ բանը հիմա ննացած եւ եւ սակնով պահական, բայց ննումը, յերբ յերկաթուղիներ չկային, շատ անհրաժեշտ եր Ծանապարհորդութեան համար:

ևէ 152. Ուշադր. — Տանական բերդ՝ Դանուրի գետաբերանի մոտ, զոր առավ Սուվորովը Պոլսոյմիկնյան պատերազմներէ մամանակ:

Եջ 154. Վերջինս առում է Ստեփանը։ — Անգլիական բռնապետի և յերգի-  
ծարան Ստեփանը (1713—1765) Տոլստոյի պատանու Սյան որով նրա սիրած հնգի-  
նականների մեկն էր Տոլստոյի փորձել և անգամ թարգմանել նրան։

Եջ 160. Լոմբարդի բիւնտ։ — Լոմբարդը, զբաղ գրած իրերի համար նպաստ  
ազնոյ հաստատութիւն և Ռուսական լոմբարդները զեռ Յեկատերինայի որոշ  
արքունական էյին և ասկոսարեք զբռնական թղթեր էյին բայց թողնում էին  
այդպիսի տոմսի մասին և խոսում Բալիսնակին։

## ՅԵՐԿՐՈՐԴ ԿԱՍ

### I ԳԼՈՒԽ

Եջ 163. Որասունտու։ — Քաղաք Ամստերդամ, Իննն գետի ափին։

Եջ 164. Սանգոյի լիւ։ — Կենդանի, շարժուն, գոյութեան մարդ։

Եջ 164. Ծարիցն լուր։ — Լրագրական Լենինգրադում Ենգլիայի ափին Վա-  
րսից կոչում է Մարտյան գաշտ Յեկատերինա II ժամանակից ծառայում էր  
իրեն զորատեսների և զորահանգեսների վայր։

Եջ 166. Կազակին։ — Զինվորական կիտակաֆառն, Լարնիկ պատմական։

### II ԳԼՈՒԽ

Եջ 168. Կրասնոնոց։ — Այսպես են անվանում գերմանացիները սլավոն ցե-  
ղին պատկանող խորվաթներին, ժորոնք արշունակից են սերբերին։

Եջ 169. Վեդայի լույսն ընկնք։ — Կուսուկոյն ուղում է տակ, թե Տիմո-  
խինին հիշում է տանկական արշավաճերի և Իգլայի բերդը վերցնելու ժամա-  
նակից։

Եջ 173. Վեդայի լուր (ЛОЖЕЧНИК) կայտառ նեղից տալու։ — Գլաները  
(սկզբում հասարակ փայտի զգալներ, ժորոնքով գինգոները կերակուր էյին  
ուսումն է միշտ հեաները ման ածում կոշիկներին շտեքեր խրած) հնումը յերգի  
և պարի ժամանակ գործ էյին ածում նվագակցութեան համար. ուսումնական այդ  
տնայութիւն կատանիտներն ունեյին իրենց արտիստ կատարողները։

Եջ 174. Հուսարական կոռնտ։ — Հնգնգի կրտսեր սպայական առաջնական-  
բից մեկը։

### III ԳԼՈՒԽ

Եջ 176. Սքննրցողի նամակը Կոստուգովին։ — Տոլստոյ վերցրել է այդ  
բնագրական նամակի մեջտեղը (նամակն ամբողջութեամբ տպված է Միխայլովի-  
Շանիկսկու «Գաղտնիքսն» մեջ)։

Եջ 177 Կոստուգովից զին։ — Ջրային կամ ցամաքային հաղորդակցութեան  
դիմ։

Եջ 177. Ուլի։ — Բերդաջաղաք Դանուբի ափին Ամստերդամի այն ժամանակ  
ամրացել էյին այդպիսի, հալատացած լինելով, թե նապոլեոնը սովորական ճա-  
նապարհով Շտրասբուրգով գալով դուրս կգա ուղիղ Ուլի գիմաց։ Նապոլեոնն  
ի հարկն, անցավ մի ճանապարհով, ուր նրան չէյին սպասում, հաջողեց ջարդել  
իրեն ճանապարհի վրա գտնվող մի քանի վաշտերի և կտրել գնեքալ Մակի  
(ժոր բիմատորեն սպասում էր նրան Ուլի ճամբարում) նահանգի ճանապարհ-  
ները, այնպես ժոր Մակը՝ բանակի հետ՝ գերել ընկավ առանց կոզի և ազատ ար-  
ձակվեց մեն-մենակ, պարտավորվելով դուրս չգալ այլևս Փրանսացիներին դիմ։



Մակի եպիսկոպոսը նկարագրելիս՝ Տուլստոյն ոգտմի է և ռազմական մի քանի պատմա-  
գիրներին գրվածքներին:

## IV ԳԼՈՒԾ

Եջ 183. «Վերադարձում վարդապետությանը».— Խաղաղությունը նշանակում է դեպի  
չբռնկայքը գնումներ կատարելու համ ընդհանրապես խոտ և վարսակ ձեռք  
բերելու:

Եջ 184. Վասկո Գենիստովին Տուլստոյն ստեղծել է Հայրենական պատերազմի  
մի ինքնատիպ հերոսի՝ Դենիս Դավիդովի տպավորությունները: Պա յեղել է կերու-  
խում սիրող, քաջ գինիփրական, պարտիզան և միևնույն ժամանակ բանաստեղծ  
ու ռազմական գրող: Վասկո Դենիսովը գրող չի, բայց նրա՝ կյանքը բանաստեղծ-  
ություն ընկալելու այդ ընդունակությունը ցույց է տալիս և արված ենք այս գլխում:  
Անդամ էր թույլ հարավային գեմքով հիշեցնում է Դավիդովին, վորը գրական  
«Արգամաս» ընկերության մեջ մտնելով՝ էր արտաքինի համար հնա (арма-  
ний)՝ մականունն էր ստացել:

Եջ 184. Մենտիկ.— Հեծելակի վերին բաձկն:

Եջ 185. «Միտակ» տալիս է, պաշտոնը՝ խփում:— ազարտ թղթախաղի տեր-  
մեններ են:

## VI ԳԼՈՒԾ

Եջ 194. Կովի տեղը և հանգամանքները VI և IX գլուխներում այսպիսի-  
ն են յեղել: Մակի պարտություններից հետո՝ Կուսուզովը սկսեց նահանջել դեպի  
Վեննա, շարունակ պահելով Ֆրանսական առաջադանի (Մյուրատի) առաջնա-  
դասումը՝ հեղինակների 23-ին նա՝ մեռ քաղաքի մոտ անցավ սրբնիցայ մեռ-  
դեղեր: Մյուրատն ամբողջ ողջ սեղմում, ճնշում էր իշխան Բազրատիոնի ռա-  
նակը, աշխատելով անցնել նրա թիկունքը և կտրել գեան անցնելու հանա-  
պարհը: Չհաջողելով էր մտադրության մեջ՝ նա գրեթե Բազրատիոնի հետ միա-  
ժամանակ մոտեցավ մեռ գետին, աշխատելով կամուրջը տրել: Վերջնապա-  
հում գտնվող պալատիկայից հուսարների գունդը շտապով, կարտեկային կրակի  
տակ վառեց կամուրջը, վորը նախապես ծածկված էր դյուրավառ նյութերով  
(Միխայլովսկի-Դանիլսկի): Մյուրատը, վորի հետ շարունակ ընդհարվում էր  
Կուսուզովը, նապոլեոնի զորավարներից էր, վորին Նապոլեոնը մոտեցրել էր  
իրեն զեն իր հյուպատոսության որերին: քրոջ տղից նրան կնուխյան, գարն-  
եցի մարջալ է տվեց նրան նախ կայսերական պրինց, ապա — Նեպոլիտանա-  
կան թագավոր տիտղոսը: Իր ամբողջ ճարակությանը և անձնվեր քաջությանը  
հանդերձ՝ նա սահմանափակ ինքնի տեր էր, և հաջողություններից գլխա-  
պատույթի մեջ էր (նա յեղել էր ճաշարանի հասարակ սպասավոր և զին. ծառա-  
յությանն սկսել էր, վորպես շաքարյին Նա հաճախ է յերևան գալիս վեպում,  
և Տուլստոյը հաճախ զգացնել է տալիս նրա սահմանափակությունը, կոմիքս-  
կան լրջությունը և արտաքին արդ ու զարդի սերը:

Եջ 195. Դուպլովիկյուսմնի.— Անիտինի ողի կամ լիկյուր:

Եջ 197. «Առաջին նամարը մրուխյամբ յետ ցառակցի».— Լեռնանու մարտկոցի  
կազմի մեջ մտնում էր 4—8 թնդանոթ, յուրաքանչյուրին շտապավորում էլին  
վորոշ թվով գինիփրներ՝ հասուն կամարներով, վորոնց ամեն մեկի պարտա-  
վորությունը ճշտորեն սահմանված էր. մեկը թնդանոթի փողը մաքրում էր  
հատուկ խողանակով, մյուսը ուռմբն էր սեղավորում, յերրորդը նշանն էր վո-

բռնում, իսկ ֆեյերֆելդները դնում եր ժողովանք» (վառ պատարույցով մե բուն, գույ կոմի մամանակ ձիում եր շարունակել)

#### VII Գ.Լ.ՈՒԽ

Այ 197. Կիլիմեր. — Բառնարդեր կլոր գլխարկներ, զորոնք սուս զարքի մեջ մասն Ալեքսանդր 1-ի սրտը (առաջ յեռանկյունիներ կյին) Գլխարկները զարգար-ված էյին կապիշներով և փնջերով (Երու թառները) և բլի տակ կապում էյին յերկու կաշեկապով, զորոնք պղնձե կռնակներ ունեկին:

Այ 199. «Յերշիկներն ել են փախչում» — Ռուս գերմարներն տկնարկում են գերմանացիներին, նկատի ունենալով Նրանց յերշիկախորությունը կամ այն, զոր յերշիկապործությունը գերմանացիներին աշրի բնկնող արհեստներին մեկն է:

#### VIII Գ.Լ.ՈՒԽ

Այ 207. «Կալիլի յե նեմվալտը նեմվալացնել...» — Գլխավոր նրամանառարին՝ աշրի բնկնող զորամասի մասին գեկուցելու գեպում՝ պետե բառ ինքյան պար-գեմ կատարար:

Այ 207. Նարոնել. — Մոտ տարածության վրա թնդանթներին արձակում էյին հատուկ սուսքներ, զորոնցից՝ պալթիլին՝ թնդում էյին մեծ քանակու-թյամբ գնդակներ կամ մետաղի կտորասներ:

#### IX Գ.Լ.ՈՒԽ

Այ 211. Մորոնե. — Նապոլեոնի մարշալներին մեկը, զոր կրում եր Տրեփիզոյի (Իսաւական դափա՝ Վենետիկի շրջանում) ներքոց տիպոպոր:

Այ 211. Բրյունն. — Քաղաք Մորափայտում բնակիչներին կես մասը յեկեր են՝ Նրանից քիչ հեռու շուտով տեղի ունեցավ Առևտրիչիցի հակառակմարտը, զոր-ով և վերջոցով առևտրական արտասահմանյան արշավանքը 1803 թվին:

#### X Գ.Լ.ՈՒԽ

Այ 215. Բելլերին. — Յենթագրվում է, զոր Տոյստոյը գեպի այս եպիգրոֆիկ ներսի նկարագիրը տալիս՝ նկատի յե ունեցել Ա. Մ. Գորշակովին, զոր 1856—1858 թթ. վարում եր Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը և զորք աշրի յեր բնկնում նման սուր սալոնա-քաղաքական Ֆրազներով և, գլխավորը, յեղել է, Բելլերինի նման, փայլուն փոնչություն. Գերմանիայի կամակառարը լինելով և Ռուսաստանի ետկան շահերը վառ պաշտպանելով, նա միամտա-նակ հին գրեյլոմատիայի ներկայացուցիչ էր, զորի համար նաբողիկ գրած հու-շագիրն ինքնին նպատակ էր, զորին մեծ հաճույք եր զգում. իդուր շնոր, զոր առում էյին, թե նա սիրահարված է իր թանաջամանի վրա Այս քոյորը սա-ղում է և Բելլերինին՝ Իսկ կռնիւնների նշանավոր «Ժողը» վերքեր և իրենց ընտանիքի վաղեմի ծանոթ վեռն Յադիկովին, զորի գերմն ափեկը մորթի և ու-նեցել, և նա կարողացել է այն հաճաբել մեկ յերեսի կա կողմը, մեկ մյուս կողմը, անելով սարսափելի ծածածություններ:

Այ 219. Եննրերուն. — Գայսերական ամառային պալատ Վեննայում:

Այ 219. Tête de pont. — Գամուրջի ամբությունն Հնումը խոշոր կամուրջ-ների վրա բերդի պետ բան էյին կառուցում, զորի նրեսանիով պահպանում և պաշտպանում էյին կամուրջը թշնամուց:

Այ 220. Ելնքսանդրի յնմ պրուսական թագավորի Բերլինի տեսակցութիւ-նը. — Գա տեղի ունեցավ այդ գրույցից (Պատգամի) մե քանի որ առաջ Միա-

պետները բարեկամութեան յերդու՛մ ավին միմյանց, ժու՛նկ խոնարհելով Թըր-  
քիին II գերեզմանի առաջ, բայց Պրուսիան այսուամենայնիվ փաստորեն հեռա-  
ցում պատերազմից։

Եջ 220. Կամիլո ֆորմիո. — Առաջին գլխի սկզբում. հիշվեց այնտեղ 1757  
թվին կերած հաշտութեանը, զորն ամբողջեց Նապոլիոնի իշխանութեանը  
Իտալիայում և Նախնարի ափերում։

#### XI Գ. Լ. ՈՒՆԻ

Եջ 222. Դոն-ժուան. — Հայտնի սպանացի կին գայթակղեցնող Այս տիպ-  
տարերը վարխաններով ավել են Մոլիերը, Բայրոնը, Պուշկինը, Ալ. Տոլստոյը,  
նա միաժամանակ հանդիսանում և Մոցարտի սպերայի հերոսը։

Եջ 223 ռո, Դոմոսթենես, յիս ժանաշո մ եմ քծզ զոսկն թքանիզ քարով։ —  
Ասում են՝ հույն նշանավոր հեւտը Դեմոսթենեսը յերիտառաջ ժամանակ  
աչքի յեր ընկնում իր վատ առողջանությամբ ու աշխատում եր այն շտկել, բե-  
րանը մանր քարեր գնելով, զորպեսզի, զորքան կարելի յե, խոսքերը պարզ աբ-  
տաստնի Ըստ Բիլլերիէի՝ Իպպոլիտը նման եր Դեմոսթենեսին միայն նրանով,  
զոր միշտ մի բան խանդարում եր կապակցված խոսելուն։

#### XII Գ. Լ. ՈՒՆԻ

Եջ 227. Վէնա դա յն այն Տուլոնը... — Տուլոնը ժողովնյա քաղաք և Թրան-  
սիայի հարավում Հեղափոխութեան ժամանակ՝ 1793 թ. նա անձնատուր յեղավ  
անգլիացիներին։ Առաջին անգամ Նապոլիոնն աչքի ընկավ այդ քաղաքի ապա-  
տամբութեանը անշիւով. քաղաքը վերցնելուց հետո՝ գնեւրալի աստիճան ստա-  
ցավ, և ալգանդից ել սկսվեց նրա կարերբան։

Եջ 229. Գասկոնացի կամ գասկոն. — Գասկոնը գավառ և Թրանսիայի հարա-  
վում. գասկոնացիք ոժոված են մեծ ֆանտազիայով. հայտնի յեն վորպես պար-  
ծենկոտներ։

Եջ 230. Ուլյուց — Խոշոր քաղաք ափսորիական Մորավիայում։

#### XIII Գ. Լ. ՈՒՆԻ

Եջ 234. Բազրատիոն — Իշխան Պյոտր Իվանովիչ, գնեւրալ (1763—1812),  
աչքի յե ընկել շատ պատերազմներում. 1805 թ. ճակատադրական զրու-  
թյունից փրկեց ռուսական բանակը Շենքարսինի մոտ. մասնակցեց Աուստերլիցի, Նյ-  
ւառի, Թրիգլանդի ճակատամարտերին։ Մեռավ Բորոգինոյում ստացած վերքից։

Եջ 235. Դիսպոզիիոն — Հրամանատարի զրավոր կարգադրութեանը ապա-  
գա կովի կարգի մասին։

#### XIV Գ. Լ. ՈՒՆԻ

Եջ 236. Նապոլիոնի Նախկեց Մյուրատին վերցված և Թիեոի «Histoire du  
Consulat et de l'Empire» գրքից։

#### XVIII Գ. Լ. ՈՒՆԻ

Եջ 234. Կառն. — Հեծելազորի հարձակումը յետ մղելու համար, հետեակը  
դասավորվում և քառակուսի ձեով ու կազմում շորս աքտաքին ճակատ։ Սա  
կոչվում և կառն։

## ՅԵՐՐՈՐԴ ԿԱՍ

## I ԳԼՈՒԽ

Նջ 277. Կաթնոց-յունկեր. — Պալատական վոչ բարձր կոչում:

Նջ 279. Կանցլեր. — (յաթեներեն) գործ և ամփում տարբեր իմաստով. և՛ պալատական ակադեր իմբադրոզ բարձրագույն պաշտոնյա, վոր պահում և և՛ պալատական արխիվը, և՛ մինխաթ-նախագահ (Ֆերմանխալում): Անգլիխայում լորդ-կանցլերը մինխաթներին խորհրդին անգամ և և լորդերին պալատին նախագահն Իսկ վեպում գործ և ամփում արտաքին գործերին մինխաթ իմաստով:

## II ԳԼՈՒԽ

Նջ 291. Պարխ յնվ շնդինն. — Հունական մեֆական անձնավորություններ, վորոնք նկարագրված են Համեռոսի «Իլիական» պոեմում:

Նջ 293. Ռեյնվեյն. — Հաննոսյան գինի:

## IV ԳԼՈՒԽ

Նջ 312. «Դա անվայնի նք». — Կանանց ձեռք համբուրելն բնականված երբ բարձր հասարակության մեջ, բայց Բուրենը վարձու մարդ էր, ուստի և նրան ազնվական կոչել հետ մինևույն մակարդակի վրա գնելը՝ համարվում էր անվայն:

## VII ԳԼՈՒԽ

Նջ 325. Իզմայլովյան զոնդ. — Վեպի առաջին մասի X գլխում Բարխ Դուրեցիկոյը փոխադրվում է Սեմյոնովյան զվարդեական գուռիցը Հեղինակը մոռացել և այս հանգամանքը և նրան համարում և Իզմայլովյան զոնդի ուղի:

Նջ 326. «Պետի վանձան...». — Ֆրանսերեն Ֆրազ, նշանակում է յեթերինք, զնացեք ընկուռ. այս խոսքերը բերելով՝ հեղինակն ուզում է ցույց տալ, թե ինչպես էր արտասանում դայակը լսած Ֆրանսերեն խոսքերը:

Նջ 330. Աննաուտներ. — Ասում են տաճիկները այբանացիներին, այն մասնակ կիսափայլերին ցեղ, վորին հաճաքվում-կազմվում էր տաճիկական անկանոն հեծելազորը:

## IX ԳԼՈՒԽ

Նջ 340. Վեյրուտեր. — Ամստերդամյան ռազմական գլխավոր տեսաբանը, վորը կազմում էր հակաաամարտերի ծրագրերները (չեխոդդիցիանն):

Նջ 343. «Փրանսական կառավարության օլետին». — Պատմականորեն ճիշտ է:

Նջ 343. Աղամ Չարտործսել. — Ալեքսանդրի այն մամանակվա ամենաազդեցիկ խորհրդականներին մեկը:

## XVI ԳԼՈՒԽ

Նջ 376—382. Կովի ամբողջ ընթացքը, շփոթությունն ու խուճապը, Կուսուզովի վերքը, և նրա խոսքերն այդ վերքի մասին, վաշտի հարձակումն իշխ. Անգրեյի ղեկավարությամբ — այս բոլորը Տոլստոյը շարագրել է ըստ Դանիլևսկու, ըստ վորում իշխ. Անգրեյին հասկացրել է Գ. Ռ. Տիգլենհուզենի գերբը: Տիգլենհուզենն ապանկց այդ կովում, բայց հայտնի չի, վոր Տոլստոյն էլ սկզբում յենթադ-

բուժ հր, զոր Անգրեյը չի ապրի Առևտուրը իրից, հետո, և միայն շատ հետո զորոշեց լիպոսթիմալ Նրան (ինչպես այդ յերևում և Նուրգա Վոլկոնսկու զրաժ նամակից)։

## XVII ԳԼՈՒԽ

Եջ 382—387. Ուլան զնդի և արքայական հեծվաչտի փայլուն, բայց անաշուղ Նարմակու թեքը արված են դարձյալ ըստ Միխայլ-Պանիկակու։

## XVIII ԳԼՈՒԽ

Եջ 387—394. Ճակատամարտի վերջի առանձին ծաղրողները—Ալեքսանդրի շքախումբը կորցնում և Նրան, իսկ Թագավորը զոչ մի կերպ չի կարողանում տեսնվել Գուսուզովի հետ, — զոչ-զոչ չի կարողանում ցույց տալ Ռոստովին, Թե զորտեղ են Նրանք՝ յերկուսն ել, նաև Առեգեստի ամբարդակի տեսարանները— բայցը Տոլուսոյն ստեղծել և նույն պատմազրի պատմածներ չիման զրա։

## XIX ԳԼՈՒԽ

Եջ 396. Նապոլեոնի՝ կովի դաշտը շրջելը յնվ Նրա զրույցը իշխան Ռեպինի յնվ Սուխտեկինի հետ. — Վերադարձվում և ըստ Միխայլ-Պանիկակու։



Отв. редактор Г. Абов  
Тех. ред. Т. Хачатрян

**Л. Н. Толстой**  
**ВОЙНА и МИР**  
**I том**  
(на армянском языке)

Отпечатано в тип. Госиздата ССР Армении.  
Москва, Армянский пер., 2. Зак. 172  
Главлит № В—41897. Изд. № 3286. Т. 4200.  
Сд. в наб. 1/IV-35 г. Подп. к печ. 11/V-35 г.  
Печ. л. 26. В 1 п. л. 42.000 зн.

[2a]





ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



220025802

II  
25802